ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐԱՄԿՁԲԻՆ (2001-2017 ԹԹ.)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ (2001-2017 ԹԹ.)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Մ 710

Հրատարակվում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի և հայոց պատմության ամբիոնի գիտական խորհրդի որոշմամբ

Տպագրվում է ՀՀ սփյուռքի նախարարության դրամաշնորհով

Խմբագիրներ՝
պ.գ.դ., դոց. Արման Եղիազարյան
բ.գ.թ. Մերի Հովհաննիսյան
Գրախոսներ՝
պ.գ.թ. Քնարիկ Պետրոսյան
պ.գ.թ., դոցենտ Հովհաննես Ալեքսանյան

Մինասյան Էդիկ Գարեգինի
Մ 710 Հայրենիք-Սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001-2017 թթ.) /Է. Մինասյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2018, 446 էջ:
Эдик Гарегинович Минасян
Взаимосвязи Родина-Диаспора в начале 21-ого века (2001-2017 гг.), Ереван, Из-во ЕГУ, 2018, стр. 446.
Edik Garegin Minasyan
Homeland-Diaspora Relations at the Beginning of the 21st Century (2001-2017). Yerevan, YSU Press, 2018, pp. 446.

Սկզբնաղբյուրների ու գրականության քննական ուսումնասիրության և վերլուծության արդյունքում լուսաբանվում են Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի միջև 2001-2017 թվականներին հաստատված գործուն հարաբերությունները: Ներկայացվում են 21-րդ դարասկզբի Հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրն ու առանձնահատկությունները, համասփյուռքյան քաղաքական կազմակերպությունների և կառույցների հասարակական-քաղաքական գործունեությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և արցախյան հիմնախնդրի լուծման ուղղությամբ: Ընդգծվում ու բացահայտվում է սփյուռքահայ միությունների և կազմակերպությունների, նշանավոր անհատների դերը ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, Հայաստան-Սփյուռք գիտակրթական ու մշակութային կապերի ամրապնդման ու զարգացման գործում:

Աշխատությունը հասցեագրված է սփյուռքագետներին, պատմաբաններին, ինչպես նաև ընթերցող լայն հանրությանը:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2299-5

© ԵՊՀ հրատ., 2018
© Մինասյան Է., 2018

ԱՌԱՋԱԲԱՆ

1991 թ. ԽՍՀՄ-ի փլուզումը և Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումը նոր որակ ու փուլ սկզբնավորեցին Հայաստան-Սփյուռք առնչություններում, որոնք ընդգրկեցին կյանքի բոլոր ոլորտները՝ հասարակական, քաղաքական, մշակութային և սոցիալ-տնտեսական:

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների նշված շրջափուլն ընդգրկում է Հայաստանի երրորդ հանրապետության շրջանը՝ 1991 թվականից մինչև մեր օրերը: Ինչպես այլ ուսումնասիրողներ, մենք ևս Հայաստանի երրորդ հանրապետության շրջանի հայրենիք-Սփյուռք հարաբերությունները բաժանում են երեք շրջափուլերի:

Առաջին շրջափուլը, որն ընդգրկում է 1991-1998 թվականները, պայմանականորեն կարելի է համարել նորովի հարաբերությունների ձևավորման շրջան, երկրորդ շրջափուլը, որը սկսվում է 2008 թվականից և հասնում մինչև մեր օրերը, անվանվում է համապարփակ հարաբերությունների ձևավորման շրջան[1]:

Առաջին շրջանում Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը նոր թափ հաղորդեց արդեն իսկ 1988 թվականից սկսած ավերիչ երկրաշարժով և Արցախյան շարժման զարթոնքով պայմանավորված հայրենիք-Սփյուռք սերտացող հարաբերություններին, երբ Սփյուռքի առաջ բացվեցին հայրենի պետության փակ դռները: Նախորդ ժամանակաշրջանի համար այս շրջափուլում Սփյուռքի և հայրենիքի միջև, ըստ էու-

[1] Տե՛ս Եղիազարյան Ա., Անանյան Մ., Հովհաննիսյան Ա., Հովհաննիսյան Է., Հովսեթյան Մ., Վարդանյան Հ., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Ե., 2017, էջ 6:

թյան, հաստատվեցին սահմանափակումներից զերծ ազատ հարաբերություններ: Հայաստանի քաղաքական անկախության վերականգնմանը հաջորդած առաջին տարիներին, Արցախյան պատերազմով և սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակով պայմանավորված դժվարին պայմաններից դրդված, հարյուր հազարավոր հայեր, արտագաղթելով հայրենի երկրից, ավելի ստվարացրին արտերկրում ապրող սփյուռքահայության թվաքանակը:

Սփյուռքում իրավիճակը փոխվեց այն բանից հետո, երբ 1990-ական թթ. երբեմնի դասական հայկական համայնքները համալրվեցին 1988 թ. Սպիտակի երկրաշարժից և Ադրբեջանում 1988-1990 թթ. ու Սումգայիթից և Բաքվի հրեշավոր վայրագություններից, Հայոց ցեղասպանությունից հետո արտերկրում հաստատված, ինչպես նաև Հայաստանից արտագաղթած հայերով, որոնք զգալի աշխուժություն մտցրին սփյուռքահայերի կյանքում: Մյուս կողմից 1990-ական թթ. սկզբներին սփյուռքահայությունը, որը յոթանասուն տարի շարունակ փափագել էր իր երազած ազատ ու անկախ Հայաստանի գաղափարը, հնարավորություն ունենալով ազատորեն գալու հայրենիք, բախվեց ժամանակի դաժան իրողությանը: Հայտնի է, որ 1990-ական թթ. սկզբներին դժվարին փուլ էր հայոց նորանկախ երկրի համար, քանի որ փլուզվել էին երկրի պետական, քաղաքական համակարգերը, չկային բիզնես ներդրումների համար անհրաժեշտ միջավայր, շուկայական տնտեսությանը համապատասխանող օրենքներ, բանկային, հարկային և մաքսային համակարգեր, որոնք աստիճանաբար էին ստեղծվում: Երկիրը գտնվում էր տնտեսական, հատկապես էներգետիկ խոր ճգնաժամի մեջ. տարածքի 40 %-ը երկրաշարժից հետո ավերվել էր, կես միլիոն մարդ մնացել էր անօթևան՝ զրկվելով նաև ունեցվածքից, Ադրբե-

ջանից գաղթած շուրջ 450 հազարի հասնող ահաբեկված փախստականներ հասել էին Հայաստան, որն ի վիճակի չէր ամբողջությամբ լուծել նրանց հիմնախնդիրները: Այս ամենից բացի՝ Լեռնային Ղարաբաղի պարտադրված պատերազմը Ադրբեջանի կողմից վտանգել էր մեր ժողովրդի արցախյան հատվածի անվտանգությունը: Ահա այս ծանր իրավիճակում Սփյուռքը հիասթափվելու առիթներ ունեցավ, սակայն հայրենիքին աջակցելու համար միավորվեց, և այդ օգնությունը չուշացավ: Առաջին գործող կուսակցությունը, որը ստեղծվեց 1992 թ. և գործում է առ այսօր, «Հայաստան» համահայկական հիմնադրամն է: Հիմնադրամի միջոցով միլիոնավոր դոլարների ֆինանսական օգնություն ցուցաբերվեց հայկական երկու հանրապետություններին՝ Հայաստանի Հանրապետությանը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը, ինչն էլ նպաստեց հայրենաշինության կարևոր գործին, և համահայկական միջոցներով լուծվեցին կենսական նշանակության մի շարք խնդիրներ:

1990-ական թթ. սկզբից սկսած՝ ԽՍՀՄ-ի տարածքում բնակվող հայությունը կանգնեց, այսպես կոչված, սփյուռքացման գործընթացի առջև, ինչի արդյունքում նախկին խորհրդային պետությունների գրեթե մեծ մասում, ԱՊՀ երկրներում աստիճանաբար հիմնադրվեցին ընդհանուր և տեղային բնույթի համայնքային հասարակական կազմակերպություններ՝ հայության տարբեր հատվածների համար հավաքական կենսագործունեության միջավայր ձևավորելու համար: Չնայած առաջին շրջափուլում հայրենիք-Սփյուռք հարաբերությունները որոշակի տեղատվություն ունեցան սփյուռքյան քաղաքական կազմակերպությունների՝ հայրենիքում ունեցած հիմնականում քաղաքական խնդիրների պատճառով, սակայն դրանք չկարողա-

ցան խափանել հայրենիք-Սփյուռք համախմբման ու կապերի ամրապնդման անկասանելի ընթացքը, ինչն էլ իր դրսևորումը գտավ երկրորդ շրջափուլում: Այդ ժամանակահատվածում՝ Հայաստանի երրորդ հանրապետության երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի օրոք, ավելի ամրապնդվեցին հայրենիք-Սփյուռք կապերը, վերջնակապես լուծում ստացան այդ կապերում և հարաբերություններում առկա մի շարք կարևոր խնդիրներ, որոնք հատկապես առնչվում էին ընդհանուր քաղաքական օրակարգի ձևավորմանը վերաբերող հարցերին, հայրենիք-Սփյուռք հարաբերությունները կարգավորող նոր կառույցներին, օրինակ՝ 1998 թ. ՀՀ արտգործնախարարությունում ձևավորված Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարությանը, ապա գործակալությանը, իսկ 2008 թ. ապրիլից՝ Սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեի ստեղծմանը և այլն: Այս շրջափուլում տեղի ունեցան Հայաստան-Սփյուռք երեք խորհրդաժողովները (1999, 2002 և 2006), որոնց նպատակն էր մշակել և իրագործել հայության առաջ ծառայած խնդիրների լուծման համատեղ ձևաչափերն ու հայրենիք-Սփյուռք հարաբերությունների համակարգման մեխանիզմները: 2005 թ. սահմանադրական հանրաքվեի արդյունքում Հայաստանի երրորդ հանրապետություն ներդրվեց երկքաղաքացիության ինստիտուտը, որը հայրենիք-Սփյուռք հարաբերությունների էլ ավելի սերտացման և սփյուռքահայության ինտեգրման կարևոր գործոն էր:

Հայաստանի երրորդ հանրապետության երրորդ նախագահ Ս. Սարգսյանի հրամանագրով 2008 թ. ստեղծվեց ՀՀ սփյուռքի նախարարությունը, որը նոր շրջափուլ էր Հայաստան-Սփյուռք հարաբերություններում, քանի որ պետական մակարդակով կառուցվածքային նոր ձև տրվեց Հայաստան-Սփյուռք գործակցու-

թյան զարգացմանը՝ նպաստելով երկկողմ ինտեգրմանը և հայ-րենիք-Սփյուռք հարաբերությունների էլ ավելի զարգացմանն ու ամրապնդմանը: Այս շրջափուլում ավանդական դարձան Հա-յաստան-Սփյուռք համաժողովները 2011, 2014, 2017 թթ., բիզնես ֆորումները, համահայկական խաղերը, որոնց սկզբը դրվել էր 1999 թ. և շարունակվել հետագայում՝ 2001, 2003, 2007, 2011, 2014 և 2015 թթ.:

ՀՀ սփյուռքի նախարարության անմիջական նախագահու-թյամբ մշակվեցին և իրագործվեցին հայրենիք-Սփյուռք հարա-բերությունների ավելի սերտացման և որակական նոր կապերի ամրապնդման ուղղությամբ մեծածավալ ծրագրեր: Ներդրվեցին կառուցվածքային և կառուցակարգային նոր ձևաչափեր: Սփյուռ-քը գնալով դարձավ հայաստանակենտրոն: Համահայկական մի շարք կազմակերպություններ գործակցության հուշագրեր, հա-մաձայնագրեր ստորագրեցին նախարարության հետ, կազմա-կերպվեցին բազմաթիվ հանդիպումներ և մեծածավալ միջոցա-ռումներ իրականացվեցին համայնքներում: Համատեղ աշխա-տանքներն աստիճանաբար ակտիվացան: Ուրախալի է այն փաստը, որ բազմաթիվ ծրագրերի կայացման գործում մեծ ներդրում ունեն սփյուռքյան կառույցներն ու անհատները, և ընդ-լայնվել են նախարարության ծրագրերին մասնակցողների թիվն ու աշխարհագրությունը: Ահա այս երկրորդ և երրորդ շրջափու-լերում հայրենիք-Սփյուռք առնչությունների ուսումնասիրությանն էլ նվիրված է սույն աշխատությունը: Նախորդ, հատկապես ՀՀ անկախության առաջին շրջանի հայրենիք-Սփյուռք առնչություն-ների վերաբերյալ առկա են մի շարք ուսումնասիրություններ, սակայն բաց է մնացել հատկապես 21-րդ դարասկզբի վերոնշյալ հարաբերությունների քննությունը, ուստի այն ձեռնարկելով՝

մենք նպատակ ենք ունեցել ամբողջացնելու ՀՀ անկախության շրջանում ՀՀ-Սփյուռք հարաբերությունները՝ այն հասցնելով մինչև 2017 թվական:

Աշխատության մեջ քննության են առնվել 21-րդ դարասկզբին հայրենիք-Սփյուռք հասարակական-քաղաքական սոցիալ-տնտեսական, ինչպես նաև մշակութային առնչությունները: Ներկայացվել է Հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրը՝ պայմանավորված աշխարհաքաղաքական փոփոխություններով: Միաժամանակ հայրենիք-Սփյուռք հարաբերությունները արտացոլվել են Սփյուռքի առանձին կազմակերպությունների ու միությունների ձևաչափով, բացահայտվել են այդ առնչություններում Սփյուռքի տարատեսակ ու բազմաբնույթ գործոնի առանձնահատկությունները, վերհանվել են նրա ծավալած գործունեության հիմնական ուղղություններն ու նշանակությունը: Փորձ է արվել ներկայացնելու քաղաքական կազմակերպությունների, այդ թվում՝ հայ ավանդական քաղաքական կուսակցությունների և համասփյուռքյան տարբեր կազմակերպությունների գործունեությունը հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և արցախյան հիմնախնդրի լուծման ուղղությամբ: Ուսումնասիրության շրջանակներում հանգամանորեն ներկայացվել են Հայաստան-Սփյուռք 6 խորհրդաժողովների, համահայկական խաղերի և համազգային այլ միջոցառումների դերն ու նշանակությունը ՀՀ-Սփյուռք հարաբերությունների նոր փուլի անցման գործում:

Լուսաբանվել է Սփյուռքում առնչությունների հետագա ծավալման ու զարգացման անհրաժեշտությունը: Աշխատությունում համապատասխան փաստերով ցույց են տրված նաև Սփյուռքի ներդրումները ՀՀ և Արցախի տնտեսության մեջ, հիմնադրամնե-

րի, սփյուռքյան համահայկական բարեգործական կազմակերպությունների, միությունների, տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ բարեգործների գործունեության դերն ու նշանակությունը ՀՀ և Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման և հայրենիք-Սփյուռք կապերի հետագա ամրապնդման գործում: Հույսով ենք, որ հետազոտվող թեման կլրացնի 21-րդ դարասկզբին հայրենիք-Սփյուռք առնչությունների ուսումնասիրության ուղղությամբ հայոց պատմության մեջ առկա բացը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

Ա. 21-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայտնի է, որ պատմական տարբեր ժամանակահատվածներում, սկսած վաղ միջնադարից, հայերը տեղաշարժվել են տարբեր երկրներ, աշխարհամասեր, հատկապես Եվրոպա և Ասիա, որտեղ իրենց կատարած տարաբնույթ գործունեությամբ որոշակի դրական հետք են թողել բնակություն հաստատած երկրների պատմության մեջ՝ նպաստելով նրանց զարգացմանը: Հայերն աշխարհով մեկ սփռվեցին հատկապես 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության և բռնագաղթի հետևանքով: Իր բնօրրանից՝ պատմական Հայաստանից քշված հայությունը ստեղծեց Հայկական սփյուռքը՝ գոյության ողջ ընթացքում գերլարված պայքար մղելով տարբեր երկրներում ազգային դիմագիծը պահպանելու համար: Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տարբեր երկրներում բնակվող հայությունը շտապեց ամեն կերպ օգնության ձեռք մեկնել իր հայրենաբնակ ժողովրդին: Ահա թե ինչու հայրենիքից բռնագաղթված հայությունը առաջին հերթին ձգտում էր հաստատվել այն երկրներում, որտեղ արդարացիորեն կապավիներ ազգակիցների օգնությանը: Սա սկզբնական շրջանում էր, իսկ հետագայում նրանց տեղաշարժերի արդյունքում հայկական համայնքներ ձևավորվեցին շատ ավելի մեծ թվով երկրներում:

Արտերկրում բնաջնջումից փրկված Հայկական սփյուռքը հաղթահարեց բազմաթիվ դժվարություններ՝ հարմարվելով նոր պայմաններին, վերապրելով ցեղասպանության ցավն ու տառապանքը՝ սովորեց բնակության երկրի լեզուն, գտավ աշխատանք, հիմնեց դպրոցներ, եկեղեցիներ, ստեղծեց կազմակերպություններ, որոնց միջոցով շարունակեց պահպանել ազգային դիմագիծը: Լինելով շնորհաշատ ու աշխատասեր՝ սփյուռքահայությունն իր նպատակալաց գործունեություն ու վաստակի շնորհիվ դարձավ հյուրընկալող երկրների անբաժանելի մասնիկը:

Ըստ ՀՀ սփյուռքի նախարարության տվյալների՝ 21-րդ դարասկզբին Հայաստանից դուրս ապրող հայերի թիվը, ըստ աշխարհամասերի ու տարածաշրջանների, կազմում է 7 մլն 202552 (առանց իսլամացված և ժպտյալ հայերի թվաքանակի)[2]: Հայեր բնակվում են աշխարհի 117 երկրներում[3]:

Հայկական սփյուռքն ամենատարածված համայնքներից է աշխարհում: Նույն նախարարության տվյալներով՝ հայության մեծ մասը գտնվում է ԱՊՀ երկրներում (շուրջ 3 մլն), Հյուսիսային և Կենտրոնական Ամերիկայում (շուրջ 1.7 մլն), Եվրոպայում (շուրջ 1.7 մլն): Զգալի թվով հայեր կան նաև Հարավային Ամերիկայում (շուրջ 4600 հազար)[4]: Ամենամեծ համայնքների թվին են պատկանում Ռուսաստանի Դաշնության (2 մլն 600 հազար), ԱՄՆ-ի (1 մլն 600 հազար), Ֆրանսիայի (700 հազար), Ուկրաինայի (500 հազար), Վրաստանի (250 հազար), Արգենտինայի (128 հազար), Իրանի (120 հազար), Բրազիլայի (100 հազար), Լի-

---

[2] Տե՛ս Հակոբյան Հ., Հայկական Սփյուռքը հարափոփոխ աշխարհում, Ե., 2017, էջ 46, 499:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 46:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 47:

բանանի (140 հազար), Կանադայի (90 հազար), Ավստրալիայի (85 հազար) հայ համայնքները[5]:

Պատերազմներով, հակամարտություններով ու տնտեսական ճգնաժամերով պայմանավորված՝ 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին Հայկական սփյուռքում ևս տեղի ունեցան կառուցվածքային փոփոխություններ: Այլևս գոյություն չունի Ադրբեջանի խոշոր հայկական համայնքը, որտեղ մինչև 1990 թ. ապրում էր շուրջ կես միլիոն հայ, մեծ քանակությամբ նվազել է Միջին Արևելքի երկրներում, հատկապես Սիրիայում ապրող հայության թվաքանակը[6]:

Հայության թվաքանակի անկումը պայմանավորված էր Արցախյան ազգային ազատագրական շարժմամբ, Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում և այլ շրջաններում կազմակերպված հայերի ցեղասպանությամբ, հայության բռնագաղթով[7], ինչպես նաև Սիրիայում սկսված պատերազմով:

21-րդ դարասկզբին մերձավորարևելյան ճգնաժամի, մասնավորապես Իրանա-իրաքյան, Իրաքա-քուվեյթյան, Սիրիական և այլ պատերազմների հետևանքով տարածաշրջանի ստվարաձավալ հայկական համայքները զգալիորեն նոսրացան՝ կրելով մարդկային նյութական և բարոյական վնասներ, ինչի հետևանքով հայության մի մասը արտագաղթեց այլ երկրներ[8]:

Սփյուռքահայության, ինչպես և ցանկացած ազգային փոքրամասնության գոյավիճակը պայմանավորված է ընդունող երկրների սոցիալ-քաղաքական, տնտեսական և մշակութային

---

[5] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 495-496, 498-499:
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 48:
[7] Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայկական համայքները խորհրդային հանրապետություններում 1991-1991 թթ., Ե., 2016, էջ 55-57:
[8] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 48:

առանձնահատկություններով: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր հայ համայնքի առանձնահատկությունը պայմանավորված է ամեն մի առանձին ընդունող երկրի զարգացման յուրահատկությամբ: Հայկական սփյուռքի առանձնահատկությունները ընդգծվում են ըստ տարբեր շրջանների՝ Արևելքի, Արևմուտքի, Հարավային Ամերիկայի և ԱՊՀ երկրների հայկական համայնքների[9]: Ամեն մի համայնքի իրավական կարգավիճակը պայմանավորված է բնակության երկրի օրենսդրությամբ: Արևելքի երկրների (Իրան, Լիբանան և այլն) հայկական համայնքները ճանաչվում են որպես ազգային-կրոնական համայնքներ, ինչի շնորհիվ համայնքներն իրենց ներկայացուցիչներն ունեն այդ պետությունների խորհրդարաններում և կառավարություններում:

Հայկական սփյուռքում այսօր կան քաղաքներ ու գյուղեր, որոնք ամբողջությամբ կամ հիմնականում հայկական ինքնության յուրօրինակ կղզյակներ են: Այդպիսի հայաբնակ բնակավայրեր կան ՌԴ-ում, Աբխազիայում, Վրաստանում, Թուրքիայում, Լիբանանում, Սիրիայում և այլուր[10]:

21-րդ դարասկզբին սփյուռքահայ համայնքները կարողացան արագորեն ինտեգրվել օտար հասարակություններին[11]: Հարկ է նկատել, որ այսօր 833 համայնքներում (երկիր ու քաղաք) հայկական կազմակերպությունների թիվը անցնում է 30 հազարից, և նշված կազմակերպություններն իրենց գործունեությամբ համախմբում են հայության կարևոր հատվածը[12]:

---

[9] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Ե., 2003, էջ 9:
[10] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 49:
[11] Տե՛ս նույն տեղում:
[12] Տե՛ս Հակոբյան Հ., Հայաստան-Սփյուռք գործակցության պետական քաղաքականության հիմնախնդիրները, Սփյուռքի կազմակերպությունների ղեկավար-

Սփյուռքը ցանցային և կազմակերպված դարձրին ավելի քան 44 համահայկական, համասփյուռքյան հասարակական, եկեղեցական, մշակութային, բարեգործական կազմակերպություններ՝ Հայ եկեղեցին, ՀՅԴ-ն, ՌԱԿ-ը, ՍԴՀԿ-ն, ՀԲԸՄ-ն՝ իրենց կից կառույցներով, որոնք լրացնում են կրթամշակութային, առողջապահական և մարզական միությունները, հանձնախմբերը, հիմնարկություններն ու հիմնադրամները[13]: Հենց այս կառույցներն են, որոնք համախմբում են հայությանը՝ ամրապնդելով հայրենիք-Սփյուռք կապերն ու հայության շահերը ներկայացնելով ամենուր: Վերոնշյալ կազմակերպություններն ավելի քան 20-50 երկրներում ունեն իրենց մասնաճյուղերն ու գրասենյակները: ՀՀ անկախությունից հետո գրեթե բոլոր համահայկական կառույցներն իրենց գրասենյակները հիմնեցին Հայաստանում, դրանց կենտրոնական մարմինները հիմնականում գտնվում են հայրենիքում, Լիբանանում և ԱՄՆ-ում[14]:

Համահայկական կառույցները երկար տարիների գործունեության ընթացքում կատարել ու 21-րդ դարասկզբին ևս շարունակում են կատարել մեծածավալ ազգանվեր աշխատանքներ: Հայկական հոգևոր կառույցները, Սփյուռքում գործունեություն ծավալող ավանդական կուսակցությունները հետևողականորեն պայքարում են համահայկական հարցերի, համազգային առաջնահերթությունների, ազգային ինքնության պահպանման, հայրենիքի հետ կապերի ամրապնդման և ազգային կարևոր նշանակություն ունեցող խնդիրների, մասնավորապես Հայոց ցեղա-

---

ների և ներկայացուցիչների համահայկական համաժողով, համաժողովի նյութեր (խմբագիրներ՝ Մխիթարյան Գ., Մկրտչյան Ն.), Ե., 2011, էջ 53:

[13] Տե՛ս Հակոբյան Հ., Հայկական Սփյուռքը հարափոփոխ աշխարհում (հավելված 4), էջ 514-518:

[14] Տե՛ս նույն տեղում, էջ 50:

սպանության միջազգային ճանաչման ու դատապարտման վերաբերյալ բանաձևերի, հայտարարությունների ընդունման, ԼՂ հիմնախնդրի ներկայացման, հայրենիք-Սփյուռք համագործակցության ամրապնդման ուղղությամբ:

Քրիստոնեական հավատը հայի մեջ ամրապնդելու և պահպանելու, աճող սերնդին ազգային արմատներին ու արժեքներին հաղորդակից դարձնելու, նրանց հավատարմության ոգով դաստիարակելու, սփյուռքահային օտար հողում հայ պահելու գործում չափազանց մեծ է Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու դերը, որը զբաղվում է նաև սփյուռքահայ համայնքների կազմակերպման ու հետագա կապերի ամրապնդման գործով: Ներկայումս Սփյուռքում գործում են 727 հայկական եկեղեցի, բազմաթիվ մատուռներ ու վանքեր, հազարավոր խոնարհված եկեղեցիներ ու կառույցներ, որոնք հայոց պատմամշակութային ժառանգության մի մասն են կազմում, այսօր հոգածության կարոտ են հատկապես մեր հարևան Ադրբեջանում և Թուրքիայում[15]:

Սփյուռքում հայապահպանման գործում որոշակի դերակատարում ունեն մոտ 1000-ի հասնող ամենօրյա և մեկօրյա դպրոցներն ու դասընթացները, որոնք շուրջ 400 հազար երեխաների մայրենի լեզուն ուսուցանելու սրբազան գործով են զբաղված[16]: Ամենօրյա դպրոցներ գործում են հիմնականում Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում, Վրաստանում, Աբխազիայում, ԱՄՆ-ում, Լատինական Ամերիկայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Կիպրոսում, Բուլղարիայում[17]: Դրանց թիվն անընդ-

[15] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 52:
[16] Տե՛ս նույն տեղում:
[17] Տե՛ս նույն տեղում, էջ 53:

հատ ավելանում է: Մեկօրյա (շաբաթօրյա, կիրակնօրյա), երկօրյա դպրոցները գործում են հայկական եկեղեցիներին, համահայկական կառույցներին, համայնքային կազմակերպություններին կից, ինչպես նաև օտար համալսարաններում, հայագիտական ամբիոններում, կենտրոններում գործող դասարաններում, որտեղ կազմակերպվում են հայրենագիտական առարկաների դասընթացներ:

Սփյուռքի հայկական համայնքներում հայագիտական հարուստ արժեքների պահպանմանը մեծապես նպաստում են թանգարանները, արխիվներն ու մի շարք համալսարաններում, գիտական հաստատություններում գործող հայագիտական կենտրոնները: Ըստ Սփյուռքի նախարարության տվյալների՝ այսօր աշխարհի տարբեր երկրներում կան գործող 107 հայագիտական կենտրոններ (ԱՄՆ-ում՝ 29, ՌԴ-ում՝ 12, Իտալիայում՝ 10, Ֆրանսիայում՝ 9, Լիբանանում՝ 7 և այլն), 30 թանգարաններ, գրադարաններ, արխիվներ, որոնք հարստացնում են ոչ միայն հայագիտությունը, այլև համաշխարհային քաղաքակրթության գանձարանը[18]: Սփյուռքի ամրապնդման, ազգային ինքնության պահպանման, հայրենիքի հզորացման, հայության ազգային շահերի պաշտանության հարցում անգնահատելի ավանդ ունեն ազգային քաղաքական կուսակցությունները (ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ) և լոբբիստական իրազեկման կառույցները (Հայ դատի հանձնախումբ, Ամերիկայի հայկական համագումար, Ամերիկայի հայ ազգային կոմիտե և այլն):

Հայկական լոբբին առավել ակտիվացել է վերջին 40 տարում, իսկ Հայաստանի անկախությունից հետո դարձել է առավել ճկուն, քանի որ առկա է համագործակցություն Հայաստանի պե-

[18] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 53:

տական կառույցների, մասնավորապես ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ[19]: Այդ համագործակցությունը 21-րդ դարասկզբին ավելի ակտիվացավ՝ դառնալով Հայկական սփյուռքի գործունեության առանձնահատկություններից մեկը:

Կարևոր առանձնահատկություններ են նաև վերջին շրջանում հայոց անկախ պետության նախաձեռնությամբ և օգնությամբ Սփյուռքում համայնքների ներուժի բացահայտման և համախմբման ուղղությամբ իրականացվող միջոցառումներն ու վերակազմակերպման գործընթացները: Նման կառույցները, համախմբելով հայ ճարտարապետներին, իրավաբաններին, լրագրողներին, գործարարներին, բժիշկներին, նկարիչներին, գիտնականներին և այլ մասնագիտությունների տեր մարդկանց, ծավալել են ցանցային ակտիվ գործունեություն և աշխարհին ներկայանում են նորարարություններով, միասնական ու հեռանկարային բազմաթիվ ծրագրերով[20]:

21-րդ դարասկզբին Հայկական սփյուռքի կարևոր բնութագրիչներից են մշակութային հարուստ ժառանգությունն ու այդ ուղղությամբ նրա յուրահատուկ ձեռքբերումները: Ապրելով և արարելով տարբեր քաղաքակրթական միջավայրերում, տարբեր մշակույթների ազդեցության ներքո՝ հայն անաղարտ է պահում իր մշակույթը՝ որպես հայության հոգևոր ժառանգության դրսևորում: Ուստի պատահական չէ, որ ներկայումս հարյուրից ավելի երկրների հայկական համայնքներում գործում են 637 մշակութային կենտրոններ ու միություններ, երգի ու պարի բազ-

[19] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 54:
[20] Տե՛ս նույն տեղում:

մաթիվ համույթներ, ասմունքի խմբեր, երաժշտական, նկարչական դպրոցներ, ուսուցողական խմբակներ և այլն[21]:

Հայությունը կարևոր դերակատարում ունի համաշխարհային գիտության և քաղաքակրթության առաջընթացում: Անգնահատելի է հայ գիտնականների ներդրումը հատկապես ֆիզիկայի, միջուկային ֆիզիկայի, քիմիայի, լուսաքիմիայի, բնագիտության, մաթեմատիկայի, մեքենաշինության, բժշկագիտության, տիեզերաբանագիտության, ավիաշինության, բարձր տեխնոլոգիաների, ռազմական և այլ գիտությունների զարգացման գործում[22]: Ուշագրավ են հատկապես նրանց կողմից արված գյուտերն առաջին արևային էներգիայով աշխատող ռադիոհաղորդչի, մագնիսային ռեզոնանսային պատկերների ախտորոշման ու լապարասկոպիկ սարքերի, Մենդելևի աղյուսակում նոր տարրերի հայտնաբերման, մոլեկուլային ֆիզիկայի, ատոմային էներգետիկայի և այլ բնագավառներում: Հայի հանճարեղ մտքի հայտնագործությունների արդյունք են ամերիկյան դոլարին հատուկ կանաչ և սև գույները, ԴՆԹ-ի ստացումը, բժշկության մեջ օրգանների փոխպատվաստման ուղղության հիմնումը, ռոտավիրուսի պատվաստանյութի, մեքենայի ավտոմատ փոխանցման տուփի, բենզինային պոմպի, ավտոմեքենայի ապակիների մաքրիչների, մարզական ավտոմեքենայի հիդրավլիկ պատնեշի, օդաչուների թթվածնային դիմակի, յուրահատուկ տեսակի ջրի ծորակի, համակարգչային տոմոգրաֆիայի միջոցով մարդու մարմնի պատկերը վերարտադրող սարքի, բանկոմատի, հեռահուշարարի, առաջին պլաստիկե պարունակիչների (կոնտեյներներ), պլաստիկ շշերի արտադրման մեքենայի, ճկվող ձո-

---

[21] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 55:
[22] Տե՛ս նույն տեղում:

ղիկների, հաշմանդամի ձեռակառավարմամբ սայլակի, մազի ֆոլիկուլի, մազերի պատվաստման մեթոդի, առաջին տեսա-փլեյերի և այլ կարևոր սարքերի հայտնաբերումը[23]:

Հարափոփոխ աշխարհում սփյուռքահայության ներուժը, հայ մասնագետների դերակատարությունը դրսևորվեց նաև տե-ղեկատվական տեխնոլոգիաների նանո և բիո ոլորտներում: Բազմաթիվ շնորհաշատ սփյուռքահայեր, ամբողջ աշխարհում գովազդելով հայկական տեխնոլոգիաները, իրենց գործունեու-թյամբ Արևմուտքում հիմնել են բազմաթիվ ընկերություններ, որոնք իրենց մասնաճյուղերն ու համատեղ ձեռնարկություններն ունեն նաև Հայաստանում, և դրանք մեծապես նպաստում են կրթության զարգացմանը: Ներկայումս մեծ ճանաչում ունի «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, որը գնալով ընդլայնում է իր գործունեությունը՝ հասնելով մինչ Արցախ[24]:

«Այբ», «Անանիա Շիրակացի», «Ֆիզմաթ», «Քվանտ» կրթա-համալիրներն այսօր միջազգային կրթական շարժման մասն են կազմում: Միջազգային կրթական նոր որակ ու մշակույթ է ձևա-վորել Ռուբեն Վարդանյանի նախագահությամբ Դիլիջանում գործող միջազգային դպրոցը[25]: Սփյուռքահայությունը մեծ ներ-դրում ունի նաև 21-րդ դարասկզբի համաշխարհային մշակույթի զարգացման մեջ:

Սփյուռքահայերից շատերը հռչակ ու ճանաչում են ձեռք բե-րել գրականության, արվեստի, երաժշտության, կերպարվեստի, ճարտարապետության, թատրոնի, կինոյի և այլ ոլորտներում:

---

[23] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 56:
[24] Տե՛ս նույն տեղում, էջ 59:
[25] Տե՛ս նույն տեղում:

21-րդ դարասկզբին աշխարհաքաղաքական փոփոխությունների, համաշխարհայնացման գործընթացների և ներսփյուռքյան տեղաշարժերի հետևանքով Հայկական սփյուռքը, վերափոխումների ենթարկվելով, ձեռք բերեց նոր հատկանիշներ՝ միաժամանակ պահպանելով տվյալ միջավայրում հիմնական առանձնահատկությունները[26]: Կարևորագույն առանձնահատկություններից է այն, որ հավաքական ինքնագիտակցությամբ կապված լինելով մայր հայրենիքին՝ ներկայիս Հայկական սփյուռքի առաջ շարունակում է ծառացած մնալ հայկական ինքնության պահպանման և սերունդներին հայ պահելու լուրջ խնդիրը, որն անհրաժեշտ է առաջին հերթին միասնականության պահպանման համար: Ներկայիս Սփյուռքը, անկախ իր սփռվածության աստիճանից, դարձել է ցանցային, որի համար փրկության խարիսխ է Հայաստանը, իսկ համախմբման առանցքը կազմում են Հայաստանի Հանրապետության հզորացումը և Արցախի հիմնախնդրի կարգավորումը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման հիմնահարցերը[27]:

Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ համաշխարհայնացման գործընթացների արդի փուլում սփյուռքահայության հիմնախնդիրներն ավելացել են պատերազմների, հակամարտությունների, բնական աղետների հետևանքով, ինչի արդյունքում ակտիվացել են հայության տեղաշարժերն Արևելքից Արևմուտք, դրանք էլ իրենց հերթին պատճառ դարձան Հայկական սփյուռքի կառուցվածքային փոփոխության ու վերաձևավորման: Մերձավոր Արևելքում սկսված Սիրիական պատերազմի, իսլա-

[26] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 65:
[27] Տե՛ս նույն տեղում, էջ 66:

մական պետության մղած ռազմական այլ գործողությունների իրավիճակի սրման պատճառով քայքայվել ու կազմալուծման եզրին են հայտնվել տարածաշրջանի հայկական երբեմնի հոծ բնակեցված համայնքները, որի բազմահազար հայ բնակչությունը դարձել է փախստական: Թեև 22 հազար հայ Սիրիայից տեղափոխվեց Հայաստանի Հանրապետություն, և հայոց պետությունը ստեղծեց հնարավոր բոլոր պայմանները նրանց կրթության, աշխատանքի, սոցիալական խնդիրների լուծման համար, այնուամենայնիվ սիրիական համայնքի կեսը նախընտրեց հաստատվել այլ երկրներում, որտեղ ծագեցին բազում հիմնահարցեր՝ փաստաթղթերի, կացության, աշխատանքի և այլնի հետ կապված[28]:

21-րդ դարասկզբի Հայկական սփյուռքի երրորդ առանձնահատկությունը պայմանավորում է դասական Սփյուռքի և Հայաստանից մեկնածների միջև սերտ համագործակցության բացակայության փաստը: Նշված հարցին միանգամյան ճիշտ գնահատական է տվել ՀՀ սփյուռքի նախկին նախարար Հ. Հակոբյանը՝ գրելով. «Ակնհայտ է, որ հայերը համախմբվում են համահայկական խնդիրների շուրջ և հատկապես ցավի ու վտանգների դեպքում դառնում են միասնական, սակայն հայաստանցիների մի ստվար հատվածը ներգրավված չէ համայնքային կյանքում: Թեև Սփյուռքի նախարարությունը իրականացնում է մի շարք ձեռնարկներ համայնքային կառույցների հետ, այդուհանդերձ մերձեցման խնդիրները մնում են օրակարգային»[29]:

Չորրորդ առանձնահատկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայկական սփյուռքում դեռևս կան երկրներ

---

[28] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 66:
[29] Տե՛ս նույն տեղում:

(Մեքսիկա, Աֆրիկա, Հարավային Ամերիկայի մի շարք երկրներ, ՌԴ-ի որոշ տարածքներ), որտեղ հայկական համայնքի ինքնակազմակերպումը բարվոք մակարդակի վրա չէ: Դրանց կողքին հզոր ու կազմակերպված են այն համայնքները, որոնցում գործում է համահայկական կազմակերպությունների ցանցը՝ իր կենտրոնական մարմիններով ու մասնաճյուղերով: Խոսելով համայնքային միջոցառումների կարևորության մասին՝ ՀՀ սփյուռքի նախկին նախարար Հ. Հակոբյանը ընդգծել է. «Բայց ցավալիորեն պետք է արձանագրել, որ համայնքի 70-80 %-ը չի մասնակցում համայնքային միջոցառումներին, օտարված է, և գնալով թուլանում են հայության և հայկականության հետ կապերը»[30]:

Հինգերորդ առանձնահատկությունը Հայկական սփյուռքում ուծացման վտանգի մեծացման առկայությունն է, որը պայմանավորված է օտար պետություններում ազգային ինքնության պահպանման բնորոշ հատկանիշներից հեռանալով, մայրենի լեզվի գործածության համար անհրաժեշտ հավաքական ու նպաստավոր միջավայրի բացակայությամբ, Սփյուռքի հայկական դպրոցների ոչ նպատակային ու համակարգված գործունեությամբ, ինչպես նաև խառնամուսնությունների թվի ավելացմամբ, որը որոշ համայնքներում կազմում է 50-90 %[31]: Այս ամենին այսօր շատ հաճախ գումարվում է ավանդական հայ ընտանիքին բնորոշ հատկանիշների՝ սովորույթների, ավանդույթների, կենցաղի աստիճանական վերացումը:

Վեցերորդ առանձնահատկությունը պայմանավորված է 21-րդ դարասկզբին սփյուռքահայության համընդհանուր տեղաշար-

---

[30] Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 67:
[31] Տե՛ս նույն տեղում:

ժերի հաճախականության ավելացմամբ՝ կապված գերդաստանային համախմբման, հայկական ընտանիքի վերամիավորման գործոնի հետ:

Յոթերորդ առանձնահատկությունը պայմանավորված է նշված դարաշրջանում մի շարք երկրներում հայկական պատմամշակութային հարուստ ժառանգության, մասնավորապես ճարտարապետական կառույցների, շենքերի, եկեղեցիների և այլ կառույցների սպառնալիքի տակ հայտնվելու գործոնով: Դա շարունակում է դրսևորումներ ստանալ հարևան Ադրբեջանում և Թուրքիայում: Այսօր վտանգի տակ է նաև Մերձավոր Արևելքի տարածաշրջանում, նաև Կենտրոնական Եվրոպայում (Վենետիկ, Վիեննա և Փարիզ) կուտակած մշակութային և նյութական հարուստ ժառանգությունը:

Ութերորդ առանձնահատկությունը պայմանավորում է այն հանգամանքը, որ սփյուռքահայ համայնքներում ապրող չորրորդ սերունդը Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց դարձել է ավելի պահանջատեր և առավել կազմակերպված շարունակում է պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու հետևանքների վերացման ուղղությամբ:

Իններորդ առանձնահատկությունը ներառում է 21-րդ դարում աշխարհաքաղաքական փոփոխությունների պայմաններում սփյուռքահայ համայքներում առաջնային դարձած տեղեկատվական անվտանգության խնդիրը[32]: Դա դրսևորում է ստացել Թուրքիայի և Ադրբեջանի կողմից հայատյացության և հակահայկական քարոզչության շրջանակներում:

Տասներորդ առանձնահատկությունը պայմանավորում են ներկա իրավիճակում Հայաստանին և Սփյուռքին նետված հա-

[32] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 68:

մազգային մարտահրավերներից Արցախի չկարգավորված հիմնախնդիրը և Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից Հայաստանի շարունակվող շրջափակումը: Վերջինս տնտեսական լուրջ հարված է հասցնում Հայաստանի Հանրապետությանը՝ նպաստելով արտագաղթին, գործազրկության և աղքատության աճին, ինչին ավելի ակտիվորեն արձագանքում է Հայկական սփյուռքը[33]:

Տասնմեկերորդ առանձնահատկությունը պայմանավորված է 21-րդ դարի Հայկական սփյուռքի ապակենտրոնացված լինելու հանգամանքով: Այն համախմբված չէ մեկ միասնական համահայկական կառույցի ներքո, ինչպես մի շարք երկրների խոշոր սփյուռքները: Նման խնդրի լուծման կարևոր փորձերից պետք է համարել Հայոց ցեղասպանության 100-րդ տարեդարձի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի՝ 2015 թ. սեպտեմբերի 26-ի նիստի որոշումը համահայկական խորհուրդ ձևավորելու վերաբերյալ, որով ստեղծվեց կազմակերպչական հանձնախումբ՝ պետական, հոգևոր, համահայկական կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ[34]: Խորհուրդը կարող է ունենալ տարածաշրջանային և թեմատիկ հանձնախմբեր, և նիստերը գումարվելու են տարեկան մեկ անգամ Երևանում մշտական միասնական օրակարգով[35]: Սփյուռք-Հայաստան համագործակցությանը նպաստող նշված կենտրոնի գործունեությանը զուգահեռ Սփյուռքում ստեղծվել են նաև համապատասխան մարմիններ և կառույցներ, որոնք ևս նպատակաուղղված են համահայկական խնդիրների լուծմանը:

---

[33] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 69:
[34] Տե՛ս նույն տեղում:
[35] Տե՛ս նույն տեղում, էջ 70:

ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումով, 2008 թ. հոկտեմբերից սկսած, Հայկական սփյուռքի հետ կապերին ու փոխհարաբերություններին հաղորդվեց նոր որակ: Դրանք ոչ միայն սերտացան ու հզորացան, այլև բարելավվեցին կապերը տարբեր կառույցների, մարմինների ու կենտրոնների միջև: Նկատվել է նաև համագործակցության աճ, իրականացված ծրագրերում առկա է փոխհամագործակցություն, որն ակնհայտ է համահայկական խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներում:

21-րդ դարասկզբի Հայկական սփյուռքը դարձել է անկախ Հայաստանի Հանրապետության շարունակությունն ու նրա անվտանգության բաղադրիչը: Ներկայիս Սփյուռքը դարձել է հավերժ ներկայություն Հայաստանում, հայկական մերօրյա իրականության անբաժանելի մասը[36]:

Հարկ է նկատել, որ Սփյուռքը, դառնալով հուսալի կամուրջ հայրենիքի հետ կապերի ամրապնդման ոլորտում, միաժամանակ նպաստում է այլ երկրների հետ Հայաստանի Հանրապետության երկկողմ հարաբերությունների զարգացմանը, բարեկամության հաստատմանը, հայ ինքնության պահպանմանը՝ աջակցելով նաև հայրենիքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը: Հաշվի առնելով 21-րդ դարի նոր իրողությունները՝ Հայաստանի Հանրապետությունը Սփյուռքի տարբեր կառույցների և կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում մշակել է ու շարունակում է զարգացնել պետական քաղաքականության կարևորագույն ուղղություններն ու սկզբունքները, ինչն էլ կազմում է արդի փուլի կարևոր առանձնահատկությունը: ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումով կյանքի կոչվեց Հայաստան-Սփյուռք գործակցության զարգաց-

[36] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 71:

ման պետական քաղաքականությունը: ՀՀ պետական քաղաքականությունը Հայաստան-Սփյուռք գործակցության ոլորտում դիտարկվում է որպես երրորդ հազարամյակի սկզբի համագործակցության գլխավոր առանձնահատկություն:

1991 թ. Հայաստանի երրորդ հանրապետության ստեղծումով միանգամայն նոր որակական փուլ սկզբնավորվեց հայրենիք-Սփյուռք հարաբերություններում: Անկախության առաջին տարիներին շարունակում էր գործել դեռևս 1964 թ. ստեղծված Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, որը հայրենիք-Սփյուռք հարաբերություններին կազմակերպչական ուղղվածություն հաղորդեց: Այն մեծ դեր խաղաց հայրենիք-Սփյուռք կապերի ընդլայնման և զարգացման գործում: Դրան նպաստել էր նաև այն հանգամանքը, որ կոմիտեի ղեկավարությունն իրավունք ուներ կուսակցության և պետության որոշ մարմինների հսկողությամբ ազատ կապեր հաստատելու սփյուռքահայ կազմակերպությունների հետ՝ հաշվի առնելով նաև քաղաքական գործոնները[37]:

1991-1994 թթ. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն գլխավորում էր ակադեմիկոս Հ. Սիմոնյանը: Նրա նախագահությամբ մշակվեց կոմիտեի գործունեության նոր կանոնադրությունը: «Ղեկավարվելով հայ ժողովրդի ընդհանրական շահերով՝ նոր կոմիտեն առաջնություն չի տալու գաղափարախոսական որևէ ուղղության՝ ի վնաս մյուսների: Հայաստանը աշխարհով մեկ սփռված հայերի հայրենիքն է՝ անկախ նրանց կուսակցական պատկանելիությունից և դասային դրությունից: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն պետք է

[37] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 414:

լիովին զերծ լինի որևէ կուսակցական ազդեցությունից»,[38]– հայտարարել է կոմիտեի նախագահը:

Նոր մշակված կանոնադրությամբ հատուկ ուշադրություն էր բևեռվում հայրենիքի հետ իրականացվող աշխատանքների կարգավորմանը, համատեղ կառույցների ստեղծմանը, տնտեսական ու մշակութային մերձեցմանը, ինչպես նաև գիտակրթական համագործակցությանը:

Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում նոր էջ դարձավ Արցախի ազատագրական պայքարը (1988-1994 թթ.), որը լայն արձագանք գտավ Սփյուռքում: Նրան սատար կանգնեց ողջ հայությունը թե՛ Հայաստանում և թե՛ արտերկրում: Սփյուռքահայությունը Արցախին աջակցեց ոչ միայն նյութական, բարոյական և այլ միջոցներով, այլև ադրբեջանա-արցախյան պատերազմին իր անմիջական ու գործուն մասնակցությամբ: Սփյուռքահայ քաջամարտիկների թվում էին Մոնթե Մելքոնյանը, Վիգեն Զաքարյանը, Միեր Ջուլիաճյանը, Կարո Քահքեջյանը, Լևոն Թաշճյանը, Ժիրայր Սեֆիլյանը և այլոք: Նրանցից առաջին չորսը իրենց կյանքը զոհեցին արցախյան կռիվներում, իսկ Մոնթե Մելքոնյանը հետմահու արժանացավ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ազգային հերոսի կոչման:

Արցախի շարժման և պատերազմի օրերին պարզ դարձավ, որ թուրք-ազերական բռնություններին դիմակայելու հիմնական ուղին միասնությունն ու համախմբվածությունն են: Այդ գիտակցությունն էլ ավելի ամրապնդվեց դեռևս 1988 թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժի հետևանքները վերացնելու համար ծավալված պայքարում: Այն հայրենիքում և Սփյուռքում առաջին պլան մղեց ազգապահպանման գաղափարը և համապատասխան

[38] «Հայրենիքի ձայն», 27 մարտի, 1991:

գործելակերպ մշակեց: Արցախի ազատագրական շարժումն ու երկրաշարժը ցնցեցին ողջ հայությունը և ամրապնդեցին ազգային միասնության գաղափարը: Անշուշտ, դրա համար հիմք ծառայեց Հայաստանի անկախ Հանրապետությունը, որն ամբողջ հայության հենարանն է:

Փաստորեն՝ անկախության ձեռքբերումից հետո պարզվեց, որ Սփյուռքի և Հայաստանի փոխհարաբերությունների մասին եղած ընկալումները թելադրված էին պահի պահանջներով: Բացակայում էր այն համազգային ծրագիրը, որի իրագործմանը պետք է լծվեին բոլոր հայերը՝ անկախ իրենց բնակավայրերից: Այժմ նոր հարթության վրա են դրված հայրենիք-Սփյուռք առնչությունները: Հայաստանը նպաստելու է Սփյուռքի հայապահպանության գործունեությանը, իսկ Սփյուռքն օգնելու է Հայաստանի Հանրապետության անկախության ամրապնդմանն ու տնտեսական զարգացմանը: «Այժմ յուրաքանչյուր հայի ձայն,– նշել է «Հայություն» շաբաթաթերթը,– որտեղից էլ նա լսվի, հայրենիքի ձայնն է»[39]:

Հայ ժողովուրդը համոզվեց, որ հայրենիքն ու Սփյուռքն այսուհետ առանձին-առանձին գոյություն ունենալ չեն կարող: Նրանց փոխհարաբերությունները պետք է խարսխվեն «Մեկ հայրենիք, մեկ ազգ» կարգախոսի ներքո: Սակայն այդ հարաբերությունները պետք է նաև փոխշահավետ լինեն: Սփյուռքը չպետք է միայն տեսնել անվերադարձ օգնություն կատարողի դերում: Սփյուռքը նույնպես ամրապնդվելու կարիք ունի, և դրան մեծապես կարող է նպաստել հայրենիքը: Սփյուռքին սպառնում է ձուլման վտանգը: Հատկապես նոր սերնդի փոքր մասն է կապված ազգային կառույցների հետ, և նրանց ձուլման վտանգը

[39] «Հայություն», 14 փետրվարի, 1992:

շատ մեծ է: Այս և այլ հարցերի կարգավորման նպատակով 1996 թ. Հայաստանի Հանրապետության կառավարության կազմում ստեղծվեց Սփյուռքի հետ կապերի ստորաբաժանում, որի հիմնական նպատակը ճիշտ համագործակցության ապահովումն էր. «Մեր միասնական նպատակը,– հայտարարվեց ՀՀ կառավարության անունից,– պետք է լինի ուժեղ Հայաստան ու ուժեղ Սփյուռք ստեղծելը: Ճակատագրի բերումով հայրենիքի խնդիրները Սփյուռքինն են և հակառակը»[40]:

Որոշ ժամանակ անց ՀՀ արտաքին գործերի նախարարության կազմում ձևավորվեց գործակալություն, իսկ 2000 թ. հունիսի 23-ին, ըստ ՀՀ կառավարության N 342 որոշման, նույն նախարարության կազմում ստեղծվեց գերատեսչական կարգավիճակ ունեցող Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարություն[41]: 2000 թ. սեպտեմբերին կառավարության հաստատմանը ներկայացվեցին քարտուղարության կանոնադրության և կենտրոնական ապարատի, կառուցվածքի նախագծերը, որոնք հաստատվեցին ՀՀ վարչապետի՝ 2000 թ. սեպտեմբերի 15-ի N 633 որոշմամբ[42]:

Կանոնադրության համաձայն՝ Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարությունը պետական կառավարման հանրապետական մարմին էր, որն իրականացնում և համակարգում էր Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունները՝ ենթարկվելով ՀՀ արտաքին գործերի նախարարությանը և ՀՀ կառավարությանը[43]:

Կանոնադրությունը բաղկացած էր երեք մասից՝

---

[40] «Առավոտ», 10 հունվարի, 1997:
[41] Տե՛ս «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 15(113), 10 հուլիսի, 2000, էջ 26:
[42] Տե՛ս նույն տեղում, էջ 137-142:
[43] Տե՛ս նույն տեղում, էջ 137:

1) ընդհանուր դրույթներ,

2) քարտուղարության հիմնական խնդիրները և գործառույթները,

3) քարտուղարության աշխատանքների կազմակերպումը:

Քարտուղարության հիմնական խնդիրը ՀՀ-Սփյուռք փոխհարաբերությունների համակարգումն էր՝ նպաստելով ՀՀ և Սփյուռքի միջև բազմակողմանի կապերի հաստատմանը, համագործակցության զարգացմանն ու խորացմանը: Այդ համագործակցությունը վերաբերում էր Սփյուռքի քաղաքական, բարեգործական, հայրենակցական, գիտական, կրոնական և համայնքային այլ կազմակերպություններին, ինչպես նաև առանձին անհատներին՝ անկախ նրանց գաղափարական համոզմունքներից և կրոնական դավանանքից[44]: Կարևոր խնդիրների շարքում են հայ եկեղեցու հետ համագործակցությունը, հայ ժողովրդի երկու հատվածների միջև համազգային փոխըմբռնման, փոխվստահության, միասնության և համախմբվածության մթնոլորտ ստեղծելու, համահայկական հարցերի շուրջ բազմակողմանի համագործակցություն ապահովելու նպատակով աշխատանքների կատարումը, հայ համայնքների միջև միջհամայնքային կապերի հաստատման օժանդակությունը, աջակցությունը Սփյուռքի համայնքային կազմակերպչական նախաձեռնություններին և այլն: Առանցքային հարցերի շրջանակներում էր համահայկական քաղաքական, տնտեսական, մշակութային, կրթական խորհրդաժողովների, գիտաժողովների, հավաքների, ինչպես նաև այլ բնույթի միջոցառումների կազմակերպումը[45]:

---

[44] Տե՛ս «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 15(113), 10 հուլիսի, 2000, էջ 137:
[45] Տե՛ս նույն տեղում, էջ 138:

Նշված խնդիրների իրականացման համար քարտուղարությունը պետք է նպաստեր ՀՀ և Սփյուռքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների սերտ համագործակցությանը համազգային խնդիրների լուծման ասպարեզում, աջակցեր ՀՀ և Սփյուռքի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված աշխատանքներին, համագործակցեր Սփյուռքի այն կազմակերպությունների և անհատների հետ, որոնք նպաստում էին ՀՀ արտաքին քաղաքական խնդիրների լուծմանը, ՀՀ դիվանագիտական դիրքերի ու հեղինակության ամրապնդմանը միջազգային ասպարեզում, աջակցեր հայկական լոբբիստական կազմակերպություններին, նպաստեր Սփյուռքում հայկական մշակույթի պահպանմանը, Սփյուռքի մշակութային կենտրոնների ու հաստատությունների ստեղծմանը, հայրենիքի և Սփյուռքի համապատասխան հաստատությունների միջև երկարաժամկետ համագործակցության ծրագրերի մշակմանը, հայկական կրթության ամրապնդմանը, համահայկական կրթական միջազգային ծրագրի մշակմանը, նպաստեր Հայաստանի տնտեսական վերականգնման գործին սփյուռքահայ համայնքների ակտիվ մասնակցությանը: Պետք է ուշադրություն դարձվեր նաև ՀՀ և Սփյուռքի միջև գիտական կապերի զարգացմանը ու դրանց միջոցով միջազգային գիտական կապերի խորացմանը՝ նպաստելով ՀՀ և Սփյուռքի գիտական կազմակերպությունների ու գիտնականների համագործակցությանը, Սփյուռքի դպրոցների ուսուցիչների վերապատրաստմանը, Սփյուռքի վերաբերյալ համապարփակ տեղեկատվական փաթեթի ստեղծանը և այլն[46]:

---

[46] Տե՛ս «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 15(113), 10 հուլիսի, 2000, էջ 138-140:

Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարության կենտրոնական ապարատը բաղկացած էր Հյուսիսային և Հարավային Ամերիկա պետությունների հայ համայնքների, Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ անդամ մյուս պետությունների հայ համայնքների, Եվրոպայի պետությունների հայ համայնքների, Մերձավոր և Միջին Արևելքի պետությունների հայ համայնքների, վերլուծական-տեղեկատվական, կրթության ու մշակույթի և այլ բաժիններից[47]:

2002 թ. հուլիսի 25-ին ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների շրջանակներում ՀՀ կառավարության N 1057-Ն որոշմամբ Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարությունը վերակազմավորվեց Սփյուռքի հետ կապերի գործակալության՝ դարձյալ գործելով ՀՀ արտաքին գործերի նախարարության կազմում[48]: Նույն թվականի օգոստոսի 1-ին ՀՀ կառավարության N 1246-Ն որոշմամբ հաստատվեցին ՀՀ ԱԳՆ սփյուռքի հետ կապերի գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը[49]: Կանոնադրության համաձայն՝ գործակալությունը ԱԳՆ կազմում գործող ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմին էր, որը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով իրականացնում էր ՀՀ ԱԳՆ-ին վերապահված ՀՀ և Սփյուռքի միջև կապերի հաստատմանը, համագործակցության զարգացմանը և խորացմանն ուղղված գործառույթներ: Կանոնադրությունը բաղկացած էր երեք բաժիններից՝ 1) ընդհանուր դրույթներ, 2) գործակալության նպատակները, հիմնական

[47] Տե՛ս «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 15(113), 10 հուլիսի, 2000, էջ 142:
[48] Տե՛ս «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 33(208), 14 օգոստոսի, 2002, էջ 11:
[49] Տե՛ս նույն տեղում, էջ 49:

խնդիրները և գործառույթները, 3) գործակալության կառավարումը[50]:

Երկրորդ բաժնում արձանագրված է, որ գործակալության հիմնական խնդիրների շարքում են եղել ՀՀ և Սփյուռքի միջև բազմակողմանի կապերի հաստատումը, համագործակցության զարգացմանն օժանդակելը, Սփյուռքի քաղաքական, բարեգործական, հայրենակցական, գիտական, մշակութային, կրոնական կազմակերպությունների, առանձին անհատների, ինչպես նաև եկեղեցու հետ համագործակցության իրականացումը՝ անկախ գաղափարական համոզմունքներից և կրոնական դավանանքից, հայ ժողովրդի երկու հատվածի միջև համազգային փոխըմբռնման, փոխվստահության, միասնության և համախմբվածության մթնոլորտ ստեղծելը, համահայկական խնդիրների շուրջ համագործակցություն ապահովելը, հայկական համայնքներին Հայաստանի տնտեսության վերականգնմանը նպաստող առանձին բիզնես ծրագրերի իրականացմանը մասնակից դարձնելը, համահայկական խորհրդաժողովների, համաժողովների, հավաքների կազմակերպման հարցերը և այլն[51]:

Վերոնշյալ խնդիրների իրականացման համար գործակալությունը, բացի ՀՀ ԱԳՆ սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարությունից ժառանգած գործառույթներից, պետք է նպաստեր համազգային խնդիրների քննարկման և լուծման ասպարեզում ՀՀ և Սփյուռքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների սերտ համագործակցությանը, աջակցեր ՀՀ և Սփյուռքի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի

---

[50] Տե՛ս «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 33(208), 14 օգոստոսի, 2002, էջ 49-53:

[51] Տե՛ս նույն տեղում:

ուղղությամբ կատարվող աշխատանքներին և համակողմանի աջակցություն ցուցաբերեր այն կազմակերպություններին ու անհատներին, որոնք օտարերկրյա պետությունների օրենսդիր և գործադիր իշխանությունների ներկայացուցիչների հետ իրականացնում էին հայանպաստ աշխատանքներ[52]:

Գործակալության կազմում ստեղծվել էին ամերիկյան, եվրոպական, մերձավորարևելյան, միջինարևելյան, ՌԴ և ԱՊՀ անդամ երկրների հայկական համայնքների վերլուծական-տեղեկատվական և կրթության ու մշակույթի բաժինները[53]:

Հայկական Սփյուռքի դերն ու նշանակությունը, ինչպես նաև ՀՀ-Սփյուռք փոխհարաբերությունները բարձրացվեցին սահմանադրական աստիճանի և իրենց արժևորումը գտան 2005 թ. նոյեմբերի 27-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունված ՀՀ փոփոխված Սահմանադրության շրջանակներում: ՀՀ Սահմանադրության մեջ Սփյուռքի վերաբերյալ ամրագրվեց հետևյալը. «Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է Հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը[54]: Նոր սահմանադրության մեջ հանվում էր նաև երկքաղաքացիության արգելքը, ըստ որի՝ «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում հետագայում կատարվեց փոփոխություն՝ Հայաստանում թույլատրելով երկքաղաքացիությունը: Հետագա

---

[52] Տե՛ս «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 15(113), 10 հուլիսի, 2000, էջ 50-52:
[53] Տե՛ս նույն տեղում, էջ 54:
[54] ՀՀ Սահմանադրություն, 2005, գլ. 1, հոդ. 2:

տարիներին դրա հիման վրա ՀՀ քաղաքացիություն ստացան շուրջ 30 հազար սփյուռքահայեր[55]:

Սփյուռքին, նրա դերին և ՀՀ-Սփյուռք հարաբերություններին մեծ տեղ է հատկացվել և զգալի ուշադրություն դարձվել 2007 թ. ընդունված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության շրջանակներում[56]:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն բաժնում առանձին ենթաբաժնով ներկայացվել են Հայաստան-Սփյուռք հարաբերությունները[57]: Այստեղ Սփյուռքը բնորոշվում է տարբեր պետություններում իր բարձր մակարդակի ներգրավվածությամբ և պետական ու հասարակական կյանքում զգալի դերակատարությամբ:

Ռազմավարությունը «Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների համապարփակ հայեցակարգի մշակումն ու իրականացումը» և «Սփյուռքի ներուժի համակողմանի համախմբումը» ներկայացնում է որպես ազգային անվտանգության ապահովմանն ուղղված գործոն, իսկ «Սփյուռքի ազգամշակութային ինքնության թուլացումը»՝ որպես սպառնալիք[58]: Այսպես Սփյուռքը դիտարկվում էր իբրև միջազգային երևույթ և ՀՀ միջազգային կապերի տեսանկյունից կարևոր գործոն: Ինչպես նշված էր ռազմավարությունում, «Սփյուռքի հետ կապերն առանձնահատուկ դեր ունեն ՀՀ զարգացման համար, քանի որ Սփյուռքը մի յուրօրինակ կամուրջ էր Հայաստանի և միջազգային հանրության

---

[55] Տե՛ս Եղիազարյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 198:
[56] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), Ե., 2005, գլ. 1, հոդ. 11, էջ 6:
[57] Տե՛ս ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2007, էջ 44:
[58] Տե՛ս նույն տեղում, էջ 45:

միջև: Սփյուռքի տարբեր բնագավառների կազմակերպությունները զգալիորեն նպաստում են տվյալ երկրների հետ Հայաստանի երկկողմ կապերի զարգացմանը, Հայաստանի միջազգային ներգրավմանը և Հայաստանում ժողովրդավարության ամրապնդմանը»[59]: Շեշտադրվում էր, որ ՀՀ արտաքին քաղաքականության մեջ, ՀՀ միջպետական հարաբերություններում Սփյուռքն ունի կարևորագույն դեր:

Ռազմավարությունում արձանագրվում էր, որ Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման նպատակով ՀՀ ջանքերն ուղղված են ինչպես Սփյուռքի ուծացմանը դիմակայելուն, հայապահպանությանը և լեզվամշակութային ինքնության կորստի կանխմանը, այնպես էլ ՀՀ և Արցախի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը, Սփյուռքի համակարգված մասնակցության ապահովմանը[60]:

Կարևորվում էին նաև ՀՀ զարգացման տեսանկյունից Սփյուռքի տնտեսական և մշակութային նշանակությունը, ազգային-մշակութային արժեքների պահպանումը, դրանց զարգացումն ու տարածումը[61]: Ընդգծվում էր Հայաստանյանց առաքելական սուրբ եկեղեցու կարևոր առաքելությունը հայության համախմբման համատեքստում: Այս ամենը, անշուշտ, նպաստեց ՀՀ-ում Սփյուռքի նկատմամբ քաղաքականություն իրականացնող պետական մարմնի ստեղծմանը: 2008 թ. մայիսի 22-ին ՀՀ կառավարությունը ընդունեց որոշում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության համակարգում Սփյուռքի հետ կապերի գործակալության փոխարեն Սփյուռքի հետ կապերի պետական կո-

---

[59] Տե՛ս ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2007, էջ 45:
[60] Տե՛ս նույն տեղում, էջ 44:
[61] Տե՛ս նույն տեղում:

միտե՝ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու մասին[62]: Կանոնադրության համաձայն՝ ՀՀ ԱԳՆ սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեն նախարարության ղեկավարությամբ պետք է մշակեր և իրականացներ Սփյուռքի հետ կապերի քաղաքականությունը[63]:

Կոմիտեի նպատակների ու խնդիրների շարքում առանձնացվում էին ՀՀ-Սփյուռք կապերի և համագործակցության զարգացմանն ու խորացմանը նպատակաուղղված ռազմավարության մշակումն ու իրականացումը, ՀՀ-Սփյուռք հարաբերությունների նոր ձևերի ու մեթոդների մշակումը, ուծացմանը դիմակայելու գործում Սփյուռքին աջակցելը, համահայկական կարևոր և կենսական նշանակության խնդիրներին Սփյուռքի մասնակցությանը նպաստելը և այլն[64]: Կոմիտեն, ըստ էության, հիմնականում ժառանգել էր Սփյուռքի հետ կապերի գործակալության գործառույթները[65]: Կոմիտեի կառուցվածքային կազմում գործում էին Սփյուռքի կազմակերպությունների հետ կապերի և վերլուծական-տեղեկատվական վարչություններ, ինչպես նաև հատուկ ծրագրերի բաժին[66]: Այս բոլոր կառույցներն էլ փորձեցին ՀՀ անկախության պայմաններում ստեղծել նոր կառուցակարգեր, սակայն ժամանակը ցույց տվեց, որ դրանք այնքան էլ չկարողացան արդյունավետ գործունեություն իրականացնել:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականությանը նոր խթան հաղորդեց ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանը: Վերջինս ՀՀ-Սփյուռք գործակցության

---

[62] Տե՛ս «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008, 06.25/39(629), հ. 639, էջ 12:
[63] Տե՛ս նույն տեղում, էջ 13:
[64] Տե՛ս նույն տեղում, էջ 14:
[65] Տե՛ս նույն տեղում, էջ 15:
[66] Տե՛ս նույն տեղում, էջ 16:

զարգացման հիմնախնդիրները ներառել էր 2008 թ. նախագահական ընտրություններից առաջ հրապարակած իր նախընտրական ծրագրում: Այստեղ, անդրադառնալով Սփյուռքին առնչվող հարցերին, նշում էր, որ աշխարհով մեկ սփռված հայերի զգալի մասի քաղաքական, մշակութային, տնտեսական հետաքրքրությունների կենտրոնը մայր հայրենիքն է: Աշխարհասփյուռ հայությունն իրապես շահագրգռված է Հայաստանի զարգացմամբ, ինչը նշանակում է, որ այսուհետ հնարավոր չէ մշակել և իրականացնել որևէ համընդհանուր ծրագիր՝ առանց նշված գործոնը (Սփյուռքը) հաշվի առնելու: Այս նախընտրական ծրագրում Ս. Սարգսյանը հայտարարել էր նաև Սփյուռքի նախարարություն ստեղծելու մասին: Նշվում էր, որ վաղուց հասունացել էր անհրաժեշտություն՝ ունենալու մի կառույց, որը կդառնար ՀՀ՝ Սփյուռքի նկատմամբ քաղաքականության անմիջական իրականացնողն ու համակարգողը[67]:

2008 թ. ապրիլի 9-ին նորընտիր նախագահը երդմանակալության արարողության ժամանակ հայտարարեց. «Կառուցելու ենք այն Հայաստանը, որը կմիավորի համայն հայությանը, այնպիսի Հայաստան, որ կլինի բոլոր հայերի հայրենիքը: Կառուցելու ենք այն Հայաստանը, որտեղ կտիրի փոխադարձ հարգանքի, սիրո և հանդուրժողականության մթնոլորտ... Ես համագործակցության եզրեր եմ փնտրելու բոլոր քաղաքական ուժերի հետ: Իմ ջանքերն ուղղված են լինելու համազգային նպատակների իրագործմանը, սերունդների միջև կապն առավել ամ-

[67] Տե՛ս «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008, 06.25/39(629), հ. 639, էջ 16:

ռապնդելուն, ազգային փոքրամասնությունների ու հայապահ-պանության խնդիրներին»[68]:

Ս. Սարգսյանի առաջին ձեռնարկներից գլխավորը համարվեց Սփյուռքի նախարարության հիմնումը: ՀՀ-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության մշակման և այն ամբողջական ու արդյունավետ իրականացնելու, շարունակաբար այդ ոլորտում գործունեություն ծավալող պետական մարմինների աշխատանքները համակարգելու նպատակով, «ՀՀ կառավարության կառուցվածքի մասին» 2008 թ. հուլիսի 17-ի օրենքի համաձայն, 2008 թ. հոկտեմբերի 1-ից ՀՀ կառավարության կազմում սկսեց գործել Սփյուռքի նախարարությունը[69]: Նույն տարվա սեպտեմբերի 11-ին ՀՀ կառավարությունը հաստատեց նախարարության կանոնադրությունը[70]:

Նախարարության կազմում ստեղծվեցին տարածաշրջանների (Ամերիկայի, Մերձավոր և Միջին Արևելքի, Եվրոպայի և Անկախ Պետությունների Համագործակցության) համահայկական, միջազգային և եկեղեցական կառույցների հետ հայկական համայնքների կապերի, հայրենադարձության և հետազոտությունների, համահայկական ծրագրերի և այլ վարչություններ ու բաժիններ[71]:

---

[68] Տե՛ս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի երդմնակալության օրը (ապրիլի 9, 2008 թ.), htt/www.president.am/hy/domestic-visits/item/2008/04/09/news-32/:

[69] Տե՛ս «ՀՀ կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքը, 17.06.2008, http://www.arlis.am/documentView.aspx?docid=44544, նաև «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008.10.01/60(650), հոդ. 1025, էջ 18:

[70] Տե՛ս ՀՀ կառավարության N1049-Ն որոշումը՝ «ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ սփյուռքի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին», «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008.10.01/60(650), հոդ. 1025, էջ 19-20:

[71] Տե՛ս նույն տեղում, էջ 21:

ՀՀ նախագահի հոկտեմբերի 1-ի հրամանագրով ՀՀ սփյուռքի նախարար նշանակվեց ՀՀ ԱԳՆ սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեի նախագահ Հրանուշ Հակոբյանը[72]: Սփյուռքի նախարարությունը ՀՀ նախագահի ընդհանուր ղեկավարությամբ մշակել և իրականացրել է Հայաստանի և Սփյուռքի միջև կապերի ամրապնդման, հասարակական կառույցների հետ գործակցության զարգացման, հայապահպանության, Սփյուռքի ներուժի բացահայտման, հայրենադարձության ծրագրերի մշակման և նախարարության իրավասությանը վերապահված այլ բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը[73]: Նախարարության գործունեության կարևոր հարցերից էր փոխադարձ ճանաչողության սկզբունքը: Դա վկայում էր, որ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծումից չորսուկես տասնամյակ անց ևս այն արդիական էր, քանզի փոխադարձ ճանաչողության սկզբունքի որդեգրումը բխում

---

[72] Տե՛ս «ՀՀ նախագահի հրամանագիրը Հ. Հակոբյանին ՀՀ սփյուռքի նախարար նշանակելու մասին», «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008.10.15/62(652), հոդ. 1049, էջ 26: Հրանուշ Հակոբյանը մաթեմատիկոս, իրավաբան, քաղաքագետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է: Դասախոսել է Երևանի պետական համալսարանում, 7 մենագրության և 50-ից ավելի գիտական հոդվածների հեղինակն է: ԵՊՀ-ում, ապա նաև հանրապետության կտրվածքով ղեկավարել է երիտասարդական կազմակերպություն (Կոմերիտ միություն): 22 տարի եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի, ապա Ազգային ժողովի պատգամավոր: Ղեկավարել է ՀՀ ԱԺ սոցիալական, առողջապահության և բնապահպանության հարցերի և ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովները: 1996-1998 թթ. եղել է ՀՀ սոցիալական ապահովագրության նախարար: Նա ունի ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի կոչում: Պարգևատրվել է ՀՀ և օտարերկրյա պետական կառավարական մեդալներով ու պարգևներով: Վարել է ակտիվ հասարակական-քաղաքական գործունեություն: 10 տարի լինելով ՀՀ սփյուռքի նախարար՝ նախարարության կողմից կյանքի կոչված բազմաբնույթ ծրագրերի միջոցով նորովի է արժևորել ՀՀ-Սփյուռք գործակցությունը՝ այս ոլորտում իրականացնելով պետական հաջողված քաղաքականություն:

[73] Տե՛ս Հակոբյան Հ., Հայկական Սփյուռքը հայափոփոխ աշխարհում, էջ 421:

էր այն իրողությունից, որ նույնիսկ 21-րդ դարում ևս անկախ պետականության պայմաններում հայության հայրենաբնակ և սփյուռքյան զանգվածները դեռևս ամբողջությամբ ծանոթ չէին միմյանց[74]:

ՀՀ կառավարության 2008 թ. սեպտեմբերի 11-ի որոշման մեջ նախարարության գործունեության նպատակն էր Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության մշակման, իրականացման, համակարգման և արդյունքների գնահատման միջոցով նպաստել.

1. ՀՀ և Հայկական սփյուռքի գործակցության ապահովմանը և նրանց միջև կապերի ամրապնդմանը,
2. հայ ժողովրդի հոգևոր միասնությանը,
3. հայ կրթական, գիտական, մշակութային, տնտեսական, երիտասարդական, մարզական կյանքի զարգացմանը,
4. «Հայկական աշխարհի» ստեղծմանը[75]:

Նախարարության այդ գործառույթները բխում են նախարարության կանոնադրությունից (բուն գործառույթներ) և կանոնադրության 1-ին կետի պահանջով ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացված և 2009 թ. օգոստոսի 20-ին հավանության արժանացած ոլորտի ռազմավարական խնդիրներն արտացոլող «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգից» (ածանցյալ՝ Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ուղղությամբ վերապահված գործառույթները)[76]:

---

[74] Տե՛ս Եղիազարյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 206:
[75] Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը (11 սեպտեմբեր, 2008, N 1049-Ն), 1, 7:
[76] Տե՛ս Եղիազարյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 207, «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ», Ե., 2010:

Նշված ոլորտում ուղենիշային դարձան նաև ՀՀ նախագահի «Հայկական Սփյուռքի հետ ՀՀ կառավարման համակարգում միասնական քաղաքականության իրականացման մասին (2013 թ.) հրամանագիրը»[77], վերոնշյալ հայեցակարգը և ՀՀ սփյուռքի նախարարության կանոնադրության պահանջները[78]:

ՀՀ նախագահը հենց սկզբից ՀՀ սփյուռքի նախարարության առջև դրեց երեք գերակա ռազմավարական խնդիրներ.

1. աջակցել հայապահպանությանը Սփյուռքում, մշակել հատուկ ծրագրեր հայ ինքնության պահպանման, Սփյուռքի ուծացման դեմ պայքարին օժանդակելու համար,
2. հայտնաբերել ու համախմբել Սփյուռքի ներուժը և օգտագործել Հայաստանի տնտեսության զարգացման համար,
3. մշակել ծրագրեր, որոնք կարող են խթանել հայրենադարձությունը[79]:

Խոսելով ՀՀ սփյուռքի նախարարության՝ որպես պետական կառավարման մարմնի գործունեության առանձնահատկությունների մասին, ի տարբերություն այլ նախարարությունների, ՀՀ սփյուռքի նախկին նախարար Հ. Հակոբյանը մատնանշել է հետևյալ գործառույթները: ՀՀ սփյուռքի նախարարությունը չի ղեկավարում Սփյուռքը, նրա հետ չի աշխատում հրամանների, հրահանգների միջոցով, չի կարող պահանջներ առաջադրել Սփյուռքին կամ հանձնարարություններ տալ սփյուռքյան որևէ կառույցի ու անհատի և չի կարող վերահսկել որևէ գործունեություն[80]:

---

[77] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 421:
[78] Տե՛ս նույն տեղում:
[79] Տե՛ս նույն տեղում:
[80] Տե՛ս նույն տեղում, էջ 421-422:

Ըստ Հ. Հակոբյանի՝ Հայաստան-Սփյուռք գործակցության քաղաքականությունը գլխավորապես հիմնված է հետևյալ արդյունավետ մոտեցումների վրա.

1) գործընկերային հարաբերությունների կառուցում և զարգացում,

2) փոխադարձ վստահության և փոխըմբռնման ամրապնդման աշխատանքների կատարում,

3) հարցերի քննարկումներ ու լուծումների համատեղ որոնում, ինչն իրականացվում է երկխոսության, փոխադարձ հարգանքի, փոխզիջումների և փոխհամաձայնության ճանապարհով, զարգացման նոր հեռանկարների ուղենշմամբ,

4) Սփյուռքի նախարարության ծրագրերը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են հիմնականում պետական բյուջեի միջոցների հաշվին[81]:

Ելնելով ՀՀ նախագահի ՀՀ սփյուռքի նախարարության առջև դրված մեկուկես տասնյակ խնդիրներից՝ առանցքային ուշադրություն պետք է դարձնել հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման ուղղությամբ քաղաքականության իրականացմանը, ինչին էլ նպատակաուղղված է նախարարության ծրագրերի մեծ մասը: Նախարարության մյուս կարևոր խնդիրները կարելի է բաժանել մի քանի հիմնական ոլորտների:

1) Հայապահպանության խնդիրներ, որոնց թվին է դասվում ուծացումը կանխելու համատեղ ծրագրերի իրականացումը: Նախատեսվում էր այլալեզու և այլադավան հայերի շրջանում նպաստել ազգային ինքնության արմատավորմանը, հայապահպանության և հայկական համայնքների զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը: Երիտասարդության

[81] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 421-422:

հայեցի դաստիարակությունը կարող է դառնալ ուծացման դեմ պայքարի լավագույն միջոցը: Սփյուռքը, դեռևս իր գոյատևման առաջին օրերից սկսած, նվիրվել է հայապահպանության գործին՝ նպաստելով նոր սերնդի ազգային նկարագրի ձևավորմանը, ինքնության, մայրենի լեզվի, ավանդույթների, մշակույթի, հավատքի և հոգևոր արժեքների պահպանմանն ու ազգային արժեքների փոխանցման ապահովմանը: Պատահական չէ, որ Սփյուռքի նախարարության պետական գրեթե բոլոր ծրագրերը նպատակաուղղված են հայ երիտասարդությանը հայրենիքին կապելու, հայրենաճանաչությանը, ազգային արժեքների նկատմամբ սեր և պատասխանատվություն սերմանելուն, մայրենի լեզվի իմացությանը[82]: Համաշխարհայնացման և ազատականացման, ինչպես նաև տարբեր մշակույթների և քաղաքակրթությունների ներթափանցման պայմաններում ազգային ինքնության և ինքնագիտակցության ապահովումը պահանջում է Սփյուռքի կրթական, մշակութային, հասարակական-քաղաքական, բարեգործական կրոնական, մարզական, լրատվական և այլ կազմակերպությունների ամենօրյա աշխատանք, որին աջակցում է Հայաստանի Հանրապետությունը Սփյուռքի նախարարության ակտիվ գործունեությամբ: Այս ոլորտում համագործակցության լավագույն ձևերից է սփյուռքահայ երիտասարդության հանգստի կազմակերպումը մայր հայրենիքում: Այդ առումով զգալի փորձ է կուտակվել հանրապետությունում: Իրականություն է դարձել «Իմ Հայաստան» համահայկական փառատոնը, համահայկական խաղերը, «Արի՛ տուն», «Բազե» և այլ ծրագրեր[83]:

---

[82] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 431:
[83] Տե՛ս նույն տեղում, էջ 432:

Հայապահպանության նպատակով նախարարությունը կազմակերպել է սփյուռքահայ ուսուցիչների, կրթական ու համայնքային գործիչների ամենամյա ամառային դպրոցներ: Համայնքներին տրամադրվել է մեծաքանակ գրականություն (դասագրքեր և այլն), նյութական ու մեթոդական ծավալուն օգնություն է տրամադրվել Սփյուռքի դպրոցներին[84]: Երևանի պետական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում իրականացվող «Սփյուռք ամառային դպրոց» ծրագիրը ներառում է դասընթացներ՝ հինգ ուղղություններով՝ 1. Հայոց լեզվի (արևելահայերեն և արևմտահայերեն) արագացված ուսուցում, 2. Սփյուռքի հայկական կրթօջախների ուսուցիչների և կրթական գործի կազմակերպիչների վերապատրաստում, 3. Լրագրողների վերապատրաստում, 4. Երիտասարդ առաջնորդների և համայնքային գործի կազմակերպիչների վերապատրաստման դասընթաց, 5. Ազգային երգի խմբավարների և պարուսույցների վարպետության դասընթացներ:

Ծրագրի նպատակն է Հայրենիք-Սփյուռք հուսալի և արդյունավետ կամուրջների ստեղծումն ու ամրապնդումը, հայոց լեզվի իմացության ու կիրառման խրախուսումը, կրթական, մշակութային ծրագրերի և հայագիտական օջախների գործունեությանը օժանդակումը, համայնքերում առկա ներուժի հաշվառումն ու համախմբումը, համահայկական ծրագրերում դրանց ներգրավման աջակցությունը[85]:

Ծրագիրը նպաստում է երիտասարդների շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի, հայկական կրթօջախների ու-

---

[84] ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները, Ե., 2013, էջ 24, 165-166, 333:

[85] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 453:

սուցիչների, կրթական գործի պատասխանատուների, ազգային երգի ու պարի խմբերի ղեկավարների որակավորման բարձրացմանը, Սփյուռքի ՋԼՄ-ների, երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը, ինչպես նաև համայնքների ինքնակազմակերպման ջանքերի ակտիվացմանը: Այն տարբեր երկրներից եկած մեր հայրենակիցներին միմյանց հետ ծանոթանալու, փորձի փոխանակման, նորարարությունները յուրացնելու, Հայաստանը տեսնելու, կապեր հաստատելու հնարավորություն է տալիս:

2012 թվականից գործող ծրագրերին մասնակցել է 800-ից ավելի մարդ, որոնց թիվը տարեցտարի ավելանում է[86]: 2014-2017 թթ. ընթացքում 150 հազար գիրք է առաքվել Սփյուռք այն դեպքում, երբ մինչև նախարարության ստեղծումը առաքված գրականությունը 10 հազարից չի անցել[87]:

ՀՀ սփյուռքի նախարարության մշտական ուշադրության կենտրոնում են հայոց լեզվի հիմնախնդիրները, մասնավորապես արևմտահայերենի քերականության կանոնակարգման խնդիրները: Նշված խնդիրների լուծման ուղղությամբ կազմակերպվել են մայրենի լեզվին նվիրված «Հայերենն իմ հայրենիքն է» գիտաժողովներն ու համաժողովները, որոնց մասնակցել են Սփյուռքից ժամանած մեծ թվով մասնագետներ: Ստեղծվել են «Արևմտահայերենի քերականություն» առաջին և երկրորդ ձեռնարկները, 2009 թվականից գործարկվել է «արևմտահայերենից արևելահայերեն» և «արևելահայերենից արևմտահայերեն» առցանց փոխարկիչ ծրագիրը, որն ընդգրկում է 80.000 բառ[88]:

---

[86] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 454:
[87] Տե՛ս նույն տեղում, էջ 461:
[88] Տե՛ս նույն տեղում:

«Արի՛ տուն» ծրագիրն իրականացվում է 2009 թվականից: Ծրագրի նպատակն է աշխարհասփյուռ հայ երիտասարդների համար հայրենիքը ճանաչելի դարձնելը, ազգային ինքնության և արմատների ճանաչողությանը նպաստելը, հայրենասիրության և հայոց պետականաստեղծ գործին աջակցելու ցանկության ձևավորելը, ՀՀ-Սփյուռք բարոյահոգեբանական, կրթամշակութային միասնության աջակցելը, հայ ընտանիքի և հայ մարդու կերպարի առանձնահատկությունները ներկայացնելը և այլն[89]:

Ամենամեծ հաջողությունն այն է, որ անցած տարիներին (2009-2017 թթ.) շուրջ 7000 հյուրընկալ ընտանիք վստահեց, հավատաց Սփյուռքի նախարարությանը և իր 13-18 տարեկան երեխային ուղարկեց Հայաստան: 14 հազար ընտանիք կապվեցին միմյանց հետ, ասել է թե՝ շուրջ 70 հազար մարդ Հայաստանում և Սփյուռքում բարեկամացան, ընկերացան: «Արի՛ տուն» ճամբարը յուրօրինակ խորհրդանիշ է 30-ից ավելի երկրներից ժամանած երիտասարդության համար: 5 օր շարունակ նրանք ծանոթանում են, ընկերանում, սովորում են և սովորեցնում, պարում են և երգում մայրենի լեզվի ուսուցման շրջանակներում[90]:

«Լեզուն ազգային ինքնության հաստատման և ինքնապահպանման հիմնական, անմրցակից և անփոխարինելի գործոն է հատկապես փոքր ազգերի կյանքում, ուստի անհրաժեշտ է համալիր ծրագիր մայրենի լեզվի պահպանման, լեզվամտածողության զարգացման, ազգային կրթական հաստատությունների ընդլայնման, մեկօրյա դպրոցների ցանցի ավելացման, հայագիտական կենտրոնների, ամբիոնների հզորացման, դասագրքերի և մասնագետների պատրաստման ուղղությամբ: Պետության

---

[89] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 448-449:
[90] Տե՛ս նույն տեղում, էջ 449-450:

կողմից ձեռնարկվում են միջոցներ մասնագետների պատրաստման և վերապատրաստման, դասագրքերը Հայաստանում տպագրելու և Սփյուռքի համայնքներ առաքելու, արագացված դասընթացներ կազմակերպելու, մեկօրյա դպրոցների ստեղծմանն աջակցելու ուղղությամբ»[91],– ասված է Սփյուռքի նախկին նախարար Հ. Հակոբյանի «Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները և հայագիտության հիմնախնդիրները» հայագիտական միջազգային երկրորդ համաժողովում կարդացած զեկուցման մեջ: Լեզվի պահպանման համար մեծ ջանքեր է գործադրելու ամբողջ Սփյուռքը, նրա բոլոր կառույցներն ու կազմակերպությունները, հայ եկեղեցին, հատկապես հայ ընտանիքը:

Երկրորդ՝ առանցքային են Սփյուռքի հայ ներուժի համախմբման և ՀՀ զարգացման համար դրա օգտագործման խնդիրները, այդ թվում՝ հայրենիք-Սփյուռք գործակցության մասնագիտական կազմակերպչական կառուցվածքային հենքի ձևավորումը, ՀՀ-Սփյուռք համակարգող մարմնի կազմավորմանն օժանդակությունը, հայրենի պետականության կայացման և ամրապնդման գործում սփյուռքահայերի արդյունավետ մասնակցության նպաստումը, ՀՀ և Սփյուռքի քաղաքական, տնտեսական, գիտակրթական, հոգևոր-մշակութային կարողությունների և ուժերի համախմբումը, աջակցությունը մասնագիտական հանձնախմբերի ստեղծմանը:

ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվում են համահայկական մասնագիտական համաժողովներ: Դրանցից կարելի է առանձնացնել ճարտարապետների համահայկական առաջին (2009 թ.), երկրորդ (2011 թ.) և երրորդ (2015 թ.), իրա-

[91] Հակոբյան Հ., «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», լիագումար նիստի զեկուցումներ, Ե., 2013, էջ 79:

վաբանների համահայկական առաջին (2009 թ.) և երկրորդ (2013 թ.), լրագրողների համահայկական հինգերորդ (2010 թ.), վեցերորդ (2012 թ.) և յոթերորդ (2014 թ.) համաժողովները, ինչպես նաև հայ բժիշկների համաժողովը (2011 թ.), իրավաբանների՝ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատասխանատվության միջազգային իրավական հիմնախնդիրները» խորագրով երրորդ միջազգային գիտաժողովը (2015 թ.) և այլն[92]: Վերոնշյալ համահայկական մասնագիտական համաժողովների արդյունքում ձևավորվել են համահայկական մասնագիտական ընկերակցություններ[93]: Գործում են իրավաբանների, ճարտարապետների, գրողների, լրագրողների, բժիշկների, ոսկերիչների, գիտնականների, տարբեր ոլորտների մասնագիտական ընկերակցություններ: Քանի որ միայն ՀՀ և Սփյուռքի գիտակրթական, մշակութային, ինժեներական և այլ ներուժի հնարավորությունների համատեղմամբ է հնարավոր երկիրը տանել դեպի առաջընթաց ու զարգացում, ուստի հարկավոր է ստեղծել մասնագիտական համահայկական ցանցեր, մասնագիտական հանձնախմբեր, ամրապնդել կապերը հայաստանյան մասնագետների հետ, միասնական ծրագրեր մշակել, ներդնել և բոլոր հնարավորություններն օգտագործել Հայաստանի հզորացման համար[94]:

Երրորդ՝ կարևորվում են հայրենադարձության հետ առընչվող խնդիրները, այդ թվում՝ համապատասխան ծրագրերի մշակումը և դեպի հայրենիք սփյուռքահայ երիտասարդության ուխ-

---

[92] Տե՛ս «Հայրենիքն է կանչում. ՀՀ սփյուռքի նախարարությունը երեք տարեկան է», Ե., 2011 թ., էջ 133-150, ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները, Ե., 2013, էջ 189-224:

[93] ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները, էջ 189:

[94] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 436:

տագնացությունների կազմակերպումը, հայոց պետականության ամրապնդման, ժողովրդագրության բարելավման և համազգային խնդիրների լուծման գործում սփյուռքահայերի մասնակցության ապահովելու համար բարենպաստ պայմանների ստեղծումը[95]:

Հայաստանի Հանրապետության զորեղացումը պայմանավորված է նաև հայրենադարձների թվի ավելացմամբ, հայրենիքի բարգավաճման գործում ավելի շատ հայերի ներգրավմամբ: Իրականացվող բոլոր ծրագրերն էլ՝ տնտեսական զարգացումից մինչև զբոսաշրջության ընդլայնում, պետք է նպաստեն հայրենադարձությանը: ՀՀ կառավարությունը հաստատել է «Հայրենադարձության գործընթացի կազմակերպման հայեցակարգ», որում սահմանվող դրույթները վերաբերում են այն հայերին, որոնք ցանկություն կհայտնեն նաև բնակություն հաստատելու ՀՀ-ում[96]: Սփյուռքի նախարարությունը մշակել է «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծ[97] և իրականացվող բոլոր ծրագրերով ցանկանում է նպաստել հայրենադարձությանը: Հայրենադարձության դրսևորումներ են նաև ՀՀ-ում գործունեության ծավալելը, կարճաժամկետ աշխատանքներ կայացնելը, բիզնես ծրագրեր իրականացնելը, բնակարան գնելը, տարեկան մի քանի անգամ Հայաստան ժամանելը, տևական ժամանակով հայրենիքում ապրելը[98]: Այսօր նման հայրենադարձ հայրենակիցներ շատ կան, ուստի պետք է ամեն ինչ անել, որ հայրենի-

---

[95] Տե՛ս «ՀՀ կառավարության որոշումը» (11 սեպտեմբերի, 2008 թ., N 1049-Ն), 1, 8:
[96] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 436:
[97] Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը հայրենադարձության մասին, նախագիծ, http://wwwmindiaspora.am/am/Projecrs:
[98] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 437:

քում իր անկյունն ու գործը ունենալու գաղափարը դառնա Սփյուռքի գործարար շրջանակներում ամենատարածվածներից մեկը[99]: Անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանի այն ուղերձով, որ «հյուրանոցը հյուրի համար է, իսկ հայը պետք է ապրի իր տանը և ոչ թե հյուրանոցում»[100]:

ՀՀ սփյուռքի նախարարությունը մեծապես աջակցել է ՀՀ-ում հաստատված իրաքահայերի և սիրիահայերի ինտեգրման խնդիրների լուծմանը՝ մշակելով և կենսագործելով բազմաթիվ ծրագրեր և միջոցառումներ: Այսօր սիրիահայ համայնքի վիճակը դարձել է անտանելի ծանր, քանի որ երբեմնի հզոր և լավ կազմակերպված մայր գաղութը քայքայվել է: Սիրիահայության 70%-ից ավելին փախստական է դարձել, իսկ մնացածներն էլ, պատերազմական իրավիճակում հայտնվելով, կորուստներ են կրում: Սիրիայում մնացել է 25 հազար մարդ, իսկ Լիբանան և Հորդանան տեղափոխվել է 10-15 հազար մարդ, մի հատվածն էլ տեղափոխվել է Արևմուտք[101]:

Հարկ է նշել, որ 2011 թվականից ի վեր ՀՀ-ում հաստատված շուրջ 22 հազար սիրիահայեր մշտապես գտնվել են ՀՀ սփյուռքի նախարարության ուշադրության ներքո՝ ստանալով հնարավորին աջակցություն[102]: ՀՀ իշխանության քաղաքական կամքի, ՀՀ սփյուռքի նախարարության անմիջական հոգատար աշխատանքի շնորհիվ ստեղծվել են պայմաններ հայրենիքում հաստատված սիրիահայերի մատչելի կրթության, առողջապահության, զբաղվածության ապահովման և վերապատրաստման համար: Սիրիայում և ՀՀ-ում ապրող սիրիահայերին և իրաքա-

---

[99] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 437:
[100] Նույն տեղում:
[101] Տե՛ս նույն տեղում, էջ 445:
[102] Տե՛ս նույն տեղում:

հայերին հետևողական օգնություն են ցուցաբերել հայ եկեղեցին, Սփյուռքն ու միջազգային կառույցները: Ցավոք, տարբեր երկրներում (Ուկրաինա, Իրաք, Իրան և այլն) իրավիճակի հետագա սրումը տեղահան է արել մեր հայրենակիցներին, ուստի հայոց պետությունն ու Սփյուռքը հատկապես արտակարգ իրավիճակներում հայտնված հայության պաշտպանն են և օգնականը: Աշխարհի տարբեր մասերում ապրող հայության անվտանգության խնդիրը ամբողջ հայերի խնդիրն է, ուստի ՀՀ սփյուռքի նախարարությունը շարունակում է համակարգված օգնությունը՝ նյութական և բարոյական օժանդակություն հայտնելով Սփյուռքում և Հայաստանում ապրող սիրիահայերին և իրաքահայերին, բոլոր հնարավոր միջոցները կիրառելով մեր հայրենակիցներին Հայաստանում ինտեգրելու համար[103]:

ՀՀ սփյուռքի նախարարությունը հեռանկարում հանդես է գալու նախագահությամբ՝ հայրենադարձության հարցերով հատուկ մարմնի՝ գործակալության ստեղծման առաջարկությամբ, որին փոխանցվելու է հայրենադարձության գործընթացի կազմակերպման գործառույթը՝ նախարարությանը վերապահելով ոլորտի օրենսդրության և հայրենադարձության խթանման և հայրենադարձների ինտեգրմանը միտված ծրագրերի մշակումն ու իրականացման ընթացքի համակարգումը:

Կանոնադրային գործառույթներից բացի, «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգի» համաձայն, նախարարությանը վերապահված են այլ կարևոր գործա-

[103] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 446:

ռույթներ, որոնք բխում են նախարարության կանոնադրային նպատակներից ու խնդիրներից[104]:

«Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգը» սահմանել է ՀՀ-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության սկզբունքները, նպատակները, գերակա ուղղությունները, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները: Պետական քաղաքականությունը Հայաստան-Սփյուռք գործակցության բնագավառում իրավական, տնտեսական, դիվանագիտական, կրթական, մշակութային, տեղեկատվական ու կազմակերպչական հարաբերությունների մի ամբողջություն է, որն ուղղված է Սփյուռքում հայապահպանության խնդիրների լուծմանը և ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող հարցերում Սփյուռքի համակարգված մասնակցությանը[105]: Հայեցակարգը բաղկացած է 5 գլխից, որտեղ ներկայացված են ՀՀ-Սփյուռք հարաբերությունների ու գործակցության ներկա վիճակն ու հնարավորությունները, բացահայտված են գործակցության զարգացման դեռևս չիրականացված հնարավորություններն ու Սփյուռքի առջև ծառայած արդի մարտահրավերները:

Հայեցակարգում արտացոլված են նաև ապագայում ՀՀ-Սփյուռք հարաբերություններում նոր ինստիտուտների ձևավորմանը միտված գաղափարներ: Մատնանշվում է, որ ՀՀ-Սփյուռք գործակցությանը համահայկական ընդգրկում հաղորդելու, համազգային ու համամարդկային խնդիրները համատեղ քննարկելու և սկզբունքները որոշելու, պետական մարմինների գործու-

---

[104] Տե՛ս «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ», Ե., 2010, էջ 23-26:

[105] Տե՛ս հայեցակարգն ամբողջությամբ:

նեությանը համահայկական բնույթ հաղորդելու և դրանց միջև ՀՀ-Սփյուռք գործակցությանը նվիրված համագործակցություն ապահովելու նպատակով ՀՀ նախագահի ղեկավարությամբ նախատեսվում է ստեղծել համահայկական կենտրոնական մարմին՝ Ազգային խորհուրդ[106]:

Ազգային խորհուրդն ունենալու է ազգային-հասարակական խորհրդատվական բնույթ և քննության առարկա է դարձնելու համազգային առաջնահերթությունները, համահայկական հիմնահարցերը: Ընդգծվում է, որ ՀՀ և ԼՂՀ պետական կառույցները ՀՀ-Սփյուռք գործակցության քաղաքականությունը մշակելիս պետք է հաշվի առնեն Ազգային խորհրդի երաշխավորությունները: Ազգային խորհուրդը պետք է դառնա համահայկական ներկայացուցչական մարմին, որը կարևոր դերակատարություն է ունենալու համազգային բնույթի հարցերով կայացված որոշումներում: Հենց այդ նպատակով համահայկական խորհրդի ստեղծման «Հայաստան-Սփյուռք գործակցության հետագա զարգացման հարցերով էլ հատուկ աշխատանքային խորհրդակցություն հրավիրվեց: 2017 թ. սեպտեմբերի 18-20-ին Երևանում գումարված Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովում ոչ միայն քննարկվեց, այլև առաջարկվեց նրա կառուցվածքը, և սահմանվեց կազմը[107]:

Հայեցակարգում խիստ ուշադրություն է դարձված հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացմանն ու գործակցության ամրապնդմանը: Այստեղ արձանագրված է գործակցության հիմնական նպատակը: «Հայաստան-Սփյուռք գործակցու-

---

[106] Տե՛ս «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ», էջ 27:

[107] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողովի ծրագիրն ու առաջարկների փաթեթը, Ե., 2017 թ., 18-20 սեպտեմբեր:

թյունը նպատակաուղղված է հայրենիքում հաստատված կամ օտար երկրում բնակվող յուրաքանչյուր հայ մարդու՝ լեզվի, մշակույթի, դավանանքի, կրթության իրավունքների պաշտպանությանը..., նրա ինքնության պահպանությանը՝ հայապահպանությանը, ինչպես նաև հայրենիքի և Սփյուռքի միջև կապերի սերտացմանը»,– ասված է հայեցակարգում[108]: Հայեցակարգում բացահայտված, հստակեցված և թվարկված են այն խնդիրները, որոնք երևան են գալիս հայրենիք-Սփյուռք գործակցության զարգացման արդյունքում, որոնք էլ պետք է իրականացվեն ՀՀ կառավարության կողմից:

Առաջին խնդիրը վերաբերում է հայ մարդու զարգացման հարցին: Նշված խնդրի լուծումը նշանակում է հայապահպանության քաղաքականության կենսագործում, Սփյուռքի ներուժի հայտնաբերում և նպատակային իրականացում ի շահ հայրենիքի ու Սփյուռքի, համահայկական միասնական տեղեկատվական միջավայրի ձևավորման, հայրենադարձությանը նպաստող ծրագրերի կենսագործում, արտերկրում հայկական կրթական համակարգի զարգացում[109]:

Հայաստանը, չնայած իր փոքր տարածքին, պատկանում է 10 միլիոնից ավելի աշխարհասփյուռ հայությանը, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավունքներ ու պարտականություններ իր հայրենիքի նկատմամբ: «Հայրենիքը չեն սիրում նրա համար, որ լավն է, հայրենիքը սիրում են նրա համար, որ քոնն է»[110]:

---

[108] Տե՛ս «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ», էջ 27:

[109] Տե՛ս նույն տեղում, էջ 19:

[110] Հակոբյան Հ., ՀՀ-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքական հիմնախնդիրները, Սփյուռքագիտություն տարեգիրք, Ե., 2012, էջ 20:

Հայն այն անձն է, որն իրեն հայ է զգում: Դրա համար կարևորվում են հատկապես մայրենի լեզվի իմացությունը, քրիստոնեական հավատքը, քաղաքացիությունը, սակայն «արդի պետական քաղաքականությունը հանգում է նրան, որ եթե մարդն իրեն հայ է զգում՝ անկախ լեզվի իմացությունից, կրոնից, ու դավանանքից, սոցիալական ծագումից, ապրելու վայրից, ուրեմն նրա համար հայի և հայրենիքի դռները բաց պետք է լինեն»[111],– նշել է ՀՀ սփյուռքի նախկին նախարար Հ. Հակոբյանը:

Հայաստանը հռչակվել է բոլոր հայերի հայրենիքը: Համաշխարհայնացման ազատականացման, տարբեր մշակույթների ու քաղաքակրթությունների պայմաններում հայ ինքնության կերտումը, ինքնագիտակցության խորացումը ամենօրյա մաքառումների ու պայքարի արդյունքն են: Ազգային ինքնագիտակցության թուլացման դեպքում մայրենի լեզվի իմացության հարցը դառնում է լուրջ հիմնահարց: 2011 թ. արևմտահայերենը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ստացել էր «հաստատապես վտանգվածի» կարգավիճակ վերջին տարիներին լեզվի լրագրողական, վարչական, կրթական կիրառության կտրուկ անկման պատճառով[112]: Ուստի համալիր ծրագիր է մշակվել մայրենի լեզվի պահպանման, լեզվամտածողության զարգացման, կրթական հաստատությունների ընդլայնման, մեկօրյա դպրոցների ցանցի ավելացման, հայագիտական կենտրոնների, ամբիոնների հզորացման, դասագրքերի և մասնագետների պատրաստման ուղղությամբ: Սփյուռքում հայ ներուժը աստիճանաբար համախմբվում է, որի օգտագործումը, անշուշտ, կնպաստի Հայաստանի զարգացմանը:

---

[111] Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 21:
[112] Տե՛ս նույն տեղում, էջ 25:

Հայերը կրթված և մրցունակ են տարբեր երկրներում և հասարակություններում, ուստի պատահական չէ, որ ՀՀ սփյուռքի նախարարության կողմից վերջին տարիներին կազմակերպված մասնագիտական համաժողովները սկիզբ են դրել այն մեծ աշխատանքին ու գործին, որը կոչվում է Սփյուռքի վերակազմակերպում՝ ըստ մասնագիտությունների[113]: Հայաստանի Հանրապետության ուժեղացումը առավելապես պայմանավորված էր նրա ժողովրդագրական իրավիճակի փոփոխությամբ, հայրենիքում հայրենադարձության թվի ավելացմամբ, հայրենիքի շենացման գործին առավել շատ հայերի ներգրավմամբ: Այս ամենին մեծապես նպաստում են երկքաղաքացիության ինստիտուտի ներդրումը և ՀՀ օրենսդրության կատարելագործումն այս ոլորտում: Հայտնի է, որ ՀՀ Սահմանադրությունից երկքաղաքացիության արգելքի հանումը և «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքում կատարված փոփոխություններն օգնեցին սփյուռքահայությանը՝ հնարավորություն տալով իրականացնելու ՀՀ քաղաքացի դառնալու ցանկությունը: Եթե 2008 թ. ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերել 1554 մարդ, ապա 2013 թ.՝ 21.142, իսկ 2008-2016 թթ. ընթացքում՝ 97.974 մարդ[114]: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ կան երկրներ, որոնց քաղաքացիները չեն շտապում ՀՀ քաղաքացի դառնալ, որովհետև այդ երկրներում կան արգելքներ երկքաղաքացիության վերաբերյալ (Վրաստան, Ռուսաստանի Դաշնություն, Գերմանիա, Իրան և այլն)[115]: Այս ամենը վկայում է, որ հստակ քաղաքականություն չկա այս ոլորտում, ուստի

---

[113] Տե՛ս Հակոբյան Հ., ՀՀ-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքական հիմնախնդիրները, Սփյուռքագիտություն տարեգիրք, Ե., 2012, էջ 26:
[114] Տե՛ս Հակոբյան Հ., Հայկական Սփյուռքը հարափոփոխ աշխարհում, էջ 428, 601:
[115] Տե՛ս նույն տեղում, էջ 428:

անհրաժեշտ է վերացնել մոտեցումներն այս հարցում և հայ լինելու ևս մեկ կարևոր ապացույց դարձնել հայկական անձնագրերը: Նշված հարցերում պետական քաղաքականության կարևոր մաս են կազմում Հայաստան-Սփյուռք գործակցության խնդիրների օրենսդրական կարգավորումը, համապատասխան կառուցակարգերի ներդրումը և դրանց կատարելագործումը: Սփյուռքահայերի իրավունքների ընդլայնման և ընթացակարգերի պարզեցմանը մեծապես նպաստեց «Բնակչության պետական ռեգիստրի մասին» (24.09.2002), «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» (17.12.2003), «Օտարերկրացիների մասին» (25.12.2006) և ՀՀ այլ օրենքների ընդունումը[116]:

ՀՀ կառավարության որոշումներով և օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերով Հայաստանում ապաստանած սիրիահայերի համար ամբողջովին պարզեցվել և մատչելի են դարձել տարբեր ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տվել նրանց ազատ զգալու ՀՀ-ում և զբաղվելու իրենց ցանկացած գործունեությամբ տարբեր ոլորտներում:

Ըստ հայեցակարգի՝ երկրորդ կարևոր խնդիրը հայրենիք-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության մեջ Սփյուռքի համայնքների զարգացումն է, որը պահանջում է ոչ միայն համայնքների համախմբում, համայնքային ինքնակառավարման կառույցների ստեղծում, հայրենիքի հետ

---

[116] Տե՛ս «Բնակչության պետական ռեգիստրի մասին», http://www.arlis.am/documentview.aspx?docid=75963, «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին», http://www.arlis.am/documentview.aspx?docid=80145, «Օտարերկրայիների մասին» ՀՀ օրենքները, http://www.arlis.am/documentview.aspx?docid=73272:

կապերի ամրապնդում, ազգային մշակույթի և ավանդույթների պահպանում, այլև աջակցություն տարբեր երկրների հայկական համայնքներում բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը՝ ներառելով հայկական համայնքների շահերի պաշտպանության հարցերն այլ պետությունների հետ ՀՀ երկկողմ հարաբերությունների օրակարգում և այլն[117]:

ՀՀ սփյուռքի նախարարությունը, Հայաստան-Սփյուռք գործակցության առանցքային խնդիրը համարելով համայնքների ինքնակազմակերպումը, եկեղեցու, դպրոցի կառուցումը, համայնքային ինքնակառավարման մարմինների ձևավորումը և ՀՀ-ի հետ կապերի ամրապնդմանը և զարգացմանն օժանդակելը, իր ստեղծման օրվանից սկսած, յուրաքանչյուր ամառ ՀՀ-ում կազմակերպում է համայնքային գործի կազմակերպիչների ուսուցում: Նախարարությունը նրանց տրամադրում է համայնքի կազմակերպիչների ու ղեկավարների համար մշակված մեթոդական ձեռնարկներ, կազմակերպում հավաք-հանդիպումներ (նաև Երևանում) փորձի փոխանակման նպատակով, մշակում է նաև համապատասխան մեթոդական ցուցումներ՝ համայնքի ղեկավարների գործունեությանը օժանդակելու համար[118]:

21-րդ դարում աշխարհասփյոռք հայության առջև ծառացած մարտահրավերները պահանջում են նոր որակ, ձև ու բովանդակություն հաղորդել Սփյուռքի հետ տարվող աշխատանքներին՝ հենվելով մարդկային, մշակութային, սոցիալական կապիտալի և այլ կարևոր արժեքների վրա: Հայտնի է, որ ՀՀ-Սփյուռք գործակցությունը այսօր թևակոխել է որակապես նոր փուլ, որում այն չի կարող զարգանալ, եթե չլինեն փոխադարձ վստահու-

---

[117] «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ», էջ 18-19:
[118] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ. էջ 435:

թյան, երկխոսության, խտրականության բացառման, մարդասիրության, ազգասիրության, հայրենասիրության և այլ կարևոր արժեքներ:

Հայրենիք-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության երրորդ կարևոր խնդիրը հայկական պետականության զարգացումն է, որը կոչված է նպաստելու առանձին պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի ամենօրյա կապերի հաստատմանն ու ամրապնդմանը, հայոց պետականության կայացման ու ամրապնդման և համազգային խնդիրների լուծման հարցում սփյուռքահայերի ակտիվ ու արդյունավետ մասնակցության միջավայրի ձևավորմանը, համախմբելու Հայաստանի ու Սփյուռքի կարողությունները և դրանք նպատակաուղղելու համազգային խնդիրների լուծմանը[119]: Այստեղ կարևորվում է աջակցությունը հայ մարդու ինտեգրմանը այն հասարակությանը, որտեղ նա ապրում է: Հայոց պետությունը արդի շրջանում խրախուսում և հորդորում է հայրենիքից դուրս ապրող բոլոր հայերին դառնալ այն երկրի օրինակելի քաղաքացիներ, որտեղ ապրում են՝ միաժամանակ հավատարիմ մնալով իրենց արմատներին ու ինքնությանը: Ինտեգրումը տվյալ երկրի հասարակությանը, որտեղ ապրում է հայը, երբեք արգելք չէ հայապահպանության համար: Կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ սփյուռքահայը հայրենիքում շահ ստանա, եկամուտ ունենա, դրամ վաստակի: Այս ամենը առավել կշահագրգռի սփյուռքահային՝ հայրենիքում արդյունավետ գործունեության ծավալելու:

---

[119] Տե՛ս «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ», էջ 19-21:

Հայաստանի անկախության ամբողջ ընթացքում Սփյուռքը օգնել է հայրենիքին թեթևացնել իր հոգսերը՝ բարեգործական ծրագրերից սկսած մինչև էներգետիկ ճգնաժամի հաղթահարում, աղքատության կրճատում և հայ ընտանիքներին էական օգնության ցուցաբերում: Հատկապես 21-րդ դարասկզբին Հայաստանը սփյուռքահայերին առաջարկել է էլ ավելի ակտիվորեն և արդյունավետորեն մասնակցել զարգացման ծրագրերին: Արդեն աստիճանաբար հաղթահարվում է այն կարծրատիպը, թե հայրենիքին միայն օգնություն է պետք, սփյուռքահայը պետք է ներդրում անի ՀՀ-ում և շահ ստանա, եկամուտ ունենա, քանզի սփյուռքահայի շահը նաև հայաստանցիների շահն է: Այդպես, անշուշտ, աշխատատեղեր կստեղծվեն հայրենիքում, իսկ ներդրումների ավելացումը կկրճատի գործազրկությունը և կկանխի նաև արտագաղթը: Քանի որ Հայկական սփյուռքը բազմաշերտ է, բազմադեմ, բազմալեզու ու բազմակարծիք, հնարավոր չէ այն դիտարկել որպես մի ամբողջություն, ուստի այս առանձնահատկությունից է բխում հայեցակարգում Հայաստան-Սփյուռք գործակցության քաղաքական հիմնավորումը՝ տարածաշրջանային ռազմավարական ծրագրերի մշակումը[120]:

Հայտնի է, որ արդի պայմաններում ՀՀ սփյուռքի նախարարության գործառույթները հստակ են, լայնածավալ և բազմակողմանի, ինչը պայմանավորված է անկախ պետականության պայմաններում Սփյուռքի հետ աշխատանքների կազմակերպման ազատությամբ, երկուստեք կապերում գաղափարական ու քաղաքական ամեն տեսակի սահմանաչափակումների վկայմամբ: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ-Սփյուռք կապերի սեր-

[120] Տե՛ս «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ», էջ 21:

տացումը ներկա փուլում բխում է երկու կողմերի փոխադարձ կարևորության ու անհրաժեշտության ընկալումից: Հայրենիք-Սփյուռք կապերի զարգացման նշված ըմբռնումներն իրենց արտահայտությունը գտան ՀՀ նոր փոփոխված Սահմանադրության համապատասխան հոդվածներում: 2015 թ. դեկտեմբերի 6-ի համաժողովրդական հանրաքվեով փոփոխված ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, որը վերնագրված է «Հայկական սփյուռքի հետ կապերը», արձանագրում է.

ա) «Հայաստանի Հանրապետությունը Հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը,

բ) Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը[121]:

Այսպիսով՝ 21-րդ դարասկզբին Սփյուռքը համաշխարհային բարդ, բազմաբնույթ մի տարածք է, որի առջև ոչ միայն համայնքային, այլև համազգային բազում մարտահրավերներ են ծառացած: Այդ մարտահրավերների թվում են.

ա. ազգային ինքնագիտակցության թուլացում, հեռացում ազգային կյանքից,

բ. հայոց լեզվի իմացության նահանջ, արևմտահայերենի ուսուցման հիմնախնդիրների ավելացում,

գ. Սփյուռքի ազգային հաստատությունների գործունեության վերակառուցման խնդիր,

---

[121] ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), Ե., 2016, էջ 7:

դ. ուծացման գործընթացի ավելացում, խառնամասնությունների թվի աճ,

ե. հայկական կրթական հաստատությունների, կիրակնօրյա և ամենօրյա դպրոցների թվի նվազում,

զ. հայկական դպրոցներում աշակերտների թվի նվազում,

է. նոր ձևավորված համայնքների ինքնակազմակերպման դժվարություններ,

ը. ավանդական և նոր Սփյուռքի միջև տարաձայնությունների առկայություն,

թ. առկա կարծրատիպերի ոչ արագ հաղթահարում,

ժ. միմյանց չվստահելու բարդույթի առկայություն,

ի. համայնքային կյանքում չընդգրկված մեծ թվով սփյուռքահայեր,

լ. ազգային ինքնագիտակցության և պատմական հայրենիք ունենալու գաղափարի թուլացում[122]:

Նշված մարտահրավերներից շատերը ներկայումս բնորոշ են նաև այլ սփյուռքներին: Սակայն Հայկական սփյուռքն իր կազմակերպություններով մեկ միասնական ու ամբողջական ուժեղ համազգային կառույց է հիշեցնում, որն ի զորու է դիմագրավել այդ մարտահրավերներին, քանի որ պահպանում է իր անցյալի մասին հավաքական հիշողությունը, պատմական հայրենիքի նկատմամբ նվիրվածությունը, պատմամշակութային ժառանգությունը, հայ ընտանիքի ավանդույթները, կենցաղավարությունը, ինչպես նաև ձգտում է պահպանել լեզուն, մշակույթը: Կարևորվում են նաև քրիստոնական հավատի նվիրվածություն և եկեղեցու՝ որպես հայապահպանության հենասյունի դերակա-

[122] Տե՛ս ՀՀ Սփյուռք գործակցության զարգացման պետական հիմնախնդիրները, Սփյուռքագիտության տարեգիրք, Ե., 2012, էջ 19-20:

տարությունը Սփյուռքում: Նշված հանգամանքները, ինչպես նաև տարբեր երկրներում հայկական համայնքների, բազմաճավալ գործունեություն ծավալող կառույցների ու կազմակերպությունների միջև ձևավորված հարաբերությունները էական նշանակություն ունեն հայապահպանության և ազգային արժեքների պահպանման գործընթացում:

Այսպիսով՝ ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծմամբ նոր փուլ սկզբնավորվեց Հայաստան-Սփյուռք գործակցության ոլորտում, մշակվեց և գործի դրվեց այդ գործակցության զարգացման միանգամայն նոր պետական քաղաքականության հայեցակարգ, որի իրականացումը քաղաքական լուրջ տեղաշարժ արձանագրեց՝ նպաստելով ՀՀ-Սփյուռք կապերի ձևավորմանն ու զարգացմանը:

Բ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնավարության ժամանակահատվածում (1999-2008 թթ.) էական փոփոխություններ տեղի ունեցան Սփյուռքի նկատմամբ Հայաստանի վարած քաղաքականության մեջ: Առաջին հերթին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը հռչակվեց որպես ՀՀ արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից, առաջնահերթություններից մեկը[123]: Այն ՀՀ-Սփյուռք մերձեցման համար բացեց լայն հեռանակարներ: Փաստորեն՝ տասնամյակներ շարունակ միայն Սփյուռքի կազմակերպություններն են հետամուտ եղել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: ՀՀ քաղաքական անկախության վերականգնումից հետո, երբ «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի 11-րդ կետում արձանագրվեց, որ «ՀՀ-ն սատար է կանգնում 1915 թ. Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»[124], հույսեր արթնացան այս հարցում ՀՀ-ի որդեգրած հետևողական դիրքորոշման վերաբերյալ, սակայն անկախության առաջին տարիներին ՀՀ-ն այդպես էլ չորդեգրեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման քաղաքականությունը: Ուստի ՀՀ երկրորդ նախագահի հետևողականությունն այդ հարցում և դրա

---

[123] Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Ե., 2013, էջ 577:
[124] Նույն տեղում, էջ 116:

ընդգրկումը ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում էական նվաճում կարելի է համարել ՀՀ-Սփյուռք հարաբերությունների ոլորտում: Բացի դրանից՝ ՀՀ երկրորդ նախագահի հետևողականությունը Սփյուռքի հետ մերձեցման գործում դրսևորվեց նաև այդ կապերի զարգացմանն ուղղված հայրենիքում երեք համահայկական խորհրդաժողովների կազմակերպմամբ: ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի 1998 թ. դեկտեմբերի 24-ի N 194 հրամանագրի համաձայն՝ Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովը նախատեսվում էր գումարել 1999 թ.[125]: Խորհրդաժողովը նպատակ ուներ Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունները համապատասխանեցնելու համազգային խնդիրների այդ շրջանի պահանջներին, կյանքի կոչելու ազգային միասնության գաղափարը, հիմնավոր հայեցակարգ մշակելու ՀՀ-Սփյուռք հարաբերությունների զարգացման համար, անհրաժեշտ կազմակերպչական կառույցներ ստեղծելու այդ գործում[126]:

Հրամանագրի համաձայն՝ խորհրդաժողովի աշխատանքները նախապատրաստելու համար ստեղծվեց կառավարական հանձնաժողով, որի համանախագահներն էին ՀՀ պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը, իսկ անդամները՝ ՀՀ կրթության և գիտության, մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարները, ՀՀ ԳԱԱ նախագահը, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում, ԱՄՆ-ում և ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանները, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր

---

[125] Տե՛ս «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 33(66), 31 դեկտեմբերի, 1998, էջ 18:

[126] Տե՛ս նույն տեղում:

վարչության տնօրենը և ուրիշներ: Հանձնաժողովի աշխատանքներում ընդգրկվել էին նաև Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու, Հայաստանի և Սփյուռքի կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտության, մշակույթի գործիչներ, առանձին անհատներ, Հայ կաթողիկե և Հայաստանյանց ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչներ: Խորհրդաժողովի կազմակերպման համար նախապատրաստվեցին անհրաժեշտ փաստաթղթեր ու ծրագրային մոտեցումներ[127]:

Քանի որ ՀՀ կառավարությունում տեղի էին ունեցել նոր փոփոխություններ, խորհրդարանական ընտրություններում հաղթել էր «Միասնություն» դաշինքը, և ՀՀ վարչապետ էր դարձել ՀՀ պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը, իսկ ԱԺ նախագահ՝ Կ. Դեմիրճյանը, ուստի 1999 թ. օգոստոսի 27-ին ՀՀ նախագահի նոր հրամանագրով հաստատվեց կառավարական հանձնաժողովի նոր կազմը[128]:

1999 թ. սեպտեմբերի 14-ին ՀՀ վարչապետ Վ. Սարգսյանի կողմից N 580 որոշումը կայացվեց Հայաստան-Սփյուռք խորհրդաժողով անցկացնելու վերաբերյալ՝ անցկացման պատասխանատվությունը դնելով ՀՀ արտաքին գործերի նախարարության վրա[129]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սփյուռքում, բացի ավանդական կուսակցական կառույցներից, կազմակերպություններից և ուժերից, կան նաև ոչ կուսակցական կառույցներ,

---

[127] Տե՛ս «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 33(66), 31 դեկտեմբերի, 1998, էջ 18:

[128] Տե՛ս «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 24(90), 3 սեպտեմբերի, 1999, էջ 141:

[129] Տե՛ս «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 25(91), 30 սեպտեմբերի, 1999, էջ 106-107:

կազմակերպություններ և ուժեր, որոնք բավականին ազդեցիկ են, և նրանց կարծիքներն անտեսել հնարավոր չէ, ուստի պատվիրակությունները կազմվեցին ներկայացուցչական սկզբունքով՝ ընդգրկելով սփյուռքահայ համայնքային գրեթե բոլոր կառույցների ու շրջանակների ներկայացուցիչներին ու անհատ գործիչներին: Պատվիրակությունները կազմվեցին աշխարհագրական պատկանելության համաձայն՝ ելնելով յուրաքանչյուր համայնքի կառուցվածքից: Փոքր համայնքների ներկայացուցիչները միավորվում էին տարածաշրջանային պատվիրակությունների մեջ[130]: Խորհրդաժողովը նախապատրաստելու ժամանակ համայնքներում կազմակերպվեցին նաև տարածաշրջանային հավաքներ՝ խորհրդաժողովի օրակարգն ու պատվիրակությունների կազմավորման սկզբունքները քննարկելու նպատակով: Փաստորեն՝ հայկական ավանդական կուսակցություններին, համահայկական այլ կազմակերպություններին և հոգևոր կառույցներին հնարավորություն տրվեց ներկայանելու առանձին պատվիրակություններով:

ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանը խորհրդաժողովի նախապատրաստական աշխատանքների շրջանակներում Սփյուռքի համայնքներում շրջայց կատարեց ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանը՝ ամենուր փոխանցելով այն նպատակներն ու խնդիրները, որոնց վերաբերյալ նախատեսվում էին քննարկումներ ՀՀ-Սփյուռք առաջին խորհրդաժողովի ընթացքում[131]:

---

[130] Տե՛ս Եղիազարյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 187:

[131] Տե՛ս Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ, ելույթների ընտրանի, Ե., 2009, էջ 476, նաև Բահարյան Վ., Հայաստան-Սփյուռք համաժողով և հայաստանյան օրագիր, Ե., 2001, էջ 9:

Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովը տեղի ունեցավ 1999 թ. սեպտեմբերի 22-23-ին: Կազմակերպիչները ապահովվել էին հայության բոլոր խմբերի և սփյուռքահայ բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը խորհրդաժողովին: Մասնակիցների թիվը հասնում էր 1200-ի, նրանք ներկայացնում էին 50 երկրներ[132]: Առաջին անգամ անկախ Հայաստանի մայրաքաղաքում միասին հավաքվել էին աշխարհասփյուռ հայության ներկայացուցիչները՝ համազգային խնդիրներ քննարկելու և լուծման ուղիներ նախանշելու համար:

Առաջին խորհրդաժողովի օրակարգում ՀՀ-Սփյուռք հարաբերությունների սերտացումն էր և տնտեսական կապերի աշխուժացումը: Քննարկվեցին նաև հայապահպանության, երկքաղաքացիության, միասնական ուղղագրության, առկա թյուրըմբռնումների և տարաձայնությունների լուծման և այլ հարցեր[133]:

Ելույթներով հանդես եկան ՀՀ և ԼՂՀ նախագահները, հոգևոր առաջնորդները, համահայկական կազմակերպությունների ղեկավարները: Այնուհետև խորհրդաժողովի լիագումար նիստում ներկայացվեցին զեկուցումների հետևյալ թեմաները՝ 1) Ազգային մշակույթ և ինքնություն, 2) ՀՀ-Սփյուռք հարաբերություններ, 3) Սփյուռքի կառույցների և ՀՀ միջև հաղորդակցություն և կապ, 4) Քարոզչություն, առկա կարողություններ, հնարավորություններ ու հեռանկարներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ ու հաղորդակցություն, 5) Սփյուռքի օգնությունը ՀՀ-ին և այլն[134]:

---

[132] Տե՛ս Պետրոսյան Ք., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001 թթ., Ե., 2011, էջ 46:
[133] Տե՛ս Բահարյան Վ., նշվ. աշխ., էջ 3:
[134] Տե՛ս նույն տեղում, էջ 4:

Խորհրդաժողովի ընթացքում ներկայացվեցին մոտ 70 ելույթներ, որոնք վերաբերում էին արտագաղթին, Սփյուռքի անմիջական մասնակցությամբ Հայաստանի անկախ պետականության կայացմանը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հիմնահարցին, հայապահպանությանը, արցախյան հիմնահարցին, հայոց եկեղեցուն և այլն: Խորհրդաժողովը մի շարք որոշումներ ընդունեց միասնական տեղեկատվական դաշտի ձևավորման, համահայկական երիտասարդական կենտրոնի ստեղծման, համահայկական նախաձեռնությունների իրականացման, հայկական զարգացման գործակալության ստեղծման և սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստան ուղղությամբ[135]:

Խորհրդաժողովն ընդունեց երկու կարևորագույն փաստաթուղթ՝ «Հռչակագիր» և «Արցախի մասին» հայտարարություն:

«Հռչակագրում» խորհրդաժողովի մասնակիցները փաստում էին, որ խորհրդաժողովը, հիրավի, աննախադեպ պատմական իրողություն է, որը, արժևորելով հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունները, սկիզբ է դնում այնպիսի գործընթացի, որն այսուհետ նոր որակով կապահովի հայության բոլոր հատվածների ներդաշնակ գործունեությունը համազգային խնդիրների համատեղ քննարկման և միասնական ջանքերով լուծման համար: Հայությունը չի կարող անտարբեր մնալ ժամանակի հրամայականներին: Եվ այդ մարտահրավերների դեմ սահմանվում են այնպիսի հիմնարար սկզբունքներ, համոզմունքներ ու մոտեցումներ, որոնք ընդհանուր են ամենքի համար՝ անկախ գտնվելու վայրից: Հայ ժողովրդի ուժը բխում է իր բոլոր հատ-

---

[135] «Հայոց աշխարհ», 24 սեպտեմբերի, 1999, նաև Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 46:

վածների բազմազան փորձառություններից և միասնական է իր վերջնանպատակում[136]:

«Հռչակագրի» մի այլ հատվածում արձանագրվում էր. «ՀՀ աննահանջ հզորացումն ու վերընթացը բխում են բոլորիս շահերից, քանզի Հայաստանը համայն հայության հայրենիքն է: Յուրաքանչյուր հայ պարտավոր է լիակատար աջակցություն ցուցաբերել, որպեսզի Հայաստանը լինի հզոր, կենսունակ ու բարգավաճ երկիր և հայ ժողովրդի անվտանգ հարատևման ու իր ազգային շահերի առաջմղման երաշխիք: Հայաստանը գտնվում է աշխարհաքաղաքական բարդ տարածաշրջանում, որտեղ պիտի կարողանա մեր ազգի մարդկային և նյութական կարողությունները վերածել ուժի՝ ձևավորելով արդիական հզոր տնտեսություն և հասարակարգ: Հայաստանը պիտի կարողանա սոցիալական բոլոր խավերի մասնակցությամբ արձագանքել աշխարհի սրընթաց փոփոխություններին: Հայը, որտեղ էլ որ գտնվելիս լինի, ընդունում է ՀՀ տնտեսական և հոգևոր առաջընթացի ապահովմանը զինվորագրվելու ընդհանուր հանձնառությունը»[137]: Այնուհետև ընդգծվում է. «Մենք հավաստում ենք և վճռական ենք մեր ազգային նպատակները, երազանքները հավաքական միասնությամբ իրականացնելու հարցում՝ ի փառս հայ ժողովրդի անվտանգ ու բարգավաճ ապագայի, նոր հազարամյակում նրան արժանի կենսակերպ ու զարգացում ապահովելու համար»[138]:

«Արցախի մասին» հայտարարության մեջ ասվում էր, որ «Արցախի ճակատագիրը բախտորոշ նշանակություն ունի ողջ հայության համար, ուստի խորհրդաժողովի մասնակիցներն

---

[136] Հակոբյան Հ., նշվ. աշխ. հավելված 18, էջ 605, նաև «Հայոց աշխարհ», 24 սեպտեմբերի, 1999:
[137] Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 606:
[138] Նույն տեղում, էջ 609:

իրենց պատրաստակամությունն էին հայտնում՝ նպաստելու արցախյան հիմնահարցի արդարացի և համապարփակ կարգավորմանը, որը ենթադրում է ԼՂՀ-ի ժողովրդի ինքնորոշումը՝ հիմնված արցախահայության ազատ կամքի դրսևորման վրա: Փաստելով պատերազմի ամենածանր օրերին Արցախի փրկության և պաշտպանության հարցում Հայաստանի և Արցախի համախմբման հետևանքները՝ փաստաթուղթն արձանագրում էր «Աշխարհասփյուռ հայության գրեթե բոլոր հատվածները, սեփական քաղաքական և կուսակցական մոտեցումներից անկախ, սատար կանգնեցին Արցախի հայությանը: Մինչ օրս շարունակվող այդ եղբայրական օգնությունն ու համագործակցությունը մեր ազգի առջև ծառայած խնդիրները միասնաբար լուծելու ունակության դրսևորումն են»:

Կարևորելով Արցախի ժողովրդի բարեկեցության մակարդակի բարձրացումն ու հայրենի հողի վրա նրանց նյութական և հոգևոր պահանջմունքների լիարժեք բավարարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը՝ խորհրդաժողովի մասնակիցները գերխնդիր համարեցին «ԼՂՀ սոցիալ-տնտեսական հարցերի լուծման սատարումը, որը ենթադրում է նաև նախադրյալների ձևավորում փախստականների և տեղահանվածների վերադարձի համար՝ ապահովելով նրանց արժանավայել կենսապայմաններով»[139]:

Փաստորեն՝ Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովը լուծում էր հիմնականում փոխադարձ ճանաչողության, վստահության ամրապնդման և ՀՀ-Սփյուռք ձևաչափով համազգային ծրագրեր իրականացնելու հնարավորությունների քննարկման խնդիր՝ ՀՀ-Սփյուռք փոխհարաբերությունների համակարգման

[139] Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 610:

ուղղությամբ Հայաստանի իշխանությունների կողմից որդեգրելով հետևողական քաղաքականություն:

Ցավոք, համահայկական մերձեցման գործընթացը որոշ ժամանակով կասեցվեց խորհրդաժողովին հաջորդած հոկտեմբերի 27-ի ողբերգության հետևանքով: Խորհրդաժողովի հաղորդած դրական ազդակները, որոնք սփյուռքահայության մեծ մասի մոտ ապագա համագործակցության ուղիներ մատնանշեցին, հոկտեմբերի 27-ի պատճառով Սփյուռքում տարակուսանքի և հայրենիքի հետ մերձեցման անվստահության մթնոլորտ ձևավորվեցին[140]: Նշված իրավիճակի շտկմանն ուղղված քայլ էր կառավարության կողմից ամերիկահայ գործարար Վահագն Հովնանյանի նշանակումը զբոսաշրջության գործակալության խորհրդի նախագահ: Վերջինս հնարավորություն ստացավ ոչ միայն իրականացնելու իր ծրագրերը, այլև հայրենի զբոսաշրջության ոլորտ ներգրավելու հայրենիքի բարգավաճմամբ, սեփական բիզնեսով շահագրգիռ այլ սփյուռքահայերի[141]:

Փաստորեն՝ հայրենիք-Սփյուռք համագործակցության հետագա գործընթացը դարձավ շարունակական: Արդեն 2000-2008 թթ. նախապատրաստական աշխատանքներ էին տարվում հայրենիք-Սփյուռք երկրորդ խորհրդաժողովի կազմակերպման ուղղությամբ: Սփյուռքահայ երիտասարդության հայեցի դաստիարակման, ՀՀ երիտասարդության հետ շփումների կազմակերպման և սփյուռքյան կառույցների միջոցով արդյունավետ ու նպատակաուղղված ծրագրերի իրագործմամբ հնարավոր եղավ 21-րդ դարասկզբին ավելի սերտացնել հայրենիք-Սփյուռք կապերը: Նմանօրինակ ծրագրերից էր «Բազե» համահայկական երի-

---

[140] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 48:
[141] Տե՛ս նույն տեղում:

տասարդական ամենամյա հավաքների կազմակերպումն ու իրականացումը: Այդ կարևոր միջոցառումները ոչ միայն հնարավորություն տվեցին հայ երիտասարդներին արդար մրցության միջոցով ճանաչելու միմյանց, այլև մրցումները բարեկամական տոնի վերածելու շրջանակներում նրանց սնեցին հայեցի գաղափարներով, դաստիարակեցին ճշմարիտ արժեքներով ու ազատության և ժողովրդավարության բերկրանքը հրամցնելով՝ նրանց ձերբազատեցին նախապաշարումներից՝ հայրենիք-Սփյուռք հարաբերությունների մերձեցմամբ նրանց համար լավագույն ապագայի ստեղծման հույսով:

Համահայկական առաջին խաղերը անցկացվեցին Հայաստանում 1999 թ. օգոստոսի 28-ից սեպտեմբերի 5-ը: Խաղերի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Երևանի «Հրազդան» մարզադաշտում օգոստոսի 28-ին: Խաղերի կրակը բացավառվեց Գառնիի հեթանոսական տաճարում և փոխանցավազքերով հասցվեց «Հրազդան» մարզադաշտ, որտեղ օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն, մարմնամարզիկ Ալբերտ Ազարյանը բացավառեց խաղերի ջահը[142]:

Հանդիսավոր բացման արարողությունը, որը վերածվեց մարզամշակութային խոշոր տոնի, ավարտվեց գեղեցիկ և ճոխ հրավառությամբ: Խաղերի մասնակիցներին իր բարեմաղթանքները հղեց Միջազգային օլիմպիական կոմիտեի պատվավոր նախագահ Խուան Անտոնիո Սամարանչը: Համահայկական առաջին խաղերին մեծ թվով մարզիկներ մասնակցեցին Թեհրանից (64 մարզիկ), Ստեփանակերտից (58 մարզիկ), Բուենոս Այրեսից (53 մարզիկ), Սիդնեյից (49 մարզիկ), Լոս Անջելեսից (47 մարզիկ), Փարիզից (34 մարզիկ), Տորոնտոյից (32 մարզիկ),

[142] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության», 29 օգոստոսի, 1999:

ինչպես նաև Բեյրութից, Բրյուսելից, Կահիրեից, Հալեպից, Մարսելից, Մոնրեալից, Նիկոզիայից, Նիցցայից, Սան Ֆրանցիսկոյից, Սան Պաուլոյից և Սպահանից:

Խաղերի ժամանակ խաղարկվեցին 37-ական ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներ, որոնք բաժին ընկան 26 քաղաքների մարզիկների: Խաղերի ոսկե մեդալակիրները ներկայացնում էին Երևան, Վանաձոր, Թբիլիսի, Թեհրան, Գյումրի, Մոնրեալ, Լոս Անջելես, Հալեպ, Սիսիան և Էջմիածին քաղաքները[143]:

Խաղերի հանդիսավոր փակման արարողությունը կայացավ Երևանի Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում 1999 թ. սեպտեմբերի 5-ին: Այն վերածվեց երիտասարդների բարեկամության ջերմ ու հուզիչ տոնախմբության:

Համահայկական երկրորդ խաղերն անցկացվեցին 2001 թ.: Մարզական այդ կարևոր միջոցառմանը մասնակցեցին 28 պետությունների 83 քաղաքների շուրջ 1700 մարզիկ-մարզուհիներ: Այս խաղերում աշխարհասփյուռ հայ մարզիկները մրցեցին 9 մարզաձևերում[144]: Նրանք մրցում էին՝ 45-ական ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներ նվաճելու համար: Խաղերի մարզական ծրագրում ավելացվել էին լող և մինի ֆուտբոլ մարզաձևերը: Այսպիսով՝ հայ մարզիկները մրցեցին ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, թենիս, սեղանի թենիս, շախմատ, աթլետիկա, լող և մինի ֆուտբոլ մարզաձևերում: Թիմային մարզաձևերում հաղթանակ տոնեցին Ստեփանակերտի ֆուտբոլիստները, Երևանի մինի ֆուտբոլիստները, Վալլեյ քաղաքի տղամարդկանց բասկետբոլի թիմի անդամները և Երևանի բասկետբոլիստուհիները[145]:

---

[143] Տե՛ս ս «Հայաստանի Հանրապետության», 29 օգոստոսի, 1999:
[144] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության», 30 օգոստոսի, 2001:
[145] Տե՛ս նույն տեղում:

Շախմատի մրցախաղերում վանաձորցիները հաղթանակ տարան կանանց ու տղամարդկանց մրցումներում, իսկ թենիսի և վոլեյբոլի մրցումներում հաղթանակ տոնեցին երևանցի տղաներն ու աղջիկները: Բացի վերը թվարկված քաղաքների ներկայացուցիչներից՝ խաղերի հաղթողներից մրցանակներ շահեցին ևս 24 այլ քաղաքների մարզիկ-մարզուհիներ, այդ թվում՝ Փարիզից, Թեհրանից, Բուխարեստից, Թբիլիսիից, Հալեպից, Բեյրութից, Ստամբուլից, Գլենդելից, Մոսկվայից, Լոս Անջելեսից, Բուենոս Այրեսից, Սպահանից, Սոչիից, Շուշիից, Գյումրիից, ինչպես նաև Հայաստանի այլ քաղաքներից[146]:

2001 թվականից սկսած՝ ՀՀ կառավարության որոշմամբ կազմակերպվեց «Բազե» առաջին համահայկական երիտասարդական հավաքը Դիլիջան քաղաքում, որին մասնակցեցին 5 հազարից ավելի երիտասարդներ Հայաստանից, Արցախից, Ջավախքից և Սփյուռքից[147]: Հավաքը դարձավ ոչ միայն ավանդական ստուգատես, մրցութային լավագույն միջացառում, այլև Սփյուռքի և ՀՀ երիտասարդության միմյանց հետ ազատ շփվելու, հաղորդակցվելու, փոխադարձ ճանաչողության և հայ ինքնության ու հայեցի դաստիարակության լավագույն հարթակ:

Համահայկական երիտասարդական հավաքի արդյունքում հիմնադրվեց «Համահայկական միջազգային երիտասարդական կենտրոնը», որը 2010 թ. ՀՀ նախագահի որոշմամբ վերանվանվեց «Համահայկական երիտասարդական հիմնադրամի»՝ շարունակելով նրա ծրագրերի կենսագործումը և ավելի ընդլայնելով գործառույթների շրջանակներն ու գործունեության աշխարհագրությունը: Այդ հիմնադրամի կազմում գործում է «Բազե»

---

[146] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության», 30 օգոստոսի, 2001:
[147] Տե՛ս http://iheh.am/:

ակումբը, որի նպատակն է երիտասարդների ներուժն ուղղորդել երիտասարդության հիմնախնդիրների լուծմանը, նպաստել նրանց մասնագիտական աճին, կազմակերպել երիտասարդների ակտիվ հանգիստը:

Հայաստան-Սփյուռք երկրորդ խորհրդաժողովը սկզբնապես որոշվել էր անցկացնել 2007 թ. սեպտեմբերին, սակայն այն հետաձգվեց՝ պայմանավորված Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոն հաստատման 1700-ամյակի միջոցառումներով, ուստի խորհրդաժողովը տեղի ունեցավ 2002 թ. մայիսի 27-28-ը: Խորհրդաժողովի հիմնական պատասխանատվությունը նախկինի նման դրվեց ՀՀ ԱԳՆ-ի վրա[148]:

Խորհրդաժողովի մասնակիցների թիվը երեք հազար էր, որից մոտ 1600-ը ներկայացնում էին աշխարհի 48 պետությունների հայկական համայնքներն ու կազմակերպությունները[149]: Բացման խոսքով հանդես եկավ խորհրդաժողովի կազմակերպման հանձնաժողովի նախագահ, ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանը[150]: Բացման լիագումար նիստում ելույթ ունեցան ՀՀ և ԼՂՀ նախագահները, Ամենայն հայոց և Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսները, Հայ կաթողիկե եկեղեցու կաթողիկոս-պատրիարքը, Հայաստանյանց ավետարանական եկեղեցու համախորհրդային խորհրդի նախագահը և սփյուռքահայ կազմակերպությունների ներկայացուցիչներ: ՀՀ նախագահը նշեց, որ 1999 թ. Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովով սկիզբ է դրվել

---

[148] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 432-433:

[149] Տե՛ս «ՀՀ վարչապետի որոշումը՝ Հայաստան-Սփյուռք երկրորդ խորհրդաժողովը Երևանում անցկացնելու մասին»,
http://www.irtek.am/views/act.aspx?tid=16578:

[150] Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ, ելույթների ընտրանի, Ե., 2009, էջ 328-331:

հայրենիքի և Սփյուռքի համարկման հնարավորությունների գնահատման և դրան հասնելու ուղիների փնտրտուքի գործընթացին, որի նպատակն ազգային ներուժի պահպանումն ու հզորացումն է: Այնուհետև ՀՀ նախագահը ներկայացրեց նախորդ խորհրդաժողովի որոշումների իրականացման վերաբերյալ զեկուցում[151]: Միասնական տեղեկատվական դաշտի՝ որպես համարկման գործիքի ձևավորման առումով նախագահը կարևորեց Հանրային հեռուստաընկերության հեռարձակումներն Ավստրալիայից մինչև ԱՄՆ, համահայկական նախագահությունների առումով համահայկական սպորտային խաղերը, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնը, տարաբնույթ հավաքները, Համահայկական երիտասարդական կենտրոնի ստեղծումը, թեև այն հետաձգվել էր մինչև 2003 թ., Հայաստանում անցկացվող սփյուռքահայ երիտասարդական կազմակերպությունների հավաքները, հայկական զարգացման գործակալության ստեղծմամբ սփյուռքահայերի մասնակցությունը գործակալության խորհրդի կազմի աշխատանքներին, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման առումով՝ 2000-2001 թթ. ավելի քան 500 ուսուցիչների վերապատրաստման կազմակերպումը թե՛ ՀՀ-ում և թե՛ ուղղակի համայնքներում[152]: Ելույթի վերջում ՀՀ նախագահն առաջարկեց համազգային նշանակության խնդիրների հարցում մշակել համահայկական օրակարգ: Բացման լիագումար նիստից հետո խորհրդաժողովի աշխատանքներն ընթացան չորս զուգահեռ թեմատիկ նիստերով.

---

[151] Ամատունի Մ., Ռոբերտ Քոչարյանը Հայկական հարցի ճակատագրում, գ. 1, Ե., 2005, էջ 192, 203:
[152] Ամատունի Մ., նշվ. աշխ., էջ 204-205:

1. քաղաքական խնդիրներ՝ «Հայաստան-Սփյուռք» հարաբերություններ վերնագրով,
2. տեղեկատվություն և լրատվական միջոցներ,
3. տնտեսություն և սոցիալ-տնտեսական զարգացում,
4. կրթություն, գիտություն և մշակույթ[153]:

Թեմատիկ նիստերում հանդես եկան 4-5 զեկուցողներ, տեղի ունեցան քննարկումներ և արդյունքների ամփոփում: Մայիսի 29-ին տեղի ունեցավ ամփոփիչ լիագումար նիստը, որտեղ թեմատիկ նիստերի նախագահները ամփոփեցին աշխատանքների արդյունքները, որոնք էլ իրենց արտացոլումը գտան խորհրդաժողովի ամփոփիչ հռչակագրում:

Խորհրդաժողովը կարևորեց հետևյալ ծրագրերը.

1. ՀՀ և ԼՂՀ դպրոցները համակարգիչներով ապահովելը, որը պետք է ավարտվեր 2005 թ.,
2. Հայոց ցեղասպանության հետազոտական կենտրոնի ստեղծումը:

ՀՀ-ում անհրաժեշտություն էր ստեղծել Հայոց ցեղասպանության հետազոտական և հրատարակչական կենտրոն, որը պետք է համախմբեր նախորդ 87 տարիներին իրականացված ցեղասպանագիտական հետազոտությունները՝ խթանելով նաև մասնագետների նոր սերնդի ձևավորման գործընթացը:

Երրորդ կարևորագույն խնդիրը բովանդակում էր հայագիտության համացանցային համալսարանի ստեղծումը. տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորություններից օգտվելով՝ անհրաժեշտ էր ստեղծել համացանցային համալսարան, որի միջոցով ցանկացողներին կտրամադրվեին հայագիտական նյութեր և կընձեռվեր դասընթացներ անցնելու հնարավորու-

[153] Եղիազարյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 193:

թյուն: Արխիվային բազայի և առցանց դասընթացների համատեղումը դասախոսներին, գիտնական-ներին և ուսանողներին գաղափարներ փոխանակելու, անցյալն ուսումնասիրելու, ներկայի և ապագայի խնդիրներն վերլուծելու, ինչպես նաև համայն աշխարհի հայությանը հայագետների փոքրաթիվ, սակայն արժեքավոր համայնքի գիտելիքներից օգտվելու, այս բնագավառում նոր ուսանողների նորամուտը խրախուսելու հնարավորություն կտար, ինչն էլ այդ աշխարհագրական տարաբնույթ համայնքի շրջանակներում հիմք կդառնար ընդհանուր տեղեկատվության և գիտական բազայի ստեղծման գործընթացին:

Չորրորդ խնդիրն առնչվում էր ուսումնական ծրագրերի հանձնաժողովի ստեղծմանը, որը կնպաստեր հայեցի կրթության զարգացմանը, հարթակ կստեղծեր համապատասխան մասնագետների համար, որպեսզի նրանք հանդիպեին ու քննարկեին հայոց լեզվի, գրականության, հայոց պատմության դասավանդման տարաբնույթ մոտեցումները:

Հինգերորդ հարցը վերաբերում էր օժտված հայ ուսանողներին աջակցություն տրամադրելուն. տարբեր համալսարաններում ՀՀ-ից, ԼՂՀ-ից և Սփյուռքից հայ ուսանողների առկա և ապագայի ներուժը օգտագործելու նպատակով ուսանողների և պրոֆեսորների հանձնաժողովը պետք է մշակեր ծրագիր, որի շնորհիվ օժտված հայ ուսանողները կստանային անհրաժեշտ օժանդակություն:

Վեցերորդ խնդիրը վերաբերում էր տարածաշրջանային բարձրակարգ բժշկական կենտրոնի ստեղծմանը: Ծրագրի նպատակն էր Երևանում հիմնադրել համաշխարհային մակարդակի բժշկական կենտրոն, որը կբարձրացներ բժշկական ծառայությունների մատուցման որակը արդիական սարքավորում-

ներով և տեխնոլոգիաներով վերազինման ճանապարհով: Այդ ծրագրի միջոցով հնարավոր կլիներ բարելավվել առողջապահության մակարդակը ՀՀ-ում:

Յոթերորդ խնդիրը վերաբերում էր Սփյուռքում թանգարանների ստեղծմանը, որտեղ պետք է ցուցադրվեին բոլոր հայկական համայնքներին առնչվող թանգարանային նյութերը[154]:

Հայաստան-Սփյուռք երկրորդ խորհրդաժողովի հռչակագիրը՝ «Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է» կարգախոսով, հիմնավորում էր հայրենիքի հզորացման համար համայն հայության ուժերը մեկտեղելու անհրաժեշտությունը: Անհրաժեշտ էր վերացնել երկքաղաքացիության արգելքը ՀՀ-ում, որը հնարավորություն կտար յուրաքանչյուր հայի լիարժեք ներկայություն ունենալու հայրենի պետության կյանքում: ԼՂՀ-ի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքի ճանաչման հարցը պետք է դառնար հայության բոլոր հատվածների ուշադրության առարկան: Նմանապես Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը շարունակելու էր մնալ համայն հայության ուշադրության կենտրոնում[155]:

Հռչակագրի վերջում խորհրդաժողովի մասնակիցները մեկ անգամ ևս ընդգծում են Հայաստանի Հանրապետության գերագույն պատասխանատվությունը և դերը հայության համախմբման գործում, յուրաքանչյուր հայի լիարժեք մասնակցությունը համազգային խնդիրների լուծմանը[156]: «Մենք հանձնառու և հետևողական ենք մեր ազգային իրավունքներն ու շահերը պաշտպանելու, համերաշխությունն ու համախմբվածությունը

---

[154] Տե՛ս Եղիազարյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 194-195:
[155] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., հավելված 198, էջ 612-613:
[156] Տե՛ս նույն տեղում, էջ 615:

ամրապնդելու, մեր խնդիրները, իղձերն ու երազները հավաքական միասնությամբ իրականացնելու հարցում՝ ի փառս հայ ժողովրդի ապահով, անվտանգ զարգացման ու բարգավաճման»,– նշվում է հռչակագրում[157]:

Այսպիսով՝ Հայաստան-Սփյուռք երկրորդ խորհրդաժողովն արդյունավետ էր հատկապես ՀՀ-Սփյուռք կապերի ամրապնդման ձևաչափում անհրաժեշտ ծրագրերի որդեգրման և իրականացման առումով:

«Բազե» համահայկական երիտասարդական երկրորդ հավաքը կազմակերպվել է Դիլիջան քաղաքում 2003 թ. հուլիսի 29-ից օգոստոսի 6-ն ընկած ժամանակահատվածում: Հավաքի մասնակիցները ժամանել էին ՀՀ-ից, ԼՂՀ-ից, Ջավախքից, Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսից, Սփյուռքից, մասնավորապես Սիրիայից, Լիբանանից, ԱՄՆ-ից և այլ վայրերից[158]: Հավաքի մասնակիցները ներկայացել էին եռագույն ճակատներում:

Առաջին օրը՝ հուլիսի 29-ին, կարմիր, կապույտ և նարնջագույն ճամբարներում ընթացան ֆուտբոլի և վոլեյբոլի ներճակատային մրցումները: Հանդիպումները, չնայած մեծ տարբերություններին, անցկացվեցին ազատ ու զվարթ մթնոլորտում: Տեղի ունեցան ինտելեկտուալ և մշակութային մրցախաղեր, երգի և պարի մրցումներ և այլն: Կարմիր ճակատում ակտիվ մասնակցություն ցույց տվեցին Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի սաները[159], որոնք առաջին անգամ էին մասնակցում «Բազե» համահայկական երիտասարդական հավաքին:

---

[157] Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 615:
[158] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 10 օգոստոսի, 2003:
[159] Տե՛ս նույն տեղում:

Սիրիա-Լիբանան ջոկատից Արփիկ Գասպարյանը հստակորեն տիրապետում էր գրական արևելահայերենին: Նա շուրջ չորս տարի ուսանել է Երևանում: Ըստ նրա՝ «Բազե» համահայկական երիտասարդական հավաքը հնարավորություն է տալիս տարբեր մտածելակերպի երիտասարդներին՝ հայրենիքից և Սփյուռքից, համախմբվելու մեկ ընդհանուր գաղափարի շուրջ և հայրենիքի սերը տարածելու թե՛ Հայաստանում, թե՛ ի սփյուռս աշխարհի[160]:

«Բազե» երիտասարդական համահայկական խաղերը հետագայում դարձան ամենօրյա՝ էլ ավելի նպաստելով և ամրապնդելով հայրենիք-Սփյուռք կապերը:

Համահայկական երրորդ խաղերը անցկացվեցին 2003 թ. օգոստոսի 16-24-ը: Դրանք ոչ միայն ամրապնդեցին հայրենիք-Սփյուռք կապերը՝ բարեկամացնելով աշխարհի տարբեր անկյուններում ապրող հայ երիտասարդներին, այլև նպաստեցին նրանց հայրենաճանաչությանը, հայրենասիրության դրսևորմանը, հայեցի դաստիարակությանը: ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը, համահայկական խաղերի բացման ժամանակ ողջունելով խաղերի բոլոր մասնակիցներին և հյուրերին, նշել է, որ համահայկական խաղերը Հայաստանի և Սփյուռքի միասնության, ամբողջ հայության ուժի և կացության խորհրդանիշն են և, անշուշտ, անմոռաց տպավորություններ և հիշողություններ կթողնեն բոլոր ներկաների սրտերում[161]:

Համահայկական երրորդ խաղերին մասնակցեցին 31 երկրների 81 քաղաքացիներ (շուրջ 3 հազար մարզիկ-մարզուհիներ), իսկ եթե հաշվի առնվի, որ շատերը մայր հայրենիք էին

---

[160] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 10 օգոստոսի, 2003:

[161] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 օգոստոսի, 2003, էջ 1, 2:

ժամանել ընտանիքներով, հարազատներով, ապա վերոնշյալ թիվը կկազմի մոտ 7 հազար[162]: Համահայկական երրորդ խաղերին առաջին անգամ էին մասնակցում 1300 սփյուռքահայեր Լոս Անջելեսից, Ստամբուլից, Վիեննայից, Փարիզից, Կահիրեից, Բուենոս Այրեսից, Սիդնեյից, Բրյուսելից, Մարսելից, Սան Պաուլոյից, Մոնրեալից, Տորոնտոյից, Մայնի Ֆրանկֆուրտից, Մանչեսթերից, Մոսկվայից, Սանկտ Պետերբուրգից, Կրասնոդարից և այլ քաղաքներից[163]: Այսպես, օրինակ, ավստրալահայ երեք եղբայրները՝ Հովիկ, Ռաֆֆի և Շանթ Իվանյանները, առաջին անգամ էին հայրենիքում, և այդ իրողությունն իրենց համար կարծես տասնօրյա մի երազ լիներ[164]: Նման անմոռաց այցելությունները շատ-շատերի մոտ վերածվել էին անմոռաց տպավորությունների: Նրանցից շատերն իրենց փոքրիկ օգնությունն էին բերել հայրենիքին, ինչպես, օրինակ, Գլենդելի բասկետբոլիստների և թենիսիստների 45 հոգուց բաղկացած պատվիրակությունը՝ «Արարատ» մարզական կենտրոնի ատենապետ Արմիկ Աբրահամյանի ղեկավարությամբ, 925 հազար դրամի չափով մարզական գույք և պարագաներ նվիրաբերեց Երևանի 154 դպրոցին: Նրանք գրեթե բոլորն էլ իրենց հետ հուշանվերներ տարան՝ սեփական հայրենիքը վառ պահելով իրենց հիշողություններում[165]:

Համահայկական երրորդ խաղերի բացման պատիվը վերապահված էր աշխարհի և Եվրոպայի չեմպիոն մարզիկներին. 1992 թ. Բարսելոնի օլիմպիադայի չեմպիոն, երևանցի հրաձիգ Հրաչյա Պետիկյանի գլխավորությամբ մարզադաշտ բերվեց և

---

[162] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 26 օգոստոսի, 2003 էջ 2:
[163] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 21 օգոստոսի, 2003, էջ 1:
[164] Տե՛ս նույն տեղում:
[165] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 օգոստոսի, 2003, էջ 3:

բարձրացվեց խաղերի դրոշը, իսկ օլիմպիական չեմպիոն, մոսկովաբնակ բասկետբոլիստուհի Էլեն Բունիաթյանց-Շաքիրովան բացավառեց Գառնիի տաճարից բերված խաղերի ջահը[166]:

Խաղերում ընդգրկված էին 10 մարզաձևեր: Առաջին անգամ Հայաստան էին այցելել Թբիլիսիի և Ջավախքի մարզիկները, ՌԴ Սոլնեչնոգորսկ, Կեմերովո և այլ քաղաքների ներկայացուցիչները: 81 քաղաքներից 14-ը ներկայացնում էին ՀՀ բոլոր մարզերի քաղաքները, ընդհանուր թվով՝ 1700 մարզիկ: ԼՂ-ն ուղարկել էր Ստեփանակերտը, Շուշին, Մարտակերտը ներկայացնող 80 մարզիկ[167]:

Լոս Անջելեսից համահայկական երրորդ խաղերին մասնակցում էր ընդամենը 9, իսկ Ստամբուլից՝ 80, Վիեննայից՝ 58 մարզիկ և այլն[168]: Համահայկական խաղերի բացման ժամանակ Երևանի Կ. Դեմիրճյանի անվան մարզահամալիրում շնորհակալագրերով պարգևատրվեցին համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի փոխնախագահ Հրանտ Բարդակչյանը, կոմիտեի անդամներ Վարտ Ալեքսանյանը (Կահիրե), Հակոբ Կիրմիզյանը (Բուխարեստ), խաղերի գլխավոր քարտուղար Անժիկ Միրզոյանը, խաղերի կազմակերպիչ-պրոդյուսեր, «Հայֆիլմի» տնօրեն Գևորգ Գևորգյանը[169]: Հատուկ մրցանակների արժանացան Սիրիայի ֆուտբոլիստները (մարզական ոգու և համբերության համար), հատուկ գավաթ հանձնվեց Գլենդելի բասկետբոլի թիմին, իսկ ՀՀ նախագահի հատուկ գավաթը շնորհվեց Թեհրանի պատվիրակությանը[170]: Ընդհանուր հաշվարկով ամենից

---

[166] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 օգոստոսի, 2003, էջ 1:
[167] Տե՛ս նույն տեղում:
[168] Տե՛ս նույն տեղում:
[169] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 26 օգոստոսի, 2003, էջ 2:
[170] Տե՛ս նույն տեղում:

շատ՝ 63 մեդալ նվաճեցին երևանցիները (29 ոսկի, 22 արծաթ, 12 բրոնզե), հաջող մրցելույթներ ունեցան նաև Մոսկվայի (21 մեդալ), Վանաձորի (16) և Թեհրանի (15) հավաքականները:

Համահայկական խաղերի փակման ժամանակ արձանագրվեց, որ բոլոր համահայկական նախագահությունների մեջ համահայկական երրորդ խաղերը ամենաարդյունավետն են: Դրանք, ըստ ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանանի, ի տարբերություն նախորդ երկու խաղերի, լուծեցին երեք կարևորագույն խնդիր: Նախ մարզական առումով նախորդ խաղերի համեմատությամբ ավելի բարձր էր մարզիկ-մարզուհիների պատրաստականությունը: Երկրորդ՝ բազմաթիվ հայրենակիցներ, որոնք չէին եղել հայրենիքում, մոտիկ ու հեռավոր Սփյուռքից եկան, տեսան, ճանաչեցին Հայաստանը, և նրանց միջև բազմակողմանի շփումները, մտերմությունը, հայրենաճանաչությունը, անտարակույս, կնպաստեն նրան հայեցի դաստիարակությանը: Վերջապես, այս ամենով էլ ավելի են ամրապնդվելու Հայաստան-Սփյուռք կապերը»[171]:

ՀՀ կառավարության 2006 թ. մայիսի 4-ին 543-Ա որոշմամբ Հայաստան-Սփյուռք երրորդ խորհրդաժողովը տեղի ունեցավ 2006 թ. սեպտեմբերի 18-20-ը: Այն անցկացվեց ՀՀ անկախության 15-ամյակի միջոցառումների շրջանակներում[172]:

Խորհրդաժողովի նախօրյակին ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանը հանդիպել էր մշակութային միությունների ներկայացուցիչների և մշակույթի առանձին գործիչների հետ՝ խորհրդաժողովին նրանց ներկայությունն ապահովելու և ան-

---

[171] «Հայաստանի Հանրապետություն», 26 օգոստոսի, 2003, էջ 2:

[172] Տե՛ս «ՀՀ կառավարության որոշումը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությանը գումար հատկացնելու մասին»,
http://www.arlis.am/documentview.aspx?docid=27224:

հրաժեշտ քննարկումներ անցկացնելու նպատակով: Հանդիպման ընթացքում նա մանրամասնորեն ներկայացրել էր խորհրդաժողովի օրակարգը, որի համաձայն՝ խորհրդաժողովի լիագումար նիստում հանդես էին գալու հայոց քաղաքական ու հոգևոր առաջնորդները և համահայկական կազմակերպությունների ներկայացուցիչները[173]:

Խորհրդաժողովի օրակարգի երկրորդ մասն ամբողջությամբ նվիրված էր շատ կարևոր խնդրի՝ ՀՀ գյուղական շրջանների զարգացման ծրագրի իրականացմանը: Խորհրդաժողովի օրակարգի երրորդ մասում այն առանձին քննարկվում էր «Նոր պատասխաններ հին հարցադրումներին. հայերը 21-րդ դարում» խորագրով և ընթանում էր չորս ուղղություններով.

1. Ազգը, պետությունը և ինքնությունը 21-րդ դարում,
2. ՀՀ-Սփյուռք հարաբերությունները և դրանց խորացման հնարավորությունները,
3. Արտագաղթն ու հայրենադարձությունը ՀՀ-Սփյուռք հարաբերությունների համատեքստում,
4. Սփյուռքի քննարկումը հեռանկարի առումով[174]:

Խորհրդաժողովի բացման ժամանակ ելույթներ ունեցան ՀՀ և ԼՂՀ նախագահները, ՀՀ վարչապետը, Ամենայն հայոց և Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսները, ՀՀ արտաքին գործերի նախարարը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրենը, համահայկական կազմակերպությունների ներկայացուցիչները: Նրանք գնահատականներ տվեցին ոչ միայն անցած 15 տարիներին հայոց պետականության հզորացմանը, ՀՀ տնտեսության զարգացմանը, ՀՀ-Սփյուռք հարաբերությունն-

[173] Տե՛ս Օսկանյան Վ., նշվ. աշխ., էջ 148:
[174] Տե՛ս նույն տեղում, էջ 49-50:

ին, այլև խոսեցին համահայկական նշանակության այլ խնդիրների մասին՝ ներկայացնելով դրանց լուծման համապատասխան առաջարկները[175]:

ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանն իր ելույթում հատուկ կարևորեց այն սերտ համագործակցությունը, որն առկա էր ՀՀ-Սփյուռք հարաբերություններում, և հատկապես արտահայտվում էր «Հայաստան» համահայկական հիմնադրամի, «Լինսի» հիմնադրամի և բարեգործական այլ կազմակերպությունների՝ ՀՀ-ում իրականացվող ընդարձակ ծրագրերում[176]: Նախագահը նաև շեշտեց այն հանգամանքը, որ թուլանում ու մարդաթափ էին լինում ՀՀ գյուղական համայնքները, և խնդրի լուծման համար խիստ անհրաժեշտ էին լայնածավալ ներդրումներ: Եղած ֆինանսական միջոցները, արտասահմանյան վարկերը և «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրով ստացվող գումարները, որոնք ամբողջությամբ ուղղորդվում էին գյուղեր, բավարար չէին լուծելու հիմնախնդիրը, ուստի անհրաժեշտ էր սփյուռքահայության աջակցությունը[177]:

Անդրադարձ կատարելով «Գյուղական աղքատության հաղթահարման» ծրագրի մշակմանը, որով առանձնացվել էին առավել կարիքավոր շուրջ 150 սահմանամերձ գյուղեր, նա նշեց, որ «խնդրի լուծման համար Սփյուռքից ակնկալվում է 30 մլն դոլարի ներդրում»[178]:

Համահայկական չորրորդ խաղերը մեկնարկեցին 2007 թ. օգոստոսի 18-ին և տևեցին միջև օգոստոսի 26-ը: Համահայկա-

---

[175] Տե՛ս Օսկանյան Վ., նշվ. աշխ., էջ 51-52:
[176] Տե՛ս Ամատունի Մ., Ռ. Քոչարյանը Հայկական հարցի ճակատագրում, հ. 2, Ե., 2007, էջ 445-446:
[177] Տե՛ս նույն տեղում, էջ 447-448:
[178] Ամատունի Մ., նշվ. աշխ., էջ 449-451:

կան խաղերին մասնակցում էին աշխարհի 95 քաղաքների շուրջ 3000 մարզիկներ[179]:

Համահայկական 4-րդ խաղերի ծրագրում ընդգրկված էր 10 մարզաձև՝ ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, թենիս, սեղանի թենիս, ատլետիկա, լող, շախմատ, ֆուտբոլ, բադմինտոն: Հայաստանը ներկայացվել էր 33 քաղաքներից խաղերին մասնակցող 1000 մարզիկներով[180]: ԼՂՀ-ն ներկայացված էր Ստեփանակերտի առանձին թիմով: Սփյուռքից մասնակցում էին Փարիզից, Մանչեսթերից, Մայնի Ֆրանկֆուրտից, Կահիրեից, Վիեննայից, Ստամբուլից, Բեյրութից, Բուենոս Այրեսից, Նիկոսիայից, Լոս Անջելեսից, Սպահանից, Թեհրանից, Բրյուսելից, Ֆրեզնոյից, Գլենդելից, Երուսաղեմից, Մոնրեալից, Վլադիմիրից, Բառնաուլից, Աթենքից, Սոչիից, Կիևից, Թբիլիսիից, Ախալքալաքից, Սիդնեյից և այլ քաղաքներից եկած մոտ 1700 մարզիկ-մարզուհիներ: Խաղային մարզաձևերի վիճակահանությունը կազմակերպվեց 4 ենթախմբային համակարգով[181]:

Համահայկական խաղերի փակման արարողությունը տեղի ունեցավ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի շենքում: Համահայկական խաղերի կազմակերպման և անցկացման գործում ունեցած զգալի ներդրման համար ՀՀ վարչապետ Ս. Սարգսյանն արժանացավ համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի «Պատվո շքանշանին», որը հանձնեց համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի գործկոմի անդամ Ալբերտ Բոյաջյանը[182]: Փակման արարողության ժամանակ հանձնվեցին նաև հատուկ մրցանակ-

---

[179] «Տե՛ս Հայաստանի Հանրապետություն», 28 օգոստոսի, 2007, էջ 2:
[180] Տե՛ս նույն տեղում, էջ 3:
[181] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 17 օգոստոսի, 2007, էջ 1-2:
[182] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 օգոստոսի, 2007, էջ 1:

ներ: Մարզական ոգու և համբերության համար պարգևատրվեց Կահիրեի բասկետբոլի տղամարդկանց թիմը: Խաղերում լավագույնը ճանաչվեց Ստամբուլից ժամանած պատվիրակությունը: Համահայկական չորրորդ խաղերի գեղեցկուհու թագն ստացավ երևանցի Գայանե Թուսյանը[183]: Հատուկ մրցանակները հանձնեց ՀՀ վարչապետը:

Համահայկական չորրորդ խաղերում 25 քաղաքների պատվիրակություններ շահել էին մեդալներ: Երևանը շահել էր 36 ոսկե, 22 արծաթե և 19 բրոնզե մեդալներ, Վանաձորը՝ 4 ոսկե, 8 արծաթե և 4 բրոնզե, Գյումրին՝ 3 ոսկե և 3 բրոնզե[184]: Հարկ է նշել, որ որոշ մարզաձևերում սահմանվել էին նաև ռեկորդներ:

Համահայկական հինգերորդ խաղերը կայացան 2011 թ. օգոստոսի 13-ից մինչև 21-ը: Աշխարհի 125 քաղաքներից հայրենիք էին ժամանել 3244 մարզիկ-մարզուհիներ[185]: Սփյուռքի մասնակիցների ներկայության աշխարհագրությունը գրեթե նույն էր, ինչ նախորդ համահայկական խաղերի ժամանակ: Ավելացել էր միայն Արևմտյան Հայաստանի «Սասուն» գավառի պատվիրակությունը, որն առաջին անգամ էր խաղերին մասնակցում: Համահայկական խաղերի խորհրդանիշ հանդիսացող ջահը վառելու պատվին արժանացավ ծանրամարտիկ, աշխարհի չեմպիոն Տիգրան Մարտիրոսյանը: Համահայկական խաղերի մասնակիցները, ինչպես նախորդ խաղերին, այնպես էլ համահայկական հինգերորդ խաղերի ժամանակ իրենց ուժերը չափեցին 10 մարզաձևերում: Նրանք իրենց համերաշխությամբ և մրցունակությամբ հաստատեցին ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված

---

[183] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 օգոստոսի, 2007, էջ 2:
[184] Տե՛ս նույն տեղում:
[185] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 օգոստոսի, 2011, էջ 1:

«Միասնություն սպորտով» համահայկական խաղերի կարգախոսի ճշմարտացիությունը:

Օգոստոսի 19-ին ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանն ընդունեց համահայկական հինգերորդ խաղերի Ստամբուլի կոմիտեի պատվիրակությանը, որի կազմում էին կոմիտեի ատենապետ Ղազարոս Ունանը, փոխատենապետեր Կարո Համամջիօղլուն, Գարուն Գովանը, անդամներ Հայկարամ Կարասուն, Ռոմանոս Ջեզվեջյանը և Նազար Հանչերը: Համահայկական խաղերին Ստամբուլից ժամանել էր 150 հոգուց բաղկացած պատվիրակություն: Ստամբուլահայ մարզիկները մրցում էին 8 մարզաձևերում՝ ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, թենիս, լող, թեթև ատլետիկա և շախմատ[186]:

Ողջունելով հյուրերին՝ ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանն ուրախությամբ նշեց, որ «Ստամբուլից ժամանած պատվիրակությունը ամենամեծաթիվներից է, և որ համահայկական խաղերում պարտվողներ չկան, հաղթում են բոլորը, հայը, հայությունը»[187]: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ստամբուլահայության կրթամշակութային, երիտասարդության հիմնախնդրին առնչվող հարցերը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նախարարության ծրագրերին և միջոցառումներին ավելի ակտիվորեն մասնակցելու և համագործակցությունը զարգացնելու վերաբերյալ[188]:

Իրար դեմ պայքարեցին Վիեննան, Թեհրանը, Թավրիզը, Սասունը, Երևանը, Գյումրին, Ստեփանակերտը, սակայն ի վերջո հաղթանակեց միասնականությունը, որը կերտեցին աշխար-

---

[186] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 20 օգոստոսի, 2011, էջ 1:
[187] Տե՛ս նույն տեղում, էջ 2:
[188] Տե՛ս նույն տեղում:

հի բազմաթիվ քաղաքներից համահայկական խաղերին մասնակցած հայ մարզիկ-մարզուհիները: «Վստահ եմ, որ այս սպորտային միջոցառումների ժամանակ պարտվողներ չեն եղել, որովհետև մենք բոլորս հավաքվել ենք քաղաքամայր Երևանում ոչ միայն մրցելու, այլև նոր ծանոթներ ձեռք բերելու, որովհետև ապրելով աշխարհի տարբեր ծայրերում՝ մենք ունենք մի ընդհանրություն, մենք բոլորս հայ ենք»[189],– դիմելով մասնակիցներին՝ օգոստոսի 21-ին Ազատության հրապարակում համահայկական հինգերորդ խաղերի փակման հանդիսավոր արարողության ժամանակ ասել է ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը և կոչ արել Սփյուռքի մեր հայրենակիցներին Հայաստան գալ ոչ միայն համահայկական խաղերի համար, այլև ցանկացած հնարավորության դեպքում:

ՀՀ նախագահը մասնակիցներին հանձնեց մի շարք հատուկ մրցանակներ: «Լավագույն մարզական պատվիրակություն» մրցանակը ստացավ Բուենոս Այրեսի («Արգենտինա») թիմը, «Արդարացի խաղի համար»՝ «Ուրմիա» թիմը Իրանի Իսլամական Հանրապետությունից, «Մարզական ոգի և համբերություն դրսևորած պատվիրակություն» մրցանակով պարգևատրվեց «Զալդիրին» ՌԴ-ից: «Համահայկական հինգերորդ խաղերի հայտնություն» մրցանակին արժանացավ պատմական Սասունի պատվիրակությունը, որն առաջին անգամ էր մասնակցում համահայկական խաղերին: Համահայկական հինգերորդ խաղերի գեղեցկուհի ճանաչվեց Քրիստինե Նազարյանը Երուսաղեմից[190]: Ըստ գեղեցկուհու՝ համահայկական խաղերը սփյուռքահայերին հնարավորություն են տալիս այցելելու հայրե-

---

[189] «Հայաստանի Հանրապետություն», 20 օգոստոսի, 2011, էջ 2:
[190] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 օգոստոսի, 2011, էջ 3:

նիք, հանդիպելու միմյանց, դրա շնորհիվ հայրենիքի հետ կապը չի կորչում, և ազգակիցների մեջ եղած հայրենասիրությունն էլ ավելի է մեծանում և ամրապնդվում[191]:

Համահայկական խաղերի օրերին մասնակիցները, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանի «Սասունը», խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանի ուղեկցությամբ այցելել են Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և ծաղկեպսակներ ու ծաղիկներ դրել Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին, եղել են ցեղասպանության թանգարանում:

Համահայկական ամառային վեցերորդ խաղերը մեկնարկեցին 2015 թ. օգոստոսի 2-3-ը: Այս խաղերը աննախադեպ էին մասնակիցների թվով՝ 6350, որոնց խաղերի օրակարգում ընդգրկված նախկին տասը մարզաձևերին ավելացել էին ևս յոթը՝ լողափնյա վոլեյբոլ, սպորտային պարեր, գոլֆ, ձեռքի գնդակ, բազկամարտ, հեծանվասպորտ և հրաձգություն[192]:

Պաշտոնական բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ Վ. Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտում: Համահայկական խաղերի դրոշը մարզադաշտ բերեցին հունահռոմեական ոճի ըմբիշ, աշխարհի չեմպիոն Վաղինակ Գալստյանը, ազատ ոճի ըմբիշ Արամ Մարգարյանը, շախմատային օլիմպիադաների չեմպիոններ Ռաֆայել Վահանյանը և Գաբրիել Սարգսյանը: Համահայկական խաղերի մարզիկի երդումը կարդաց Սիրիայի Հալեպ քաղաքի ներկայացուցիչ Շողիկ Ավետիսյանը, իսկ մրցավարների անունից երդվեց երևանցի Մարիա Մելքոնյանը[193]: Այնուհետև վառվեց խաղերի ջահը, որը

---

[191] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 օգոստոսի, 2011, էջ 3:
[192] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 4 օգոստոսի, 2015, էջ 1:
[193] Տե՛ս նույն տեղում:

նախապես վառվել էր Արևմտյան Հայաստանում, Վանի Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում, Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում, Անթիլիասում, Շուշիում: Համահայկական խաղերի երեք ջահերը միավորում էին մեկում, և խաղերի կրակը վառեց հայկական մարմնամարզության և համաշխարային սպորտի լեգենդ, օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն Ալբերտ Ղազարյանը[194]:

Համահայկական խաղերի մասնակիցների թվում շատ էին (մոտ 200) Արևմտյան Հայաստանի Սասունի մարզի և այլ վայրերի մարզիկ-մարզուհիները: Ներկա էին նաև Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի և այլ քաղաքների քաղաքապետերը: Մարզական շքերթը բացեցին հայկական երկրորդ պետության ներկայացուցիչները՝ ԼՂՀ պատվիրակությունը՝ երեք քաղաքներից՝ Ստեփանակերտ, Շուշի և Բերձոր, ընդհանուր առմամբ՝ 138 մարզիկ: Այնուհետև միմյանց հաջորդեցին 36 երկրների 165 քաղաքների պատվիրակությունները[195]:

Շքերթը եզրափակեց մայրաքաղաք Երևանի պատվիրակությունը, որը համահայկական խաղերին ներկայացել էր բոլոր մարզաձևերում՝ 500 մարզիկով[196]: Ամբողջ արարողության ընթացքում մարզադաշտի վերին հատվածում իրար էին հաջորդում հայրենիք ժամանած սփյուռքի հայորդիներին միավորող ուղերձները՝ «Մեկ հայրենիք, մեկ երազանք», «Աշխարհասփյուռ հայերի հայրենիքը մեկն է՝ Հայաստանը», «Լինենք միասին, որ այլևս չպարտվենք, որ անցյալը չկրկնվի», «Մի՛շտ վերադարձիր» և այլն:

---

[194] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 4 օգոստոսի, 2015, էջ 2:
[195] Տե՛ս նույն տեղում:
[196] Տե՛ս նույն տեղում:

ՀՀ նախագահը բացման խոսքում նշեց. «Համահայկական խաղերը կազմակերպելիս մեր առաջին նպատակն է եղել ապահովել հնարավորինս մեծ մասնակցություն, որպեսզի սպորտը և առողջ ապրելակերպը առավելագույն տարածումն ստանան մեզանում: Ավելին՝ շատ կարևոր է, որ սպորտը մարդկանց համախմբի և մեր աշխարհասփյուռ ժողովրդին միավորող իրողություններից մեկը դառնա: Անցած 16 տարիների ընթացքում առաջընթաց ենք արձանագրել: 1999 թ. տեղի ունեցած առաջին խաղերի համեմատությամբ մեկ երրորդով աճել է մասնակից երկրների թիվը՝ 23-ից հասնելով 36-ի: 25 անգամ աճել է մասնակից քաղաքների թիվը՝ 63-ից հասնելով 175-ի[197], իսկ խաղերի մասնակիցների թիվը աճել է 6 անգամ՝ 1141-ից հասնելով 6352-ի: Մարզաձևերի քանակը 7-ից դարձել էր 17[198]:

Հայրենիք ժամանած մարզիկներից շատերը ներկայացնում էին Սփյուռքում ծնված արդեն չորրորդ կամ հինգերորդ սերունդը: «Այստեղ ներկա բոլոր մարդիկ կապված էին մեկ ընդհանրությամբ՝ հայկական ինքնությամբ: Այդ ինքնությունն է, որ Հայոց ցեղասպանության ոգեկոչման միջոցառումներով բնորոշվող այս տարում մեզ կրկնել է տալիս 2015 թվականի կարգախոսը՝ «Հիշում ենք և պահանջում»: Վստահ եմ, որ համահայկական խաղերի կրակը ձեզ դեռ շատ երկար կուղղորդվի»[199]:

Համահայկական խաղերի կազմկոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանը, ողջունելով ներկաներին, ընդգծեց՝ ասելով. «Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում համահայկական խաղերն ունեն իրենց ուրույն դերը: Տարեցտարի մեծա-

---

[197] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 4 օգոստոսի, 2015, էջ 2:
[198] Նույն տեղում:
[199] Նույն տեղում:

ցող աշխարհագրությունը և մարզիկների թվի աճը վկայում են խաղերի ուժի մասին: Խաղերի անցկացումը նպաստում է ոչ միայն մարզական կյանքի ակտիվացմա նը, այլ նաև Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Հայրենիք-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը մեր ապագան է և պետք է դառնա գալիք սերունդների ուխտը: Միասնության բռունցքը մենք սեղմել ենք Ավարայրում, չենք բռունցքվել 1915 թ., ունեցել ենք անդառնալի կորուստներ, բռունցքվել ենք 1988 թ. և ունենք ազատ, անկախ Հայաստան»[200]:

Խաղերի բացումն ուղեկցվում էր մասշտաբային և յուրօրինակ արարողությամբ: Պաշտոնական բացման արարողության ժամանակ ներկաներին ներկայացվեցին հայոց պատմության կարևորագույն դրվագները՝ մի պահ տանելով նրանց Հայաստանի հնամյա մայրաքաղաք Էրեբունի և թերթելով հայոց պատմության ամենալուսավոր և հիշարժան էջերը: Այնուհետև պատվո պահակախմբի ուղեկցությամբ մարզադաշտ բերվեց ՀՀ պետական դրոշը:

2015 թ. առաջին անգամ համահայկական խաղերի հանդիպումները անցկացվել են նաև Արցախում: Այստեղ մրցել են ֆուտբոլի և վոլեյբոլի այն թիմերը, որոնք նույն ենթախմբում էին Արցախի հետ: Օգոստոսի 13-ին Երևանի Ազատության հրապարակում տեղի ունեցած համահայկական ամառային վեցերորդ խաղերի փակման հանդիսավոր արարողության ժամանակ ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը հանձնել է Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի կողմից սահմանած հատուկ մրցանակներ վեց անվանակարգերում:

---

[200] «Հայաստանի Հանրապետություն», 4 օգոստոսի, 2015, էջ 2:

«Լավագույն պատվիրակություն» մրցանակին են արժանացել Մոնրեալ (Կանադա), «Արդարացի խաղի համար» մրցանակին՝ Նիկոսիա (Կիպրոս), «Մարզական ոգի և համբերություն դրսևորած պատվիրակություն» մրցանակին՝ Սպահան (Իրան), «Համահայկական վեցերորդ խաղերի հայտնություն» մրցանակին՝ Մուշի քաղաքների պատվիրակությունները: «Համահայկական վեցերորդ խաղերի գեղեցկուհի» է հայտարարվել Դիանա Թովմասյան (Թբիլիսի): Իսկ մեդալների առումով առաջատարների շարքում հետևյալ քաղաքներն էին. Երևանը նվաճել է 89 մեդալ, որից 34-ը՝ ոսկե, 25 բրոնզե և 30 արծաթե, Գյումրին՝ 33 մեդալ (համապատասխանաբար՝ 11, 10, 12), Վանաձորը՝ 17 (6, 7, 4), Թբիլիսին՝ 7 (4, 2, 1), Նիկոսիան՝ 7 (2, 4, 1), Ախալցխան՝ 6 (2, 2, 2), Արմավիրը՝ 6 (2, 1, 3): Ստեփանակերտն արժանացել է 8 մեդալի՝ 3 արծաթե, 5 բրոնզե[201]:

Հ. Աբրահամյանի խորին համոզմամբ, համահայկական խաղերի ամենակարևոր ձեռքբերումը մեր ժողովրդի հազարավոր զավակներին մեկ տեղում՝ մայր հայրենիքում լինելն է՝ նոր շունչ հաղորդելով նաև ՀՀ-Արցախ-Սփյուռք եռամիասնության հետագա ամրապնդմանը: Համահայկական խաղերը այն եզակի մրցաշարերից են, որտեղ չկան հաղթողներ ու պարտվողներ: «Հաղթել ենք բոլորս, քանի որ համահայկական խաղերը մեր միասնության իրական ապացույցն ու դրսևորումն են»[202],– ընդգծել է նա:

Համահայկական խաղերի փակման ժամանակ այդ խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Ի. Զաքարյանը ամփոփելով նշել է. «Համահայկական խաղերը կրում են հայրենիք-

---

[201] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22 օգոստոսի, 2015, էջ 3:
[202] Տե՛ս նույն տեղում:

Արցախ-Սփյուռք եռամիասնության խորհուրդը և նաև հայապահպանության նպատակ ունեն: Այս հսկայական միջոցառման կազմակերպումը վկայում է, որ համահայկական խաղերի գաղափարն արդեն մտել է յուրաքանչյուր տուն, օջախ, որ այս գաղափարն ամուր է և ունի լավ հեռանկար»[203]:

ՀՀ գյուղական շրջանների զարգացման ծրագրի շրջանակներում կազմակերպիչները, ՀՀ կառավարության հետ խորհրդակցելով, նախապես առանձնացված 150 սահմանամերձ գյուղերից ընտրել էին 50-ը, և ծրագիրն առաջարկել խորհրդաժողովին: ՀՀ մայրաքաղաքի և գյուղական շրջանների միջև տարբերությունն ակնհայտ էր, քանզի արտագաղթը տեղի էր ունենում հիմնականում այդ շրջաններից, ուստի անհրաժեշտ էր համահայկական ջանքերով լուծել ՀՀ գյուղական համայնքների զարգացման խնդիրները: Խորհրդաժողովի կազմակերպիչները մասնակիցներին ներկայացրին նաև այդ գյուղերի կարիքները և լուծման ենթակա հիմնախնդիրները: Նման խիստ կարևոր միջոցառման իրականացման համար Ամենայն հայոց կաթողիկոսը ևս դիմեց խորհրդաժողովի մասնակիցներին՝ նշելով. «Հայրապետական մեր պատգամն ու հորդորն ենք բերում հայրենաբնակ և Սփյուռքի համայն մեր ժողովրդին՝ արձագանքելու գյուղերը վերականգնելու հայրենաշեն այս մեծ ու կարևոր նախաձեռնությանը»[204]:

Խորհրդաժողովի օրակարգի երրորդ մասում հատուկ քննարկման խնդիր էր ՀՀ-Սփյուռք հարաբերությունների համակարգումը: Մտահոգության տեղիք էր տալիս այն, որ համա-

---

[203] «Հայաստանի Հանրապետություն», 22 օգոստոսի, 2015, էջ 3:

[204] «Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ ծայրագույն պատրիարք և Ամենայն հայոց կաթողիկոսի խոսքը «Հայաստան-Սփյուռք» երրորդ խորհրդաժողովին (18-20 սեպտեմբեր, 2006, Երևան), Էջմիածին, 2006, N 9, էջ 24:

կարգման բացակայության պայմաններում նախորդ խորհրդաժողովների որոշումների կատարման ընթացքը դարձել էր անվերահսկելի: Դրա վկայությունն այն էր, որն հիմնականում չէին իրականացվել Հայաստան-Սփյուռք երկրորդ խորհրդաժողովի որոշումները: Խորհրդաժողովում հնչեցին նաև Սփյուռքի հարցերով նախարարություն ստեղծելու առաջարկություններ: Ի հակադրություն նախարարություն հիմնելու գաղափարին՝ առաջարկվեց ձևավորել համահայկական խորհուրդ: Խոսելով վերոնշյալ առաջարկների մասին՝ ՀՀ նախագահն իր ելույթում նշեց, որ «նման առաջարկներ հնարավոր չէ կյանքի կոչել այսօր, դրանք հարկ է մտապահել վաղվա համար, իսկ այժմ ես կհամարեի այս խորհրդաժողովը հայ ժողովրդի հավաքական ցանկությունների բարձրագույն մարմին, որի ընթացքում մենք որոշումներ ենք կայացնում, և ամեն մեկս փորձում ենք այդ որոշումները կյանքի կոչել իր գործունեության մեջ»[205]:

Համահայկական խորհրդաժողովի արդյունքների մասին գնահատական տալը, ընդգծեց ՀՀ նախագահը, վաղաժամ է: Դա կարելի է անել միայն հնչած բոլոր առաջարկությունները քննարկելուց և ամփոփելուց հետո. «…Կան մոտեցումներ, որոնց լուծում տալն այսօր դժվար է, բայց դրանք պետք է պահել մտքում, որ ապագայում անդրադառնանք այդ հարցերին…: Պետք է խուսափենք այն հարցերից, որոնք մեզ տարանջատում են և ոչ թե միացնում: Մնացած բոլոր հարցերի շուրջ կարելի է համաձայնության լայն դաշտ ձևավորել և առաջ շարժվել»[206],– նշել է ՀՀ նախագահը:

---

[205] Ամատունի Մ., նշվ. աշխ., հ. 2, էջ 448-449:
[206] Նույն տեղում, էջ 447:

Խորհրդաժողովի մասնակիցների մտահոգության կարևոր թեմաներից էին հայապահպանությունը Սփյուռքում, սփյուռքահայ երիտասարդության հայեցի դաստիարակության, մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդման, հայ ժողովրդի մաքառումների, հերոս նախնիների պատմությանը ծանոթացնելու, ազգային ինքնագիտակցության, արժանապատվության ամրագրման հիմնահարցերը: «Նոր պատասխաններ հին հարցադրումներին. հայերը 21-րդ դարում» քննարկման ընթացքում ներկայացվեցին գիտական և կիրառական բնույթի զեկուցումներ: Պնդումներ եղան այն մասին, որ հայապահպանության քաղաքականությունը պետք է վերապահվի Հայաստանի Հանրապետությանը, որն արդեն զբաղվել է նման առաքելությամբ՝ անցկացնելով «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնը և այլ միջոցառումներ: Սակայն հարկ է գնալ ավելի ծավալուն ու համակարգային միջոցառումներ ծրագրելու ճանապարհով[207]:

Խորհրդաժողովի ընթացքում քննարկվեց նաև արցախյան հիմնահարցը: ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը հիմնականում շեշտադրումը կատարեց ԼՂՀ միջազգային ճանաչման անհրաժեշտության վրա, իսկ նման գործընթացը չէր կարող արդյունավետորեն իրականացվել առանց Սփյուռքի աջակցության[208]: Այդ մասին ընդգծվեց ՀՀ-Սփյուռք երրորդ խորհրդաժողովի հռչակագրում. «Մեր նորագույն պատմության մեջ մեր ժողովրդի մեծագույն նվաճումն է Արցախի ազատագրումը, որտեղ դրսևորվեց հայության անսասան կամքն իր պատմական արդար իրավունքների նկատմամբ, և այն դարձավ համազգային միասնու-

[207] Տե՛ս Եղիազարյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 202:
[208] Նույն տեղում:

թյան, համախմբվածության ու վճռականության վառ ապացույց: Մենք վերահաստատում ենք մեր ամբողջական պատասխանատվությունը և համապարփակ աջակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազատ ապրելու և ինքնորոշվելու պահանջների նկատմամբ...: Խորհրդաժողովը վերահաստատում է աշխարհի բոլոր երկրներում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հասնելու իր վճռականությունը»[209]:

Խորհրդաժողովի հռչակագրում արձանագրվեց նաև հայոց եկեղեցու դերակատարությունը հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում: «Խորհրդաժողովը հաստատում է, որ ազգային մեր ինքնությունը անբաժանելիորեն կապված է քրիստոնեության հետ, և կարևոր ու նշանակալի է հայ եկեղեցու առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր-բարոյական կյանքում և հայրենիք-Սփյուռք հարաբերությունների խորացման և ընդլայնման գործում»[210]:

Հռչակագրի վերջում խորհրդաժողովի մասնակիցները հավաստում են՝ նշելով. «Մենք հանձնառու և հետևողական ենք 21-րդ դարում մեր ազգային իրավունքներն ու շահերը պաշտպանելու, համերաշխությունն ու համախմբվածությունն ամրապնդելու, մեր խնդիրները, իղձերն ու երազները միասնաբար իրականացնելու հարցում՝ հանուն մեր ժողովրդի և հայրենիքի ապահով, անվտանգ զարգացման ու բարգավաճման»[211]: Այսպիսով՝ Հայաստան-Սփյուռք երրորդ խորհրդաժողովը շեղվեց ավանդական ձևաչափից և մասնակիցներին առաջադրեց հիմնարար խնդիրների հենքային լուծումների քննարկման օրակարգ: ՀՀ սփյուռքի

---

[209] Հակոբյան Հ., նշվ. աշխ., հավելված 20, էջ 617:
[210] Նույն տեղում:
[211] Նույն տեղում, էջ 618:

նախարարության ստեղծումից հետո՝ նրա ակտիվ գործունեության շրջանում, շարունակվեցին կազմակերպվել Հայաստան-Սփյուռք համաժողովները՝ որպես ավանդույթի ուժ ստացած կարևոր ձևաչափ հայրենիք-Սփյուռք հարաբերություններում:

2011 թ. սեպտեմբերի 19-20-ը ՀՀ սփյուռքի նախարարության անմիջական նախաձեռնությամբ կազմակերպվեց Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովը: ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված այս կարևոր ձեռնարկը կոչվեց Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողով: Համաժողովին մասնակցում էին Սփյուռքի 550 ներկայացուցիչներ մոտ 50 երկրներից, որոնք ներկայացնում էին Սփյուռքի 151 կազմակերպություններ[212]: Հանդիսավոր նիստում բացման խոսքով հանդես եկավ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը: Ողջունելով և շնորհավորելով ներկաներին ՀՀ անկախության 20-րդ տարեդարձի առթիվ՝ նա համաժողովի մասնակիցների ուշադրությունը սևեռեց հայրենիք-Սփյուռք գործակցությանն առնչվող այն հիմնախնդիրների վրա, որոնք կենսական նշանակություն ունեն հայրենիքի և Սփյուռքի հզորացման, ազգային միասնության, Հայոց ցեղասպանության ճանաչման, հայապահպանության համար: Նախագահը մատնանշեց, որ «Սփյուռքն ու Հայաստանը պետք է դառնան միմյանց շարունակություն»[213]: Համաժողովում ելույթներով հանդես եկան Սփյուռքի քաղաքական կազմակերպություններ, եկեղեցական ու բարեգործական կառույցների ղեկավարներ:

---

[212] Տե՛ս Հակոբյան Հ., Հայաստան-Սփյուռք գործակցության պետական քաղաքականության հիմնախնդիրները, Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողով, համաժողովի նյութեր (խմբագիրներ՝ Մխիթարյան Գ., Մկրտչյան Ն.), Ե., 2011:
[213] Նույն տեղում, էջ 6:

Համաժողովի հանդիսավոր բացումից հետո սկսվեց լիագումար նիստը: Այնուհետև մասնակիցները բաժանվեցին չորս թեմատիկ խմբերի և առանձին բաժանմունքներով քննարկեցին լեզվի և կրթության, երիտասարդության հիմնախնդիրները, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ՝ տարածաշրջանային հանձնախմբերի գործունեությանը և Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման կառուցակարգերին առնչվող թեմաները[214]:

Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողովի փակման ժամանակ ներկայացված հայտարարությունն անվանվեց «Ազգային հռչակագիր»: Այն արձանագրեց, որ համահայկական համաժողովը կայացավ ՀՀ 20-ամյակի տոնակատարության օրերին՝ վերստին հաստատելով հայ ժողովրդի միասնական կամքը, վճռականությունն ու պատասխանատվությունը՝ հետևողականորեն նպաստելու հայոց պետության զորացմանն ու առաջընթացին, Արցախի անկախ ու անվտանգ գոյության ապահովմանը, հայապահպանությանը և հայ ինքնության ամրապնդմանը[215]:

Համաժողովի մասնակիցները հռչակագրով մեկ անգամ ևս փաստեցին. «Գիտակցելով, որ հայ ժողովրդի բոլոր հատվածները, իրենց հիմնախնդիրների առանձնահատկություններով հանդերձ, միավորված են ընդհանուր և գերագույն նպատակի՝ հայ ազգի պահպանման, բարգավաճման ու հզորացման շուրջ՝ կարևորելով համայն հայության հավաքական ամբողջականությունը և ուժը, քննարկելով Հայաստան-Սփյուռք-Արցախ եռամիասնության առջև ծառայած համազգային առաջնահերթությունները

---

[214] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 6:
[215] Նույն տեղում, հավելված 21, էջ 619-620:

ու մարտահրավերները, նախանշելով դրանք միասնաբար լուծելու ուղիները, կառուցակարգերն ու միջոցները, արդյունավետ գործակցության հնարավորություններն ու հեռանկարները, նկատի ունենալով, որ հայ ժողովրդի հավաքական ամբողջության բոլոր մասերը շաղկապված են, և մեր հիմնական խնդիրների լուծումը պայմանավորված է համազգային ներդաշնակ ու միասնական գործակցությամբ..., համոզված լինելով, որ յուրաքանչյուր ոք, անկախ քաղաքական հայացքներից, հասարակական դիրքից, կրթական մակարդակից, իրեն համարում է հայ ժողովրդի զավակ, հայոց քաղաքակրթության և արժեքների կրող, պետք է նպաստի համազգային առաջնահերթությունների իրականացմանը», հռչակեցին նշված ժամանակաշրջանում ներքոհիշյալ համազգային առաջնահերթությունները և հաստատեցին ազգային նպատակները հավաքական միասնությամբ, մարդկային ու նյութական ներուժի համախմբմամբ իրականացնելու վճռականությունը[216]:

Հռչակագրում որպես առաջնահերթություններն ամրագրվում էին հետևյալ դրույթները:

Առաջին՝ Հայաստանի Հանրապետության զորացումն ու անվտանգության ապահովումը: Համաժողովի մասնակիցները հայտնեցին, որ իրենք միակամ են՝ աջակցելու, իրենց նպաստը բերելու ազատ ու ինքնիշխան Հայաստանի զորացմանը իրավական, ժողովրդավարական, սոցիալական հասարակարգի կերտման գործում, քանի որ Հայաստանը համայն հայության հայրենիքն է:

Երկրորդ՝ ԼՂՀ հարցի խաղաղ կարգավորումը: Հայ ժողովուրդը Հայաստանում, Արցախում և Սփյուռքում այսուհետ ևս

[216] Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 620:

պայքարելու է ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման, միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալու համար:

Երրորդ՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը, դատապարտումը և հետևանքների վերացումը: Համաժողովի մասնակիցները վերահաստատեցին, որ հայոց պետության, Սփյուռքի, հայրենազրկված հայության պայքարը հանուն իր իրավունքների պաշտպանության ու արդարության վերականգնման մեր ազգային գործակցության առանցքն ու պայքարի ուղենիշն է, հայ ժողովրդի բոլոր սերունդների պարտքը և նրա ապագա գոյության երաշխիքը:

Չորրորդ՝ հայապահպանությունն և պայքարը լուծացման դեմ: Համաժողովի մասնակիցները հայտարարեցին, որ կպայքարեն մեր հայրենակիցներին Սփյուռքում հայ պահելու համար: ՀՀ-ում հաստատված երկքաղաքացիության ինստիտուտի, հայրենադարձության շնորհիվ կհաստատեն իրենց լիարժեք ներկայությունը հայրենիքում՝ դառնալով նրա լիիրավ տերն ու գործընթացների մասնակիցը:

Հինգերորդ՝ հայ եկեղեցու շուրջը համախմբումը: Համաժողովի մասնակիցները նշեցին, որ ազգային հրամայական են դարձել եկեղեցու զորացումը, հիմնախնդիրների լուծման նոր և միասնական կառուցակարգերի մշակումը, քրիստոնեական քարոզչության և մարդասիրական դաստիարակության ապահովումը, սիրո, փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության սերմանումը, ինչպես նաև հայ եկեղեցու շուրջ ազգի համախմբումը, բռնի այլակրոն դարձած հայերի հայրենադարձության ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքների իրականացումը[217]:

---

[217] Հակոբյան Հ., նշվ. աշխ., հավելված 21, էջ 624:

Սույն հայտարությունը կարևոր նշանակության ունեցավ հայկական կառույցների, կազմակերպությունների համար՝ իրենց ապագա գործունեության ծրագրերը մշակելու, դրանցում առաջնահերթությունները որոշելու և Հայաստանի հետ կապերն ու հարաբերություններն զարգացնելու առնչությամբ: «Մենք միասին ենք կերտելու մեր պատմությունն ու ապագան հանուն հզոր Հայաստանի, Արցախի և Սփյուռքի»[218],– ասվում էր ազգային հռչակագրի վերջում:

2007 թվականից պարբերաբար շարունակվեցին «Բազե» երիտասարդական հերթական համահավաքները, որին ակտիվորեն մասնակցեցին բազմահազար երիտասարդներ ոչ միայն ՀՀ-ից, այլև Արցախից, Ջավախքից և հատկապես Սփյուռքից: Կազմակերպվեցին երիտասարդ տղաների և աղջիկների ակտիվ հանգիստը, նրանց շփումներն ու հայրենաճանաչության գործընթացները»[219]: Երիտասարդները քննարկել են Հայաստան-Սփյուռք գործակցության խնդիրները և մի շարք հանդիպումներ են ունեցել ՀՀ պետական-քաղաքական, արվեստի և մշակույթի ներկայացուցիչների հետ:

Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը մեծապես նպաստեց նաև «Հայաստան ազգային սկաուտական շարժում» (ՀԱՍԿ) հասարակական կազմակերպության ակտիվ գործունեությունը: 2012 թ. ամռանը «Հայաստանի ազգային սկաուտական շարժում» ՀԿ-ն Բյուրականում կազմակերպել էր միջազգային բանակում՝ նվիրված «Հայկական սկաուտական շարժման» 100-ամյակին: Բանակումին մասնակցեց շուրջ 300

---

[218] Հակոբյան Հ., նշվ. աշխ., հավելված 21, էջ 624:

[219] Տե՛ս ՀՀ ԱԳՆ, ՀՀ արտաքին գործերի նախարարության գործունեության հաշվետվությունը՝ Հայաստան-Սփյուռք, ընթացիկ արխիվ, ֆ. 1, գ. 3, գ. 4, թ. 5, 6:

սկաուտ Հայաստանի և Սփյուռքի սկաուտական կազմակերպություններից և սկաուտական շարժման անդամ երկրների կառույցներից[220]: Միջոցառման շրջանակներում Հայաստան ժամանեցին «Համաշխարհային սկաուտական շարժման» գլխավոր քարտուղար Լյուկ Պանիսոյը և «Հայ մարմնակրթության ընդհանուր միության» կենտրոնական վարչության ատենապետ Գառնիկ Մկրտիչյանը: Նրանք պարգևատրվեցին ՀՀ սփյուռքի նախարարության ոսկե մեդալով: Տարբեր պարգևների արժանացան նաև կառույցի այլ ներկայացուցիչներ[221]:

2013 թ. հուլիսի 27-ից օգոստոսի 3-ը Հայաստանում կազմակերպվեցին «Հայ մարմնակրթական ընդհանուր միության» 9-րդ համահայկական մարզախաղերը, որոնք տեղի են ունենում 4 տարին մեկ անգամ: Այդ խաղերին մասնակցեց 600 մարզիկ[222]:

Լայնամասշտաբ միջոցառումը պատշաճ կազմակերպելու նպատակով ՀՀ սփյուռքի նախարարության նախագահությամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով: Հայրենիքում իրականացվող այս միջացառումը հնարավորություն է տվել աշխարհի տարբեր անկյուններից ժամանած հայ երիտասարդներին ոչ միայն մրցելու միմյանց հետ, այլև բարեկամանալու և ամրապնդելու իրենց հայկական արմատները:

ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ իրականացրած համահայկական ծրագրերից է «Արի՛ տուն» ծրագիրը, որը կենսագործվել է 2009 թվականից ՀՀ կառավարության որոշմամբ[223]: Ծրագրին մասնակցում են 13-20 տարեկան սփյուռ-

---

[220] ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները, Ե., 2013, էջ 111:
[221] Տե՛ս նույն տեղում, էջ 111:
[222] Տե՛ս նույն տեղում:
[223] Տե՛ս նույն տեղում, էջ 130:

քահայ պատանիներն ու երիտասարդները: Ծրագրի տևողությունը երկու շաբաթ է, որի ընթացքում սփյուռքահայ երիտասարդները, բնակվելով հյուրընկալող ընտանիքներում, ծանոթանում են հայ ընտանիքի ավանդույթներին, սովորույթներին, կենցաղավարությանը, շփվում են հայ երիտասարդության հետ, ծանոթանում հասակակիցների հետաքրքրություններին, ստեղծում կապեր, շրջագայում և ծանոթանում Հայաստանի պատմական, տեսարժան վայրերին, բազմաբնույթ հանդիպումներ են ունենում պետական, հասարակական, մշակութային գործիչների հետ, հայրենագիտության դասեր առնում, իսկ 2011 թվականից նրանք հյուրընկալող ընտանիքների երեխաների հետ միասին 4 անմոռանալի օր են անցկացնում «Արի՛ տուն» ճամբարում[224]: Կազմակերպվում են համերգների, թատերական ներկայացումների դիտումներ, ապահովում մասնակցություն փառատոներին, ժամանցային այլ միջոցառումներին: Շուրջ ինը տարիների փորձը, ծրագրի արդյունքների վերլուծությունը, ՀՀ և Սփյուռքի լրատվամիջոցներում տեղ գտած բազմաթիվ արձագանքներն ու շնորհակալական նամակները վկայում են, որ «Արի՛ տուն» ծրագիրն արդյունավետորեն նպաստել է սփյուռքահայ երիտասարդների կողմից հայրենիքն իրապես ճանաչելուն, հայրենի հողին, հայ մշակույթին ընդմիշտ կապվելուն, նրանց ազգային ինքնության ձևավորման ու ամրապնդմանը:

«Արի՛ տուն» ծրագրի տարբեր փուլերի մասնակիցները սոցիալական ցանցերում ստեղծում են իրենց խմբերը և հաղորդակցվում: Ծրագիրը լայնորեն լուսաբանվում է նաև նախարարության կայքէջում, «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերա-

---

[224] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները, էջ 130:

կանում, հայկական և սփյուռքյան լրատվամիջոցներում: Ծրագիրն ունի իր օրիներգը, տարբերանշանը, համազգեստը, մասնակիցներին տրվում է տեղեկատվական փաթեթ[225]:

2010 թ. ինքնաբերաբար սկսվել է նաև հակառակ շարժումը, երբ ծրագրի գաղափարով ոգեշնչված մասնակիցները փոխադարձաբար իրենց ապրած երկիր են հրավիրում Հայաստանում հյուրընկալած ընտանիքների իրենց հասակակիցներին[226]: Արդեն առաջին խմբերը հյուրընկալվել են Հոլանդիայում, Գերմանիայում բնակվող հայ ընտանիքներում: Գրանցվել են նաև «Արի՛ տուն» ծրագրի մասնակիցների միջև ամուսնության դեպքեր: Մասնակիցների մեկ տասնյակից ավելին սովորել է Հայաստանի բուհերում:

2014 թ. Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի՛ տուն» ծրագիրն իրականացվեց հունիսի 15-ից օգոստոսի 30-ը: Ծրագրով ՀՀ է եկել 13-18 տարեկան 1071 սփյուռքահայ երիտասարդ՝ աշխարհի 31 երկրից: Առաջին անգամ ծրագրին մասնակցել են Դիարբեքիրից ժամանած 45 իսլամացած հայեր, ինչպես նաև Արցախից՝ 80, Սիսիանից՝ 20 երիտասարդներ[227]: Ծրագրի մասնակիցները հյուրընկալվել են Երևանի և երևանամերձ ընտանիքների: Այնուհետև «Արի՛ տուն» Ծաղկաձորի ճամբարային հնգօրյա աշխույժ հանգստի ու ժամանցի օրերին կազմակերպվել են ճանաչողական ձեռնարկներ, մասնակիցները այցելել են ՀՀ պատմամշակութային, տեսարժան վայրեր, մասնակցել են հայոց լեզվի հնգօրյա ուսուցման ծրագրին, հանդիպել մշակույթի անվանի գործիչների հետ, ունեցել են ազգային երգի

---

[225] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները, էջ 131:
[226] Տե՛ս նույն տեղում:
[227] Տե՛ս «Հայկական Սփյուռք» տարեգիրք, Ե., 2014, էջ 22:

ու պարի դասընթացներ, մարզական ընդգրկուն ծրագրեր: Իսկապես անմոռաց ու տպավորիչ են երեխաների համար շփումները երկրի նախագահի, ղեկավարության և արվեստի գործիչների հետ: Նրանք հայրենիքից հեռանում են՝ անպայման վերադառնալու պայմանով, Հայաստանն իրենց սրտում պահելով:

Ամենամեծ հաջողությունն այն էր, որ անցած 9 տարիներին շուրջ 7000 հյուրընկալ ընտանիքներ ընդունեցին սփյուռքահայերին, իսկ Սփյուռքից էլ 7000 ընտանիք վստահեց, հավատաց Սփյուռքի նախարարությանը և իր 13-18 տարեկան երեխային ուղարկեց Հայաստան[228]: 14 հազար ընտանիք կապվեցին միմյանց հետ, այլ կերպ ասած՝ շուրջ 70 հազար մարդ Հայաստանում և Սփյուռքում բարեկամացան, ընկերացան:

Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում յուրահատուկ նշանակություն ունեցան համահայկական հինգերորդ համաժողովի ընդունած որոշումներն ու հայտարարությունը: Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովը կայացավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախաշեմին՝ 2014 թ., Ա. Սպենդարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքում սեպտեմբերի 18-21-ն ընկած ժամանակահատվածում: Համաժողովին մասնակցում էին ավելի քան 1100 ներկայացուցիչներ՝ ՀՀ-ից, Արցախից և Սփյուռքից: Ընդլայնվել էր մասնակիցների աշխարհագրությունը[229]:

Համաժողովին մասնակցելու նպատակով հայրենիք էին ժամանել աշխարհի շուրջ 60 երկրների հայկական կազմակերպությունների ու կառույցների ղեկավարներ ու ներկայացուցիչներ (շուրջ 741 մասնակից): Արցախը ներկայացնում էր 20 մաս-

---

[228] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 450:
[229] Տե՛ս «Հայկական Սփյուռք» տարեգիրք, էջ 24:

նակցից բաղկացած պատվիրակությունը: Հայաստանից համաժողովին մասնակցում էին 310 պետական, քաղաքական, մշակութային գործիչներ, գիտնականներ ու լրագրողներ: Համաժողովի բացմանը ելույթով հանդես եկան Հայաստանի և Սփյուռքի պետական ու հասարակական-քաղաքական կառույցները ներկայացնող անձինք:

Բացման պաշտոնական միջոցառումից հետո համաժողովի աշխատանքները ընթացան այս անգամ նույնպես զուգահեռավար շարունակվող չորս թեմատիկ նիստերով, որոնք կրում էին հետևյալ խորագրերը՝

Ա. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման գործընթացը,

Բ. Սիրիահայ համայնքի հիմնախնդիրները,

Գ. Հայաստան-Սփյուռք գործակցության ներկա հիմնախնդիրներն ու հեռանկարները,

Դ. Հայրենիք-Սփյուռք 5-րդ համաժողովի թեմատիկ նիստերից մեկի շրջանակներում տեղի ունեցավ լրագրողների համահայկական 7-րդ համաժողովը[230]:

Համաժողովը տեղի էր ունենում ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ, և այդ առումով մեծապես կարևորվեց համահայկական նշանակություն ունեցող այդ տարելիցին բարձր մակարդակով պատրաստվելու անհրաժեշտությունը: Ըստ էության, 100-րդ տարելիցի միջոցառումների մեկնարկը տրվեց այս համաժողովում, երբ համաժողովի ընդունած հայտարարության մեջ հռչակվեց «Հիշում եմ և պահանջում» կարգախոսը:

---

[230] Տե՛ս «Ծրագիր Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովի», 18-21 սեպտեմբեր, Ե., 2014:

Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովի փակման արարողությանը հանդես եկավ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը: Նա իր ելույթում կարևորեց համաժողովի աշխատանքները, անդրադարձ կատարեց սիրիահայերի խնդիրներին, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին, Հայաստան-Սփյուռք հարաբերություններին և միասնական ուժերով գործելու ու հայության առջև ծառացած խնդիրները լուծելու անհրաժեշտությանը՝ առաջարկելով ստեղծել «Համահայկական խորհուրդ», որը կդառնար համազգային հրատապ խնդիրների քննարկման մշտական հարթակներից մեկը[231]:

Համաժողովի ընթացքում սփյուռքահայ գործիչների կողմից բազմիցս առաջարկություններ էին հնչել ՀՀ Ազգային ժողովում Սփյուռքի ներկայացուցիչների խումբ ստեղծելու մասին: Համաժողովի ընդունած հայտարարության մեջ ընդգծվել է. «Հավանություն տալ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի առաջարկին, որպեսզի Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը 2015 թ. ապրիլի 24-ից հետո վերանվանվի «Համահայկական խորհուրդ»...»[232]: Այդ կառույցի ստեղծումը կդառնար նոր ձևաչափ՝ համակարգելու Հայաստան-Սփյուռք հարաբերությունները և արդյունավետորեն լուծելու համահայկական նշանակության խնդիրները:

Սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը հայտարարեց, որ ձեռնամուխ են եղել համահայկական հեռուստաընկերության ստեղծման աշխատանքներին, որը կարող է գործիք դառնալ համահայկական տեղեկատվական անվտանգության համատեքս-

---

[231] Տե՛ս «ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի խոսքը համաժողովի փակման արարողությանը», http://www.mindiaspora.am/am/Conferences/3418:
[232] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., հավելված 22, էջ 632:

տում[233]: Չնայած Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովից չորս տարի է անցել, սակայն դեռևս չի ստեղծվել «Համահայկական խորհուրդ», բայց այդ ուղղությամբ ակտիվ աշխատանքներ են կատարվել վեցերորդ համաժողովի ընթացքում և դրանից հետո ևս: Հինգերորդ համաժողովի հայտարարության մեջ նշվեց, որ «ողջ հայությունն իր մասնական ջանքերը պետք է նպատակաուղղի է.

ա) Հայաստանի Հանրապետության առավել զորացմանը, հետագա առաջընթացին և ապահովությանը,

բ) Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդարացի և միջազգային իրավունքի հիման վրա լուծմանը,

գ) Սփյուռքի առավել կազմակերպմանը,

դ) ազգային ինքնության պահպանմանը և աշխարհասփյուռ հայության ներուժի համախմբմանը,

ե) Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, դատապարտմանն ու հետևանքների վերացմանը,

զ) հայ եկեղեցու շուրջ հայության համախմբմանը,

է) արտակարգ իրավիճակներում հայտնված հայերի օգնությանն ու աջակցությանը[234]:

Համաժողովի մասնակիցները, նկատի ունենալով աշխարհաքաղաքական զարգացումներն ու տարածաշրջանի մարտահրավերները, հռչակեցին հետևյալ առաջնահերթությունները՝ որպես Հայաստան-Սփյուռք գործակցության գաղափարական հենք:

1) Հզոր և ապահով Հայաստանի կառուցում: Այստեղ միասնության գերխնդիրը պետք է լինի ապագա սերունդներին թող-

---

[233] Տե՛ս Եղիազարյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 221:
[234] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 625:

նել զարգացած և ժողովրդական հզոր ու անապահով Հայաստան:

2) Անկախ և անվտանգ Արցախ: Համաժողովի մասնակիցները վերահաստատում են, որ Արցախը մեր պատմական հայրենիքի մասն է, նրա ճակատագիրը բախտորոշ նշանակություն ունի ողջ հայ ժողովրդի համար, ուստի պայքարը կշարունակվի մինչև ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի և վերջնական կարգավորումը:

3) Կազմակերպված Սփյուռք: Համաժողովի մասնակիցներն այս հարցում այն կարծիքին են, որ հայկական կառույցները Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական հաստատությունների հետ միասին ծրագրավորված պետք է առաջադրեն նոր մոտեցումներ՝ վերանայելով ՀՀ-Սփյուռք ռազմավարությունը, իրենց ջանքերը նպատակաուղղեն Սփյուռքի ուծացմանը դիմակայելուն, լեզվամշակութային կորստի կանխմանը և Սփյուռքի նոր սերնդի մեջ հայկական ինքնության պահպանմանը, հատուկ հոգածության արժանացնեն այն համայնքներին, որոնք դեռևս ամբողջովին կազմակերպված չեն և օժանդակեն հայկական համայնքների, համայնքային կառույցների շուրջ հայության համախմբմանը: Սփյուռքն ու սփյուռքյան կազմակերպությունները, Հայաստանի և միջազգային հանրության միջև լինելով մի յուրօրինակ կամուրջ, առավելագույնս պետք է նպաստեն ժողովուրդների ու քաղաքակրթությունների երկխոսությանը, խորացնեն և զարգացնեն Հայաստան-Սփյուռք, Սփյուռքի տարբեր հատվածների միջև համագործակցությունը, ինչպես նաև ամ-

ռապնդեն տարբեր ժողովուրդներին պատկանող սփյուռքների հետ բարեկամական կապերը[235]:

4) Հայոց լեզուն՝ որպես հայապահպանության կռվան: Համաժողովի մասնակիցները հանձնառու են անաղարտ պահելու, իրապաշտ և տրամաբանական մոտեցումով մերձեցնելու, զարգացնելու և փոխացնելու սերունդներին մայրենի լեզուն՝ իր արևելահայ ու արևմտահայ ճյուղերով՝ որպես մեր լինելիության և գոյության գլխավոր հենասյուներից մեկը:

5) Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Այս հարցում համաժողովի մասնակիցները փաստում են, որ ՀՀ նախագահի գլխավորած Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի պետական հանձնաժողովի և 50-ից ավելի տարածաշրջանային հանձնախմբերի ստեղծումը նոր որակ հաղորդեց Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում պետականորեն մշակված և իրագործված Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացմանն ուղղված գործընթացներին: Համաժողովի մասնակիցները մեկ անգամ ևս հավաստում են, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը, դատապարտումն ու հետևանքների վերացումը այսուհետ ևս մնալու է մեր քաղաքական պայքարի օրակարգում, և համազգային դատի վերջնական լուծմանը հասնելու ենք հայության բոլոր հատվածների միասնական ջանքերով՝ առաջին հերթին հիշելով և պահանջելով[236]:

6) Համախմբում հայ եկեղեցու շուրջ: Համաժողովի մասնակիցները կարևորում են հայ եկեղեցու ամրապնդումն ու հետա-

---

[235] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 628:
[236] Տե՛ս նույն տեղում, էջ 630-361:

գա զորացումը՝ հանուն հայ ոգու և ազգային ինքնության հարատևման, հայ եկեղեցու շուրջ ազգի համախմբվածության:

7) Արտակարգ իրավիճակներում հայտնված հայերի անվտանգությունը: Այս խնդրում Սփյուռքի գրեթե բոլոր համայնքներն իրենց նյութական և բարոյական օգնությամբ կանգնեցին սիրահայերի, այդ թվում՝ քեսաբահայության կողքին: Համաժողովի մասնակիցները վերահաստատում են, որ հայոց պետությունն ու Սփյուռքը միասնաբար օգնության ձեռք պետք է մեկնեն արտակարգ իրավիճակում հայտնված յուրաքանչյուր հայորդու՝ օգնության ձևաչափն ու կառուցակարգերը քննարկելով պետության և եկեղեցու հետ: Համաժողովի մասնակիցները խնդիր են դնում Հայաստանում, Արցախում և Սփյուռքում գործող զանգվածային լրատվամիջոցների առջև որպես համահայկական տեղեկատվական հսկայածավալ ցանց, ելնելով համազգային առաջնահերթություններից, հստակ քայլեր ձեռնարկել թուրք-ադրբեջանական կեղծարար, ապատեղեկատվական քարոզչամեքենայի դեմ և իրենց ուժերը համախմբել նաև օտարալեզու զանգվածային լրատվամիջոցներում հայկական հիմնախնդիրներն արծարծելու, Հայ դատի լուծմանը նպաստելու համար: Հայտարարության վերջում պահանջվում է, որ ՀՀ կառավարությունը՝ ի դեմս Սփյուռքի նախարարության և պետական այլ գերատեսչությունների, համահայկական կառույցների ու հայկական կազմակերպությունների, հանձնառու լինի համապատասխան ձեռնարկներով ու ծրագրերով իրականացնելու հայտարարության գաղափարները և նախանշած խնդիրները:

Համաժողովի մասնակիցները հայտարարում են՝ մենք ուժեղ ենք միասին և միասնաբար ենք կերտելու մեր պատմությունն ու ապագան՝ հանուն հզոր և ապահով Հայաստանի, հա-

նուն անկախ ու հաղթանակած Արցախի և կազմակերպված Սփյուռքի[237]:

2014 թ. հոկտեմբերին ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը մշակեց «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը», որտեղ խոսվում էր ՀՀ նախագահի ընտրությանը Սփյուռքի ներկայացուցիչների մասնակցության հնարավորության մասին[238]:

Հայտնի է, որ դեռևս 2011 թ. հունվարին պաշտոնական այցով ԱՄՆ-ում գտնվող ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը Լոս Անջելեսում հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ հայտարարություն էր արել այն մասին, որ ՀՀ ղեկավարությունը մտադիր է սահմանադրական փոփոխություններ կատարել, որոնք թույլ կտան սփյուռքահայերին ներգրավվել ՀՀ պետական կառավարական համակարգում[239]:

Նախարարը մասնավորապես նշում էր, որ խորհրդարանը պետք է կազմված լինի երկու ներքին և վերին պալատներից, վերջում էլ պետք է ներգրավվեն սփյուռքահայերը: Ըստ նախարարի՝ վերին պալատը կլիներ Սենատը, որտեղ պետք է ընդգրկվեին Սփյուռքի ներկայացուցիչները: «Նախագահի առաջին քայլը եղել է Սփյուռքի նախարարության ստեղծումը, որից հետո մշակել է լուրջ քաղաքականություն Հայաստան-Սփյուռք հարաբերություններում: Այնուհետև ներմուծվել է երկքաղաքացիության ինստիտուտը, իսկ երրորդ քայլը լինելու է խորհրդարանի վերին պալատի ստեղծումը, որի միջոցով Սփյուռքի հայերը հնարավորություն են ունենալու մասնակցելու պետական կառավար-

---

[237] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 633:
[238] Տե՛ս Եղիազարյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 222:
[239] Տե՛ս նույն տեղում:

մանը, քաղաքականության մշակմանը»[240],– ասել է ՀՀ սփյուռքի նախկին նախարար Հ. Հակոբյանը:

Սփյուռքի հասարակական-քաղաքական շրջանակների ներկայացուցիչները հիմնականում ողջունել են երկպալատ խորհրդարան ստեղծելու գաղափարը: Սակայն ինչպես պարզվեց, հետագայում համաժողովրդական հանրաքվեի դրված Սահմանադրության նախագծում վերը նշված դրույթն իր համապատասխան ձևակերպումը չէր ստացել: Միանգամայն պարզ էր, որ առաջարկվող բարեփոխումների հեղինակները չէին կարողացել գտնել այն արդյունավետ ձևաչափը, որով Սփյուռքի ներկայացուցչական կազմը մասնակցություն կունենար ՀՀ նախագահի ընտրություններին, թեև նոր Սահմանադրությամբ այդ պաշտոնը ավելի շատ կրում էր խորհրդանշական բնույթ: Սփյուռքին ՀՀ քաղաքական գործընթացներին ներգրավելու և կառավարմանը մասնակից դարձնելու գաղափարը, թեկուզ խորհրդակցական ձայնի իրավունքով, ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանի ծրագրային դրույթներից էր[241]: Սակայն հարկ է նկատել, որ այն նաև Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ամենաբարդ հայրցերից մեկն է, քանի որ դժվար է ապահովել բազմաշերտ և ոչ միատարր Հայկական սփյուռքի ներկայացուցչական մասնակցությունը, հստակեցված չեն Սփյուռքի՝ ՀՀ կառավարմանը մասնակցելու ձևաչափը և լիազորությունների շրջանակը: Այս հարցում միանգամայն ճիշտ է նկատում պատմագիտության դոկտոր Ա. Եղիազարյանը, երբ գրում է. «Անհրաժեշտ է ցուցաբերել ծայրահեղ զգուշավորություն, որպեսզի այս

---

[240] Տե՛ս Եղիազարյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 222:

[241] Տե՛ս Սարգսյան Ս., «Դեպի ապահով Հայաստան…» նախընտրական ծրագիր, Ե., 2013, էջ 12:

քայլը չդառնա Սփյուռքի պառակտմանը նպաստող հավելյալ գործոն և չվտանգի Հայաստան-Սփյուռք հարաբերությունները»[242]:

Հայտնի է, որ Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ներկա միտումները իրենց արտացոլումն են գտել նաև ՀՀ նոր Սահմանադրության մեջ, որն ընդունվեց 2015 թ. դեկտեմբերի 6-ին համաժողովրդական հանրաքվեով: ՀՀ նոր Սահմանադրությամբ երկու կարևորագույն հիմնադրույթների՝ հայրենադարձության և հայապահպանությանն ուղղված ՀՀ քաղաքականության ավելացումը և ընդգծված շեշտադրումը վկայում են, որ Հայաստանը հավակնում է Սփյուռքի հարցերում էապես մեծացնելու իր քաղաքական դերակատարումը:

Հայաստան-Սփյուռք վեցերորդ համաժողովը տեղի ունեցավ 2017 թ. սեպտեմբերի 18-20-ը: Հերթական համաժողովին մասնակցում էին ավելի քան 1800 ներկայացուցիչներ Հայաստանից, Արցախից և Սփյուռքից: Ընդլայնվել էր մասնակիցների աշխարհագրությունը. համաժողովին մասնակցելու նպատակով հայրենիք էին ժամանել աշխարհի 71 երկրների հայկական կազմակերպությունների ու կառույցների ղեկավարներն ու ներկայացուցիչները (800-ից ավելի մասնակիցներ)[243]:

Մեծ պատվիրակություններ էին ժամանել ՌԴ-ից (259), ԱՄՆ-ից (213), Ֆրանսիայից (92), Լիբանանից (107), Սիրիայից (44), Իրանից (56), Արգենտինայից (35), Կանադայից, Թուրքիայից, Վրաստանից: Առաջին անգամ համաժողովին մասնակցում էին Մալազիայի, Թայլանդի, Սինգապուրի, Ճապոնիայի,

---

[242] Տե՛ս Եղիազարյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 223:

[243] Տե՛ս Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի մասնակիցների ցուցակ, 18-20 սեպտեմբերի, Ե., 2017, էջ 3, 191-192, «Հայաստանի Հանրապետություն», 19 սեպտեմբերի, 2017, էջ 1:

Մեքսիկայի, Եթովպիայի, Սուդանի համայնքների ներկայացուցիչները[244]: Մասնակիցների 35%-ից ավելին կանայք էին, մոտ 20% էին կազմում երիտասարդները: Մեծ թիվ էին կազմում գործարարները, մտավորականները, 90-ից ավելին խմբագիրներ ու լրագրողներ էին:

Արցախի ներկայացնում էր 40 մասնակիցներից բաղկացած պատվիրակությունը, ՀՀ-ից համաժողովին մասնակցում էին 400-ից ավելի պետական, քաղաքական, մշակութային գործիչներ, գիտնականներ ու լրագրողներ: Համաժողովի բացումը տեղի ունեցավ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Համաժողովում բացման խոսքով հանդես եկավ ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը: Ելույթներ ունեցան Հայաստանի երրորդ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը և ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, հնչեցին նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի տանն Կիլիկո կաթողիկոսի օրհնության խոսքերը[245]: Համաժողովի ընթացքում տեղի ունեցավ 3 լիագումար նիստ: Բացման պաշտոնական միջոցառումից հետո համաժողովի ընթացիկ աշխատանքները զուգահեռաբար շարունակվեցին «Փոխադարձ վստահություն, միասնականություն և պատասխանատվություն» խորագրով, 16 թեմատիկ նիստերով, 4 հետևյալ ուղղություններով:

Առաջին ուղղությունը՝ Հայաստանի զարգացման հիմնախնդիրներ:

---

[244] «Հայաստանի Հանրապետություն», 19 սեպտեմբերի, 2017, էջ 2:

[245] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, «Ծրագիր Հայաստան-Սփյուռք վեցերորդ համաժողովի», Ե., 2017, էջ 1-2:

Երկրորդ ուղղությունը՝ ՀՀ պաշտպանական քաղաքականության առանձնահատկությունները ժամանակակից մարտահրավերների պայմաններում:

Երրորդ ուղղությունը՝ Արտաքին քաղաքականության օրակարգ:

Չորրորդ ուղղությունը՝ հայապահպանության հիմնախնդիրներ:

Վերջում՝ համահայկական խորհրդի ստեղծման և Հայաստան-Սփյուռք գործակցության հետագա զարգացման հարցերով աշխատանքային խմբի խորհրդակցություն[246]:

Յուրաքանչյուր ուղղություն ներկայացվել է չորս հիմնախնդիրների քննարկման լույսի ներքո: Այսպես, օրինակ, առաջին ուղղության ներքո քննարկվել են՝

ա. Հայաստանի տնտեսության զարգացումը և ներդրումները,

բ. հայաստանյան զբոսաշրջության խթանումը՝ որպես մեր պատմության ու մշակույթի ներկայացման արդյունավետ եղանակ,

գ. Սփյուռքի գործարար և մասնագիտական ցանցերի հնարավորությունները,

դ. ՀՀ-Սփյուռք տնտեսական համագործակցության խթանումը (Հայկական առևտրային ցանցի (ATN) 3-րդ գործարար ֆորում):

Երկրորդ ուղղության շրջանակներում քննարկվել են՝

ա. հակահայկական քարոզչությունը տեղեկատվական անվտանգության թիրախում,

---

[246] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, «Ծրագիր Հայաստան-Սփյուռք վեցերորդ համաժողովի», Ե., 2017, էջ 3-7:

բ. «ազգ-բանակ» հավաքական ներուժի զարգացման մոդել,

գ. սահմանամերձ բնակավայրերի կայուն զարգացում և հուսալի պաշտպանություն,

դ. ռազմաարդյունաբերական համալիր, արդիականացման, համագործակցության և տնտեսական առաջընթացի խթանում:

Երրորդ ուղղության շրջանակներում քննարկվել են՝

ա. արդի արտաքին մարտահրավիրները և դրանց արձագանքման գործում Հայաստան-Սփյուռք համագործակցությունը,

բ. Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման գործընթացը,

գ.Հայոց ցեղասպանության ճանաչում, ցեղասպանությունների կանխարգելում. քաղաքական և իրավական գործընթացները,

դ. Հայաստանի արտաքին քաղաքականությունը. հայացք Սփյուռքից[247]:

Չորրորդ ուղղության շրջանակներում քննարկվել են՝

ա. մայրենի լեզուն և դպրոցը հայ ինքնության կռվան,

բ. մշակույթի դերը հայապահպանության հարցում,

գ. Սփյուռքի երիտասարդության ազգային պատկանելության գիտակցման տեսլականը,

դ. արտակարգ իրավիճակներում հայտնված հայերի հիմնախնդիրը[248]:

Նշված թեմատիկ նիստերից մեկին՝ Համահայկական խորհրդի ստեղծման և Հայաստան-Սփյուռք գործակցության հետագա զարգացման հարցերին նվիրված աշխատանքային խմբի

---

[247] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, «Ծրագիր Հայաստան-Սփյուռք վեցերորդ համաժողովի», Ե., 2017, էջ 3-5, 8-10, 13-15, 18-20:

[248] Տե՛ս նույն տեղում, էջ 6, 10, 16, 21:

խորհրդակցությանը, որը կազմակերպվել էր կլոր-սեղան քննարկումների ձևով, մասնակցել և ելույթ է ունեցել ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը:

Երկրորդ կլոր-սեղան քննարկումը նվիրված էր ՀՀ հռչակման և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին, ինչպես նաև «Էրեբունի-Երևանի» 2800-ամյակի տոնակատարությունների կազմակերպման ու անցկացման ծրագրերի քննարկմանը: Համաժողովի երկրորդ օրվա լիագումար նիստում «ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնադրույթները» թեմայով ելույթ ունեցավ ՀՀ վարչապետ Կ. Կարապետյանը: Համաժողովի աշխատանքների ամփոփիչ նիստում ելույթ ունեցավ ՀՀ ԱԺ նախագահ Արա Բաբլոյանը, ապա 4 ուղղությունների պատասխանատուները ներկայացրին թեմատիկ նիստերի քննարկումների արդյունքները: Վերջում ամփոփիչ ելույթով հանդես եկավ ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը: Արդյունքների ամփոփումից հետո համաժողովն ընդունեց հայտարարություն[249]:

ՀՀ նախագահն իր ելույթում ընդգծեց. «Հայաստան-Սփյուռքի համահայկական 6-րդ համաժողովի համար ընտրված քննարկումների չորս ուղղությունները լավ հարթակ են մեր ընդգրկուն օրակարգի խնդիրները վերհանելու, լուծումներ քննարկելու, պետական, հասարակական և համահայկական տարբեր կառույցների ջանքերը համադրելու ու սերտ գործակցության նոր ուղղություններ հաստատելու առումով: Նախորդ երեք տարիների ընթացքում Հայաստանի կյանքում տեղի են ունեցել նշանակալի իրադարձություններ: Այժմ գտնվում ենք լիարժեք խորհրդարանական կառավարման անցնելու ճանապարհին: Սա

[249] «Հայաստանի Հանրապետություն», 21 սեպտեմբերի, 2017, էջ 3:

նշանակում է, որ նոր հնարավորություններ են ստեղծվում երկրի հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելու և ապագայի հանդեպ պատասխանատվություն ստանձնելու առումով»[250]:

ՀՀ նախագահի կողմից բարձրաձայնված ուղենիշային հարցերից էր հայրենադարձության վերաբերյալ համազգային երկխոսություն ծավալելու և Հայաստանի ու Սփյուռքի միջև գործակցությունը նոր մակարդակի բարձրացնելու անհրաժեշտությունը: Նման համաժողովներն այդ առումով դիտարկվում են որպես Սփյուռքի հետ ռազմավարական երկխոսության հարթակ: «Առաջիկա բոլոր տարիների մեր քայլերն ուղղվելու են Հայաստանում բնակչության բնական աճի տեմպերի ավելացմանը, արտագաղթի և ներգաղթի հարաբերակցության էապես վերափոխմանը»,– իր ելույթում նշել է ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանը, ապա ավելացրել է. «Մեր նպատակն է, որ Հայաստանը 2040 թ. ունենա առնվազն 4 մլն բնակիչ...: Ակնհայտ է, որ միայն ծնելիության մակարդակի ավելացման, մարդկանց կյանքի տևողության երկարացման և ժողովրդական պատկերը բարելավող մյուս քայլերով մենք այդ նպատակին դժվարությամբ կհասնենք, չնայած այդ ուղղություններով առաջ ենք գնալու: Հետևաբար նպատակադրումը ենթադրում է գալիք 25 տարիների ընթացքում դեպի Հայաստան ներգաղթի լուրջ ցուցանիշների ձեռքբերում»[251]:

Հաջորդ ուղերձն ուղղված էր երիտասարդությանը, քանի որ, ըստ ՀՀ նախագահի, առանց երիտասարդության ուժերի, միայն ավանդական կազմակերպությունների և կուսակցություն-

---

[250] «Հայաստանի Հանրապետություն», 21 սեպտեմբերի, 2017, էջ 3:
[251] «Հայաստանի Հանրապետություն», 19 սեպտեմբերի, 2017, էջ 3:

ների միջոցով դժվար կլինի հասնել Սփյուռքի երկարատև և կայուն զարգացմանը: Դրա համար Սփյուռքում անհրաժեշտություն են երիտասարդության ակտիվացումը և դրան ուղղված ծրագրերի իրականացումը[252]: Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականության ոլորտին, ՀՀ նախագահն ուշադրություն է դարձրել 2016 թ. ապրիլին տեղի ունեցած Քառօրյա պատերազմին, որը մեկ անգամ ևս ցույց տվեց, որ հայերը համախմբվում են և միահամուռ պատասխան տալիս Հայաստանի նկատմամբ ռազմական ագրեսիային: Նա միաժամանակ վստահություն է հայտնել, որ միջազգային դատարանները դեռ կկայացնեն իրենց վճիռները, մասնավորապես այն հանցագործությունների վերաբերյալ, որոնք տեղի են ունեցել ռազմի դաշտում հայ զինվորների նկատմամբ: Թուրքիայի հետ հարաբերությունների և ցյուրիխյան արձանագրությունների վերաբերյալ ՀՀ նախագահը նշել է, որ թույլ չի տա, որ ստորագրությունը պատանդ դառնա, և այդ գործիքն օգտագործելով՝ նենգափոխվի և նսեմացվի հայոց պատմությունը[253]:

Անդրադառնալով այն երկրներին, որտեղ տեղի հայ համայնքի ուժերով օրենսդիր կամ գործադիր մարմինները ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, ՀՀ նախագահը կարևորել է այդ երկրների հետ նոր օրակարգ ձևավորելու անհրաժեշտությունը[254]:

«Արդի աշխարհի փոփոխությունների համատեքստում մենք պետք է նորովի դիտարկենք մեր Սփյուռքի «փափուկ ուժը» և հանրային դիվանագիտության կարողությունները՝ պաշտոնա-

---

[252] «Հայաստանի Հանրապետություն», 19 սեպտեմբերի, 2017, էջ 3:
[253] Տե՛ս նույն տեղում:
[254] Տե՛ս նույն տեղում:

կան դիվանագիտությունը առավել զորացնելու համար»,– նշել է ՀՀ նախագահը: Այնուհետև ավելացրել է. «Հայաստանի նորընտիր Ազգային ժողովին ուղղված իմ ուղերձում արդեն ներկայացրել եմ խորհրդարանական դիվանագիտության արդյունավետության բարձրացմանն ուղղված սկզբունքների ներդրման կարևորությունը, որը, անշուշտ, ավելի զորեղ կդառնա Սփյուռքի անհատների և կառույցների աջակցությամբ»[255]:

Համաժողովի շրջանակներում տեղի ունեցավ համահայկական խորհրդի ձևավորման սկզբունքների և Հայաստան-Սփյուռք գործակցության սկզբունքների վերաբերյալ աշխատանքային խորհրդակցություն, որին ներկա էին շուրջ 30 անվանի ներկայացուցիչներ Սփյուռքի բոլոր համայնքներից:

«Քննարկման ընթացքում բոլորը միահամուռ վստահություն հայտնեցին, որ հասունացել է ժամանակը, որ 1990-1996 թվականներից ի վեր քննարկվող Համահայկական խորհուրդ ձևավորվելու գաղափարը պետք է միս ու արյուն ստանա, և ձեռնամուխ լինենք այդ կառույցի ձևավորմանը՝ որպես Հայաստան-Սփյուռք երկխոսության գործիքի»,– ասել է ՀՀ երրորդ նախագահը և եզրափակելով այս խնդրի կարևորությունը՝ մեկ անգամ ևս ընդգծել է, որ այս համաժողովը նշանավորվում է նաև այդ խորհրդի ձևավորմանն ուղղված ևս մեկ որոշիչ քայլով: «Այսօր, երբ մենք ի մի կբերենք նախորդ երկու տարիներին կատարված նախապատրաստական աշխատանքները, 1918 թ. մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի առաջին հանրապետության հռչակման 100-րդ տարեդարձի տոնակատարությունների շրջանակներում կընդունենք վերջնական որոշումը»[256]:

---

[255] «Հայաստանի Հանրապետություն», 19 սեպտեմբերի, 2017, էջ 3:
[256] Նույն տեղում:

Քննարկման մասնակիցները միակարծիք են եղել, որ նորաստեղծ կառույցը որևէ կերպ չի ստվերելու ավանդական կազմակերպությունների և կուսակցությունների գործունեությունը, այլ, ընդհակառակը, միտված է լինելու էլ ավելի ուժեղացնելու Սփյուռքի ներուժն ու մասնակցությունը Հայաստանի ներքին կյանքին:

Միաժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ ձևակերպելու Համահայկական հանձնախումբ, որը առաջիկա 3 ամիսների ընթացքում Սփյուռքի հայտնի կառույցներից կհավաքի Համահայկական խորհրդի ձևավորման սկզբունքների մասին առաջարկներ: Արդյունքում խորհրդի անդրանիկ նիստը որոշվեց անցկացնել 2018 թ. մայիսյան հերոսամարտերի և Առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակների տոնակատարությունների ընթացքում[257]:

Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի շրջանակում կայացել են «ՀՀ պաշտպանական քաղաքականության առանձնահատկությունները ժամանակակից մարտահրավերների պայմաններում» թեմատիկ ուղղության առաջին և երկրորդ նիստերը: «Հակահայկական քարոզչությունը տեղեկատվական անվտանգության թիրախում» խորագրով անցկացված նիստին բանախոսներն անդրադարձել են հակահայկական քարոզչության մարտահրավերներին ու դիմագրավման հնարավորություններին, տեղեկատվական անվտանգության խնդիրներին: Քննարկմանը ելույթներ են ունեցել տեղեկատվական անվտանգության ոլորտի ներկայացուցիչներ, փորձագետներ, շահագրգիռ գերատեսչությունների ու կառույցների ներկայացուցիչներ: Նիստի բանախոսներն անդրադարձել են նաև սահմանա-

[257] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 սեպտեմբերի, 2017, էջ 4:

գոտում իրագործվող մեծածավալ աշխատանքների և «Ազգ-բանակ» հայեցակարգի ծրագրային դրույթներին[258]:

Երկրորդ՝ «Ազգ-բանակ» հավաքական ներուժի զարգացման մոդել» խորագրով անցկացված նիստում ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը համաժողովի մասնակիցներին է ներկայացրել պաշտպանական ոլորտի առանցքային ծրագրերն ու կյանքի կոչվող բարեփոխումները: Խոսելով «Ազգ-բանակ» գաղափարի բովանդակության մասին՝ պաշտպանական գերատեսչության ղեկավարն առանձնացրել է ծրագրային հիմնական ուղղությունները՝ զինվորական մասնագիտության նկատմամբ գրավչությունը, սպառազինության համալրումը և առաջնագծի ժամանակակից սարքավորումներով կահավորումը, ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը, ռազմադիվանագիտական կապերի ամրապնդումն ու աշխարհագրության ընդլայնումը, արդար և թափանցիկ աշխատանքը[259]:

Պաշտպանության նախարարն անդրադարձել է նաև լայնորեն քննարկված «Ես եմ», «Պատիվ ունեմ» և «Դիտակետ» ծրագրերին: «Չկա անվտանգ Հայաստան առանց Արցախի անվտանգության ապահովման»[260],– նշել է Վ. Սարգսյանը: Նա նաև ընդգծել է. «ՀՀ անվտանգության առանցքն է հայկական բանակը, որը մեր անկախության և պետականության ամենամեծ երաշխիքն է, որ բանակի հանդեպ աշխարհասփյուռ հայությունը խոր հարգանք ու վստահություն ունի… Մենք մեծ ուշադրություն ենք դարձնում այն հարցերին, որտեղ բանակը կարող է հասարակության համար լրացուցիչ ծառայությունների կամ

---

[258] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 սեպտեմբերի, 2017, էջ 4:
[259] Տե՛ս նույն տեղում:
[260] Նույն տեղում:

հնարավորությունների դուռ բացել»[261]: Բանակն էլ, ըստ նախարարի, քաղաքացիական հասարակությանը կարող է օգտակար լինել նրանով, որ զինվորական հոսպիտալները ծառայեցվեն բնակչությանը: Դրա լավագույն օրինակներից են Սիսիանում, Վարդենիսում և Բերդում գործող լավագույնս հագեցած հոսպիտալները քաղաքացիական (մարզային) հիվանդանոցների հետ միավորելու գործընթացը և Հայաստանի խոշոր զորամասերում «Թումո» կենտրոնի ստեղծման աշխատանքները[262]:

ՀՀ վարչապետ Կ. Կարապետյանը, ելույթ ունենալով Հայաստան-Սփյուռք համահայկական վեցերորդ համաժողովում, կոչ արեց միասին շարունակել կառուցել բոլորիս երազած երկիրը. «Այսօր մենք ունենք ավելի քան 7 միլիոնանոց Սփյուռք: Շատ-շատերը անկախությունից ի վեր կանգնած են Հայաստանի կողքին, Հայաստանը ներկայացնում են աշխարհի բոլոր ծայրերում, տարբեր ձևաչափերով մասնակցում են մեր երկրի կառուցման գործընթացին: Մենք խորապես շնորհակալ ենք նրանց և գնահատում ենք այդ մոտեցումը»[263],– նշել է ՀՀ վարչապետը:

Բնութագրելով ՀՀ տնտեսության զարգացման ցուցանիշները՝ ՀՀ վարչապետը մեկ անգամ ևս ընդգծեց՝ ասելով. «Մենք ուզում ենք, որ որ Սփյուռքի մեր գիտության ու մշակութային գործիչները, կառավարիչները, ոլորտի միջազգային ճանաչում ունեցող հայրենակիցները մասնակից դառնան երկրում ընթացող բարեփոխումներին՝ կառավարման նոր մշակույթ բերելու, Սփյուռքի մեր լավագույն մասնագետների գիտելիքներն ու ներուժը մեր համազգային նպատակներին ծառայելու համար»[264]:

---

[261] «Հայաստանի Հանրապետություն», 19 սեպտեմբերի, 2017, էջ 4:
[262] Տե՛ս նույն տեղում:
[263] «Հայաստանի Հանրապետություն», 20 սեպտեմբերի, 2017, էջ 3:
[264] Նույն տեղում:

Համաժողովի ավարտին ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը ներկայացրեց «Հայապահպանության հիմնախնդիրներ» ուղղության քննարկումների արդյունքները: Անդրադառնալով Սփյուռքի ուծացման խնդիրներին՝ նախարարը նշել է. «Մեր շատ հայերնակիցներ հեռանում են համայնքային կյանքից, ինչի արդյունքում արագանում է ուծացման գործընթացը: Մյուս կողմից հային բնորոշ է օտար իրավիճակներում արագ ինտեգրվելու հատկությունը, ինչի արդյունքում օտար երկրներում մենք ունենք բազմաթիվ հաջողակ հայեր և հպարտանում ենք նրանց ձեռքբերումներով: Համաշխարհայնացման ներկա պայմաններում Սփյուռքում ընթացող ուծացման գործընթացներն ընդունել են աննախադեպ ծավալներ: Հայկական ինքնությունը դարձել է խոցելի. փակվում են հայկական դպրոցները, նվազում է մայրենի լեզվով խոսողների թիվը, ավելանում են խառնամուսնությունները, ինչի հետևանքով վնասվում են հայ ինքնության արմատները, ջլատվում է հայկական համայնքների ներուժը»[265]: Խոսելով հայապահպանության Սփյուռքի նախարարության՝ Սփյուռքի ներուժի հայտնաբերմանն ուղղված մեծածավալ ծրագրերի մասին՝ նախարարը նշել է, որ դրանցում Սփյուռքի մեր հայրենակիցների ակտիվ ներգրավածությունը վկայում է, որ Հայաստանը համայն հայության հայրենիքն է[266]:

«Հայոց պետության և հայ ժողովրդի կենսագործունեության գաղափարական հենքը պետք է դառնա «հզոր Հայաստանի» կառուցման գաղափարը»[267],– իր խոսքը եզրափակել է ՀՀ սփյուռքի նախարարը:

---

[265] «Հայաստանի Հանրապետություն», 20 սեպտեմբերի, 2017, էջ 3:
[266] Տե՛ս նույն տեղում:
[267] Նույն տեղում:

Համաժողովի ավարտին ընդունվեց Հայաստան-Սփյուռք վեցերորդ համաժողովի հայտարարությունը:

Հայտարարության տեքստում համաժողովի մասնակիցները նշում էին. «Մենք՝ Հայաստանի առաջին հանրապետության հռչակման, 1918 թ. մայիսյան հերոսամարտերի 100-ամյա հոբելյանների և Երևանի հիմնադրման 2800-ամյակի նախաշեմին Երևանում գումարված «Փոխադարձ վստահություն, միասնականություն և պատասխանատվություն» խորագրով Հայաստան-Սփյուռք վեցերորդ համաժողովի մասնակիցներս, առաջնորդվում ենք Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդման գործում ողջ հայության ներուժի համախմբման, շարունակական երկխոսության և բազմաշերտ ներգրավման հրամայականով՝ նկատի ունենալով, որ Հայաստանի, Արցախի հզորացումը և անվտանգության ամրապնդումը, ժողովրդավարական հաստատությունների ու կառավարման համակարգերի առավել ուժեղացումը, տնտեսական վերընթաց զարգացումը, ժողովրդի կենսամակարդակի բարձրացումը, հոգևոր, կրթական ու մշակութային առաջընթացը, աշխարհասփյուռ հայկական համայնքներում ազգային ինքնության պահպանությունը և մշակութային զարգացումը Հայաստան-Արցախ-Սփյուռք միասնության և ողջ հայ ժողովրդի հավաքական նպատակների իրականացման գրավականն են..., փաստելով, որ ՀՀ Սահմանադրությունում ամրագրված է հայապահպանմանն ուղղված քաղաքականություն վարելու և հայրենադարձությունը համակողմանիորեն նպաստելու՝ պետության առաքելությունը, որը նոր որակ և բովանդակություն է հաղորդելու հայրենիք-Սփյուռք հարաբերություններին...: Ողջունելով համահայկական խորհրդի՝ որպես համազգային առաջնահերթությունների ճշգրտման, ազգային նե-

րուժի մեկտեղման և բարձր մակարդակի ռազմավարական երկխոսության հարթակի ձևավորման գործընթացը, հավատարիմ մնալով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի սկզբունքներին՝ համաժողովի մասնակիցները վերահաստատում են պատրաստակամությունը՝ միասնաբար և փոխադարձ պատասխանատվությամբ, մարդկային, նյութական և հոգևոր ներուժի համախմբմամբ առավել ամրապնդելու Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը՝ այն ուղղորդելով ներքոհիշյալ նպատակների և խնդիրների իրագործմանը.

ա. Հայաստանի, Արցախի Հանրապետությունների հզորացում, անվտանգության ամրապնդում, բարգավաճում, աշխարհասփյուռ հայկական համայնքների համախմբում, ազգային ինքնության պահպանում, ինչպես նաև հայրենադարձության քաջալերում,

բ. Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ և արդարացի հանգուցալուծում, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման միջազգային ճանաչում,

գ. Օսմանյան կայսրության և Թուրքիայի տարբեր վարչակարգերի կողմից պետականորեն ծրագրված և իրագործված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և դրա հետևանքների վերացման ուղղությամբ առավել համակարգված և միասնական քաղաքականության իրականացում,

դ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված գործընթացում իրազեկվածության առավել բարձրացման, պատմական հիշողության պահպանման ու փոխանցման կարևորում և հանցագործության ժխտմանը, նսեմացման դեմ պայքարի իրականացում, այդ թվում՝ իրավունքի ուժով,

ե. Հայաստանի պաշտպանվածության ամրապնդումը, զինված ուժերի ռազմատեխնիկական, տեխնոլոգիական և մասնագիտական ներուժի արդիականացումը, ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը՝ որպես տնտեսության և տեխնոլոգիական առաջընթացի շարժիչ ուժ և «Ազգ-բանակ» հայեցակարգի կենսագործման առանցքային ուղղություն:

զ. աշխարհի տեղեկատվական տարբեր հարթակներում հայատյացության և հակահայ քարոզչության փորձերի դեմ միասնական պայքար ծավալելու և նման քաղաքականության ազդեցության չեզոքացման ուղղությամբ գործնական ծրագրերի և համակարգված գործունեության շարունակական իրականացում,

է. երիտասարդության շրջանում ազգային ինքնության հավաքական ուժի տարածում ու ամրապնդում, հայ դպրոցի զարգացում, սերունդների հայեցի դաստիարակում, հայրենաճանաչության նոր ծրագրերի մշակում և իրականացում,

ը. հայության մեջ սիրո, համերաշխության, համդուրժողականության, վստահության և միասնության ամրապնդում,

թ. հայրենիքի առջև ծառացած մարտահրավերների դիմագրավման ու հաղթահարման և հնարավոր այլ մարտահրավերների բացահայտման ուղղությամբ ջանքերի համադրում,

ժ. Մերձավոր Արևելքի, մասնավորապես ծանր փորձությունների միջոցով անցնող Սիրիայի հայությանը համակողմանի աջակցության ցուցաբերում, այդ տարածաշրջանում հայկական պատմամշակութային կոթողների և ազգային արժեքների պահպանում,

ի. Հայաստանի, Արցախի բնակավայրերի կենսագործունեության տարբեր ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում,

լ. Հայաստանին և Արցախին վերաբերող միջազգային իրազեկվածության բարձրացում, այդ նպատակով համահայկական օրակարգի ձևավորում,

խ. տարբեր երկրներում հայկական պատմամշակութային ժառանգությունը պահպանելու, աշխարհում հայկական մշակույթը պատշաճ կերպով ներկայացնելու միասնական ջանքերի գործադրում,

ծ. արևմտահայերենի պահպանման, տարածման, Սփյուռքում հայոց լեզվի և հայագիտական առարկաների դասավանդման աջակցության նպատակով Հայաստանի և Սփյուռքի մասնագիտական ներուժի համախմբում[268]:

Այսպիսով՝ Հայաստանի ղեկավարության՝ հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացման ուղղությամբ որդեգրած մոտեցումներն ունեցան գործնական դրսևորում: Հստակ է՝ Սփյուռքը և նրա կարծիքը երբեք չեն անտեսվել համազգային նշանակության կարևորություն ունեցող հիմնահարցերում: Հարկ է նկատել, որ Հայաստանի երրորդ նախագահի՝ համահայկական նոր կառույց ունենալու վերաբերյալ գաղափարի իրագործման ուղղությամբ ձեռնարկված քայլերն իրենց ավարտուն տեսքը դեռևս չեն ստացել: Վերջնականապես լուծված չէ նաև Հայաստան-Սփյուռք միասնական քաղաքական օրակարգի ձևավորման հարցը: Եթե հաջողվի ստեղծել նոր համահայկական կառույցի արդյունավետ ձևաչափ, ապա վերջինս կարող է մշակել նոր միասնական քաղաքական օրակարգ, որն արդեն իսկ համահունչ կլինի ներքին և արտաքին մարտահրավերներին:

---

[268] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 20 սեպտեմբերի, 2017, էջ 3:

Գ. ՀԱՄԱՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Արցախյան ազատագրական պայքարով, այդ հիմնահարցի նոր փուլի սկզբնավորմամբ և Հայաստանի անկախացմամբ հայ-րենիք-Սփյուռք հարաբերությունները թևակոխեցին նոր փուլ: Վերոնշյալ երկու գործոնները հզոր ազդակ դարձան հայրենիք-Սփյուռք հասարակական-քաղաքական հարաբերությունների նորովի ձևավորման համար:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը սկզբունքորեն նոր մոտեցում ցուցաբերեց այս ոլորտում: Սփյուռքը միահամուռ պաշտպանեց Արցախյան շարժումը՝ չնայած պայքարի վարման ձևերի նկատմամբ տեսակետների աննշան տարբերությանը: Սկզբնական շրջանում սփյուռքը միասնական էր նաև Հայաստանում ընթացող ժողովրդավարական գործընթացների հարցում[269]:

Հայրենիք-Սփյուռք համագործակցության կարևորագույն ուղղություններից է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը: Խորհրդային Միության գոյության պայմաններում հայ ազգային ավանդական կուսակցությունները՝ «Ռամկավար ազատական կուսակցությունը» (ՌԱԿ), «Հայ հեղափոխական դաշնակությունը» (ՀՅԴ) և «Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը» (ԱԴՀԿ), գործում էին արտասահմանում և միայն ԽՍՀՄ-ի փլուզումից ու ՀՀ անկախացումից հետո հնա-

[269] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 13:

ռավոր դարձավ նրանց վերադարձը մայր հայրենիք և մասնակցությունը երկրի հասարակական-քաղաքական անցուդարձներին: Կարծես թե ստեղծվում էին բոլոր հնարավորությունները Հայաստանի և Սփյուռքի հարաբերությունների զարգացման ու խորացման համար, և ակնկալվում էր, որ այդ հարաբերություններում, հատկապես հաշվի առնելով արցախյան պայքարը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և համազգային նշանակության այլ խնդիրների լուծում գտնելու հրամայականը, փոխինտեգրումը կընթանային անցնցում և հարթ: Սակայն ամեն ինչ դասավորվեց այլ կերպ, և ի հայտ եկան հակասություններ, որոնք տեղ-տեղ սուր հակամարտության տեսք ստացան[270]:

Արցախյան հիմնահարցի նոր փուլի սկզբնավորմամբ փոխվեց առաջին հերթին Խորհրդային Հայաստանի ղեկավարության վերաբերմունքը Սփյուռքի նկատմամբ: Եթե նախկինում համագործակցության հիմնական շեշտադրումը կատարվել էր մշակութային կապերի ամրապնդման վրա, ապա 1988 թվականից սկսած՝ ակտիվացան քաղաքական շփումները[271]: 1988 թ. սեպտեմբերին Սփյուռքի երեք ազգային կուսակցությունները համատեղ հայտարարությամբ սատար կանգնեցին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Խորհրդային Հայաստանին միացնելու հայության արդար պահանջին[272]:

1989 թ. դեկտեմբերի 2-ին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն կոչով դիմեց սփյուռքահայությանը: Նա հորդորում

---

[270] Տե՛ս Եղիազարյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 145:

[271] Տե՛ս նույն տեղում:

[272] Տե՛ս «Սփյուռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ» (1945-1991, ընտրանի), կազմեց Գ. Եազըճեան, Ե., 2016, էջ 20-21:

էր բոլորին սատար կանգնել հայության արդար պահանջին և Լեռնային Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքին[273]: Այս ամենը ևս նպաստեց Սփյուռքի ազգային կուսակցությունների հայրենիք վերադարձին: Նրանք հայրենիքում իրենց գործունեությունը սկսեցին 1990 թ., սակայն պաշտոնապես գրանցում ստացան միայն 1991 թ.:

Տասնամյակներ շարունակ ամբողջատիրական, միակուսակցական համակարգով ապրելուց հետո անկախությունը Հայաստանի Հանրապետությանը հնարավորություն տվեց անցնելու բազմակուսակցական համակարգին: Այդ մասին փաստեց 1990 թ. օգոստոսի 23-ի Հայաստանի անկախության հռչակագրի դրույթներին համապատասխան 1991 թ. փետրվարի 26-ին խորհրդարանի ընդունված օրենքը «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին», որում ամրագրված սկզբունքների հիման վրա հանրապետությունում կարող էին ձևավորվել և գործել հասարակական-քաղաքական տարբեր կազմակերպություններ, քաղաքական կուսակցություններ[274]: Միայն 1991 թ. հանրապետությունում գրանցվեցին և իրենց գործունեությունը ծավալեցին 22 կուսակցություններ, այդ թվում՝ նաև խորհրդային իշխանության կողմից Հայաստանից վտարված հայ ավանդական ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ կուսակցությունները, որոնք, մոտ 70 տարի գործելով Սփյուռքում, դարձել էին բավական կայուն և բազմամարդ[275]: Երկարամյա ընդմիջումից հետո վերադառնալով հայրենիք՝ նրանք գործուն մասնակցություն

---

[273] Տե՛ս «Կոչ սփյուռքահայությանը», «Էջմիածին», 1989, N 11-12, էջ 8:

[274] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995), Ե., 1995, էջ 115-118:

[275] Աբրահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Ե., 2009, էջ 62-63:

ունեցան նորանկախ հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին և Արցախյան ազատագրական շարժմանը:

1990 թ. հայրենիք վերադարձավ «Ռամկավար ազատական կուսակցությունը», որը՝ որպես Հայաստանի ՌԱԿ (ՀՌԱԿ), պաշտոնապես գրանցվել է 1991 թ. հուլիսի 4-ին: Նրա կանոնադրությունը և քաղաքական պլատֆորմի հիմնադրույթները ընդունվեցին ՀՌԱԿ-ի առաջին հանրապետական պատգամավորական ժողովում (1991 թ. նոյեմբեր – 1992 թ. փետրվար)[276]:

ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդում ՀՌԱԿ-ն ունեցավ սեփական պատգամավորական խումբը՝ շնորհիվ նրա, որ որոշ պատգամավորներ հայտարարեցին ՀՌԱԿ-ին անդամագրվելու մասին[277]: Սակայն 1991 թվականից սկսած՝ կուսակցությունը բախվեց լուրջ մարտահրավերների: Մասնավորապես ՀՌԱԿ պատգամավորական խմբից հեռացած մի խումբ գործիչներ հիմնադրեցին երկու նոր՝ «Ռամկավար-ազատական կուսակցությունը» (Լիբերալ-դեմոկրատական) և «Ժողովրդական կուսակցությունը» (Արևելյան լիբերալների կուսակցություն)[278]: «Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը» 1995 թ. խորհրդարանական ընտրություններից հետո «Հանրապետություն» միավորման կազմում ուներ 6 պատգամավոր[279]:

Հարկավոր է փաստել այն իրողությունը, որ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը 1994 թ. փորձում էր հիմնավորել մի թեզ,

---

[276] Տե՛ս ՀՀ կուսակցություններ, Ե., 2002, էջ 21:
[277] Տե՛ս Է. Մինասյան, Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Ե., 2013, էջ 261:
[278] Տե՛ս նույն տեղում, էջ 263:
[279] Տե՛ս Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 270:

ըստ որի՝ կուսակցությունների գործունեությունը Սփյուռքում ժամանակավրեպ երևույթ է[280]:

Փաստորեն՝ սփյուռքահայ կուսակցությունների հետ հակամարտությունը Հայաստանից տեղափոխվում էր Սփյուռք, որտեղ ՀՀ-ում իշխող կուսակցությունն իրեն համագործակից կարգավիճակում տեսնում էր հիմնականում «Հայկական բարեգործական ընդհանուր միությանը» և Ամերիկայի հայկական համագումարին[281]: Մյուս կողմից ՀՀ իշխանությունները նաև անհաջող փորձ կատարեցին Սփյուռքում ստեղծելու սեփական կառույցները՝ ի հակակշիռ կուսակցությունների[282]: Ակնհայտ է, որ նման մոտեցումները ՀՀ-Սփյուռք հարաբերություններին հասցնում էին էական վնասներ՝ խորացնելով անվտանգությունն ու անհանդուրժողականությունը:

Հաշվի առնելով ՀՀ իշխանությունների նման մոտեցումները, ինչպես նաև այն, որ ՀՌԱԿ-ը, ի տարբերություն «Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության», զգուշորեն վերաբերվեց ՀՅԴ-ի գործունեության ժամանակավոր կասեցման մասին ՀՀ նախագահի 1994 թ. դեկտեմբերի 28-ի հրամանագրին՝ այն համարելով լուրջ մարտահրավեր նոր ձևավորվող ժողովրդավարական համակարգին: Պարզ դարձավ, թե ինչու ՀՌԱԿ-ի կառույցից առանձնացած և «Լիբերալ-դեմոկրատական կուսակցություն» ստեղծած անձինք սկսեցին հովանավորվել իշխող «Հայոց համազգային շարժում կուսակցության» կողմից՝ վերջինիս շուրջ ձևավորված և ՀՀ առաջին գումարման ազգային ժողովում բա-

---

[280] Տե՛ս Է. Մելքոնյան, Հայաստանի երրորդ հանրապետության և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, «Սփյուռքագիտություն. տեսության և պատմության հարցեր» տարեգիրք, Ե., 2012, էջ 107:

[281] Տե՛ս նույն տեղում, էջ 109:

[282] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11 սեպտեմբերի, 1994:

ցարձակ մեծամասնություն ստացած «Հանրապետություն» միավորման կազմում ստանալով վեց պատգամավորական մանդատ[283]:

1995 թ. սեպտեմբերի 20-ին գումարվեց ՀՌԱԿ-ի հինգերորդ արտահերթ պատգամավորական ժողովը՝ կապված ներկուսակցական հեղաշրջման փորձի հետ: Ժողովում ՀՌԱԿ-ի կենտրոնական վարչության նախագահ ընտրվեց Ռ. Միրզախանյանը[284]: Արդեն 1996 թ. սեպտեմբերի 13-ին ՀՌԱԿ-ը միացավ 14 կուսակցությունների և 69 հասարակական կազմակերպությունների ղեկավարների՝ առաջիկա նախագահական ընտրություններում գործող նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի թեկնածությունը սատարող հայտարարությանը[285]: Այս շրջանում անկայուն էր իրավիճակը ոչ միայն կուսակցության հայաստանյան հատվածում, այլև կուսակցության մեջ ընդհանրապես: Երբ 1995 թ. կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողովում ընտրվեց նոր կենտրոնական վարչություն, հին ու նոր ղեկավար կազմերի միջև հակասությունները մեծապես սրվեցին[286]: Դրա հետևանքով կուսակցությունից հեռացվեցին նախորդ ղեկավարության ներկայացուցիչները, որոնք էլ 1996 թ. ԱՄՆ-ում գումարեցին այլ պատգամավորական ժողով՝ ընտրելով սեփական կենտրոնական վարչությունը[287]: Ի դեպ, հենց այս երկրորդ կենտրոնական վարչության շուրջ էլ միավորվեց կուսակցության անդամների մեծ մասը: Սակայն ի վերջո հաղթեց ողջախոհությունը, և սկսվե-

---

[283] Տե՛ս Է. Մելքոնյան, Հայաստանի երրորդ հանրապետության և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, էջ 106:
[284] Տե՛ս «Հետահայաց. սեպտեմբեր», «Ազգային գաղափար», 2008, N 6:
[285] Տե՛ս նույն տեղում:
[286] Տե՛ս Եղիազարյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 148:
[287] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, Ե., 2002, էջ 141:

ցին վերամիավորման շուրջ բանակցություններ: Դրանց արդյունքում ի չիք համարվեցին կուսակցության բազմաթիվ անդամների նկատմամբ կիրառված պատժամիջոցները՝ հեռացման որոշումները[288]:

ՀՌԱԿ-ը 1997 թվականից ինքնուրույն կուսակցություն էր՝ հավատարիմ իր գաղափարական սկզբունքներին: ՀՀ բոլոր մարզերում ՀՌԱԿ-ն ուներ երիտասարդական ակումբներ, Երևանում գործում էին «Արմենական», «Երիտասարդական ռամկավար», «Ազատական» ակումբները[289]:

ՌԱԿ-ը վարչություններ ուներ Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում, Եվրոպայում, Ավստրալիայում, Միջին Արևելքում և Հայաստանում: Նրա ազդեցության ոլորտում է գտնվում «Հայկական բարեգործական ընդհանուր միությունը»՝ իր կրթական, մարզական, մշակութային հաստատություններով: Կուսակցության հիմնական նպատակն էր օժանդակել հայրենիքին, հանդես գալ Հայ առաքելական եկեղեցու միասնականության օգտին՝ շարունակելով հայապահպանական գործունեությունը Սփյուռքում[290]:

Հայկական հարցում հավատարիմ մնալով իր ավանդական դիրքորոշմանը՝ ՌԱԿ-ը գտնում էր, որ Հայաստանի Հանրապետությունն է լինելու տարագիր հայ ժողովրդի բեկորների վերամիավորման ու մեր ազգային բոլոր արդար պահանջների և իղձերի՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, մեր պատմական հայրենիքի հողային ամբողջականության վերականգնման հիմնական կռվանը: Ինչ վերաբերում է Թուրքիայի

---

[288] Տե՛ս «Ազգ», 18 հունվարի, 2000: Տե՛ս նաև Պետրոսյան Ք., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001 թթ., Ե., 2011, էջ 16:
[289] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 14:
[290] Տե՛ս նույն տեղում, էջ 15:

հետ հարաբերությունների հարցին, քանի դեռ Թուրքիան չի ընդունել ցեղասպանությունը, ՌԱԿ-ը շարունակելու է մնալ պահանջատիրոջ դիրքերում՝ այդ առումով չընդունելով ոչ մի զիջում[291]:

Կուսակցությունը Ղարաբաղյան հիմնահարցի կապակցությամբ կողմնակից էր քաղաքական բանակցությունների միջոցով խնդրի լուծմանը, ինչի հիմքում պետք է դրվեր ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի սկզբունքը:

Արտերկրի հանրությանը և կառավարական շրջաններին Հայաստանի իրավիճակն ու շահերը ճիշտ ներկայացնելու ուղղությամբ զգալի աշխատանք էր կատարում ՌԱԿ-ի հասարակական հարաբերությունների բաժնի մաս կազմող Վաշինգտոնում գործող «Ամերիկայի մարդու իրավունքների հայկական խորհուրդը», որը հետապնդում էր երկու հիմնական նպատակ՝ արդար լուծում գտնել Հայոց ցեղասպանության հարցին և հայանպաստ որոշումներ կայացնելու նպատակով ապահովել ԱՄՆ-ի քաղաքականության մեջ հայերի առավելագույն մասնակցությունը: ՌԱԿ-ի «Հայ իրավանց խորհուրդը» հիմնականում հանգանակությունների և միջոցառումների կազմակերպման շնորհիվ կապեր էր հաստատում ամերիկյան քաղաքական գործիչների հետ, միևնույն ժամանակ նախընտրական քարոզչության ընթացքում կազմակերպում էր կոնգրեսականներին օգնելու միջոցառումներ[292]:

Հայաստանում ընթացող զարգացումների ազդեցության ներքո ՌԱԿ-ը Սփյուռքում պառակտվեց, ինչը խորանալով տարածվեց նաև կուսակցության հովանու ներքո գործող «Թեքեյան

---

[291] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 15:
[292] Տե՛ս նույն տեղում, էջ 15-16:

մշակութային միության» վրա: Երբ 1995 թ. Կիպրոսում տեղի ունեցած ՌԱԿ-ի 19-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը կազմավորեց կենտրոնական վարչություն՝ Հակոբ Գասարժյանի ատենապետությամբ, կուսակցության նորընտիր վարչության և նախկին ղեկավար կազմի անդամների միջև ի հայտ եկան կազմակերպչական բնույթի լուրջ հակասություններ, որոնց հետևանքով կուսակցությունից հեռացած նախորդ ղեկավար կազմի անդամները, 1996 թ. Բոստոնում հրավիրելով ժողով, կազմավորեցին ևս մեկ կենտրոնական վարչություն՝ Հայկաշեն Ուզունյանի ատենախոսությամբ[293]: Ըստ էության, տեղի ունեցավ կուսակցության պառակտում, որի հետևանքով Սփյուռքում սկսեցին գործել նույն անվան ներքո միմյանց նկատմամբ անհաշտ երկու կուսակցություններ: Կուսակցության անդամների մեծամասնությունը, համախմբվելով հին սերնդի ներկայացուցիչ Հ. Ուզունյանի շուրջ, շարունակեց Հայաստանին ու նրա կառույցներին պաշտպանելու ՌԱԿ-ի ավանդական քաղաքականությունը[294]:

2000 թ. փետրվարի 11-13-ին Փարիզում կուսակցության երկու թևերի միջև կայացած հանդիպման ընթացքում Հ. Գասարճյանն ու Հ. Ուզունյանը կնքեցին ՌԱԿ-ի միասնության վերահաստատման մասին ներքին համաձայնագիր, որում, գերագույն նպատակ ունենալով կուսակցության միասնության գաղափարը, չեղյալ հայտարարեցին «վերջին տագնապին ընթացքին երկուստեք կատարուած պատժական տնօրինումները» և վերահաստատեցին «բոլոր ընկերներուն կուսակցական իրաւավիճակը»[295]: Համաձայնագրով կուսակցությունը վերահաստատեց իր

---

[293] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, Ե., 2002, էջ 141:
[294] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 16:
[295] Տե՛ս «Ազգ», 18 փետրվարի, 2000:

համոզմունքը, որ այսուհետ բոլոր տեսակի խանգարիչ հանգամանքներից ձերբազատվելով՝ ՌԱԿ-ն իր բոլոր շրջանակներով, մամուլով, ուղեկից կազմակերպություններով, ձեռք ձեռքի տված հայաստանյան ՌԱԿ-ի հետ, միասնական ուժերով վերստին պետք է ստանձնի իր պատմական առաքելությունը:

Կուսակցության վերամիավորումը վերջնականապես տեղի ունեցավ 2000 թ. ապրիլի 8-ին Աթենքում հրավիրված ՌԱԿ-ի 22-րդ ընդհանուր պատգամավորական ժողովում[296]: Կուսակցության պատվո նախագահ ընտրվեց Հ. Ուզունյանը (Փարիզ), վարչության ատենապետ՝ Հ. Գասարճյանը (Բեյրութ):

Փաստորեն՝ ՌԱԿ պատգամավորական 22-րդ ընդհանուր ժողովում ընտրված միասնական կենտրոնական վարչությունում ընդգրկված էին երկու հակադիր թևերում գտնվող անձինք[297]: Չնայած դրան՝ հետագայում ևս կուսակցության թե՛ Սփյուռքում և թե՛ հայաստանյան հատվածներում ծնվեցին հակասություններ, որոնք այլևս չէին առնչվում կուսակցության՝ ՀՀ քաղաքական համակարգին ինտեգրման գործընթացին և ներքին բնույթ ունեին:

Հարկ է նշել, որ կուսակցությունը 2003 թ. մասնակցեց ՀՀ երրորդ գումարման Ազգային ժողովի ընտրություններին՝ հավաքելով ընտրողների 2.9 %-ի ձայները, ինչը բավարար չեղավ՝ ՀՀ օրենսդիր մարմնում պատգամավորական տեղեր ստանալու համար[298]:

Հայ ավանդական հաջորդ կուսակցությունը «Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունն» է: Գործունեության

---

[296] Տե՛ս «Հայադարան» համահայկական նախագիծ: Համահայկական գիդ-ուղեցույց-2009, Ե., 2009, էջ 629:
[297] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 17:
[298] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 261-262:

գլխավոր առանցքը եղել է ու մնում է հայապահպանությունը: Այս կուսակցության հովանավորությամբ էր Սփյուռքում գործում կուսակցության երիտասարդական թևը՝ «Նոր սերունդ մշակութային միությունը», «Հայ մարմնամարզական միությունը», որոնք մասնաճյուղեր ունեին գրեթե բոլոր խոշոր հայկական համայնքներում: Հանդես գալով ազգային համերաշխության և միջկուսակցական համագործակցության դիրքերից՝ ՍԴՀԿ-ն կողմնակից էր Հայ առաքելական եկեղեցու միավորմանը՝ գտնելով, որ եկեղեցու ներսում ծնունդ առած տագնապը մեծ խոչընդոտ է եղել հայրենիք-Սփյուռք միասնությանը և հայությանը ընդհանուր նպատակների շուրջ համախմբելու նպատակի իրագործմանը: Կուսակցությունը հայության առջև ծառացած համազգային լուծման կարոտ խնդիրներ էր համարում Արցախի հիմնախնդիրը, Հայ դատը, երկրաշարժի հետևանքների վերացումը: Հայաստանը համարելով համայն հայության մայր հայրենիքը՝ ՍԴՀԿ-ն գտնում էր, որ «այն մեկնակետ է վաղվա ամբողջական Հայաստանի»[299]:

Անկախության հռչակումից հետո ՍԴՀԿ-ն վերահաստատվեց հայրենիքում: ՍԴՀԿ-ն հայրենիքում պաշտոնապես գրանցվել է 1991 թ. հոկտեմբերին: Կուսակցությունը սկզբում իր մասնակցությունը բերեց Արցախյան պատերազմին՝ կազմավորելով և ռազմաճակատ ուղարկելով «Մեծն Մուրադ», «Փարամազ» և «Չելլո» կամավորական ջոկատներ[300]: Այն սկզբում որդեգրել էր

---

[299] Տե՛ս Սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութիւն, Պաշտօնական յայտարարութիւն ՍԴ հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան, «Երիտասարդ Հայաստան», 1990, թիւ 11, մարտ, 87-րդ տարի, էջ 9:

[300] Տե՛ս «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994» հանրագիտարան, Ե., 2004, էջ 599:

ՀՀ իշխանություններին աջակցելու քաղաքականություն և իր լիակատար համաձայնությունն էր հայտնել ՀՀ նախագահի՝ ՀՅԴ-ի գործունեությունը ՀՀ-ում ժամանակավորապես կասեցնելու որոշմանը: Դրա շնորհիվ 1995 թ. ՍԴՀԿ-ն ՀՀ առաջին գումարման Ազգային ժողովում իշխանական «Հանրապետություն» միավորման շրջանակներում ունեցավ 2 պատգամավոր[301]: ՍԴՀԿ-ն ևս 1996 թ. նախագահական ընտրություններում պաշտպանում էր Լ. Տեր-Պետրոսյանի թեկնածությունը[302]:

Կուսակցությունը գտնում էր, որ Հայաստանում պետք է հաստատվի ժողովրդավարություն, և արագացվեն արմատական բարեփոխումները հօգուտ հայ ժողովրդի բարօրության, հայրենադարձության ու ազգային վերամիավորման: Կարևորելով երկրում քաղաքական կայունության ապահովումը՝ ՍԴՀԿ-ն անհրաժեշտ էր համարում, «Արցախն ու Արևմտահայաստանը սևեռակետ ունենալով, ուժավորել Հայաստանից անիրավաբար բռնախլված հողերին վերատիրացման արդար պայքարը, վարել Հայաստանի աշխարհաքաղաքական ու քաղաքական դիրքից մեկնող և հայկական պետականության ազգային դիմագիծն ու գոյատևումը ամրապնդող քաղաքականությունը»[303]:

ՍԴՀԿ-ն Ղարաբաղյան հարցի լուծում է համարում Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի միացումը կամ նրա անկախ կարգավիճակի ընդունումը:

1998 թ. հետո կուսակցությունը որդեգրեց ընդդիմադիր գործելակերպ: 2001 թ. Կիպրոսում տեղի ունեցած կուսակցության 17-րդ համագումարը ՀՀ ներկա վիճակը համարեց հույժ

---

[301] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 270:
[302] Տե՛ս նույն տեղում, էջ 272:
[303] «Հայրենիքի ձայն», 12 սեպտեմբերի, 1990:

մտահոգիչ՝ մատնանշելով թե՛ քաղաքական և թե՛ սոցիալ-տնտեսական դաշտերը: Մտահոգիչ համարվեցին հատկապես արտագաղթի մեծ ծավալները[304]:

Կարևորելով Հայոց ցեղասպանության ճանաչումը տարբեր երկրների խորհրդարանների կողմից՝ հավաստեց. «Հայ դատը համայն հայության գերագույն դատն է»[305]: Համագումարը պաշտոնական հայտարարության մեջ իր զորակցությունը հայտնեց Մայր աթոռ Ս. Էջմիածնին և դեմ արտահայտվեց Կիլիկիո կաթողիկոսությանն ու նրան ենթակա թեմերի ղեկավարման հատվածական մենասիրությանը: Որդեգրելով ազգապահպանման նոր քաղաքականություն՝ համագումարը Հայկական սփյուռքն իր ազգային դիմագծով պահելու և պահանջատիրական պայքարին նոր թափ տալու նպատակով ընդգծեց Սփյուռքի կրթական, բարեսիրական, մարզական, երիտասարդական և մշակութային կառույցներն ամրացնելու անհրաժեշտությունը:

2005 թ. կուսակցության 18-րդ ընդհանուր ժողովը դարձյալ անդրադարձավ ՀՀ-ում տիրող կոռուպցիոն, տնտեսական մաֆիաներին և դատական մարմինների նկատմամբ անվստահությանը, որոնք շտկելու համար ՀՀ իշխանությունը չէր կատարում ոչ մի էական քայլ: Այդ ամենն իր բացասական ազդեցությունն էր թողնում երկրի սոցիալական պայմանների վրա: Անհրաժեշտ էր ներդնել իրական ժողովրդավարություն, առանց որի հնարավոր չէր լինի ՀՀ-ում հասնել տնտեսական և սոցիալական արդարարության: Իսկ ժողովրդավարության հիմքը իշխանափոխու-

---

[304] Տե՛ս «Հայադարան» համահայկական նախագիծ, էջ 629:
[305] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 148:

թյան հնարավորությունն էր ընտրությունների միջոցով և խաղաղ ճանապարհով[306]:

ՍԴՀԿ-ն մասնակցեց 2007 թ. խորհրդարանական ընտրություններին: ՀՀ շուրջ 1.392.000 ընտրողներից կուսակցության օգտին քվեարկեց 989-ը[307]:

Հետագայում՝ 2009 թ., ՍԴՀԿ հայաստանյան հատվածում տեղի ունեցավ պառակտում: Այդ իրողությունը, սակայն, չէր առնչվում ՀՀ քաղաքական համակարգում կուսակցության ինտեգրման գործընթացին:

1990 թ. հայրենիք վերադարձավ նաև «Հայ յեղափոխական դաշնակցությունը»: ՀՅԴ-ն իր էությամբ, աշխարհայացքով և ավանդույթներով ազգային, սոցիալիստական, ժողովրդավարական և հեղափոխական կուսակցություն է, որը պայքարում է հայության քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային շահերի պաշտպանության համար: Իր գոյության 138 տարիների ընթացքում կուսակցության դավանած հիմնական արժեքներն ու ծրագրերը զարգացում են ապրել, սակայն էական փոփոխության չեն ենթարկվել: Դեռևս Հայաստանի առաջին հանրապետության շրջանում՝ 1919 թ., ՀՅԴ-ի որդեգրած ազատ, անկախ, միացյալ Հայաստանի ստեղծման գաղափարը պահպանվում է առ այսօր: Ըստ ՀՅԴ-ի՝ ազատ, անկախ և միացյալ Հայաստանի սահմանները պետք է համապատասխանեն Սևրի հաշտության պայմանագրի (1920 թ.) պայմաններին, ընդգրկեն նաև Ղարաբաղն ու Նախիջևանը: Թուրքիան պետք է ընդունի Հայոց ցեղասպանության փաստը և հատուցի հայերին հասցված վնասը: Միջազգային հասարակական կարծիքի վրա ազդելու, Հայոց ցե-

---

[306] Տե՛ս http://election.medindex.am/chapter8,5,php:

[307] Տե՛ս Եղիազարյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 150:

ղասպանության համընդհանուր դատապարտմանը և պատմական արդարության վերականգնմանը հասնելու նպատակով ՀՅԴ-ն իր հանձնախմբերի միջոցով կազմակերպել է ժողովներ, ցույցեր և այլն[308]: Հատկապես Սփյուռքում նշանակալի է ՀՅԴ առաքելությունը՝ իր կազմակերպվածությամբ, ժողովրդականության, պատասխանատվությամբ և կից կառույցներին ցուցաբերվող աջակցությամբ: ՀՅԴ-ն գործում է 30-ից ավելի հայկական համայնքներում[309]: Կուսակցությունն առաջիններից էր, որ անկախությունից հետո հաստատվեց հայրենիքում և ամբողջությամբ նվիրվեց Հայաստանի պետականության կայացման բաղձալի նպատակին:

1923 թվականից Վաշինգտոնում գործում էր ՀՅԴ հասարակական հարաբերությունների մասնաճյուղը կազմող «Ամերիկայի հայկական ազգային կոմիտե» կազմակերպությունը, որի ծրագրային հիմնահարցերն էին՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը, Սպիտակի երկրաշարժից տուժածներին օգնության ցուցաբերումը և Ղարաբաղյան ինքնորոշման պաշտպանությունը[310]:

1988 թ. հոկտեմբերին ՀՅԴ-ն ՍԴՀԿ-ի և ՌԱԿ-ի հետ համատեղ արված հայտարարությամբ միանգամայն արդարացի ճանաչեց Հայաստանի Հանրապետության հետ վերամիավորվելու Արցախի հայ բնակչության պահանջը[311]:

ՀՅԴ-ն գործուն մասնակցություն ունեցավ Ղարաբաղյան հիմնահարցի զարգացման բոլոր փուլերում: Արցախյան պատերազմին ՀՅԴ-ն մասնակցել է մի քանի կամավորական ջոկատներով, որոնց միավորումից 1992 թ. սեպտեմբերին ստեղծվեց

---

[308] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 19:
[309] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 163:
[310] Տե՛ս «Ազգ», 6 հուլիսի, 1941:
[311] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 50:

Շուշիի առանձնակի գումարտակը: Գումարտակում (1600 մարտիկ) Սփյուռքը ներկայացված էր այսպես՝ ԱՄՆ՝ 11 մարտիկ, Կանադա՝ 7, Սիրիա՝ 6, Լիբանան՝ 23, Ֆրանսիա՝ 7, Իրան՝ 9, Վրաստան՝ 6, ՌԴ՝ 3: Գումարտակի մնացյալ մարտիկները Հայաստանից, Արցախից ու Ջավախքից էին[312]:

Արցախյան ազատամարտում էական մասնակցության շնորհիվ Լեռնային Ղարաբաղում ՀՅԴ-ի հեղինակությունն այնքան էր մեծացել, որ Գերագույն խորհրդի ընտրությունների արդյունքում 75 պատգամավորական տեղերից 35-ը բաժին հասավ ՀՅԴ-ին[313]: Կուսակցության ներկայացուցիչը (Արթուր Մկրտչյան) 1992 թ. ընտրվեց ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ[314]:

Ինչ վերաբերում է մասնակցությանը ՀՀ քաղաքական կյանքին, ապա առաջին գումարման Գերագույն խորհրդում, որը կազմավորվեց 1990 թ., ՀՅԴ-ն ներկայացված էր 12 պատգամավորով՝ շնորհիվ այն իրողության, որ մի քանի պատգամավորներ հայտարարեցին ՀՅԴ-ին անդամակցելու մասին՝ ձևավորելով առանձին խմբակցություն, այնուհետև՝ պատգամավորական խումբ[315]:

Հայաստանում ՀՅԴ-ի քաղաքական ինտեգրման համար էական հիմնախնդիրներից մեկն էլ այն էր, որ կուսակցության «վերադարձի» շրջանում ի հայտ էր եկել «Հայաստանի հայ հեղափոխական դաշնակցություն» անվանմամբ մեկ այլ կուսակցություն: Վերջինիս հիմնադիրները 1991 թ. մարտի 6-ին դիմել

---

[312] Տե՛ս «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994» հանրագիտարան, էջ 591, Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 148:

[313] Ընտրվեց ՀՅԴ-ի 27 (1991 թ. դեկտեմբեր), իսկ լրացուցիչ ընտրություններում (1992 թ. հուվար)՝ ևս 8 ներկայացուցիչ: Տե՛ս «Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Ազգային ժողով», http://www.nankr.am/hy/32:

[314] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 149:

[315] Տե՛ս նույն տեղում, էջ 185-187:

էին ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցում ստանալու համար: Այդ նպատակով դեռևս 1990 թ. հոկտեմբերի 10-ին անցկացվել էր հիմնադիր ժողով[316]: Երկրում առանձին կուսակցության ստեղծման անհրաժեշտությունը հիմնավորվել էր այն իրողությամբ, որ ՀՅԴ-ն տասնամյակներ շարունակ գործել է բացառապես Սփյուռքում և կտրված է հայրենիքից, մինչդեռ երկրում կա ազգային կուսակցության կարիք: Նոր կուսակցության հիմնադիրները պնդում էին, որ 1920-ական թթ. կեսերին՝ պաշտոնապես լուծարվելուց հետո, ՀՅԴ-ն երկրում, այնուամենայնիվ, ընդհատակյա կարգով իր գործունեությունը վերսկսել է 1930-ական թթ. սկսած: Խորհրդային Հայաստանում կուսակցությունը բացահայտվել է 1989 թ. մարտին, ձևավորվել է որպես կազմակերպչական կառույց, որի ստեղծմամբ հավակնել է անկախ կուսակցության կարգավիճակի: Վերջինս պետական գրանցում ստացավ ՀՀ արդարադատության նախարարության կոլեգիայի 1991 թ. հուլիսի 2-ի N 38/3 որոշմամբ[317]: Նշված հանգամանքը խոչընդոտներ առաջացրեց ՀՀ-ում ՀՅԴ-ի ինտեգրման համար և շուտով դարձավ իշխող ՀՀՇ կուսակցության ու ՀՅԴ-ի միջև համակողմանի հակամարտության հիմնաքարերից մեկը, քանի որ համանուն կուսակցության ստեղծումը հայրենիքում բուն կուսակցության կողմից չէր կարող չընկալվել որպես իր հանդեպ ՀՀ իշխանությունների նպատակադիր քաղաքականության հետևանք: Սակայն տարիներ անց նորելուկ «Հայաստանի հայ հեղափոխական դաշնակցությունը», ոմանց բնորոշմամբ՝ կոոպերատիվ կուսակցությունը, ինքնըստիքյան դադարեց գոյություն ունենալուց:

---

[316] Տե՛ս Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 63-64:
[317] Տե՛ս նույն տեղում, էջ 64:

1991 թ. հոկտեմբերին ՀՀ-ում տեղի ունեցած նախագահական ընտրություններում ՀՅԴ-ն հանդես եկավ սեփական թեկնածուով՝ առաջադրելով թատրոնի և կինոյի ճանաչված դերասան, ժողովրդականության վայելող Սոս Սարգսյանին: ՀՅԴ-ի այս քայլը ՀՀՇ-ն գնահատեց որպես մարտահրավեր, այն էլ մի կուսակցության կողմից, որը նոր-նոր էր հաստատվել Հայաստանում, անմասնակից էր անկախության համար վարած պայքարին, և որը ղեկավարվում ու ֆինանսավորվում էր արտասահմանից: ՀՀՇ-ն, որի ժողովրդականությունը այդ օրերին հասել էր իր գագաթնակետին (ընտրություններում Լ. Տեր-Պետրոսյանի օգտին քվեարկեց ընտրողների 83%-ը), ընդունեց մարտահրավերը՝ դիմելով կոշտ գործողությունների բոլոր ընդդիմադիր ուժերի դեմ[318]:

ՀՀ նախագահի պաշտոնում Լ. Տեր-Պետրոսյանի ընտրությունից կարճ ժամանակ անց կուսակցությունը իշխող ՀՀՇ-ի դեմ որդեգրեց ընդդիմադիր կեցվածք: Հարաբերությունների սրման հետևանքը եղավ այն, որ 1992 թ. հունիսի 29-ին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը կուսակցությանը մեղադրեց Աղետի գոտու և Արցախի համար հանգանակված միջոցները յուրացնելու, Հայաստանը պատերազմի մեջ ներքաշելու ցանկության և մի շարք այլ հարցերում[319]: Միևնույն ժամանակ Հայաստանից արտաքսվեց ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հ. Մարուխանյանն իշխանությունների դեմ քայքայիչ գործունեություն վարելու մեղադրանքով[320]:

---

[318] Տե՛ս Մելքոնյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, էջ 105:
[319] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 20:
[320] Տե՛ս Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 105:

Հակամարտությունը գնալով ավելի սուր բնույթ էր ստանում: ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի՝ 1994 թ. դեկտեմբերի 28-ի հրամանագրով ՀՀ-ում ժամանակավորապես կասեցվեց ՀՅԴ-ի գործունեությունը[321]: Հրամանագրում բերված էին կասեցման հետևյալ պատճառները.

1. «ՀՅԴ-ի ներսում ստեղծվել և գործել է զինվորական կառուցվածքով ու ճյուղավորված ցանցով գաղտնի հետախուզական ծառայություն, որը ստեղծվել է ՀՅԴ բյուրոյի որոշմամբ և գործել կուսակցության ՀՀ կենտրոնական կոմիտեի գիտությամբ,
2. այդ ծառայությունը ՀՀ-ում զբաղվել է հանրապետության ազգային անվտանգությանն առնչվող ռազմական և տնտեսական բնույթի հետախուզական աշխատանքով,
3. մասնակցել է միջազգային թմրաբիզնեսի Բեյրութ–Երևան–Մոսկվա–այլ երկրներ երթուղու մշակմանն ու գործադրմանը,
4. ստեղծել է անօրինական տնտեսական կառույցներ և զբաղվել դրամաշորթությամբ (ռեկետ),
5. կազմավորել է մարտական խմբեր և նրանց միջոցով իրականացրել բացահայտված քաղաքական սպանություններ ու ծրագրել մի շարք այլ ահաբեկչական գործողություններ,
6. իր ընդհատակյա գործունեության ընթացքում օգտագործել է «Հայ յեղափոխական դաշնակցության» և նրա

[321] «Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը՝ «Հայ յեղափոխական դաշնակցություն» հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին», «ՀՀ ԳԽ տեղեկագիր», N23-24, 1994:

ուղեկից կազմակերպությունների՝ «Համազգային հայ կրթական և մշակութային միության», «Հայ օգնության խաչի», «Նիկոլ Աղբալյան ուսանողական միության» և «Հայ մարմնակրթական ընդհանուր միության» պաշտոնական կառույցները»[322]:

Կուսակցության գործունեությունը ՀՀ-ում կասեցվում էր այդ գաղտնի կազմակերպության «հետագա հնարավոր անօրինական գործողությունները կանխելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անվտանգությունն ապահովելու նպատակով» և «ժամանակավորապես, մինչև օրենքով սահմանված կարգով հարցի լուծումը»[323]:

1995 թ. հունվարի 13-ին արդեն ՀՀ գերագույն դատարանի որոշմամբ ՀՀ-ում կասեցվեց ՀՅԴ-ի և նրան ուղեկից կազմակերպությունների գործունեությունը, քանի որ մեղադրանքում խոսվում էր հենց այդ կառույցների միջոցով «հանցավոր» գործունեություն ծավալելու մասին: Դատարանը ՀՅԴ-ին մեղադրում էր հիմնականում «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը խախտելու համար[324]: Դրանից հետո փակվեցին կուսակցության գրասենյակները Հայաստանում, կասեցվեց մամուլի օրգանների աշխատանքը, և բռնագրավվեց գույքը: Հանրապետության մի շարք քաղաքներում տարբեր մեղադրանքներով ձերբակալվեցին կուսակցության

---

[322] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին», «ՀՀ ԳԽ տեղեկագիր», N23-24, 1994:

[323] Նույն տեղում:

[324] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 50:

բազմաթիվ անդամներ («Դրոյի գործը», «Երեսունմեկի գործը»), դատապարտվեցին կուսակցության ղեկավար գործիչներ[325]:

ՀՀ-ում կուսակցական կառույցի նկատմամբ հալածանքները բուռն բողոք և հակազդեցություն առաջացրին ՀՅԴ համաֆյուռքյան կառույցում, որը հատուկ հայտարարությամբ պահանջում էր անհապաղ չեղյալ հայտարարել նշված որոշումները[326]: Միևնույն ժամանակ ՀՅԴ բյուրոն հայտարարեց, որ նման իրավիճակը չպետք է ազդի կուսակցության ու համակիրների կողմից Հայաստանին տրամադրվող աջակցության, առավել ևս կուսակցության՝ Արցախին զորավիգ կանգնելու առաքելության վրա[327]:

ՀՅԴ բյուրոն, կենտրոնական և առանձին կոմիտեների ներկայացուցիչների մասնակցությամբ 1995 թ. հունվարի 5-6-ը ժողով գումարելով և քննելով ՀՀ նախագահի՝ կուսակցությունը ապօրինի հռչակելու և ՀՅԴ հայաստանյան գործունեությունը արգելելու 1994 թ. դեկտեմբերի 28-ի հրամանագիրը ու դրա հետևանքով հայ իրականության մեջ ստեղծված ազգային-քաղաքական ծանր կացությունը, հաստատեց ՀՅԴ բյուրոյի հունվարի 6-ի հայտարարությունը, որով դեկտեմբերի 28-ի հրամանագիրը համարեց ապօրինի ու հակաժողովրդավարական՝ պահանջելով ՀՀ նախագահից չեղյալ համարել այն՝ որպես երաշխիք Հայաստանի՝ իրավական ու ժողովրդավարական կարգերը հարգելու ու պաշտպանելու պարտավորության[328]: Այնուհետև ՀՅԴ-ն ՀՀ իշխանություններից պահանջեց անմիջապես դադարեցնել կուսակցությանը վարկաբեկելու պետական քարոզչու-

---

[325] Տե՛ս Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 155:
[326] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 21:
[327] Տե՛ս նույն տեղում, էջ 22:
[328] Տե՛ս «Հայրենիք», 12 հունվարի, 1995, նաև «Հորիզոն», 16 հունվարի, 1995:

թյունը, իսկ ՀՀ նախագահից՝ հարգել Հայաստանի անկախության հռչակագրով, օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով իր ստանձնած պարտավորությունները, մարդու իրավունքներն ու ժողովրդավարական ազատությունները, միաժամանակ երաշխավորել դաշնակցական ձերբակալված ընկերների անհապաղ և արդար դատաքննության արժանանալու իրավունքը և վերջ տալ նրանց դեմ կիրառվող վարկաբեկման ապօրինի քարոզչությանը: Կուսակցությունը նաև վերահաստատեց հայրենի հողի վրա հայ ժողովրդին ծառայելու իր առաքելությունը շարունակելու վճռականությունը[329]:

Հայաստանում ժողովրդավարական սկզբունքների և մարդու իրավունքների ոտնահարման, ՀՅԴ-ի, «Հայ օգնության միության», Համազգայինի, «Հայ մարմնակրթական ընդհանուր միության», «ՀՅԴ երիտասարդական միության» և մամուլի գործունեության «խափանման» որոշման դեմ հանդես եկավ սփյուռքահայությունը, տեղի ունեցան ժողովրդական հավաքներ: ՀՅԴ գործունեության կասեցման հրամանագրի դեմ բողոքելու համար ՀՅԴ կենտրոնական կոմիտեն 1995 թ. հունվարի 8-ին Փասադենայում (ԱՄՆ) կազմակերպեց բողոքի համաժողովրդական հավաք, որին մասնակցեց շուրջ 4000 մարդ[330]: Նույն օրը ՀՅԴ բյուրոն ընդունեց հայտարարություն, որում դատապարտվում էր ՀՀ նախագահի հակաօրինական հրամանագիրը՝ որպես «Հայաստանի ու արտերկրի հայութիւնը տարբերելու և ընդհանրապէս հայութիւնը երկփեղկելու վարքագիծին իբրեւ նոր արտահայտութիւն»[331]: Նույն հայտարարությամբ ՀՅԴ-ն որոշեց կասեց-

---

[329] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 21:
[330] Տե՛ս «Փարոս», 15 հունվարի, 1995:
[331] Տե՛ս ՀՅԴ Բիւրօ, Յայտարարութիւն, «Արմենիա», 1995, բացառիկ թիւ, յունուար:

նել Հայաստանի իշխանությունների սփյուռքյան նախաձեռնություններին առնչվող գործողությունը բոլոր մակարդակների վրա, մասնակցությունը «Հայաստան» համահայկական հիմնադրամի աշխատանքներին, նյութական և բարոյական օժանդակությունները Հայաստանի դեսպանատներին և ներկայացուցչություններին մինչև Հայաստանում ՀՅԴ-ի գործունեության դեմ իրականացված արգելքի վերացումը: Սակայն Արցախին սատարելու հարցում ՀՅԴ-ն մնաց իր սկզբունքներին հավատարիմ: «Հայաստանի իշխանութիւններու հետ գործակցութեան այս առկախումները արգելք պիտի չըլլան, որ Հ.Յ. Դաշնակցութիւնը և իր գործակից ու համակիր զանգուածները շարունակեն Հայաստանի և Արցախի ժողովրդին հասցնել իրենց բարեսիրական ու մարդասիրական օժանդակութիւնները և զորավիգ կանգնել Արցախի ազատագրական արդար պայքարին»[332],– նշվում էր ՀՅԴ բյուրոյի հայտարարության մեջ:

Այնուամենայնիվ, ՀՅԴ բյուրոն որոշ փորձեր կատարեց վիճակը շտկելու համար: Կասեցման որոշումից հետո նա դիմեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին. «1995 թ. հունվարից վեց ամիս ժամկետով կասեցվել է ՀՅԴ գործունեությունը Հայաստանում: ՀՅԴ Բյուրոն դիմում է նախագահին, որպեսզի նա թույլ տա առաջիկա ամիսներին Հայաստանում անցկացնել կուսակցության 26-րդ Ընդհանուր ժողովը և դրան բոլոր պատվիրակների ու հրավիրյալների մասնակցության հնարավորություններ ստեղծելը»[333]: Սակայն խնդիրը լուծում չգտավ, և ՀՅԴ ընդհանուր ժողովն ի վերջո գումարվեց Լիբանանում:

---

[332] Տե՛ս ՀՅԴ Բիւրօ, Յայտարարութիւն, «Արմենիա», 1995, բացառիկ թիւ, յունուար:

[333] «Հետահայաց. Սեպտեմբեր», «Ազգային գաղափար», 2008, N 6:

Հետագայում Լ. Տեր-Պետրոսյանը նշում էր, որ ՀՅԴ-ին վեց ամիս ժամանակ է տրվել՝ կուսակցության գործունեությունը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու համար[334]: Ըստ նրա՝ «հարցը շատ պարզ էր. ըստ մեր օրենքի՝ կուսակցությունների ղեկավարությունը չի կարող կազմված լինել օտարերկրացիներից: Դաշնակցության ղեկավար մարմինների՝ բյուրոյի և համագումարի մեծ մասը սփյուռքահայեր էին: Սա էր խնդիրը...»[335]:

ՀՀ նախագահի վերոհիշյալ հրամանագրի պատճառով ՀՅԴ-ն չմասնակցեց 1995 թ. տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններին: Կուսակցության անդամներին միայն մեկը տեղ գտավ առաջին գումարման Ազգային ժողովում մեծամասնական ընտրակարգով:

1996 թ. նախագահական ընտրություններում ՀՅԴ-ն ակտիվ մասնակցություն ունեցավ՝ մաս կազմելով նախագահի թեկնածու Վ. Մանուկյանի շուրջ ձևավորված դաշինքին[336]:

ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո (1998 թ. փետրվարի 3) իշխանությունների կողմից կուսակցության գործունեության հետագա արգելումը դարձավ անիմաստ: Պատահական չէ, որ վարչապետ Ռ. Քոչարյանի ՀՀ նախագահի պաշտոնակատար դառնալուց մի քանի օր անց ՀՀ արդարադատության նախարարության կոլեգիայի 1998 թ. փետրվարի 9-ի որոշմամբ պաշտոնապես վերականգնվեց ՀՅԴ-ի գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում, կարճվեցին քրեական գործերը ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի անդամնե-

---

[334] Տե՛ս «Ինչո՞ւ է Տեր-Պետրոսյանը կասեցրել ՀՅԴ-ն», ttp://a1plus.am/22112.html:
[335] Նույն տեղում:
[336] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 272:

րի նկատմամբ, վերսկսվեց կուսակցության թերթերի հրատարակումը[337]:

1998 թ. ձմռան-գարնան ամիսներին վերականգնվեցին Դաշնակցության բոլոր իրավունքները. կուսակցությունը կրկին ակտիվորեն ներգրավվեց Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում՝ մասնակցելով նախագահական ընտրություններին, և 1998-ի ապրիլին՝ ՀՀ նախագահ ընտրվելուց հետո, Ռ. Քոչարյանը չեղյալ հայտարարեց Լ. Տեր-Պետրոսյանի՝ 1994 թ. դեկտեմբերի 28-ի հրամանագիրը՝ ՀՅԴ-ի գործունեությունը ժամանակավորապես կասեցնելու մասին: Ավելին՝ նույն կուսակցության երկու անդամներ նոր կառավարությունում զբաղեցրին նախարարական պաշտոններ, ևս մեկը նշանակվեց մարզպետ, իսկ Վ. Հովհաննիսյանը ստանձնեց նախագահի խորհրդականի պաշտոնը: Իր հերթին՝ ՀՅԴ-ն դարձավ նախագահի հավատարիմ դաշնակիցը և պաշտպանեց նրա թեկնածությունը հաջորդ նախագահական ընտրություններում[338]: Դրանով սկիզբ դրվեց ՀՀ քաղաքական համակարգին ՀՅԴ-ի ինտեգրման նոր փուլին: Վերջինիս կարևորագույն գրավականն այն էր, որ 2000 թ. կուսակցությունն ի վերջո իրականացրեց «Դեպի երկիր» կարգախոսը, ու 28-րդ ընդհանուր ժողովի որոշմամբ կենտրոնակայանը տեղափոխեց հայրենիք:

1999 թ. երկրորդ գումարման Ազգային ժողովի ընտրություններում ՀՅԴ-ն ստացավ 8 պատգամավորական տեղ[339]:

---

[337] Տե՛ս Мелконян Э., Политические партии диаспоры и процессы демкократизации в Армении,- “Диаспора, нефть и розы”, Чем живут страны Южного Кавказа (под редакцией Ивлиана Хаиндравы и Александра Искандаряна), Фоид Генриха Белля и Кавказский институт СМИ, Е., 2005, с. 112:

[338] Տե՛ս նույն տեղում, էջ 113-114:

[339] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 286-288:

Երրորդ գումարման Ազգային ժողովում (2003-2007 թթ.) ՀՅԴ-ն ուներ 11, չորրորդում (2007-2012 թթ.)՝ 16, իսկ հինգերորդում (2012 թվականից)՝ 5 պատգամավոր[340]:

ՀՅԴ-ի ներկայացուցիչները 1998 թ. ի վեր քաղաքական գործակցության տարբեր ձևաչափերի շրջանակներում (կոալիցիա, համագործակցություն) զբաղեցրել են նախարարական պաշտոններ (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի (2003-2009 թթ.), առողջապահության (2003-2007 թթ.), կրթության և գիտության (1998-1999, 2001-2003, 2006-2009 թթ. և 2016 թվականից), գյուղատնտեսության (2003-2009 թթ.), էկոնոմիկայի (2016 թ. և 2018 թ.), բնապահպանության (2016 թվականից), տարածքային կառավարման և զարգացման նախարարություններ (2016 թվականից))[341]:

ՀՅԴ-ի հետ հարաբերությունների կարգավորումը ՀՀ իշխանություններին հնարավորություն տվեց բարելավելու հարաբերությունները Սփյուռքի հետ:

ՀՅԴ-ն բազմաթիվ երկրներում գործող իր կառույցներով Սփյուռքում հասարակական-քաղաքական որոշիչ ուժ է, ինչպես նաև իր ներկայացուցիչներն ունի միջազգային տարբեր կազմակերպություններում: Նրա հովանավորությամբ են գործում «Հայ օգնության միությունը», «Համազգային մշակութային միությունը», «Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը», ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպություններ, ինչպես նաև բազմաթիվ դպրոցներ, մարզական ու մշակութային ակումբներ և այլն[342]:

---

[340] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 526-527:
[341] Տե՛ս նույն տեղում, էջ 525, 530:
[342] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 163-171:

Արցախյան հիմնահարցը դիտարկելով որպես ազգային-ազգատագրական պայքարի արտահայտություն՝ ՀՅԴ-ն հակամարտության սկզբից ևեթ իր բոլոր միջոցներն ուղղեց հայկական պատմական տարածքի ազատագրությանը ու արցախահայության պաշտպանությանը: Կուսակցությունն Արցախի վերջնական կարգավիճակը համարում է վերամիավորումը Հայաստանի Հանրապետության հետ:

Դաշնակցության ծրագրի համաձայն՝ «Հայկական հարցի» խնդիրներից էին 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դրա հետևանքների վերացման և հայ ժողովրդի պատճառած վնասի փոխհատուցման հարցերը, որոնք՝ որպես միջազգային իրավունքի բաղկացուցիչներ, պետք է բարձրացներ այժմյան Հայաստանը[343]:

Հայաստան-Սփյուռք հարաբերություններում կուսակցության նպատակը Սփյուռքի տարագիր հայության համախմբումն էր իր պատմական հայրենիքում և ծրագրավորված ու փոխլրացնող գործընթացով Հայաստանի և Սփյուռքի հզորացումը: Որպես համայն հայության հայրենիք՝ Հայաստանը պետք է կրեր նաև պատասխանատվություն սփյուռքահայության հանդեպ:

Այսպիսով՝ ՀՅԴ-ի առաջնահերթ ծրագրերը 1990-ական թթ. ունեին հիմնականում չորս ուղղություն[344]:

Առաջինը քաղաքական ուղղությունն էր՝ հայ ժողովրդի սփյուռքյան լոբբիի կազմակերպումը և համախմբված գործունեության ծավալումը: Այդ նպատակով ՀՅԴ-ի կողմից Հայ դատի հանձնախմբեր էին ձևավորվել գրեթե բոլոր հայկական համայնքներում: Հայ դատի կենտրոնական գրասենյակներ էին

---

[343] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 23:
[344] Տե՛ս նույն տեղում:

գործում ԱՄՆ-ում (Վաշինգտոն), Եվրոպայում (Բրյուսել), Լիբանանում (Բեյրութ) և Հայաստանում (Երևան): Համագործակցելով ՀՀ ԱԳՆ-ի հետ՝ Հայ դատի հանձնախմբերն ու գրասենյակները, հայ և օտար շրջանակների, կազմակերպությունների և ազդեցիկ անհատների օժանդակությամբ, ընդգրկված էին Հայոց ցեղասպանության ճանաչման, արցախյան հարցի խաղաղ կարգավորման բանակցությունների վրա հայանպաստ ճնշում իրականացնելու և ընդհանրապես ԼՂՀ-ին քաղաքական, տնտեսական ու ռազմավարական օժանդակություն ապահովելու, ՀՀ միջազգային վարկանիշի բարձրացման, հայրենի պետականության հզորացման և հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական հիմնահարցերի կարգավորումն ապահովելու գործում[345]:

ՀՅԴ ձեռնարկած աշխատանքների երկրորդ ուղղությունը հայրենիքի և Սփյուռքի մերձեցման հարցն էր, ինչն իրականացվում էր մամուլի և զանգվածային լրատվամիջոցների արդի հնարավորությունների առավելագույն օգտագործմամբ՝ հայկական «հավաքականությունների» միջև ինքնաճանաչման և փոխճանաչման նպատակով[346]:

ՀՅԴ նախաձեռնությունների շարքում առաջնահերթ էր երրորդ ուղղությունը, որի նպատակը, ՀՀ համապատասպան գերատեսչությունների հետ համագործակցելով, հայրենիք-Սփյուռք փոխօգնության կազմակերպումն ու ընդլայնումն էր: Հայրենիքի կրթական, գիտական և մշակութային հնարավորությունները նաև Սփյուռքի հայապահպանման ընդհանուր գործին ծառայեցնելու նպատակով ՀՅԴ համահայկական կառույցն ու նրա կազմակերպությունները հովանավորում էին հայրենի կրթօջախների

---

[345] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 24:
[346] Տե՛ս նույն տեղում:

և մշակութային հաստատությունների ուսումնական ծրագրերի և դասագրքերի հրատարակումը, գիտական-մշակութային սեմինարների կազմակերպումը, մշակույթի գործիչների և գեղաքրվեստական խմբերի շրջագայությունները և այլն[347]:

Դաշնակցությունը հայրենական արտադրության համար արտասահմանյան շուկաներ գտնելու և արտաքին ներդրումներ (ֆինանսական, տեխնոլոգիական) ապահովելու նպատակով հետամուտ էր հայրենի և սփյուռքյան գործարար շրջանակների միջև համագործակցության ու միացյալ նախաձեռնությունների ընդլայնմանը, նաև հայրենիքի և Սփյուռքի միջև գործընկերային կապեր ստեղծելուն:

Չորրորդ ուղղությունը կազմում էին նոր սերնդի աշխուժացմանը և համահայկական երիտասարդական շարժման ծավալմանը նպաստող նախաձեռնությունները: ՀՅԴ-ն և նրա կազմակերպությունները աշխատանք էին կատարում հայրենի և սփյուռքահայ երիտասարդության շփումները մեծացնելու, համագործակցության և մերձեցման հնարավորություններն ընդարձակելու ուղղությամբ: Այդ դեպքում նրա ծրագրային հենքն էր աշխարհացրիվ հայության համախմբումը[348]:

Հետխորհրդային ժամանակաշրջանը ԱՊՀ երկրների հայ համայնքների համար նշանավորվեց հասարակական և մշակութային վերածնունդով, որը պայմանավորված էր, մի կողմից, այս երկրների ժողովրդավարացման գործընթանցներով, մյուս կողմից՝ Արցախյան շարժման ազգային վերելքով և Հայաստանի անկախության հռչակումով[349]: Թեև ԱՊՀ երկրներում հիմնա-

---

[347] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 24:
[348] Տե՛ս նույն տեղում:
[349] Տե՛ս նույն տեղում:

դրվել էին հայկական կազմակերպություններ, կրոնական համայնքներ ու դպրոցներ, սակայն դրանք դեռ գտնվում էին կազմավորման, զարգացման և ազգային ավանդույթների վերականգնման փուլում: Հայկական համայնքները ինքնակազմակերպման ցանկալի աստիճանի հասցնելու, նրանց միջև արդյունավետ համագործակցություն հաստատելու հնարավորություններն իրագործելու համար ՀՅԴ-ն նախաձեռնեց համայնքների կազմակերպման մնայուն հիմքերի ստեղծման ու ամրապնդման ծրագրեր: Իր կառույցների՝ ՀՅԴ բյուրոյի Մոսկվայի Հայ դատի գրասենյակի, ՀՅԴ «Միտք» երիտասարդական միության կողմից իրականացվում էին համայնքային, հասարակական, մշակութային կազմակերպությունների ձևավորման, դրանցում առկա ներուժի համախմբման, գործող կրթական հաստատությունների գործունեության բարելավման, նորերի հիմնադրման գործնական աշխատանքներ[350]: Կարևորելով պետության դերը հայկական ներուժի համախմբման գործում՝ ՀՅԴ-ն նպաստում էր հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացմանն ուղղված պետական ծրագրերում ԱՊՀ համայնքների ներգրավմանն ու գործուն մասնակցությանը:

2000 թ. փետրվարին կայացած ՀՅԴ 28-րդ ընդհանուր ժողովը հաստատեց, որ կուսակցությունը շարունակում է հավատարիմ մնալ իր որդեգրած քաղաքականությանը՝ ռազմավարական առաջնահերթ նպատակ համարելով ՀՀ և ԼՂՀ պետականությունների ամրապնդումը, Հայոց ցեղասպանության և հողային պահանջատիրության խնդիրները, նաև նոր ստեղծվող համայնքների (ԱՊՀ երկրներում) կազմակերպմանն աջակցելը:

---

[350] Տե՛ս Հայ Յեղափոխական Դաշնակցություն: Հարցեր ՀՅ Դաշնակցությանը, 2 (առանց տեղի և տարեթվի), էջ 58:

Ընդհանուր ժողովը որոշեց բյուրոյի կենտրոնական գրասենյակը Լիբանանից տեղափոխել Հայաստան[351]:

ՀՅԴ-ի քաղաքական դիրքորոշման մեջ չափազանց կարևոր էր երկու հանգամանք՝ շարունակվող հակամարտությունը Ադրբեջանի հետ, Արցախի խնդրի լուծումը և ՀՀ իշխանությունների քաղաքականությունը միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանությանը ճանաչելու և դատապարտելու ուղղությամբ: Վերջինս որոշակիորեն ազդեցություն ունեցավ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների վրա:

Դեռևս 1990 թ. օգոստոսի 23-ի Հայաստանի անկախության հռչակագրում նշվում էր. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թ. Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում»[352]: Հայաստանի երրորդ հանրապետության բոլոր նախագահները հետևողականորեն ձգտեցին իրագործել հռչակագրի վերոհիշյալ դրույթը, թեև տարբեր շեշտադրումներով: Ցեղասպանության ճանաչման հարցը, ինչպես հայտնի է, ուղղակիորեն առնչվում է հայ-թուրքական հարաբերություններին: Թուրքիան, 1993 թ. ապրիլին փակելով իր սահմանը Հայաստանի հետ, հետագա տարիներին փորձել և փորձում է տնտեսական ճնշման միջոցով ստիպել Հայաստանին զիջումների գնալ թե՛ Հայոց ցեղասպանության ճանաչման և թե՛ ղարաբաղյան հակամարտության հարցում: Հայաստանն իր հերթին ձգտում է միջնորդավորված՝ Բրյուսելի և Վաշինգտոնի միջոցով ստիպել Թուրքիային, որ նա փոխի իր դիրքորոշումը և բացի սահմանը: Դրա հետ մեկտեղ, սկսած 1990-ականների վերջից, Հայաստա-

---

[351] Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 25:
[352] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 116:

նի համար Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը դարձավ կարևոր, եթե ոչ միակ, ազդու միջոցը, որը կստիպի Թուրքիային հրաժարվելու նշված նախապայմաններից: Ավելին՝ Ռ. Քոչարյանի օրոք Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը ընդգրկվեց Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում՝ որպես առաջնահերթ խնդիրներից մեկը[353]:

Սփյուռքի համար դա ուներ առանձնահատուկ կարևորություն, քանի որ մինչ այդ տասնամյակներ շարունակ նա միայնակ էր հետապնդում համազգային նշանակություն ունեցող այդ նպատակը: Այժմ Սփյուռքը Հայաստանի Հանրապետության հետ համագործակցության շնորհիվ հնարավորություն էր ստանում նորովի և առավել արդյունավետորեն օգտագործելու իր քաղաքական ազդեցությունը, իր լոբբիստական կազմակերպությունների, հատկապես ՀՅԴ-ի Հայ դատի հանձնախմբերի կարողությունները տարբեր երկրներում: Հենց այդ տարիներին՝ 1997-2010 թթ., շուրջ 20 երկրների խորհրդարաններ ընդունեցին հատուկ որոշումներ 1915 թ. Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության ճանաչման և դատապարտման մասին[354]:

2008 թ. փետրվարին կայացած նախագահական ընտրություններից հետո նախագահ դարձավ Սերժ Սարգսյանը՝ մինչ այդ երկրի վարչապետը, Ռ. Քոչարյանի համախոհն ու երկար տարիների հավատարիմ գործընկերը: Առավել կարևորվեցին նրա նախաձեռնությունները հայ թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ:

---

[353] Տե՛ս Մելքոնյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, էջ 118:
[354] Տե՛ս նույն տեղում:

2008 թ. հունիսի 25-ին՝ Մոսկվայում ՌԴ հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ, ՀՀ նախագահը հայտարարեց, որ Հայաստանը մտադիր է բարելավել հարաբերությունները Թուրքիայի հետ, և ինքը պատրաստվում է Թուրքիայի նախագահին հրավիրել Երևան[355]: Այդ հայտարարությամբ սկզբից դրվեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին: ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը Թուրքիայի նախագահը Աբդուլահ Գյուլին 2008 թ. սեպտեմբերին 6-ին հրավիրեց Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլային հավաքականների հանդիպմանը, իսկ հաջորդ տարի՝ 2009 թ. հոկտեմբերին, նա հրավիրվեց Թուրքիա՝ պատասխան խաղը դիտելու[356]: ՀՀ նախագահի նախաձեռնությունը միջազգային հանրության կողմից անվանվեց «ֆուտբոլային դիվանագիտություն»:

2009 թ. ապրիլի 22-ին Հայաստանի, Թուրքիայի և Շվեյցարիայի արտաքին գործերի նախարարները հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման «ճանապարհային քարտեզ» համաձայնեցման մասին: Իսկ օգոստոսի 31-ին հրապարակվեցին երկու նախաստորագրված արձանագրությունները՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և երկկողմ հարաբերությունների զարգացման մասին[357]: Հայաստանում և Սփյուռքում այս փաստաթղթերը, ինչպես հայտնի է, տարբեր կերպ մեկնաբանվեցին: Այստեղ հատկապես կարևոր է նշել սփյուռքահայերի արձագան-

---

[355] Տե՛ս Գեղամյան Վ., Հայ-թուրքական հարաբերությունները 2008-2010 թթ. (հետահայաց, ամփոփում), էջ 11:

[356] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «ՀՀ արտաքին քաղաքական գործունեության 2008 թ. ամփոփում», թ. 6:

[357] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «ՀՀ արտաքին քաղաքական գործունեության 2009 թ. ամփոփումը», թ. 10:

քը: Ընդհանուր առմամբ այն եղավ բացասական. նրանք համարեցին, որ արձանագրությունները ոտնահարում են Հայոց ցեղասպանության զոհերի և նրանց ժառանգների իրավունքները, հակասում են հայ ժողովրդի ազգային շահերին և չեն կարող արդարացվել քաղաքական ու տնտեսական ինչ-ինչ շահերով: Ստեղծված իրավիճակում երկրի նախագահը Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը պարզաբանելու նպատակով ուղևորվեց արտասահման և հանդիպումներ ունեցավ Բեյրութի, Փարիզի, Նյու Յորքի, Լոս Անջելեսի և Դոնի Ռոստովի հայ համայնքների հետ: Հանդիպումները անցան լարված մթնոլորտում, իսկ Փարիզում տեղի ոստիկանությունը նույնիսկ ստիպված եղավ ուժ գործադրել հայ ցուցարարներին ցրելու համար: Դա աննախադեպ մի երևույթ էր. ՀՀ իշխանությունների արտաքին քաղաքականության դեմ, այն էլ արտասահմանում, հրապարակավ հանդես էին գալիս քաղաքական տարբեր կողմնորոշումներ, տարբեր տարիքի սոցիալական տարբեր կարգավիճակ ունեցող սփյուռքահայեր[358]:

Չնայած այս ամենին՝ հայ-թուրքական արձանագրությունները պաշտոնապես ստորագրվեցին նույն տարվա հոկտեմբերի 10-ին, ու թեև վավերացումը երկու երկրների խորհրդարանների կողմից դադարեցված է, նրանց բացասական ազդեցությունը Հայաստան-Սփյուռք քաղաքական հարաբերությունների վրա ակնհայտ է: Ինչպես 1919 թ., այնպես էլ 902 տարի անց Հայկական հարցի խնդիրն ի հայտ բերեց սկզբունքորեն տարբեր մո-

[358] Մելքոնյան Է., Հայաստանի երրորդ հանրապետություն և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, էջ 120:

տեցումներ մի կողմից Հայաստանի իշխանությունների, մյուս կողմից՝ Սփյուռքի հայության միջև[359]:

Հայ-թուրքական արձանագրությունները երկրի ներսում ունեցան մեկ այլ կարևոր հետևանք ևս: ՀՅԴ-ն, հետևելով սփյուռքյան գործընկերների օրինակին, թե՛ իր անհամաձայնությունը հայտնեց վերին իշխանության քաղաքականությանը ու դուրս եկավ քաղաքական կոալիցիայից, թե՛ այդուհետ ձգտեց հանդես գալ ընդդիմադրի վաղուց մոռացված դերում[360]:

Համաշխարհային պատմության փորձը վկայում է, որ որևէ պետության ղեկավարություն, ի տարբերություն արտասահմանում ապրող հայրենակիցների առաջնորդների, անհրաժեշտաբար ստիպված է լինում նման հարցերը դիտարկել իր արտաքին հարաբերությունների համատեքստում: Այլ հարց է, թե որքանով և ինչպես է հաջողվում համատեղել ազգային նպատակները և միջազգային իրողությունները: ՀՀ ղեկավարության համար Սփյուռքի նման արձագանքը, ըստ ամենայնի, եղավ անսպասելի: Հատկապես մտահոգիչ էր, այն, որ այս անգամ Սփյուռքում անվստահության մթնոլորտ էր ձևավորվում ՀՀ իշխանությունների հանդեպ՝ կապված համազգային այնպիսի կարևոր խնդրի հետ, ինչպիսին Հայկական հարցն է[361]:

Արձանագրությունները ուժի մեջ պետք է մտնեին միայն երկու երկրների խորհրդարանների կողմից վավերացնելուց հետո: Թուրքիայի խորհրդարանն անհարկի ձգձգումներով չէր վավերացնում արձանագրությունները, իսկ երկրի ղեկավարները հանդես էին գալիս նախապայմանների մասին հայտարարու-

---

[359] Տե՛ս Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 120:
[360] Տե՛ս նույն տեղում, էջ 120-121:
[361] Տե՛ս նույն տեղում:

թյուններով: Ելնելով իրավունքից՝ ՀՀ նախագահը 2010 թ. ապրիլի 22-ի հրամանագրով կասեցրեց արձանագրությունների վավերացման գործընթացը: Հիմնական պատճառն այն էր, որ թուրքական կողմը հրաժարվում էր առանց նախապայմանների, խելամիտ ժամկետում արձանագրությունները վավերացնելու պարտավորություններից՝ խնդիրը կապելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն - Ադրբեջան հակամարտության և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի հետ: 2015 թ. ապրիլին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը վերջնականապես ետ կանչեց արձանագրությունները ՀՀ Ազգային ժողովից:

Նման դժվարին պայմաններում տեղի ունեցավ համասփյուռքյան քաղաքական կազմակերպությունների ինտեգրումը ՀՀ քաղաքական համակարգին: Այդ բոլորը զգալիորեն ազդեցին Հայաստան-Սփյուռք հարաբերությունների վրա, իսկ հեռանկարում առաջ եկան փոխընկալման և փոխվստահության երկկողմանի կարծրատիպեր, որոնք մինչ այժմ մասամբ չեն հաղթահարվել:

Այսպիսով՝ հայ ավանդական ազգային-քաղաքական կուսակցությունները 1990-2000-ական թթ. ավելի ընդլայնեցին իրենց համահայկական գործունեությունը՝ հետևողական պայքար ծավալելով հայ ազգային ինքնության պահպանման, հայոց պետականության ամրապնդման, Լեռնային Ղարաբաղի հայության ինքնորոշման, Հայ դատի, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ: Չնայած գաղափարական և գործունեության ձևերի որոշ տարբերություններին՝ սկզբունքային և համազգային նշանակություն ունեցող հարցերում կու-

սակցությունները դրսևորում էին միասնական մոտեցում և անգամ հանդես էին գալիս համատեղ հայտարարություններով[362]:

Սփյուռքի բոլոր կազմակերպությունների գործունեության հիմնական ուղղություններից է Հայկական հարցի լուծումը: Այդ կազմակերպությունների երկարամյա և հետևողական գործունեությունը մեծապես նպաստել է մի շարք երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը:

1944 թ. Նյու Յորքում ՀՅԴ-ի կողմից հիմնված Հայ դատի հանձնախումբը (ՀԴՀ, Armenian National Committee) հասարակական աշխատանքային և կառավարման հարաբերությունների ազգային կառույց է, որը պաշտպանում է հայ ժողովրդի պահանջներն ու ազգային ձգտումները, ներկայացնում հայության տեսակետները բոլոր մակարդակներով՝ իր գլխավոր խնդիրը համարելով հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների վերականգնումը[363]: Ըստ հանձնախմբի կանոնադրության՝ «Հայ դատը», լայն առումով՝ «Հայկական հարցը», ունի քաղաքական. տարածքային, բարոյական, սոցիալ-տնտեսական և իրավական հայեցակետեր: ՀԴՀ-ն գտնում էր, որ Արևմտյան Հայաստանն ու Արևելյան Հայաստանը պետք է միավորվեն մեկ միացյալ հայկական պետության մեջ, որն ընդգրկելու էր նաև հայկական այն տարածքները, որոնք խորհրդային իշխանության օրոք արհեստականորեն անջատվել էին ներկայիս Հայաստանից: Հայկական հարցի լուծումը դիտվում էր ոչ միայն որպես հատուցում ցեղասպանության կամ հայերի կորուստների դիմաց, այլ նաև են-

---

[362] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 571:
[363] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 667:

թադրում էր ազատ և ժողովրդավարական պետության ստեղծում[364]:

ՀԴՀ տեղական կազմակերպությունները գործում էին նաև Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում, իսկ 1991 թվականից՝ Երևանում և Մոսկվայում: Եվրոպայում, հատկապես Ֆրանսիայում և Գերմանիայում գործող հանձնախմբերի գործունեության շնորհիվ Եվրախորհրդարանը 1987 թ. հունիսի 18-ին ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձև[365]:

ՀԴՀ-ի քաղաքական գործողությունների և կառավարական կապերի բաժինը օժանդակում էր ցեղասպանությունը դատապարտող օրենսդրական ակտերի ստեղծմանը, ինչպես նաև տեղական, դաշնային և միջազգային մակարդակներով ուշադրություն էր հրավիրում հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի խախտումների վրա: ՀԴՀ-ի շնորհիվ ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատը 1984 թ. ընդունեց բանաձև՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ, իսկ 1989 թ. Սենատը ընդունեց հանձնարարական՝ Լեռնային Ղարաբաղի մասին: Կալիֆոռնիայում նահանգային իշխանությունների որոշմամբ 1990 թվականից ապրիլի 24-ը համարվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր, բացի այդ՝ նահանգի հանրային դպրոցներում ընդգրկվեցին Հայոց ցեղասպանության մասին դասընթացներ, իսկ դպրոցների համար կազմվեց «Հայ դատ» դասագիրքը և այլն[366]: Հանձնախումբը դատապարտող ցույցեր և այլ միջոցառումներ էր կազմակերպում Թուրքիայի ու Ադրբեջանի դեմ, ֆինանսավո-

---

[364] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 27:
[365] Տե՛ս նույն տեղում:
[366] Տե՛ս նույն տեղում:

րում էր ցեղասպանության մասին կինոֆիլմերի արտադրությունը և այլն: Հանձնախմբին կից գործող հետազոտական կենտրոնը ուսումնասիրում և վերլուծում էր իրադրությունը Հայաստանում, ԱՊՀ երկրներում և Թուրքիայում, լույս էր ընծայում Հայոց ցեղասպանությանը, Արցախի և Ադրբեջանի իրադրությանը վերաբերող աշխատություններ:

ՀԴՀ-ի լոբբիստական գործունեության կարևոր ուղղություններից էին ԱՄՆ-ի բյուջեում Հայաստանի և Արցախի համար տնտեսական և ռազմական օժանդակության, նաև ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ Հայաստանի Հանրապետության նկատմամբ դրական դիրքորոշման ապահովումը և Թուրքիայի հակահայկական քարոզչության չեզոքացումը[367]:

Հայ դատի կենտրոնական հանձնախմբի հետևողական աշխատանքի շնորհիվ 1991 թ. մարտի 14-ին Եվրոպական խորհրդարանը որոշում ընդունեց Արցախի Հայաստանի շրջափակման մասին[368]: Նկատի ունենալով, որ «Ադրբեջանից 300 հազար հայ փախստականները (Բաքվի և Սումգայիթի սպանդներ) Հայաստանում ապրում էին ծայրահեղ աղքատության մեջ, էներգիայի և մանավանդ գազի տագնապը, որից տառապում էր Հայաստանի Հանրապետությունը շրջափակման պատճառով, սույն հանրապետությունում հարուցում էր մեծ անպատեհություններ (գործարանների փակում, գործազրկություն), ինչպես նաև երկրաշարժն ու հայերի սպանդը Ադրբեջանում, որոնք ի հայտ էին բերել թվով 500 հազար և շատ ծանր պայմաններում ապրող մի բնակչություն»[369], սույն բանաձևը կոչ էր անում Խորհրդային

---

[367] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 28:
[368] Տե՛ս «Հայրենիքի ձայն», 20 մարտի, 1991:
[369] Տե՛ս նույն տեղում:

Միության նախագահ Մ. Գորբաչովին շատ արագ գործնական քայլեր ձեռնարկել Հայաստանի Հանրապետության և Ղարաբաղի շրջափակումը վերացնելու, Ղարաբաղի և մերձակա շրջանների հայ բնակչության հանդեպ հալածանքները դադարեցնելու, նաև Լեռնային Ղարաբաղի օրինական, սահմանադրական իշխանությունները վերականգնելու ուղղությամբ:

Արևմտյան Ամերիկայի ՀՅԴ Հայ դատի հանձնախմբի շնորհիվ Ադրբեջանին ԱՄՆ-ի օժանդակությունը արգելող բանաձևը վերացնելուն ուղղված նախագահ Քլինթոնի վարչակազմի փորձին ամերիկահայերը 1994 թ. հակազդեցին հազարավոր հեռագրեր ուղղելով Վաշինգտոն, որոնք հիշեցնում էին, որ այդ բանաձևի վերացումը մեծապես կվնասի Կալիֆոռնիայի հայերի շրջանում ԱՄՆ նախագահի վայելած ժողովրդականությանը[370]:

1998 թ. ապրիլի 18-ին Փարիզի Սորբոնի համալսարանում ավարտվեց Հայ դատի Ֆրանսիայի հանձնախմբի կազմակերպած Հայոց ցեղասպանությանը նվիրված միջազգային գիտաժողովը, որտեղ ի հայտ եկան արխիվային նոր փաստաթղթեր Հայոց ցեղասպանության մասին[371]: ՀԴՀ-ն Հայոց ցեղասպանությանը նվիրված միջազգային գիտաժողով կազմակերպեց նաև Ֆրանսիայում 2000 թ.:

2001 թ. հիմնադրվեց Եվրոպայի տարբեր երկրներում գործող Հայ դատի հանձնախմբերի ներկայացուցչական մարմինը՝ Եվրամիության Հայ դատի հանձնախումբը, որը հայության շահերի և Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ աշ-

---

[370] Տե՛ս Արեւմտեան Ամերիկա, Աւելի քան 3000 հեռագիրներ յղուեցան Սպիտակ Տան եւ դեմոկրատ ղեկավարներուն, «Արմենիա», 1994, N4, հունիս, էջ 13:
[371] Տե՛ս «Ազգ», 24 ապրիլի, 1998:

խատանքներ էր տանում հատկապես Եվրախորհրդարանում և Եվրոպական միության շրջանակում[372]:

2002 թվականից Հայաստանում գործում է ՀՅԴ բյուրոյի Հայ դատի և քաղաքական հարցերի գրասենյակը, որի պարտականությունն է համակարգել ՀՅԴ բյուրոյի և տարբեր պետություններում գործող Հայ դատի գրասենյակների ու հանձնախմբերի աշխատանքները, նպաստել ՀՅԴ բյուրոյի միջազգային հարաբերությունների զարգացմանը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, աջակցել Հայաստանի հիմնախնդիրների լուծմանը, Արցախի հարցի խաղաղ կարգավորմանը, Ջավախքի հայության իրավունքների պաշտպանությանը և այլն[373]:

Հայ-ամերիկյան քաղաքական գործողությունների հանձնաժողովն ակտիվ լոբբիստական գործունեություն է ծավալել Օսմանյան կայսրության կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության՝ Միացյալ Նահանգների կողմից ճանաչման վերաբերյալ բանաձևերի մշակման ու ընդունման գործում: Նման բանաձևերից էր նաև 2009 թ. մարտի 17-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում կոնգրեսականներ Ադամ Շիֆի, Ռադանովիչի, Փալոնեի, Քիրքի, Բերմանի, Քանտորի, ՄաքՔոթերի, Աքերմանի և մյուսների ներկայացրած 252-րդ բանաձևը Միացյալ Նահանգների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման մասին, որտեղ նրանք կոչ էին անում «ԱՄՆ նախագահին երաշխավորել, որ Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունն արտահայտում է համարժեք ըմբռնում մարդու իրավունքների հարցերի, էթնիկ զտումների և ցեղասպանության փաստաթղթերի վերաբերյալ հայերի դեմ իրականացված ցեղասպա-

---

[372] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 668:
[373] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 164:

նության համատեքստում, և որ ԱՄՆ նախագահն իր ամենայն ապրիլքսանչորսյան ուղերձում այդ իրադարձությունները պետք է որակի որպես ցեղասպանություն»[374]:

2001-2017 թթ. Միացյալ Նահանգներում գործող հայկական լոբբիստական խմբերն ու անհատ լոբբիստները հետևողական աջակցություն են ցուցաբերել երկրի օրենսդիր և գործադիր իշխանությունում հայության շահերին առնչվող այնպիսի հարցրում, ինչպիսիք են՝ Օսմանյան կայսրության կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, ԱՄՆ-ՀՀ, ԱՄՆ-ԼՂՀ հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը, ԱՄՆ կառավարության կողմից ՀՀ-ին ու ԼՂՀ-ին ցուցաբերվող ֆինանսական աջակցության հատկացման ապահովումը: Հայկական լոբբինգն ակտիվ գործունեություն է ծավալել Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական և քաղաքական շրջափակման վերացման, այդ համատեքստում ԱՄՆ կառավարության կողմից Ադրբեջանին ցուցաբերվող տարեկան ֆինանսական աջակցության սահմանափակման («Ազատության աջակցման մասին ակտի» 907-րդ բանաձև), Հայաստանի և Ադրբեջանի միջև ռազմական հավասարակշռությունը չխախտելու և արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի ուղղությամբ[375]:

«Ամերիկայի հայկական համագումար» (ԱՀՀ, Armenian Assembly of America) համաամերիկյան հայկական կազմակերպությունը հիմնադրվել է 1972 թ.: Կենտրոնը գտնվում էր Վաշինգտոնում, գրասենյակներ ուներ Լոս Անջելեսում, Երևանում և Ստեփանակերտում: ԱՀՀ-ի նպատակն էր համախմբել ամերի-

---

[374] Հայ համայնք ԱՄՆ-ում, Ե., 2010, էջ 127:
[375] Տե՛ս նույն տեղում, էջ 114:

կահայերին, սատարել ԱՄՆ-ում հայկական մշակույթի և ազգային ինքնագիտակցության զարգացմանը, հայկական հուշարձանների ու մշակութային արժեքների պահպանմանը, հավաստի տեղեկություններ տարածել հայ ժողովրդի պատմական, կրթական, կրոնական ու մշակութային կյանքի և ամերիկահայության մասին, պաշտպանել ամերիկահայերի շահերն ու իրավունքները: Այդ նպատակները իրագործելու համար ԱՀՀ-ի կողմից մշակվել էին կառավարական, իրավագիտական, հասարակական, համալսարանական, ուսանողական, գաղթականական և մի շարք այլ ծրագրեր[376]: Հակազդելով Հայոց ցեղասպանությունը հերքելու թուրքական կողմի բոլոր փորձերին՝ ԱՀՀ-ն պայքարում էր, որպեսզի ԱՄՆ-ի կառավարությունը ճանաչի հայերի ցեղասպանությունը: Այդ նպատակով ԱՀՀ-ն կազմակերպում էր Հայոց ցեղասպանության վերաբերյալ միջազգային գիտաժողովներ, հրապարակում և տարածում էր այդ թեմայով գիտական գրականություն: Ամերիկյան իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու նպատակով այն փորձում էր ազդել ԱՄՆ-ում հասարակական կարծիքի ձևավորման, ԱՄՆ օրենսդիր և գործադիր իշխանությունների վրա, ինչպես նաև ԱՄՆ-ի քաղաքական կյանքում բարձրացնում էր հայերի դերը՝ ամերիկահայերին ներգրավելով երկրի քաղաքական կյանքում[377]:

Ելնելով իր հիմնական ծրագրից, որի նպատակը ԱՄՆ-ի կառավարման գործընթացներին ամերիկահայության մասնակցության ապահովումն ու իշխանության օրենսդիր և գործադիր մարմիններում ամերիկահայերի շահերի պաշտպանությունն էր,

---

[376] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 29:
[377] Տե՛ս նույն տեղում, էջ 29-30:

ԱՀՀ-ն հետևում էր Կոնգրեսի և Սպիտակ տան գործունեությանը, ԱՄՆ-ի պաշտոնական շրջանակների դիրքորոշման վրա ներգործելու համար հավաքում ու տարածում էր անհրաժեշտ տեղեկություններ: ԱՀՀ-ն հենվում էր նաև ամերիկահայերի քաղաքական զանգվածային ակտիվության վրա՝ համակարգելով այդ ուղղությամբ տարվող հայկական մյուս կազմակերպությունների աշխատանքները: Զանգվածային ակտիվության դրսևորման ձևերից էր Կոնգրեսի հասցեով նամակների հոսքի ու հեռախոսազանգերի, բարձրաստիճան պաշտոնյաների հետ անմիջական հանդիպումների կազմակերպումը[378]:

Սփյուռքահայ կազմակերպություններից ԱՀՀ-ն առաջիններից էր, որին հաջողվեց երկրաշարժից անմիջապես հետո, մեծագույն դժվարություններ հաղթահարելով, մուտք գործել Խորհրդային Հայաստան և 1989 թ. փետրվարին Երևանում բացել գրասենյակ[379]: Մինչև 1988 թ. ԱՀՀ-ն հաղորդակցության օղակ էր ամորիկահայ համայնքների միջև, սատարում էր ամերիկահայերի մասնակցությունը ԱՄՆ-ի քաղաքական կյանքին:

Կազմակերպությունը մինչև օրս շարունակում է աջակցել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքին, արցախյան հիմնախնդրում թուրք-ադրբեջանական ագրեսիային ՀՀ դիմակայմանը: Ամերիկայի հայկական համագումարի և Միացյալ Նահանգներում հայության այլ լոբբիստական խմբերի՝ ԱՄՆ Կոնգրեսում իրականացված ակտիվ գործունեության արդյունքում Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական և քաղաքական շրջափակումը հակազդվեց առանձին օրենսդրության ամրագրմամբ, երբ ընդունվեցին Ազատության աջակցման ակտի

---

378 Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 29-30:

379 Տե՛ս նույն տեղում:

907-րդ բանաձևն ու Հումանիտար օգնության միջանցք ակտը[380]:

Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով 1997 թ. Ամերիկայի հայկական համագումարի շրջանակներում հիմնվեց Հայկական ազգային ինստիտուտը («ANI», Armenian National Institute): Ինստիտուտի գործունեությունը հիմնականում կենտրոնանում է հայերի դեմ իրագործված ցեղասպանության վերաբերյալ ճանաչողական, տեղեկատվական և կրթական հետազոտությունների, ցեղասպանության պատմական արխիվների (միջազգային փաստաթղթեր, պայմանագրեր և այլն) ուսումնասիրության ու ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին աջակցելու հարցերի շուրջ[381]:

1990-ական թթ. քաղաքական նոր իրադարձությունները բազմաթիվ լուրջ խնդիրներ դրեցին ամերիկահայության առջև: Ցեղասպանության հարցի միջազգային ճանաչմանն ուղղված ջանքերից բացի՝ վերջիններս ստիպված եղան ամերիկյան կառավարական շրջանակներում հետամուտ լինելու նոր հարցադրումների պարզաբանմանը (երկրաշարժ, Ղարաբաղյան շարժում, Հայաստանի անկախության գործընթաց): ԱՀՀ-ն ԱՄՆ-ի կառավարության օժանդակությունն ապահովելու համար բազմաթիվ դիմումներ հղեց ԱՄՆ-ի կառավարությանը՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ծանր վիճակի, Ադրբեջանի կող-

---

380 Տե՛ս Հայ համայնքն ԱՄՆ-ում, էջ 116:

381 Տե՛ս նույն տեղում:

մից Հայաստանի պարտադրված շրջափակման հարցերի վերաբերյալ[382]:

Հայաստանի անկախացումը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը հող ստեղծեցին զբաղվելու նաև Հայաստանի և Արցախի բնակչության բարօրության, անվտանգության և զարգացման խնդիրներով: Դրանք իրագործելու համար ԱՀՀ-ն որդեգրեց Հայոց ցեղասպանության ճանաչման, ԱՄՆ-ի Կոնգրեսում հայանպաստ ծրագրերի ու բանաձևերի ընդունման, ԼՂՀ-ին և Հայաստանի Հանրապետության տնտեսական ու մարդասիրական օգնություն տրամադրելու, Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման շուրջ հայանպաստ դիրքորոշում ապահովելու գործելակերպ: Բացի ԱՀՀ-ից՝ ԱՄՆ-ում այդ խնդիրներով զբաղվում էին նաև հայկական մյուս հաստատությունները՝ Հայկական ազգային կոմիտեն, Մարդու իրավունքների հայկական խորհուրդը, նաև ԱՄՆ-ի քաղաքական շրջանակների վրա մեծ ազդեցություն ունեցող առանձին հայտնի ազգային գործիչներ, որոնց համակարգված գործողությունների շնորհիվ Հայ դատին մեծապես օժանդակում էին բազմաթիվ ազդեցիկ օրենսդիրներ, որոնք անձնական սերտ կապեր ունեին հայերի հետ[383]:

ԱՀՀ-ն ակտիվ աշխատանք էր տանում հատկապես Հայոց ցեղասպանության բանաձևը ԱՄՆ Կոնգրեսի կողմից ընդունելու ուղղությամբ: «Հայկական Համագումարը պիտի շարունակէ յանձնառու մնալ Գոնկրէսի կողմէ Բանաձեւի վաւերացման, որ պիտի վերահաստատէ Հայկական Ցեղասպանութեան վերաբերյալ Միացեալ Նահանգներու վաւերագրութիւնը: Այդ եղած է եւ

---

[382] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 31:
[383] Տե՛ս նույն տեղում:

պիտի շարունակէ մնալ այս կազմակերպութեան առաջնահերթութիւններէն մէկը»[384],– նշել է ԱՀՀ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Հրայր Հովնանյանը:

ԱՀՀ-ն անհրաժեշտ էր համարում ԱՄՆ-ի կոնգրեսականների և պետական այլ գործիչների հետ անձնական շփումները: Երբ 1995 թ. Կոնգրեսում ստեղծվեց Հայկական հարցերի կոնգրեսական խումբը (60-ից ավելի կոնգրեսական), ԱՀՀ-ն սերտորեն համագործակցեց խմբի հետ՝ կազմակերպելով կոնգրեսականների այցեր Հայաստանի Հանրապետություն ու Արցախ, ինչպես նաև օգնեց նրանց ավելի եռանդուն ջանքեր գործադրել հայանպաստ օրինագծերի անցկացման հարցում[385]: Կոնգրեսականների այցերի նպատակն էր իրենց երկրի ներկայացուցիչների մոտ հայանպաստ կողմնորոշում ձևավորելը:

Կարևոր խնդիր համարելով թուրքական ու ադրբեջանական վարչակազմին, նաև հայության համար աննպաստ քաղաքականությանը դիմակայելը և ԼՂՀ ինքնորոշման պայքարը սատարելը՝ ԱՀՀ-ի և ամերիկահայ մյուս լոբբիստական կազմակերպությունների (Հայ դատի հանձնախումբ և այլն) կարևոր ձեռքբերումներից էին ԱՄՆ-ի Կոնգրեսի «Ազատության աջակցության ակտ» կոչվող օրենքի 907 բանաձևի ընդունումն ու կիրառումը, որն արգելում էր ԱՄՆ-ի կառավարության ուղղակի օգնությունը Ադրբեջանին (Հայաստանն ու Ղարաբաղը շրջափակման ենթարկելու համար (կասեցվեց 2001 թ. վերջին))[386]:

---

[384] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 15, գ. 32, թ. 5:

[385] Տե՛ս «Ազգ», 3 հուլիսի, 1998:

[386] Տե՛ս Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Հայաստան 2020. Զարգացման և անվտանգության ռազմավարություն, Ե., 2003, էջ 388-390: Տե՛ս նաև «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 39-40:

Ժողովրդավարական գործընթացներին երիտասարդ ամերիկահայերի մասնակցությունը խրախուսելու նպատակով 1977 թվականից ԱՀՀ-ն հայազգի ուսանողների ամառային պրակտիկան կազմակերպում էր Վաշինգտոնի քաղաքական կարևոր կենտրոններում, այդ թվում՝ Կոնգրեսում[387]:

Հենվելով 1978 թվականից ի վեր գործող սկզբնական ծրագրի վրա (ինչը հնարավորություն էր տալիս սփյուռքահայ ուսանողներին ամառվա ամիսներին աշխատելու Վաշինգտոնում)՝ ԱՀՀ-ի ուսանողական ծրագիրն 1999 թվականից առավել ընդլայնեց իր ոլորտները՝ ընդգրկելով նաև աշխատանքը Հայաստանի պետական կառավարական կառույցներում: Ծրագրի նպատակն էր նպաստել Հայաստանի բարգավաճմանը, քանի որ կամավորական հիմունքներով ՀՀ կառավարական կառույցներում ներգրավված ամերիկահայ երիտասարդներն իրենց աշխատանքային փորձն ու գիտելիքները փոխանցում էին հայրենիք, միաժամանակ ձեռք բերում հարուստ գիտելիքներ՝ Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի պատմության և մշակույթի վերաբերյալ[388]:

Ձեռնամուխ լինելով Սփյուռքում հայապահպանությանը, հայրենիքին աջակցելուն, այլ երկրներում հայերի և Հայաստանի շահերի պաշտպանությանը՝ ԱՀՀ-ն անգնահատելի աշխատանքի կատարեց հատկապես Հայաստանի անկախացման, Արցախի ազատագրական պայքարի ժամանակաշրջանում: ԱՀՀ-ն 2000 թ. իր անդամներ Անուշ Մաթևոսյանի և Ջերարդ Գաֆէսճյանի առատաձեռն նվիրատվության շնորհիվ (յուրաքանչյուրը՝ 3.5 մլն ԱՄՆ դոլար) Վաշինգտոնի կենտրոնում ձեռք բերեց 7 մլն

---

[387] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 32:
[388] Տե՛ս նույն տեղում, էջ 33:

դոլար արժողությամբ պատմական մի շենք[389], որի առաջին հարկում ստեղծվելու էր Հայոց ցեղասպանության թանգարան՝ ի հիշատակ հայ նահատակների: Այդ շենքում իր գրասենյակը հաստատեց նաև ԱՀՀ-ն: 2000 թ. ԱՀՀ-ին շնորհվեց «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան, որը ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը հանձնեց Հ. Հովնանյանին վերջին տարիներին համագումարի ցուցաբերած արցախանպաստ գործունեության համար[390]:

1994 թ. Ֆրանսիայում ստեղծվեց ֆրանսահայ կազմակերպությունները միավորող «Ապրիլի 24» կոմիտեն (“April 24” Committee), որն իր հիմնադրման օրվանից ի վեր աշխատել է Սենատում Հայոց ցեղասպանությանն առնչվող օրինագիծը քննարկելու, 1996 թ. ապրիլին ՅՈՒՆԵՍԿՕ-ում «Պետությունները և ցեղասպանությունը» մեծ գիտաժողովն անցկացնելու, 1997 թ. Փարիզում կազմակերպված միջոցառումների, Հայոց եղեռնի զոհերի հուշարձանը Փարիզում կառուցելու և այլ ուղղություններով: Ֆրանսիայի Ազգային ժողովի որոշումը «Հայոց ցեղասպանության ընդունման մասին» կոմիտեի գործողությունների արդյունք է: Ցեղասպանության ճանաչման համար պայքարում կոմիտեն համագործակցում էր Հայ դատի հանձնախմբի հետ[391]:

«Ապրիլի 24» կոմիտեն միավորում էր 28 կազմակերպություն, որոնց թվում էին ՀՅԴ-ն, ՌԱԿ-ը, «Ֆրանսահայ առաջադիմական շարժումը», ՀԲԸՄ-ն, «Կապույտ խաչը» («Հայկական հիմնադրամ» և «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպությունները անդամներ չէին, սակայն օժանդակում էին հանձնա-

---

[389] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 33:
[390] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 սեպտեմբերի, 2000:
[391] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 36:

խմբի գործունեությանը)[392]: 2001 թ. Փարիզում «Ապրիլ 24» կոմիտեն վերակազմավորվեց «Ֆրանսահայ կազմակերպությունները համակարգող խորհրդի» (ՖԿՀԽ, Conseil de Coordination des Organisations Armeniennes de France - CCAF), որը ձգտում էր առավել արդյունավետ դարձնել համայնքային տարբեր կառույցների գործունեությունը՝ համատեղելով նրանց ջանքերն ու լոբբինգային աշխատանքը հանուն Հայոց ցեղասպանության ճանաչման և Հայ դատի պաշտպանության: Լինելով ներկայացուցչական մարմին՝ ՖԿՀԽ-ն միավորում էր ավելի քան 20 հայկական կազմակերպություն և համակարգում նրանց աշխատանքները[393]:

1906 թ. Եգիպտոսում հիմնված «Հայկական բարեգործական ընդհանուր միությունը» (ՀԲԸՄ, Armenian General Benevolent Union), բարեգործական կազմակերպություն լինելով հանդերձ, 1990-ական թթ. ծավալեց նաև քաղաքական գործունեություն: 1989 թվականից ՀԲԸՄ-ի ծրագրերին ավելացավ նաև Հայ դատի գծով քարոզչական լայն աշխատանք, ինչի հետևանքով Միությունը ստացավ «Միավորված ազգերի կազմակերպության» մոտ ոչ կառավարական գրասենյակ բացելու արտոնություն[394]:

1996 թ. նոյեմբերին ՀԲԸՄ 79-րդ ընդհանուր ժողովը, լիովին գիտակցելով հայրենիքի և Սփյուռքի առջև ծառացած մարտահրավերները, որդեգրեց բանաձև, որում, ողջունելով միության 90-ամյա ծառայությունն ի նպաստ հայապահպանության, հայ ժողովրդի բարօրության և ազգային արժեքների պահպան-

---

[392] Տե՛ս «Ազգ», 23 ապրիլի, 1999:

[393] Տե՛ս «Հայկական Սփյուռք» տարեգիրք, էջ 214:

[394] Տե՛ս Դալլաքյան Կ., Հայ Սփյուռքի պատմության համառոտ ակնարկ, Ե., 2004, էջ 143:

ման, իր զորակցությունն էր հայտնում նորանկախ հայրենի պետականությանը և Արցախի ազատագրական արդար պայքարին՝ «մաղթելով միեւնոյն ժամանակ արդար լուծում մը Արցախի ապագայի երաշխաւորման, որպէսզի այն կարենայ պատերազմի վէրքերը բուժելով վերընձիւղուած ապրիլ հարեւան ժողովուրդներու հետ բարի դրացիութեան կապերով»[395]:

Միությունը համահայկական ամենախոշոր կառույցն է: Այսօր ՀԲԸՄ-ի 120 մասնաճյուղերը գործում են 26 երկրների 80 քաղաքներում (կան գրասենյակներ): Այն 27 մշակութային կենտրոն ունի ԱՄՆ-ում, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Հարավային Ամերիկայում, Ավստրալիայում: ՀԲԸՄ-ն տնօրինում է մոտ 20 դպրոց (6600 աշակերտ) և ֆինանսավորում ավելի քան 16 կրթական հաստատություն[396]: Փարիզում և Նյու Ջերսիում միությունն ունի 2 գրադարան:

ՀԲԸՄ-ն առաջին համահայկական կառույցն է, որ 1990 թ. բացել է իր գրասենյակը Երևանում: Շուրջ 50 տարի անց վերսկսելով իր գործունեությունը Հայաստանում՝ ՀԲԸՄ-ն նախապատվությունը տալիս է ոչ միայն մարդասիրական օգնությանը, այլև մասնակցում է պետության զարգացմանը միտված ծրագրերի իրականացմանը:

ՀԲԸՄ-ն Հայաստանում և Արցախում լուրջ ծրագրեր է իրականացրել և իրականացնում մասնավորապես արվեստի, կրթության, առողջապահական և բարեսիրական ոլորտներում: Վերջին տասնամյակում կառույցի գլխավոր նպատակը մրցունակ երիտասարդների պատրաստումն է, պրոֆեսիոնալների խմբե-

---

[395] Տե՛ս Բանաձեւ՝ ներկայացուած ՀԲԸՄ-ի 79-րդ ընդհանուր ժողովին, «Տեղեկատու», 1997, թիւ 2, յունուար:
[396] Տե՛ս Մելքոնյան Է., ՀԲԸՄ պատմությունը, Ե., 8:

րում նրանց ընդգրկելը և հայրենիքում նրանց հնարավորություն-ների օգտագործմանը նպաստելը[397]:

Պատահական չէր, որ ՀԲԸՄ-ի նախաձեռնությամբ 1991 թ. Հայաստանում հիմնադրվեց Ամերիկյան համալսարանը: Բուհը այսօր Հայաստանում ամենահեղինակավոր և պահանջված կրթական հաստատություններից մեկն է դարձել:

ՀԲԸՄ-ն շարունակում է իր բարեխնամ և հոգատար վերա-բերմունքը Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի և նրա թեմերի նկատ-մամբ:

Վերջին 10 տարիների ընթացքում ՀԲԸՄ-ի ծրագրերը ընդ-գրկում են տարիքային և սոցիալական տարբեր խմբեր՝ ծառայե-լով հազարավոր մարդկանց և նպաստելով աշխատատեղերի ստեղծմանը: ՀԲԸՄ-ի իրագործած ծրագրերից են Պլաստիկ վե-րականգնողական վիրաբուժության կենտրոնի հիմնումը Երևա-նում (կենտրոնում արդեն բուժում է ստացել շուրջ 6 հազար մարդ[398]), «Սուրբ Ներսես» հիվանդանոցի (նախկինում՝ Պրոկ-տոլոգիայի հիվանդանոց) վերանորոգումն ու արդիականացու-մը[399], Ուլտրաձայնային հետազոտությունների բաժնի ստեղծումը ԵՊԲՀ-ում և այլն: ՀԲԸՄ-ն Հայաստանում և Սփյուռքում իր ծրագրերը իրականացնելու համար տարեկան հատկացնում է 40 մլն ԱՄՆ դոլար[400]:

---

[397] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 167-168:

[398] Ավետիսյան Ս. և ուրիշներ, Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապե-տության տնտեսության մեջ. զարգացման հեռանկարներ, Ե., 2015, էջ 106:

[399] Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ ան-կախության տարիներին (1991-2009 թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփա-նակերտ, 2010, էջ 48:

[400] Տե՛ս Սեդրակյան Պ., ՀԲԸՄ նախագահ, «Ջնջել ցեղասպանության պատճա-ռած վնասները», http://aghu.am/am/componene/article/139-archive-2011.news-4/416-perchs-sedrakyan:

Սփյուռքահայ մի շարք կազմակերպություններ՝ «Հայկական ժողովրդային շարժումը», «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը», «Հայաստանի ցեղասպանության արդարության մարտիկները», Հայ դատի լուծումը տեսնում էին առաջին հերթին զինված պայքարի մեջ:

Այսպիսով՝ Հայ դատի հանձնախումբն ու Ամերիկայի հայկական համագումարը վերջին ավելի քան կես դարի ընթացքում ամերիկահայ լոբբիստական գլխավոր կազմակերպություններ են: Նրանք ակտիվ ու ուժեղ են հատկապես Կալիֆոռնիա, Մասսաչուսեթս և Միչիգան նահանգներում: Երկու կազմակերպություններն էլ ունեն գործունեության ընդհանուր գծեր, նրանց նպատակներն էլ առաջին հայացքից նույնական են թվում, մինչդեռ իրականում դրանք բավականին տարբեր են: Հայ դատի հանձնախումբն իր հիմնական նպատակն է հռչակել «Միացյալ, ազատ և անկախ Հայաստանը», իսկ Ամերիկայի հայկական համագումարը՝ «ցեղասպանության դատապարտումը և մարդու իրավունքների պաշտպանությունը»: Հայկական լոբբիստական կազմակերպությունները միմյանցից տարբերվում են նաև լոբբինգ իրականացնելու մեխանիզմներով: Հայ դատի հանձնախումբը հենվում է մեծաքանակ կողմնակիցների և համակիրների վրա, իսկ Ամերիկայի հայկական համագումարը՝ ազդեցիկ անձանց վրա[401]:

Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրն առանցքային է երկու կազմակերպությունների գործունեության մեջ: Այս նպատակին հասնելու համար նրանք լոբբինգ են իրականացնում ոչ

---

[401] Տե՛ս Մամյան Լ., Հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը ԱՄՆ-ում 1965-2015 թթ., Է. 0001 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Ե., 2007, էջ 20:

միայն Կոնգրեսի երկու պալատներում, այլև նահանգային ու քաղաքային մակարդակներում: Հայ դատի հանձնախումբն ունի 45 գրասենյակ՝ տեղակայված տարբեր նահանգներում: Դրանք ջանում են ամերիկահայ համայնքի ձայնը լսելի դարձնել դաշնային, նահանգային և տեղական մակարդակներում:

Չնայած տարբերություններին՝ երկու կառույցների համատեղ ջանքերի շնորհիվ է, որ 1995 թ. հնարավոր եղավ կյանքի կոչել Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախումբը, որն այսօր կարևոր դերակատարում ունի հայկական շահախնդրությունների, հայանպաստ որոշումների և բանաձևերի ընդունման գործում: Ամերիկահայ համայնքը երկար ճանապարհ է անցել և բավականին կազմակերպված է՝ ունենալով թե՛ ներքին, թե՛ արտաքին հարցերով զբաղվելու մեծ փորձ ու վաստակ[402]:

Ներկայացնելով արցախյան հիմնախնդրի կարգավորման, Արցախի անկախության ճանաչման և Հայաստանին ու Արցախին տրամադրվող ամերիկյան օգնության ապահովման ուղղությամբ ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների ծավալած գործունեությունը՝ կարելի է փաստել, որ Հայաստանի անկախության հռչակումից հետո ամերիկահայ լոբբին ընդլայնում է իր գործունեության շրջանակները՝ Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի կողքին դնելով այլ խնդիրներ ևս: Ամերիկահայ լոբբիի ձեռքբերումներից կարելի է առանձնացնել 1992 թ. «Ազատության աջակցության օրենքի» թիվ 907 բանաձևի ընդունումը, որն անկախության առաջին տասնամյակի ընթացքում (1992-2002 թթ.) Ադրբեջանին զրկեց ԱՄՆ-ի կողմից տրամա-

---

[402] Տե՛ս Մամյան Լ., Հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը ԱՄՆ-ում 1965-2015 թթ., Է. 0001 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Ե., 2007, էջ 21:

դրվող օգնությունից այն դեպքում, երբ այդ տարիներին «Ազատության աջակցության ակտով» Հայաստանին տրամադրվող օժանդակությունը կազմեց շուրջ 773 մլն ԱՄՆ դոլար[403]:

Մեծ են հատկապես 2000-ական թթ. ամերիկյան ութ նահանգների կողմից Արցախի անկախության ճանաչման ուղղությամբ ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների նահանգային կառույցների գործադրած ջանքերը, ինչպես նաև ամեն տարի Հայաստանին ու Արցախին տրամադրվող ամերիկյան օգնության չափերի մեծացման կամ գոնե պահպանման նպատակով ամերիկահայ լոբբիի իրականացրած աշխատանքները:

Բավականին ծավալուն և ընդգրկուն էր Հայաստանի անկախության հռչակումից հետո ամերիկահայ լոբբի ծավալած պայքարը ամերիկյան օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու համար: Այս համատեքստում ակնհայտ են նաև թուրք-ադրբեջանական լոբբինգի դրսևորած հակազդեցությունը և վերջինիս դիմակայելու ուղղությամբ ամերիկահայ լոբբիի իրականացրած աշխատանքները: Ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների ջանքերով Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ բանաձևեր են ներկայացվել ամերիկյան օրենսդիր մարմնի՝ Կոնգրեսի երկու պալատներում: Դրանցից կարող ենք առանձնացնել 2010 թ. մարտի 4-ին Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող թիվ 252 բանաձևի ընդունումը, ինչպես նաև

---

[403] Տե՛ս Մամյան Լ., Հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը ԱՄՆ-ում 1965-2015 թթ., Է. 0001 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Ե., 2007, էջ 18:

2014 թ. ապրիլի 10-ին Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ընդունված «Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր» հայտարարող թիվ 410 բանաձևը և այլն: Բազմաթիվ են նաև նահանգային մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչմանը հասնելու ուղղությամբ ամերիկահայ լոբբիի իրականացրած ջանքերը, որի շնորհիվ 2015 թ. դրությամբ ամերիկյան 43, իսկ 2017 թ. դրությամբ 48 նահանգներ ճանաչել են Հայոց ցեղասպանությունը[404]:

Չնայած սփյուռքահայ կազմակերպությունների գործունեության մեջ առկա էին Հայ դատի լուծման համար պայքարի վարման ձևերի էական տարբերություններ, սակայն նրանց բոլորի հիմնական նպատակն էր Հայոց ցեղասպանության ճանաչումը, պատմական հայրենիքի վերածնությունը, հայոց պետականության ամրապնդումն ու արցախյան խնդրի արդարացի լուծումը:

Սփյուռքահայ համայնքներում ամեն տարի նշվում էր Հայոց ցեղասպանության օրը, որը մեծ մասամբ ուղեկցվում էր բողոքի ցույցերով ու միտինգներով, ցեղասպանության փաստը իրենց երկրների կողմից դատապարտելու և ընդունելու պահանջներով: Զանգվածային այդ միջոցառումները կազմակերպված բնույթ էին ձեռք բերում սփյուռքահայ ավանդական քաղաքական կուսակցությունների և միությունների, նաև եկեղեցու շնորհիվ: Սփյուռքում և հայրենիքում հատկապես լայն թափով նշվեցին Հայոց ցեղասպանության 75 (1990), 80 (1995), 90 (2005) և 100-ամյակները (2015): Ազգային վերազարթոնքի արդյունքում

[404] Տե՛ս Մամյան Լ., Հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը ԱՄՆ-ում 1965-2015 թթ., Է. 0001 «Հայոց պատություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման արենախոսության սեղմագիր, Ե., 2007, էջ 19:

Սփյուռքում մի շարք համայնքներում հիմնվեցին Մեծ եղեռնի նահատակների հիշատակը հավերժացնող հուշակոթողներ:

1988-2017 թթ. ևս սփյուռքահայությունը շարունակեց միահամուռ պայքարը Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ: Այդ առումով աչքի ընկավ հատկապես ֆրանսահայությունը: Հայ դատին աջակցելու, Հայաստանի Հանրապետությանը և Արցախին օգնություն կազմակերպելու, հայկական համայնքների մերձեցմանը նպաստելու նպատակով 1993 թ. Փարիզում կազմակերպվեց շուրջ 60 հայկական կազմակերպություններ համախմբող «Ֆրանսահայ ընկերակցությունների ֆորումը»[405]:

Սփյուռքահայ կազմակերպությունների համախմբված գործունեության շնորհիվ 1998 թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի խորհրդարանը ճանաչեց 1915 թ. Հայոց ցեղասպանության փաստը, իսկ 2001 թ. հայության շարունակական պայքարի հետևանքով Ֆրանսիան ճանաչեց Հայոց ցեղասպանության փաստը երկրի Սենատի ընդունած օրենքի տեսքով[406]:

Արցախի խնդիրը և դրանից բխող բարդությունները հեռանկարային կարևորության հարցեր էին ողջ Սփյուռքի համար, որը, անկախ քաղաքական կողմնորոշումից ու տարաձայնություններից, մեծ ուշադրությամբ հետևում էր տեղի ունեցող իրադարձություններին: Սփյուռքի բոլոր շրջանակները գտնում էին, որ այդ պայմաններում ելքը հակամարտության գոտում իրադրության կարգավորման, շրջափակման վերացման, բնակչու-

[405] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 643:
[406] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 578:

թյան անվտանգության ապահովման և խնդրի լուծման քաղաքական ուղիների որոնման մեջ էր[407]:

Նոր պայմաններում սփյուռքահայ համայնքները ոչ միայն ակտիվ համագործակցություն ծավալեցին մայր հայրենիքի հետ բոլոր բնագավառներում, այլև սկսեցին ուղիներ փնտրել համահայկական կառույցի ստեղծման ուղղությամբ՝ քաջ գիտակցելով, որ դա բարդ ու տևական գործընթաց է: Եվրոպայի միավորման պայմաններում հայերը նույնպես ձգտեցին ամրապնդել եվրոպական Սփյուռքի տարբեր հատվածներին իրար միավորող կապերը համաեվրոպական կառույցի ստեղծման միջոցով: «Եվրոպայի հայկական միությունների ֆորում» (ԵՀՄՖ) համաեվրոպական հայկական կազմակերպությունը ստեղծվեց 1998 թ. հուլիսի 18-19-ին Ժնևում՝ Եվրոպայի յոթ երկրների (Շվեյցարիա, Գերմանիա, Բելգիա, Իտալիա, Անգլիա, Հունգարիա, Ռուսաստան) հայ համայնքների տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների նախաձեռնությամբ[408]: ԵՀՄՖ-ի կանոնադրության համաձայն՝ ֆորումը բաց էր Եվրոպայի բոլոր համայնքային կառույցների (հոգևոր և աշխարհիկ), ինչպես նաև անհատների համար: Ֆորումի նպատակն էր պայմաններ ստեղծել Եվրոպայի հայկական կազմակերպությունների միջև մշտական հաղորդակցություն ապահովելու, համագործակցություն հաստատելու և ամրապնդելու, համատեղ խնդիրներ ու ծրագրեր քննարկելու և դրանք միասնաբար լուծելու համար:

1999 թ. մայիսի 1-2-ին Եվրոպայի 15 երկրների հայ համայնքների շուրջ 200 ներկայացուցիչների մասնակցությամբ Բրյուսելում (Բելգիա) կայացավ ԵՀՄՖ-ի առաջին ընդհանուր

---

[407] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 43:
[408] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 21:

համաժողովը, որը հաստատեց ԵՀՄՖ-ի կանոնադրությունը, սահմանեց գործունեության հիմնական ուղղությունները[409]: Որոշվեց ֆորումի գրասենյակը հիմնել Ժնևում: Ֆորումի ընթացքում կազմվեցին մի շարք աշխատանքային խմբեր, որոնց նպատակն էր հայությանը հուզող հիմնախնդիրների հեռահաղորդակցական մեկնաբանումը, եվրոպական առևտրական տան կազմավորումը և այլն:

ԵՀՄՖ-ի երկրորդ ընդհանուր ժողովը տեղի ունեցավ 2000 թ. հունիսի 9-12-ը Բուդապեշտում (Հունգարիա) եվրոպական 13 երկրների հայկական կազմակերպությունների ավելի քան 110 անդամների մասնակցությամբ[410]: Ֆորումի հիմնական նպատակը Արևելյան և Արևմտյան Եվրոպայի հայկական համայնքների միջև համագործակցության դաշտի ստեղծումն էր: Չնայած Արցախի ներկայացուցիչները չէին մասնակցում, սակայն արցախահայության առջև ծառացած խնդիրները դուրս չմնացին ֆորումի ուշադրությունից: Ֆորումի անդամ դարձան Կիպրոսի և Մոսկվայի երկու համայնքային կազմակերպություններ՝ այդպիսով անդամների թիվը հասցնելով 22-ի[411]: Խորհրդաժողովն ընդունեց աշխատանքային նոր ծրագիր և որոշում՝ ֆինանսական գործունեության ապահովության մասին: Մասնավորապես հավանություն տրվեց ԵՀՄՖ-ի ընդհանուր քարտուղարության նախաձեռնությանը՝ տարբեր բնագավառների մասնագիտական խորհրդաժողովներ անցկացնելու և Բրյուսելում քաղաքական-տեղեկատվական գրասենյակ հիմնելու մասին: Ֆորումն անդրա-

---

[409] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 44:

[410] Տես՛ Ասատրյան Հ., Եվրոպահայությունը՝ «Եվրամիություն» ունենալու ակնկալիքով, «Օրեր», 2000, N 5-6, մայիս-հունիս, էջ 14:

[411] Տե՛ս «Ազգ», 13 հունիսի, 2000:

դարձավ նաև Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ տարվող աշխատանքներին[412]:

2001 թ. հունիսի 1-4-ը Բոննում (Գերմանիա) կայացած ԵՀՄՖ-ի երրորդ ընդհանուր ժողովում քննարկվեցին հայ համայնքների կառուցվածքային խնդիրները, նաև ազգային կյանքի կազմակերպման, հայոց լեզվի ուսուցման ու հայապահպանության, Հայոց ցեղասպանության ճանաչման հետ կապված հարցեր: Ֆորումի գլխավոր նվաճումներից էին Եվրամիության գծով շփումների և տեղեկատվության աշխատանքային խմբի ստեղծումը և այդ խմբի գրասենյակի բացումը Բրյուսելում[413]: Երրորդ ընդհանուր ժողովը որոշում ընդունեց մայիսի 9-ը՝ Շուշիի ազատագրման օրը, Եվրոպայում հայտարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օր՝ կոչ անելով իր անդամ միություններին, համայնքներին, ինչպես նաև Եվրոպայի բոլոր համայնքներին այդ օրը կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ և դրանցից գոյացած հասույթն ամբողջովին տրամադրել ԼՂՀ-ին: ԵՀՄՖ-ի կոչը մեծ արձագանք ունեցավ Եվրոպայի հայության շրջանում և կազմակերպչական ձև ստացավ ԵՀՄՖ-ի, «Հայաստան» համահայկական հիմնադրամի ու ԼՂՀ կառավարության կողմից 2001 թ. սեպտեմբերի 17-ին կնքված եռակողմ համաձայնագրում, ըստ որի՝ ԼՂՀ կառավարությունը ներկայացնում էր ֆինանսավորման կարիք ունեցող մարդասիրական ծրագրեր, ԵՀՄՖ-ն կազմակերպում էր դրամահավաք միջոցառումներ (հեռախոսամարաթոններ և այլն), իսկ «Հայաստան» համահայկա-

---

412 Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 44:
413 Տե՛ս նույն տեղում, էջ 45:

կան հիմնադրամը իրականացնում էր նպատակային ծրագրեր[414]:

Հետագայում ֆորումի գործադիր մարմնի և քաղաքական խորհրդի միջև ի հայտ եկած հակասությունների հետևանքով ԵՀՄՖ-ն պառակտվեց. ԵՀՄՖ-ից անջատված թևը 2003 թ. Բրյուսելում հիմնադրեց նոր կազմակերպություն՝ «Եվրոպայի հայկական համագումար» (ԵՀՀ) անվանումով: Նորաստեղծ կազմակերպության նպատակն էր համագործակցության մթնոլորտ ստեղծել եվրոպահայ կազմակերպությունների միջև, նպաստել եվրոպահայության խնդիրների լուծմանն ու ազգային հարցերի, այդ թվում՝ Հայող ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը և հայության արդար պահանջների իրականացմանը: Կազմակերպության ծրագրերում լուրջ տեղ էին հատկացվելու նաև ՀՀ ու ԼՂՀ պետություններին աջակցելու միջոցառումներին, Արցախի անկախության ամրապնդման և միջազգային ճանաչմանը, հայ ժողովրդի համընդհանուր շահերի պաշտպանությանը: ԵՀՀ հիմնադիր ժողովն ընդունեց նաև հռչակագիր՝ նոր կազմակերպության ստեղծման ու նպատակների վերաբերյալ:

2000 թ. հունիսի 16-ին Մոսկվայում բացվեց «Ռուսաստանի հայերի միություն» (ՌՀՄ, Union of Armenians of Russia) համառուսական հասարակական կազմակերպության հիմնադիր համագումարը, որին ներկա էին ՌԴ-ի հայ համայնքները ներկայացնող 172 պատվիրակներ[415]: Համագումարի հիմնական նպատակը մեկ միասնական կազմակերպություն ունենալն էր: ՌՀՄ-ի խորհուրդում ընդգրկվեցին միության անդամակցող բոլոր հա-

---

[414] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 22:
[415] Տե՛ս «Ազգ», 17 հունիսի, 2000:

մայնքներն ու տեղական այլ կառույցների ղեկավարները, ինչպես նաև որևէ կազմակերպություն չներկայացնող շուրջ 20 անհատներ[416]: Խորհուրդը ՌՀՄ-ի նախագահ ընտրեց երիտասարդ ձեռնարկատեր, «Համաձայնություն» ՓԲԸ նախագահ Արա Աբրահամյանին: ՌՀՄ-ի հիմնական խնդիրներն էին ռուսահայ համայնքների միջև լրատվական կայուն կապի հաստատումն ու պահպանումը, ընդհանուր քաղաքականության մշակումն ու անցկացումը սեփական տպագիր օրգանի, սեփական ռադիոկայանի ու հեռուստատեսության միջոցով, միջհամայնքային կապերի զարգացումը, հանրակրթական և կիրակնօրյա դպրոցների ստեղծումը, մշակութային արժեքների և ազգային ավանդույթների պահպանումը[417]: ՌՀՄ-ն կարևոր տեղ հատկացրեց Հայաստանի հետ մշակութային և գործարար կապերի զարգացմանը: ՌՀՄ-ի նպատակն էր միավորել Ռուսաստանի հայերին և նպաստել հայ և ռուս ժողովուրդների միջև գոյություն ունեցող հարաբերությունների ամրապնդմանը: ՌՀՄ-ն իր պատրաստակամությունը հայտնեց՝ համագործակցելու Մոսկվայում գործող մյուս հայկական կազմակերպությունների հետ: Այսպիսով՝ 10-ամյա համառ փորձերից հետո հայությունը Ռուսաստանում համախմբվեց[418]: Ռուսաստանի տարբեր քաղաքներում, Ուկրաինայում, Մոլդովայում, Միջին Ասիայի և Մերձբալթյան հանրապետություններում հաստատված իր 200-ից ավելի մասնաճյուղերի միջոցով ՌՀՄ-ն ծավալեց բավականին արդյունավետ գործունեություն՝ սերտ կապեր հաստատելով Հայաստանի, Արցախի և

---

[416] Տե՛ս «Ազգ», 17 հունիսի, 2000:
[417] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 52:
[418] Տե՛ս նույն տեղում:

սփյուռքահայ մի շարք համայնքների հետ[419], գործնական քայլեր ձեռնարկեց հայության համախմբման ուղղությամբ:

ՌՀՄ-ի նախաձեռնությամբ 2003 թ. Մոսկվայում հիմնվեց «Համաշխարհային հայկական կոնգրես» (ՀՀԿ, World Armenian Congress) միջազգային կազմակերպությունը՝ Արա Աբրահամյանի նախագահությամբ[420]: ՀՀԿ-ի խնդիրներն են՝ նպաստել Հայաստանի և Արցախի տնտեսական վերածննդին, անվտանգ և առաջընթաց զարգացման ապահովմանը, օժանդակել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, ցեղասպանության հետևանքների վերացմանը միջազգային իրավունքի վրա և Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը, աջակցել համահայկական բազմաձրագիր հարաբերությունների զարգացմանը, օժանդակել կապիտալի և բիզնեսի դիրքերի ամրապնդմանը ազգային և համաշխարհային տնտեսության համակարգում, նպաստել ազգային ինքնության և մշակույթի պահպանությանը, աճող սերնդի պատշաճ դաստիարակությանը, Սփյուռքի պայմաններում ուծացման գործընթացների նվազեցմանը, աջակցել տեղեկատվական համագործակցության և արդյունավետ բազմակողմանի կապերի հաստատմանը հայրենիքի և Սփյուռքի միջև, նպաստել Սփյուռքի ներուժի ակտիվ ներգրավմանը պատմական հայրենիքի զարգացման գործում և աշխարհի հայկական համայնքների շահերի պաշտպանության հարցում Հայաստանի մասնակցությանը[421]:

ՌՀՄ-ն և Համաշխարհային հայկական կոնգրեսը իրենց գործունեության ընթացքում միլիոնավոր դոլարների բարեգոր-

---

[419] Տե՛ս Դալլաքյան Կ., նշվ. աշխ., էջ 176:
[420] Տե՛ս «Հայկական Սփյուռք» տարեգիրք, էջ 122:
[421] Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 53:

ծություն և ներդրում են կատարել Հայաստանում և Արցախում՝ կառուցելով դպրոցներ, եկեղեցիներ, իրականացնելով բազմաթիվ ձեռնարկներ: ՀՀ սփյուռքի նախարարությունը համաձայնագրեր է ստորագրել այս երկու կառույցների հետ, և ծրագրերի գերակշիռ մասը իրականացվում է համատեղ[422]:

ՌՀՄ-ն 2015 թ. նոյեմբերի 30-ին հանդես է եկել Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու մասին օրինագիծը պաշտպանող հայտարարությամբ ու խնդրել Պետդումայի խոսնակին և չորս խմբակցություններին պաշտպանել փաստաթուղթը:

Համասփյուռքյան բոլոր կազմակերպություններն ու կառույցները ակտիվ և հետևողական աշխատանքներ են տարել 21-րդ դարասկզբի տարիներին Արցախի խնդրի լուծման և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման ուղղությամբ: Դրա լավագույն վկայություններն են Հայաստան-Սփյուռք համաժողովներում արված առաջարկների կատարման ուղղությամբ ՀՀ սփյուռքի նախարարության նախագահությամբ նրանց ձեռնարկած լայնածավալ և հետևողական աշխատանքները: Համասփյուռքյան կազմակերպությունները Արցախի անվտանգության ապահովումը և աջակցությունը Արցախի միջազգային ճանաչման գործընթացին համարեցին որպես Հայ դատի մի մաս: Նրանց ակտիվ աշխատանքների շնորհիվ Սփյուռքի հերթական անգամ բռունցքվեց 2016 թ.՝ Քառօրյա պատերազմի ընթացքում՝ աշխարհին ի ցույց դնելով իր ներուժը:

Ամբողջ Սփյուռքը հանդես եկավ ամենատարբեր ձեռնարկներով, համահայկական, հոգևոր և տարածաշրջանային կառույցները, հայտնի անհատները հանդես եկան միջազգային

[422] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 169:

կազմակերպություններին ուղղված՝ Ադրբեջանի ագրեսիան դատապարտելու և կանխելու հայտարարություններով ու կոչերով, տրամադրվեց հումանիտար օգնություն, հագուստի, սննդի, դեղորայքի ֆինանսական օժանդակություն, աշխարհի գրեթե բոլոր հայահոծ համայնքներում կազմակերպվեցին ցույցեր, երթեր, հավաքներ և այլ միջոցառումներ: 2016 թ. ապրիլյան և դրան հաջորդած օրերին ՀՀ սփյուռքի նախարարությունը տարբեր երկրներում ցույցեր կազմակերպելու նպատակով համայնքներին է ուղարկել ՀՀ սփյուռքի նախարարությանը կոչը, ինչպես նաև հանդես է եկել Հայկական սփյուռքի լրատվամիջոցների, իրազեկման կառույցների միջոցով օտար հասարակության իրազեկման վերաբերյալ առաջարկությամբ: ՀՀ սփյուռքի նախարարության կողմից պատրաստվել և սփյուռքան համայնքներին ու լրատվամիջոցներին է ուղարկվել Քառօրյա պատերազմի հետևանքով դաժանաբար սպանված մարդկանց մասին տեղեկատվական փաթեթ՝ դրանք տարածելու նպատակով[423]:

Քառօրյա պատերազմի օրերին և դրանից հետո, ի պաշտպանություն Արցախի, մի շարք երկրներում (ԱՄՆ, Կանադա, Արգենտինա, Ավստրալիա, Գերմանիա, Ֆրանսիա, Լիբանան, Իրան և այլն) ՀՅԴ կից կառույցների, ՍԴՀԿ-ի. ՌԱԿ-ի և համայնքային կառույցների նախաձեռնությամբ տեղի են ունեցել բողոքի ցույցեր, երթեր, հավաքներ, որոնցում քաղաքակիրթ աշխարհին կոչ է արվել համարժեք արձագանքելու և սաստելու Արցախի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիան[424]:

---

[423] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 53:

[424] Տե՛ս նույն տեղում, էջ 54:

ԱՄՆ-ում գործող հայ ազգային երեք կուսակցությունները՝ ՀՅԴ-ն, ՌԱԿ-ը և ՍԴՀԿ-ն, ինչպես նաև ԱՄՆ Հայ դատը, Ամերիկայի հայկական համագումարը, Ամերիկայի հայկական կազմակերպությունները՝ «Հայդուկը», «Գեոպոլիտիկ» ակումբը, ԱՄՆ «Լոռի» հիմնադրամը, «ԱՄՆ-ի հայ գրողների միությունը», Գիտությունների համահայկական և միջազգային ակադեմիան, Ամերիկյան հայկական լեգեոնը, «ԱՄՆ հայկական միությունը», դատապարտել են Արցախի դեմ ուղղված ադրբեջանական ագրեսիան: 2016 թ. ապրիլի 2-ին ԱՄՆ Հայ դատի հանձնախումբը նախաձեռնել է առցանց գործողությունների պորտալ՝ anca.org/stopaliyev, որտեղ հիմնահարցի խաղաղ կարգավորման կողմնակիցները կարող են կապվել ԱՄՆ պետական պաշտոնյաների հետ՝ Ադրբեջանի հակահայկական հարձակումների դեմ անհապաղ գործողություններ ձեռնարկելու համար[425]:

2016 թ. ապրիլի 7-ին ԱՄՆ Կոնգրեսի ղեկավարները դատապարտել են Ադրբեջանի հարձակումն ընդդեմ Արցախի Հանրապետության: Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը 2016 թ. մայիսի 10-ին Տիգրանակերտի հնագիտական թանգարանում հանդիպում է ունեցել ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհրդի և տարածաշրջանային հանձնախմբերի ու գրասենյակների ներկայացուցիչների հետ:

Արժևորելով ՀՅԴ Հայ դատի գործունեությունը Հայոց ցեղասպանության, Արցախի հիմնախնդրի օբյեկտիվ ներկայացման, համահայկական նշանակություն ունեցող խնդիրների լուծման ուղղությամբ՝ նախագահ Բակո Սահակյանը ողջունել է Ար-

---

[425] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 53:

ցախում ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների համաժողովի անցկացումը[426]:

2016 թ. մայիսի 11-ին Հայ դատի հանձնախմբի ղեկավարները Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում խորհրդակցել են Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հետ, համայնքային կազմակերպությունները շարունակել են ջանքեր գործադրել՝ Royce-Engel խաղաղության առաջարկությունները իրականացնելու, ԱՄՆ օգնության ծրագրերը Արցախում ընդլայնելու, և Ադրբեջանի հնարավոր ռազմական ագրեսիայի դեմ համախմբվելու համար: 2016 թ. մայիսին 19-ին ԱՄՆ Վերին պալատի արտաքին գործերի կոմիտեի անդամ Բրեդ Շերմանը կոչ է արել անհապաղ դադարեցնել Բաքվին հատկացվող ռազմական օգնությունը[427]:

2016 թ. օգոստոսի 23-ին ԱՄՆ Հայ դատի հանձնախումբն անցկացրել է հանդիպում Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կոնգրեսական նախագահ Է. Ռոյսի հետ: Քննարկվել են Արցախի Հանրապետության անվտանգությանն ու անկախությանը վերաբերող հարցեր:

Կանադայի երեք հայ ավանդական կուսակցությունները՝ ՀՅԴ-ն, ՌԱԿ-ը և ՍԴՀԿ-ն, հանդես են եկել Արցախին զորակցելու հայտարարությամբ: Կանադահայոց թեմի առաջնորդարանը դատապարտել է Ադրբեջանի ռազմական ագրեսիան Արցախի նկատմամբ: Արգենտինայի հայ համայնքի պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել երկրի արտաքին գործերի նախարա-

---

[426] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 55:

[427] Տե՛ս նույն տեղում:

րի, Արգենտինայում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Ժան-Միշել Կասայի և ՌԴ դեսպան Վիկտոր Կորոնելիի հետ և ներկայացրել համայնքի մտահոգությունը՝ Արցախում Ադրբեջանի կիրառած ագրեսիայի և բռնությունների առիթով[428]:

Ավստրալիայի Հայ դատի հանձնախումբը հանդես է եկել Ադրբեջանի ագրեսիան կանխելու կոչով և կազմակերպել Ավստրալիայի վարչապետին ուղղված ստորագրահավաք: «Գերմանիայի հայ ակադեմիականների միությունը» և Գերմանիայի Գյոբինգենի հայկական համայնքն ու միությունները համատեղ դիմել են Գերմանիայի իշխանություններին՝ կոչ անելով նպաստել Արցախի խնդրի շուտափույթ լուծմանը: Ֆրանսահայ լեգենդար երգիչ Շառլ Ազնավուրը հանդիպել է Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ֆրանսուա Օլանդին և քննարկել Արցախի շուրջ տիրող իրավիճակը, իսկ Ֆրանսահայ կազմակերպությունները համակարգող խորհուրդը (CCAF) դատապարտել է Ադրբեջանի ագրեսիան: Իր հերթին ՌԱԿ Լիբանանի շրջանային վարչությունը, ՍԴՀԿ Լիբանանի վարիչ մարմինը և ՀՅԴ Լիբանանի կենտրոնական կոմիտեն դատապարտել են Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմը:

ՀՅԴ պատվիրակությունը հանդիպել է Լիբանանում Եվրամիության դեսպանատան առաջին քարտուղար, քաղաքական բաժանմունքի ղեկավար Մաչիէյ Կոլուպիևսքիին՝ վերջինիս ներկայացնելով Արցախ-Ադրբեջան շփման գծի վրա տիրող իրադրությունը: ՀՅԴ Լիբանանի կենտրոնական կոմիտեն և Հայ դատի հանձնախումբը հանդիպել են Լիբանանում ԱՄՆ դեսպան

---

[428] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 56:

Ռիչարդ Ջոնսին և Գերմանիայի դեսպան Մարթին Հութին: Պատվիրակությունը ներկայացրել է Արցախ-Ադրբեջան սահմանագծի վրա տիրող վերջին զարգացումները[429]:

Հայ քաղաքական երեք կուսակցությունների՝ ՍԴՀԿ-ի, ՀՅԴ-ի և ՌԱԿ-ի ներկայացուցիչներից բաղկացած պատվիրակությունն այցելել է Լիբանանի վարչապետ Թամման Սալամին և ներկայացրել իրադրությունն Արցախում: ԼՂ ապրիլյան իրադարձությունների կապակցությամբ ՀՅԴ Թեհրանի Հայ դատի հանձնախումբը համապատասխան նամակներ է հղել Իրանում հավատարմագրված ԵՄ անդամ պետությունների, ՌԴ և Չինաստանի դիվանագիտական ներկայացուցչություններին[430]:

Սիրիայի Բերիո հայոց թեմի ազգային իշխանությունն իր զորակցությունն է հայտնել Արցախին, իսկ Սիրիայի հայ ավետարանական համայնքը դատապարտել է Արցախի Հանրապետության զինվորական դիրքերի, սահմանամերձ գյուղերի և անզեն գյուղացիների դեմ Ադրբեջանի իրականացրած ռազմական գործողությունները: Սիրիայի հայկական երեք (ՀՅԴ, ՍԴՀԿ, ՌԱԿ) կուսակցությունները հանդես են եկել միասնական հայտարարությամբ՝ խստորեն դատապարտելով Արցախի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիան[431]:

Եվրոպայի Հայ դատի հանձնախմբի 18 հոգուց բաղկացած կարճաժամկետ դիտորդական առաքելությունը 2017 թ. փետրը-

---

[429] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 57:

[430] Տե՛ս նույն տեղում:

[431] Տե՛ս նույն տեղում:

վարի 20-ին ժամանել է Արցախ՝ դիտարկելու կայանալիք սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսն այցելել են Արցախի Հանրապետություն: Արցախի նախագահ Բակո Սահակյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են պետություն-եկեղեցի և հայրենիք-Սփյուռք հարաբերությունները Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքները հաղթահարելու համատեքստում: Երկու հովվապետերը հանդիպել են զինվորականների հետ, այցելել հիվանդանոցներ և եկեղեցիներ, կատարել բանակի և ժողովրդի օրհնություն[432]: Հոգևոր առաջնորդներ Արամ Ա կաթողիկոսը և Գրիգոր Պետրոս Ի կաթողիկոս պատրիարքը զորակցության նամակներ են հղել Արցախի նախագահ Բակո Սահակյանին: Մի շարք երկրների հայկական եկեղեցիներում (ԱՄՆ, Արևմտյան թեմի եկեղեցիներ, Ֆրեզնոյի Սբ. Երրորդություն, Միչիգանի Սբ. Սարգիս հայաստանյայց առաքելական եկեղեցիներ, Գերմանիայի հայկական եկեղեցիներ, Անթիլիասի Մայր տաճար և Հայ կաթողիկե Սուրբ Եղիա եկեղեցի, Դամասկոսի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս և Հալեպի հայ ավետարանական Բեթել եկեղեցիներ և այլն) տեղի են ունեցել եկեղեցական արարողություններ՝ նվիրված Արցախին[433]:

Մի շարք երկրների (ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Չիլի) պետական գործիչներ դատապարտել են Արցախի դեմ ուղղված ա-

---

[432] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 58:

[433] Նույն տեղում:

դրբեջանական ագրեսիան: Ֆրանսիայի Սենատի անդամները բաց նամակ են ուղարկել ԵԱՀԿ-ին՝ պահանջելով, որ Արցախի Հանրապետությունը որպես լիիրավ կողմ մասնակցի ԼՂ հիմնախնդրի կարգավորման ուղղված բանակցություններին[434]:

Չիլիի խորհրդարանի Պատգամավորների ստորին պալատն ընդունել է Արցախի դեմ Ադրբեջանի ագրեսիան դատապարտող բանաձև: Արցախին իրենց զորակցությունն են հայտնել և ադրբեջանական ագրեսիան դատապարտող կոչերով են հանդես եկել «Sistem of a Down» ռոք խմբի հայազգի երգիչ Սերժ Թանկյանը, հայկական ծագումով ամերիկացի հեռուստաաստղեր Քիմ և Քլոե Քարդաշյանները, հոլիվուդյան դերասան Մարկո Խանը, Reddit կայքի հիմնադիր Ալեքսիս Օհանյանը, Fox հեռուստաալիքի հաղորդավար Արաքսյա Կարապետյանը, հայտնի բռնցքամարտիկ Արթուր Աբրահամը, ֆուտբոլիստ Հենրիխ Մխիթարյանը, ֆրանսահայ երգչուհի Հելեն Սեգարան և բազմաթիվ այլ նշանավոր հայեր[435]:

2017 թ. մարտի 17-ին Օվերեյսլի մարզային դատարանը Ալմելոյում հրապարակել է «Ղարաբաղը լինելու է հայերի գերեզմանը» վիրավորական արտահայտության հեղինակ, «Հաագայի թուրք-ադրբեջանական մշակութային միության» նախագահ Իլհան Աշկինի դեմ դատավճիռը: Հայցը ներկայացրել էր «Հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիան» (FAON)[436]:

---

[434] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 58:

[435] Տե՛ս նույն տեղում:

[436] Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան)

2016 թ. հոկտեմբերին ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ տեղի ունեցած լրագրողների համահայկական 8-րդ համաժողովի կողմից ընդունված հայտարարությամբ ազդարարվել է համահայկական լրատվամիջոցներում «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» խորագրով շարժում սկսելու մասին, որի նպատակն էր ողջ աշխարհի հայությանը զորաշարժի ենթարկել Արցախին օգնելու, նրա յուրաքանչյուր հիմնահարցին հանձնառու դարձնելու, ներդրումները խթանելու, Արցախի սոցիալ-տնտեսական, գիտակրթական և մշակութային կյանքի զարգացմանը մասնակցելու, ԼՂ հիմնախնդիրը հավուր պատճաշի ներկայացնելու, հետևողականորեն բարձրաձայնելու համար, ինչպես նաև նպաստելու Արցախի Հանրապետության միջազգային ճանաչմանն ու հայրենիքի հզորացմանը, Հայաստանի Հանրապետության, Արցախի և Սփյուռքի ջանքերը մեկտեղելուն ուղղված աշխատանքներին[437]:

Որպես գերակա խնդիր՝ ՀՀ սփյուռքի նախարարության կողմից մշակել և ՀՀ կառավարության 2017 թ. հունվարի 12-ի N 122-Ն որոշման 93-րդ կետով հաստատվել է «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման ձևավորում և զարգացում» ծրագիրը, իսկ 94-րդ կետով՝ «Սփյուռքում ըստ մասնագիտությունների համահայկական ցանցերի ընդլայնում և մասնագիտական ներուժի օգտագործում՝ ՀՀ-ի և Արցախի տնտեսության զարգացման համար» ծրագիրը[438]: Միայն եվրոպական տարածաշրջանից տասնյակ կառույցներ միացել են «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժմանը, որի շրջանակներում կազմակերպվել է

արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 59:

[437] Նույն տեղում, էջ 60:

[438] Տե՛ս նույն տեղում, էջ 58:

Արցախին նվիրված 70-ից ավելի միջոցառում, իրականացվել են այցեր դեպի Արցախ, իսկ Քառօրյա պատերազմի օրերին Սփյուռքի հայկական համայնքների կողմից տարաբնույթ աջակցություն է ցուցաբերվել պաշտպանության բանակին, զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին[439]:

Համասփյուռքյան կազմակերպություններն ու կառույցները հայրենի պետականության հետ համատեղ ակտիվ ու հետևողական աշխատանքներ ծավալեցին ոչ միայն ԼՂՀ ժողովրդի լիիրավ անկախությունն ու անվտանգությունը պահպանելու, Ադրբեջանի սանձազերծած 2016 թ. ապրիլյան պատերազմի դատապարտման, Արցախին անհրաժեշտ աջակցություն ցույց տալու և նրա միջազգային ճանաչման գործում, այլև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման ուղղությամբ:

Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսությունը 2015 թ. ապրիլի 28-ին դատական հայց է ներկայացրել Թուրքիայի Սահմանադրական դատարան՝ պահանջելով Սիսի իր պատմական կաթողիկոսարանի վերադարձը՝ հետ ստանալու համար Ադանայի Քոզան գավառում գտնվող այն հողակտորի սեփականության իրավունքը, որի վրա գտնվում են Սուրբ Սոֆիայի վանքն ու ևս մեկ եկեղեցու ավերակներ (Սիսի կաթողիկոսությունը գործել է Քոզանում 600 տարուց ավելի (1293-1915 թթ.), սակայն 1915 թ. հետո գործողությունը դադարեցրել է)[440]:

---

[439] Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 58:

[440] Տե՛ս նույն տեղում, էջ 9:

Դատական հայցի իրավական թղթածրարի պատրաստման աշխատանքներում ներառված է թուրքական և միջազգային դատավարական իրավունքի մասնագետներից բաղկացած հանձնախումբը՝ Մեծի տանն Կիլիկո կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա-ի գլխավորությամբ: Շուրջ 1000 էջից բաղկացած դատական հայցում պատմական, կրոնական, քաղաքական և իրավական տվյալների վրա հարակից փաստաթղթերով և վկայություններով ներկայացվել են Սիսի կաթողիկոսարանի պատկանելությունը, նրա դերը Օսմանյան կայսրության սահմաններում ապրող հայ ժողովրդի կյանքում, Սահակ Բ կաթողիկոսի ու միաբանության պարտադրված հեռացումը Սիսի կաթողիկոսարանից և դրա բռնագրավումը պետության կողմից:

2015 թ. հունիսին Թուրքիայի Սահմանադրական դատարանը պահանջել է կաթողիկոսության լիազորագիրը: 2016 թ. հունիսի 16-ին Թուրքիայի արդարադատության նախարարությունը մերժել է Սիսի կաթողիկոսարանի վերադարձի պահանջի քննարկումը: Կաթողիկոսարանի՝ Սահմանադրական դատարանին փոխանցված մայիսի 26-ի պատասխանում պատմական ու իրավական հստակ հիմնավորումներով մերժվել են արդարադատության նախարարության ներկայացրած անհիմն ու հակասական պատճառները, և վերահաստատվել է Սիսի կաթողիկոսարանը իր իրավատիրոջը՝ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսությանը վերադարձնելու պահանջը: Սակայն Թուրքիայի Սահմանադրական դատարանը մերժել է Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության պահանջով դատի քննարկումը[441]:

---

[441] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 10:

2016 թ. դեկտեմբերի 6-ին Սիսի կաթողիկոսարանի վերադարձի հայկական կողմի պահանջը պաշտոնապես ներկայացվել է Ստրասբուրգի ՄԻԵԴ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան[442]:

Սիսի կաթողիկոսարանի վերադարձի հարցը դիտարկվում է ազգային պահանջատիրության, մասնավորապես համայնքապատկան և եկեղեցապատկան գույքի վերադարձի և հայության խախտված իրավունքների վերականգնման համատեքստում:

Դատական հայցի նպատակն է միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել հայապատկան կալվածքների վերադարձի հարցի վրա: Հայցը չի ընդունվել վարույթ: Նախընտրվում է նոր թղթածրար: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը ստեղծվել է ՀՀ նախագահի՝ «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողով ստեղծելու մասին» 2011 թ. ապրիլի 23-ի ՆՀ-67-Ա հրամանագրով:

2011-2015 թթ. ընթացքում կայացել է Պետական հանձնաժողովի 6 նիստ (2011 թ. մայիսի 30, 2012 թ. սեպտեմբերի 20, 2013 թ. մայիսի 30, 2014 թ. մայսիսի 27, 2015 թ. հունվարի 29-30, 2015 սեպտեմբերի 25-26), որոնց ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Սփյուռքում ստեղծված և գործող տարածաշրջանային հանձնախմբերը[443]:

---

[442] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 10:

[443] Տե՛ս նույն տեղում, էջ 11:

2015 թ. հունվարի 29-30-ին Երևանում տեղի է ունեցել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի 5-րդ ընդլայնված նիստը, որին, պետական հանձնաժողովի անդամներից բացի, ներկա են եղել նաև տարածաշրջանային հանձնախմբերի ներկայացուցիչներ, փորձագետներ, ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչներ, Հայաստանյանց առաքելական սուրբ եկեղեցու թեմերի առաջնորդներ: Հունվարի 29-ի նիստում միաձայն ընդունվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը, որը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը նույն օրը հրապարակել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հավաքի ժամանակ[444]: Այստեղ առաջին անգամ պաշտոնական փաստաթղթի մակարդակով խոսվում է Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման մասին: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը հիմնվում է ՀՀ անկախության հռչակագրի, ՀՀ Սահմանադրության, ՄԱԿ-ի հռչակագրերի, բանաձևերի, կոնվենցիաների և միջազգային այլ իրավական նորմերի վրա և ունի ազգային, բարոյական, հոգեբանական, պատմական, համազգային նշանակություն: Այն ամրագրում է հայ ժողովրդի հավաքական կամքը՝ միջազգային հարթակում շարունակելու պայքարը ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման և պատմական արդարության հաստատման համար: Հռչակագիրը միաժամանակ կոչ է՝ ուղղված Թուրքիային՝ առերեսվելու սեփական պատմության

[444] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 11:

հետ և ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաև արձանագրում է հայ ժողովրդի վերածնունդը և բարեկեցիկ ապագա կառուցելու ձգտումը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը կոչ է անում հայորդիների գալիք սերունդներին հայրենասեր, գիտակից և ուսյալ կեցվածքով պաշտպան կանգնելու հայրենի սրբազան ժառանգությանը, աննահանջ պայքարով ծառայելու հանուն առավել հզոր հայրենիքի՝ ազատ և ժողովրդավար Հայաստանի Հանրապետության, անկախ Արցախի առաջընթացի ու զորացման, աշխարհասփյուռ հայության գործուն համախմբման, համայն հայության դարավոր նվիրական նպատակների իրականացման[445]:

2015 թ. սեպտեմբերի 25-26-ին Երևանում տեղի է ունեցել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի 6-րդ նիստը և «Հիշում եմ և պահանջում» փորձագիտական համաժողովը: Նիստում որոշում է ընդունվել Համահայկական խորհուրդ ձևավորելու մասին, ինչպես նաև ՀՀ սփյուռքի նախարարին հանձնարարվել է մինչև 2016 թ. մայիսի 1-ը պետական հանձնաժողովի անդամներին և տարածաշրջանային հանձնախմբերի ղեկավարներին ներկայացնել «Հայերի վիճակն աշխարհում» առաջին զեկույցի նախագիծը: 2016 թ. սեպտեմբերին զեկույցը ներկայացվել է Պետական հանձնաժողովի նիստին, որի հիման վրա էլ տպագրվել է ՀՀ սփյուռքի նախկին նախարար Հ. Հակոբյանի

[445] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 12:

«Հայկական սփյուռքը հարափոփոխ աշխարհում» աշխատությունը[446]:

Պետական հանձնաժողովի որոշումներով իրականացվել են Կոմիտասի թանգարանի հիմնադրումը, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հիմնանորոգումն ու Հայոց ցեղասպանության թանգարանի ընդարձակումը, նոր ցուցադրությունների կազմակերպման աշխատանքները, ինչպես նաև աջակցություն է ցուցաբերվել Հայոց ցեղասպանության իրավական թղթածրարի պատրաստման աշխատանքներին: ՀՀ սփյուռքի նախարարությունը մասնակցել և համակարգել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստերի սփյուռքյան մասնակիցների հետ տարվող աշխատանքները[447]:

ՀՀ նախագահի 2011 թ. ապրիլյան հրամանագրով ՀՀ արտաքին գործերի և Սփյուռքի նախարարություններին հանձնարարվել է աջակցել Սփյուռքում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնախմբերի ձևավորմանը, իրականացվող աշխատանքների համադրմանը՝ ապահովելով Պետական հանձնաժողովի հետ դրանց արդյունավետ փոխգործակցությունը:

Արդյունքում սփյուռքյան հիմնական կառույցների ջանքերով, ՀՀ սփյուռքի և արտաքին գործերի նախարարությունների աջակցությամբ 50 երկրում իրենց գործունեությունը ծավալեցին տարածաշրջանային 61 հանձնախմբեր: Տարածաշրջանային

---

[446] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 12:

[447] Տե՛ս նույն տեղում, էջ 13:

հանձնախմբերից զատ՝ բազմաթիվ քաղաքներում և համայնքներում ստեղծվել են տեղական մարմիններ[448]:

Տարածաշրջանային հանձնախմբերը ձևավորվել են Պետական հանձնաժողովի ձևաչափով և իրենց կազմում ընդգրկել են հայկական ավանդական կուսակցությունների, հոգևոր կառույցների, համահայկական, իրազեկման և լոբբիստական կազմակերպությունների, գիտակրթական, մշակութային, երիտասարդական, բարեգործական միությունների, մասնագիտական միավորումների ներկայացուցիչների, նշանավոր հայերի և օտարազգիների, Հայոց ցեղասպանության խնդիրներով զբաղվող գիտնականների, հայագիտական կենտրոնների ղեկավարների, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների: Գրեթե բոլոր հանձնախմբերում ստեղծվել են քաղաքական, իրավաբանական, կրոնական, լրատվական, գիտական, ակադեմիական, երիտասարդական, մշակութային, կրթական ենթահանձնախմբեր[449]:

Տարածաշրջանային հանձնախմբերն իրենց գործունեության շրջանակներում իրականացրել են Պետական հանձնաժողովի, ՀՀ սփյուռքի և արտաքին գործերի նախարարությունների կողմից երաշխավորվող և իրենց կողմից նախաձեռնված, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանը նպաստող միջոցառումներ: Համագործակցելով պետական, նահանգային և տեղական մարմինների, հասարակական, լոբբիստական տարբեր կառույցների հետ՝ հանձնախմբերը մեծա-

---

[448] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 12:

[449] Տե՛ս նույն տեղում, էջ 14:

պես նպաստել են Հայ դատի և Հայոց ցեղասպանության միջազգային իրազեկման և ճանաչման գործընթացին[450]:

ՀՀ սփյուռքի նախարարության կողմից մշակվել և տարածաշրջանային հանձնախմբերին է տրամադրվել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների 2011-2017 թթ. ծրագիրը, որում երաշխավորվել է ավելի քան 100 միջոցառում[451]:

Տարածաշրջանային հանձնախմբերի հավաք-հանդիպումներ են կազմակերպվել Բրյուսելում, Մարսելում, Մոսկվայում, Կրասնոդարում, Երևանում, Բեյրութում, որոնց ընթացքում քննարկվել են համահայկական բնույթի խնդիրներ, իրավիճակին տրվող գնահատականները և երաշխավորվող միջոցառումները, իրականացված ծրագրերը, առաջիկա անելիքները: Հանձնախմբերը շարունակում են իրենց գործունեությունը 100+1, 100+2 … սկզբունքով[452]:

ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ 2013 թ. հուլիսի 5-6-ը Երևանում «Իրավաբանների համահայկական խորհրդակցություն» համահայկական մասնագիտական կազմակերպության հետ համատեղ անցկացվել է «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ» խորագրով իրավաբանների համահայկական երկրորդ համաժողովը, որն ընդունել է հայտարարություն, ըստ որի՝ նախատեսվում էր ստեղծել հատուկ հանձ-

---

[450] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 14:

[451] Տե՛ս նույն տեղում:

[452] Տե՛ս նույն տեղում, էջ 15:

նախումբ՝ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրների իրավական թղթածրարն ամբողջականացնելու նպատակով:

Հայոց ցեղասպանության հետևանքների վերացան իրավական հիմնահարցերի փաթեթը մշակվել է 2015 թ. հունիսին Իրավաբանների համահայկական ֆորումի խորհրդին կից ստեղծված գիտավերլուծական կենտրոնի կողմից: 2015 թ. սեպտեմբերի 26-ին Գ. Հարությունյանը փաթեթը պաշտոնապես ներկայացրել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին[453]:

Որպես գերակա խնդիր՝ ՀՀ սփյուռքի նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2015 թ. հունվարի 15-ի N 111-Ն որոշման 41-րդ կետով հաստատվել է «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնախմբերի աշխատանքների համակարգում և իրականացում» ծրագիրը, իսկ 2016 թ. ապրիլի 5-ին հաստատվել է ՀՀ սփյուռքի նախարարի՝ «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության՝ 100 տարի անց Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը և հետևանքների վերացմանը նպատակաուղղված 2016 թ. միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 77-Ա հրամանը[454]: Նաև որպես գերակա խնդիր՝ ՀՀ սփյուռքի նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2017 թ. հունվարի 12-ի N 122-Ն որոշման 92-րդ կետով հաստատվել է «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը և դատապարտմանն ուղղված քաղաքականության շրջանակներում սփյուռքահայ երիտասարդության

---

[453] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 15:

[454] Տե՛ս նույն տեղում, էջ 16:

շրջանում պատմական հիշողության ամրապնդմանն աջակցություն» ծրագիրը[455]:

Հայոց ցեղասպանությունն այսօր արդեն ճանաչել և դատապարտել են երկու տասնյակից ավելի պետություններ, մի շարք միջազգային կառույցներ: Այդ աշխատանքներում անուրանալի է հայկական համայնքների, կառույցների, լոբբիստների, անհատների, իսկ վերջին 25 տարում՝ նաև հայ դիվանագետների դերակատարությունը: Այդ գործընթացը լայն թափով ծավալվեց նաև Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախօրյակին և այն նշելուց հետո:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներն անցկացվեցին «Հիշում եմ և պահանջում եմ» կարգախոսի ներքո: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում չափազանց մեծ կարևորություն ուներ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիայի Դաշնության կողմից 2016 թ. հունիսի 2-ին ընդունած բանաձևը, որտեղ ոչ միայն դատապարտվում է Հայոց ցեղասպանությունը՝ իբրև 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, մարդկության դեմ կազմակերպված հանցագործություն, այլև ընդունվում է Գերմանիայի մեղսակցությունը այդ ցեղասպանության մեջ: Այս խնդիրը կարևորվում է այն տեսանկյունից, որ Հայոց ցեղասպանությունն ընդունում և դատապարտում է մի երկիր, որն ամենամեծ մեղսակցությունն է ունեցել Թուրքիայից հետո նրա իրագործման մեջ[456]:

---

[455] Տե՛ս Հայաստան-Սփյուռք համաժողով, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբեր, 2017, Ե., 2017, էջ 16:

[456] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3 փետրվարի, 2016, էջ 3:

Հայոց ցեղասպանությունը ճանաչել են ԱՄՆ-ի 4 տասնյակից ավելի նահանգները, տարբեր քաղաքների քաղաքապետարանները: 2014 թ. ապրիլի 10-ին ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 12 կողմ, 5 դեմ արդյունքով ընդունել է Հայոց ցեղասպանության փաստը դատապարտող 410 բանաձևը: Նույն տարվա սեպտեմբերի 9-ին Հունաստանի խորհրդարանը ձայների մեծամասնությամբ ընդունել է Ցեղասպանության ժխտումը քրեականացնող «Այլատյացության դեմ պայքարի» օրինագիծը, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում հրեաների, հայերի և Պոնտոսի հույների ցեղասպանության ժխտման համար:

Հայաստանը միջազգային շրջանակներում ձեռք է բերել ցեղասպանության դեմ պայքարող երկրի հեղինակություն, որը ճանաչել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ ցեղասպանության կանխարգելման հարցերով հատուկ ներկայացուցիչը:

Հայոց ցեղասպանության միջազգայնացման գործընթացին մեծապես նպաստեց 2015 թ. ապրիլի 12-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Նորին սրբություն Հռոմի պապ Ֆրանցիսկոսի կողմից Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված աղոթքի՝ պատարագի ժամանակ ասված խոսքերը: Հռոմի պապը հայերի զանգվածային սպանությունները բնութագրեց «որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն»:

Առանձնակի հանդիսավորությամբ նշվեց Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը, որին ՀՀ, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Սերբիայի, Կիպրոսի նախագահների հետ մասնակցեցին ավելի քան 60 երկրների և միջազգային տասնյակ կառույցների պատվիրակությունները: Նման մեծ և հանդիսավոր միջոցառում Հայաստանում երբևէ չէր եղել: Ապրիլքսանչորսյան գլխավոր մի-

ջոցառման հանդիսավոր անցկացումը, անշուշտ, նպաստեց Հայոց ցեղասպանության միջազգայնացման գործընթացի նոր ուժով ծավալմանը:

Այսպիսով՝ ՀՀ արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն է: Այդ գործընթացը նոր ուժով ծավալվեց 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին: Հայոց ցեղասպանության 95-րդ, 96-րդ, 97-րդ, 98-րդ, 99-րդ և 100-րդ տարելիցների կապակցությամբ շուրջ հինգ տասնյակից ավելի երկրներում անցկացվեցին ոգեկոչման և հիշատակի հարյուրավոր միջոցառումներ, որոնց իրենց աջակցությունը ցուցաբերեցին ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Ա. ՍՓՅՈՒՌՔԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Անկախության հռչակումից հետո Հայաստանը ոչ միայն աշխարհաքաղաքական, այլև սոցիալ-տնտեսական առումով հայտնվեց ծանր իրավիճակում: 1988 թ. երկրաշարժի ծանր հետևանքները, ԽՍՀՄ-ի փլուզման պատճառով ավանդական տնտեսական կապերի խզումը հատկապես ԽՍՀՄ նախկին հանրապետությունների հետ, Լեռնային Ղարաբաղի ազգային-ազատագրական պատերազմը, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից տնտեսական շրջափակումը մեծ չափով վնասակար ազդեցություն ունեցան երկրի հանրային ու տնտեսական կյանքի վրա: Այս փորձությունները Հայաստանին գրեթե միանգամից կանգնեցրին քաղաքական և սոցիալական տնտեսական ճգնաժամի առջև: Չնայած այդ ծանր իրավիճակին՝ դեռևս 1988 թ. փետրվարից սկիզբ առած ազգային զարթոնքը, արցախյան գոյապայքարն ու Հայաստանի անկախության հռչակման իրողությունը պայքարի ոգի, ուժ ու կորով էին ներարկել հայ ժողովրդին՝ դիմակայելու դժվարություններին, պայքարելու պետականության կայացման ու երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Այս լավատեսության հիմքում ընկած էր նաև ամբողջ աշխարհով

աշխարհասփյուռ հայության առկայությունը, որը համեմատական մեծ առավելություն էր տալիս Հայաստանին:

Հայտնի է, որ հատկապես 1991 թվականից հետո եկած ժամանակահատվածը լի էր համաշխարհային և աշխարհաքաղաքական բազմաթիվ ցնցումներով, որոնք իրենց ազդեցությունը թողեցին ինչպես Հայաստանի տնտեսական զարգացման, այնպես էլ տարբեր փուլերում Հայաստան-Սփյուռք սոցիալ-տնտեսական հարաբերությունների ակտիվության վրա: Այսպես, օրինակ, 1988 թ. դեկտեմբերից այդ հարաբերությունների գլխավոր ուղղությունը երկրաշարժի գոտում ցուցաբերվող օգնությունն էր, Արցախյան պատերազմի և շրջափակման պայմաններում բնակչության նվազագույն կարիքների բավարարումը: 1994-2001 թթ. ուշադրությունը սևեռվեց տնտեսության վերականգնման ու ձեռնարկատիրության զարգացման վրա: Այդ տարիներին Հայաստանի տնտեսության մեջ ներդրումներ կատարած օտարերկրյա ներդրողների շուրջ 69 %-ը սփյուռքահայեր էին. միայն 1998-2004 թթ. ընթացքում սփյուռքահայերը կատարել են 275 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, որը կազմում էր այդ ժամանակահատվածում կատարված ներդրումների 25 %-ը[457]:

21-րդ դարասկզբի երկրորդ տասնամյակում Սփյուռքի մասնակցությունը Հայաստանի տնտեսական կյանքին դարձել է առավել կազմակերպված ու նպատակային: Անուրանալի է Սփյուռքի դերակատարությունը հայրենիքում այնպիսի ոլորտների զարգացմանը, ինչպիսիք են՝ դրամատնային համակարգը, զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը, տեղեկատվական

[457] Տե՛ս Ավետիսյան Ս., Գրիգորյան Ա., Բաբաջանյան Ս., Կիրակոսյան Ա., Սփյուռքի ներդրումները ՀՀ տնտեսության մեջ. զարգացման հեռանկարները, Ե., 2015, էջ 6:

տեխնոլոգիաները և մի շարք ծառայություններ: Հայաստանի համար տնտեսական գերակայություն են արտահանմանն ուղղված արտադրությունների զարգացումը և արտաքին շուկայում հայկական ապրանքների պատշաճ ներկայացումը[458]:

ՀՀ տնտեսության առանցքային բնորոշիչները տրանսպորտային ենթակառուցվածքների նվազ հասանելիությունն ու տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներում տնտեսության սահմանափակ ներգրավվածությունն են: Տրանսպորտային շրջափակումը զգալիորեն ավելացնում է ՀՀ բեռնափոխադրումների ծախսերը՝ բացասաբար անդրադառնալով նաև զբոսաշրջության ոլորտի զարգացման հնարավորությունների վրա: Բացի բարձր գնաճից՝ այն հանգեցնում է նաև բազմաթիվ ապրանքային շուկաներում անարդյունավետ մրցակցությանը, գերիշխանության հաստատմանը և մենաշնորհների ձևավորմանը: Նախկինում իրականացված հետազոտությամբ հաշվարկվել է, որ աշխարհաքաղաքական սահմանափակումների հաղթահարումը կարող է կիսով չափ նվազեցնել Հայաստանի արտաքին առևտրի պակասուրդը՝ ավելացնելով ՀՆԱ-ն 30 %-ով[459]:

Հայտնի է, որ Հայաստանը 1990-ական թթ. կեսերին ոչ միայն կորցրեց նավթային հոսքում տարանցիկ երկիր դառնալու հնարավորությունը, այլև Բաքու–Թբիլիսի– Կարս երկաթուղու կառուցմամբ, ինչպես նաև Իրան–Ռուսաստան երկաթուղային հաղորդակցությունն Ադրբեջանով կարգավորելու պարագայում մեծ է ռիսկը որ Հայաստանը կհայտնվի տարածաշրջանի տրանսպորտահաղորդակցական ենթակառուցվածքներից լիա-

---

[458] Տե՛ս Ավետիսյան Ս., Գրիգորյան Ա., Բաբաջանյան Ս., Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ 6:
[459] Տե՛ս նույն տեղում, էջ 98:

կատար մեկուսացման մեջ: Չնայած այդ ամենին՝ այսօր ՀՀ կառավարությունը մեծ ջանքեր է գործադրում «Հյուսիս-հարավ» միջպետական մայրուղու շինությունն ավարտին հասցնելու ուղղությամբ, սակայն Հայաստանն արտաքին աշխարհին կապող կապուղիները ծախսատար են և ոչ այնքան հուսալի: Հատկապես Վրաստանի բեռնափոխադրումները պարբերաբար վտանգվում են Վերին Լարս անցակետի անգործության հետևանքով: Ձևավորված հաղորդակցական իրողություններն ու աշխարհաքաղաքական սահմանափակումները ակնհայտորեն խոչընդոտում են երկրի տնտեսական աճին ու Հայաստանի ներգրավմանը միջազգային առևտրին[460]:

Հիշյալ խնդիրների կարգավորումն առանցքային նշանակություն ունի ՀՀ տնտեսության համար հատկապես ԵԱՏՄ-ին անդամակցությունից հետո, քանի որ Հայաստանը միության անդամներից միակն է, որը 2017 թ. նոյեմբերի 24-ին Եվրամիության հետ ստորագրած համաձայնագրով խորացված առևտրային համաձայնագրեր ունի Եվրամիության երկրների հետ, ինչը մեզ հնարավորություն է ընձեռում հատկապես Ռուսաստան-ԵՄ «սառը» հարաբերությունների պայմաններում վերածվելու վերջինների գործարար շրջանակները կապելու արդյունավետ տնտեսական հարթակի: Նույնը կարելի է նշել նաև Իրան-Արևմուտք ջերմացող հարաբերությունների պարագայում: Ցավոք, այսօր Իրանը Հայաստանը դիտարկում է որպես հաղորդակցական երկիր, սակայն մենք նույն աշխարհաքաղաքական սահմանափակումների հետևանքով դեռևս չենք կարողանում Իրանին առաջարկել մեր տնտեսական օրակարգը[461]:

---

[460] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 99:
[461] Տե՛ս նույն տեղում, էջ 100:

Վերոնշյալ խնդիրների լուծման գործում Հայաստանն ակնկալում է նաև Սփյուռքի հայրենակիցների ակտիվ օժանդակությունը: Կարծում ենք, որ հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունները սխալ է պատկերացնել միայն Սփյուռքի ֆինանսական ներուժի համախմբման և դեպի Հայաստան դրա ուղղորդման համատեքստում: Հիշյալ խնդիրը կարող է լինել առավելապես Սփյուռքի բարեգործական հաստատությունների կամ անհատ բարեգործների և Հայաստանի միջև հարաբերությունների օրակարգի մեկ բաղադրիչը: Ակնհայտ է, որ Սփյուռքի բարեգործական հիմնադրամների և անհատ բարեգործների կողմից իրականացվող ծրագրերը՝ հիմնված հոգևոր, մշակութային, մարդասիրական, քաղաքական կամ գաղափարախոսական սկզբունքների վրա, մշտապես իրականացվելու են. Սփյուռքը միշտ էլ օժանդակում և օգնում է հայաստանաբնակ հայությանը: Սակայն ճիշտ կլինի, որ հայրենիք-Սփյուռք հարաբերությունները բարեգործական, մարդասիրական կամ գաղափարախոսական դաշտից տեղափոխվեն խիստ գործնական և գործընկերային (ցանցային) հարաբերությունների դաշտ:

Հաճախ Սփյուռքի մեր հայրենակիցները բնատուր տաղանդի ու աշխատասիրության շնորհիվ առաջատար դիրքեր են գրավում իրենց ապաստան տված երկրների քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում: Մեր հայրենակիցներն արտերկրում տնօրինում են առևտրային, ֆինանսական, ՏՏ ոլորտների զգալի ակտիվների, ինչպես նաև արտադրական լուրջ հզորությունների: Այսօր այնքան կարևոր է Հայաստանում ներդրումների իրականացումը, որքան արտերկրում մեր հայրենակիցների տնօրինած ակտիվների ձևավորած արժեքային շղթաներում հայկական ընկերություններին ներգրավվելու հնա-

րավորությունների ընձեռումը, հատկապես, որ նմանօրինակ հաջողված փորձն արդեն իսկ իր դրական արդյունքն է տալիս թանկարժեք քարերի մշակման, ոսկերչության և ՏՏ ոլորտներում:

Հայտնի է, որ Սփյուռքի մեր հայրենակիցները կարող են իրենց նպաստը բերել տարբեր երկրներում Հայաստանի առևտրատնտեսական ներկայացուցչությունների ստեղծման, հայկական ապրանքների հավաստագրման ու ստանդարտացման ուղղությամբ խորհրդատվության տրամադրման, հայկական ընկերություններում միջազգային պահանջներին համապատասխանող արտադրական ու կառավարչական տեխնոլոգիաների ներդրման, տարբեր երկրներում հայրենական արտադրանքի ներմուծման խնդիրների լուծման, արտերկրում «Պատրաստված է Հայաստանում» ձևավորման ու առաջմղման հարցերում[462]: Անշուշտ, նման գործակցությունն առավել շահավետ է ինչպես տեղի գործարար շրջանակների, այնպես էլ Սփյուռքի մեր հայրենակիցների համար: Այդ գործակցությունը, մի կողմից, կնպաստի հայաստանյան և արտերկրի հայ գործարար շրջանակների ընկալումների և սկզբունքների փոխադարձ հարմարմանը, մյուս կողմից ճանապարհ կհարթի տնտեսական համագործակցության հարթակների ձևավորման ուղղությամբ[463]: Այդպես Հայաստանում գործող հասարակական նախաձեռնություններն ու կազմակերպությունները ուղղակի հարաբերության մեջ կմտնեն Սփյուռքում նմանատիպ աշխատանքով զբաղվող տեղի կազմակերպությունների հետ՝ ձևավորելով համագործակցության ու փոխօգնության նոր օրակարգ և ձևաչափեր: Հայաստա-

[462] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 101:
[463] Տե՛ս նույն տեղում, էջ 102:

նը, իր հերթին, պետք է առանց խտրականության հարաբերվի Սփյուռքում գործող բոլոր ուժերի հետ, հաշվի առնի նրանց կարծիքն ու մոտեցնումները՝ անկախ քաղաքական հայացքներից: Ակնհայտ է, որ 21-րդ դարում ՀՀ ու աշխարհասփյուռ հայության առջև ծառացած արտաքին և ներքին մարտահրավերները պահանջում են նոր որակ, ձև և բովանդակություն հաղորդել Հայաստան-Սփյուռք գործակցությանը, ինչը պետք է ուղղված լինի հայության բոլոր հատվածների ներուժի ներառմամբ մարդկային կապիտալի ձևավորմանը[464]:

Պատահական չէ, որ Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումը Հայաստանի իշխանությունների կողմից դիտարկվում է, որպես պետական քաղաքականության առանցքային ուղղություն, որի նպատակն է Սփյուռքի ձեռներեցների մասնակցության օժանդակումը ՀՀ տնտեսական ծրագրերին, հայկական պետականության ամրապնդմանն ու համազգային խնդիրների լուծմանը սփյուռքահայերի արդյունավետ մասնակցության համար նպաստավոր քաղաքական, տնտեսական, մշակութային, իրավական և հոգևոր միջավայրի ձևավորումը:

Թեև ՀՀ-ն ունի սահմանափակ ռեսուրսներ, այնուհանդերձ, փաստ է, որ թե՛ միջազգային ասպարեզում մեր երկրի ճանաչելիության բարձրացման և ազգային խնդիրների լոբբինգի և թե՛ երկրի տնտեսական աջակցմանը և զարգացմանը նպաստելու տեսանկյունից ռազմավարական նշանակություն ունի Սփյուռքի դերը: Տարբեր գնահատումներով Հայաստանից դուրս ապրում է շուրջ 7 միլիոն հայ, որոնք, տարբեր դարաշրջաններում տարբեր պատմական իրադարձություններից ելնելով, բնակություն են հաստատել հայրենիքից դուրս, սակայն ազգային պատկանելու-

[464] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 102:

թյան գիտակցմամբ: Ըստ այդմ՝ առանձնացնում ենք «հին Սփյուռք » և «նոր Սփյուռք» հասկացությունները, որոնց տարբերությունը հայրենիքում և հայրենիքից դուրս ծնված լինելու փաստն է[465]:

Ազգային պատկանելիության գիտակցումը միավորում է Սփյուռքը հայրենիքին օգտակար լինելու ցանկությամբ, որի դրսևորումները անկախությունից ի վեր տարբեր են եղել՝ Արցախյան ազատագրական պայքարին մասնակցությունից մինչև հանգանակությունների տրամադրում, օտարերկրյա ուղղակի ներդրումներում մասնակցություն, մասնագիտական գիտելիքների և կապերի ներդրմամբ տարբեր ոլորտների զարգացմանը նպաստում, դրամական միջոցների փոխանցումներ հարազատներին և այլն: Ընդ որում, կախված օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբեր պայմաններից, տարբեր ժամանակներում այս կամ այն ձևն է տարածված եղել: Օրինակ՝ մինչև 90-ականների սկիզբը առավելապես տարածված էին աջակցության, հանգանակությունների, դրամական փոխանցումների (տրանսֆերտներ) ձևերը, 2000-ական թթ.՝ օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ-ները), իսկ վերջին տարիներին՝ գիտելիքի կոմպոնենտ ներառող սոցիալական երկարաժամկետ ծրագրերի իրականացումը[466]:

Այսօրվա գլոբալ մարտահրավերների առկայության պայմաններում Հայաստանը չի կարող գրավել պասիվ, տարերայնորեն զարգացող երկրի դիրք, այլ պետք է վճռականորեն որդեգրի և իրագործի արագ զարգացմանը նպաստող քաղաքականու-

---

[465] Տե՛ս Անտոնյան Ք., Հայրապետյան Գ., Սփյուռքի ներդրումային ներուժի բարձրացման ուղիներ ՀՀ տնտեսության մեջ, Ե., 2016, էջ 8:
[466] Տե՛ս նույն տեղում, էջ 9:

թյուն: Այդ համատեքստում կարևորվում է առկա ռեսուրսների, այդ թվում՝ Սփյուռքի պոտենցիալի արդյունավետ և նպատակային օգտագործման խնդիրը:

Ավանդաբար օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման գործում Սփյուռքի դերն անգնահատելի է: Բացի հանքարդյունաբերության և մասամբ հեռահաղորդակցության ոլորտից՝ տնտեսության մյուս ոլորտներում (ադամանդագործություն, ոսկերչություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տրանսպորտ, շինարարություն, ներկայումս ֆինանսական հատված, զբոսաշրջություն և առևտուր) իրականացված ներդրումների գերակշիռ մասը կապված է Սփյուռքի հետ:

ՀՀ տնտեսության վրա Սփյուռքի ազդեցությունը իրականացվում է հետևյալ ձևով՝ ուղղակի ներդրումների իրականացում, անուղղակի ներդրումների իրականացում, դրամական փոխանցումների իրականացում, սպառման խթանում (զբոսաշրջություն), միջազգային առևտրի խթանում:

Հայտնի է, որ ՀՀ տնտեսական աճի ապահովման ամենակարևոր աղբյուրը ՀՀ տնտեսության կապիտալիզացիան է ՕՈՒՆ-ների օտարերկրյա ուղղակի ներդրումների միջոցով: Ընդ որում՝ ՕՈՒՆ-ների գրավման տեսանկյունից զգալի է Սփյուռքի դերը: Այսպես՝ 1998-2004 թթ. ՕՈՒՆ-ների շուրջ քառորդը Սփյուռքին առնչվող ներդրումներ էին: Սակայն, մյուս կողմից, 2002 թվականից սկսած, այդպիսի ՕՈՒՆ-ները նվազման միտումներ են ցուցաբերել[467]:

Ընդհանրապես, Սփյուռքը շատ կարևոր դեր է ունեցել ՀՀ տնտեսության համար ՕՈՒՆ-ների ներգրավման գործում[468]:

---

[467] Տե՛ս Անտոնյան Ք., Հայրապետյան Գ., նշվ. աշխ., էջ 25:
[468] Տե՛ս նույն տեղում:

Այսպես՝ 1994-2001 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ տնտեսության մեջ ներդրումներ կատարած օտարերկրյա ներդրողների շուրջ 70 %-ը սփյուռքահայեր էին: Այս ներդրումները հիմնականում կատարվել են շինարարության, բանկային համակարգի, զբոսաշրջության, գյուղատնտեսության, տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների ոլորտներում: Ավելին՝ Սփյուռքը նաև դիտարկվում է որպես կարևոր գործոն տնտեսական բարեփոխումների և ժողովրդավարացման գործընթացների զարգացման համար[469]: Սփյուռքի դերը փոփոխվել է 1988 թվականից ի վեր և ներկայումս ներառում է տնտեսական, բարեգործական, աշխարհաքաղաքական և մշակութային կապեր:

Վերլուծելով ՕՈՒՆ-ի ներհոսքը՝ կարող ենք փաստել, որ 2007-2014 թթ. ընկած ժամանակաշրջանում նկատվել է ՕՈՒՆ-ների ծավալի զգալի նվազում: Այստեղ հարկ է նշել, որ սկզբնական շրջանում ՊՈՒՆ-ների ծավալի նվազումը հիմնականում պայմանավորված էր գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամով, իսկ վերջին տարիներին՝ համաշխարհային տնտեսության զարգացման անկայուն վիճակով[470]:

1991-2014 թթ. ընկած ժամանակաշրջանում դեպի ՀՀ տնտեսություն ՕՈՒՆ համախառն հոսքերը կազմել են 10.253 մլն դոլար: Նշված ժամանակաշրջանում Ռուսաստանին բաժին է ընկել 3.039 մլն, Գերմանիային՝ 588.6 մլն, ԱՄՆ-ին՝ 273.2 մլն, Ֆրանսիային՝ 490.6 մլն, Մեծ Բրիտանիային՝ 224.3 մլն, Արգենտինային՝ 221.9 մլն, իսկ Կանադային՝ 191.1 մլն դոլար[471]: Ինչպես

---

[469] Տե՛ս Անտոնյան Ք., Հայրապետյան Գ., նշվ. աշխ., էջ 25:
[470] Տե՛ս նույն տեղում:
[471] Տե՛ս նույն տեղում:

երևում է այս տվյալներից, դեպի ՀՀ տնտեսություն ՕՈՒՆ-ների հոսքերը ապահովող երկրները հիմնականում համընկնում են Հայկական սփյուռքի օջախների հետ՝ բացառությամբ Մեծ Բրիտանիայի: Մյուս կողմից, եթե մենք հիմք ենք ընդունում, որ կա ուղիղ կապ Հայկական սփյուռքի օջախների և ՕՈՒՆ-ների հոսքեր ապահովող երկրների միջև, ապա կարող ենք նշել, որ դեռևս առկա է օգտագործված ներուժ հատկապես Լեհաստանի, Բրազիլիայի, Ավստրալիայի և Իրանի դեպքում[472]:

Ավելին, եթե ՕՈՒՆ-ների հոսքերը դիտարկվեն «նոր Սփյուռքի» և «հին Սփյուռքի» օջախներ համատեքստում, կարելի է արձանագրել, որ «հին Սփյուռքի» օջախները բավականին պասիվ են ՕՈՒՆ-ների առումով: Այստեղ անհրաժեշտություն է առաջանում միջոցներ փնտրելու «հին Սփյուռքին» մոբիլիզացնելու համար՝ լրացուցիչ կապիտալ ներգրավելու նպատակով:

Հարկ է նկատել նաև այն, որ ՕՈՒՆ-ների իրականացման տեսանկյունից էապես տարբերվում են ՀՀ սփյուռքի երկու խմբերի՝ Հայաստանում ծնվածների և արտերկրում կամ Սփյուռքում ծնվածների «շարժառիթները»[473]: Այսպես՝ Սփյուռքում ծնվածների համար կարևոր շարժառիթ են հայրենասիրական զգացումները: Մյուս կողմից, ՕՈՒՆ-ներում ավելի մեծ բաժին ունեն Սփյուռքում չծնված մեր ազգակիցները, որոնց գլխավոր շարժառիթներն են ընտանեկան կապերը, Հայաստանում բնակվող հարազատներին օգնելը և այլն[474]: Ուստի ստացվում է, որ ընդհանուր առմամբ Հայկական սփյուռքն իր բազմաթիվ շարժառիթներով համարվում է ՀՀ տնտեսական զարգացման ապա-

---

[472] Տե՛ս Անտոնյան Ք., Հայրապետյան Գ., նշվ. աշխ., էջ 25:
[473] Տե՛ս նույն տեղում, էջ 27:
[474] Տե՛ս նույն տեղում, էջ 27:

հովման համար ռազմավարական նշանակության «ակտիվ»: Այնուհանդերձ, մյուս կողմից էլ Սփյուռքի ներկայացուցիչների կողմից ներդրումների իրականացման շարժառիթները դրսևորում են նվազման միտումներ:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ 1990-2000 թթ. ընկած ժամանակահատվածում, երբ Հայաստանի տնտեսությունը գտնվում էր ծանր վիճակում և ուներ ոչ բարենպաստ ներդրումային միջավայր, Սփյուռքի կողմից կատարված համեմատաբար քիչ ներդրումները պայմանավորված էին «հին» ու «նոր» Սփյուռքների միջև առկա մշակութային ու ինքնության տարբերություններով: Շատ հաճախ տնտեսական աճի գործում պայմանավորվում էր Սփյուռքի ներդրումային գործոնը: Դա հատկապես դրսևորվեց 21-րդ դարասկզբին ՀՀ տնտեսության մեջ երկնիշ տնտեսական աճի ցուցանիշում:

Հայտնի է, որ 1995-1998 թթ. ՀՀ տնտեսության գնաճն ունեցել է բարձր տեմպեր, ՀՆԱ-ն, արդյունաբերական, գյուղատնտեսության արտադրանքի թողարկումը և մանրածախ առևտրաշրջանառությունն աճել են դանդաղ տեմպերով, արտահանումը դրսևորել է անկման միտումներ: Իրավիճակի արմատական փոփոխությունը մեծապես պայմանավորված էր Սփյուռքի գործոնով: Մասնավորապես Քըրք Քրքորյանի «Լինսի» հիմնադրամի միջոցներով Աղետի գոտու վերականգնման, ճանապարհաշինության և փոքր ու միջին գործարարության խթանման նպատակով Հայաստանին զգալի ֆրանսական օգնության տրամադրումը, աշխատանքային միգրանտների ու 1988-2001 թթ. արտագաղթածների կողմից ընտանիքի անդամներին և բարեկամներին ուղարկվող դրամական փոխանցումների ծավալների շեշտակի ավելացումը զգալի աշխուժացում մտցրին Հայաստանի տնտե-

սության մեջ՝ նպաստելով վերջինիս աճի երկնիշ ցուցանիշների ապահովմանը[475]:

Ինչպես երևում է, 2003-2008 թթ. ժամանակահատվածին բնորոշ են տնտեսության բոլոր հատվածների կանոնավոր աճի բարձր և գնաճի համեմատաբար ցածր տեմպերը: Այս ժամանակահատվածի միակ բացասական բնորոշումը, թերևս ներմուծման ծավալների զգալի ավելացումը և արտահանման նկատմամբ դրանց առաջանցիկ բնույթն են (ներմուծումն ավելացել է մոտ 3.5 անգամ)[476]: Սակայն տնտեսական աճի բարենպաստ տեմպերի առկայությամբ և ՀՀ սոցիալ-տնտեսական բոլոր ցուցանիշների նկատելի բարելավմամբ հանդերձ՝ այդ տարիներին կառավարությունը, ցավոք, չկարողացավ մշակել և իրականացնել տնտեսական աճը տնտեսական զարգացման վերափոխելու և տնտեսությունը դիվերսիֆիկացնելու, ձևավորված մենաշնորհների շուկայական դիրքերը թուլացնելու, մրցակցային միջավայրը բարելավելու արդյունավետ ծրագրեր[477]: Բացի դրանից՝ սեփականության ու ներդրումների պաշտպանության օրենսդրական բացերը, տեղի գործարար շրջանակներից խաբված սփյուռքահայ մի շարք ներդրողների բացասական փորձը, դրա առնչությամբ վերջիններիս օբյեկտիվ դժգոհությունը և Սփյուռքի որոշ օջախներում դրա բարձրաձայնումը զգալիորեն սահմանափակեցին Սփյուռքի գործարար տաղանդն արդյունավետ օգտագործելու (հատկապես փոքր և միջին գործարարության բնագավառում) հնարավորությունները և սպառման նպատակով իրականացվող դրամական փոխանցումները, տնտեսության տարբեր

---

[475] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 48-49:
[476] Տե՛ս նույն տեղում, էջ 50:
[477] Տե՛ս նույն տեղում:

ոլորտներում ներդրումների վերափոխմանը միտված ծրագրերի ընթացքը[478]: Հնարավոր է, որ ներկայիս խնդիրներից շատերն այսքան սուր արտահայտված չլինեին, եթե Սփյուռքի ֆինանսական օժանդակության, դրամական փոխանցումների ու շինարարության և ֆինանսական ոլորտների աննախադեպ աճի շնորհիվ կառուցված տնտեսական մոդելը 2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով նկատելի տնտեսական անկում չգրանցեր[479]:

Հետևողական աճով հանդերձ՝ Հայաստանի տնտեսությունն արտաքին ազդակների նկատմամբ շարունակել է մնալ խոցելի: Մասնավորապես 2008-2009 թթ. մասնավոր դրամական փոխանցումների նվազումը զգալիորեն կրճատել է ինչպես ՀՆԱ-ն, այնպես էլ դրա բաղադրիչները (բացի բնակչությանը մատուցվող ծառայությունների ծավալից): 2009 թ. անկման առավել վառ դրսևորումներից են ներմուծման 1.3 անգամ կրճատումն ու 2010-2011 թթ. բարձր գնաճը[480]: Ընդ որում՝ վերականգնողական աճը հիմնականում հնարավոր է եղել ապահովել արտաքին պարտքի բեռի մեծացմամբ:

Ինչպես ցույց են տվել վերլուծության արդյունքները, հետխորհրդային իրողությունները, 2002-2008 թթ. տնտեսական աշխուժացումը, ինչպես նրա ներմուծող տնտեսական ձևավորումն այն հիմնական գործոններն են, որոնք պայմանավորել են Հայաստանի տնտեսության ներկայիս կառուցվածքը: Այն «թվերի լեզվով» ներկայացնելիս կստանանք հետևյալ պատկերը. 2013 թ. արդյունաբերության (ներառյալ էներգետիկան) ու գյուղա-

---

[478] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 50:
[479] Տե՛ս Ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ) տարեգիրք, 2012, 2015 թթ.:
[480] Տե՛ս նույն տեղում:

տնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 35.7 %, իսկ շինարարության ու ծառայությունների մասնաբաժինը՝ 55.5 %[481]: Ընդ որում՝ արդյունաբերության ու գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ, 2008-ի համեմատությամբ, մեծացել է մոտ 5.3 %-ով, հիմնականում շինարարության ծավալների աննախադեպ անկման հաշվին: Թեև հանքարդյունաբերությունը կազմել է 2010-2014 թթ. ՀՆԱ-ի միջինը՝ 2.6 %-ը, սակայն մետաղական արտադրանքը և հանքաքարը կազմել են երկրի արտահանման մեկ երրորդից ավելին[482]:

Պահանջարկի առումով մասնավոր սպառումը ՀՆԱ-ի հիմնական բաղադրիչն է: Մասնավոր ներդրումների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կայուն աճում է՝ սկսած 2000-ական թթ. սկզբից, սակայն կտրուկ նվազեց 2009 թ. ճգնաժամի ընթացքում և դեռևս պետք է վերականգնվի մինչև մինչճգնաժամային մակարդակը: Անկախացումից ի վեր ներմուծումը զգալիորեն գերազանցում է արտահանմանը: 2014 թ. արտահանումը կազմել է ՀՆԱ-ի մոտ 14 %-ը, ներմուծումը՝ 41 %-ը[483]: Հայաստանի տնտեսության ակնառու առանձնահատկություններից մեկը նշանակալի ոչ ֆորմալ տնտեսությունն է: Ըստ «Արժույթի միջազգային հիմնադրամի» (ԱՄՀ) տվյալների՝ ոչ ֆորմալ տնտեսությունը գնահատված է ՀՆԱ-ի 35 %-ը, որը ամենաբարձրն է Կենտրոնական Ասիայի և Կովկասի երկրների համեմատությամբ[484]: Չնայած նախկին ԽՍՀՄ երկրների համեմատությամբ Հայաստանի Հանրապետությունն ունի ամենաազատական տնտեսություններից

---

[481] Տե՛ս Ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ) տարեգիրք, 2014, էջ 234-235:
[482] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, էջ 52:
[483] Տե՛ս նույն տեղում, էջ 53:
[484] Տե՛ս նույն տեղում:

մեկը, սակայն բնական ռեսուրսների սահմանափակությունը, ներքին շուկայի փոքր տարողունակությունը, արդյունաբերական համալիրի սահմանափակ բազմազանությունը, միջազգային առևտրին աննշան ներգրավվածությունը, միջազգային շուկայում հայրենական արտադրողների ոչ գրավիչ կերպարը (շատ ճյուղերում՝ առհասարակ դրա բացակայությունը), երկրի աշխարհաքաղաքական ոչ նպաստավոր դիրքը, ինչպես նաև Արցախի դեռևս չլուծված խնդիրը էականորեն սահմանափակում են օտարերկրյա ներդրումներ ներգրավելու հնարավորությունները[485]:

Օտարերկրյա ներդրումների և ուղղակի ներդրումների ներգրավման հայաստանյան փորձը պայմանականորեն հնարավոր է բաժանել երկու հատվածի՝ դինամիկ աճի (2000-2008 թթ.) և հետճգնաժամային անկման (2009-2014 թթ.)[486]: 2008 թ. ներգրավված օտարերկյա ներդրումների և ուղղակի ներդրումների ծավալը հասել էր պատմական առավելագույնին՝ կազմելով համապատասխանաբար՝ 1258 և 1001 մլրդ ԱՄՆ դոլար: Սակայն հետճգնաժամային տարիներին դրանք էականորեն կրճատվել են: 2013 թ. դրությամբ ներգրավված օտարերկրյա ներդրումները կազմել են 597.4 մլն, իսկ ուղղակի ներդրումները՝ 271.2 մլն ԱՄՆ դոլար[487], իսկ 2008 թ. ցուցանիշից պակաս էր համապատասխանաբար 2.1 և 3.7 անգամ: 2007-2013 թթ. օտարերկրյա ներդրումները Հայաստանի տնտեսության իրական հատվածում կազմել են 5906 մլն, իսկ ներդրումները՝ 4268 մլն ԱՄՆ դոլար[488]:

---

[485] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, էջ 55:
[486] Տե՛ս նույն տեղում, էջ 56:
[487] Տե՛ս նույն տեղում:
[488] Տե՛ս նույն տեղում:

2010-2013 թթ. Հայաստանում իրականացված օտարերկրյա և ուղղակի ներդրումներում, իրար փոխարինելով, առաջատար դիրքեր են ունեցել հիմնականում Ռուսաստանը և Ֆրանսիան, որոնց միասին բաժին է ընկել իրականացված ներդրումների 31-59.4 %-ը և ուղղակի ներդրումների 56.2-71 %-ը[489]: Ֆրանսիական ներդրումները հիմնականում բաժին են ընկել խմիչքների արտադրության և հեռահաղորդակցության ոլորտներին: Զգալի են նաև Գերմանիայի (հանքագործություն), Արգենտինայի (գյուղատնտեսություն, օդային տրանսպորտ), Լիբանանի (հեռահաղորդակցություն, սննդամթերքի արդյունաբերություն), ԱՄՆ-ի և Շվեյցարիայի (հանքագործություն, մեծածախ առևտուր) մասնաբաժինները[490]:

Այսպիսով՝ Սփյուռքի ներդրողները այսօր կարող են հանդիսանալ, այսպես կոչված, «առաջնեկներ», այսինքն՝ ներդրողներ, որոնք կարող են իրենց հայրենիքի զարգացող շուկայում լինել առաջինը, և դա կարող է փոխել շուկայի սպասումները, ներդրումային միջավայրը՝ հետագայում ապահովելով ավելի շատ ՕՈՒՆ-ների ներհոսք:

ՀՀ անկախությունն իր հետ բերեց սոցիալ-տնտեսական, կրթամշակութային և այլ ոլորտների բազում հիմնախնդիրներ, որոնց լուծման համար խիստ անհրաժեշտություն էր առաջացել ստեղծելու համահայկական հիմնադրամ: Համայն հայության ջանքերով հավաքագրված միջոցները անհրաժեշտ էին Հայաստանի Հանրապետության և անկախ Արցախի բազմաթիվ խնդիրների լուծման համար: Խորհրդային Միության կազմում Հայաստանը օգտվում էր խորհրդային կայսրության սոցիալա-

[489] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, էջ 56:
[490] Տե՛ս նույն տեղում, էջ 55:

կան և տնտեսական միջոցներից, նրա բարիքներից և կարծես հիմնականում լուրջ խնդիրներ չուներ այս ոլորտներում կենտրոնական միջոցների առկայության պայմաններում, որոնք բաժանվում էին խորհրդային հանրապետությունների միջև: Սակայն անկախությունն իր հետ բերեց նոր հիմնախնդիրներ, որոնց եթե ավելացնենք ավերիչ երկրաշարժի և Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից տնտեսական շրջափակման, ինչպես նաև ադրբեջանա-արցախյան պատերազմի ծանր հետևանքները, անհրաժեշտություն էր առաջացել նման հիմնադրամի ստեղծումը: Ահա թե ինչու Երևանում 1992 թ. մարտին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամը (ՀՀՀ)՝ որպես հայկական բարեսիրական կազմակերպություն[491]: Հիմնադրամի նպատակն էր համայն հայության ներուժի համախմբմամբ, գործադրմամբ աջակցել հայրենիքի զարգացմանն ու բարգավաճմանը: Հիմնական խնդիրներից էին ՀՀ և ԼՂՀ տնտեսությունների զարգացմանն օժանդակելը, նրանց ենթակառուցվածքային խնդիրների լուծումը համայն հայության դրամական նվիրատվությունները համախմբելու միջոցով:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գլխավոր խնդիրներից են 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքները հաղթահարելը, գիտական, կրթամշակութային ու առողջապահական համակարգերի բարելավմանն ու կատարելագործմանը նպաստելը, համազգային կարևորություն ունեցող այլ ծրագրերի իրականացմանը աջակցելը: Հիմնադրամը երկու տասնյակից ավելի մասնաճյուղեր ունի արտերկրի հայ համայնքներում: Այդ միջոցները հավաքվում են հայության կամավոր տուրքերից, անհատ անձանց, ձեռնարկությունների ու կազ-

[491] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 688:

մակերպությունների հատկացումներից, տարատեսակ միջոցառումներից (ամենամյա հեռախոսամարաթոններ, հեծանվարշավներ, ցուցահանդեսներ և տոնավաճառներ), նվիրատվություններից և այլն: Հիմնադրամի ղեկավար մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որն ի պաշտոնե գլխավորում է ՀՀ նախագահը, խորհրդի անդամներ են վարչապետը, ՀՀ արտաքին գործերի, ֆինանսների, էկոնոմիկայի նախարարները, Կենտրոնական բանկի նախագահը, Ամենայն հայոց և Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսները, Հայ կաթողիկե և Հայ ավետարանական եկեղեցիների հովվապետերը, ՀԲԸՄ-ի, ՀՕՄ-ի, Ամերիկայի հայկական համագումարի, հայ ավանդական կուսակցությունների ներկայացուցիչները, արտերկրի հայ բարերարներ, Հայաստանի և Սփյուռքի անվանի մտավորականներ[492]: 1992-1998 թթ. ՀՀՀ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահն էր Լ. Տեր-Պետրոսյանը, 1998 թ. ապրիլից՝ Ռ. Քոչարյանը, իսկ 2008 թ. ապրիլից՝ Ս. Սարգսյանը:

Հիմնադրումից ցայսօր փոխնախագահն է Գագիկ Հարությունյանը: Գործադիր վարչության առաջին տնօրենն է եղել Մանուշակ Պետրոսյանը (1992-1998), 1998 թ. փետրվար-դեկտեմբերին տնօրենի պաշտոնակատարներն են եղել Ս. Ենգոյանը և Ռ. Հովհաննիսյանը: 1998-2003 թթ. հիմնադրամի տնօրենը Վահան Տեր-Ղևոնդյանն էր, 2003-2007 թթ.՝ Նաիրա Մելքումյանը, իսկ 2008 թվականից մինչև այժմ՝ Արա Վարդանյանը[493]:

ՀՀՀ-ի գործունեությունը լուսաբանվում է «Հիմնադրամ» ամենամյա հանդեսում, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Կանադայի տեղական մարմինների պարբերականներում: Հիմնադրամի աշ-

---

[492] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 688:
[493] Տե՛ս նույն տեղում:

խատանքներում ակտիվ մասնակցություն և մեծ ներդրում ունեն նրա 22 տեղական մարմինները, որոնք ներկայումս գործում են աշխարհի 19 երկրներում: Վերջին յոթ տեղական մարմինները բացվել են 2009-2011 թթ. ընթացքում: Դրանք գործում են ԱՄՆ-ից մինչև Սիրիա, Ուրուգվայ, Ռումինա, Ռուսաստանի Դաշնություն և այլուր: Հիմնադրամն իր գործունեության ընթացքում իրագործել է բազմազան ծրագրեր ՀՀ-ում և ԼՂՀ-ում: 1992-2003 թթ. հիմնադրամը իրականացրել է 100-ից ավելի ծրագրեր՝ 80 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: Կառուցվել են 210 բնակելի շենք և առանձնատուն 960 ընտանիքների համար, 40 դպրոց և կրթական հաստատություն, 13 առողջարանական հիմնարկություն, ավտոճանապարհներ (250 կմ), ջրատար խողովակաշարներ (131 կմ), էլեկտրական հաղորդման գծեր՝ 60 կմ ընդհանուր երկարությամբ[494]:

Փաստորեն՝ ՀՀՀ-ի առաջին լայնածավալ ձեռնարկը «Ձմեռ» մարդասիրական ծրագիրն էր, որի շրջանակներում հանգանակված միջոցները 1992-1995 թթ. ուղղվեցին ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող սոցիալական հիմնախնդիրների լուծմանը: Աղետի գոտում հիմնադրամը ձեռնամուխ եղավ բնակարանաշինության՝ 1988 թ. երկրաշարժից անօթևան մնացածներին կացարաններով ապահովելով Գյումրիում, Վանաձորում, Ստեփանավանում, Սպիտակում: Հիմնադրամի օժանդակությունից դուրս չմնացին նաև առաջին կարգի համշանդամների, ազատամարտիկների ընտանիքներն ու կարիքավոր ուսանողները, որոնց հիմնադրամը շարունակում է նպաստներ հատկացնել առ այսօր:

---

[494]Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 688:

1995-1999 թթ. ՀՀՀ-ին վստահվեցին Հայաստանում և Արցախում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված խնդիրների լուծումը, ճանապարհաշինության և համայնքների զարգացման հարցերը: 2005 թվականից հիմնադրամը սկսեց ավելի շատ զբաղվել Հայաստանի և Արցախի տարածքային զարգացման ծրագրի մշակմամբ և կենսագործմամբ: 1995 թվականից նպաստներ է վճարում ՀՀ և ԼՂՀ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը ծավալել է հիրավի մեծածավալ գործունեություն: Իր հիմնադրման տակավին երրորդ տարում էներգետիկայի, բնակարանաշինության, ճանապարհաշինության բնագավառներում իրականացրել է ավելի քան 2.5 մլն դոլարի աշխատանքներ[495]:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը Արցախում սկսել է գործել 1993 թվականից, երբ դեռ շարունակվում էր պատերազմը, և իրականացրել է բազում ծրագրեր հանրապետության գրեթե բոլոր շրջաններում: Լայնածավալ հումանիտար օգնություն է տրամադրվել ԼՂՀ կառավարությանը՝ պատերազմից ավերված բնակավայրերը մաքրելու, գարնան և աշնան գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու, սերմացու, թունաքիմիկատներ և վառելիք ձեռք բերելու համար: 1996-1997 թթ. 2.520.000 ԱՄՆ դոլար գումար է ներդրվել՝ Լեռնային Ղարաբաղում գյուղատնտեսական աշխատանքներ կազմակերպելու նպատակով[496]:

---

[495] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 5 մարտի, 1994:

[496] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին, Ստեփանակերտ (1991-2009 թթ.), 2010, էջ 107-108:

1995 թ. հիմնադրամը ձեռնարկել է ԼՂՀ-ում ճանապարհաշինության, ջրագծերի, ոռոգման ջրատարների վերանորոգման ու կառուցման նպատակով ազգային տուրքի մարաթոնների կազմակերպում[497]: Այդ ձեռնարկումը առավել համակարգված ընթացել է 1998 թվականից, երբ 24-ժամյա հեռուստամարաթոնները սկսեցին ամենամյա բնույթ կրել՝ ընդգրկելով Հայաստանն ու ողջ Սփյուռքը: Գերազանցապես հենց դրա շնորհիվ էր, որ արդեն 1999 թ. շահագործման հանձնվեց Գորիս–Ստեփանակերտ ավտոճանապարհը (65 կմ): Արտասահմանում բնակվող շուրջ 200 հազար հայեր հիմնադրամի կատարած ակտիվ աշխատանքի շնորհիվ իրենց անմիջական ներդրումն ունեցան հիմնադրամի նախաձեռնած ճանապարհաշինության հայրենանվեր աշխատանքների գործում[498]: Իսկ նույն 1999 թ. նոյեմբերին Լոս Անջելոսում «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախաձեռնությամբ անցկացված հեռուստամարաթոնի ընթացքում հավաքված ավելի քան 5 մլն դոլար[499] հանգանակությամբ էլ Արցախում սկսվեց «Հյուսիս-հարավ» նոր ավտոճանապարհի (շուրջ 170 կմ) շինարարությունը[500], որի 30 կիլոմետրը շահագործման էր հանձնվել 2001 թ. նոյեմբերին[501]: «Հայաստան» համահայկական հիմնադրամն էլ ավելի մեծ եռանդով էր շարունակում Արցախի շենացման ուղղությամբ իր ազգանպաստ գործունեությունը հետագա ժամանակաշրջանում:

2013 թ. տվյալներով հիմնադրամի իրագործած ծրագրերն գերազանցում են 235 մլն ԱՄՆ դոլարի սահմանը: 2013 թ. հե-

---

[497] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 մարտի, 1996:
[498] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 սեպտեմբերի, 1999:
[499] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 հունվար, 2000:
[500] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 նոյեմբերի, 1999:
[501] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 17 նոյեմբերի, 2001:

ռուստամարաթոնի արդյունքում հավաքագրված գումարները հիմնականում ուղղվեցին Վարդենիս–Մարտակերտ ավտոմայրուղու կառուցմանը, ինչպես նաև հոգաբարձուների խորհրդի կողմից մշակված նոր ծրագրերի իրագործմանը: Հիմնադրամի իրագործած ծրագրերի շնորհիվ կառուցվեցին ավելի քան 470 կմ ճանապարհ Հայաստանում և Արցախում, 212 կմ ջրազտման և ջրամատակարարման համակարգեր, ինչպես նաև 144 կմ բնական գազատարներ, վերակառուցվեցին 218 դպրոց և մանկապարտեզ, կահավորվեցին 410 տուն և բնակարան, 34 առողջապահական հաստատություններ, 21 մարզական և մշակութային կենտրոններ: Իրականացվել են ավելի քան 85 կրթական, մշակութային և գիտական ծրագրեր: Այդ ծրագրերի իրագործման շնորհիվ 2004 թ. ավարտվեց Արցախի 160 կմ ձգվող «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու շինարարության հիմնական մասը: 2005 թ. հեռուստամարաթոնում ընդհանուր նվիրատվության չափը հասնում էր 7.8 մլն դոլարի, որը ծախսվեց ԼՂՀ Մարտակերտի շրջանի վերակառուցման համար[502], իսկ 2006 թ. հեռուստամարաթոնում հանգանակված 13.7 մլն դոլարը նպատակաուղղվեց ԼՂՀ Հադրութի շրջանի վերականգնմանը[503]:

2007-2008 թթ. հիմնադրամը ձեռնամուխ եղավ Հայաստանի և Արցախի գյուղերում սոցիալական ենթակառուցվածքների վերականգնմանը: 2007 թ. հեռուստամարաթոնի արդյունքներով սպասվելիք 15.3 մլն դոլարը պետք է ուղղորդվեր ՀՀ գյուղական համայնքների զարգացման ծրագրերի իրականացմանը[504], որ

---

[502] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2005», http://www.hi,madram.org/index.php?id=22326&lang=2:

[503] Տե՛ս նույն տեղում:

[504] «Հայաստան» համահայկական հիմնադրամ. տարեկան հաշվետվություն, Ե., 2008, էջ 20-21:

ՀՀ-Սփյուռք ձևաչափով քննարկվել էր 2006 թ. տեղի ունեցած Հայաստան-Սփյուռք երրորդ խորհրդաժողովի ընթացքում[505]:

2008 թ. հեռուստամարաթոնը գրանցեց ռեկորդային արդյունք՝ 35 մլն դոլարի նվիրատվություն և նվիրատվության խոստում: Դրա հիմնական մասը օգտագործվեց նախորդ տարի նախատեսված ծրագրերի իրականացման համար[506]:

2009 թ. հեռուսատամարաթոնը, որն անցկացվեց «Մեր Շուշին» խորագրի ներքո, արձանագրեց 15.9 մլն դոլարի նվիրատվություն և նվիրատվության խոստում: Ստացված գումարները գլխավորապես ուղղվեցին Շուշիում սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքների՝ ջրագծերի, դպրոցների, ճանապարհների և բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներին[507]:

2005 թ. ավարտին հասցվեց նաև ԼՂՀ Մարտակերտի շրջանի տարածքային զարգացման ծրագիրը, Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանային հիվանդանոցը, 2006 թ. կառուցվին մի շարք դպրոցներ, նոր ջրագծեր, բաշխիչ ցանցեր, անցկացվեց բնական գազամուղ: 2007 թ. նոյեմբերին ավարտին հասցվեց նաև գյուղատնտեսական զարգացման ծրագիրը, որը նախատեսում էր Հայաստանի և Արցախի նոր գյուղական դպրոցների, խմելու ջրի համակարգերի կառուցումը, իսկ ագրարային զարգացման ծրագրերի կենսագործմամբ առողջապահական սարքավորումներ տրվեցին բոլոր գյուղական շրջաններին: Հայաստանի և Արցախի գյուղերում վերականգնվեցին մի շարք ենթակառուցվածքներ, այդ թվում՝ Շուշիում հասարակական ու

---

[505] Տե՛ս Հովյան Վ., Հայաստան-Սփյուռք 3-րդ համաժողով, էջ 16:

[506] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ, տարեկան հաշվետվություն, Ե., 2009, էջ 27-28:

[507] Տե՛ս «Ազատ Արցախ», 21 մարտի, 2009:

տնտեսական ենթակառուցվածները: 2009 թ. կառուցվեցին ջրագծեր, ճանապարհներ, վերանորոգվեցին բնակելի շենքերի տանիքները, լուծվեցին Արցախի գյուղերում խմելու և ոռոգման ջրի խնդիրները, իսկ 2010 թ. ավարտին հասցվեց Հայաստանի և Արցախի սահմանամերձ գյուղերի զարգացման համապարփակ ծրագիրը:

Ջրամատակարման ցանցեր, ջրավազաններ, մաքրիչ և մղիչ կայաններ են կառուցվել Մարտունու, Ասկերանի, Քաշաթաղի շրջաններում և Շուշիում: Գերմանիայի հայության ֆինանսավորմամբ ջրագիծ է կառուցվել Մարտակերտի շրջանի Ակնաբերդ գյուղում: 2009 թ. շահագործման են հանձնվել Հադրութի շրջանի Մեծ Թաղլար, Ազոխ, Դրախտիկ գյուղերի ջրատարները: Հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմինը ջրամատակարարման համակարգ է կառուցել Ասկերանի շրջանում[508]:

Առաջնահերթ է համարվել Շուշի քաղաքի ջրամատակարարման հարցը: Շուշիի «Վերածնունդ» հիմնադրամը իրականացրել է Շուշի ջրագծի կառուցումը, իսկ «Հայաստան» համահայկական հիմնադրամը զբաղվել է ջրի ներքին ցանցի հարցերով: 2-2,5 մլն դոլար է հատկացվել նաև Շուշիի բնակելի շենքերի տանիքների և դպրոցների նորոգման համար[509]:

Կանադահայության մասնակցությամբ հիմնադրամը ավարտին է հասցրել Ստեփանակերտի օղակաձև ջրատարի և երկու ջրամբարների շինարարությունը: Սա Ստեփանակերտի ջրամատակարարման հիմական ցանցն է, որը խմելու ջրով է ապահովվում քաղաքը[510]:

---

[508] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 108:
[509] Տե՛ս նույն տեղում, էջ 109:
[510] Տե՛ս նույն տեղում:

2009 թ. նոյեմբերի 26-ին տեղի ունեցավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի դրամահավաք միջոցառումը՝ «Հեռուստամարաթոն-2009-ը», որի ընթացքում հավաքվեց 15.875.043 ԱՄՆ դոլար: Գումարի 70 %-ը տրամադրվեց Շուշի քաղաքին, մնացածը՝ Հայաստանի ու Արցախի այլ շրջաններին[511]:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի ուժերով շահագործման են հանձնվել «Շուշի-Կարմիր շուկա» բարձր լարման էլեկտրահաղորդման գիծը՝ Շուշիում և Կարմիր շուկայում տեղադրված ենթակայաններով, որոնք էլեկտրականությամբ են ապահովում Մարտունի շրջկենտրոնն ու հարակից գյուղերը: Հիմնադրամը Արցախում կառուցել է 60 կմ ընդհանուր երկարությամբ երեք էլեկտրահաղորդման գծեր և «Ստեփանակերտ» գլխավոր ենթակայանը: Գորիսում կառուցվել է ռադիոհեռուստատեսային վերահաղորդիչ կայան, որն ապահովում է Հայաստանի հարավային շրջանների և Արցախի կապը: Մարտակերտի շրջանի չորս գյուղերի համար կառուցվել է գազատար խողովաշար: Կազմակերպության միջոցներով հիմնովին վերակառուցվել են պատերազմից խիստ տուժած Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի 67, և վերականգնվել են Հաթերք գյուղի 143 տներ[512]:

Հիմնադրամի կողմից իրականացվել են ծրագրեր նաև ԼՂՀ առողջապահության ոլորտում: ԱՄՆ Արևելյան Արփի տեղական մարմնի ֆինանսավորմամբ կառուցվել են Ստեփանակերտի քաղաքային պոլիկլինիկան և ախտորոշման կենտրոնը[513], իսկ

---

[511] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 109:
[512] Տե՛ս նույն տեղում, էջ 110:
[513] Տե՛ս նույն տեղում:

ԱՄՆ-ի արևմտյան շրջանի հայության միջոցներով հիմնադրամը նորոգել է Հադրութ քաղաքի կենտրոնական հիվանդանոցի շենքը: Ֆրանսիայի հանձնախմբի կողմից վերանորոգվել են Շուշի քաղաքի հիվանդանոցի կաթսայատունը և ջերմատար ցանցը: 2010 թ. ավարտվել է Հանրապետական հիվանդանոցի կառուցումը Ստեփանակերտում: Կազմակերպությունը չի բավարարել միայն հիվանդանոցների կառուցմամբ ու նորոգմամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո դրանք նաև կահավորվել են, հագեցվել ժամանակակից բժշկական սարքավորումներով[514]:

Հիմնադրամն նախաձեռնել է «Նպաստներ՝ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին» ծրագիր, որի իրականացումը սկսվել է 1995 թ. հունվարից և շարունակվել մինչև 2012 թ.՝ նպաստառու երեխաների չափահաս դառնալը[515]:

Բացի ռազմավարական և կենսական կարևորություն ունեցող ծրագրերից՝ հիմնադրամը Արցախում իրականացնում է դպրոցաշինության ծրագիր: Հիմնադրամի միջոցներով են կառուցվել Ստեփանակերտի ֆիզիկամաթեմատիկական գիշերօթիկ դպրոցի ուսումնական մասնաշենքն ու հանրակացարանը, որոնք շահագործման են հանձնվել դեռևս 1999 թ. ապրիլին:

Այսպիսով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատած Արցախի վերածննդի ծրագրով հեռուստամարաթոններում հանգանած գումարները համապատասխանաբար ուղղվեցին Արցախյան պատերազմի հետևանքով առավել մեծ վնաս կրած ԼՂՀ շրջանների՝ Մարտակերտի և Հադրութի վերա-

---

[514] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 110:
[515] Տե՛ս նույն տեղում:

կանգնմանն ու զարգացմանը: 2006 թ. սկսվեցին և մինչև այժմ շարունակվում են Մարտակերտի շրջանի վերականգնման աշխատանքները, որոնք ներառում են միաժամանակ մի քանի ոլորտ՝ գյուղատնտեսություն, ջրամատակարարում, առողջապահություն, դպրոցաշինություն և այլն: Նմանօրինակ ծրագիր հիմնադրամը իրագործեց նաև ԼՂՀ Մարտունու շրջանում: Պատահական չէ, որ իր գործունեության տարիներին հիմնադրամը ճանաչվել ու սիրվել է ողջ հայության կողմից, քանի որ նրա ծրագրերը միշտ եղել են արդիական ու սպասված: Ի սկզբանե լինելով հայոց պետականության նեցուկը՝ հիմնադրամը շարունակում է հավատարիմ մնալ իր առաքելությանը՝ աշխարհասփյուռ հայության միասնական ջանքերն ուղղելով մեր երկրի վերակառուցմանն ու ամրապնդմանը:

Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղ գյուղից է սկսվել Արցախի մեծ բարեկամ բարոնուհի Քերոլայն Քոքսի մարդասիրական առաքելությունը: Նրա նախաձեռնությամբ և նվիրատվությամբ այնտեղ գործում է նորակառույց դպրոց: Բարոնուհու կազմակերպչական աշխատանքի արդյունքը եղավ հիմնադրամի Տորոնտոյի գրասենյակի միջոցներով Մարտակերտի շրջանի Մադաղիս գյուղի դպրոցի կառուցումը[516]: Դպրոց է բացվել նաև նույն շրջանի Դրմբոն գյուղում: Վերակառուցվել է Հադրութի շրջանի Տող գյուղի դպրոցը, որը դարձել է այդ տարածքի արվեստի կենտրոն: 2009 թ. վերջին շահագործման են հանձնվել Մարտունու շրջանի Սպիտակաշեն, Ճարտար, իսկ 2010 թ.՝ նույն շրջանի Գիշի և Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի դպրոցները: Ֆրանսիայի հանձնախմբի կողմից համակարգիչներ են տրամադրվել Մարտակերտի շրջանի Նոր Սեյսուլա, Կո-

[516] Տե՛ս «Ազատ Արցախ», 7 հոկտեմբերի, 2007:

ճողոտ, Հադրութի շրջանի Թողուտ, Տող գյուղերի դպրոցներին[517]:

Ամերիկաբնակ բարերար Ջերարդ Թրփանձյանի հովանավորությամբ շարունակվել են Ստեփանակերտի թիվ 11 դպրոցի կառուցման աշխատանքները: Եռահարկ դպրոցը նախատեսված է 560 աշակերտի համար: Այն բաղկացած է 2 ուսումնական և վարչական մասնաշենքներից, մարզադահլիճից, ինչպես նաև բացօթյա բեմահարթակից ու սպորտհրապարակից: Համալիր կառույցն ունի նաև գրադարան, ճաշարան, բուժկետ, համակարգչային դասարաններ, կաթսայատուն: Շինարարությունը ավարտվել է 2010 թ. օգոստոսին[518]:

Կատարված աշխատանքները մայր Հայաստանի, Սփյուռքի և Արցախ աշխարհի միասնության հավաստիացումն են, այսինքն՝ ազգի բոլոր անդամների հավաքական ամբողջության արդյունքը, որի շնորհիվ հայ ժողովուրդը պետք է ապրի և հարատևի: «Անցնող տարիներին,–գրում է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն,– մենք բոլորս ականատես ենք եղել այն արդյունքներին, որոնք ձեռք են բերվել «Հայաստան» համահայկական հիմնադրամի իրագործած ծրագրերով: Ականատեսն ենք եղել, թե ինչպիսի կարևորության խնդիրներ են վճռվել Հայաստանի Հանրապետությունում և Արցախում՝ ճանապարհների կառուցմամբ, բնակավայրերի բարեկարգումով, տնտեսական և մշակութային կյանքի վերակառուցման ծրագրերով: Մեր միասնականության արգասիքն են դրանք՝ առ հայրենին մեր սիրո, մերձավորի հանդեպ հոգնածության»[519]:

---

[517] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 110:
[518] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 111:
[519] Նույն տեղում:

1992-2008 թթ. հիմնադրամը ՀՀ-ում և ԼՂՀ-ում իրականացրել է 100-ից ավելի ծրագրեր: Կառուցվել են 210 բնակելի շենք և առանձնատուն՝ 960 ընտանիքների համար, 40 դպրոց և կրթական հաստատություն, 13 առողջապահական հիմնարկություն, ավտոճանապարհներ (250 կմ), ջրատար խողովակաշարներ (131 կմ), 60 կմ ընդհանուր երկարությամբ էլեկտրական հաղորդման գծեր: 1995 թվականից մինչ այժմ նպաստ է տրամադրվել ՀՀ և ԼՂՀ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին[520]:

2010-2011 թթ. հեռուստամարաթոնների հավաքված գումարները ուղղորդվեց ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ շրջանների ենթակառուցվածքների զարգացմանը: 2010 թ. հեռուստամարաթոնի ընթացքում հավաքվեց 20.8 մլն դոլար, որն ուղղվեց ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ շրջաններում ենթակառուցվածքների զարգացմանը, մասնավորապես ջրամատակարարման խնդիրների լուծմանը[521]: 2011 թ. հեռուստամարաթոնի 12.2 մլն դոլարը ևս օգտագործվեց ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ շրջաններում նախորդ տարի սկզբնավորված համալիր ծրագրերի իրականացմանը[522]:

Քանի որ 2011 թ. Սիրիայում տեղի ունեցող դեպքերի հետևանքով աստիճանաբար սկսվեց սիրիահայերի ներգաղթը ՀՀ, իսկ մյուս կողմից դեռ ավարտին չէին հասցվել 2010-2011 թթ. գերակա ծրագրերը, 2012 թ. հեռուսատամարաթոնի ընթացքում հավաքված 21.4 մլն դոլարն ուղղվեց ՀՀ և ԼՂՀ գյուղական շրջաններում համայնքային կենտրոնների կառուցմանը և ՀՀ

---

[520] Տե՛ս նույն տեղում:
[521] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2010-Ջուրը կյանք է», http://himnadram.org/index.php?id=23543lang=2:
[522] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2011», http://himnadram.org/index.php?id=23801lang=2:

տեղափոխված սիրիահայության հրատապ խնդիրների լուծմանը[523]:

2013 թ. հիմնադրամը սկսեց ՀՀ-ն և ԼՂՀ-ին կապող երկրորդ՝ շուրջ 116 կմ երկարությամբ «Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման ծրագիրը»: 2013-2014 թթ. «Դեպի Արցախ» կարգախոսով անցկացվող հեռուստամարաթոնների ընթացքում հավաքված գումարները հիմնականում հատկացվեցին այդ աշխատանքների իրականացմանը: 2013 թ. հեռուստամարաթոնի ժամանակ արձանագրվեց 22.6 մլն դոլարի նվիրատվություն և նվիրատվության խոստում: Այդ միջոցներն ուղղվեցին ավտոճանապարհի հողային աշխատանքների իրականացմանը[524]:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը 2014 թ. մեծածավալ ծրագրեր իրագործեց: Նրա գլխավոր նշանակետը դարձյալ ՀՀ-ն և ԼՂՀ-ն իրար կապող Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի ասֆալտապատումն էր ու հարդարումը, որն ուներ ռազմավարական, ռազմատնտեսական կարևոր նշանակություն:

2014 թ. հեռուստամարաթոնի նվիրատվությունները (12.4 մլն դոլար) ուղղվեցին ոչ միայն Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի ասֆալտապատմանն ու հարդարմանը, այլ նաև բարերարների կողմից ընտրված հատուկ ծրագրերին ՀՀ-ում և ԼՂՀ-ում[525]:

---

[523] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2012», http://himnadram.org/index.php?id=23990lang=2:
[524] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2013», http://himnadram.org/index.php?id=24169lang=2:
[525] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2014», http://himnadram.org/index.php?id=24350lang=2:

«Շատ դժվարին գործ է: Բավական բարդ տեղանքում մոտ 120 կմ ճանապարհ պիտի կառուցվի, ինչը նյութական մեծ ծախս և մասնագիտական արհեստավարժ մոտեցում է պահանջում»[526],– նշում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի վերստուգիչ հանձնախմբի անդամ Վահե Ջազմադարյանը:

Վերջին երկու տարիներին «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա հեռուստամարաթոններն ամբողջությամբ նվիրվեցին «Վարդենիս– Մարտակերտ ավտոճանապարհի վերակառուցման ծրագրին», որոնցում ներգրավվեցին մոտ երկու տասնյակ նախագծային և շինարարական կազմակերպություններ: Նրանց ջանքերով գրեթե հաջողվել է հասնել ճանապարհի ավարտական փուլին: Ճանապարհի վերակառուցումը հնարավորություն է տալիս նաև զարգացնելու զբոսաշրջությունը: Վարդենիսից մինչև Մարտակերտ ճանապարհին պատահած մարդկանցից յուրաքանչյուրի հետ խոսելիս երախտագիտության և օրհնանքի խոսքեր են հնչում, խոսքեր, որոնք ուղղված են Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, ԱՄՆ-ում և Բրազիլիայում ապրող մեր հայրենակիցներին, որոնց նվիրատվություններով վերակառուցվել է 2017 թ. շահագործման հանձնված մայրուղին[527]:

Համահայկական հիմնադրամը ԼՂՀ-ում և ՀՀ-ում 2013 թվականից սկսած «Մեր գյուղը» ծրագրի շրջանակում սկսեց բազմագործառութային համայնքային կենտրոնների կառուցումը՝ «Մեկ շենք ու երեք ծառայություն» սկզբունքով: Դա հնարավորություն է տալիս լուծելու գյուղական բնակավայրերի համար մի շարք կարևոր խնդիրներ, երբ նույն շենքում տեղավորվում են

---

[526] «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 2014, Ե., 2015, էջ 14:
[527] Տե՛ս նույն տեղում, էջ 17:

համայնքի ղեկավարի գրասենյակը, հանդիսությունների տունը և համակարգչային սրահը, մի այլ դեպքում վարչական ծառայության կողքին՝ բուժկետն ու գրադարանը: ԼՂՀ գրեթե բոլոր շրջաններում կառուցվել են ընդհանուր թվով տասը համայնքային կենտրոններ[528]: Այդ ծրագրերին որպես համաֆինանսավորող կողմ մասնակցել է նաև ԼՂՀ կառավարությունը: Նման կենտրոններ կառուցվեցին ԼՂՀ-ի Նոր Մատաղիս, Ակնաղբյուր, Շող, Մուշկապատ, Կարմիր շուկա, Ղավարդ, Քարինտակ, Խաչմաչ գյուղերում: Այդ համայնքային կենտրոններից վեցը կառուցվել է Ֆրանսիայի, երկուսը՝ Կանադայի, մեկը՝ Արգենտինայի հայության նվիրատվություններով[529]: Նման կենտրոն է կառուցվել նաև ՀՀ Շիրակի մարզի Բավրա գյուղում: «Հայաստան» համահայկական հիմնադրամի աջակցությամբ շահագործման հանձնվեց Շիրակի մարզի Աշոցքի համայնքի դպրոցի, Արագածոտնի մարզի Սասունիկի համայնքի մանկապարտեզի նոր շենքերը, վերակառուցվեց Օշականի դպրոցի տանիքը և այլն: Հիմնադրամի կողմից նոր ծրագրեր իրագործվեցին Արցախի գյուղերում և քաղաքներում: Կառուցվեցին և վերանորոգվեցին մի շարք դպրոցներ, մանկապարտեզներ, քոլեջներ (Քարինտակի, Շուշիի, Սոսի, Չափարի և այլն), Իվանյանի մանկապարտեզը, Ստեփանակերտի երաժշտական քոլեջը և այլն[530]: Հիմնադրամը 2014 թ. նյութական աջակցություն տրամադրեց Սիրիայի, մասնավորապես Քեսապի հայությանը: Նոր բնակարաններ տրամադրվեցին գյումրեցիներին, նպաստներ՝ ազատամարտիկների ընտանիքներին և այլն: Հիմնադրամը 2000 թվականից իրակա-

---

[528] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2014, էջ 24:
[529] Տե՛ս նույն տեղում, էջ 27:
[530] Տե՛ս նույն տեղում:

նացնում է «Բողոսյան» հիմնադրամի մրցանակաբաշխությունը, որի շրջանակներում նախագահն ամենամյա մրցանակ է շնորհում գիտության և մշակույթի գործիչներից յուրաքանչյուրին իր բնագավառում ցուցաբերած ակնառու նվաճումների համար:

Հիմնադրամը մեծ ավանդ ունի Հայոց ցեղասպանության հիշատակման և ճանաչման գործում: Իր գոյության առաջին տարիներից հիմնադրամը ակտիվ աշխատանքներ տարավ Հայոց ցեղասպանություն ուսումնասիրութան հաստատությունների ստեղծման գործում: Նորաստեղծ հիմնադրամը «Հայկական բարեգործական ընդհանուր միության» (ՀԲԸՄ) նվիրատվությամբ սկսեց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կառուցումը: Ծիծեռնակաբերդի բարձունքում կառուցված թանգարանը այցելուների առջև իր դռները բացեց 1995 թ. ապրիլին, երբ նշվում էր Հայոց ցեղասպանության 80-ամյակը: Միաժամանակ հիմնադրամի հատկացրած միջոցներով ՀՀ ԳԱԱ ակադեմիայում կազմակերպվեց ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, որը, առաջին անգամ կազմակերպվելով, ի մի բերեց ցեղասպանության փաստերն ուսումնասիրող հայ, օտարազգի, նաև թուրք հետազոտող-գիտնականների:

2000-ական թթ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի աջակցությամբ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում կատարվեցին մասնակի նորոգման աշխատանքներ: 2015 թ. բացվեց Կոմիտասի թանգարան-ինստիտուտը, որի ստեղծման որոշումը կայացվել էր 2013 թ. մայիսին «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստում: Շենքը, որտեղ այժմ գործում է թանգարան-ինստիտուտը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի

նվերն է: 2005 թվականից սկսած՝ «Բողոսյան» հիմնադրամի հիմնած մրցանակաբաշխությանն ավելացավ նոր անվանակարգ, որով ըստ արժանավոյն գնահատվում են Հայոց ցեղասպանության ճանաչման գործում մեծ ներդրում ունեցող անձինք ու կազմակերպությունները: Անցած տասը տարում այդ անվանակարգում պարգևների են արժանացել և մեծարվել հայ, գերմանացի, ֆրանսացի, իտալացի, իռլանդացի, հրեա, թուրք տասնչորս գիտնականներ, գրողներ և գործիչներ, ինչպես նաև Սփյուռքում գործող երկու հետազոտական կենտրոններ:

2014-2016 թթ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրերին մասնակցեցին բոլոր տեղական մարմինները՝ օգտագործելով իրենց համայնքների անդամներին այդ կարևոր գործին մասնակից դարձնելու հնարավոր բոլոր միջոցները: Աշխարհի տարբեր երկրներում (սկսած ԱՄՆ-ից, Հարավային Ամերիկայի երկրներից, Եվրոպայից, Փարիզից, Բելգիայից և վերջացրած Լիբանանով, Կանադայով, Մեծ Բրիտանիայով և Իրանով) կազմակերպվող տարատեսակ միջոցառումները, համայնքի անդամների ուշադրությունը որոշակի ծրագրերի վրա սևեռելուց բացի, նաև ունեն ամփոփիչ և հաշվետու նշանակություն: Սովորաբար հենց այս միջոցառումների ընթացքում են տեղական մարմինները ամփոփում տարվա ընթացքում կատարած իրենց աշխատանքները և տոնական մթնոլորտում հաշվետվություն տալիս իրականացված ծրագրերի մասին:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կազմակերպած 2015 թ. միջոցառումների շրջանակում իրականացվեցին ԼՂՀ Ասկերանի շրջանի Պատարա, Խաչմաչ և այլ գյուղերում, Մարտունու Մուշկապատ, Կարմիր շուկա և Թաղավարդ գյուղե-

ռում համայնքային կենտրոնների և Շուշիի Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական ուսումնարանի բացումը[531]:

2015 թ. «Մեր տունը» խորագրով հեռուստամարաթոնն արձանագրեց 10.4 մլն դոլարի նվիրատվություն և նվիրատվության խոստում[532]: Հավաքված գումարը նպատակաուղղվեց ԼՂՀ-ում բազմազավակ ընտանիքներին բնակարաններով ապահովելու ծրագրին: Զուգահեռաբար կյանքի են կոչվում բարերարների կողմից ընտրված հատուկ ծրագրերը[533]: Ինչ վերաբերում է 2016 թ. հեռուստամարաթոնին, ապա այն անցավ Քառօրյա պատերազմի հետևանքների վերացման տրամաբանությամբ՝ «Իմ Արցախը» կարգախոսով: Հավաքված 15.4 մլն դոլարը նախատեսվում էր փոխանցել Քառօրյա պատերազմից տուժած բնակավայրերի վերականգնմանը, ինչպես նաև Արցախի բազմազավակ ընտանիքների համար առանձնատների կառուցմանը[534]:

2016 թ. ընթացքում հիմնադրամի ջանքերով իրականացվեցին այնպիսի կարևորագույն ծրագրեր, ինչպիսիք են Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի վերանորոգված նոր դպրոցի բացումը, Արագածոտնի մարզի Օշական գյուղի և Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցների բացումը, Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման ավարտը, Գերովան գյուղի, Ասկերանի շրջանի համայնքային կենտրոնների բացումը, Ստեփանակերտի ուռուցքաբանական կենտրոնի, մայրաքաղաքի թիվ 9 դպրոցի վերանորոգումը և այլն[535]:

---

[531] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ, էջ 57:
[532] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2015»,
http://himnadram.org/index.php?id=24515lang=2:
[533] Տե՛ս «Մեր մասին», http://himnadram.org/index.php?id=2&id=2:
[534] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ, էջ 45:
[535] Տե՛ս նույն տեղում:

Ակնհայտ է, որ հիմնադրամի իրականացրած ծրագրերը մեծ կարևորություն ունեն ՀՀ և ԼՂՀ սոցիալ-տնտեսական կյանքը զարգացնելու առումով: Հատկանշական է, որ առավել մեծ չափով գումարներ հավաքվել են հատկապես այն հեռուստամարաթոններում, որոնք անցկացվել են սահմանամերձ շրջանների կամ Արցախի հիմնախնդիրները կարգավորելու նպատակով:

Այսպիսով՝ 2016 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում և Արցախում իրագործված ծրագրերի ընդհանուր գումարը կազմում էր ավելի քան 235.800.000 ԱՄՆ դոլար: Սակայն եթե հաշվի առնենք հիմնադրամի կողմից իրականացված և ավարտված ծրագրերը ու դրանց կենսագործման համար օգտագործված գումարները, աշխատատեղերը, որոնք բացվել են այդ ծրագրերի շնորհիվ, համայնքները, որոնք հետզհետե զարգանում են, ապա չենք կարող չհաշվել ու չնշել այն մարդկանց, որոնց կյանքը փոխվել է բացված նոր ճանապարհների, նոր կառույցների և այն օգնության շնորհիվ, որի կարիքը նրանք շատ ունեն:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի 25-ամյա հոբելյանի կապակցությամբ խոսելով նրա կատարած մեծածավալ աշխատանքների մասին՝ հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը նշեց. «25-ամյա երիտասարդ, ավյունով լի համահայկական այս կառույցը տարեցտարի ավելի զորեղ ու համազգային է դառնում շնորհիվ Հայաստանի, Արցախի ու Սփյուռքի մեր հայրենակիցների վստահության և հայրենիքն ավելի ամուր ու ապահով դարձնելու գաղափարի շուրջ համախմբվածության: Հպարտությամբ պետք է նշել, որ մեր նվիրատուների թիվն արդեն գերազանցում է 700.000-ը, իսկ հայրենիքում արված ամբողջ ներդրումները՝ 330 մլն դոլարը (ավելի քան 1100 խոշոր

ծրագիր), ինչի շնորհիվ շուրջ 500.000 մարդ Հայաստանում և Արցախում մշտապես օգտվում է բարեկարգ ու հարմարավետ դպրոցից, հիվանդանոցից, ճանապարհից, ջրագծից: Ընդլայնվել է նաև մեր գործունեության աշխարհագրությունը. ԱՄՆ-ից մինչև Ավստրալիա գործում է 25 տեղական մարմին»[536]:

Հայրենիքին շոշափելի աջակցություն ցուցաբերեցին մի շարք այլ հիմնադրամներ: Դրանցից կարելի է առանձնացնել ՀՀ տնտեսությանը մեծ աջակցություն ցուցաբերած, ամերիկահայ նշանավոր ազգային բարերար, երջանակահիշատակ Քըրք Քրքորյանի կողմից 1989 թ. հիմնադրված «Լինսի» հիմնադրամը (Liney Foundation), որի միջոցով հիմնադրամը մեծագումար հատկացումներ էր կատարում հօգուտ Հայաստանի Հանրապետության, Արցախի և Սփյուռքի, օգնում էր սփյուռքահայ դպրոցներին ու վարժարաններին, Կիլիկայի թեմի Ազգային առաջնորդարանին, հայոց եկեղեցու Արևմտյան թեմին (ԱՄՆ) և այլն: Հայաստանի Հանրապետությունում առևտրական ծրագրերի մշակման և հաստատման համար «Լինսի» հիմնադրամը գումարներ է տրամադրել նաև «Եվրասիա» հիմնադրամին[537]:

Ք. Քրքորյանն աչքի ընկավ հատկապես ի նպաստ հայրենիքի մեծագումար իր նվիրատվություններով, միայն Աղետի գոտու վերականգնման համար նա ծախսեց 15 մլն դոլար[538], իսկ 1992 թ. Արցախի հիմնադրամին փոխանցեց 3 մլն դոլար[539]: Միացյալ հայկական ֆոնդի մարդասիրական բոլոր առաքումները դեպի Հայաստան նույնպես կատարվում էին Ք. Քրքորյանի տրամա-

---

[536] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2016, Ե., 2017, էջ 40:
[537] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 84:
[538] Տե՛ս «Ազգ», 24 հունիսի, 1998, նաև «Հայաստանի Հանրապետություն», 24 հունիսի, 1998:
[539] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24 ապրիլի, 1997:

դրած փոխադրական ծառայության միջոցներով: Երկրաշարժից հետո նա բավական մեծ գումարներ ներդրեց «Հայաստան» համահայկական հիմնադրամում: «Ձմեռ-93-34» ծրագրին Ք. Քրքորյանը հատկացրեց 14 մլն դոլար, իսկ «Գորիս-Ստեփանակերտ» ճանապարհի կառուցման համար՝ 4.7 մլն դոլար[540]:

Ք. Քրքորյանը 1997 թ. ՀՀ արդյունաբերության և ձեռներեցության հիմնադրամին տրամադրեց 100 մլն դոլար վարկ՝ Հայաստանի ձեռներեցներին վարկավորելու համար[541]: Այդ նվիրատվությունը կատարվեց Հայաստանի տնտեսությունը ոտքի կանգնեցնելու, հայ ձեռնարկատերերի մտահղացումները փորձարկելու հնարավորություն տալու և բազմազան շուկայի ստեղծմանը նպաստելու համար: Դա անկախ Հայաստանի տնտեսության մասնավոր հատվածում կատարվող ամենախոշոր ներդրումն էր: «Լինսի» փոխատվության նպատակն էր ստեղծել աշխատատեղեր, մեղմացնել աղքատությունը, զարկ տալ Հայաստանի տնտեսության զարգացմանը:

Ք. Քրքորյանը մասնակցեց նաև մյուս ծրագրին՝ ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհի՝ Մեծ մայրուղու շինարարությանը, ինչի շնորհիվ Հայաստանը հնարավորություն էր ստանում հասնելու մինչև սևծովյան նավահանգիստներ՝ Փոթի և Բաթում, միաժամանակ հնարավորություն էր ստեղծվում հանրապետության տարածքով տրանզիտային փոխադրումներ իրականացնելու մինչև Պարսից ծոց[542]:

1998 թ. դրությամբ Հայաստանի համար Քըրք Քրքորյանի պայմանավորվածությունների արժեքը գրեթե 250 մլն դոլար էր,

---

[540] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 հունիսի, 1998:
[541] Տե՛ս Բախչինյան Ա., Հայերը համաշխարհային կինոյում, Ե., 2004, էջ 250, նաև «Նոր օր», 1 հուլիսի, 1998:
[542] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 85:

որոնց բնույթը փոփոխվում էր՝ գոյատևման ծրագրերից դեպի զարգացման ծրագրերը[543]:

«Լինսի» հիմնադրամը նաև մեծագումար նվիրատվություններ էր կատարում կրթության և առողջապահության ասպարեզում: Դրանցից մեկն էլ մասնակցությունն էր ամերիկյան «Կարմիր խաչի» կողմից Հայաստանում իրականացվող երկրաշարժի հետևանքների վերացման ծրագրին: Հիմնադրամը 1990-ական թթ. Հայաստան հասցրեց մոտ 300 մլն դոլար մարդասիրական և բժշկական օգնություն[544]:

Հիմնադրամը փակվել է 2011 թ., այն շուրջ 300 մլն դոլար է ներդրել հայրենիքում՝ ճանապարհների վերակառուցման (73 մլն դոլար), մշակութային հաստատությունների վերանորոգման (18 մլն դոլար), Աղետի գոտու բնակարանաշինություն (45 մլն դոլար)[545], ինչպես նաև Հայաստանում փոքր և միջին ձեռներեցության զարգացման համար (100 մլն դոլար): 1993 թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի հավաքած 7 մլն դոլար գումարը եռապատկվել է[546]:

Այսօր արդեն կարելի է փաստել, որ «Լինսի» հիմնադրամի իրականացրած ծրագրերն անգնահատելի նշանակություն ունեցան Հայաստանի Հանրապետության կյանքում: Դրանց շնորհիվ 15-20 հազար մարդ ուղղակիորեն ընդգրկվեց շինարարական աշխատանքներում՝ չհաշված հարակից ոլորտների աշխատուժը:

Երջանկահիշատակ, ՀՀ ազգային հերոս Ք. Քրքորյանը յուրաքանչյուր հայի հպարտությունն է և վայելում է ազգի խորին հարգանքը:

---

[543] Տե՛ս նույն տեղում:
[544] Տե՛ս Բախչինյան Ա., նշվ. աշխ., էջ 249:
[545] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 393:
[546] Տե՛ս նույն տեղում, էջ 393:

Հայրենանվեր գործունեություն է իրականացնում 1921 թ. Նյու Յորքում հիմնադրված «Հովարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցությունը», որը պաշտոնապես Հայաստանում գրանցվել է 1992 թ. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն (“Howard Karagyozyan” Medical Benevolent Non-Governmental Organization) անվանմամբ[547], շատ հաճախ անվանվում է «Հովարդ Կարագյոզյան» մանկական հիմադրամ: Կազմակերպությունն այսօր ակտիվ գործունեություն է ծավալում Հայաստանում, Արցախում, Սիրիայում և Լիբանանում: Հաստատության նպատակը հայ կարիքավոր մանուկների առողջության, խնամքի և կրթության կազմակերպումն է, նրանց մտավոր, ֆիզիկական և մշակութային զարգացմանը նպաստելը: Միայն 1992-2001 թթ. կազմակերպությունը 3 մլն դոլար է ներդրել հայաստանյան ծրագրերի իրականացման համար[548]: 1993 թվականից հիմնադրամը Երևանում, Գյումրիում, Գորիսում, Վանաձորում, Ստեփանակերտում հիմնել է 5 մանկական ատամնաբուժարան և ակնաբուժարան:

Կազմակերպությունն աջակցություն է ցուցաբերում նաև Հայաստանում և Արցախում գործող հիվանդանոցներին, մանկատներին, դպրոցներին, մանկական ճամբարներին: Այն իրականացնում է շենքերի կառուցման, վերանորոգման, ինչպես նաև համապատասխան կահույքով և սարքավորումներով ապահովման ծրագրեր: Կազմակերպությունը զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների համար իրականացնում է բնակարանային ապահովման ծրագիր:

---

[547] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 86-87:
[548] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 174:

Լոս Անջելեսում 1992 թ. փետրվարից գործում էր «Հայաստանի մանկատների հիմնադրամ» (ՀՄՀ) կազմակերպությունը, որի պատասխանատու տնօրենն էր Ժենյա Ռեզայե-Այդինյանը: Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում ուներ իր բաժանմունքը: Գործելով ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության ենթակայությամբ՝ ՀՄՀ-ն տարին երկու անգամ՝ աշնանը և գարնանը, կազմակերպում էր դրամաբաշխում մանկատներին և ծերանոցներին, զոհված և վիրավոր ազատամարտիկների երեխաներին, Աղետի գոտու կարիքավոր ընտանիքներին:

1992 թ. դեկտեմբերից ՀՄՀ-ն իրագործում էր «Մեկ հայրենիք, մեկ ընտանիք» ծրագիրը զոհված ազատամարտիկների ընտանիքների, նաև երկրաշարժից տուժած երկկողմանի, միակողմանի ծնողազուրկ, հաշմանդամ երեխաների համար: Ծրագրի շրջանակներում հիմնադրամը հովանավորեց 1500 ընտանիքի և Հայաստանի գրեթե բոլոր մանկատներն ու ծերանոցները[549]: Ծրագրի շնորհիվ գրեթե 400 անհատ հովանավորներ ԱՄՆ-ից, Կիպրոսից, Եգիպտոսից և այլ վայրերից աջակցում էին 580 ազատամարտիկների երեխաների: 1992-1998 թթ. ՀՄՖ-ի ֆինանսական ֆոնդից օգտվել է 30 հազար մարդ[550]:

1996 թ. մայիսին ԱՄՆ-ում Վարդան Ջինիշյանը, ի հիշատակ իր ծնողների, հիմնել է «Ջինիշյան հիշատակի ծրագիր» (ՋՀԾ, Jinishian Memorial Foundation) բարեգործական կազմակերպությունը: Ստեղծման օրվանից այն իր ծառայություններն ուղղել է Լիբանանի, Սիրիայի, Իրանի, Իրաքի, Երուսաղեմի, Թուրքիայի և հակամարտությունների ու անկայության շրջաննե-

[549] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22 մայիսի, 1996:
[550] Տե՛ս «Փարոս», 15 հուլիսի, 1998:

րում գտնվող այլ երկրների կարիքավոր հայերին՝ օգնություն ցուցաբերելով բնակարանի, սննդի, հագուստի և բժշկական խնամքի հարցերում: ՋՀԾ-ն իր գործունեությունը Հայաստանում ծավալեց 1993 թ. սեպտեմբերից՝ «Ջինիշյան հիշատակի հիմնադրամ» (ՋՀՀ) անվանմամբ: Որպես հիմնադրամ՝ այն պաշտոնապես գրանցել է 1991 թ.[551]: Հայաստանում ՋՀՀ-ի գործող խորհրդատվական մարմնի անդամներն էին Հայ առաքելական, Հայ ավետարանական, Հայ կաթողիկե եկեղեցիների ներկայացուցիչները: Հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններն էին՝ համայնքների, գործարարության զարգացումը, բնակարանաշինությունը, մարդասիրական օգնությունը, առողջապահության ոլորտը և հոգևոր վերելքը: Գյումրիում ՋՀՀ-ն կառուցեց և վերանորոգեց բնակելի շենքեր, վերականգնվեցին ջրագծեր: Հիմնադրամը հոգատարություն ցուցաբերեց նաև անօթևան երեխաների, սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքների նկատմամբ: 1993 թվականից ՋՀՀ-ն Հայաստանում իրականացրել է ավելի քան 430 բարեգործական ծրագրեր[552]:

«Իզմիրլյան» հիմնադրամը հիմնվել է 1990 թ. Ժնևում: Նպատակն է նպաստել աշխարհասփյուռ հայերի կյանքի բարելավմանը Հայաստանի բարգավաճմանն ու հզորացմանը[553]: Այն էականորեն օժանդակել է Աղետի գոտու վերականգնմանը: Հետագայում հիմնադրամն առավելապես ձեռնարկել է զարգացմանն ուղղված ծրագրեր՝ խթանելու համար լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը և Հայաստանում ընդհանուր գործարար միջավայրի բարելավումը: 1998 թվականից ԱՄՆ «Եվրասիա»

---

[551] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 176-177:

[552] Տե՛ս Ավետիսյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 126:

[553] Տե՛ս «Հայկական Սփյուռք» տարեգիրք, ՀՀ սփյուռքի նախարարարություն (հեղ. խմբի ղեկավար՝ Հ. Հակոբյան և այլք), Ե., 2013, էջ 135:

հիմնադրամի հետ վարկավորել է Հայաստանում փոքր և միջին ձեռնարկություններին: Հայաստանյան վարկային շուկայի բոլոր ոլորտներին ուղղված ծրագրերի շրջանակներում հիմնադրամի գործադրած ջանքերը նպաստել են մոտ 4000 աշխատատեղերի ստեղծմանը: Հարկ է նշել նաև, որ համաձայն հիմնադրամի քաղաքականության՝ ծրագրերից ստացված տնտեսական օգուտները կրկին ուղղվում են Հայաստան՝ նպաստելով ներդրումային այլ ծրագրերի իրականացմանը[554]:

Հիմնադրամը Հայաստանում և Արցախում իրականացնում է մի շարք ծրագրեր նաև առողջապահության, կրթության, գիտության և սոցիալական աջակցության ոլորտներում: 2013 թ. «Իզմիրլյան» հիմնադրամի 12 մլն ԱՄՆ դոլար նվիրատվությամբ հիմնանորոգվել և վերաբացվել են «Իզմիրլյան» բժշկական հաստատությունը, Սուրբ Ներսես Մեծ գիտաբժշկական կենտրոնը[555]: Հիմնադրամն աջակցություն է ցուցաբերում ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտին, տրամադրում օգնություն ազատամարտիկների երեխաներին, ինչպես նաև իրականացնում է բանակին հոգեբանի աջակցության ծրագրեր: Հիմնադրամի աջակցությամբ են գործում ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանը, Երևանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատունը, Արցախի Չլդրան գյուղի Տիգրան Իզմիրլյան անվան դպրոցը[556]:

1990-ական թթ. երկրորդ կեսին Հայաստանում բարեսիրական ու մշակութային լայն գործունեություն ծավալեց «Գաֆեսճյան ընտանիք» հիմնադրամը (ԳԸՀ, Cafesjian Family

---

[554] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 175:
[555] Տե՛ս Ավետիսյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 142:
[556] Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 176:

Foundation), որը հիմնվել է 1996 թ. հունիսին Նյու Յորքում ամերիկահայ հայտնի գործարար Ջերարդ Գաֆեսճյանի կողմից: Այն ուներ 30 մլն դոլար նախնական դրամագլուխ[557]: Հիմնադրամը սեփական բարեգործական ծրագրերի հետ մեկտեղ ֆինանսական միջոցներ էր տրամադրում հայկական բարեգործական կազմակերպություններին:

Ամերիկահայ բարերար Ջերարդ Գաֆեսճյանը 2003 թ. 20 մլն ԱՄՆ դոլար է նվիրաբերել Վաշինգտոնում Հայոց ցեղասպանության թանգարանի շենքի գնման և վերանորոգման համար[558]: «Գաֆեսճյան ընտանիք» հիմնադրամը միլիոնավոր դոլարներ է ծախսում Հայաստանում ջերմային էներգիայի աղբյուրների, արևային սկավառակների ու մարտկոցների արտադրման, ՁԼՄ-ների, ֆինանսական ծառայությունների, անշարժ գույքի զարգացման, համակարգչային ծրագրերի և հեռահաղորդակցության ոլորտներում ծրագրերի զարգացման և իրականացման համար:

Ջ. Գաֆեսճյանը նախաձեռնել է Երևան քաղաքի Կասկադի վերակառուցումը՝ այդ նպատակի համար ներդնելով Գաֆեսճյան արվեստի կենտրոնը (ԳԱԿ, Cafesjian Center for the Arts), որը ժամանակակից արվեստի առաջատար միտումները Հայաստանում ցուցադրելու և աշխարհին հայկական մշակույթը ներկայացնելու յուրօրինակ առաքելություն է ստանձնել[559]:

Նպատակ ունենալով բարեգործական ծրագրեր իրականացնել Հայաստանի Հանրապետությունում, այնուհետև Արցախում՝ 1999 թ. Երևանում ամերիկահայ գործարար և բարերար

---

[557] Տե՛ս «Ազգ», 5 նոյեմբերի, 1998:
[558] Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 40:
[559] Տե՛ս նույն տեղում:

Ջեյմս Թուֆենկյանը հիմնադրել է «Թուֆենկյան» հիմնադրամի մայր գրասենյակը[560]: «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամն իր անմիջական մասնակցությամբ տարբեր ծրագրեր է իրականացնում ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում:

Հատկանշական է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն իր սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ ոլորտների զարգացման համար զրկված է միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկեր ստանալու հնարավորությունից, ուստի անգնահատելի է սփյուռքահայ բարեգործական, մշակութային, եկեղեցական կազմակերպությունների և հիմնադրամների, ինչպես նաև առանձին բարերարների օգնությունը: Այդ գործում մեծ ավանդ ունի «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը:

Արցախին օգնելու նպատակով 2004 թ. փետրվարին բացվել է «Թուֆենկյան» հիմնադրամի երևանյան գրասենյակի Ստեփանակերտի մասնաճյուղը, որի միջոցով իրականացվել են սոցիալ-տնտեսական, կրթամշակութային և բարեգործական այլ ծրագրեր[561]:

Վերաբնակեցումը համազգային, ռազմավարական նշանակություն ունեցող կարևորագույն խնդիր է: Մեծ ուշադրություն դարձնելով դրան՝ «Թուֆենկյան» հիմնադրամը մեծ աշխատանքներ է կատարում Արցախի, մասնավորապես սահմանամերձ շրջանների վերաբնակեցման ուղղությամբ: Ինչպես նշում է «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն Ջեյմս Թուֆենկյանը, «…վերաբնակեցման խնդիրն այսօր ոչ միայն ԼՂՀ իշխանությունների, այլև Սփյուռքի բարեգործական կազ-

---

[560] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 140-141:
[561] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 140-141:

մակերպությունների, Արցախի ճակատագրով մտահոգ համայն հայության մտահոգություններից մեկը պետք է դառնա: Չնայած մեր կառույցը նպաստում է նաև երկրում կրթամշակութային մի շարք ծրագրերի իրական\ացմանը, աջակցում տաղանդավոր երեխաների զարգացմանը՝ ցուցաբերելով բարոյական և նյութական օժանդակություն, սակայն մեր առաջնահերթ խնդիրը մնում է վերաբնակեցման ռազմավարությունը»[562]: Այդ ուղղությամբ կատարված առաջին խոշոր քայլերից մեկը Հադրութի շրջանի նորակառույց Առաջամուղ գյուղի հովանավորման ծրագիրն է, որը համահունչ է ԼՂՀ իշխանությունների վարած քաղաքականությանը: Առաջամուղը կառուցվել է «Թուֆենկյան» հիմնադրամի հանգանակած միջոցներով: Գյուղում կառուցված տասնութ տուն բնակեցված է[563]: Բնակիչների մի մասը փախստականներ են Ադրբեջանից. մի մասն այնտեղ է տեղափոխվել Հայաստանից, մյուս մասն էլ՝ Արցախի տարբեր բնակավայրերից, որոնց տները պատերազմի տարիներին ավերվել են: Նորակառույց տները հարմավետ են: Յուրաքանչյուր առանձնատուն ունի երեք ննջասենյակ, ընդարձակ հյուրասենյակ, ինչպես նաև խոհանոց, բաղինք և սանհանգույց: Լուծված է շուրջօրյա ջրամատակարարման հարցը: Բոլոր բնակիչներն էլ ունեն իրենց տնամերձ հողամասն ու այգին, օժանդակ տնտեսությունը, ապահովված են անասուններով, թռչուններով: 2007 թ. ամռանը շահագործման հանձնվեց 80 տեղանոց նորակառույց դպրոցը, որի շինարարության և կահավորման ծախսերը հոգացել են «Թուֆենկյան» հիմնադրամը և Հայ կրթական հիմնադրամը: Նոր ուսումնական հաստատությունում կսովորեն 44 աշակերտ, կաշխատեն

---

[562] «Հայաստանի Հանրապետություն», 5 սեպտեմբերի, 2007:
[563] Տե՛ս նույն տեղում:

11 ուսուցիչ[564]: Առաջամուղում նախատեսվում է նաև կառուցել մանկապարտեզ, գյուղապետարան և բուժկետ:

Հիմնադրամը աշխատանքներ է կատարում նաև արդեն վերաբնակեցված գյուղերի ամրապնդման և զարգացման ուղղությամբ: Այն իրականացնում է խաղողի այգիների վերականգնման ծրագիր Քաշաթաղի Այգեհովիտ և Ուռեկան գյուղերում: Այգիները վերականգնելուց հետո, ըստ կազմած պայմանագրի, դրանք վերադարձվելու են համայնքի անդամներին: 2006 թ. 35 հա խաղողի այգիներից ստացվել է առաջին բերքը՝ 12 տոննա խաղող, իսկ 2008 թ. ստացվել է մոտ 400 տոննա խաղողի բերք: Այս տարածաշրջանում նախատեսվում է կառուցել խաղողի սկզբնական վերամշակման գործարան[565]:

Հիմնադրամի միջոցներով Քաշաթաղի Այգեհովիտ գյուղում կառուցվել է ալրաղաց, որը սպասարկում է շրջակա մոտ 20 գյուղերի բնակիչների, իսկ Իշխանաձոր գյուղում կառուցվել է բուժամբուլատորիա, որը կարող է սպասարկել 2000 բնակչի: Ամբուլատորիան կահավորված է, ունի իր բաժանմունքները՝ ատամնաբուժական, մանկաբարձական, բուժքույրական անձնակազմով, շտապօգնության մեքենայով: Հիմնադրամի նախաձեռնությամբ բուժամբուլատորիայի աշխատակիցները դասընթացների են մասնակցել Ստեփանակերտի ծննդատանը և ախտորոշիչ կենտրոնում[566]:

Գյուղերի տնտեսական վերելքը խթանելու նպատակով «Թուֆենկյան» հիմնադրամը տրամադրում է ցածր տոկոսադրույթով վարկեր: Վարկերի համար տրամադրված գումարը ետ

---

[564] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 96:
[565] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 96:
[566] Տե՛ս նույն տեղում:

ստանալով՝ այն օգտագործվում է հետագա ծրագրերի ընդլայնման համար:

«Թուֆենկյան» հիմնադրամի Արցախի մասնաճյուղի միջոցով իրագործվում են նաև կրթամշակութային ծրագրեր: Հիմնադրամը Շուշիի պատմաերկրագիտական թանգարանի հովանավորն է. 2005 թ. մայիսի 9-ին այստեղ բացվեց նոր բաժին՝ նվիրված Շուշիի ազատագրման ռազմական գործողությանը[567]:

Արդեն չորրորդ տարին է՝ հիմնադրամն իրականացնում է «Տաղանդավոր երիտասարդներին՝ ֆինանսական աջակցություն» ծրագիրը[568]: Այն նախատեսված է օժանդակելու ԼՂՀ շնորհաշատ երեխաներին և երիտասարդներին՝ հետագայում նրանց տաղանդը բացահայտելու և զարգացնելու նպատակով: Տաղանդավոր երիտասարդների ընտրության հարցում հիմնադրամը համագործակցում է ԼՂՀ մշակույթի, կրթության և գիտության նախարարությունների, ինչպես նաև Սպորտի կոմիտեի հետ: Ծրագրում ընդգրկված են ավելի քան 70 տաղանդավոր երեխաներ և երիտասարդներ: Ներկայումս, Ստեփանակերտից բացի, ծրագրում ներառված են Մարտունու և Հադրութի շրջանները, իսկ 2008 թ. սեպտեմբերից՝ Մարտակերտի շրջանը: Հիմնադրամի օժանդակությամբ իրագործվեց Շուշիի երեք երգչախմբերի լազերային սկավառակի ձայնագրությունը, որը մեծ ընդունելության է արժանացել արտասահմանում: Քաշաթաղի շրջանի բոլոր գյուղերում երկու փուլով անցկացվում են համակարգչային դասընթացներ ուսուցիչների, աշակերտների և գյուղի երիտասարդության համար[569]:

---

[567] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 97:
[568] Տե՛ս նույն տեղում:
[569] Տե՛ս նույն տեղում:

Վերջին տասնամյակի ընթացքում հիմնադրամը խոշորածավալ ներդրումներ է իրականացրել հյուրանոցային բիզնեսում: Խոսքը «Tufenkyan Heritage» հյուրանոցների մասին է[570]: Հայաստանի գեղեցկությամբ և հնադարյա պատմությամբ տպավորված՝ Ջեյմս Թուֆենկյանը, օգտվելով սեփական բիզնեսի հաջողություններից, հիմնեց հայկական ավանդական ոճի հյուրանոցներ: Դրանց առանձնահատկությունն այն է, որ հայկական արհեստներն ու ազգային ավանդույթները կիրառվել են հյուրանոցների ձևավորման և ծառայությունների մատուցման մեջ:

Զբոսաշրջության ոլորտի առաջատարներից մեկի՝ «TripAdvisor»-ի կայքում Թուֆենկյանի հյուրանոցներից տպավորված արտասահմանցիները նշել են, որ իրենց հատկապես գրավել է հյուրանոցների հայկական մթնոլորտը, ազգային ոգով կատարված դիզայնն ու հարդարանքը՝ սկսած գորգագործության նմուշներից մինչև ձեռակերտ ազգային գործիքներ: Արդյունքում ստեղծվել են «Հին Դիլիջան» համալիրը, «Ավան Ձորագետ» հյուրանոցը, «Ավան Վիլլա Երևան» հյուրանոցը, ինչպես նաև հանգստյան տներ՝ ապահովված արդիական պայմաններով և անհրաժեշտ ծառայություններով[571]:

«Ազնավուրը Հայաստանին» հիմնադրամը ստեղծվել է 1988 թ. Փարիզում ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ, ազգային բարերար, Հայաստանի ազգային հերոս (2004) Շառլ Ազնավուրի կողմից Սպիտակի երկրաշարժից տուժածներին օգնելու նպատակով: Երկրաշարժից հետո նա բազմիցս այցելել է Հայաս-

---

[570] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, էջ 115:
[571] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 116:

տան, եղել Աղետի գոտում: Հիմնադրամի մասնաճյուղը գործում է նաև Երևանում[572]:

«Ազնավուրը Հայաստանին» կազմակերպությունը Երևանի Էրեբունի բժշկական կենտրոնում նորոգեց բաժանմունքներ, Արմավիրում հիմնեց մանկական սննդի գործարան, Լուսակերտում, Գեղասարում, Գոգարանում կառուցեց մշակութային կենտրոններ, իրականացրեց Աղետի գոտու դպրոցների օգնության ծրագիր, բացեց բարեգործական դեղատներ:

Ազնավուրը Ֆրանսիայում Հայաստանի պատվավոր ներկայացուցիչն էր: Դրանով էլ պայմանավորված էին նրա հաճախակի այցերը Հայաստան: 1993 թ. նա նաև նշանակվեց ՀՀ դեսպան հատուկ հանձնարարությունների գծով, որը ներառում էր նաև մարդասիրական օգնության հարցերը[573]: Լինելով Եվրոպայում ՀՀ շրջիկ դեսպանը՝ Ազնավուրը համակարգում էր Եվրահամայնքի կողմից ցուցաբերվող օգնությունը:

«Ազնավուրը Հայաստանին» կազմակերպությունը, մարդասիրական օգնություն ցույց տալուց բացի, Եվրոպական տնտեսական համագործակցության հումանիտար բաժնի (ECHO) ֆինանսավորմամբ Հայաստանում իրականացրեց ՀՀ տնտեսական ինքնուրույնության ամրապնդմանն ուղղված մի շարք ծրագրեր, որոնցից էր էներգետիկ ռեսուրսների զարգացման նպատակով Հայաստանի փոքր հիդրոէլեկտրակայանների վերականգնման «Էներգիա Հայաստանի համար» կազմակերպության ծրագիրը: Բացի դրամական օժանդակությունից՝ ECHO-ն 1995 թ. օգնեց հոսանքի բացակայությունից տառապող երևանցիներին: Ազնավուրի դիմումի շնորհիվ ECHO-ն այդ ծրագիրն իրա-

---

572 Տե՛ս նույն տեղում, էջ 127:

573 Տե՛ս «Ազգ», 16 մարտի, 1993:

կանացնելու պայմանագիր կնքեց «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպության հետ, որը նախատեսում էր 3 մլն հարյուր հազար դրամ արժողությամբ մազութ և գազ գնել՝ երևանցիներին 75 օր շարունակ օրական 2 ժամ հոսանքով ապահովելու համար[574]: Արդյունքում 1995 թ. դեկտեմբերի 5-ից մինչև 1996 թ. փետրվարի 18-ը երևանցիները երկժամյա գրաֆիկով հոսանք ստացան:

1990-ականների վերջերին «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպությունը ներթափանցեց նաև կրթության ոլորտ: Նրա օգնությամբ Հայաստանում նորոգվեցին ու կառուցվեցին 40 դպրոցներ[575]: Ֆինանսական միջոցների զգալի մասը նվիրաբերց մեծ երգահանը:

«Բողոսյան» հիմնադրամը (Boghosian Foundation) ստեղծվել է 1992 թ. Բելգիայում լիբանանահայ Բողոսյան (Պողոսյան) ընտանիքի կողմից: Հիմնադիր անդամներն են Ժան (Բելգիա) և Ալբերտ (Շվեյցարիա) Բողոսյան եղբայրները[576]: Նպատակն է նպաստել Հայաստանի զարգացմանն ու բարգավաճմանը: 1994 թվականից հիմնադրամը գործունեություն է ծավալել նաև Հայաստանում: 2006 թվականից հիմնադրամը Հայաստանում պաշտոնապես գործում է «Ռոբերտ Բողոսյան և որդիներ հիմնադրամ» անվանմամբ: Գրասենյակներ ունի Բելգիայում և Հայաստանում: Հովանավորում է մշակութային, կրթական և սոցիալական մի շարք ծրագրեր Բելգիայում, Լիբանանում և Հայաստանում:

«Բողոսյան» հիմնադրամի (Boghosian Foundation) միջոցներով են կառուցվել Արագածոտնի մարզի Թալինի շրջանի գյուղե-

---

[574] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 21 դեկտեմբերի, 1995:
[575] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22 հունիսի, 2000:
[576] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 177:

րի ջրամատակարարման համակարգը (1994), հիմնանորոգվել և կահավորվել է ԵՊՀ-ին առընթեր, ակադեմիկոս Արտաշես Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի հանրակացարանի շենքը (1995), կառուցվել են Գյումրու «Տիրամայր Հայաստանի» Պողոսյան կրթահամալիրը (1998) և կրթահամալիրին կից «Պողոսյան» պուրակը (2001), Գյումրու արվեստի դպրոցը (2002), Սպիտակի մանկական երաժշտական դպրոցի նոր շենքը (2000) ու մշակույթի պալատը (2002), հիմնովին նորոգվել է Երևանի նորարարական արվեստի փորձառական կենտրոնը (ՆՓԱԿ, 2002), բարեկարգվել է Երևանի «Սիրահարների այգին» (2008) և այլն[577]: Հիմնադրամը մինչ օրս աջակցում և հովանավորում է վերոնշյալ հաստատություններին:

«Հրայր և Աննա Հովնանյան» հիմնադրամը (Hirair and Anna Hovnanian Foundation) ստեղծվել է 1986 թ. ԱՄՆ-ում ամերիկահայ բարերարներ Հրայր և Աննա Հովնանյանների կողմից: Այդ ժամանակից ի վեր հիմնադրամն իրագործում է բարեգործական տարաբնույթ ծրագրեր: Հիմնադրամի երևանյան մասնաճյուղը բացվել է 2006 թ.: Հայաստանում հիմնվել է «Հրայր և Աննա Հովնանյան» բիզնես-կենտրոնը[578], որը հյուրընկալում է բազմաթիվ հասարակական կազմակերպությունների: Հիմնադրամը հովանավորել է Երևանի Աբովյան-Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում գտնվող եկեղեցական համալիրի կառուցումը, որը ներառում է հայրապետական նստավայրը և Սուրբ Աննա եկեղեցին: Հիմնադրամը նաև կրթաթոշակներ է տրամադրում հայ ուսանողներին՝ հնարավորություն տալով սովորելու արտերկրի համալսարաններում, իսկ 2013 թվականից սկսած՝ կրթաթոշակ-

[577] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 401-402:
[578] Տե՛ս նույն տեղում, էջ 177:

ներ է տրամադրում Հայաստանի համալսարանների այն ուսանողներին, որոնք ունեն բարձր առաջադիմություն, սակայն ի վիճակի չեն վճարել ուսման վարձը[579]: Հիմնադրամի միջոցներով իրականացվել են նաև բազմաթիվ մշակութային ծրագրեր:

2006 թ. Գևորգ Հովնանյանը 2 մլն ԱՄՆ դոլար է նվիրաբերել Հայկական օգնության ֆոնդին: Նույն տարում նրան շնորհվել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» և այլ շքանշաններ[580]:

Հրայր Հովնանյանը տարեցների համար նախատեսված բնակելի թաղամասերի նախագծման ոլորտի առաջատարն է: Եղբայրները Հայաստանում «Վահագնի թաղամասի» միջոցով զարկ են տվել ամերիկյան ոճի արվարձանների զարգացմանը: Թաղամասում նախատեսվում է կառուցել ևս 700 առանձնատուն և 2300 բնակարան՝ անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքներով[581]:

«Հայաստանի մանուկներ» հիմնադրամը (Children of Armenia Fund, COAF) գործում է Նյու Յորքում 2000 թվականից: Հիմնադրամը Հայաստանում իրականացնում է գյուղական համայնքների համապարփակ զարգացման ծրագիր, որի հիմնական ուղղություններն են ենթակառուցվածքների վերականգնումը, կրթության, առողջապահության, տնտեսության ոլորտների զարգացումը, երեխայի և ընտանիքի աջակցության ծառայությունները[582]: Ծրագրի շահառուներն են Հայաստանի Արմավիր և Արագածոտն մարզերի Բաղրամյանի և Թալինի տարածաշրջանների 15 գյուղական համայնքների ավելի քան 27.000 ըն-

---

[579] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 178:
[580] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 137:
[581] Տե՛ս նույն տեղում:
[582] Տե՛ս նույն տեղում, էջ 178-179:

տանիքներ[583]: Հիմնադրամը կառուցում է դպրոցներ, մանկապարտեզներ, ճանապարհներ, ամբուլատորիաներ: Հիմնադրամի՝ գյուղական վայրերի զարգացման ամբողջական ծրագրի իրականացումը հնարավոր է դառնում Նյու Յորքում և Երևանում անցկացվող ամենամյա բարեգործական ընթրիքների արդյունքում կատարվող հանգանակությունների, ինչպես նաև դրամաշնորհների միջոցով:

«Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման համահայկական հիմնադրամը (“Pyunik” Pan-Armenian Human Resources Development Foundation) Երևանում պաշտոնապես գործունեություն է ծավալել 2008 թվականից՝ աջակցելով նաև ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերի իրականացմանը, ընդ որում՝ հիմնադիրների կողմից ՀՀ-ում, ԼՂՀ-ում, Լիբանանում և Սիրիայում բարեգործական ծրագրեր իրականացվել են դեռևս 1998 թվականից[584]:

Հանրակրթությանն աջակցելու նպատակով «Փյունիկ» հիմնադրամը Հայաստանի, Արցախի և Ջավախքի բազմաթիվ դպրոցների նվիրել է 600 հավաքածու լաբորատոր սարքավորումներ, 450-ից ավելի համակարգիչներ: Կարևոր է մանկական խաղահրապարակների արդիականացման ծրագիրը: Առաջին անգամ դպրոցների համար ստեղծվել է հայատառ գլուբուս: Հիմնադրամի հովանավորությամբ տպագրվում են գրքեր, պատկերագրքեր, վճարվում է անապահով ուսանողների ուսման վարձը, ուսանողներն աջակցություն են ստանում՝ արտերկրում ուսումը շարունակելու համար, կազմակերպվում են փառատոներ, տարաբնույթ միջոցառումներ[585]:

---

[583] Տե՛ս նույն տեղում, էջ 179:
[584] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 180:
[585] Տե՛ս նույն տեղում:

2015 թ. հիմնադրամի միջոցներով վերանորոգվել և վերակառուցվել են Կոմիտասի տուն-թանգարանը, Հայոց ցեղասպանության թանգարանը, իսկ ԼՂՀ-ում կառուցվել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի մասնաճյուղը[586]:

Հատկանշական են հիմնադրամի նվիրատվությունները Երևանի քաղաքապետարանին, տրամադրվել են սանմաքրման մեքենաներ, լուսավորության սարքեր, դեկորատիվ ծառեր, ծաղկածիլեր և այլն:

Ընդհանուր առմամբ՝ «Փյունիկ» հիմնադրամը 1998 թվականից առ այսօր 100 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ և բարեգործական ձեռնարկներ է իրականացրել հայրենիքում[587]:

«Հայաստան-Արցախ» հիմնադրամը (AAF, Armenia Artsakh Fund), որի նպատակն է աջակցել Հայաստանի և Արցախի բնակչությանը, կազմավորվել է 2015 թ. դեկտեմբերի 1-ին Գլենդելում (ԱՄՆ): Հիմնադրամը օժանդակություն է ցուցաբերում Հայաստանի և Արցախի հիվանդանոցներին, պոլիկլինիկաներին, դպրոցներին, մանկատներին և բարեգործական տարբեր հաստատություններին՝ նրանց տրամադրելով կենսական անհրաժեշտության դեղորայք, պատվաստանյութեր, մանկական սնունդ, բժշկական, գյուղատնտեսական սարքավորումներ, համակարգիչներ, ձմեռային հագուստ և այլն:

«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA, Initiatives for Development of Armenia Foundation) հիմնադրամի ուշադրության կենտրոնում են այն ծրագրերը, որոնք սոցիալ-տնտեսական էական արդյունք կապահովեն՝ աջակցելով երկրի անցմանը գոյատևումից դեպի բարեկեցություն:

---

[586] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 180:
[587] Տե՛ս նույն տեղում, էջ 401:

Հիմնադրամի նշանակալի նախագծերի թվում են «UWC Դիլիջան քոլեջի», «Տաթևի վերածնունդ», Թբիլիսիի Սուրբ Գևորգ եկեղեցու վերականգնման, Դիլիջան քաղաքի զարգացման ծրագրերը, 100 LIVES նախաձեռնությունը («Ավրորա» միջազգային մրցանակի հիմնումը, որի առաջին մրցանակաբաշխությունը տեղի ունեցավ 2016 թ. ապրիլի 24-ին)[588]: Ելնելով Հայաստանի զարգացման գերակա ուղղություններից՝ IDeA հիմնադրամն իրագործում է մի շարք փոխկապակցված ենթակառուցվածքային ծրագրեր երկրի տարածքում և նրա սահմաններից դուրս:

Այսպիսով՝ չափազանց մեծ է հիմնադրամների դերը նորանկախ Հայաստանի և Արցախի սոցիալ-տնտեսական կյանքում: Իրագործելով լայնածավալ մարդասիրական ծրագրեր՝ հիմնադրամներն աջակցեցին հասարակության գրեթե բոլոր շերտերին, ընդլայնեցին ու կատարելագործեցին իրենց գործունեության ձևերն ու մեթոդները՝ հետագա տարիների համար մշակելով նորերը: Հայաստանի ծանրագույն սոցիալ-տնտեսական ժամանակահատվածում հիմնադրամները բացառիկ դեր ունեցան թե՛ պետությանը, թե՛ բնակչությանը բազմաբնույթ և լայնածավալ օգնություն ցուցաբերելու հարցում: Նրանց գործունեությունը զգալիորեն մեղմեց տնտեսական ճգնաժամը և դյուրացրեց դրա հաղթահարումը: Կարծում ենք՝ հիմնադրամների գործունեության բացակայության դեպքում սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետևանքները շատ ավելի ծանր և անկանխատեսելի կլինեին: Հարկ է նշել, որ աջակցությունը բարոյահոգեբանական նշանակալի դեր է խաղացել, քանի որ սոցիալ-տնտեսական դժվար վիճակում հայտնված քաղաքացիների մեջ, ըստ էության, բարձր էր պահում հավատն ապագայի հանդեպ:

---

[588] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 181

Բ. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Երկրաշարժից ավերված հայրենիքի և պատերազմից տուժած Արցախի վերականգնմանը իրենց աջակցությունը բերեցին գրեթե ողջ աշխարհի սփյուռքահայ համայնքները: Նրանք օգնում էին նաև զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքիներին, ծնողազուրկ երեխաներին:

Երկրաշարժից հետո արտերկրի մեր հայրենակիցները մեծ նվիրումով սատար կանգնեցին հայրենիքին՝ աղետի առաջին իսկ օրերին սփյուռքահայ համայնքներում ստեղծելով օգնության ֆոնդեր, միություններ, որոնց շնորհիվ կազմակերպվեց համազգային հանգանակություն, ձեռք բերվեցին մեծ քանակությամբ դեղորայք, բժշկական սարքավորումներ, հագուստ, սննդամթերք, վրաններ, տնակներ, առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ, և կազմակերպվեց դրանց շտապ առաքումը Հայաստան: Երկրաշարժից հետո առաջին իսկ օրերից Հայաստան ժամանած արտասահմանյան մասնագետների, փրկարարների, բժիշկների, դեղագործների թվում կային բազմաթիվ սփյուռահայեր, որոնք իրենց մասնագիտական ողջ հմտությունն ի սպաս դրեցին աղետյալների փրկության գործին[589]:

Մերձավոր Արևելքի որոշ հայկական համայնքներ, հատկապես լիբանանահայ համայնքը, չնայած երկարատև քաղաքացիական պատերազմի հետևանքով գտնվում էր քաղաքական և տնտեսական բարդ պայմաններում, սակայն հայաստանյան երկրաշարժից հետո ստեղծեց երեք հայ քաղաքական կուսակցությունների (ՀՅԴ, ՍԴՀԿ, ՌԱԿ) ներկայացուցիչներից կազմ-

[589] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 90:

ված հանձնախումբ, որի միջոցով 1988 թ. դեկտեմբերին Հայաստանի համար ծանր օրերին հանգանակեց ավելի քան մեկ մլն ԱՄՆ դոլար, ինչի շնորհիվ Հայաստան ուղարկվեց 42 տոննա բեռ (հիմնականում բուժսարքավորումներ և դեղամիջոցներ)[590]:

Համայնքի հանգանակություններով հիմնովին արդիականացվեց Ավանի արհեստական մարմնանդամների (պրոթեզների) գործարանը, ինչպես նաև գումար հատկացվեց Գյումրիի «Անի» թաղամասում 81 բնակարանների կառուցմանը[591]:

Սփյուռքահայ հնագույն և հեղինակավոր կազմակերպություններից է «Հայկական բարեգործական ընդհանուր միությունը» (ՀԲԸՄ), որը մեծ ծավալի և արդյունավետ աշխատանք է տարել իր գոյության ողջ ընթացքում՝ օգնելով ու աջակցելով մայր հայրենիքին ու Արցախին: Միությունը հիմնադրվել է 1906 թ. ապրիլի 15-ին ազգային բարերար Պողոս Նուբար փաշայի նախաձեռնությամբ:

ՀԲԸՄ-ի նպատակն է նյութապես օգնել պետականությունից զուրկ հայ ժողովրդի կարիքավոր հատվածներին, նպաստել հայերի կրթության ու դաստիարակության գործին, հետագայում նաև՝ հայրենիքի մշակութային, տնտեսական վերելքին:

Հիմնադրումից առ այսօր ՀԲԸՄ-ի նախագահներն են եղել Պողոս Նուբարը (1906-1930), Գալուստ Գյուլբենկյանը (1930-1932), Զարեհ Նուբարը (1932-1940), Արշակ Կարագյոզյանը (1942-1953), Ալեք Մանուկյանը (1953-1989), Լուիզ-Սիմոն Մանուկյանը (1989-2002): 2002 թվականից ՀԲԸՄ-ի նախագահն է Պերճ Սեդրակյանը[592]:

---

590 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 7, գ. 224, թ. 2:

591 Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 294:

592 Տե՛ս Հայկական բարեգործական ընդհանուր միություն: Հարյուրամյա ազգային ծառայություն, Ե., 2011, էջ 13:

ՀՀ անկախության ձեռքբերումից հետո ՀԲԸՄ-ն ֆինանսավորել մի շարք կրթական, մշակութային, մարդասիրական, կրոնական և տնտեսական երկարաժամկետ ծրագրեր: Հայաստանում վերջին տասը տարիների ընթացքում ՀԲԸՄ-ի ծրագրերը, ընդգրկելով տարիքային և սոցիալական բոլոր խմբերը, ծառայել են հարյուր հազարավոր մարդկանց և տարեկան ավելի քան 1000 հավելյալ աշխատատեղ են ապահովել:

1992 թ. ավարտվել է 10 հազար տոննա տարողության սառցամթերանոցի կառուցումը Գյումրիում: Նույն թվականին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության և «Հովարդ Կարագյոզյան» հաստատության սկզբնական օժանդակությամբ Երևանում հիմնվել է պլաստիկ վերականգնողական վիրաբուժության կենտրոնը, որտեղ բուժում է ստացել մոտ 6 հազար մարդ:

1991 թ. հիմնադրվել է Հայաստանի ամերիկյան համալսարանը, որի տարբեր բաժիններում ուսանում է 450 ուսանող, իսկ շրջանավարտների թիվը մոտ 750 է: 1999 թ. ԱՄՆ կառավարության և ամերիկահայ նվիրատումների օժանդակությամբ ՀԲԸՄ-ն կառուցել է նույն համալսարանի բիզնես կենտրոնի շենքը[593]:

Ջեֆերսոնի անվան ուլտրաձայնային հետազոտությունների և կրթության ինստիտուտի հետ համատեղ Ջեֆերսոնի համալսարանի հիվանդանոցի ռադիոլոգիայի դոկտոր պրոֆեսոր Լևոն Նազարյանի ղեկավարությամբ ՀԲԸՄ-ն Էրեբունի հիվանդանոցում հիմնադրել է ուլտրաձայնային հետազոտությունների բաժին:

---

[593] Տե՛ս Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Ե., 2005, էջ 528:

ՀԲԸՄ-ն և Թոմաս Ջեֆերսոնի անվան ինստիտուտը Երևանի պետական բժշկական համալսարանում բացել են ուլտրաձայնային ուսուցողական նոր կենտրոն՝ ուսանողների և բժիշկների համար[594]:

2001 թ. ՀԲԸՄ-ն գնել է 120 մահճակալ ունեցող Պրոկտոլոգիայի հիվանդանոցը, որտեղ տարիներ շարունակ գործում էր ՀԲԸՄ-ի կողմից հովանավորվող պլաստիկ վերականգնողական վիրաբուժական կենտրոնը: Նույն թվականին ՀԲԸՄ-ն հիվանդանոցը հանձնեց Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին՝ օժանդակելու եկեղեցու մարդասիրական առաքելությանը:

Կարևորելով կատարողական արվեստի դերը՝ ՀԲԸՄ-ն 1992 թվականից ֆինանսավորում է 100 անդամ ունեցող Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը:

ՀԲԸՄ-ի բարերարները եղել են աշխարհի ամենամեծ հայկական Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու շինարարության գլխավոր հովանավորները:

Հարկ է նկատել, որ ՀԲԸՄ-ի՝ հայրենի ժողովուրդին օգնելու և անկախ պետականության կայացմանն աջակցելու մնայուն քաղաքականությունը պայմանավորված չի եղել Հայաստանում տիրող վարչակարգով ու իշխանություններով:

ՀԲԸՄ-ն մի շարք ծրագրեր է իրականացնում նաև Արցախում. վերակառուցել է 29 տուն Նորաշեն գյուղում և մեծ դպրոցի շենք Ստեփանակերտում, կառուցում է բնակելի շենք պատերազմի վետերանների ու այրիների համար, հովանավորում է Արցախի կամերայի նվագախումբը և այլն: Անցած տարիների ըն-

---

[594] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.): Հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010, էջ 47:

թացքում ՀԲԸՄ-ն Հայաստանում և Արցախում իրականացված ծրագրերին տրամադրել է շուրջ 60 մլն դոլար, ավելի քան որևէ այլ սփյուռքահայ կազմակերպություն: Նույն այդ տարիներին 1991-2003 թթ. ՀԲԸՄ-ի դրամագլուխը հասել է 246 մլն դոլարի[595]:

Համայն Սփյուռքի հայաշատ վայրերում, Հայաստանում և Արցախում շուրջ 105 տարի ազգօգուտ գործունեություն է իրականացնում «Հայ օգնության միությունը» (ՀՕՄ): Այս կազմակերպությունը հիմնադրվել է 1910 թ. հունվարի 1-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու Յորք քաղաքում երիտասարդ մտավորական և աննկուն քաղաքական ու հասարակական գործիչ Խաչատուր Մալումյանի (ծածկանուն՝ Էդգար Ակնունի) նախաձեռնությամբ: Հայ կանանց բարեսիրական գործունեությանը ծառայող այս կազմակերպությունը, ինչպես Սփյուռքում, այնպես էլ վերջին 25 տարիներին Հայաստանում և Արցախում, մեծ ներդրում ունի հայապահպանության, կրթական, առողջապահական և տնտեսական ծրագրերի իրականացման գործում: ՀՕՄ-ը ձևավորվել է աշխարհասփյուռ հայ կանանց տարբեր խմբակների միավորմամբ:

ՀՕՄ-ի գործունեությունը Հայաստանում բուռն թափ ստացավ 1988 թ. դեկտեմբերյան կործանարար երկրաշարժից հետո՝ ներառելով վերականգնողական աշխատանքները, ինչպես նաև դեղորայքի, սննդամթերքի, հագուստի, բժշկական սարքավորումների առաքումը: Երկրաշաժից հետո ՀՊՄ-ն առաջիններից մեկն էր, որն ամենատարբեր միջոցներով օգնության շտապեց աղետյալ Հայաստանին: Աղետից ընդամենը մի քանի ամիս անց Վաշինգտոնում բացվեց ՀՕՄ-ի գրասենակը, որը զբաղվում էր

[595] Տե՛ս Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 529:

հատկապես Հայաստանի վերաշինությանը նպաստող աշխատանքներով[596]: Այդ օրերին դժվարին կացության մեջ հայտնված հայրենիքին գթառատ ձեռք մեկնեցին հումուհիները: Նրանց բարեսիրական գործունեությունն ավելի առարկայական դարձավ, երբ 1990 թ. որոշվեց Հայաստանում ստեղծել ՀՕՄ-ի կառույցը՝ «Հայ օգնության խաչը» (ՀՕԽ):

Միությունը նպատակ ուներ հայրենիքում իրականացնելու ավելի երկարատև ծրագրեր, ուստի երբ երկրաշարժից հետո ստեղծված իրավիճակը մի փոքր մեղմացավ, այն նախատեսեց Աղետի գոտում կառուցել բնակելի թաղամասեր կամ գյուղեր: ՀՕՄ-ի միջոցներով երկրաշարժից հետո չորս գյուղ և մեկ ավան կառուցվեցին Ամասիայում, Նոյեմբերյանում, Վանաձորում, Ախուրյանի շրջանում[597]:

ՀՕՄ-ի մշտական ծրագրերից էր որբախնամ գործունեությունը: Այն զգալի նյութական օժանդակություն էր հատկացնում նաև գիշերօթիկ դպրոցներին, անապահով երեխաներին: «ՀՕՄ-ի օրը Հայաստանի հատուկ գիշերօթիկ դպրոցներում և մանկատներում» ծրագիրը ներառեց Վանաձորի, Երևանի, Հրազդանի մի շարք գիշերօթիկ և երկարօրյա դպրոցներ, որտեղ սահմանվեց այդ դպրոցների երեխաներին ճաշ մատուցելու հատուկ օր[598]: Դեռևս 1992 թվականից ՀՕՄ-ը սկսեց իրականացնել «Զոհված ազատամարտիկների և երկկողմանի ծնողազուրկ երեխաների խնամակալության» ծրագիրը և այդ թվականից յուրաքանչյուր տարի ծրագրի շրջանակներում դրամական օգնություն հատկացրեց 4000 երեխաների, որոնցից ավելի քան 800-ը երկ-

---

[596] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 106:
[597] Տե՛ս «Լրագիր», 31 օգոստոսի, 1995:
[598] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 6 օգոստոսի, 1997:

կողմանի ծնողազուրկ, իսկ մյուսները զոհված ազատամարտիկների երեխաներ էին[599]:

ՀՕՄ-ի երևանյան գրասենյակի՝ ՀՕԽ-ի դռները բաց էին նաև անօգնական ծերերի, լուրջ բուժման կարիք ունեցող մարդկանց համար: Սակայն ՀՕԽ-ը հատկապես զբաղվում էր հայ ռազմիկների բուժման, նրանց մարմնական ու հոգևոր վերքերն ամոքելու գործով: 1993 թ. իր ազգանպաստ գործունեությանը ՀՕՄ-ն ավելացրեց նմանօրինակը չունեցող ևս մի ծառայություն: ՀՕՄ-ի հայրենական մասնաճյուղը, օրեցօր սաստկացող պատերազմական իրավիճակից ելնելով, իր համար որոշակի նպատակ դարձրեց՝ ամեն գնով սատարելու հայոց բանակի հզորացմանն ու կայացմանը: ՀՀ մարդասիրական օգնությունների կառավարական հանձնաժողովի և ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցելով՝ ՀՕՄ-ը որոշեց ամանորյա ծրարներ պատրաստել և Նոր տարվա կապակցությամբ հանձնել Հայաստանի ու Արցախի հայոց բանակի ռազմիկներին: Այսպիսի ծրագիր-մտահղացում առաջին անգամ էր կազմակերպվում և բարոյական լուրջ աջակցություն էր հայ զինվորներին:

1996 թվականից Արցախում սկսեց գործել ՀՕՄ-ի «Հայ կին» կազմակերպությունը, որը Արցախի մի շարք բնակավայրերում հիմնեց «Սոսե» մանկապարտեզների ցանցը: Որպես առաջին քայլ՝ ՀՕՄ-ի «Սոսե» մասնաճյուղը Ստեփանակերտում 1998 թ. հիմնեց «Սոսե» մանկապարտեզը, որտեղ հաճախում էին հիմնականում ազատամարտիկների 90 երեխաներ, այնուհետև մանկապարտեզներ հիմնվեցին Ասկերանի շրջանի Այգեստան (80 երեխա) և Մարտունու շրջանի Ավդուռ (30 երեխա) գյուղե-

[599] Տե՛ս «Հայոց աշխարհ», 1 դեկտեմբերի, 1999:

րում, Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում վերանորոգվեց չորրորդ մանկապարտեզի շենքը [600]:

1998 թ. մայիսի 29-ին Երևանում ՀՕՄ-ի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Հայաստան-Սփյուռք. 21-րդ դարի շեմին» թեմայով համահայկական գիտաժողով, որում քննարկվեցին Հայաստանի ազգային-հասարակական կյանքում հայ կնոջ մասնակցության, Հայաստան-Սփյուռք կապերի սերտացման հիմնահարցերը[601]: Գիտաժողովն իր աշխատանքներն ավարտեց մայիսի 30-ին:

ՀՕՄ-ը Հայաստանում, Արցախում, Ջավախքում և Սփյուռքում իրականացնում է բազմաթիվ բարեսիրական ծրագրեր կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական, տնտեսական ոլորտներում: Այսօր ՀՕՄ-ը մեծաթիվ կամավորներով աշխատանքներ է ծավալում Հայաստանի 50 քաղաքներում ու գյուղերում, նպաստում է կրթական, առողջապահական, համայնքային զարգացման և բարեգործական ծրագրերի իրականացմանը, սոցիալական խնդիրների լուծմանը: ՀՕՄ-ն ունի հիվանդանոցներ, բուժկետներ, մանկատներ, ծերանոցներ, դպրոցներ, մանկապարտեզներ[602]:

1970 թվականից ի վեր ՀՕՄ-ը սերտորեն համագործակցում է ՄԱԿ-ի հետ, 1998 թվականից ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդի (ECOSOC) անդամ է: ՀՀ սփյուռքի նախարարությունը համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով հուշագիր է ստորագրել ՀՕՄ-ի հետ:

---

[600] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 109:
[601] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 30 մայիսի, 1998:
[602] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 164-165:

2016 թ. Քառօրյա պատերազմի օրերին ՀՕՄ-ի Կենտրոնական վարչությունը կոչ արեց բոլոր շրջանային միավորներին՝ պահանջելով նյութական օգնություն հասցնել ՀՕՄ-ի Հայաստանի և Արցախի միավորներին: Վերջիններս, համագործակցելով Արցախի իշխանությունների հետ, նյութական օգնություն հասցրին Մարտակերտի և հարակից գյուղերի տարհանված ընտանիքներին[603]:

«Հայ օգնության ֆոնդը» (ՀՕՖ) Հայաստանյաց առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի բարեգործական կազմակերպություն է: Ստեղծվել է 1988 թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո Նյու Յորքում ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդարանի (թեմական առաջնորդն էր Թորգոմ արք. Մանուկյանը) նախաձեռնությամբ: Սկզբնապես կոչվել է «Հայաստանի վերականգնման առաջնորդարանի ֆոնդ», իսկ 1992 թվականից՝ «Հայ օգնության ֆոնդ» (ՀՕՖ): Նպատակն էր ավելի արդյունավետ դարձնել տեղի հայության և ամերիկյան հասարակության ու տարբեր կազմակերպությունների օգնությունը: 1993 թ. փետրվարին գրանցվելով որպես ոչ շահութաբեր բարեգործական կազմակերպություն՝ ՀՕՖ-ը հնարավորություն ստացավ ծավալելու ինքնուրույն գործունեություն[604]:

ՀՕՖ-ը գրասենյակ ունի Երևանում, ներկայացված է նաև Գյումրիում, Վանաձորում, Բերդում և Ստեփանակերտում: ՀՕՖ-ի գլխավոր նպատակներից է հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդումը հայրենիքի հետ տնտեսական և մարդասիրական կամուրջ կառուցելու միջոցով:

---

[603] Տե՛ս «Հայկական Սփյուռք» տարեգիրք, Ե., 2016, էջ 95:
[604] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ.,, էջ 118:

Երկրաշարժից հետո մինչ օրս Հայաստանին տրամադրած օգնության ծավալներով սփյուռքահայ կազմակերպությունների շարքում ՀՕՖ-ը զբաղեցնում է առաջին տեղերից մեկը (Հայաստանում և Արցախում իրականացրել է շուրջ 280 մլն դոլարի մարդասիրական օգնության և զարգացման ծրագրեր)[605]: ՀՕՖ-ը տնտեսական զարգացման, երեխաների պաշտպանության, առողջապահության, կրթության, գիտության, սոցիալական աջակցության ծրագրեր է իրականացնում Հայաստանում և Արցախում: Վճարում է սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձը: Երևանում գործում է նաև ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամը:

Սկզբնական շրջանում ՀՕՖ-ի ծրագրերը մարդասիրական բնույթի էին: ՀՕՖ-ի նախաձեռնությամբ հովանավորվել են տասնյակ ծերանոցներ և մանկատներ: Տարիների ընթացքում, երկրի հետագա զարգացման տրամաբանությամբ թելադրված, մարդասիրական օգնության ծրագրերը հետզհետե իրենց տեղը զիջեցին զարգացման ծրագրերին: Այս ծրագրերը շոշափում են Հայաստանի և հայ ժողովրդի կենսական շահերը, ընդգրկում են կյանքի ամենատարբեր բնագավառները՝ շինարարություն, գյուղատնտեսություն, առողջապահություն, կրթություն, գիտություն, մշակույթ և այլն:

ՀՕՖ-ի զարգացման ծրագրերում մեծ տեղ է հատկացվում դպրոցաշինությանը, բնակելի շենքերի կառուցմանն ու վերակառուցմանը, տարբեր կրթօջախների վերանորոգմանը: ՀՕՖ-ի միջոցներով նորոգվել են Երևանի՝ լսողության խանգարումներ

[605] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 178:

ունեցող երեխաների թիվ 15 գիշերօթիկ դպրոցը, Նորքի, Հաղթանակ գյուղի և Գյումրու ծերանոցները[606]:

Կազմակերպության առաջին խոշոր շինարարական ծրագիրը Ստեփանավանի «Սուրբ Վարդան» բնակելի թաղամասի կառուցապատումն էր: Ծրագրի իրականացնողը ՀՕՖ-ի ատենապետ Գևորգ Հովնանյանի ղեկավարած ամերիկյան «Հովնանյան» ձեռնարկությունն էր: Ավանը ներառում է երկհարկանի 6 բնակելի մասնաշենքեր և նախատեսված է 100 ընտանիքների համար[607]: Շինարարական այս ծրագրի վրա ծախսվել է 14.5 մլն ԱՄՆ դոլար: Լրացուցիչ 1.5 մլն ԱՄՆ դոլար է փոխանցվել ՀՀ կառավարությանը՝ Ստեփանավան և Վանաձոր քաղաքների կիսակառույցներն ավարտին հասցնելու համար: ՀՕՖ-ի ատենապետ Գևորգ Հովնանյանի նվիրատվությամբ վերակառուցվել է Սուրբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, որը 80-ամյա ընդմիջումից հետո 1997 թ. հանդիսավորապես վերաբացվեց:

Արցախահայությանը օգնելու նպատակով 1997 թ. դեկտեմբերին Ստեփանակերտում բացվեց «Հայ օգնության ֆոնդի» գրասենյակ: Այստեղ նախատեսվում է իրականացնել այն բոլոր ծրագրերը, որոնք իրագործվել են Հայաստանում, մարդասիրական օգնությունից բացի՝ զարկ տալ նաև զարգացման ծրագրերին ու ստեղծել նոր աշխատատեղեր: «Բոլոր ղարաբաղցիները,– իր ուղերձում նշում է Խաժակ արքեսպիսկոպոս Պարսամյանը,– նախագահից մինչև շարքային քաղաքացին, միակամ էին իրենց երկիրն ու տնտեսությունը շուտափույթ ոտքի կանգնեցնելու և շենացնելու հարցում: Նրանք սփյուռքահայ իրենց եղբայրներից ու քույրերից ակնկալում են օգնություն հատկապես

---

[606] Տե՛ս «Հայ օգնության ֆոնդ», Տարեկան տեղեկագիր, 2003-2004, էջ 9:
[607] Տե՛ս ՀՕՖ-ի լրատվական կենտրոն, 2002, էջ 3:

նոր աշխատատեղեր բացելու և կիսակործան քաղաքացիական և հոգևոր կառույցների վերականգնման գործում»[608]:

2002 թ. հոկտեմբերից «Հայ օգնության ֆոնդը» ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ ձեռնամուխ եղավ «Մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղին» լայնածավալ ծրագրի իրագործմանը: Ծրագիրը կոչված է վերակառուցելու պատերազմի հետևանքով մեծապես տուժած ենթակառուցվածքները, առողջապահության և կրթության բնագավառները: Ծրագիրը հնարավորություն է ընձեռում նաև միջոցներ տրամադրել՝ բուժանձնակազմների վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու և անհրաժեշտ բուժսարքավորումներ ու դեղամիջոցներ ձեռք բերելու նպատակով: «Մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղին» ծրագրին հատկացրած գումարի չափը 15 մլն ԱՄՆ դոլար է, իրականացման ժամկետը՝ 5 տարի[609]:

2004 թվականից սկսվեց Լեռնային Ղարաբաղի, Ասկերանի, Մարտակերտի և Հադրութի շրջանների՝ հակամարտությունից տուժած տների, բուժկետերի և խմելու ջրագծերի վերանորոգման գործընթացը: Կարևոր նշանակություն ուներ նաև ոռոգելի ջրագծերի անցկացումը Մարտակերտի և Հադրութի շրջաններում, ինչը նպաստեց գյուղատնտեսության զարգացմանը: 2007 թ. ավարտին հասցվեց Հադրութի շրջանի Մոխրենես գյուղ մտնող 3 կմ ջրատարի կառուցումը: Զուգահեռաբար կառուցվում էր նաև 100 մ^3 տարողությամբ ջրամբար[610]: Ստեփա-

---

[608] «Հայ օգնության ֆոնդ», Տարեկան տեղեկագիր, 1997, էջ 2:
[609] Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 124:
[610] «Ազատ Արցախ», 4 դեկտեմբերի, 2007:

նակերտի «Հայ օգնության ֆոնդը» մեծ աշխատանքներ է կատարել Ասկերանի, Մարտակերտի, Հադրութի շրջաններում:

«Միացյալ հայկական ֆոնդ» (ՄՀՖ, United Armenian Fund) բարեգործական կազմակերպությունը հիմնադրվել է Լոս Անջելեսում 1989 թ. ԱՄՆ-ում գործող յոթ խոշոր հայկական կազմակերպությունների՝ ԱՀՀ-ի, ՀԲԸՄ-ի, ՀՕՄ-ի, «Լինսի» հիմնադրամի, Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի էջմիածնական և անթիլիասական թեմերի առաջնորդարանների, «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերության» միացյալ ջանքերով:

1989-2014 թթ. կազմակերպությունը 158 օդանավերով և 2192 ծովային կոնտեյներով 697 մլն դոլար արժողության մարդասիրական օգնություն է ուղարկել Հայաստան[611]: Տեղափոխման ամբողջ ծախսերը հոգացել է հայ անվանի բարերար, ՀՀ ազգային հերոս Քըրք Քրքորյանը:

Մեծ է նաև «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկություն և սփյուռքյան այլ կազմակերպությունների ու կառույցների, ինչպես նաև ազգային բարերարների նպաստը Հայաստանի և Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:

Այսպիսով՝ ՕՈՒՆ-ներին զուգահեռ մեծ է Հայկական սփյուռքի բարեգործական ծրագրերի ծավալը, որոնք սկսվեցին 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո և շարունակվում են առ այսօր: Արտասահմանից կատարվող դրամական փոխանցումների ծավալների շարժընթացը 2008 թ. կազմել է 2,3 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ճգնաժամի պատճառով արդեն 2013-2015 թթ. նվազել է՝ 2015 թ. կազմելով 1,6 մլրդ ԱՄՆ դոլար[612]:

---

[611] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 392:
[612] Տե՛ս նույն տեղում, էջ 390:

Սփյուռքն իր բարեգործական կազմակերպություններով, անհատ բարերարների միջոցներով, հայ եկեղեցու նվիրատվություններով բարեգործական և բարեսիրական մեծածավալ ծրագրեր է իրականացրել և շարունակում է իրականացնել Հայաստանում և Արցախում: Մնայուն հետք են թողել ՀԲԸՄ-ն, «Լինսի», «Տաշիր», «Փյունիկ» հիմնադրամները, որոնք իրենց գործունեությամբ էապես ազդել են ՀՀ տնտեսության զարգացման վրա: Խոսելով 25 տարիների հեռվից երկրի տնտեսական առաջընթացի գործում սփյուռքահայերի ունեցած ակտիվ մասնակցության մասին՝ ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանը իրավացիորեն նշել է. «...Մենք միասին ենք աշխատելու Հայաստանի որևէ ոլորտն առաջ տանելու քաղաքականության իրականացման հարցում: Այնպես, ինչպես այսօր մեր երկրում կառավարության հետ միասին ամեն օր որևէ բան են փոխում Էդուարդո Էռնեկյանը, Սամվել Կարապետյանը, Վաչե Մանուկյանը, Ռուբեն Վարդանյանը, Սեմ Սիմոնյանը, Վարդան Սերմաքեշը, ովքեր տնտեսության շատ կոնկրետ ոլորտներում նոր մշակույթ են ներդնում և զարգացում են ապահովում: Այնպես, ինչպես մեր երկրի խնդիրների լուծման ճանապարհների որոնման հարցում շատ հաճախ ինստիտուտցիոնալ դերակատարություն են ստանձնում Հայ եկեղեցին, «Հայկական բարեգործական ընդհանուր միությունը», Հայ դատի գրասենյակները, Ամերիկայի հայկական համագումարը, աշխարհասփյուռ մեր մյուս կառույցները»[613]:

Այսպիսով՝ ՀՀ անկախության տարիներին սփյուռքահայերը Հայաստանում կատարել են միլիոնավոր դոլարների ներդրում:

---

[613] Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 392:

21-րդ դարասկզբի առաջին երկու տասնամյակում Սփյուռքի մասնակցությունը Հայաստանի տնտեսական կյանքին դարձել է առավել կազմակերպված ու նպատակային: Անուրանալի է Սփյուռքի դերակատարությունը հայրենիքում այնպիսի ոլորտների զարգացման գործում, ինչպիսիք են շինարարությունը, բանկային համակարգը, զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, ոսկերչությունը, ադամանդագործությունը, տարբեր ծառայություններ և այլն: 2008 թվականից վերանայվեց պետական քաղաքականությունը՝ Սփյուռքին բարեգործությունից զատ մասնակից դարձնելու զարգացման ծրագրերին, հասնելու նրան, որ ներդրողները շահ ստանան, եկամուտ ունենան հայրենիքում: ՀՀ կառավարության կողմից 2016-2017 թթ. ընդունված ծրագրերը կարևորագույն քայլեր էին տնտեսության զարգացումը խթանելու և Սփյուռքի կառույցներին այդ գործընթացում ներգրավելու ուղղությամբ:

Հայրենիքում ներդրումներ անելիս բիզնես աշխարհի ներկայացուցիչները ունեցան նաև դժվարություններ. մի կողմից բախվեցին քայքայված և ոչ արդիական տնտեսությանը, մյուս կողմից՝ բիզնես սկսելու համար օրենքների բացակայությանը, և շատերը հեռացան: Այնուամենայնիվ, Սփյուռքի ոչ քիչ ներկայացուցիչներ չվհատվեցին և ներդրումների և բարեգործության ճանապարհով մասնակցեցին Հայաստանի Հանրապետության տնտեսական դժվարությունների հաղթահարման և տնտեսության զարգացման գործին:

Ամբողջովին գնահատել Սփյուռքի ներդրումը հայրենիքում և նրա ազդեցությունը երկրի տնտեսության զարգացման վրա դժվար է, քանի որ առանձին վիճակագրություն այս ուղղությամբ չի վարվում: Կարող ենք միայն նշել, որ համատեղ ձեռնարկու-

թյունների հիմնումը, նոր արտադրությունների ու ծառայությունների զարգացումը մեծ աջակցություն էին Հայաստանի զարգացմանն ու տնտեսության մրցունակության բարձրացմանը: Այդ առումով էական ձեռքբերումներ էին 2008 թ. «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի» (ՀԱՄՀ) և Համահայկական բանկի ստեղծումը[614]:

Հայկական սփյուռքը իրավացիորեն համարվում է յուրահատուկ մրցակցաքյին առավելություն ՀՀ տնտեսության զարգացման համար:

Երկրի տնտեսության մեջ կարևոր են ավելի քան 2 մլրդ դոլարի հասնող դրամական փոխանցումները՝ տրանսֆերտները (տատանվում են 1,5-2,3 մլրդ դոլարի միջև)[615], որոնք ստացվում են Սփյուռքից, վերլուծաբաններն այդ իրողությունը համեմատում են այլ երկրների՝ բնական հարստություններից ստացվող եկամուտների հետ: Նկատենք, որ տրանսֆերտներ ստացվում են Սփյուռքի հատկապես խոշոր համայնքներից՝ Ռուսաստանի Դաշնությունից, Արգենտինայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Կանադայից, Գերմանիայից: Տրանսֆերտները կարևոր դեր ունեն ՀՀ տնտեսության համար և կազմում են ՀՆԱ-ի շուրջ 14-15 %-ը:

Թեև ՀՀ տնտեսության հզորությունները մեծ չեն, սակայն այն ձգտում է միջազգային չափանիշներին համապատասխան բաց լինել օտարերկրյա ներդրողների համար: Որոշ մասնագետների կարծիքով՝ Սփյուռքը դարձավ այն հիմնական գործոններից մեկը, որի շնորհիվ անցումային ժամանակահատվածում

---

[614] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 384:
[615] Տե՛ս նույն տեղում:

զգալիորեն մեղմվեց սոցիալական լարվածությունը Հայաստանի Հանրապետությունում[616]:

Սփյուռքի գործակցությունը հայրենիքի հետ վերջին շրջաններում բարեգործությունից զատ վերածվել է տնտեսական գործունեության: Ակնհայտ է, որ Սփյուռքը, որ ամբողջական իր հնարավորություններով տնտեսական լուրջ ազդեցություն է ունենում ՀՀ տնտեսության զարգացման վրա, դարձել է նաև տնտեսական գործոն Հայաստան-Սփյուռք գործակցության առումով:

ՀՀ տնտեսության մեջ իրենց կատարած ներդրումներով աչքի են ընկնում անհատ բարերարները: Նրանցից կարելի է առանձնացնել արգենտինահայ բարերար, ՀՀ ազգային հերոս Էդուարդո Էռնեկյանին: Արգենտինահայ բարերար Էդուարդո Էռնեկյանի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մի քանի ոլորտներում զգալիորեն փոխել են երկիրը: Էդուարդո Էռնեկյանի ներդրումների շնորհիվ հիմնովին վերակառուցվել է Հայաստանի «այցեքարտը» համարվող «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը՝ դառնալով երկրի զբոսաշրջային կարևորագույն ենթակառույցների մեկը[617]: Նրա շնորհիվ խաղողի և գինու բնօրրան Հայաստանում գինեգործության նոր մշակույթ ներդրվեց: «Տիեռաս դե Արմենիայի» խաղողի այգիներում իր ներդրումներով նա նախաձեռնեց Հայաստանի լավագույն գինիներից մեկը՝ «Կարաս» գինիների արտադրությունը[618]:

---

[616] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 384:
[617] Տե՛ս Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ, էջ 132:
[618] Տե՛ս նույն տեղում, էջ 132-135:

2006 թվականից Է. Էռնեկյանին է պատկանում «Կոնվերս բանկ» ՓԲԸ բաժնետոմսերի 95 %-ը[619]: «Կոնվերս բանկը» Հայաստանի խոշոր ունիվերսալ բանկերից է, որը, հավատարիմ Հայաստանի առաջատար տեխնոլոգիական բանկ դառնալու քաղաքականությանը, մշակում և մատուցում է բանկային ծառայությունների լայն տեսականի:

Էդուարդո Էռնեկյանը վերջին տարիներին Հայաստանում կատարել է մոտ 400 մլն ԱՄՆ դոլար ներդրում[620]:

«Տաշիր» ընկերությունների խմբի նախագահ Սամվել Կարապետյանի նախաձեռնությամբ հիմնված «Տաշիր» հիմնադրամն[621] (Tashir Foundation) ակտիվ զարգացման և բարեգործական գործունեություն է ծավալում հայրենիքում: Հիմնադրամի առաքելությունն է նպաստել ազգային, հոգևոր և տնտեսական զարգացմանը, կատարելագործել ժամանակակից քաղաքների ենթակառուցվածքները, աջակցել սոցիալական նախաձեռնություններին: Ավելի քան 15 տարի հիմնադրամը ֆինանսավորում է բժշկական հաստատությունների, մանկապարտեզների և ուսումնական հաստատությունների կառուցման, եկեղեցիների և տաճարների վերանորոգման, սպորտի, առողջապահության, կրթության, գիտության և արվեստի, բարեկարգման և սոցիալական ոլորտներին վերաբերող բազմաթիվ ծրագրեր: Միայն Արցախի հանրապետական հիվանդանոցի կառուցմանը և ժամանակակից սարքավորումներով ապահովելուն տրամադրել է 25 մլն ԱՄՆ դոլար[622]:

---

[619] Տե՛ս Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ, էջ 135:
[620] Տե՛ս նույն տեղում:
[621] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 395:
[622] Տե՛ս նույն տեղում:

Ներկայումս հիմնադրամի միջոցներով հիմնովին վերակառուցվում է Ամենայն հայոց կաթողիկոսի նստավայրը Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում. արդեն իսկ կառուցվել է Մայր աթոռի հանդիսությունների սրահը, ամբողջությամբ վերանորոգվել է Վեհարանի շենքը (12 մլն ԱՄՆ դոլար ներդրմամբ), կառուցվում է Երևանի Լեոնիդ Ենգիբարյանի անվան քաղաքային կրկեսը (30 մլն ԱՄՆ դոլար ներդրմամբ), Արաբկիր համայնքում՝ «Ռիո» ժամանակակից առևտրի և զվարճանքի կենտրոնը (40 մլն ԱՄՆ դոլար ներդրմամբ)[623]:

Հայաստանի տնտեսության մեջ էական ներդրում էին 2016 թ. էլեկտրատեխնիկական սարքավորումների արտադրության ժամանակակից գործարանի հիմնումը (20 մլն ԱՄՆ դոլար ներդրմամբ)՝ ապահովելով 500 նոր աշխատատեղ, և Երևանի կենտրոնում «Տաշիր սթրիթ» նոր առևտրային սրահի բացումը (14 մլն ԱՄՆ դոլար ներդրմամբ):

Հիմնադրամը 4 մլն ԱՄՆ դոլար է տրամադրել Վանաձորի մարզային առողջապահական կենտրոնի ծննդատան վերանորոգման համար[624]:

Ռուսաստանաբնակ գործարար Ռուբեն Վարդանյանի գլխավորությամբ «Հայաստանի զարգացման նախագահություններ» բարեգործական հիմնադրամի իրականացրած կարևոր նախագծերից են աշխարհում ամենաերկար՝ «Տաթևի թևեր» հետադարձելի ճոպանուղին (50 մլն դոլար), «100 LIVES», Թբիլիսիի Սուրբ Գևորգ եկեղեցու վերականգնումը, Դիլիջան քաղաքի զարգացման ծրագրերը և այլն[625]:

---

[623] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 395:
[624] Տե՛ս նույն տեղում:
[625] Տե՛ս նույն տեղում, էջ 397:

Հիմնադրամի «100 LIVES» նախագծի «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակը, որը հիմնադրվել է Նուբար Աֆեյանի և Վարդան Գրեգորյանի հետ համատեղ, 2016 թվականից սկսած, ամեն տարի ապրիլին շնորհվում է այն մարդկանց, որոնք, սեփական կյանքը վտանգելով, ուրիշներին գոյատևելու հնարավորություն են ընձեռում: Ամեն տարի հաղթողը պարգևատրվում է 100 հազար ԱՄՆ դոլար գումարով, իսկ 1 մլն դոլար դրամաշնորհ տրվում է մրցանակի ոգուն հարազատ գործող կազմակերպությանը[626]:

Ռուբեն Վարդանյանն աչքի է ընկնում հատկապես բանկային ոլորտում և կարևոր դեր է խաղացել ՌԴ կապիտալի շուկաների կայացման գործում: Նա իր ներդրումն է բերել նաև Հայաստանի բանկային համակարգում: Այս առումով հատկանշական է «Ամերիաբանկի» գործունեությունը, որտեղ նա Տնօրենների խորհրդի անդամ է:

Հայրենիքում մեծածավալ ներդրումներ է կատարում շվեյցարական «Ֆրանկ Մյուլլեր» ընկերության հիմնադիր և սեփականատեր, «Արցախբանկի» ու «Արմսվիսբանկի» խոշոր բաժնետեր, «Թեքնոսերտ» ընկերության խորհրդի նախագահ, շվեյցարահայ գործարար և բարերար Վարդան Սերմաքեշը: Գործարարը շուրջ 150 մլն ԱՄՆ դոլար է ներդրել «Հին Երևան» կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման համար, իսկ Շիրակի մարզի տնտեսական զարգացման նպատակով 2015 թ. ներդրել է 10 մլն դոլար[627]:

Սահմանամերձ Մատաղիսում կառուցվում է սև խավիարի արտադրության համար նախատեսված ձկնաբուծարանը՝ 350

---

[626] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 397:
[627] Տե՛ս նույն տեղում, էջ 398:

ջրավազանով և կից կառույցներով: ԼՂՀ-ն խավիար արտադրող ու արտահանող երկրի վերածելու այս ծրագրի ամբողջական իրականացման համար կներդրվի մոտ 30 մլն եվրո[628]:

Զգալի են Լևոն Հայրապետյանի ներդրումներն Արցախում: Նրա շնորհիվ ու միջոցներով վերականգնվել է Գանձասարի վանական համալիրը, կառուցվել են դեպի վանք տանող նոր ճանապարհ, դպրոց ու մանկապարտեզ, ջրամբար (7 մլն դոլար), ստեղծվել են կենդանաբանական և բուսաբանական այգիներ, ձիարշավարան, ձիաբուժարան, բացվել են հյուրանոցային համալիրներ, ռեստորաններ, հիմնվել են ժամանակակից տեխնոլոգիաներով փայտամշակման գործարան, արդիական սարքավորումներով հագեցած նոր հիվանդանոց ու դեղատուն և այլն:

Բարերարի նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ Արցախում 2008 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ «Արցախյան մեծ հարսանիքը»՝ 700 նորապսակ զույգի մասնակցությամբ: Ժողովրդագրության խթանման նպատակով նա յուրաքանչյուր ծնված երեխայի հատկացնում է գումարներ (առաջին երեխայի համար՝ 2000, երկրորդի համար՝ 3000, երրորդի համար 5000 ԱՄՆ դոլար):

«MetLife» ապահովագրական և ֆինանսական կառավարման միջազգային կոորպորացիայի մասին Հայաստանում քչերը գիտեն: Այն ղեկավարում է Սթիվեն Կանդարյանը: Լինելով համազգային խոշոր բարեգործներից մեկը՝ նա ամեն տարի միլիոնավոր դոլարներ է ներդնում ամերիկահայերին պատկանող հիմնադրամներում և հովանավորում է ԱՄՆ-ի առաջատար լոբբիստական կառույցներին ու խմբերին:

---

[628] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ.:

Սերժ Չուրուկը ֆրանսահայ է, ղեկավարել է հեռահաղորդակցության «ALCATEL» ընկերությունը, այժմ «Joule» ընկերության խորհրդի անդամ է: Նա ստեղծել է մի շարք հիմնադրամներ, որոնք աջակցում են նաև հայկական ազգային հաստատություններին, ինչպես նաև Հայաստանի և Արցախի շահերի պաշտպանությամբ զբաղվող իրազեկման, լոբբիստական կազմակերպություններին[629]: Աչքի է ընկել նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամին և ՀԲԸՄ-ի արված տարեկան հատկացումներով:

«Հայ ոսկերիչների ասոցիացիան»[630] (AJA, Armenian Jewellers Association) հիմնադրվել է 1998 թ. Շվեյցարիայում: Այն տարածաշրջանային ներկայացուցչություններ ունի ԱՄՆ-ում, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Հարավային Ամերիկայում, Ավստրալիայում և Հայաստանում:

«Հայ ոսկերիչների ասոցիացիայի» նպատակն է ոլորտի զարգացմանը նպաստելու համար համախմբել աշխարհի հայ ոսկերիչների ներուժը, ինչպես նաև աջակցել հայրենիքում ոսկերչության զարգացման կարևոր գործին: Ասոցիացիան ունի բարեգործական հիմնադրամ (AJF): Հիմնադրամի ծրագրերը ներառում են հայ ոսկերչության պատմության մանրամասն ուսումնասիրումը, հայ ոսկերիչների գործունեության հետազոտումն ու ներկայացումը: Հիմնադրամը նաև կրթաթոշակներ է տրամադրում հայ երիտասարդներին՝ աշխարհի լավագույն ուսումնական հաստատություններում սովորելու համար:

Ասոցիացիայի նախաձեռնությամբ 2016 թ. Հայաստանն ընտրվել է «Համաշխարհային ոսկերչական կոնֆեդերացիայի»

---

[629] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 398:
[630] Տե՛ս նույն տեղում:

(CIBJO) ամենամյա միջազգային համաժողովը հյուրընկալող երկիր: Վերջին տարիներին՝ հոկտեմբեր ամսին, Երևանում կազմակերպվում է հայ ոսկերիչների ամենամյա ցուցահանդես, և նշվում է «Հայ ոսկերիչների օրը», որը սահմանվել է ՀՀ կառավարության կողմից:

2009 թ. լիբանանահայ գործարարների կողմից հիմնադրված «ԱՐԻ» (Artakh Roots Investments) ներդրումային հիմնադրամի ծրագրերն իրականացվում են Արցախում և միտված են ԼՂՀ գյուղատնտեսական զարգացմանը: Առանձնանում են հատկապես գյուղատնտեսական փոքր վարկերի տրամադրումը և Քաշաթաղի շրջանի Աղավնո համայնքում 150 բնակարանների կառուցումը: Ներդրողները գումարներն Արցախի կառավարությանը տրամադրում են տարեկան 9 % տոկոսադրույքով: Հիմնադրամի ծրագրերն իրագործվում են ԼՂՀ «Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի» և «Արցախի ներդրումային հիմնադրամի» միջոցով[631]:

Միայն իր գործունեության 6 տարիների ընթացքում հիմնադրամը Քաշաթաղի ու Շահումյանի շրջաններում իրականացրել է մոտ 1 մլրդ 260 մլն դրամի ծրագրեր՝ արտոնյալ պայմաններով փոխառություններ տրամադրելով ավելի քան 1000 ընտանիքների: Ավելի ուշ ընկերությունն ընդլայնել է ներդրումների շրջանակը՝ ԼՂՀ կառավարության հետ համատեղ մասնակցելով Աղավնոյում իրականացվող բնակարանաշինության ծրագրին: Նախատեսվող 150 տների կառուցման համար հիմնադրամը հատկացրել է շուրջ 900 մլն դրամ:

Գյուղատնտեսության զարգացման կարևոր ծրագիր է իրականացնում «Հայաստան» համահայկական հիմնադրամի՝

[631] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 398:

Ֆրանսիայի տեղական մարմնի ու Ֆրանսիայի Օ-դը-Սեն նահանգի գլխավոր խորհրդի նախագահ Պատրիկ Դևեջյանի նախաձեռնությամբ ստեղծված «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամը: Հիմնադրամի միջոցներով (ավելի քան 5.6 մլրդ դրամ ներդրումով) Տավուշի մարզում կառուցվել և հիմնանորոգվել են 120 կմ երկարությամբ ոռոգման համակարգեր, հիմնվել են 400 հեկտար նոր պտղատու այգիներ, որոնց տարածքները տարեցտարի ընդլայնվում են:

ՀՀ տնտեսության մեջ ներդրումների աշխուժացման գործում կարևոր նշանակություն ունեցան ՀՀ ֆինանսիստների և բանկիրների գումարած համահայկական համաժողովները: Ֆինանսիստների և բանկիրների համահայկական առաջին համաժողովը գումարվել է 2010 թ. Երևանում ՀՀ սփյուռքի նախարարության կողմից, ՀՀ կենտրոնական բանկի և Հայաստանի բանկերի միության հետ համատեղ: Նպատակն է բացահայտել Սփյուռքի կարողությունները և դրանք արդյունավետորեն կիրառել ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման համար: Գումարվել է նաև Ֆինանսիստների և բանկիրների համահայկական 2-րդ համաժողովը (2010 թ.):

Գ. ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ. ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Հայրենիք-Սփյուռք առնչությունների առանցքային բաղադրիչներից է Սփյուռքի հետ գիտակրթական կապերի զարգացումը:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մեծաթիվ մտավորականների արտահոսքի պատճառով խիստ պակասել էր ՀՀ-ի գիտական ներուժը: Չնայած դրան՝ մեծ թվով հայրենանվեր գիտնականներ, հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչներից, շարունակեցին իրենց գիտական գործունեությունը հայրենիքում: Ստեղծված նոր իրավիճակում կարևոր նշանակություն ստացավ Հայաստանի և Սփյուռքի գիտական ուժերի համախմբումը՝ որոշակի ծրագրեր իրականացնելու համար: Երևանում և Սփյուռքում հաճախակի գիտական նստաշրջաններ էին հրավիրվում, որտեղ քննարկվում էին համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ընդունվում համապատասխան որոշումներ:

ՀՀ անկախության պայմաններում Սփյուռքի ավանդը Հայաստանի գիտության զարգացման գործում դրսևորվում է ինչպես մասնավոր ծրագրերի (գիտական հիմնարկների շենքային պայմանների բարելավելու նպատակով վերանորոգման աշխատանքների իրականացում, անհրաժեշտ տեխնիկական միջոցների տրամադրում, առանձին հետազոտությունների ու դրանց հրատարակությունների ֆինանսավորում և այլն), այնպես էլ ինստիտուցիոնալ մակարդակներով (գիտակրթական հաստա-

տությունների, գիտական հետազոտությունները կանոնավորապես խրախուսող կառույցների հիմնում և այլն)[632]:

Հայաստանում Սփյուռքի կողմից գիտակրթական հաստատությունների հիմնադրման համատեքստում առ այսօր իրականացված խոշոր նախագծերից են ՀԲԸՄ-ի միջոցներով 1991 թ. բացված Հայաստանի ամերիկյան համալսարանը, որը նպատակ ուներ մեղմելու ուղեղների արտահոսքը, 1990 թ. Սևանի թերակղզում հիմնված Վազգենյան հոգևոր դպրանոցը[633], 2009 թվականից գործող Հայկական վիրտուալ համալսարանը, որը հայեցի կրթություն ստանալու, մշակույթին ու լեզվամտածողությանը ծանոթանալու հնարավորություն է ընձեռում աշխարհի ցանկացած լեզվով խոսող հային[634]:

Հայաստանի ամերիկյան համալսարանը սկզբնական շրջանում իրականացնում էր միայն մագիստրատուրայի ծրագրեր: 2013 թվականից այն որոշ մասնագիտությունների գծով սկսել է իրականացնել բակալավրիատի ծրագրեր, հետագայում նախատեսում է նաև ասպիրանտուրայի հիմնում:

ՀԱՀ-ի հիմնադրումից հետո ՀՀ-ում ստեղծվեցին նաև այլ երկրների համալսարաններ: Հայաստանում հիմնադրված խոշոր բուհերից են նաև Ֆրանսիական համալսարանը, Եվրոպական տարածաշրջանային ակադեմիան, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը, ինչպես նաև 2015 թ. հիմնադրված Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Երևանի մասնաճյուղը, որոնք, ճիշտ է, միջկառավարական որոշումներով ստեղծված հաստատություններ են, բայց և այնպես,

---

632 Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ. էջ 357:
633 Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 190:
634 Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ. էջ 357:

նրանցում էական դերակատարություն ունեն նաև սփյուռքահայերը:

Գիտության, կրթության, մշակույթի խրախուսումը կարևոր խթան է Հայաստանի համապատասխան բնագավառների զարգացման համար: 2000 թ. հիմնվել է Հանրապետության նախագահի մրցանակը, որը ֆինանսավորվում է «Ռոբերտ Բողոսյան և որդիներ» հիմնադրամի կողմից: Մրցանակը շնորհվում է բնական և հումանիտար գիտությունների բնագավառներում արժեքավոր գործեր կատարած հեղինակներին: Հատկանշական է, որ դրա շրջանակներում սահմանվել է «Հանրապետության նախագահի երիտասարդական մրցանակ» անվանակարգը: Վերջին տարիներին ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում կատարված նշանակալի հետազոտությունների համար ևս սահմանվեց մրցանակ:

Համաշխարհային հայկական կոնգրեսի և «Ռուսաստանի հայերի միության» նախաձեռնությամբ կազմակերպվում են ամենամյա մրցանակաբաշխություններ գիտության, մշակույթի, լրատվության ոլորտների լավագույն ստեղծագործությունների համար:

Գիտության բնագավառին մեծապես աջակցում է ՀՕՖ-ի հովանու ներքո 2000 թ. ստեղծված «Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամը» (ANSEF), որը 15 տարի շարունակ 5000-ական դոլար կրթաթոշակ է տրամադրում յուրաքանչյուր տարի դրամաշնորհային ծրագրով անցկացվող մրցանակաբաշխություններում հաղթող ճանաչված գիտական աշխատանքների հեղինակներին[635]:

---

[635] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 358:

Հայաստանի և ԼՂՀ քաղաքներում, մարզերում, գյուղական և հատկապես սահմանամերձ համայնքներում դպրոցաշինության մեծածավալ, կրթամշակութային տասնյակ ծրագրեր են կենսագործվել և շարունակում են իրականացվել «Հայաստան» համահայկական, «Լինսի» հիմնադրամների, սփյուռքյան կազմակերպությունների, կառույցների, անհատ հովանավորների հայրենանվեր գործունեության արդյունքում: Ընդհանուր գումարը կազմել է մոտ 10 մլրդ դրամ[636]:

Անհրաժեշտ է նշել, որ կրթական կառույցը ոչ միայն ներդրումների արդյունքում ստեղծված բարեկեցիկ շենքային պայմաններն են կամ գիտելիքի մեխանիկական փոխանցման գործընթացը, այլ նաև բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման և հոգևոր արժեքների սերմանման յուրահատուկ մի հարթակ: Գիտակրթական հաստատություններում այդ հարթակի ստեղծումը կենսական անհրաժեշտություն է հոգով, մտքով և սրտով առողջ մտածողություն ունեցող հասարակական շերտի ձևավորման համար: Նման հոգեկերտվածքով բարձրորակ մասնագետների պատրաստման համար կարևոր է հաղորդակցվել աշխարհի առաջավոր փորձին ու ազգային առանձնահատկություններին համապատասխան կիրառել այդ փորձը: Այս բնագավառում Սփյուռքի ներուժի օգտագործման կարևորությունն արձանագրում են նաև արտերկրի մասնագետները: Մասնավորապես 2015 թ. հայտնի գործարար և բարերար Ռուբեն Վարդանյանի հրավերով Հայաստան այցելած Կառլոս Գոնը, որը աշխարհի հայտնի թոփ-մենեջերներից է, «Renault&Nissan» ընկերությունների գլխավոր տնօրենն ու «Renault-Nissan» դաշինքի ղեկավարը, Դիլիջանի միջազգային դպրոցին ծանոթանալով,

[636] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 358:

նշել է. «Հայաստանը Սփյուռքի միջոցով աշխարհի առջև բացվելու հսկայական ներուժ ունի»[637]:

Հիրավի, կարևորվում է գիտության միջազգայնացումը և այդ գործին Սփյուռքի ներուժի աջակցությունը: 2008 թվականից սկսած՝ ընդլայնվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում միջազգային համագործակցությունը. ստորագրվել են համագործակցության հուշագրեր և համաձայնագրեր «ՌԴ հիմնարար հետազոտությունների հիմնադրամի», Ֆրանսիայի Հանրապետության գիտական հետագոտությունների ազգային կենտրոնի, Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի, «Հիմնարար հետազոտությունների բելառուսական հիմնադրամի» և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հետ[638]:

21-րդ դարասկզբին ՀՀ գիտության ոլորտում առաջնային խնդիր էր օրենսդրական և նորմատիվ իրավական դաշտի կարգավորումը: 2001 թ. ապրիլին ՀՀ կառավարության կողմից հովանության արժանացավ «Հայաստանի Հանրապետության գիտության զարգացման հայեցակարգը», որը նախանշում էր ոլորտի զարգացման ուղիները[639]: 2001 թ. ՀՀ կառավարությունը հաստատեց գիտատեխնիկական գործունեության բազային (պայմանագրային), թեմատիկ նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգերը: ՀՀ կառավարության կողմից 2002 թ. ընդունվեց «ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները հաստատելու մասին» որոշումը, իսկ 2006 թ.՝

---

[637] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 191-192:

[638] Տե՛ս նույն տեղում, էջ 192, նաև Ռազմավարության ծրագիր ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թթ., Ե., 2010:

[639] Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, էջ 492:

«Գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգերի դրույթները»[640]: Նրանցում ոչ միայն նշված էին գիտական ու գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման աղբյուրները, այլև հայրենի գիտության գերակայությունները: Դրանցում հատկապես կարևորվում էին հայագիտությունը, կիրառական արժեքավոր հետազոտությունների զարգացումը խթանող հիմնարար հետազոտությունները, տեղեկատվական ու առաջատար տեխնոլոգիաները (կենսատեխնոլոգիա, նանոտեխնոլոգիա), էներգիայի նոր աղբյուրների ուսումնասիրումը և այլն: 2006-2007 թթ. ընթացքում մշակվեց և ՀՀ կառավարության հավանությանը արժանացավ ՀՀ գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգը, որի հիմնական նպատակն էր գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումը: Հայեցակարգը նախանշում էր համակարգի զարգացումը 2008-2011 թթ. ու ամրագրում հետևյալ հիմնական նպատակները[641].

1) համակարգի կառավարման արդյունավետության բարձրացմամբ գիտության ոլորտի կառավարման պետական միասնական մարմնի ստեղծում՝ հանձին Գիտության պետական կոմիտեի,
2) անկախ փորձաքննության համակարգի ստեղծում,
3) գիտական աստիճանաշնորհման համակարգի վերափոխում և գիտության պետական հիմնադրամի ստեղծում:

Որոշակի զարգացում նկատվեց հայագիտության ոլորտում: Նրա գլխավոր խնդիրը դարձավ բոլոր ուղղությունների, ըստ ամենայնի, համաշխարհային գիտության զարգացմանը համընթաց քայլելը, կապերի ամրապնդումը Սփյուռքի հայագիտական

---

[640] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 493:
[641] Տե՛ս նույն տեղում, էջ 494:

կենտրոնների, ամբիոնների գիտահետազոտական հաստատությունների հետ հայագիտության նվաճումները հայոց պետության հետագա զարգացմանն ու ամրապնդմանը ի սպաս դնելը[642]:

«Հայրենիք-Սփյուռք» հայագիտության ոլորտի կապերի ամրապնդմանն ու զարգացմանը մեծապես նպաստեց հայագիտական միջազգային համաժողովների հրավիրումը: Արդի պայմաններում հայագիտության մտահոգիչ վիճակի թելադրանքով և նրա աշխատանքները համակարգելու համար 2003 թ. սեպտեմբերին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան (ՀՀ ԳԱԱ) և Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ) կազմակերպեցին հայագիտության արդի վիճակին և զարգացման հեռանկարներին նվիրված միջազգային գիտաժողով՝ արտերկրի հայագետների ակտիվ մասնակցությամբ: Գիտաժողովը եկավ այն եզրակացության, որ անհրաժեշտ է ստեղծել հայագիտական հիմնադրամ, լույս ընծայել հայագիտությանը նվիրված տեղեկատվական պարբերական, հիմնել հայագիտական աշխատանքները համակարգող կենտրոն՝ ՀՀ և արտերկրի հայագետների մասնակցությամբ[643]: Չնայած ստեղծվեց այդ կենտրոնը, բայց արտերկրի հայագետների և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, Երևանի Մատենադարանի ու հայագիտական մյուս օջախների ակտիվ աշխատանքների և համագործակցության շնորհիվ զգալի նվաճումներ ձեռք բերվեցին այս ոլորտում: Այդ աշխատանքներն ամփոփվեցին և հայագիտության զարգացման նոր ուղիներ մատնանշվեցին 2013 թ. հոկտեմբերին տեղի ունեցած հայագիտական 2-րդ միջազգային

---

[642] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 494:
[643] Տե՛ս նույն տեղում, էջ 494-495:

համաժողովում: Այս համաժողովը ընթացավ «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» խորագրով: Զեկուցումներով հանդես եկան 240 հայագետներ, որոնցից 60-ը՝ արտասահմանյան հայագիտական կենտրոններից: Համաժողովում կարևորվել է հայագիտական հետազոտությունների արդյունքների օգտագործումը քարոզչական նպատակներով, ընդգծվել հետազոտությունների ներկայացման համացանցային հնարավորությունների կիրառմամբ հայոց պատմությունը, մշակույթը միջազգային լայն հանրությանը ներկայացնելու, հայոց պատմության և մշակույթի խեղաթյուրումները կանխելու, երիտասարդ սերնդին կրթելու անհրաժեշտությունը:

Համաժողովը ձեռնամուխ եղավ նաև հայագիտական բազմաթիվ հիմնախնդիրների լուծմանը[644]: Հայագիտության՝ իբրև գերակա ուղղության զարգացումը խթանելու նպատակով ՀՀ կառավարությունը 2012 թ. հունվարի 12-ին ընդունեց «Հայագիտության զարգացման հայեցակարգը, ոլորտի զարգացման 2012-2025 թթ. ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը»[645]: Փաստաթղթի հիմնական նպատակն է պետության և հայ մտավորականության ջանքերով հայագիտությունը վերածել հայության ազգային ու մշակութային անվտանգության ապահովման հզոր գործոնի: Ռազմավարության նախատեսված միջոցառումների իրականացման շնորհիվ հայագիտությունը կնպաստի անկախ պետականության ամրապնդմանն ու ազգային ինքնագիտակցության ուժեղացմանը:

21-րդ դարասկզբին հայագիտության զարգացման ոլորտում հայրենիք-Սփյուռք կապերի սերտացման և համագործակցու-

---

[644] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 494-495:
[645] Տե՛ս նույն տեղում, էջ 496-467:

թյան ընդլայնման ասպարեզում մեծ է հատկապես արտերկրի հայագիտական կենտրոնների, ամբիոնների և գիտահետազոտական հաստատությունների դերը: Աշխարհի տարբեր երկրներում գործող գործում են 107 հայագիտական կենտրոններ, ամբիոններ, բաժիններ, դասընթացներ, խմբեր և ծրագրեր[646]:

Հայագիտական կենտրոններն իրականացնում են գիտահետազոտական և կրթական գործունեություն՝ հայոց լեզվին և հայոց պատմությանը, հայկական մշակույթին, հայ եկեղեցուն և հայագիտական մյուս խնդիրներին վերաբերող թեմաներով: Գնալով այս կենտրոնների թիվն ավելանում է: Աշխարհագրական առումով դրանք սփռված են հիմնականում Ամերիկայի, Եվրոպայի, հետխորհրդային տարածքի և Մերձավոր Արևելքի որոշ երկրներում[647]:

Տեղեկատվական պատերազմների արդի պայմաններում կենտրոնները կարևոր դերակատարություն ունեն հայոց պատմության, մշակույթի, ազգային արժեքների նկատմամբ թուրք-ադրբեջանական ոտնձգություններին դիմագրավելու և հակազդելու առումով: Նշանակալից է նաև դրանց դերը հայ և այլ ժողովուրդների միջև գիտամշակութային կապերի ամրապնդման և խորացման, ինչպես նաև հայ համայնքների համար մանկավարժ մասնագետների և համայնքային գործիչների պատրաստման գործում: Ուրախալի է, որ շատ կենտրոններում հայոց լեզու և հայոց պատմություն ուսումնասիրողները, հայագիտության հիմնախնդիրները հետազոտողները հաճախ օտարներ են: Այսօր արտերկրում գործում են նաև այնպիսի հայագիտական հիմնարկներ, որոնք իրենց գործունեությամբ նմանվում են «ուղե-

---

[646] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 238:
[647] Տե՛ս նույն տեղում:

ղային կենտրոնների»: Նրանք զբաղվում են Հայաստանի և հայության համար հրատապ ու գործնական նշանակություն ունեցող խնդիրների ուսումնասիրությամբ և վերլուծությամբ:

Հիշյալ կենտրոնները հիմնականում «պատկանում են» Սփյուռքին, այսինքն՝ դրանց ֆինանսավորումն իրականացվում է բարերարների, համայնքի հանգանակած միջոցների հաշվին: Իսկ Եգիպտոսի, Իսրայելի համալսարանական կենտրոնների ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: Կենտրոնների ֆինանսավորման աղբյուրները կարելի է բաժանել երկու մասի՝ հայկական և օտարերկրյա: Հայկական աղբյուրներն են ՀՀ պետբյուջեն, սփյուռքյան համազգային կառույցները և տեղական հայ համայնքները, բարերարները: Օտարերկրյա ֆինանսավորման աղբյուրներն այն գիտական և/կամ կրթական հաստատությունների բյուջեներն են, որոնց մաս են կազմում հայագիտական կենտրոնները: Հաճախ առկա է նաև ֆինանսական աղբյուրների (այդ թվում՝ հայկական և ոչ հայկական) համադրություն[648]:

Ազդեցիկ կենտրոններ են Մխիթարյան միաբանությունը (Վենետիկ՝ Իտալիա, Վիեննա՝ Ավստրիա), Անթիլիասը, Զորյան ինստիտուտը (Արլինգթոն՝ ԱՄՆ. Տորոնտո՝ Կանադա): Ինչ վերաբերում է այն կենտրոններին, որոնք մաս են կազմում ավելի մեծ կառույցների, ապա դրանք, ըստ պատկանելության, կարելի է բաժանել երկու խմբի[649]:

Առաջին խմբում ներառվում են այն կենտրոնները, որոնք մաս են կազմում հայկական ավելի մեծ կառույցների: Այդպիսիք

---

[648] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 239:

[649] Ավելի մանրամասն տե՛ս Արտերկրի հայագիտական կենտրոնները. Ներուժի գնահատում (հեղինակային խումբ՝ Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.), Ե., «Նորավանք» ԳԿՀ, 2014, էջ 9-12:

են, օրինակ, Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնը, Անթիլիասի Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության «Խաչեր Գալուստյան» մանկավարժական կենտրոնը, Զմմառի հայ կաթողիկե միաբանության դպրեվանքերը («Իգնատիոս Մալոյան», «Ս. Միքայել») և այլ կենտրոններ:

Երկրորդ խումբը կազմում են այն կենտրոնները, որոնք ոչ հայկական կառույցների մաս են կազմում: Այդպիսի կառույցներ են տարբեր համալսարանների և ակադեմիական հաստատությունների հայագիտական ամբիոնները, ծրագրերը և այլն[650]: Այսպես, օրինակ, ԱՄՆ Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի հայագիտության ինստիտուտը, Բոստոնի համալսարանի հայոց նոր պատմության և գրականության ամբիոնը: Այս խմբում գերակշռում են համալսարանական ստորաբաժանումները: Դրանք ստեղծվել և գործում են տարբեր ֆակուլտետների կազմում: Օրինակ՝ Երուսաղեմի եբրայական համալսարանի Հայագիտական ծրագիրը գործում է Հումանիտար ֆակուլտետի ասիական և աֆրիկյան հետազոտությունների ինստիտուտի իսլամական և մերձավորարևելյան հետազոտությունների բաժնի (դեպարտամենտի) կազմում՝ որպես առանձին ծրագիր, Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի կենտրոնը՝ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի կազմում, Կահիրեի համալսարանինը՝ Արևելագիտական ուսումնասիրությունների կենտրոնի կազմում և այլն[651]:

---

[650] Ավելի մանրամասն տե՛ս Արտերկրի հայագիտական կենտրոնները. Ներուժի գնահատում (հեղինակային խումբ՝ Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.), Ե., «Նորավանք» ԳԿՀ, 2014, էջ 36-67:
[651] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 239-240:

Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում ներուժի տեսանկյունից անվիճելի առաջատար են ԱԱՆ-ի հայագիտական կենտրոնները, որոնք ունեն էական կշիռ հայագիտության զարգացման գործում: Վերջին շրջանում նկատվում է հայագիտական ուսումնասիրությունների նկատմամբ հետաքրքրության աճ, նոր կենտրոններ են ստեղծվում, սակայն որոշ կառույցների աշխատանքում նկատվում է անկում:

Ամերիկա աշխարհամասում գտնվող կենտրոնների համար բնութագրական պետք է համարել հայրենիքի հետ կապերի զգալի ակտիվացումը, դրանց համախմբումը, որում կարևոր դերակատարություն ունի ԱՄՆ-ում գործող Հայագիտական ասոցիացիան[652]:

Եվրոպայում նույնպես ձևավորվել են կենտրոններ: Սակայն վերջին տարիներին տարատեսակ խնդիրների պատճառով եվրոպական հայագիտական մի շարք ամբիոններ, բաժիններ և ծրագրեր, որոնք ունեն գիտահետազոտական և կրթական նեղ ուղղվածություն. կա՛մ իսպառ դադարում են գործելուց, կա՛մ ամբիոններից ու կենտրոններից վերածվում են ենթաբաժինների: Այստեղ հայագիտության նահանջի պատճառներից է այն, որ առհասարակ հասարակական և հումանիտար գիտաճյուղերը ճգնաժամ են ապրում՝ համարվելով երկրորդական: Լուրջ մարտահրավեր է տնտեսական ճգնաժամը, որի հետևանքով համալսարանների բյուջեներից ֆինանսավորվող հայագիտական ամբիոնների, բաժինների և կենտրոնների մի մասը (օրինակ՝ Լեյդենի համալսարանի հայագիտական ամբիոնը, Ֆրանսիայի

[652] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 240:

սփյուռքի հետազոտությունների և փաստագրության կենտրոնը) կանգնեցին գոյատևման խնդրի առջև[653]:

Չնայած առկա դժվարություններին՝ Եվրոպայում բացվում են նոր կենտրոններ: Մասնավորապես 2009 թ. Միլանի Ամբրոզյան գրադարանին կից հիմնադրվել է ակադեմիա, որում ներառված յոթ դասերից վեցերորդը նվիրված է Մերձավոր Արևելքի գծով հետազոտություններին և բաղկացած է 4 բաժնից՝ արաբական, հայկական, եբրայական և ասորական[654]: Ռումինիայի հեղինակավոր Կլուժ-Նապոկայի Բաբեշ-Բոյայ համալսարանում 2014 թ. հիմնադրվել է Հայագիտության ինստիտուտ, իսկ Չեխիայում Հայաստանի դեսպանության և Պրահայի Կարլի համալսարանի միջև կնքված համաձայնագրով վերսկսվել է հայագիտական առարկաների դասավանդումը:

Եվրոպայի հայագիտական ամենամեծ միությունը «Հայկական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցությունն» է (Շվեյցարիա - Association Internationale des Etudes Armeniqanes - AIEA), որը հիմնադրվել է 1983 թ. և ունի շուրջ 300 անդամ[655]:

Մերձավոր Արևելքում ևս կան կենտրոններ: Չնայած Հայաստանի անկախացումից հետո Մերձավոր Արևելքի երկրներում նկատվեց տարբեր համալսարանների շրջանակներում հայագիտական ամբիոնների հիմնման միտում, սակայն վերջին տարիներին արաբական երկրներում ծայր առած քաղաքացիական պատերազմներն ու ներքին անկայուն իրավիճակը, ինչպես նաև դրանցով պայմանավորված՝ հայերի արտագաղթը բացա-

---

[653] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 243:
[654] Տե՛ս նույն տեղում:
[655] Տե՛ս նույն տեղում, էջ 242:

սաբար ազդեցին կենտրոնների գործունեության վրա: Կենտրոն-ներն առավել կայացած են Լիբանանում և Իրանում:

2011 թ. հոկտեմբերին ԵՊՀ-ի և Թեհրանի համալսարանի ռեկտորների հանդիպման ժամանակ որոշում կայացվեց հայա-գիտական ամբիոն բացել Թեհրանի համալսարանում[656]: Գրեթե մեկ տարի անց այդ որոշումը ի կատար ածվեց: 2014 թ. ՀՀ օժանդակությամբ հայագիտական նոր կենտրոն բացվեց նաև Զալցբուրգում (Ավստրիա)[657]:

Իր գործունեությամբ, առանձնացված ստորաբաժանումնե-րով յուրօրինակ է աշխարհում Հայաստանից դուրս գործող միակ հայկական բարձրագույն կրթական հաստատությունը՝ Բեյրութի Հայկազյան համալսարանը: Համալսարանի հայագի-տական ամբիոնը ինքնատիպ գիտական դպրոց է, որտեղ կա-տարվող հետազոտությունները որոշակիորեն նպաստում են հա-յագիտության զարգացմանը[658]:

Հայապահպանության գործում կարևոր դեր է խաղում հա-մալսարանի Հայոց լեզվի բաժանմունքը, որը, ապահովելով հայ գրականության, պատմության, քաղաքագիտական խնդիրների և մշակութային ոլորտի ակադեմիական հիմնարար գիտելիքնե-րի տարածումը, նպաստում է հայ ազգային հիմնարար արժեք-ների քարոզչությանն ու փոխանցմանը սերունդներին և դրանց ներկայացմանն աշխարհին:

2012 թ. Հայկազյան համալսարանում սկսեց գործել Հայկա-կան սփյուռքի ուսումնասիրության կենտրոնը, որն իր գիտական

---

656 Տե՛ս Արտերկրի հայագիտական կենտրոնները. Ներուժի գնահատում, էջ 15:
657 Տե՛ս նույն տեղում:
658 Տե՛ս նույն տեղում:

հետազոտություններով նոր լույս է սփռում հայրենիք-Սփյուռք, Սփյուռք-Սփյուռք գործակցության վրա:

Տարբեր լեզուներով բազմաթիվ հայագիտական հոդվածներ են զետեղված Հայկազյան համալսարանի՝ 1970 թվականից հրատարակվող «Հայկազյան հայագիտական հանդեսում»: Դրանք արժեքավոր աղբյուր են ոչ միայն գիտական աշխարհի ներկայացուցիչների, այլև հանրության այլ շերտերի համար:

2011 թ. սեպտեմբերին ՀՀ սփյուռքի նախարարության, Հայկազյան համալսարանի և ԵՊՀ-ի նախաձեռնությամբ Բեյրութում անցկացվել է «Հայաստան-Սփյուռք գործակցություն. երեկ, այսօր, վաղը» խորագրով գիտաժողովը[659]:

Հետխորհրդային երկրներում հայագիտական կենտրոնների, ինչպես նաև առանձին հայագետների գործունեությունն ընդհանուր առմամբ համակարգված չէ: Չկան այդ նպատակով ստեղծված կառույցներ: Փորձ է արվում Եվրոպայում, ինչպես նաև ԱՄՆ-ում գործող ընկերակցությունների օրինակով դրանցում նույնպես ստեղծել հայագիտական ընկերակցություններ, ինչպես նաև առանձին հայագետների գործունեությունը համակարգող ինստիտուցիոնալ մարմիններ:

Կարևոր մարտահրավերը, որը կանգնած է արտերկրի կենտրոնների առջև, մասնագետների պակասի խնդիրն է: Հաճախ անհրաժեշտ մասնագետների պակասի կամ բացակայության պատճառով կենտրոնները չեն կարողանում լիարժեքորեն իրականացնել իրենց գործառույթները, երբեմն մատնվում են անգործության, իսկ երբեմն էլ՝ կանգնում փակման սպառնալիքի

---

[659] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն-Սփյուռք գործակցություն. Երեկ, այսօր և վաղը», http://www.armin.am/amcl/news/26:

առջև, ինչպես, օրինակ, Երուսաղեմի եբրայական համալսարանի հայագիտական ծրագիրը[660]:

Չնայած վերջին տարիներին գործադրված ջանքերին՝ գործունեության անբավարար համակարգվածության խնդիրն առկա է նաև հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոնների փոխհարաբերություններում: Այսօր խիստ կարևոր է խորացնել համագործակցությունը, համակարգել հայագիտական կենտրոնների աշխատանքը:

Հայոց պատմությունն ու մշակույթը կեղծարարությունից ու նենգափոխումներից պաշտպանելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել, հայագիտական կենտրոնների ներուժն օգտագործելով, հրատարակել հայոց պատմության, մշակույթի ու լեզվաքաղաքականության վերաբերյալ հիմնարար աշխատություններ նաև օտար լեզուներով:

Սփյուռքի բազմաթիվ և բազմաբնույթ հիմնախնդիրները գիտականորեն վեր հանելու, վերլուծելու, դժվարությունների մեջ հայտնված համայնքային կյանքը լուսաբանելու, համայնքների պատմությունը գրի առնելու նպատակով Սփյուռքի նախարարությունը սերտորեն համագործակցում է Սփյուռքի գիտական հաստատությունների, համալսարանների, վերլուծական կենտրոնների հետ:

Հետազոտական գործունեության խրախուսումը ՀՀ սփյուռքի նախարարության աշխատանքի կարևոր ուղղություններից է՝ պայմանավորված ինչպես Սփյուռքի համայնքների պատմության, նրանց տարբեր հիմնախնդիրների վերհանման, այնպես էլ նախարարության քաղաքականության մշակման, գիտավերլուծական հենքի ապահովման անհրաժեշտությամբ: Սփյուռքի

[660] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 243:

վերաբերյալ տարբեր ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս հաղթահարելու Հայկական սփյուռքի մասին առկա կարծրատիպերը և իրական պատկեր ունենալու պատմական, աշխարհաքաղաքական, մշակութային տարբեր պայմաններում գտնվող հայ մարդու մասին՝ աշխարհասփյուռ հայության հատվածների իրական կարիքները բացահայտելու և հաշվառելու, գնահատելու, պատմությունն ուսումնասիրելու, համապատասխան մասնագետներ պատրաստելու, գիտահետազոտական կառույցներ ստեղծելու միջոցով[661]:

ՀՀ սփյուռքի նախարարության կողմից ՀՀ ԳԱԱ պատմության, արևելագիտության, գրականության, լեզվի, ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների, ազգագրության և հնագիտության ինստիտուտներին, ԵՊՀ-ին, «Նորավանք» ԳԿՀ-ին, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանին (ՀՊՏՀ), «Վերադարձ Հայաստան» հիմնադրամին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) «Ամբերդ» հետազոտական կենտրոնին, Բեյրութի Հայկազյան համալսարանի հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնին և գիտական այլ հաստատություններին պարբերաբար տրվում են թեմատիկ հետազոտությունների պատվերներ: 2009-2016 թթ. իրականացվել է 81 հետազոտություն[662], որոնք անդրադառնում են համահայկական նշանակության հիմնախնդիրներին, հայրենիքի և Սփյուռքի առջև ծառացած արդի մարտահրավերներին, արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման խնդիրներին, իսլամացված հայերի, Սփյուռքի համայնքների պատմության ուսումնասիրությանը, վեր են հանում Սփյուռքի

[661] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 454:
[662] Տե՛ս նույն տեղում, էջ 455:

համայնքների տարբեր հիմնախնդիրներ, և այդ ամենը նպաստում է նաև նախարարության քաղաքականության մշակմանը: Հետազոտություններում արծարծված խնդիրները հիմք են ընդունվել նախարարության ծրագրերը մշակելիս և իրականացնելիս[663]:

Հայագիտության ոլորտում հայրենիք-Սփյուռքի կապերի ամրապնդման գործում մեծ դեր են խաղում ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված համաժողովները, գիտաժողովները, կլոր սեղան քննարկումները, հավաք-հանդիպումները: Դրանք իրականացվում են Հայաստանի Հանրապետության և աշխարհասփյուռ հայության համար կարևոր նշանակություն ունեցող հիմնախնդիրների լուծմանը Սփյուռքի համակարգված մասնակցության ապահովման, Սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հայտնաբերման, համախմբման և արդյունավետ կիրառման նպատակներով: Այդ միջոցառումները հնարավորություն են ընձեռում ձևավորելու ընդհանուր մոտեցումներ, առաջադրված խնդիրների լուծման համար կիրառելու միասնական կառուցակարգեր և մեթոդներ[664]:

2009-2016 թթ. ընթացքում ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվել են 100-ից ավելի համաժողովներ, գիտաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ, հավաք-հանդիպումներ, որոնցից կարելի է առանձնացնել՝ «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր», «Հայ ինքնության որակների պահպանումը խառնամուսնություններում», «Հայության կրոնադավանական

---

[663] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 455:
[664] Տե՛ս նույն տեղում, էջ 456:

հատվածներ. մարտահրավերներ և հնարավորություններ», «Սփյուռքի հեռանկարները գլոբալացվող աշխարհում», «21-րդ դարի մարտահրավերները և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները», «Արդի լեզվաքաղաքականության հիմնախնդիրները», «Արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման խնդիրները», «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ» հայկական հիմնախնդիրների իրազեկման կառույցների ներկայացուցիչների, լրագրողների, գրողների համահայկական համաժողովներն ու գիտաժողովները, «Հարափոփոխ աշխարհ, փոփոխվող Սփյուռք» խորագրով կլոր սեղան-քննարկումը, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնախմբերի նախագահների (ներկայացուցիչների) հավաք-հանդիպումները, իսլամացված հայերի հիմնախնդիրներին նվիրված կլոր սեղան-քննարկումները և այլն[665]:

Համահայկական հարցերի քննարկման և համազգային առաջահերթությունների հստակեցման յուրօրինակ հարթակ են դարձել նաև Հայաստան-Սփյուռք չորրորդ, հինգերորդ և վեցերորդ համաժողովները (2011, 2014, 2017 թթ.), որոնք Հայաստան-Սփյուռք գործակցության կարևորագույն հանգրվան դարձան: Այդ ոլորտում համագործակցության ամրապնդման համար առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերել նաև ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված մասնագիտական համաժողովները (իրավաբանների, բժիշկների, սրտաբանների, գրողների, լրագրողների, գործարարների, ճարտարապետների, ոսկերիչների և այլն), որոնց արդյունքում ստեղծված մասնագիտական ցանցերը միմյանց են

[665] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 456-457:

կապում տարբեր վայրերում գործող մասնագիտական կառույցները՝ նպաստելով նոր և հեռանկարային նախաձեռնությունների մշակմանն ու կենսագործմանը[666]:

Գիտության զարգացման արդի համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ երիտասարդ կադրերի պատրաստման գործընթացը հետզհետե կենտրոնանում է գիտական խոշոր կենտրոնների շուրջ, որոնցում առկա է գիտատեխնիկական մեծ ներուժ, որոնք գործում են ժամանակակից գիտության, տեխնիկայի առաջավոր դիրքերում՝ ներառելով բնագավառի վերջին նվաճումները:

Գիտության զարգացման շարժիչ ուժը մարդկային կապիտալն է, առանց որի, բնականաբար, հնարավոր չէ զարգացնել այն: Դա ակնհայտորեն երևում է ինչպես հումանիտար, այնպես էլ բնագիտական ոլորտում առկա հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման ուղղությամբ ձեռնարկված գիտահետազոտական համատեղ աշխատանքներում: Սփյուռքի ակադեմիկական և գործարար ներուժի օգտագործումը նպաստում է ՀՀ-ում նորամուծական կարողությունների զարգացմանն ու միջազգային գործընթացների ներգրավման արագացմանը: Այն իր դրսևորում է գտել հատկապես ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, որը մեր տնտեսության դինամիկ զարգացող և ամենաերիտասարդ ճյուղերից է:

Ոլորտի ընկերությունների 80 %-ից ավելին հիմնադրվել է 2000-2014 թթ.՝ չնայած ոլորտում նախկին ՀԽՍՀ մասնագիտացմանն ու հարուստ ավանդույթների առկայությանը: Հատկանշական է, որ անկախացման առաջին շրջանն անբարենպաստ է եղել ոլորտի համար. 1991-1997 թթ. այն ապրել է ծանր

---

[666] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 458:

անցումային շրջան: Տնտեսության անկումը, ոլորտի արտադրանքի նկատմամբ պահանջարկի իսպառ բացակայությունն ու ճարտարագիտության, ֆիզիկայի, միկրոէլեկտրոնիկայի բնագավառի բարձրակարգ մասնագետների արտագաղթը զգալիորեն սահմանափակել են տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հնարավորությունները: Ըստ պաշտոնական վիճակագրության տվյալների՝ 1998 թ. դրությամբ Հայաստանում գործել են 35-40 ծրագրավորող ընկերություններ և համացանցային կապի պրովայդերներ, որոնցում, ըստ տարբեր հաշվարկների, աշխատել է շուրջ 1000 մասնագետ[667]: Համեմատության համար նշենք՝ 1987 թ. միայն Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտն ունեցել է մինչև 10000 աշխատակից[668]: Հատկանշական է, որ ոլորտը բնութագրող ցուցանիշներով այն հիմնականում համադրելի է ՏՏ արտադրանքի վրա կենտրոնացած երկրներին: Մասնավորապես, եթե 2003 թ. ոլորտին բաժին է ընկել ընդհանուր արտահանման 3.6 %-ը, ապա 2010 թ.՝ արդեն 8.55 %-ն[669] այն դեպքում, երբ Ֆրանսիայում տեղեկատվական տեխնոլոգիաների մասնաբաժինն արտահանման մեջ կազմում է 7.9 %, իսկ Գերմանիայում՝ 12.7%): Եթե 2007 թ. տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնաբաժինը ՀՀ ՀՆԱ-ի մեջ կազմել է 0.96 %, ապա 2012 թ. աճել է՝ կազմելով ՀՆԱ-ի 2.05 %-ը[670]: Ոլորտի 2007-2014 թթ. տարեկան աճի տեմպը միջինում տատանվել է տարեկան 20-22 %-ի միջակայքում և

---

[667] Տե՛ս Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսագիտության մեջ. զարգացման հեռանկարները, էջ 200:
[668] Տե՛ս նույն տեղում, էջ 201:
[669] Տե՛ս նույն տեղում:
[670] Տե՛ս նույն տեղում, էջ 202:

անգամ տնտեսական անկման տարիներին դինամիկ աճել է[671]՝ առաջանցիկ տեմպեր ունենալով գլոբալ ճյուղի աճի համեմատ (5.4-8.4 %): Ոլորտում 2004-2014 թթ. տարեկան միջինում հիմնվել է 20-25 ընկերություն, ինչի արդյունքում 2014 թ. դրությամբ դրանում ներգրավված է եղել շուրջ 400 ընկերություն (համեմատության համար 1990-1998 թթ. այդ ցուցանիշը կազմել է 5-6)[672]: Պատկառելի աճի ցուցանիշներով հանդերձ՝ Հայաստանի ՏՏ ոլորտը գլոբալ ճյուղում իր մասնաբաժնով դեռ շոշափելի մասնակցություն չունի ՏՏ գլոբալ արժեշղթայում. այն հիմնականում մասնագիտացված է ծրագրային ապահովման արտապատվիրումների և համակարգերի մշակման ու ավտորիզացիայի բնագավառներում:

2014 թ. ոլորտում ստեղծվել է 17 նոր ընկերություն: 100.000 ԱՄՆ դոլարից պակաս հասույթ ունեցող փոքր ընկերությունների թիվը 2013 թ. համեմատ աճել է 10 %-ով, իսկ նրանց մասնաբաժինը ոլորտի ընդհանուր հասույթում աճել է 50 %-ով: Թեպետ փոքր ընկերությունները զգալի ազդեցություն չունեն ոլորտի վրա, սակայն նրանց քանակի աճը վկայում է տեղական շուկայի շարունակական զարգացման մասին: «Վիասֆեր Ինթերնեյշնլ» վենչուրային ընկերության (ԱՄՆ) և Երևանում գործող «Վիասֆեր» տեխնոպարկի գլխավոր տնօրեն և նախագահ, «ԱրմԹեք» համաժողովի համահիմնադիր և նախագահ, ոլորտի տասնյակ ընկերությունների հիմնադիր Թոնի (Էնթոնի) Մորոյանի խոսքերով՝ «ՏՏ ոլորտը, ի համեմատ տնտեսության մյուս ճյուղերի, նախանձելի վիճակում է»[673]: Պետք է նշել, որ ոլորտի կայացման

---

[671] Տե՛ս Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսագիտության մեջ. զարգացման հեռանկարները, էջ 202:
[672] Տե՛ս նույն տեղում, էջ 20:
[673] Նույն տեղում, էջ 203:

գործում ամենակարևոր և որոշիչ գործոններից մեկը Հայաստան-Սփյուռք կապն է, որը օգնեց ինչպես ոլորտի կարևորության ընկալմանն ու պետական աջակցության տրամադրմանը, այնպես էլ ներդրումների ներգրավմանը, նոր ընկերություններ հիմնելուն, ճյուղի ուժեղ խաղացողների կողմից արտապատվիրումների տրամադրմանը, Հայաստան մուտքին և փոխգործակցության հաստատմանը: Ոլորտի օտարերկրյա կապիտալով ընկերությունները հիմնականում ռուսական և ամերիկյան ընկերություններն են, որոնք կա՛մ պատկանում են սփյուռքահայերի, կա՛մ նրանց հետ փոխկապված անձանց, որոնց մուտքի որոշման վրա վերջինների ազդեցությունն առնվազն բացառել չի կարելի:

Հայտնի փաստ է, որ ՏՏ ոլորտի զարգացման կարևոր գործոններից է պետության աջակցումը: Հիմնականում սփյուռքահայ ներդրողների ջանքերով և ոլորտի արձանագրած նկատելի արդյունքների ազդեցությամբ ՀՀ կառավարությունն աստիճանաբար ներգրավվեց ՏՏ ոլորտի խթանմանը: Սփյուռքի ներդրումների իրականացումը նպաստեց տարբեր օտարերկրյա ընկերությունների՝ Հայաստանի ՏՏ ոլորտ մուտքը. Հայաստան ներթափանցեցին առաջին հեղինակավոր ընկերությունները («Սինոպսիս», «Լայկոս» և այլն)[674]: 2000 թ., ոլորտը ճանաչվեց տնտեսության զարգացման գերակա ուղղություն: Սկիզբ դրվեց օտարերկրյա ընկերությունների և կրթական հաստատությունների փոխգործակցությանը: Հատկանշական է, որ հայրենական ՏՏ արտադրանքի և գլոբալ քարտեզի վրա Հայաստանի ճանաչման հարցում առաջնային դերակատարում է ունեցել նաև «Արմ-

[674] Տե՛ս Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսագիտության մեջ. զարգացման հեռանկարները, էջ 203:

Թեք» համաժողովը, որը կրկին կազմակերպվել է սփյուռքահայերի, մասնավորապես Թոնի (Էնթոնի) Մորոյանի ջանքերով[675]: Առաջին համաժողովն անցկացվել է 2007 թ.՝ չնայած պնդումներին, որ Հայաստանը փոքր երկիր է և նման համաժողովների հնարավորություններ չունի: Ի տարբերություն Ռուսաստանի, Թուրքիայի ու Ադրբեջանի, որոնք մինչ այդ ձախողվել էին համանման միջոցառումների անցկացման հարցում, ճիշտ ընտրված ռազմավարության, համաժողովի անցկացման վայրի, ոլորտի սփյուռքահայ ներկայացուցիչների օժանդակության շնորհիվ «ԱրմԹեքին» հաջողվեց Հայաստանն ամրագրել SS քարտեզի վրա և ոլորտի մի շարք առաջատար ընկերություններիի հետ հաստատել փոխշահավետ համագործակցություն, ինչի արդյունքում արդեն 2008 թ. ոլորտում գրանցվել են ամենամեծ թվով ընկերությունները (30)[676]: Պետք է նշել, որ 2008 թվականից սկսած՝ ոլորտի առաջընթացը որակական առումով զգալիորեն տարբերվում է մինչ այդ գրանցված ցուցանիշներից: Ուշագրավ է նաև, որ ոլորտի հայկական ընկերությունների գլոբալ ճանաչմանն ու առաջխաղացմանը նպաստում են նաև SS գլոբալ ճյուղում մեծ հեղինակություն ունեցող բազմաթիվ սփյուռքահայերը, որոնք, եթե անգամ ՀՀ SS ոլորտում հետաքրքրություն էլ չունեն, իրենց արմատների և հեղինակության շնորհիվ դարձել են «Հայկական տեխնոլոգիաների» անուղղակի գովազդողներն ամբողջ աշխարհում: Նրանց շարքում հատկապես կարելի է առանձնացնել Reddit.com-ի համահիմնադիր Ալեքսիս Օհանյանին, «Industrial Toys («Bungie Software Products Corporation»)»

---

[675] Տե՛ս Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսագիտության մեջ. զարգացման հեռանկարները, էջ 203:
[676] Տե՛ս նույն տեղում, էջ 204:

ընկերության հիմնադիր Ալեքս Սերոբյանին, ով նախկինում առաջատար պաշտոններ է զբաղեցրել «Disney Interactive studios» և «Wideload Games» ընկերություններում, WattzOn.com-ի համահիմնադիր Ռաֆֆի Կիրակոսյանին, ով SS աշխարհին հայտնի է «Թվիթերի» փոխնախագահ աշխատելու տարիներից, «Badoo» նախագծի հիմնադիր Անդրեյ Օհանջանյանցին, հատկապես աշխարհահռչակ «Lingvo» էլեկտրոնային բառարանը թողարկող «ABBYY» ընկերության հիմնադիր Դավիթ Յանին, ով, ի տարբերություն մյուսների, մեծ մասնակցություն ունի Հայաստանում բարձրորակ կրթական ծրագրերի ներդրման և վաղ տարիքից տեխնոլոգիական կրթության մատուցման ասպարեզում[677]: Մասնավորապես Դ. Յանը «Այբ» կրթական հիմնադրամի հիմնադիրներից մեկն է, ինչպես նաև մասնակցություն է ունեցել «Թումո» նախագծին:

Հատկապես 2004-2014 թթ. ժամանակահատվածում Հայաստանը գործադրված պատկառելի ջանքերի, ճարտարագիտության, ինֆորմատիկայի, ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառներում միջազգային չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների իրականացման կարողությունների ձևավորման, տեխնիկական հմտություններով և անգլերենի իմացությամբ, բարձրակարգ և շնորհալի մասնագետների շնորհիվ վերածվել է ՏՀՏ ոլորտում օտարերկրյա ուղղակի ներդրումների համար բարենպաստ երկրի: SS և հարակից այլ մասնագիտացումներով բուհական հիմնարար ծրագրերի, մրցակցային բարձր մակարդակ ունեցող էժան աշխատուժի և ցածր գործառական ծախսերի, պետության

[677] Տե՛ս Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսագիտության մեջ. զարգացման հեռանկարները, էջ 205:

կողմից ոլորտին հատկացվող շոշափելի աջակցության և ներդրումային դաշտը բարելավելու պատրաստակամության., ՏՏ ոլորտի կայուն և շարունակական զարգացման, Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում, ուժեղ և բարգավաճող Սփյուռքի, խոշոր վերազգային ընկերությունների հետ համագործակցության մեծ փորձի, մտավոր սեփականության պաշտպանությանն ուղղված միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող իրավական դաշտի ձևավորման շնորհիվ Հայաստանն ակնհայտորեն մրցակցային լուրջ առավելություններ ունի տարածաշրջանի մյուս երկրների համեմատ[678]: «ԱրմԹեք» համաժողովի համահիմնադիր և նախագահ Թոնի (Էնթոնի) Մորոյանի պնդմամբ՝ Հայաստանի ՏՏ ոլորտը Վրաստանին, Ադրբեջանին և Իրանին գերազանցում է բոլոր չափանիշներով, իսկ Թուրքիայի համեմատ առկա են համեմատական որոշ առավելություններ մի շարք ճյուղերում: Սակայն պետք է նշել, որ ՏՏ ոլորտն ունի նաև հետագա աճի ապահովման լուրջ մարտահրավերներ: Մասնավորապես «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի» 2010-2014 թթ. իրականացրած հետազոտությունները փաստում են, որ Հայաստանի ՏՏ ոլորտում գործող ընկերությունների մեծամասնության համար ֆինանսավորման աղբյուրների ոչ մատչելի լինելը (տարբեր տարիներին հարցվողների 40-50%-ը)[679], միջազգային շուկա մուտք գործելու հետ կապված խնդիրները (տարբեր տարիներին հարցվողների 19-45%-ը), որակավորված տեխնիկական մասնագետների պակասն ու աշխատուժի արտահոսքը (տարբեր տարիներին հարցվողների 46-

[678] Տե՛ս Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսագիտության մեջ. զարգացման հեռանկարները, էջ 205:
[679] Տե՛ս նույն տեղում, էջ 206:

48%-ը), հարկային և մաքսային ընթացակարգերը (տարբեր տարիներին հարցվողների 28-48%-ը) ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտներն են[680]:

Ակնհայտ է, որ ոլորտի հետագա ընդլայնման համար նոր շուկաների ձևավորումը և ներդրումների ներգրավումն այն առանցքային հարցերն են, որոնց դրական լուծումը կարող է ոչ միայն ապահովել նախկինում արձանագրված դինամիկ զարգացման միտումները, այլև անցում կատարել զարգացման որակապես նոր մակարդակի՝ արտապատվիրումներից դեպի սեփական արտադրանքի դիրքավորում: Հատկանշական է, որ հայրենական և Հայաստանում գրանցված արտասահմանյան ընկերությունների շատ փոքր տոկոսն է (2-4 %) որպես ոլորտի զարգացման խոչընդոտ դիտարկել մրցակցությունը, որակյալ կադրերի պատրաստման անհնարինությունը և հարկային օրենսդրությունը[681]: Անշուշտ, Սփյուռքի գործակցության խորացումը և ինստիտուցիոնալ գերազանց կարողությունների առկայությունը կարող են SS բնագավառում Հայաստանի աննախադեպ առաջընթացի գրավականը դառնալ:

Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններում առաջնային են կրթական կապերի ամրապնդումն ու զարգացումը: Դրանք աշխուժացան հատկապես ՀՀ անկախության շրջանում 1990-2000-ական թթ.:

Հայ ժողովրդի ինքնագիտակցության զարգացման և հայապահպանման առաջնահերթ գործոններից մեկը մատաղ սերնդին մայրենի լեզվով կրթություն տալն է: Հայեցի կրթություն

---

[680] Տե՛ս Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսագիտության մեջ. զարգացման հեռանկարները, էջ 206:
[681] Տե՛ս նույն տեղում, էջ 207:

տալու և հայապահպանության հիմնական օջախը դպրոցն է, իսկ կենտրոնական դեմքը՝ մանկավարժը՝ ուսուցիչը, որի կարողություններից ու նվիրումից շատ բան է կախված: Չնայած Հայաստանի իշխանությունները միշտ էլ սփյուռքահայ ուսուցիչներին օգնելու ուղղությամբ որոշ աշխատանքներ կատարել են, այդ քայլերը նոր աստիճանի բարձրացան Հայաստանի անկախությունից հետո: 1991 թ. վերապատրաստման ու կատարելագործման նպատակով Հայաստան ժամանեցին ԱՄՆ-ի, Կանադայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Սիրիայի, Իրանի և այլ երկրների մի քանի տասնյակ ուսուցիչներ: Մասնագիտական օգնություն ստանալուց բացի՝ նրանք շրջագայեցին Հայաստանում, ծանոթացան հայրենիքի հոգևոր-նյութական արժեքներին: Նրանք համոզվեցին, որ Հայաստանի Հանրապետության և սփյուռքահայ ուսուցիչների ներդրած ջանքերն ուղղված են հայապահպանության վեհ գործին, որպեսզի օտար ափերում ապրող հայը նույնպես կարողանա պահպանել իր ազգային դեմքն ու հոգեբանությունը: Բացի ուսուցիչների որակավորումից՝ Հայաստանի բուհեր Սփյուռքի տարբեր գաղթօջախներից սովորելու են գալիս մեծ թվով մանկավարժներ, որոնք ավարտելուց հետո վերադառնում են իրենց բնակավայրերը: 1997 թ. Հայաստանի պետական բուհերում սովորում էին արտերկրի 818 ուսանողներ, որոնցից 314-ը՝ պետպատվերով, 509-ը՝ վճարովի: Բացի դրանից՝ իրենց ուսումն էին շարունակում 97 ասպիրանտներ[682]: Նրանց հիմնական մասը Երևանի պետական համալսարանում և Երևանի բժշկական համալսարանում էին: Հայեցի կրթությունը համազգային արժեք է: Ուստի Հայաստանից բացի՝ սփյուռքում ևս մեծ ուշադրություն է դարձվում նշված խնդիրներին: Հատկապես

[682] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 58:

կարևոր են հայկական դպրոցների կազմակերպման և գործունեության ծավալման ուղղությամբ տարվող աշխատանքները: Սփյուռքում գործում են բազմաթիվ կրթօջախներ՝ դպրոցներ, վարժարաններ, մշակութային միություններ, որոնց ավանդը հայապահպանման գործում դժվար է գնահատել:

1998 թ. Սփյուռքում գործում էին 160-ից ավելի ամենօրյա վարժարաններ, նույնքան էլ կիրակնօրյա դպրոցներ: Միայն Ֆրանսիայում գործող 7 հայկական վարժարաններում (Պարսամյան, Համազգային, Փափազյան և այլն) սովորում էին 1466 աշակերտ, դասավանդում՝ մոտ 90 ուսուցիչ[683]: Այդ դպրոցների ծախսերի կեսն ապահովում էին բարեգործները, մյուս կեսը՝ ծնողներն ու համախոհները: Սակայն Սփյուռքի հայկական դպրոցները բազում դժվարություններ էին կրում, հատկապես ուսումնական գործընթացների կարգավորման գործում:

2016 թ. տվյալներով Ֆրանսիայի Մարսել քաղաքի դպրոցն իր 1247 աշակերտով համարվում է Ֆրանսիայի ամենաառաջավոր դպրոցներից մեկը, քանի որ 4300 դպրոցների ցանկում գրավում է 33-րդ տեղը, և դա այն դեպքում, երբ ֆրանսիայում գործող այլ համայնքի 300 դպրոցներից (ունեն 60.000 աշակերտ) մի քանիսն են, որ գրավում են 100-180-րդ տեղերը: Հետևաբար սա վկայում է հայ համայնքների կողմից տարվող ճիշտ կրթական քաղաքականության մասին: Նոր մեթոդների կիրառման արդյունքում հնարավոր է ունենալ առաջավոր և որակյալ դպրոց, նաև հայկական միջավայրը և հայկական հանրությունը պարարտ հող են հայոց լեզուն գործածելու, հայկական մտածողություն ձևավորելու համար[684]:

---

[683] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 59:
[684] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 351-352:

Սփյուռքահայության հայեցի դաստիարակման գործում անգնահատելի է ուսումնական և դաստիարակչական այնպիսի կենտրոնների դերը, ինչպիսիք են «Թեքեյան մշակութային միությունը», Մխիթարյան միաբանությունը, Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը, Մելգոնյան կրթական հաստատությունը և այլն, որտեղ Սփյուռքի տարբեր գաղթօջախներից հարյուրավոր երիտասարդներ են սովորում: Նվիրաբերվելով ազգային դաստիարակչությանը՝ նրանցից շատերն ուսումը շարունակում են Եվրոպայի, Հայաստանի բուհերում: Իրավամբ, այդ դպրոցները, ուսումնական հաստատությունները հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ոսկե կամուրջներն են, որոնց շրջանավարտները հայության երկու հատվածների մերձեցման պատգամավորներն են: Սփյուռքի հայկական դպրոցներն անգնահատելի դեր են խաղում հայապահպանության գործում: Համայնքների և դպրոցների գոյատևումը խիստ պայմանավորված է միմյանցով, ուստի պատահական չեն համայնքների գործադրած ջանքերն ու միջոցները, որոնք ուղղված են հայկական դպրոցների պահպանմանը, որտեղ աճող սերունդը տարրական կամ ութամյա կրթություն է ստանում:

Սփյուռքում գործող ամենօրյա դպրոցները կրթական երեք աստիճան ունեն՝

1. նախակրթարան՝ 1-6-րդ դասարաններ, համապատասխանում է ՀՀ տարրական դպրոցին,

2. միջնակարգ (հիմնական դպրոց)՝ հանրակրթական դպրոցներ (Մերձավոր սփյուռք՝ Վրաստան, Աբխազիա և այլն),

3. երկրորդական (ազգային ամենօրյա վարժարաններ), համապատասխանում է ավագ, դպրոցին[685]:

---

[685] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 352:

Հայկական ամենօրյա դպրոցների ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ երեխաները սովորում են նաև հայագիտական առարկաներ՝ հայոց լեզու և գրականություն, հայ ժողովրդի և հայ եկեղեցու պատմություն, հայկական երգ ու պար, հայ մշակույթ: Խիստ կարևոր է նաև այդ դպրոցներում ձևավորված հայեցի կրթության և դաստիարակության մթնոլորտը, որի շնորհիվ հայ երեխաների մեջ արմատավորվում է ազգային ինքնագիտակցություն, կապ ազգային արմատների, հոգևոր-մշակութային արժեքների հետ: Բնականաբար, կա էական տարբերություն ազգային ամենօրյա և մեկօրյա դպրոցների միջև: Պայմանավորված երկրների քաղաքական իրավիճակներով (պատերազմ, իշխանափոխություն, աշխարհաքաղաքական նոր զարգացումներ)՝ կրթօջախների կարգավիճակը կարող է փոփոխվել: Սիրիական պատերազմի պատճառով ազգային դպրոցները մեծ կորուստներ են կրել, սակայն մայր համանքի հայության, հայկական կազմակերպությունների, հոգևոր կառույցների, հայկական դպրոցների հայ մանկավարժների հերոսական ջանքերի շնորհիվ Սիրիայում նույնիսկ պատերազմական պայմաններում շարունակում են գործել 28 դպրոցներ[686]: Այսօր Սփյուռքում գործում են ավելի քան 350 ամենօրյա և 600 մեկօրյա դպրոցներ, կրթական հաստատություններ, խմբեր, խմբակներ, դասընթացներ[687]:

Սփյուռքի հասարակական կյանքում էապես մեծացել է գրական արևելահայերենի գործառության տիրույթը: Սակայն շատ երկրների (Արևելյան Եվրոպայի, ԱՊՀ-ի՝ Ռուսաստան, միջինասիական պետություններ) հայկական համայնքներում արևելա-

---

[686] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 352:
[687] Տե՛ս նույն տեղում:

հայերեն խոսող դպրոցահասակ երեխաների համար չկան նույնիսկ մեկօրյա (շաբաթօրյա, կիրակնօրյա) դպրոցներ: Տարբեր երկրներում ձևավորված նոր համայնքների մեծ մասը դպրոցներ հիմնելու հարցում հանդիպում է լուրջ դժվարությունների[688]:

Թեև Սփյուռքի՝ արևմտահայերեն խոսող հատվածի համեմատ արևելահայերեն խոսող հատվածն ավելի մեծաքանակ է, սակայն վերջիններիս շատ ավելի փոքր տոկոսն է հաճախում հայկական դպրոցներ: 7 մլն հայերից արևմտահայերեն է խոսում շուրջ 2 մլն մարդ, որոնցից հայկական ամենօրյա, մեկօրյա դպրոցներում սովորում է 170.000 աշակերտ, իսկ 5 մլն արևելահայերեն խոսող հատվածից՝ 150.000-200.000 աշակերտ, որը կազմում է արևելահայերեն խոսող բնակչության ընդամենը 2.6-3.0 %-ը: 2009-2016 թթ. մեկօրյա դպրոցների թվի ավելացմամբ աշակերտների թիվն ավելացել է 80.000-100.000-ով[689]:

Հետխորհրդային երկրներում շատ քիչ են հայկական դպրոցները: Պատճառը համայնքների ոչ բավարար կազմակերպվածությունն է, ֆինանսական միջոցների, իսկ որոշ դեպքերում՝ մանկավարժների բացակայությունը: Նոր ձևավորվող համայնքների հազարավոր հայ երեխաներ հնարավորություն չունեն ուսանելու հայկական դպրոցներում: ՌԴ-ի՝ նախկինում հայկական բնակչությամբ համախումբ շրջաններում (օրինակ՝ Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանում, Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում, Ադլեր քաղաքում) գործող հանրակրթական դպրոցներում հայագիտական առարկաներից այսօր հայերեն դասավանդվում են միայն հայոց լեզու և հայոց պատմություն առարկաները, այն էլ՝ լրացուցիչ (ֆակուլտատիվ) պարապ-

---

[688] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 352:
[689] Տե՛ս նույն տեղում:

մունքների ձևով[690]: Մինչդեռ այդ դպրոցներում խորհրդային տարիներին ամբողջ ուսումնական ծրագիր հայերեն էր իրականացվում: Որոշ դպրոցներում ազգային կրթության բաղադրիչ է երգի, պարի, թատերական խմբակների գործունեությունը:

Որոշ մեկօրյա դպրոցներ չեն դառնում մշտական գործող կրթօջախներ, հիմնադրվում և փակվում են: Օրինակ՝ Ռուսաստանի հարավում, երկրի տարբեր տարածաշրջաններում հիմնված հայկական կիրակնօրյա դպրոցների որոշ մասը փակվել է, մի քանի տարի հետո՝ վերաբացվել: Այսպես, օրինակ, վերջին տարիներին վերաբացվեցին մեկ տասնյակ դպրոցներ: Այնուամենայնիվ, Ռուսաստանում, հատկապես ինքնակազմակերպված համայնքներում մեկօրյա դպրոցներ բացվում են: Ըստ ՀՀ սփյուռքի նախարարության տվյալների՝ միայն 2009-2016 թթ. ավելի քան 200 մեկօրյա դպրոցներ, հայոց լեզվի դասընթացներ, խմբեր, խմբակներ են հիմնվել[691]: Մի քանի մեկօրյա դպրոցներ են ստեղծվել նաև եվրոպական երկրներում:

Հայեցի կրթություն տալու, հայապահպանության գործում Սփյուռքում կարևոր և անմնացորդ աշխատանք են կատարում մի շարք նշանավոր հաստատություններ և ուսումնական կենտրոններ:

1821 թ. հիմնված Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանը (Հնդկաստան) այսօր շարունակում է գործել որպես Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի դպրոց, որտեղ հոգևոր կրթություն են ստանում սաներ Հայաստանից և Մերձավոր ու Միջին Արևելքից

---

[690] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 354:
[691] Տե՛ս նույն տեղում:

(աշակերտների զգալի մասը Իրանի հայկական համայնքներից են)[692]:

Լիբանանում 1955 թ. հիմնվեց Հայկազյան համալսարանը, որը նախ քոլեջ էր, ապա՝ համալսարան:

Աշխարհի լավագույն կրթական հաստատությունների հետ համատեղ իրականացվող բազմաթիվ նախաձեռնությունները կապում են առաջատար գիտելիքի կենտրոնները Հայաստանի հետ, օրինակ՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանի «Գլոբալ ուսումնական լաբորատորիա» ծրագիրը Հայաստանում[693]: Նմանօրինակ ծրագրեր են իրականացվում նաև աշխարհի այլ առաջատար համալսարանների հետ:

Լեզվապահպանման կենտրոններ են գործում Իտալիայում, Փարիզում, տարբեր երկրների համալսարաններում, որոնցում հայերենի ուսուցման, հայոց լեզվի հիմնախնդիրների հետազոտության ուղղությամբ նշանակալի գործունեություն են ծավալում հայագիտական ամբիոնները, կենտրոնները, ծրագրերը: Կարևոր աշխատանքներ է կատարում հատկապես Կալիֆոռնիա նահանգում գործող ԱՐՓԱ ինստիտուտը, որը Հայաստանի ուսանողների համար ամենամյա նորարարության մրցանակաբաշխություններ է անցկացնում՝ նպատակ ունենալով խրախուսել ուսանողներին և ասպիրանտներին՝ ըստ գիտության տարբեր բնագավառների: Վերջին տարիներին ինստիտուտը որպես գործունեության կարևոր ուղղություն է որդեգրել արևմտահայերենի հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովների, համաժողովների անցկացումը, որոնց ընթացքում լեզվաբանները, մանկավարժները քննարկում են լեզվի, քերականության կանոնա-

---

692 Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 362:

693 Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 355:

կարգման, դասագրքերի ստեղծմանն ուղղված խնդիրներ և առաջարկում լուծումներ[694]:

Հայագիտական գիտաժողովների, հրատարակությունների հայալեզու ձեռնարկների հովանավորությունն է ստանձնել նաև «Գալուստ Գյուլբենկյան» (Calouste Gulbenkian Foundation) հիմնարկությունը: Այն հիմնադրվել է 1956 թ. Լիսաբոնում՝ հայ մեծահարուստ, նավթարդյունաբերող Գալուստ Գյուլբենկյանի (1869-1955 թթ.) կտակի (1953 թ.) համաձայն: Հիմնարկությունը նպատակ ունի նպաստելու անհատների կյանքի որակի բարձրացմանը՝ գիտության, կրթության, արվեստի և բարեգործության միջոցով: Այն աջակցություն է ցուցաբերում հայանպաստ ծրագրերին ու միջոցառումներին՝ իրականացնելով ազգապահպան գործունեություն: Հիմնարկության գործունեությունն ուղղված է գիտության, կրթության, մշակույթի և առողջապահության զարգացմանը: Ներկայումս հիմնարկության նպաստներից օգտվում է ավելի քան 75 երկիր[695]: Հիմնարկությունը մասնաճյուղեր ունի Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում: Հիմնարկությունում գործում է Հայկական համայնքների բաժանմունք, որի գլխավոր խնդիրը Սփյուռքում հայկական մշակույթի և հայոց լեզվի պահպանումն է: Այդ նպատակով հիսուն տարուց ավելի հիմնարկությունը հետևողականորեն օգնում է աշխարհի, մասնավորապես Մերձավոր Արևելքի հայկական ուսումնական հաստատությունների զգալի մասին: Հիմնարկությունը միշտ հանդես է եկել տարբեր երկրներում հայ համայնքների դիրքերն ամրապնդելու,

---

[694] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 355-356:

[695] Տե՛ս Ղարախանյան Վ., «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայանպաստ գործունեությունը. 1956-2006 թթ. (խմբագիր՝ Զավեն Եկավյան), Ե., 2008, էջ 116-127:

զորացնելու նախաձեռնություններով: Տարեկան բյուջեն կազմում է մոտ 4 մլն դոլար[696]: Այն 1964 թվականից կանոնավորապես բաշխվում է Սփյուռքի և Հայաստանի գիտական, առողջապահական, կրթական և մշակութային կազմակերպություններին[697]: Հիմնարկությունն աջակցություն է ցուցաբերում Սփյուռքի դպրոցներին (շինարարություն, նորոգման աշխատանքներ, ֆինանսական աջակցություն), ուսանողներին՝ ուսման վարձը վճարելով, իսկ վերջին շրջանում հատկապես օժանդակում է սիրիահայերին: Հիմնարկությունը Հայաստանում գործունեություն է ծավալում՝ համագործակցելով ՀՀ սփյուռքի նախարարության (որի հետ կնքել է համագործակցության համաձայնագիր), ՀԲԸՄ-ի և այլ կառույցների հետ: Սիրիական պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխված և Հայաստանի բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող շուրջ 500 սիրիահայ ուսանողների ուսման վարձը փոխհատուցվում է ՀՀ կառավարության, ՀԲԸՄ-ի և «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության համաֆինանսավորմամբ[698]: Համագործակցության ևս մեկ օրինակ է 2016 թ. փետրվարի 24-ին ՀՀ սփյուռքի նախարարության, «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության, ՀԲԸՄ-ի և ՄԱԿ-ի ՓԳՀ հայաստանյան գրասենյակի համատեղ իրականացրած «Մարդասիրական արձագանքից դեպի կայուն լուծումներ» խորագրով աշխատաժողովը՝ նվիրված Սիրիայի հակամարտության հետևանքով տեղահանված և Հայաստանում հաստատված անձանց ինտեգրման դյուրացման խնդիրներին[699]:

---

[696] Տե՛ս Ղարախանյան Վ., նշվ. աշխ., էջ 213:
[697] Տե՛ս նույն տեղում:
[698] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 172-173:
[699] Տե՛ս նույն տեղում, էջ 173:

Աշխատանքներից անմասն չէ նաև մայր հայրենիքը, որը պետական և մասնավոր ծրագրերով նպաստում է Սփյուռքում հայկական ուսումնական հաստատությունների կայացմանն ու զարգացմանը: Դեռևս 2008 թ. նորաստեղծ ՀՀ սփյուռքի նախարարության առաջին նախաձեռնությունը եղավ ԵՊՀ-ում սփյուռքագիտության ամբիոնի հիմնումը, իսկ 2009 թ. նախարարության աջակցությամբ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 6 ինստիտուտներում ձևավորվեցին Սփյուռքի բաժիններ[700]:

«Լույս» հիմնադրամը 2009 թվականից կրթաթոշակ է տրամադրում աշխարհի լավագույն տասը համալսարաններում սովորող ծագումով հայ 18-40 տարեկան ուսանողներին: Հիմնադրամը միավորում է իր կրթաթոշակառուներին հայրենիքում՝ հնարավորություն տալով նրանց կիրառելու ձեռք բերած գիտելիքը, հմտություններն ու փորձը՝ հանուն Հայաստանի և աշխարհի զարգացման: «Լույս» հիմնադրամի կրթաթոշակ է ստացել 538 ուսանող, և այսօր առաջավոր համալսարաններում սովորում է ևս 104 երիտասարդ[701]:

Կրթական գործի կազմակերպման, ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ դպրոցների, քոլեջների, բուհերի հիմնման գործում մեծ է սփյուռքահայ կազմակերպությունների, կառույցների և անհատ բարերարների դերը:

Ռուսաստանաբնակ գործարար Ռուբեն Վարդանյանի գլխավորությամբ գործող «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) բարեգործական հիմնադրամի նախաձեռնությամբ վերջին տարիներին հիմնադրվել է «UWC Դիլիջան քոլեջ» միջազգային դպրոցը (190 մլն ԱՄՆ դոլար): Այն իր բացա-

---

[700] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 356:
[701] Տե՛ս նույն տեղում:

ռիկ դերն ու նշանակությունն ունի կրթական ոլորտում և իր բնույթով միակն է ամբողջ տարածաշրջանում[702], որտեղ ուսուցումը իրականացվում է միջազգային համագործակցությամբ (անգլիական միջին դպրոց և գիշերօթիկ դպրոց, «Cambridge IGCSE*» և «IB Diploma*» ակադեմիական ծրագրերով): Դպրոցը գտնվում է Դիլիջանում՝ Երևանից և Թբիլիսիից 1,5 ժամվա հեռավորության վրա, զբաղեցնում է ավելի քան 88 հա հողատարածք[703]: Ռ. Վարդանյանը դպրոցը հիմնադրել է իր տիկնոջ Վերոնիկա Զոնաբենդի հետ համատեղ: Դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամներն են կրթության ոլորտի և բիզնեսի ականավոր ներկայացուցիչներ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Շվեյցարիայից, Ճապոնիայից[704]:

Դպրոցի շինարարության, ենթակառուցվածքների և սարքավորումների ուղղությամբ կատարված ներդրումների ծավալը կազմում է $ 150 մլն դոլար: Հետագայում նախատեսվում է ներգրավել ֆինանսական միջոցներ՝ կրթաթոշակներ և դրամաշնորհներ հատկացնելու համար: Այդ միջոցները հնարավորություն կտան վճարելու աշակերտների 70 %-ի կրթության համար: Այդպիսի ծրագրերը կարևոր են ոչ միայն տեղական, այլև միջազգային մակարդակով, քանի որ դրանք ուշադրություն են բևեռում Հայաստանի վրա: Դպրոցում կսովորեն երեխաներ առնվազն 60 երկրներից[705]: Դիլիջանի միջազգային դպրոցի հիմնական նպատակներն են՝ 1. ՀՀ կրթական համակարգի համար որակապես նոր կողմնորոշիչների սահմանումը, 2. տարա-

---

[702] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 396:
[703] Տե՛ս Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ. զարգացման հեռանկարները, էջ 145:
[704] Տե՛ս նույն տեղում:
[705] Տե՛ս նույն տեղում, էջ 146:

ծաշրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը, 3. Դիլիջանի բնապահպանական կայուն զարգացումը, 4. Դիլիջանի ենթակառուցվածքների վերանորոգմանը խթանելը և դրա հետագա զարգացմանը նպաստելը: Տվյալ նախագծի հիմնական նպատակներին հասնելու համար սահմանվել են մարտավարական և ռազմավարական նպատակներ[706]:

Ռ. Վարդանյանն իր խոսքում նշել է, որ Հայաստանը կհամալրի այն երկրների ցանկը, որոնցում գործում են գերժամանակակից կրթական չափանիշներին համապատասխանող միջազգային դպրոցներ, և դա մեծ ավանդ կլինի երկրի իմիջի ամրապնդման գործում: Երկրորդ, պատանիները, որոնք կսովորեն Դիլիջանում, կկարողանան հետագայում կրթություն ստանալ աշխարհի լավագույն բուհերում, և Հայաստանում նրանց անցկացրած տարիներն ապարդյուն չեն անցնի. այդ երիտասարդները կդառնան մեր երկրի յուրօրինակ «պատվիրակները»[707]: Երրորդ, նման ծավալուն ծրագրի իրականացումը կնպաստի Դիլիջանում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Սփյուռքում կրթության և մշակույթի զարգացման գործում իր առանձնահատուկ դերն ունի «Համազգային հայ կրթական և մշակութային միությունը»[708] (Hamazkayin Armenian Educational and Cultural Society), որը ՀՅԴ-ին կից կառույց է, հիմնադրվել է 1928 թ. Կահիրեում, մասնաճյուղեր ունի Միջին Արևելքի բոլոր հայկական համայնքներում, Եվրոպայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Հարավային Ամերիկայում, Ավստրալիայում: Միությունն ու-

---

[706] Տե՛ս Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ. զարգացման հեռանկարները, էջ 146:
[707] Տե՛ս նույն տեղում, էջ 147:
[708] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 165:

նի 7 շրջանային վարչություն և 8 մեկուսի մասնաճյուղ: Կենտրոնական վարչությունը գտնվում է Լիբանանում: Համազգայինի երևանյան գրասենյակը հիմնադրվել է 1991 թ., այն ներկայումս գործում է որպես «Համազգային հայ կրթական և մշակութային հիմնադրամ»: Հայ մշակույթին աջակցելու, կրթական գործի կազմակերպման, հայ մանուկների հայեցի դաստիարակության կարևոր և ծանր խնդիրները Սփյուռքի շատ հայահոծ վայրերում իր ուսերին է կրում «Համազգային հայ կրթական մշակութային միությունը»[709]: Սփյուռքում նրա հովանու ներքո գործում են դպրոցներ, մշակութային կենտրոններ: Մեծ ուշադրություն է դարձվում մայրենիի իմացության մակարդակի բարձրացմանը: Համազգային և Սփյուռքի նախարարության միջև կնքված հուշագրի հիման վրա ծավալված համագործակցության արդյունքում կրթական ու մշակութային հիմնախնդիրները ստանում են իրենց լուծումները: Այդ ուղղությամբ կազմակերպված ձեռնարկներն դառնում են առավել զանգվածային և գրավիչ թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում: Համազգային կենտրոնական վարչության հովանու ներքո գործում են 2 ճեմարան, տպարան և «Բագին» գրական-մշակութային հանդեսը[710]:

«Հայ օգնության ֆոնդն» ակտիվորեն մասնակցում է ՀՀ իրականացվող կրթամշակութային ծրագրերի իրականացմանը: Նրա աջակցությամբ շահագործման են հանձնվել տասնյակ դպրոցներ ու մանկապարտեզներ Երևանում և ՀՀ մարզերում: ՀՕՖ-ը բարեգործական երկու այլ կազմակերպությունների հետ («Հայ օգնության միություն» և «Ազնավուրը Հայաստանին») հովանավորել է «Այբբենարանի» տպագրությունը և դրա անվճար

---

[709] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 166:
[710] Տե՛ս նույն տեղում:

բաշխումը ՀՀ հանրակրթական դպրոցների բոլոր 66 հազար առաջին դասարանցիներին[711]: ՀՕՖ-ի գործունեության կարևոր մասն է երեխաների ամառային հանգստի կազմակերպումը Դիլիջանի, Ծաղկաձորի, Հանքավանի, Վայոց ձորի մարզի Հերմոն գյուղի ճամբարներում: 2000 թ. կարևորագույն ձեռնարկումներից մեկն էր Երևանի Զեյթունի թաղամասում տեղակայված երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոնի գործարկումը, որը ժամանակավոր ապաստան է տալիս մայրաքաղաքի և մարզերի՝ տարբեր պատճառներով խնամքից դուրս մնացած 3-10 տարեկան երեխաներին[712]:

1996 թ. իրականացվում է ամերիկահայ բարերարուհի Անուշ Մաթևոսյանի «Մաթևոսյան կրթավճար» հիմնադրամային ծրագիրը, որը նախատեսված է անապահով ընտանիքների այն ընդունակ ուսանողների համար, որոնք ի վիճակի չեն սովորել պետական բուհերի վճարովի ուսուցմամբ բաժիններում: Բարերարուհու ֆինանսական օժանդակությամբ Վանաձորում շահագործման հանձնվեց Անուշ Մաթևոսյանի անվան թիվ 8 միջնակարգ դպրոցը, որն իր որակով և ճարտարապետական լուծումներով ճանաչվեց լավագույնը ողջ Լոռու մարզում: Հայրենանվեր գործունեության համար Անուշ Մաթևոսյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով[713]:

ՀՕՖ-ն առաջինն էր, որ նյույորքաբնակ Հարոլդ և Ժոզեֆ Գյուլամիրյանների հաստատած կրթական «Գյուլամիրյան» ծրագրով ձեռնամուխ եղավ Հայաստանի մանկատների շրջանավարտների կրթությունը շարունակելու խնդրի լուծմանը: Շուրջ

---

[711] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 120:
[712] Տե՛ս նույն տեղում:
[713] Տե՛ս նույն տեղում, էջ 120-121:

10 տարի է՝ կազմակերպության հովանավորությամբ տասնյակ պատանիներ շարունակում են իրենց ուսումը Հայաստանի տարբեր քոլեջներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ներկայումս «Գյուլամիրյան» ծրագրով իրենց ուսումն են ստանում 39 պատանիներ և աղջիկներ, որոնցից 12-ը սովորում են Երևանի, Վանաձորի ու Գավառի պետական և մասնավոր բուհերում, Երևանի, Վանաձորի, գավառի և Հրազդանի միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում: Կրթավճարից բացի՝ ՀՕՖ-ը նրանցից յուրաքանչյուրին ամսական տրամադրում է 7 հազար դրամ կրթաթոշակ և օգնում կենցաղային տարբեր հարցերում[714]:

2000 թ. ամերիկահայ նվիրատվությամբ Գյումրիում բացվեց իր ծնողների անունը կրող «Արմենակ և Եղիսաբեթ Օյունջյան» վարժարանը: Բժիշկը հովանավորում է նաև վարժարանի սաներին, որոնք նյութապես անապահով ընտանիքներից են և իրենց կրթությունը շարունակում են Գյումրու և Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: 2006 թ. «Օյունջյան կրթավճար» ծրագրում ընդգրկված ուսանողների թիվը հասնում էր 50-ի[715]:

ՀՕՖ-ի նախաձեռնությամբ 1994 թ. ստեղծված և նրա հովանավորությամբ մինչ օրս գործող «Տաթև» մանկական նվագախումբը նկատելի հաջողությունների է հասել թե՛ հանրապետական, թե՛ միջազգային բազմաթիվ մրցույթներում՝ իր հայտագրում ունենալով հայկական և արևմտաեվրոպական դասական ու ժամանակակից ստեղծագործություններ:

---

[714] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 120-121:
[715] Տե՛ս նույն տեղում, էջ 122:

Մեծ աշխատանք է կատարում «Հայ օգնության ֆոնդի» հովանու ներքո ստեղծված և նրա շրջանակներում գործող գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամը, որը նպատակ ունի կասեցնելու գիտական մտքի և ներուժի արտահոսքը հայրենիքից և զարկ տալու հայ գիտության և հետազոտական աշխատանքների զարգացմանը դրամաշնորհներ տրամադրելու միջոցով: Արդեն մի քանի տասնյակ հայ գիտնականներ ու գիտական խմբեր ստացել են 5000-ական ԱՄՆ դոլար դրամաշնորհներ[716]:

1990-ական թթ. ՀՕՖ-ի աջակցությամբ շուրջ ութ տասնյակ հայաստանցի բժիշկներ վերապատրաստվեցին ԱՄՆ-ի և Կանադայի առաջատար կլինիկաներում: Վերադառնալով հայրենիք՝ նրանք բազմաթիվ բարեգործական միջոցառումներ կազմակերպեցին գիշերօթիկ դպրոցներում և մանկատներում, տարբեր բուժհաստատություններում հանդես եկան դասախոսություններով՝ կազմակերպելով փոքրիկ սեմինարներ: 2000 թ., երբ նրանք հիմնեցին «ՀՕՖ-ի շրջանավարտ բժիշկների ընկերությունը», կազմակերպչական առավել նոր մակարդակի բարձրացվեց բժշկական բարեգործությունը ՀՀ-ում: Ակտիվորեն մասնակցելով Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային երկրների բժիշկների համար նախատեսված Զալցբուրգյան միջազգային դասընթացներին (առ այսօր 20 մասնագիտությունների գծով վերապատրաստվել է 217 բժիշկ)՝ ընտրվել է բժիշկների խումբ, որը հանձն առավ մասնակցել ՀՕՖ-ի մարզային բժիշկների վերապատրաստման ծրագրին: Վերջինս ստեղծվեց 2004 թ. ՀՕՖ-

[716] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 120-121:

ի նախաձեռնությամբ և «Ջինիշյան հիշատակի հիմնադրամի» համաֆինանսավորմամբ[717]:

2009 թ. ՀՕՖ-ը ԼՂՀ բուժհիմնարկներին տրամադրեց 250 արկղ տարբեր տեսակի բժշկական պարագաներ՝ ներարկիչներ, թթվածնային փողակներ, անզգայացման դիմակներ, հիվանդների խնամքի համար անհրաժեշտ այլ պիտույքներ, նաև մանկական վիտամիններ:

ԼՂՀ առողջապահական համակարգում ծրագրեր իրականացնելու առումով նշանակալից էր 2005 թվականը: Բացի 37 բուժկետերի վերանորոգումից և նրանց բուժսարքավորումներով համալրելու գործընթացից՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի առողջապահության ծառայությունների և ուսումնասիրությունների կենտրոնի հետ համատեղ իրականացվեց Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի և Հադրութի շրջանների բուժանձնակազմի վերապատրաստումը, որն ընդգրկեց հիշյալ շրջանների 296 բուժշաշխատողներին: Լեռնային Ղարաբաղի բոլոր բնակավայրերի բուժկետերի պատասխանատուներն ու բուժաշխատողները՝ 113 մարդ, վերապատրաստվեցին նաև «Մանկական հիվանդությունների ինտեգրացված վարում» ծրագրով: Մինչև տարեվերջ Հադրութի շրջանում հնարավոր եղավ վերականգնել 15, իսկ Մարտակերտի շրջանում՝ շուրջ 240 բնակելի շենքեր[718]:

Իրենց գործունեության տարիների ընթացքում «Հայ օգնության ֆոնդը» Հայաստանում և Արցախում իրականացրել է շուրջ

---

[717] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 123:
[718] Տե՛ս նույն տեղում, էջ էջ 124:

270 մլն ԱՄՆ դոլարի մարդասիրական օգնության և զարգացման ծրագրեր[719]:

Հայանպաստ գործունեությամբ է զբաղվում ամերիկահայ գործարար Սեմ Սիմոնյանը, ով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի հիմնադիրն ու նախագահն է: Բարերարը Հայաստանի ամերիկյան համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամ է, 2000 թվականից՝ ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամ, նաև ՀԲԸՄ փոխնախագահն է: Ս. Սիմոնյանը նաև ԱՄՆ-ի «Էփիջի Լէբս Էյէմ» (Epygi Labs AM) ընկերության հիմնադիրն է, որի մասնաճյուղը Հայաստանում բացվել է 1997 թ.[720]:

«Սիմոնյան» կրթական հիմնադրամը Հայաստանի կրթական և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտում կարևոր դերակատարություն ունի: Հիմնադրամի՝ շուրջ 45 մլն ԱՄՆ դոլարի ներդրմամբ 2011 թ. Երևանում բացվեց «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, որը 12-18 տարեկան հազարավոր պատանիների ու աղջիկների համար կազմակերպում է արտադպրոցական ուսուցում՝ կարևոր ներդրում ունենալով նորագույն տեխնոլոգիաների ոլորտում հայ երիտասարդ մասնագետների պատրաստման գործում: Այսօր Թումո կենտրոններ են գործում նաև Գյումրիում, Դիլիջանում և Ստեփանակերտում: Ուրախալի է, որ մասնաճյուղեր են ստեղծվելու նաև այլ երկրներում[721]:

Ապահովագրական նոր մշակույթ Հայաստան բերեցին Սերգեյ և Նիկոլայ Սարկիսովները՝ հիմնելով «ՌոսԳոսստրախ Արմենիա» ընկերությունը: Ռուսաստանաբնակ բարերար Սերգեյ

---

[719] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 124:
[720] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 398:
[721] Տե՛ս նույն տեղում:

Համբարձումյանի 10 մլն դոլար նվիրատվությամբ կառուցվել է Մատենադարանի՝ նախկին տարածքից չորս անգամ ավելի մեծ տարածքով նոր մասնաշենքը՝ գերհագեցած նորագույն տեխնոլոգիաներով, ձեռագրերի պահպանման ու վերականգնման ամենաարդիական պայմաններով[722]:

«Վարդանանց ասպետներ» համահայկական եղբայրական կազմակերպությունը (Knights of Vartan Benevolent Organization) ստեղծվել է 1916 թ. մայիսի 27-ին, իսկ «Վարդանանց դուստրեր» (Daughters of Vartan) կանանց կազմակերպությունը՝ 1933 թ. ԱՄՆ-ում: Մեծ խորհուրդը ստեղծվել է 1941 թ. մայիսի 25-ին[723]:

Այսօր ԱՄՆ-ի և Կանադայի տարածքում գործում են «Վարդանանց ասպետների» 24 և «Վարդանանց դուստրերի» 23 միավորումներ: Կառույցի նպատակն է խրախուսել իր անդամներին՝ ստանձնելու առաջատար դերակատարություն մշակութային, կրթական, կրոնական, բարեգործական և այլ ոլորտներում, ինչպես նաև ակտիվ գործունեություն ծավալելու տեղական, ազգային և միջազգային մակարդակներում՝ միտված հայ ժողովրդի բարեկեցությանը:

2000-2015 թթ. «Վարդանանց ասպետներ և դուստրեր» կազմակերպությունը «Հայկական դպրոցների աջակցման ծրագրի» շրջանակներում աջակցություն է ցուցաբերել 221 դպրոցների կառուցման և վերանորոգման աշխատանքներին[724]: Օժանդակել են նաև խմելու ջրի խողովակաշարերի, համայնքային կենտրոնի կառուցման, մշակութայի կենտրոնի և թանգարանի վերանորոգման աշխատանքներին:

---

[722] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 404:
[723] Տե՛ս նույն տեղում:

«Ռուսաստանի հայերի միությունը» (ՌՀՄ) ոչ միայն փորձում է միավորել Ռուսաստանի հայությանը, այլև Հայաստանում իրագործում է սոցիալ-տնտեսական, կրթամշակութային, բարեգործական բազում ծրագրեր: ՌՀԱ-ն նպաստում է գիտական և ստեղծագործական մտավորականության գործունեության ակտիվացմանն ու երկրի մտավոր կյանքի աշխուժացմանը՝ կազմակերպելով մրցանակաբաշխություններ, փառատոներ, գիտաժողովներ[725]:

1997 թ. ստեղծված «Վաչե և Թամարա Մանուկյան» հիմնադրամն ունի իր ուրույն ձեռագիրը: Հիմնադրամը Անգլիայում և Վատիկանում ֆինանսավորում է մշակութային և կրթական մի շարք ծրագրեր, 1 մլն դոլար է նվիրաբերել Կիլիկիայի հայոց հաթողիկոսությանը՝ արժանավոր հայ ուսանողներին ամենամյա կրթաթոշակներ տալու նպատակով: Հիմնադրամի միջոցներով վերակառուցվել է Լոնդոնի հայկական Սուրբ Եղիշե եկեղեցին:

Վաչե Մանուկյանը «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի հովանավորներից է: Բարերարի ֆինանսավորմամբ կառուցվել է նաև «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանը Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում, նորոգվել են Մայր աթոռի «Շողակաթ» հեռուստաընկերության և տպարանի շենքերը[726]:

Վաչե Մանուկյանը «HSBC բանկ Հայաստան» ՓԲԸ-ի հիմնադիր բաժնետեր է (նրան է պատկանում բանկի բաժնետոմսերի 30 %-ը), 1995 թ. ընտրվել է բանկի խորհրդի նախագահ: Նա նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է: Բարերարը Հայաստանում բացել է հազարավոր նոր աշխատատեղեր: Նրա ներդրումները Հայաս-

---

[725] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 169:
[726] Տե՛ս նույն տեղում, էջ 396:

տանի տնտեսության մեջ ներկայումս կազմում են մոտ 65 մլն ԱՄՆ դոլար[727]:

2004 թ. օգոստոսին Երևանում ՀՀ կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ, 30 երկրների կրթական հաստատությունների շուրջ 200 ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվեց համահայկական կրթական առաջին համաժողովը: Խորհրդաժողովին մասնակցում էին Սփյուռքում գործող հայկական կրթական կազմակերպությունների ներկայացուցիչները, այդ թվում՝ կրթօջախների տնօրեներ, ուսուցիչներ, կրթության ոլորտի մասնագետներ:

Քննարկվեցին կրթական համակարգի, Հայաստան-Սփյուռք կրթական կապերի ամրապնդման, համագործակցության խորացման հարցեր: Կարևորելով Հայաստանի Հանրապետության կողմից Սփյուռքի յուրաքանչյուր կրթական հաստատությանը աջակցություն ցույց տալու խնդիրը՝ որոշվեց ՀՀ ԿԳՆ-ում ստեղծել կրթական խորհուրդ, իսկ համաժողովները դարձել ավանդական[728]: Դրանից հետո երկամյա պարբերականությամբ Հայաստանում գումարվող խորհրդաժողովները կարևոր խթան դարձան Սփյուռքում կրթական գործի կազմակերպման, կատարելագործման և զարգացման համար: Խորհրդաժողովների ընթացքում քննարկվում էին արտերկրում հայկական կրթօջախների առկա հիմնահարցերը, հստակեցվում կրթության ոլորտում Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման և համագործակցության զարգացման հաջորդական քայլերը: Մինչ օրս կազ-

---

[727] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 396:

[728] Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, էջ 398:

մակերպվել են համահայկական կրթական 7 խորհրդաժողովներ:

2011 թ. սեպտեմբերին Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում քննարկված գլխավոր ուղղությունները լեզվի և կրթության հիմնախնդիրներն էին: Նշված ուղղությամբ արված առաջարկների կատարման նպատակով իրականացվեցին բազմաթիվ միջոցառումներ, հսկայածավալ աշխատանքներ, մշակվեցին և հաստատվեցին համալիր ծրագրեր, որոնց շրջանակներում իրականացվեցին մի շարք կարևորագույն միջոցառումներ: ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպվել է «Արևմտահայերենի միասնական դասագրքի ստեղծման սկզբունքները» գիտաժողովը, որի շրջանակներում Սփյուռքի և Հայաստանի լեզվաբանները քննարկել են Սփյուռքի համար արևմտահայերենի միասնական դասագրքի ստեղծման քերականության կանոնակարգման անհրաժեշտության խնդիրները: Հայաստանի և Սփյուռքի մասնագետներից ձևավորվել է հանձնախումբ՝ համապատասխան դասագիրք ստեղծելու նպատակով[729]:

Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության նախաձեռնությամբ 2011 թ. օգոստոսին Բիքֆայայի (Լիբանան) Սուրբ Աստվածածին վանքում տեղի է ունեցել «Արևմտահայերենի կացությունը այսօր. մարտահրավերներ և առաջադրանքներ» թեմայով համասփյուռքյան կրթական երրորդ համագումարը: Համագումարի կազմակերպական աշխատանքներին գործուն մասնակցություն է ունեցել նաև «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հայկական

[729] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, 19-20 սեպտեմբերի, 2014, Ե., էջ 4:

բաժանմունքը: Ծաղկաձորում տեղի է ունեցել ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնած «Արևմտահայերենի ուսուցման վիճակը Սփյուռքում» համահայկական համաժողովը, որի նպատակն էր բացահայտել Սփյուռքում արևմտահայերենի ուսուցմանն առնչվող հիմնախնդիրները, կառուցողական քննարկումների և վերլուծությունների միջոցով գտնել դրանց լուծման ուղիները, մշակել նպաստող ծրագրեր և քննարկել արևմտահայերենի միասնական դասագրքի ստեղծման հնարավորությունները[730]:

2012 թ. օգոստոսին ՀՀ կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ Ծաղկաձորում անցկացվել է Համահայկական կրթական հինգերորդ խորհրդաժողովը, որտեղ քննարկվել են 2010 թ. չորրորդ խորհրդաժողովի բանաձևի դրույթների իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքները, առկա հիմնահարցերը, մասնագետների պատրաստման և վերապատրաստման, փորձի փոխանակման, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախաշեմին նախատեսվող միջոցառումների, ինչպես նաև Սփյուռքում ազգային կրթադաստիարակչական գործի աջակցությանն ուղղված հետագա համատեղ քայլերը: 2013 թ. փետրվարի 21-ին ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ համատեղ կազմակերպվել է «Արդի լեզվաքաղաքականության հիմնախնդիրները» խորագրով գիտաժողովը: Գիտաժողովն անդրադարձել է տարբեր ոլորտներում մայրենիի պահպանման, դասավանդման, եթերի և մամուլի լեզվի անաղարտության հիմնա-

[730] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 5:

խնդիրներին, ծավալվել են քննարկումներ լեզվաքաղաքականության հիմնախնդիրների շուրջ: Գիտաժողովին մասնակցել են անվանի լեզվաբաններ, հայագետներ, գրականագետներ, լեզվի հիմնախնդիրներով զբաղվող մասնագետներ[731]: 2013 թ. ապրիլին Երևանում կազմակերպվել է «Հայերենն իմ սրտում է» խորագրով համահայկական երիտասարդական համաժողով, որին մասնակցել է 550 երիտասարդ՝ 21 երկրից: Համաժողովի «Լեզվամշակութային հիմնախնդիրներ» նիստի ընթացքում քննարկումներ են ծավալվել համազգային կրթական ծրագրի մշակման շուրջ[732]:

Փետրվարի 21-ը ՀՀ-ում և Սփյուռքում հանդիսավորությամբ նշվում է որպես մայրենիի պետական տոն: Մշակվել և ՀՀ դեսպանությունների միջոցով համայնքային կառույցներին է ուղարկվել տարվա ծրագիրը, էլեկտրոնային տարբերակով պատրաստվել են մայրենի լեզվի ստեղծագործությունների, միջոցառումների ծրագրերի, սցենարների, տեսալսողական նյութերի փաթեթներ, որոնք տրամադրվել են Սփյուռքի շուրջ 1000 հայկական դպրոցի, մշակութային հաստատության, երիտասարդական կազմակերպության՝ տեղերում մայրենիին նվիրված միջոցառումների կազմակերպման նպատակով: Բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպվել Մայրենիի օրվա շրջանակներում, որոնց մասին համապատասխան տեղեկատվություն է տեղադրվել համայնքների և նախարարության կայքում, այլ լրատվամիջոցներով: 2014 թ. ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նախաձեռնու-

---

[731] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 5:

[732] Տե՛ս նույն տեղում:

թյամբ կազմակերպվել է «Արևմտահայերենի խնդիրներ և հեռանկարներ» խորագրով քննարկում, որին մասնակցել են ճանաչված լեզվաբաններ, հայագետներ, գրականագետներ, լեզվական հիմնախնդիրներով զբաղվող մասնագետներ:

2012 թ. «Հայկակն տպագրության 500-ամյակի» և «Երևանը՝ 2012 թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումների շրջանակներում ՀՀ մշակույթի և արտաքին գործերի նախարարությունների առաջարկով սփյուռքահայ բոլոր համայնքներում կազմակերպվել են ծրագրային միջոցառումներ, գրքերի ցուցահանդեսներ, նոր լույս ընծայված գրքերի շնորհանդեսներ, գրական-ստեղծագործական երեկոներ, գրական-երաժշտական ծրագրեր: Այս միջոցառումների շրջանակներում տեղի է ունեցել «Գրքի համահայկական տոնավաճառ»՝ «Համազգային հայ կրթական և մշակութային միության» «Վահե Սեթյան» հրատարակչատան մասնակցությամբ, ՀՀ մշակույթի նախարարության հովանավորությամբ և «Հայաստանի հրատարակիչների ազգային ընկերակցության» ու Համազգային հայաստանյան գրասենյակի կազմակերպմամբ: Համազգային հրատարակչատունն իր մանկապատանեկան, գեղարվեստական, գիտահանրամատչելի և արտասահմանյան գրականության պատկառելի հրատարակություններով մասնակցել է տոնավաճառին, ինչպես նաև այս շրջանակներում անցկացվող բազմաթիվ այլ միջոցառումների[733]: Անցնող տարիներին «Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն» միջազգային հասարակական կազմակերպության անդամ-կազմակերպությունների ուժերով տարբեր

[733] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 5:

երկրներում կազմակերպվել են մայրենի լեզվի նվիրված միջոցառումներ: 2013 թ. փետրվարի 21-ին «Հայ օգնության միության» Վրաստանի վարչության նախաձեռնությամբ Ախալքալաքի երիտասարդական կենտրոնում տեղի է ունեցել մայրենի լեզվի միջազգային օրվան նվիրված միջոցառում՝ «Անաղարտ պահենք մայրենի լեզուն» խորագրով:

ՀՀ նախագահի առաջադրած «Տանը խոսենք հայերեն» դրույթը դարձել էր կարգախոս և քարոզվում է ամենուր:

2012 թ. Երևանի պետական համալսարանի հենքի վրա հիմնվել է հաջողությամբ գործում է «Սփյուռք» ամառային դպրոցը: «Սփյուռք» ամառային դպրոցի և ՀՀ սփյուռքի նախարարության այլ ծրագրերի շրջանակներում կազմակերպվել են բազմաբովանդակ կրթական ծրագրեր: «Սփյուռք» ամառային դպրոցի «Հայոց լեզվի արագացված ուսուցման դասընթաց» (արևելահայերեն և արևմտահայերեն) ծրագիրը դարձել է ամենապահանջվածը: Դասընթացը կազմակերպվել է ըստ լեզվական իմացության մակարդակների տարբերակված ութ խմբերում[734]:

Գործում է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ավանդաբար կազմակերպվող սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացը: Միայն վերջին երկու տարում այդ ծրագրերով Հայաստանում վերապատրաստվել է հայոց լեզվի, հայրենագիտական առարկաների, ազգային երգի և պարի ավելի քան 250 ուսուցիչ, պարուսույց և խմբավար: 2012 թ. հուլիս-օգոստոս ամիսներին ՀՀ ԿԳՆ-ի կողմից իրականացված սփյուռքահայ ուսուցիչների մեկամսյա վերապատրաստմանը մասնակցել է 74 ուսուցիչ՝ 12 երկրից, 2013 թ.՝ 26 ուսուցիչ՝ 14 երկրից: ԿԳՆ-ն վերապատրաստման դասընթաց է կազմակեր-

[734] Տե՛ս նույն տեղում, էջ 7:

պել նաև Վրաստանի հայերեն ուսուցմամբ հանրային դպրոցների ֆիզիկայի և մաթեմատիկայի շուրջ 50 ուսուցչի համար[735]:

Սփյուռքի երիտասարդների համար կազմակերպվող հայրենաճանաչության «Արի՛ տուն» ծրագրի մասնակիցների համար իրականացվում է հայոց լեզվի ուսուցման ծրագիր:

2011 թ. հունվարին Հայաստան ժամանած երիտասարդների համար «Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն» միջազգային հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ Երևանում կազմակերպվել են հայոց լեզվի արագացված դասընթացներ՝ «Եվրոպական կամավորական ծառայություն» ծրագրով:

2011 թ. հոկտեմբերին «Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն» միջազգային հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ Ծաղկաձորում կազմակերպվել է «Միջազգային ամառային համալսարան», որին մասնակցել է եվրոպական 15 երկրի ավելի քան 40 ներկայացուցիչ[736]:

Աշխատանքներ են իրականացվել արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը փոխարկիչ-ծրագրի շտեմարանի (www.translator.am) կատարելագործման և ընդլայնման ուղղությամբ: Շտեմարանը ներկայումս ունի ավելի քան 70 հազար բառային շտեմարան (փոխարկիչում տարեկան ավելանում է 50 հազար բառ)[737]:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից պարբերաբար անցկացվում են հայոց լեզվի ու հայագիտական

---

[735] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 15-16:

[736] Տե՛ս նույն տեղում:

[737] Տե՛ս նույն տեղում, էջ 8:

գիտելիքների օլիմպիադաներ և մրցույթներ, որոնց նպատակը հայերենի իմացության խրախուսումն է: Օլիմպիադաներին և մրցույթներին ակտիվորեն մասնակցում են նաև սփյուռքահայ դպրոցականները: Դրանցից է 2011 թ. հուլիսին Ծաղկաձորում անցկացված համահայկական 5-րդ օլիմպիադան, որին մասնակցել է 14-20 տարեկան 125 պատանի՝ 11 երկրից, իսկ 2013 թ. 6-րդ օլիմպիադային՝ 150 սփյուռքահայ դպրոցական՝ 8 երկրից: Օլիմպիադայի հարցաշարերում ընդգրկվել են հարցեր հայոց լեզվից, գրականությունից, պատմությունից ու մշակույթից: Սփյուռքի կառույցների, հայկական կրթօջախների հետ համատեղ մշտապես աշխատանքներ են տարվել Սփյուռքի կրթօջախներում հայերենի ուսուցման մակարդակի բարձրացման, սփյուռքյան լրատվամիջոցներով հայոց լեզվի գործածության, պահպանման, տարածման քարոզարշավի ծավալման ուղղությամբ[738]:

ՀՀ սփյուռքի նախարարությունն իրականացրել է «Լրատվական Ամերիկայի հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցություն» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում Արգենտինայի, Ուրուգվայի և Բրազիլիայի հայկական կրթօջախների ուսուցիչների վերապատրաստման համար մասնագետ-պրոֆեսոր է գործուղվել տարածաշրջան, որը մեկ ամիս զբաղվել է տարածաշրջանի ուսուցիչների վերապատրաստմամբ, կազմակերպվել են քննարկումներ, տրամադրվել ուսումնաօժանդակ ձեռնարկներ:

---

[738] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 15-16:

2012 թվականից իրականացվում է «Ավստրալիայի հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցություն» ծրագիրը:

2013-2014 թթ. Սիդնեյում կազմակերպվել են հայկական ամենօրյա և մեկօրյա դպրոցների ուսուցիչների մեկամսյա վերապատրաստման դասընթացներ՝ Հայաստանից գործուղված մասնագետի օգնությամբ[739]:

2011 թ. ստեղծվել է ՀՀ սփյուռքի նախարարության էլեկտրոնային գրադարանը (www.lib.mindiaspora.am): Կայքում պարբերաբար ավելացվում են նոր նյութեր, այդ թվում՝ դասագրքեր, ուսումնական գրականություն, մանկական գրքեր, տեսալսողական, հանրագիտարանային նյութեր, գեղարվեստական ստեղծագործություններ: Ներկայումս կայքում տեղադրված է մոտ 1700 նյութ[740]: ՀՀ ԿԳՆ www.spyurg.dasagirg.am կայքում տեղադրված են նոր մեթոդական նյութեր (սցենարներ, բաց դասեր), որոնք պարբերաբար լրացվում, նորացվում են: 2012-2013 թթ. ընթացքում մշակվել և հրատարակվել են արևմտահայերենի «Այբբենարան», «Ընթերցարան-1» և «Ընթերցարան-2» դասագրքերը: Աշխատանքներ են տարվել «Զանգակ» հրատարակչության, Սփյուռքի և ՀՀ մասնագետների ստեղծված խմբի հետ՝ արևմտահայերենի քննարկումները կազմակերպելու ուղղությամբ: Պատրաստվել են մայրենին և ազգային արժեքները գովազդող «Խոսքը», «Արմատը», «Հավատը». «Սկիզբը», «Կանչը» գովազդային տեսահոլովակներ[741]: Հայաստանի և Սփյուռքի

---

[739] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 15-16:

[740] Տե՛ս նույն տեղում:

[741] Տե՛ս նույն տեղում, էջ 10:

մասնագետների հեղինակությամբ ստեղծված տարեկան ավելի քան 100 հազար օրինակ դասագիրք (արևելահայերեն և արևմտահայերեն), ուսումնամեթոդական, ուսումնաօժանդակ նյութեր, մանկական, գեղարվեստական, գիտահանրամատչելի գրականություն, տրամադրվում են սփյուռքյան կառույցներին, կրթօջախներին: Միայն 2011 թ. ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 39 երկրի սփյուռքյան համայնքների տրամադրել է մոտ 47 հազար օրինակ գրականություն և ուսումնաօժանդակ նյութեր, 2012 թ.՝ 28 երկրի հայ համայնքներին մոտ 44 հազար օրինակ գրականություն և ուսումնաօժանդակ նյութեր, 2013 թ.՝ շուրջ 62 հազար օրինակ դասագիրք, այլ ուսումնաօժանդակ նյութեր 30 երկրներում գործող դպրոցներին[742]:

2012 թ. ՀՀ կրթության և գիտության նախարարությունը Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի և Մոլդովայի հայկական դպրոցներին առաքել է մոտ 18 հազար կտոր դասագիրք և ուսումնաօժանդակ նյութ: ՀՀ ԿԳՆ-ն միայն 2012 թ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կրթական հաստատություններին տրամադրել է 30 մլն դրամի դպրոցական գույք, 2013 թ. հատկացրել է դպրոցական գույք և 14.8 հազար օրինակ ուսումնական գրականություն[743]:

Աջակցություն է ցուցաբերվել ռուսախոս միջավայրում բնակվող երեխաների համար հայոց լեզվի և հայոց պատմության ձեռնարկներ մշակող ուսուցիչներին, կրթական գործի կազմակերպիչներին: Հրատարակվել են Ե. Հարությունյանի «Փոքր Միեր» և «Սասունցի Դավիթ», Կ. Եսայանի «Այբբենարան

---

[742] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 11:
[743] Տե՛ս նույն տեղում:

հանրագիտակ», Է. Մանուչարյանի «Այբբենարան», Վ. Արշակյանի «Հայոց լեզվի ուսուցում» (մաս 1, 2) մեթոդական ձեռնարկները, որոնք հատկացվել են հայկական կրթօջախներին: 2011 թ. ՀՀ ԿԳՆ-ի նախաձեռնությամբ ստեղծվել են «Հայոց պատմություն. մեկօրյա դպրոցների համար» ուսումնական ձեռնարկը (հեղ.՝ Ա. Մովսիսյան), «Հայերենի դասագիրքը» (հեղ.՝ Կ. Առաքելյան, Լիբանան), «Հայոց ցեղասպանության մասին դասավանդման մեթոդիկա» մեթոդական ձեռնարկը (հեղ.՝ Ռ. Փիրումյան, ԱՄՆ): 2013 թ. ՀՀ ԿԳՆ-ի կողմից երաշխավորվել է Սփյուռքում ստեղծված երկու ուսումնական ձեռնարկ: Հրատարակվել և Սփյուռքի հայկական շուրջ 200 կրթօջախների տրամադրվել են ՀՀ ԿԳՆ-ի կողմից մասնագիտական դրական եզրակացություն ստացած ուսումնամեթոդական ձեռնարկներ[744]:

Արևմտահայերենը հայաստանյան դպրոցներում դասավանդելու հարցը բարձրացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության առջև: Ներկայումս քննարկվում է «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլանների» երաշխավորված առարկայացանկում արևմտահայերենի ընդգրկման հարցը: Մի շարք ավագ դպրոցներում կազմակերպվում է արևմտահայերենի ուսուցում: ԵՊՀ-ում բացվել է արևմտահայերենի բաժին: ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի լեզվի ինստիտուտում ստեղծվել է Սփյուռքի բաժին, որը զբաղվում է լեզվի ճյուղերի մերձեցման խնդրով:

---

[744] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 11:

ՀՀ սփյուռքի նախարարության, Համաշխարհային հայկական կոնգրեսի և «Ռուսաստանի հայերի միության» հետ համատեղ արդեն մի քանի տարի անցկացվում է «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» ամենամյա մրցանակաբաշխությունը, որի շրջանակներում հայտարարված մրցույթների մեծ մասը նվիրված է Սփյուռքի հայկական համայնքներում հայերենի իմացության բարձրացմանը, Սփյուռքի հայկական կրթօջախներում հայեցի կրթության և դաստիարակության, սերունդների լեզվամշակութային ուծացման դեմ պայքարի գործի նվիրյալների՝ ուսուցիչների ու կրթօջախների, լրատվամիջոցների խրախուսմանը, լեզվապահպանության, հայապահպանության գործի խթանմանը:

2011 թ. ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ ԳԱԱ գրողների, ժուռնալիստների, նկարիչների և կոմպոզիտորների միություններիր հետ համատեղ «Ռուսաստանի հայերի միությունը» կազմակերպել է գիտական և ստեղծագործական աշխատանքների ամենամյա մրցանակաբաշխություն՝ «Լավագույն գիտական աշխատանք», «Արդի հայ արձակ. 21-րդ դար», «Կերպարվեստի լավագույն ստեղծագործություններ», «Լավագույն կոմպոզիտորական և երաժշտագիտական ստեղծագործություն», «Երիտասարդությունն է Հայաստանի հույսը, հայության ապագան» անվանակարգերով[745]:

ՀՀ սփյուռքի նախարարությունը ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ պարբերաբար կազմակերպել է «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորա-

[745] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 13:

գրով ուսանողների և աշակերտների լավագույն գրական ստեղծագործության միջազգային մրցույթները՝ «Երիտասարդությունը և Հայաստանի ապագան», «Երևանը համայն հայության մայրաքաղաքն է» թեմաներով: Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակվում են «Սփյուռքի ժամ», «Մերոնք», «Աշխարհասփյուռ» հեռուստահաղորդումները, որոնց հերոսների մեծ մասը արևմտահայերն են[746]:

Հայաստան-Սփյուռք գործակցության պետական քաղաքականության շրջանակներում երիտասարդությանը հայրենասիրական ոգով, ազգային արժեքներին համահունչ դաստիարակելու, հայապահպանությանը նպաստելու, երիտասարդությանը հայ ժողովրդի անվանի զավակների հետ ծանոթացնելու, նրանց մեջ ազգային արժանապատվության զգացում ներշնչելու համար արդեն չորրորդ տարին է՝ ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ իրականացվում է «Մեր մեծերը» ծրագիրը, որում ներառվել են շուրջ երեք տասնյակ ազգային, մշակութային գործիչների անուններ և իրականացվել հարյուրավոր միջոցառումներ Հայաստանում և Սփյուռքում, պատրաստվել և համայնքներին են տրամադրվել խտասալիկներ, գրքեր, մեծերի մասին բազմաթիվ նյութեր: Հայրենի երախտավորներին նվիրված գիտաժողովներ է կազմակերպում նաև «Համազգային հայ կրթական և մշակութային միությունը»[747]:

Փարիզի «Մաշտոց» միության ղեկավար, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Հիլդա Գալֆայան-Փանոսյանի՝ արևմտահայերենի արագացված ուսուցման մեթոդը կիրառվում է և՛

---

[746] ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 13-14:
[747] Տե՛ս նույն տեղում, էջ 14:

Ֆրանսիայում, և՛ «Սփյուռք» ամառային դպրոցի արևմտահայերենի ուսուցման խմբում: Նշված մեթոդը հեղինակի կողմից ուսուցանվում է նաև ուսուցիչների վերապատրաստման խմբի մասնակիցներին: Շարունակվել է աջակցությունը մայրենի լեզվի տարածմանը և զարգացմանը նպաստող, արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը փոխարկիչ ծրագրին[748]: Նախապատրաստական աշխատանքներ են տարվում հայոց լեզվի հեռուստադպրոց ստեղծելու ուղղությամբ: Առաջին փուլի հեռուստաժամերը նվիրված են լինելու միայն գրական արևելահայերենի ուսուցմանը, հաջորդ փուլում կգործարկվի արևմտահայերենի ուսուցման ծրագիրը: ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում ստեղծված արևմտահայերենի բաժնի աշխատակիցները զբաղվում են արևմտահայերենի քերականության կանոնակարգման, առանձին հայ համայնքներում արևմտահայերենի վիճակի, լեզվապահպանական խնդիրների ուսումնասիրության հարցերով: Ինստիտուտի հետ համատեղ իրականացվում են նաև Մայրենիի օրվան նվիրված միջոցառումներ, գիտաժողովներ, քննարկումներ[749]:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ուսուցիչների վերապատրաստումներ են կազմակերպվել նաև տեղերում, մասնավորապես, Վրաստանում (2011 թ.՝ շուրջ 100 ուսուցիչ համար): «Ավստրալիայի համ համայնքների կրթամշակութային հիմնախնդիրների լուծմանն աջակցություն» ծրագրի շրջանակներում 2013-2014 թթ. ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվել են Ավստրալիայի հայկական կրթօջախ-

---

[748] ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 14:

[749] Տե՛ս նույն տեղում:

ների հայերենի ուսուցիչների, տնօրենների վերապատրաստման դասընթացներ: Սիդնեյի մեկօրյա չորս դպրոցներում (Թարգմանչաց, Թումանյան, Փափազյան և Ալեք Մանուկյան) վերապատրաստման դասընթացներին ներկայացվել են մանկավարժական, մեթոդական ոլորտում տեղի ունեցող արդիական փոփոխությունները, դիտարկվել են մեկօրյա դպրոցների դժվարությունները և դրանց հաղթահարմանը միտված ծրագրեր: Այս աշխատանքին հաջորդել են եռօրյա սեմինարներ, որոնց մասնակցել է մեկօրյա դպրոցների 50 ուսուցիչ: ՀՀ բուհերի և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ են ընդունվել 2012 թ. շուրջ 780 սփյուռքահայ երիտասարդ՝ 20 երկրից, 2013 թ.՝ 660 երիտասարդ՝ 18 երկրից: Անցած երկու տարում Սփյուռքի համար մասնագետների պատրաստման ծրագրով Հայաստանի բուհերին պետպատվերով հատկացվել է 140 տեղ: Այս ծրագրով առաջնահերթությունը տրվում է հայագիտական մասնագիտություններին, սակայն, դեռևս ձևավորված չէ նպատակային ուսուցման հստակ համակարգ[750]:

Հայաստանի բուհերում պետպատվերով սովորող սփյուռքահայ ուսանողների հետ կնքվող պայմանագրերում համայնքներ վերադառնալու պահանջի ավելացմանը վերաբերող առաջարկությունը ՀՀ սփյուռքի նախարարության կողմից ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Սփյուռքի համար մանկավարժական և հայագիտական մասնագետներ պատրաստելու նպատակով կրթական ծրագրեր են իրականացվում ՀՀ մի շարք բուհերում:

---

[750] ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 16:

Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների ինստիտուտը գնահատում է հայրենիքի սահմաններից դուրս հայանպաստ ու ազգանվեր գործունեություն ծավալող մանկավարժների աշխատանքը՝ իր աջակցությունը հայտնելով նրանց մասնագիտական կարողությունները, հմտությունները զարգացնելու գործում: Մեր օրերում հայագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների համար վերապատրաստման դասընթացի անհրաժեշտությունը մեծանում է հատկապես այն համայնքներում, որոնց կրթական հաստատություններում կատարվում է հայագիտական առարկաների կրճատում կամ իսպառ դուրսհանում՝ պայմանավորված ուսուցիչների համապատասխան որակավորման բացակայությամբ և այլ հանգամանքներով: ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կազմակերպած վերապատրաստման ծրագրերը կարևոր քայլ են, որոնք կարող են պայքարի որոշակի միջոց դառնալ՝ հայագիտությունը հայրենիքից դուրս տարածելու ու զարգացնելու:

2016 թ. Սոչիի հայկական համայնքի Ադլերի մասնաճյուղում իրականացվել է «Հայոց լեզվի, գրականության և հայոց պատմության դասավանդման հիմնախնդիրներ» մասնագիտական որակավորման 72-ժամյա դասընթացը, որին մասնակցել են Աբխազիայից և Ռուսաստանից ավելի քան 16 ուսուցիչներ:

Վերապատրաստման հաջորդ ծրագիրը ԵՊՀ հայագիտական հետազոտության ինստիտուտը կյանքի է կոչել 2018 թ. ՌԴ Դոնի Ռոստով քաղաքում: Շուրջ տասը ուսուցիչներ հունիս 5-16-ը հնարավորություն են ստացել մասնակցելու մասնագիտական որակավորման դասընթացին: Վերապատրաստման դասընթացը Դոնի Ռոստովի Նոր Նախիջևան հայկական համայնքի հետ

համագործակցությամբ անցկացրել են ԵՊՀ դասախոսները՝ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն, Հայոց պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Միեր Հովհաննիսյանը և Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Մերի Հովհաննիսյանը: Ծրագրի իրականացման հարցում մեծ աջակցություն են ցուցաբերել համայնքի նախագահ Հարություն Սուրմալյանը, համայնքի գործադիր տնօրեն Սերգեյ Սայադովը, «Դոնի հայերի երիտասարդների միության» (ԴՀԵՄ) նախագահ Գևորգ Գրիգորյանը և ուրիշներ[751]:

Վերապատրաստման դասընթացին մասնակից ուսուցիչները համալրել են իրենց տեսական գիտելիքները, գործնական աշխատանքների միջոցով ձևավորել նաև մասնագիտական հմտություններ՝ հաղորդակից լինելով հայոց լեզվի, գրականության և հայոց պատմության ուսուցման ժամանակակից մեթոդներին, ուսուցման կազմակերպման ձևերին ու հնարներին: Այսինքն՝ վերապատրաստման դասընթացը երկկողմանի նպատակաուղղում ունի. մի կողմից մանկավարժների համար իրականացվում է տեսական գիտելիքների ընդլայնում, մյուս կողմից՝ ուսուցման գործնական հմտությունների ձեռքբերում: Դասընթացի ավարտին ուսուցիչները ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կողմից ստացան որակավորման վկայագրեր, ինչպես նաև գրքեր, որոնք նրանց կարող են օգտակար լինել ուսուցման գործընթացում:

---

[751] Տե՛ս ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, http://www.armin.am/am/news/217#.WykyjyruAK8.facebook:

Նմանօրինակ ծրագրերը կարևոր առաքելություն ունեն, քանի որ նպատակաուղղված են ՀՀ սահմաններից դուրս հայագիտական առարկաների դասավանդման գործընթացի ընդլայնմանն ու զարգացմանը: Ռուսաստանում հայագիտական առարկաների ուսուցման գործընթացն իրականացվում է բազմաթիվ խնդիրների հաղթահարմամբ, որոնց շարքում առաջնահերթ է նշված առարկաներին հատկացվող ժամաքանակի կրճատման հարցի լուծումը: ԵՊՀ-ի կողմից ուսուցիչներին համապատասխան որակավորում շնորհելը կարևոր քայլ և աջակցություն է նշված հարցի լուծման ճանապարհին:

ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ 2008 թ. հոկտեմբերի 14-ին Երևանի պետական համալսարանում ստեղծվեց սփյուռքագիտության ամբիոն և հիմք դրվեց սփյուռքագետ-մագիստրոսների պատրաստմանը: Ամբիոնը տվել է 69 մագիստրոս շրջանավարտ: Մագիստրոսներն ակտիվորեն մասնակցում են ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերին, նրանց մի մասն աշխատում է նախարարությունում և գիտահետազոտական տարբեր հաստատություններում:

ՀՀ սփյուռքի նախարարությունն իրականացրել է «Սփյուռքագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսական ուսուցման պատվերների ձևակերպման գործընթացը: Ամբիոնի մագիստրոսական ծրագրով խորությամբ ուսումնասիրվում է նաև արևմտահայերենը:

ՀՀ սփյուռքի նախարարության պատվերով ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնն իրականացնում է նաև Սփյուռքին նվիրված հետազոտական աշխատանքներ: 2012 թվականից ամբիո-

նին պատվիրվում է թեմատիկ հետազոտությունների ժողովածուն՝ «Սփյուռքագիտություն» (Տարեգիրքը)[752]:

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում իրականացվում է արևմտահայերենի մագիստրոսական ծրագիր: Ուկրաինայում լեզվի մասին գործող օրենքին համանման օրենք է գործում նաև Ռուսաստանում, որի մասին հայկական համայնքների ղեկավարներն իրազեկվել են ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված ԱՊՀ հայ համայնքների ղեկավարների և ներկայացուցիչների համաժողովի ժամանակ: ՌԴ շատ տարածքներում հայոց լեզուն ուսուցանվում է որպես ֆակուլտատիվ (լրացական) առարկա: Որոշ տարածաշրջաններում էլ իշխանություններն անվճար տարածք են տրամադրում՝ հայոց լեզվի դասընթացներ կազմակերպելու համար: Եվրոպական մի շարք երկրներում, ԱՄՆ տարբեր նահանգներում պետությունն է մասնակցում հայոց լեզվի, պատմության ուսուցիչների վերապատրաստմանը:

ՀՀ սփյուռքի նախարարությունը մշտապես աջակցություն է ցուցաբերում մեկօրյա դպրոցների ստեղծման գործին: Մի շարք երկրների համայնքային կառույցների, հայկական կազմակերպությունների հետ աշխատանքների արդյունքում 2012-2014 թթ. ստեղծվել են ավելի քան 60 մեկօրյա նոր դպրոց, հայոց լեզվի ուսուցման դասընթացներ, խմբակներ Ռուսաստանում, ԱՊՀ անդամ երկրներում, Ուկրաինայում, Էստոնիայում, Լատվիայում: Ուսումնասիրվել են այդ երկրների հայ համայնքների կրթական խնդիրները, դպրոցների գործունեության նախադրյալներն ու

[752] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 17:

կարիքները և աջակցություն է ցուցաբերվել ուսումնական փաթեթներով, դասագրքերով, մեթոդական ձեռնարկներով, ուսումնաօժանդակ դիդակտիվ նյութերով, ՀՀ խորհրդանիշներով ապահովելու հարցում[753]: Եվրոպայի գրեթե բոլոր հայկական համայնքներում գործում են հայկական դպրոցներ: Միաժամանակ բացվում են նոր դպրոցներ, որտեղ դասավանդվում է հայերեն:

ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ Վրաստանում գործում է հայկական կիրակնօրյա հինգ դպրոց: ՌԴ հայկական դպրոցների բացման գործընթացում ակտիվորեն ներգրավված է «Ռուսաստանի հայերի միությունը»: Նոր դպրոցների բացմանն աջակցում են նաև հոգևոր կառույցները:

Ուսումնասիրվել է Մոսկվայի թիվ 1650 դպրոցի փորձը, և այդ մասին իրազեկվել Ռուսաստանի հայկական կրթօջախների ղեկավարներին: Պերմում (Ռուսաստան) նախատեսվում է բացել պետական ֆինանսավորմամբ նմանատիպ դպրոց[754]:

ՀՀ սփյուռքի նախարարությունը ՀՀ պետական բյուջեից այլ պետություններում գործող հայագիտական հաստատություններն աջակցություն ցուցաբերելու և նոր ամբիոններ հիմնադրելու վերաբերյալ հարցը բարձրացրել է ՀՀ կրթության և գիտության նախարարության առջև, քանի որ համալսարանական կենտրոնների գործունեությունը համակարգելու գործառույթը դեռևս գտնվում է նախարարության տիրույթում: ՀՀ սփյուռքի նախարարության կողմից այլ պետությունների և ՀՀ համապատասխան գերատեսչությունների մակարդակով կնքվող փաս-

---

[753] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 18:

[754] Տե՛ս նույն տեղում, էջ 19:

տաթղթերում հայագիտական ամբիոնները նյութական ռեսուրսներով, համապատասխան մասնագետներով, անհրաժեշտ գրականությամբ ապահովելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունն իրականացրել է Եգիպտոսում և Սիրիայում հայագիտական ամբիոնների ֆինանսավորում, Երևանի պետական համալսարանն անցկացրել է մի շարք միջոցառումներ՝ Սիրիայի հայագիտական ամբիոնի հետ համատեղ:

2012 թ. նոյեմբերի 27-ին Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի և Զմմառի (Լիբանան) պատրիարքական միաբանության միջև կնքված համաձայնագրով և ՀՀ սփյուռքի նախարարի հրամանով ստեղծվել է համատեղ աշխատանքային խումբ: Մատենադարանի հինգ ձեռագրագետներ գործուղվել են Զմմառի պատրիարքական միաբանություն՝ ձեռագրերի ընտրության, թվայնացման աշխատանքներին մասնակցելու, ձեռագրերը մատենագրելու, մշակելու և առանձին հատորների տեսքով հրատարակելու նպատակով: ՀՀ նախագահի հանձնարարությամբ ընդունվել է ՀՀ կառավարության որոշում՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրերը թվայնացնելու համար անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու վերաբերյալ: Այդ որոշմամբ ՀՀ սփյուռքի նախարարությունը հատկացված 53.5 մլն դրամը, նվիրատվության պայմանագրի համաձայն, ամբողջությամբ փոխանցվել է միա-

բանությանը: Ներկայումս ընթանում են թվայնացման աշխատանքները[755]:

ՀՀ սփյուռքի նախարարությունը հայագիտական կենտրոններին պարբերաբար փոխանցում է նախարարության պատվերով իրականացված հետազոտությունները, ինչպես նաև առաջարկ-երաշխավորություններ՝ հետազոտությունների վերաբերյալ: ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ 2011 թ. սփյուռքահայերի և օտարազգիների համար հայոց լեզվի, հայ մշակույթի և կրոնի դասընթացներ կազմակերպելու նպատակով ֆինանսական օժանդակություն է հատկացվել Վենետիկի «Պո Արաքս» մշակութային կենտրոնին:

ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ 2012 թ. ձևավորվել է հայկական գրադարանների միջազգային համաժողովի գործադիր մարմինը, որի կազմում ընդգրկվել են նաև սփյուռքահայ ներկայացուցիչներ[756]:

2012 թ. ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի և Լեհահայոց մշակույթի ու ժառանգության կենտրոնի միջև հաստատվել է համագործակցություն՝ կենտրոնի հոգածության ներքո գտնվող հրատարակությունների, հնատիպ և հայերեն գրքերի ցուցակը կազմելու և հավաքածուի ընդհանուր նկարագրության աշխատանքներն իրականացնելու նպատակով:

2012 թ. ապրիլ-մայիս ամիսներին ՀՀ մշակույթի նախարարության, Բեռլինի հանրային գրադարանի, Հալլեի Մարտին-Լյութեր համալսարանի «Մեսրոպ» հայագիտական կենտրոնի

---

[755] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 20:

[756] Տե՛ս նույն տեղում, էջ 21:

աջակցությամբ Հալլե քաղաքում կազմակերպվել է «Տառարվեստ և պատկերի հրաշքը. Հայ գրատպության 500-ամյակ» խորագրով ցուցահանդես[757]:

2012 թ. «Գալուստ Գյուլպենկյան» հիմնարկությունը 16 դրամաշնորհ է հատկացրել է 6 երկրներում գտնվող հայկական կրթական հաստատություններին, ներառյալ հայոց լեզվի ուսումնասիրության կենտրոններին[758]:

ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ իրականացվել են Սփյուռքի կրթօջախներին ուսումնական, մեթոդական գրականության, ուսումնաօժանդակ նյութերի տրամադրման, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման, հայոց լեզվի համահայկական օլիմպիադաների, հայագիտական գիտելիքների մրցույթների կազմակերպման պետական ծրագրերը: Նպատակն է Սփյուռքում գործող ամենօրյա և մեկօրյա դպրոցներին, կրթամշակութային այլ հաստատություններին ապահովել անհրաժեշտ և օգտակար ուսումնական, մեթոդական գրականությամբ, ուսումնաօժանդակ, այդ թվում՝ էլեկտրոնային նյութերով:

Ստեղծվել է ՀՀ սփյուռքի նախարարության էլեկտրոնային գրադարանը[759], որը ներառում է գիտահանրամատչելի, հայագիտական, ուսումնական, գեղարվեստական, մանկական գրականություն, տեսագրություններ, այլ նյութեր: Գրադարանը կարող է օգտակար լինել Սփյուռքի կրթօջախներին, ուստի համալրվում է Սփյուռքի կրթօջախների առաջարկությունների հիման վրա:

---

[757] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 21:

[758] Տե՛ս նույն տեղում:

[759] Տե՛ս նույն տեղում:

Գործում է նաև Հայկական սփյուռքի պատմության վիրտուալ թանգարանը:

Հեռուստակամուրջի և համացանցային հեռավար ուսուցման միջոցով ՀԲԸՄ-ի կողմից ստեղծված Հայկական վիրտուալ համալսարանի շնորհիվ իրականացվում է Հայաստանի և Սփյուռքի կրթօջախների միջև գործակցության զարգացման ծրագիր[760]: Հեռուստակամուրջի միջոցով Սփյուռքի կրթօջախների հետ կազմակերպվել են հանդիպումներ, կրթական խնդիրների քննարկումներ և հեռուստադպրոց՝ հայոց լեզվի ուսուցմամբ:

2011-2017 թթ. համագործակցության հուշագրեր են ստորագրվել համահայկական 6 կառույցների («Ռուսաստանի հայերի միություն», «Համազգային հայ կրթական և մշակութային միություն», «Հայ մարմնակրթական ընդհանուր միություն», «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկություն, «Հայ օգնության միություն», «Երկրապահ կամավորականների միություն» ՀԿ) հետ:

Համահայկական կառույցների հետ համատեղ և նրանց աջակցությամբ կազմակերպվել են մի շարք գիտաժողովներ, համաժողովներ և մշակութային միջոցառումներ: Նրանք մշտապես աջակցություն են ցուցաբերել Հայաստանում հաստատված սիրիահայերին և իրաքահայերին:

Հաշվի առնելով Սփյուռքի բազմազանությունը և առանձնահատկությունները՝ ծրագրերն իրականցվել են ըստ տարածաշրջանների և ուղղվել են հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցելուն: Աշխատանքներ են իրականացվել մի շարք տարածաշրջանների երկրների համայնքային

---

[760] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 21:

կառույցների, հայկական կազմակերպությունների հետ մեկօրյա դպրոցների ստեղծման և դրանք դասագրքերով, ուսումնական անհրաժեշտ նյութերով ապահովելու ուղղությամբ:

Պարբերական բնույթ է ստացել հայագիտական գիտելիքների մրցույթների, համահայկական կրթական խորհրդաժողովների կազմակերպումը:

Նկատի ունենալով տարածաշրջանների առանձնահատկությունները, նրանց կարիքների տարբերությունները՝ 2011 թվականից իրականացվել են տարածաշրջանային հետևյալ ծրագրերը.

1. «Հարավային (Լատինական) Ամերիկայի հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցության ծրագիր» (2016 թվականից՝ «Կրթամշակութային աջակցություն հայ համայնքներին» (Ամերիկայի և Ավստրալիայի հայ համայնքներ), 2016 թ. ծրագիր)[761],
2. «Ավստրալիայի հայ համայնքների կրթամշակութային աջակցություն. 2013-2014 թթ.» ծրագիր (2016 թվականից՝ «Կրթամշակութային աջակցություն հայ համայնքներին» (Ամերիկայի և Ավստրալիայի հայ համայնքներ), 2016 թ. ծրագիր),
3. «ԱՊՀ երկրների հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն օժանդակության ծրագիր» (2016 թվականից՝ «Եվրասիական տնտեսական միության երկրների հայ համայնքների կրթամշակութային զարգացմանն աջակցության ծրագիր»),

[761] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) անցած առաջարկությունների կատարման վերաբերյալ, էջ 21-22:

4. «Աջակցություն Մերձավոր Սփյուռքին» ծրագիր:

«Հարավային (Լատինական) Ամերիկայի հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցության ծրագրի» շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես քույր հաստատություններ են դարձել Բունեոս Այրեսի Մխիթարյան վարժարանը և Երևանի Մխիթար Սեբաստացու անվան կրթահամալիրը, ՀՀ պետական բյուջեից աջակցություն է ցուցաբերվել Սան Պաուլոյի համալսարանի հայագիտական ամբիոնին, Բունեոս Այրես է գործուղվել համապատասխան մասնագետ՝ տեղում օժանդակելու երիտասարդների հայեցի կրթությանն ու դաստիարակությանը: Բացի այդ՝ կազմակերպվել են հայաստանյան և սփյուռքահայ մշակութային գործիչների փոխադարձ այցելություններ, իրականացվել են «Հայերի հետքերը Բրազիլիայում», «Հասարակություն, ընտանիք, դեռահաս. արդիական խնդիրներ Հայաստանում և Սփյուռքում» գիտաժողովները և այլն[762]:

«Ավստրալիայի հայ համայնքների կրթամշակութային աջակցություն. 2013-2014 թթ.» ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես տեղի հայկական ամենօրյա և մեկօրյա կրթօջախներ են գործուղվել համապատասխան մասնագետներ՝ դասավանդելու և ուսուցիչներին վերապատրաստելու համար[763]:

2016 թվականից «Հարավային (Լատինական) Ամերիկայի հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցության» և «Ավստրալիայի հայ համայնքների կրթամշակութային աջակցություն. 2013-2014 թթ.» ծրագրերը միավորվել են՝

---

[762] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 464-465:
[763] Տե՛ս նույն տեղում:

վերանվանվելով «Կրթամշակութային աջակցություն հայ համայնքներին» (Ամերիկայի և Ավստրալիայի հայ համայնքներ, 2016 թ. ծրագիր)[764]:

«ԱՊՀ երկրների հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն օժանդակություն» ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել ԱՊՀ երկրների հայկական կրթօջախների ուսուցիչների վերապատրաստում տեղերում և ՀՀ-ում, ձեռք են բերվել և համայնքներին տրամադրվել ռուսախոս և ուկրաինախոս հայերի միջավայրում հայագիտական առարկաների ուսուցման ծրագրեր, դասագրքեր, ուսումնամեթոդական նյութեր: Աջակցություն է ցուցաբերվել հայկական համայնքներում մեկօրյա դպրոցների ցանցի ընդլայնմանը, տարածաշրջանի կրթական հաստատություններին, հայագիտական կենտրոններին, երիտասարդական խմբերի ելույթների կազմակերպմանը Հայաստանում: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են նաև հայագիտական առարկաների գծով աշակերտական օլիմպիադաներ և շարադրության մրցույթներ, հեռուստախաղեր, մշակութային մի շարք այլ միջոցառումներ[765]:

«Աջակություն Մերձավոր Սփյուռքին» ծրագիրն ուղղված է Վրաստանի հայ համայնքի խնդիրների լուծմանը:

Հայաստանում և Սփյուռքում ստեղծագործողներին խրախուսելու, համայնքային կյանքին նրանց առավել ներգրավելու, հայրենիքի հետ կապերն ամրապնդելու համար ՀՀ սփյուռքի նախարարությունը և Համաշխարհային հայկական կոնգրեսը 2010 թվականից կազմակերպում են տարբեր անվանակարգերով մրցույթներ՝ «Լավագույն հայկական կրթօջախ», «Մայրենիի

---

[764] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 464-465:
[765] Տե՛ս նույն տեղում:

լավագույն ուսուցիչ», «Լավագույն հայկական լրատվամիջոց», «Լավագույն երիտասարդական կազմակերպություն», «Մայրենիի պաշտպան», «Երիտասարդական/ուսանողական կազմակերպություն», «Լավագույն մանկական ստեղծագործություն» («Հայրենի՛ք, քեզ այսպիսին եմ տեսնում» և «Մայր իմ անուշ ու անգին» թեմաներով) և այլն, որոնց մասնակցել են մեկօրյա և ամենօրյա դպրոցների հարյուրավոր աշակերտներ, ուսուցիչներ, մասնագետներ:

Անցկացվում են ամենամյա մրցանակաբաշխություններ նաև արվեստի, գրականության, լրագրության և գիտության բնագավառներում, ինչի շնորհիվ մեծ ակտիվություն է նկատվում գիտության և արվեստի ոլորտներում, հատկապես երիտասարդների շրջանում[766]:

Մշակվել և իրականացվում է նաև Հայաստան տեղափոխված սիրիահայերի աջակցության ծրագիրը, որը ներառում է նաև կրթամշակութային ոլորտը:

2012 թ. ամռանը ՀՀ սփյուռքի նախարարի հրամանով ստեղծվել է սիրիահայերի հիմնահարցերով զբաղվող աշխատանքային խումբ: ՀՀ վարչապետի որոշմամբ[767] 2013 թ. ստեղծվել և գործում է Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով՝ ՀՀ սփյուռքի նախարարի գլխավորությամբ: 2012 թ. օգոստոսից մինչև 2016 թ. նոյեմբերն ընկած ժամանակահատվածում կազմակերպվել է Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 38 նիստ: Քննարկվել են 130-ից ավելի հարցեր, յուրա-

---

[766] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 465-466:

[767] ՀՀ վարչապետի որոշումը՝ Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին, 14.1.2013, http://www.e-gov.am/decress/item/11707/:

քանչյուր գերատեսչության անելիքները սիրիահայերին օգնելու հարցում, վեր են հանվել հիմնախնդիրները, մշակվել են դրանց լուծման կառուցակարգերը[768]:

Սիրիահայերին աջակցելու նպատակով կատարվել են փոփոխություններ ՀՀ օրենքներում, ՀՀ կառավարության որոշումներում, մի շարք գերատեսչական ակտերում: Սիրիահայերին ՀՀ քաղաքացիություն շնորհվում է պարզեցված կարգով: Հայաստանում ապրող սիրիահայերից ՀՀ քաղաքացիություն ստացել է ավելի քան 18.000-ը, իսկ 2000-ից ավելին ունի կացության հատուկ կարգավիճակ: Գործում է սիրիահայերի կողմից ստեղծված 4 հասարակական կազմակերպություն, որոնք էլ իրականացնում են բարեգործական ծրագրեր (սննդի, հագուստի, ֆինանսների, կենցաղային իրերի և այլնի բաշխում)[769]:

Լուծվում են սիրիահայերի բնակարանային վարձի, աշխատանքի տեղավորման, մասնագիտական վերապատրաստման (հաշվապահներ, բանկային գործի մասնագետներ, բժիշկներ և այլն) հարցերը: ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով նրանք ծանոթանում են ՀՀ օրենսդրությանը, սովորում են մշակել բիզնես ծրագրեր, իսկ լավագույններին տրվում են վարկեր (մինչև 5 մլն ՀՀ դրամ՝ մինչև 5 տարի ժամկետով, 4 % տոկոսադրույքով): Մոտ 1 մլն ԱՄՆ դոլարի վարկ է հատկացվել, և սիրիահայերի կողմից հիմնվել են 100-ից ավելի բիզնեսներ[770]:

Լուծում են ստացել նաև սիրիահայերի առողջապահական խնդիրները: Պոլիկլինիկական անվճար ծառայություններից օգտվել է 3500-ից ավելի սիրիահայ: Ստացիոնար պայմաններում

---

[768] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 466:
[769] Տե՛ս նույն տեղում, էջ 467:
[770] Տե՛ս նույն տեղում:

անվճար բուժօգնություն է ստացել 1200-ից ավելի մարդ, անվճար իրականացվել են սրտի 60-ից ավելի և այլ բարդ վիրահատություններ[771]: 2000-ից ավելի սիրիահայ երեխաներ հաճախում են դպրոց և մանկապարտեզ, իսկ շուրջ 500 սիրիացի ուսանողներ կրթություն են ստանում Հայաստանի բուհերում: Վերջիններիս ուսման վարձը վճարում են ՀՀ կառավարությունը, ՀԲԸՄ-ն և «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկությունը[772]:

Կազմակերպվել է «Սիրիահայ մշակույթի շունչը Երևանում» խորագրով 16 ցուցահանդես-տոնավաճառ՝ սիրիահայ ձեռնագործ վարպետների (այդ թվում՝ ոսկերիչների և արծաթագործների) և հրուշակագործների մասնակցությամբ[773]:

Հայաստանյան տարբեր ճամբարներում կազմակերպվել է սիրիահայ երեխաների ամառային հանգիստը: Սիրիահայ փոքրիկների համար իրականացվել են նաև մշակութային մի շարք ձեռնարկներ, այդ թվում՝ ամանորյա միջոցառումներ:

Սիրիայում և Հայաստանում սիրիահայերի աջակցության գլխավոր աշխատանքներն իրականացնում են պետությունը, Սփյուռքի ավանդական կուսակցությունները, ՀԲԸՄ-ն, «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկությունը, Հայ եկեղեցին և տասնյակ կառույցներ, կազմակերպություններ, ինչպես նաև անհատ բարերարներ[774]:

Սիրահայերի կրթական, սոցիալական, լեզվական ինտեգրման աշխատանքները կարելի է համարել ավարտված: Շարունակվում են տնտեսական ինտեգրմանն ուղղված արդյունա-

---

[771] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 467:
[772] Տե՛ս նույն տեղում:
[773] Տե՛ս նույն տեղում:
[774] Տե՛ս նույն տեղում, էջ 468:

վետ քայլերը՝ միտված նրանց համար կենսական անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

21-րդ դարասկզբին հայրենիք-Սփյուռք կապերն ընդլայնվում էին նաև առողջապահության ոլորտում: Երրորդ հազարամյակի սկզբին առողջապահության ոլորտում իրականացված քաղաքականության նպատակներն են եղել համակարգի կայուն զարգացումը, սոցիալական արդարության ու համերաշխության սկզբունքներով բնորոշվող առողջապահության համակարգի ձևավորումը, բժշկական օգնության որակի ու մարտչելիության բարձրացումը, բնակչության առողջության պահպանումն ու բարելավումը:

Առողջապահական հաստատությունների մասնավորեցման ռազմավարության իրականացումն ուղղված է եղել ոլորտում սոցիալական և շուկայական սկզբունքների համապատասխանեցմանը, ինչպես նաև ոլորտի զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով առողջապահական հաստատությունների ներդրումային գրավչության բարձրացմանը: Ելնելով ժամանակի պահանջներից, առողջապահական հաստատությունների ներուժի ձևավորման և առողջապահությանը հասցեագրվող ռացիոնալ միջոցների օգտագործման անհրաժեշտությունից՝ իրականացվեց առողջապահական համակարգի օպտիմալացման գործընթացը: 2006 թ. առողջության առաջնային պահպանման ծառայությունները հանրապետության բնակչության համար դարձան անվճար: Ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգի հզորացումը ՀՀ կառավարության կողմից իրականացվող առողջապահական բարեփոխումների առանցքային ուղղություններից էր: Վերջինս արտացոլվել է նաև ՀՀ կառավարության կողմից ընդունված

«Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում»: 2000-ական թթ. շարունակվում և ընդլայնվում է ընտանեկան բժշկության համակարգի ներդրումը՝ որպես ՀՀ բնակչության ու հատկապես անապահով խավի համար առողջության առաջնային պահպանման և ախտորոշիչ ծառայությունների մատչելիության գրավական: Առաջին անգամ մասնագիտացված ստոմատոլոգիական ծառայության մատուցումը 65 տարեկանից բարձր բնակչության տարիքային խմբի համար իրականացվեց պետպատվերի շրջանակներում[775]:

2006 թ. ՀՀ կառավարությունը հաստատեց «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ազատ ընտրության և նրա մոտ բնակչության գրանցման կարգը», որով կանոնակարգվում էր բնակչության կողմից բժշկի ազատ ընտրության և նրա մոտ գրանցման գործընթացը: Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվեց կենտրոնացված կարգով բուժսարքավորումների ձեռքբերումը: Շուտով բուժսարքավորումներով բավարարելու խնդիրը առավելապես ուղղվեց դեպի մարզային առողջապահության համակարգ[776]:

2000-ական թթ. առաջին տասնամյակում բացվեցին ժամանակակից բաժանմունքներ ու կենտրոններ: Այդ ընթացքում ակնհայտ հաջողություններ արձանագրվեցին վարակիչ հիվանդությունների համաճարաբանական վերահսկման ուղղությամբ:

21-րդ դարասկզբին ՀՀ բնակչությանը որակյալ բուժսպասարկում կազմակերպելու և ՀՀ առողջապահական կենտրոններին, հիվանդանոցներին անհրաժեշտ բժշկական սարքավորումներով ապահովելու գործում չափազանց մեծ է Սփյուռքի բազմա-

---

[775] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 480:
[776] Տե՛ս նույն տեղում, էջ 481:

թիվ կազմակերպությունների, կառույցների և անհատ բարերարների դերը: Այդ ամենը, անշուշտ, նպաստում է հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը:

Առողջապահության ոլորտում հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման լավագույն օրինակ է «Ակցիա առողջություն Հայաստան-Ֆրանսիա»[777] (ՀՖԱԱ, Action Santé Arménie France, ASAF) կազմակերպությունը, որը ստեղծվել է 1993 թ. Փարիզում: Կազմակերպության կազմում ընդգրկված են հայ և օտարերկրյա բժիշկներ, որոնք ակտիվացրել են Հայաստանի հետ կապերը Սպիտակի երկրաշարժից հետո: Կազմակերպության հիմնական գործառույթներից են՝ Հայաստանում սրտանոթային վիրահատությունների համար անհրաժեշտ սարքավորումների մատակարումը, մասնագետների վերապատրաստումը, սրտի վիրահատությունների ոլորտում նորամուծությունները: Կազմակերպության ջանքերով 2010 թ. Գորիսում կառուցվել է սրտանոթային հիվանդությունների կենտրոն:

ՀՀ սփյուռքի և առողջապահության նախարարությունների հետ համատեղ կազմակերպվում են սրտաբանության եվրակովկասյան համաժողովներ, որոնց հիմնական նպատակն է բացահայտել և համախմբել աշխարհի հայ սրտաբանների ներուժը՝ հայ ժողովրդի առողջության պահպանման և Հայաստանում բժշկագիտության զարգացմանն ուղղված նորարարական փորձի փոխանակման համար: Կազմակերպվել է 5 համաժողով[778]:

«Հայ բժիշկների միջազգային կոմիտեն» (AMIC, Armrnian medical International Committee) մասնագիտական կարևոր ընկե-

---

[777] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 200:
[778] Տե՛ս նույն տեղում, էջ 201:

ռակցություն է[779]: 1974 թ. Բեյրութում տեղի է ունեցել հայ բժիշկների առաջին միջազգային համագումարը, որից հետո համագումարները դարձել են պարբերական, իսկ միջազգային կոմիտեն ստեղծվել է 1990 թ. Կանադայում: 1994 թ. բացվել է AMIC-ի երևանյան գրասենյակը: Կոմիտեի անդամ ասոցիացիաներ են գործում Ավստրալիայում (Սիդնեյ), Կանադայում (Տորոնտո, Մոնրեալ), Եվրոպայում (Լոնդոն, Փարիզ, Լիոն, Բեռլին, Մոսկվա), Մերձավոր և Միջին Արևելքում, Հարավային Ամերիկայում (Բունեոս Այրես), Միացյալ Նահանգներում (Բոստոն, Նյու Յորք, Ֆիլադելֆիա, Քլիվլենդ, Սան Ֆրանցիսկո, Լոս Անջելես)[780]:

AMIC-ի նպատակն է՝ համակարգել տարբեր միջազգային հայկական բժշկական ասոցիացիաների աշխատանքը, ստեղծել աշխարհի հայ բժիշկների տվյալների բանկ, անհրաժեշտության դեպքում համակարգել բոլոր ջանքերը՝ Սփյուռքի հայկական համայնքներին ու Հայաստանին առողջապահական օգնություն ցուցաբերելու համար, կազմակերպել միջազգային համագումարներ, օգնել հայ բժիշկների վերապատրաստմանը, փորձի փոխանակմանը աշխարհում, Հայաստանում և Արցախում:

Հայ-ամերիկյան առողջության կենտրոնը գործում է 1997 թվականից «Հայ-ամերիկյան մշակութային միության» (ԱՄՆ) ջանքերով և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) օգնությամբ[781]: Կենտրոնի նպատակն է պահպանել և բարելավել մարդկանց առողջությունը, իրականացնել քաղցկեղի (հատկապես՝ կրծքագեղձի), ոսկորների խտության որոշմամբ կոտրվածքների կանխարգելման ծրագրեր, ինչպես նաև նպաս-

---

[779] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 184:
[780] Տե՛ս նույն տեղում, էջ 185:
[781] Տե՛ս նույն տեղում, էջ 179:

տել ընտանիքի առողջության պահպանմանը, առողջ ապրելակերպի քարոզչությանը (կրթական ծրագրերի միջոցով): ՀԱԱ կենտրոնի գործունեության 20 տարվա ընթացքում կատարվել է ավելի քան 450.000 հետազոտություն: Կենտրոնի ուժերով փրկվել է հազարավոր կանանց կյանք, որբությունից փրկվել են բազում մանուկներ (91 քաղաքներում, գյուղերում, Արցախում իրականացվել են 311 բժշկական արտագնա այցելություններ, որոնց ընթացքում կատարվել է 19.216 հիվանդների 24.085 անվճար հետազոտություն): Ստեղծվել է 100-ից ավելի աշխատատեղ[782]: Կենտրոնի աջակցությամբ Արցախում հիմնադրվել է մամոգրաֆիայի կենտրոն: 20 տարի շարունակ կենտրոնը բարեգործական ծրագրերով ամեն ամիս Հայաստանի և Արցախի բոլոր համայնքներում շարժական սարքերի միջոցով կատարում է համընդհանուր հետազոտություններ: Կենտրոնում վիրահատություններ են իրականացնում ԱՄՆ-ից, Գերմանիայից ժամանած հայտնի մասնագետներ[783]:

Միայն «Հայաստան» համահայկական հիմնադրամի ջանքերով ՀՀ-ում և Արցախում կառուցվել է 70-ից ավելի առողջապահական հաստատություն[784]: Բարերար Սամվել Կարապետյանի գլխավորությամբ «Տաշիր» հիմնադրամի ուժերով Արցախում կառուցվեց բժշկական կենտրոն:

Արցախում կատարված վերջին ներդրումներից կարելի է առանձնացնել Սարգիս և Ամալյա Կարապետյանների անվան՝ միջազգային չափանիշներին համապատասխան նոր բժշկական կենտրոնի ստեղծումը, որի շինարարությունը սկսվել էր 2008 թ.:

---

[782] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 179:
[783] Տե՛ս նույն տեղում, էջ 180:
[784] Տե՛ս նույն տեղում, էջ 171:

Այն կառուցվել է Ստեփանակերտ քաղաքի հին քաղաքային հիվանդանոցի անմիջական հարևանությամբ[785]: Կենտրոնը եզակի բժշկական հաստատություն է, որը կարող է բարձր տեխնոլոգիական բժշկական օգնություն ապահովել ԼՂՀ բնակչության համար՝ աշխարհի առաջատար հիվանդանոցների մակարդակին համապատասխան: Բժշկական կենտրոնը հագեցած է ամենաառաջադեմ տեխնոլոգիաներով, նոր սերնդի բուժական, ախտորոշիչ և վերակենդանացման սարքավորումներով, որոնք բացառիկ են անդրկովկասյան ողջ տարածաշրջանի համար: Բժշկական կենտրոնը կարող է ընդունել մինչև 136 ստացիոնար հիվանդների[786]:

Ահա նման շատ օրինակներ կարելի է բերել սփյուռքահայ բազմաթիվ կառույցների և անհատ բարերարների կողմից բժշկական տարբեր կենտրոններ ՀՀ-ում և Արցախում հիմնելու, դրանք բժշկական տարբեր տեսակի սարքավորումներով համալրելու և դրանով հայրենիք-Սփյուռք կապերն ամրապնդելու ու ընդլայնելու ուղղությամբ:

Հայրենիք-Սփյուռք մշակութային առնչություններն առավել գործուն ու խոստումնալից դարձան Հայաստանի Հանրապետության անկախանալուց հետո: 1990-ական թվականների սկզբներին իր գործունեությունը շարունակում էր տակավին 1964 թ. ստեղծված Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն: ՀՀ անկախության հռչակումը կոմիտեին հնարավորություն ընձեռեց ձերբազատվելու անցյալի գաղափարական կապանքներից[787]: 1991 թ. ընդհանուր ժողովում կոմիտեն ընդունեց

---

[785] Տե՛ս Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ. զարգացման հեռանկարներ, էջ 151:
[786] Տե՛ս նույն տեղում:
[787] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ, էջ 126:

իր նոր կանոնադրությունը, որով մերժում էր խտրական մոտեցումը սփյուռքահայ քաղաքական հոսանքների նկատմամբ և կարևորում համագործակցությունը բոլոր քաղաքական ուժերի, հասարակական կազմակերպությունների և կրոնական կառույցների հետ՝ անկախ նրանց գաղափարական համոզմունքներից ու կրոնական դավանանքից[788]: 1990-ական թթ. ընդլայնելով գործունեության շրջանակները՝ այն իր նոր կանոնադրության մեջ արձանագրեց, որ կոմիտեն, լինելով ինքնակառավարվող, ապակուսակցական, քաղաքականապես չեզոք հասարակական կազմակերպություն, «համագործակցում է Սփյուռքի մշակութային, բարեսիրական, հայրենասիրական միությունների, կրթական, գիտական, կրոնական հաստատությունների, երիտասարդական-պատանեկան, մարզական կազմակերպությունների, գործարար շրջանակների, ինչպես նաև անհատ անձանց հետ»[789]:

Կոմիտեն իր հիմնական նպատակն էր համարում սատարել հայրենիք-Սփյուռք կապերի սերտ միահյուսմանը, հայ ժողովրդի միասնության ապահովմանը: Այդ նպատակով Սփյուռք էր առաքում հայերեն գրականություն, թերթեր ու ամսագրեր՝ սփյուռքահայությանը մայր հայրենիքին ծանոթացնելու համար, կազմակերպում էր հայրենիքի և Սփյուռքի գիտնականների, մշակութային, քաղաքական գործիչների փոխայցելություններ: Իր տպագիր օրգանների՝ «Հայրենիքի ձայն» թերթի և «Վերածնված Հայաստան» (1990 թ. վերանվանվեց «Հայրենի եզերք») ամսագրի միջոցով կոմիտեն լուրեր էր տպագրում տարբեր լեզուներով և առաքում Սփյուռքի հայկական համայնքներ: 1990 թ. կոմիտեի

---

[788] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 46, թ. 78, նաև նույնի՝ գ. 53, թ. 1:
[789] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 48, թ. 8, նաև նույնի՝ գ. 137, թ. 1:

կողմից Սփյուռքի ավելի քան 650 կազմակերպությունների և 4500 անհատների առաքվել են հանրապետության կյանքն արտացոլող 30 անուն լրագրեր ու ամսագրեր՝ շուրջ 12 հազար օրինակ՝ ընդհանուր տպաքանակով, 48 անուն հայ ժողովրդի պատմությանը, հայոց լեզվին, մշակույթին վերաբերող գրքեր, գեղարվեստական գրականություն, սփյուռքահայ դպրոցներին՝ շուրջ 12 հազար կտոր դասագիրք[790]: Նույն թվականին կոմիտեի հրավերով Հայաստան են այցելել արտերկրի տարբեր կազմակերպությունների շուրջ 740 ներկայացուցիչներ, արտասահմանի հայ համայնքներն են գործուղվել հանրապետության մոտ 200 արվեստագետներ, գրողներ, գիտնականներ, քաղաքական և հասարակական գործիչներ[791]:

Երկու տարվա ընդմիջումից հետո՝ 1990 թ., կրկին հայրենիք հրավիրվեցին սփյուռքահայ ուսուցիչները՝ վերապատրաստման մեկամսյա դասընթացներին մասնակցելու համար: Նույն թվականին ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ Ղրիմի Յալթա քաղաքում կազմակերպվեց մեծ ծովանկարիչ Հ. Այվազովսկուն նվիրված գիտաժողով, որին մասնակցեցին հյուրեր արտասահմանից և ԽԱՀՄ-ից, կազմակերպվեցին նկարիչների աշխատանքների ցուցահանդեսներ:

1991 թ. կազմակերպվեցին նաև ԱՊՀ երկրների հայ համայնքների դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացները, որոնք նախատեսվեց դարձնել շարունակական: Տեղի հայ համայնքների հետ համատեղ մշակութային օրեր կազմակերպվեցին Տալլինում և Կիևում: Կոմիտեն աջակցեց 1994 թ. հոկտեմբերին Յալթայում հայ համայնքների ներկայացուցիչնե-

---

[790] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 48, թ. 1-2:
[791] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 127:

րի հիմնադիր կոնֆերանսի կազմակերպմանը[792], 1997 թ. սեպտեմբերին՝ Գաբրիել և Հովհաննես Այվազովսկի եղբայրների 185 և 180-ամյա հոբելյանների, տարբեր քաղաքներում հայ մշակույթի օրերի նախապատրաստմանն ու անցկացմանը[793]:

Չնայած ՀՀ կառավարությունը 1991 թ. սեպտեմբերի 4-ի որոշմամբ հավանություն էր տվել Սփյուռքի հետ կոմիտեի համագործակցության ոլորտների ընդլայնման մի շարք գործնական առաջարկներին (Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն վերանվանել Սփյուռքահայության հետ կապերի կոմիտե, կոմիտեի համակարգում լրացուցիչ ստեղծել ներքին Սփյուռքի բաժին, քաղաքագիտական հետազոտությունների և ծրագրավորման կենտրոն, լրատվական գործակալություն՝ Սփյուռքում սեփական թղթակիցների ցանցով), սակայն դեպքերի հետագա զարգացումը հանգեցրեց կոմիտեի գործունեության էական սահմանափակմանը[794]: Կոմիտեն աստիճանաբար կորցրեց հայրենիք-Սփյուռք հաղորդակցության մենաշնորհն ունեցողի իր դերը, քանի որ անմիջական փոխշահավետ կապեր հաստատելու հնարավորություններ ստեղծվեցին, մի կողմից, Հայաստանի պետական, հասարակական կազմակերպությունների, ստեղծագործական միությունների և առանձին անհատների, մյուս կողմից՝ Սփյուռքի համապատասխան կառույցների հետ: Այս պայմաններում հայրենիք-Սփյուռք մշակութային կապերը սկսեցին գլխավորապես զարգանալ Հայաստան վերադարձած հայ ազգային ավանդական կուսակցությունների և նրանց մշակութային մասնաճյուղերի միջոցով:

---

[792] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 128:
[793] Տե՛ս նույն տեղում, էջ 129:
[794] Տե՛ս նույն տեղում:

1992 թ. հուլիսից պետական ֆինանսավորման դադարեցումից հետո կոմիտեն, փաստորեն, զրկվեց իր կանոնադրական խնդիրները կատարելու հնարավորությունից՝ կորցնելով իր երբեմնի նշանակությունն ինչպես հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում: Կոմիտեի գործունեությունը, արդեն ոչ նախկին ակտիվությամբ, շարունակվեց մինչև 1998 թ.[795]: Այս ընթացքում այն հիմնականում զբաղված էր ԱՊՀ երկրների հայության հարցերով, կազմակերպում էր տարբեր կարգի օգնություններ նախկին Խորհրդային Միության հանրապետություններում գործող հայկական դպրոցներին և մշակութային օջախներին, իսկ Սփյուռք ժամանակ առ ժամանակ ուսուցիչներ և դասագրքեր էր ուղարկում: Շարունակելով խիստ սահմանափակ մասնակցություն ցուցաբերել սփյուռքահայ համայնքների, գլխավորապես նախկին Խորհրդային Միության տարածքում մշակութային և կրթական խնդիրների լուծմանը՝ կոմիտեն 1998 թ. դադարեց գործելուց[796]:

1998 թ. ՀՀ կառավարությունը ԱԳՆ կազմում Սփյուռքի հետ աշխատող առանձին կառույց ձևավորեց: Սա նշանակում էր, որ ՀՀ իշխանությունները քայլեր էին ձեռնարկում Հայաստան-Սփյուռք հարաբերությունները համակարգելու ուղղությամբ: Հիշյալ կառույցի նախատիպն էր 1993-1994 թթ. նույն նախարարությունում գործող Սփյուռքի վարչությունը, որը կարճ կյանք ունեցավ, քանի որ Սփյուռքի հետ կապված քաղաքականություն մշակելու և իրագործելու որևէ դեր չուներ: Իրականում հարցերը որոշվում էին ավելի բարձր մակարդակներում[797]:

---

[795] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 130:
[796] Տե՛ս նույն տեղում:
[797] Տե՛ս նույն տեղում:

20-րդ դարասկզբին և 21-րդ դարասկզբին ՀՀ սփյուռքի հետ մշակութային կապի կոմիտեին փոխարինելու եկած ՀՀ արտաքին գործերի նախարարության կազմում ստեղծված գործակալությունը, քարտուղարությունը, ապա պետական կոմիտեն ևս փորձեցին նոր ժամանակաշրջանում աշխուժացնել և ամրապնդել մշակութային կապերը Սփյուռքի հետ: Դրա լավագույն արտահայտություններից էր ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության հետ համատեղ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնների անցկացումը, որոնց նպատակն էր Հայաստանի և Սփյուռքի հոգևոր-մշակութային օջախների միջև կապերի հաստատումն ու համագործակցությունը, գրողների և արվեստագետների կենդանի հաղորդակցությունը, նաև մշակութային ու սպորտային բազմաձև միջոցառումների անցկացմամբ երիտասարդությանը մայր հայրենիքի առօրյային ու կյանքին մասնակից դարձնելը: Փառատոները համայն հայությանը համախմբելու միտում ունեին, ուստի միջոցառումներն ընդգրկում էին ոչ միայն Հայաստանն ու Արցախը, այլև Սփյուռքի բոլոր համայնքները:

1999 թ. ապրիլից մեկնարկեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական բաց փառատոնը (“One Nation, One Culture” Pan-Armenian Cultural Festival), որը համայնքների մշակութային կյանքի զարգացումն առաջին հերթին հարաբերում էր՝ հայրենիքի հետ կենդանի շփումը խթանելով[798]: Փառատոնի շրջանակներում անցկացվեցին Կուբկովիչ ամուսինների (Գերմանիա) «Արարատից Մուսալեռ» խորագրով լուսանկարների ցուցահանդեսը, միջազգային գիտաժողով՝ «Հայկական պատմամշակութային ժառանգության ուսումնասիրման և պահպանության

[798] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 156:

խնդիրները» թեմայով, Հայաստանի և Արցախի նկարիչների ցուցահանդեսը, «Աթանյան» գեղագիտական կենտրոնի (հիմնադրվել է Լոս Անջելեսում 1994 թ. սեպտեմբերին) երեխաների ստեղծագործությունների ցուցահանդեսը, «Չուգասզյան» երգի համույթի (ԱՄՆ) և «Անի» պարախմբի (ԱՄՆ) համերգները Հայաստանում և Արցախում, կինոռեժիսոր Փոլ Գալինյանի (ԱՄՆ) «Սարոյան մարդը, գրողը» ֆիլմի ցուցադրումը Հայաստանում և Արցախում, Հայաստանի ու Սփյուռքի նկարիչների մասնակցությամբ գիտաժողովը Ջերմուկում, «Գերմանիկ Վասպուրական» մշակութային միության (Հալեպ) հայկական տարազների ցուցահանդեսը Հայաստանում ու Արցախում և այլն: Փառատոնի ծրագրով 1999 թ. ապրիլից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում հայրենիք այցելեցին և իրենց արվեստը հայրենակիցներին ցուցադրեցին 500 սփյուռքահայ արվեստագետներ[799]:

2000 թ. ստեղծվեց ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության սփյուռքի հետ համագործակցության վարչությունը, որն էական դեր կատարեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի կազմակերպման և իրականացման գործում: Փառատոնի շրջանակներում նախարարությունը և ԱԳՆ սփյուռքի հետ կապերի գործակալությունը Երևանում կազմակերպեցին «Գիրք-2000» համահայկական ցուցահանդեսը, Պոլսի պատրիարքարանի համատեղ ջանքերով 2000 թ. առաջին անգամ անցկացվեցին պոլսահայ մշակութային օրեր, հայրենիքում հանդես եկավ արգենտինահայ համայնքի «Մասիս» պարախումբը[800]:

---

[799] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 157:
[800] Տե՛ս նույն տեղում:

2004 թ. օգոստոսին 27 երկրներից Սփյուռքի շուրջ 1500 ներկայացուցիչների (համույթներ, անհատ կատարողներ, մշակույթի գործիչներ, հյուրեր) մասնակցությամբ անցկացվեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ» ամենամեծ հայկական փառատոնը[801]: Հայկական կինոարվեստի զարգացմանն էր ուղղված 2004 թ. հուլիսին Երևանում կայացած «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը, որը դարձավ ամենամյա՝ տարեցտարի ընդլայնելով իր շրջանակները[802]:

Հայտնի է, որ 2008 թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրություններից հետո միայն հայրենիք-Սփյուռք համագործակցության բացը լրացնելու և համակարգված աշխատելու նպատակով նախատեսվեց Հայաստանի կառավարության կազմում ստեղծել Սփյուռքի նախարարություն, որն իր գործունեությունը սկսեց 2008 թ. հոկտեմբերի 1-ից: Սփյուռքի նախարարության գործունեության նպատակը Հայաստան-Սփյուռք գործակցության քաղաքականության մշակման, իրականացման, համակարգման և արդյունքների գնահատման միջոցով Հայաստանի Հանրապետության և Հայկական սփյուռքի գործակցության ապահովումն է, հայ ժողովրդի հոգևոր միասնությանը, հայ կրթական, գիտական, մշակութային, տնտեսական, երիտասարդական, մարզական կյանքի զարգացմանը, հայկական աշխարհի բարգավաճմանը նպաստող պայմանների ստեղծումը:

ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումից հետո էլ ամրապնդվեցին ու զարգացան հայրենիք-Սփյուռք մշակութային կապերը: Հայ մշակույթը հոգևոր ամենամեծ ուժն է՝ աշխարհասփյուռ հայությանը հայ պահելու համար, ուստի պատահական

---

[801] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 398:
[802] Տե՛ս նույն տեղում:

չէ, որ հայ համայնքներում ստեղծվում են երգի, պարի խմբեր, մշակութային կենտրոններ, որոնք կարևոր հայապահպան դերակատարություն ունեն: Համայնքների աշխատանքների յուրօրինակ ստուգատես է «Իմ Հայաստան» մշակութային համահայկական փառատոնը, որը կազմակերպվում է երկու տարին մեկ անգամ Երևանում ՀՀ սփյուռքի նախարարության անմիջական ջանքերով[803]: Փառատոնի նպատակն է Հայաստան-Սփյուռք-Արցախ մշակութային գործակցության խթանումը և զարգացումը, ազգային ինքնության պահպանումը, զբոսաշրջության խթանումը, Հայաստանի վերաբերյալ սփյուռքահայերի իրական կարծիքի ձևավորմանն աջակցությունը, համահայկական մասնագիտական ընկերությունների միջոցով Հայաստան-Սփյուռք գործակցության կառուցակարգերի ստեղծումը, համահայկական միասնական տեղեկատվական դաշտի ստեղծումը, Հայաստան-Սփյուռք, Սփյուռք-Սփյուռք մշակութային կապերի և համագործակցության ընդլայնումը, նոր գեղարվեստական համույթների և տաղանդավոր անհատ կատարողների հայտնաբերումը և փառատոնին նրանց մասնակցության ապահովումը[804]:

Փառատոնի շրջանակներում իրականացվում են պարարվեստի օրեր, ասմունքի համահայկական փառատոն (Շուշիում), երգչախմբային արվեստի օրեր, դուդուկի և հայկական այլ նվագարանների փառատոն, հայ երգի օր և այլն:

Հազարավոր երիտասարդներ ոչ միայն ցուցադրում են հայ արվեստի նկատմամբ ունեցած իրենց սերը, այլև ճանաչում են հայրենիքը: Այսպիսով՝ կարևոր ցանց է ստեղծվում. երիտա-

---

[803] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները, էջ 160:

[804] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 451:

սարդները հայրենիքում ստանում են վարպետության դասեր, ծանոթանում Հայաստանի մշակութային նորություններին, սովորում միմյանցից և վերադառնալով այլ երկրներ՝ փորձում են տարածել հայկական մշակույթը: Մասնակիցների թիվն ու ներկայացրած երկրների աշխարհագրությունը տարեցտարի ավելանում է[805]:

2012, 2017 և 2016 թթ. անցկացված միջոցառումների մասնակիցների թիվը շուրջ 4000 է (մոտ 110 պարախումբ, 30 երգչախումբ, շուրջ 50 երաժիշտ, 70 անհատ կատարող և այլն)[806]:

Մշակութային նորույթ էր «Կոմիտաս վարդապետ» փառատոնի կազմակերպումը, որի բուն նպատակն է մեր երգի Մաշտոցի՝ Կոմիտասի երգն ու երաժշտությունը դարձնել Սփյուռքի սեփականությունը, որ հայ երիտասարդը ճանաչի Կոմիտասին, սովորի Կոմիտաս և հպարտանա Կոմիտասով[807]: Փառատոնը նպաստում է նաև կոմիտասյան արվեստի հանրահռչակմանը, բազմաշնորհ հանճարի անցած ուղու նորովի արժևորմանը, նոր լույսի ներքո եղեռն վերապրած արվեստագետի կերպարի ճանաչմանը, Սփյուռքում հայ մշակույթի և մշակութային ինքնության պահպանմանը, Հայաստան-Արցախ-Սփյուռք կապերի ամրապնդմանն ու զարգացմանը, Հայաստանի և Սփյուռքի ստեղծագործողների միջև մշակութային կապերի խորացմանը[808]:

Փառատոները նաև նպաստում են համատեղ ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, մշակույթի ոլորտում համահայկական մասնագիտական ներուժի հայտնաբերմանն ու համախմբմանը, Սփյուռքի ուծացման և լեզվամշակութային ինքնու-

---

[805] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 451:
[806] Տե՛ս նույն տեղում:
[807] Տե՛ս նույն տեղում, էջ 452:
[808] Տե՛ս նույն տեղում:

թյան կորստի դեմ պայքարին, ազգային մշակույթի պահպանության գործին Սփյուռքի ստեղծագործող երիտասարդների ներգրավմանը, համահայկական մշակութային ծրագրերի համատեղ մշակմանն ու իրականացման կառուցակարգերի ստեղծմանը:

2013 թվականից կազմակերպվող «Կոմիտաս վարդապետ» համահայկական փառատոնին մասնակցել է շուրջ 1000 սփյուռքահայ: Փառատոնի շրջանակներում կազմակերպվել են մի շարք համերգներ Երևանում, ՀՀ մարզերում, ինչպես նաև Արցախում[809]:

Արդեն մի քանի տարի է՝ ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպվում են «Համայնքային մշակութային օրեր»՝ ներառելով «Ստամբուլի հայ համայնքի մշակութային օրերը Հայաստանում», «Իրանահայ համայնքի օրեր», «Սիրիահայ համայնքի օրեր» և այլ ծրագրեր[810]: Համայնքն այդ օրերին կարծես յուրօրինակ «հաշվետվությամբ» է հանդես գալիս հայրենիքում, ձգտում է հայրենիքում պատշաճ ներկայացնել իր տարիների գործունեության արդյունքները, կուտակած փորձն ու ծրագրերը:

Աշխարհի ավելի քան հարյուր երկրների հայ համայնքներում գործող սփյուռքյան տասնյակ հազարավոր կազմակերպությունների՝ հոգևոր կառույցների, բարեգործական կազմակերպությունների, հիմնադրամների, մշակութային և կրթական հաստատությունների, կուսակցությունների, հայագիտական կենտրոնների և ամբիոնների, գրախանութների, գրադարանների, մասնագիտական միությունների, անվանի սփյուռքահայերի և

---

[809] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 471:
[810] Տե՛ս նույն տեղում:

անհատ բարեգործների իրականացրած հայապահպան հսկայածավալ գործունեությունը կարիք ունի հավուր պատշաճի լուսաբանման ու ներկայացման: Այս բոլոր կազմակերպությունները և միլիոնավոր մեր հայրենակիցներ, կտրված լինելով Հայաստանից, կարիք ունեն գոնե առցանց ներկա լինելու «հայկական աշխարհում» և վերջինիս կարևոր մաս կազմող հայկական «առցանց մշակութային միջավայրում»[811]:

Հայկական «առցանց մշակութային միջավայրի» կարևորագույն բաղադրիչներից են համահայկական տեղեկատվական պորտալները, հայալեզու և հայաբովանդակ էլեկտրոնային գրադարանները, ինչպես նաև լեզվական և քերականական առանձնահատկություններ ունեցող հայության տարբեր հատվածների փոխըմբռնումը հեշտացնող ամենատարբեր ծրագրային գործիքները[812]:

Ծրագրի շրջանակներում նախարարությունում ստեղծվել և սպասարկվում են հետևյալ կայքերը՝ «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերական՝ hayernaysor.am, էլեկտրոնային գրադարան՝ libmindiaspora.am, Հայկական սփյուռքի պատմության վիրտուալ թանգարան՝ armdiasporamuseum.am, արևմտահայերենից արևելահայերենի և հակառակը թարգմանչական ծրագիր՝ www.translator.am, ՀՀ սփյուռքի նախարարության կայքէջ՝ http://mindiaspora.am/[813] և այլն:

ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ հայկական երաժշտական տարբեր կառույցներ ու կազմակերպություններ Հայոց ցեղասպանության տարելիցին նվիրված համերգնե-

---

[811] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 471:
[812] Տե՛ս նույն տեղում:
[813] Տե՛ս նույն տեղում:

րով հանդես են եկել Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Նիդեռլանդներում, Ռուսաստանում, Բրազիլիայում Արգենտինայում: 2015 թ. ապրիլի 24-ին համաշխարհային նվագախմբի մասնակցությամբ Երևանում տեղի է ունեցել «Վերածնունդ» համերգ-ակցիան: 2015 թ. ապրիլի 24-ին Հանրապետության հրապարակում տեղի է ունեցել Համաշխարհային սիմֆոնիկ նվագախմբի համերգը: 2015 թ. ապրիլի 24-ին Էյֆելյան աշտարակի և Կոլիզեումի լույսերը մարել են՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության տարելիցի: 2015 թ. հուլիսի 19-ին Բիքֆայայում (Լիբանան) տեղի է ունեցել Բեյրութի ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգը՝ սոպրանո Հասմիկ Պապյանի և տենոր Բարսեղ Թումանյանի մասնակցությամբ: 2015 թ. հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 1-ը Բեյրութում տեղի է ունեցել «Գոհար» համույթի համերգաշարը:

ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ իրականացվել են Նունե Եսայանի «Կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք» խորագրով համերգաշարի շրջագայությունները ԱՄՆ-ում, Կանադայում և Եվրոպայում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Նախաձեռնությանն ակտիվ աջակցություն են ցուցաբերել «Համազգային հայ կրթական և մշակութային միության» մասնաճյուղերը, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնախմբերն ու տեղի համայնքային կառույցները: ՀՀ սփյուռքի նախարարությունը Մոսկվայում և Երևանում կազմակերպվել է Նյու Յորքի Սուրբ Վարդան մայր տաճարի «Շուշի» պարախմբի համերգը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին[814]:

---

[814] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 471:

Սերունդներին ազգային արիության և հերոսության, դիմադրության և պայքարի օրինակով դաստիարակելու նպատակով Սփյուռքում գործող կրթամշակութային կենտրոններին ու հասարակական կազմակերպություններին ՀՀ սփյուռքի նախարարության կողմից տրամադրվել են հայկական հերոսամարտերին նվիրված ֆիլմերի խտասալիկներ, ինչպես նաև օնլայն հղումներ: Երիտասարդության համար պարբերաբար կազմակերպվել են ցուցադրություններ: Հայկական կենտրոններում գործող կիրակնօրյա դպրոցներում անցկացվել են հատուկ դասեր՝ հայ ֆիդայական ազատագրական շարժման, հայկական հերոսամարտերի մասին:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի, ինչպես նաև տարածաշրջանային հանձնախմբերի կողմից հրատարակվել են հարյուրավոր տեղեկատվական նյութեր, թերթոններ, լուսանկարների ալբոմներ, գրքեր և քարոզչական բնույթի այլ փաթեթներ, որոնք տարածվել են 100-ից ավելի երկրներում, այդ թվում՝ նաև թուրքալեզու լսարաններում:

«Չինաստանի հայկական ուսանողական միությունը» 2015 թ. ապրիլի 24-ը ներկայացնող չինարեն ու անգլերեն հաղորդագրություններ է պատրաստել, որոնք տարածվել են չինական սոցիալական ցանցերում և տեղեկացնում են Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու անհրաժեշտության մասին: Համայնքը 2015-2017 թթ. Հայոց ցեղասպանության մասին նյութերը թարգմանել է չինարեն, ուսանողների և երիտասարդների շրջանում կազակերպել միտինգներ, հանդես է եկել ցեղասպանությունները դատապարտող կոչերով[815]:

---

[815] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 471:

Ապրելով և արարելով օտար ափերում, տարբեր մշակույթների ազդեցության ներքո և քաղաքակրթական տարբեր միջավայրերում՝ հայը փորձում է կառչած մնալ իր մշակույթին՝ որպես հայության հոգու և ոգու թարգմանի: Եվ պատահական չէ, որ 2017 թ. տվյալներով 100-ից ավելի երկրների հայկական համայնքներում գործում են 637 մշակութային կենտրոններ ու միություններ, հարյուրավոր երգի, պարի համույթներ, ասմունքի խմբեր, երաժշտական, նկարչական դպրոցներ, ուսուցողական խմբակներ և այլն: Այս կառույցների, աշխարհահռչակ անհատ կատարողների, երգիչների, ռեժիսորների, դիրիժորների, նկարիչների շնորհիվ է, որ հայկական համայնքներում շարունակվում է հայ մշակութային կյանքի վերելքը: Այս ամենն օգնում է նաև, որ օտարները ծանոթանան և ճանաչեն հայկական քաղաքակրթությունը, Հայաստանը[816]:

Չափազանց մեծ է սփյուռահայ միությունների դերը հայրենիք-Սփյուռք մշակութային կապերի ամրապնդման գործում: Հայրենիք-Սփյուռք մշակութային հարաբերություններում էական է ՀԲԸՄ-ի դերը: Դեռևս 1988 թ. ՀԲԸՄ-ն հաստատեց «Կարպիս Փափազյան» միջազգային մրցանակը (5000 ԱՄՆ դոլար), որն ամեն տարի շնորհվում էր հայոց մշակույթի կամ Հայ դատի ուսումնասիրման ու ծանոթացման ասպարեզում առանձնակի վաստակ ունեցած ոչ հայ անձնավորության: 1988-2001 թթ. այդ մրցանակին է արժանացել 13 գործիչ[817]: Այդ գործիչներից էին հալածված ազգերի իրավապաշտպան Թեսսա Հոֆմանը (Բեռլին), Հայ դատին մատուցած իր ծառայություններով հայտնի ան-

[816] Տե՛ս Հայոբյան Հ., նշվ. աշխ., էջ 55:
[817] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 139:

գլիացի երիտասարդ պատմաբան Քրիստոֆեր Ուոլքերը (Լոնդոն), բարոնուհի Քերոլայն Քոքսը (Լոնդոն) և այլք[818]:

Հայրենիքում և Սփյուռքում մեծ ներդրում ուներ հատկապես «Ալեք Մանուկյան» մշակութային հիմնադրամը, որը հիմնադրի մահից հետո դադարեց գործել: «Ալեք և Մարի Մանուկյան» մշակութային հիմնադրամը միջոցներով Ալեք Մանուկյանը երեք տարով ստանձնեց Մատենադարանի հովանավորությունը, և հանրապետության համար նյութական ծանր պայմաններում գիտական կարևոր օջախը անխափան շարունակեց իր հետազոտական աշխատանքները: Մատենադարանը ոչ միայն դուրս եկավ դժվարին կացությունից, այլև կատարվեցին բարեփոխություններ. լուծվեցին լույսի, ջեռուցման կենսական խնդիրները, այլապես անհնար կլիներ ձեռագրերը պահպանել, ստեղծվեց համակարգչային կենտրոն, հրատարակվեց «Բանբեր Մատենադարանի» 16-րդ հատորը (որը լույս տեսավ նախորդ համարից 8 տարի հետո), տպագրվեցին նաև մի շարք գրքեր[819]:

Ալեք Մանուկյանը մի շարք համալսարաններում հաստատել էր հայագիտական ամբիոններ, որոնցից էին Միչիգանի համալսարանի Ա. Մանուկյանի անվան արդի պատմության ամբիոնը, նույն համալսարանում՝ Մարի Մանուկյանի անվան հայոց լեզվի և գրականության ամբիոնը: Նրա նվիրատվությամբ Դետրոյտի Ս. Հովհաննես եկեղեցուն կից ստեղծվեց Ալեք և Մարի Մանուկյան հայ արվեստի թանգարանը, որը ընդգրկում էր հայ արվեստի մեծագույն հավաքածուն Հյուսիսային Ամերիկայում[820]:

---

[818] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 140:
[819] Տե՛ս նույն տեղում, էջ 139:
[820] Տե՛ս նույն տեղում:

Հայրենիք-Սփյուռք մշակութային հարաբերություններում սփյուռքահայ մշակութային միություններից աչքի ընկան «Ֆրանսահայ երիտասարդական» (ԺԱՖ, French Amenian Youth Association, ZHAF) և «Ֆրանսահայ մշակութային» (French-Armenian Cultural Association, USFAF)[821] միությունները, որոնց նպատակն էր ֆրանսահայերին և ֆրանսիացիներին ծանոթացնել հայ բազմադարյան պատմությանն ու մշակույթին, ամրապնդել ֆրանս-հայկական բարեկամությունը: Սերտորեն համագործակցելով միմյանց հետ՝ նրանք կազմակերպում էին միջոցառումներ՝ նվիրված հայ ժողովրդի պատմության նշանակալի իրադարձություններին, հայ արվեստի և մշակույթի երիտասարդական փառատոներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ, հայ մշակույթի օրեր, կինոփառատոներ, ՀՀ գեղարվեստական խմբերի ու մենակատարների հյուրախաղեր մի շարք երկրներում: Շոշափելի է այս միությունների ավանդը հայրենիքի հետ կապերի ամրապնդման և ընդլայնման գործում:

Հայրենիք-Սփյուռք մշակութային հարաբերություններում էական դեր է կատարում հատկապես 1947 թ. Բեյրութում հիմնված «Թեքեյան» մշակութային միությունը (ԹՄՄ, Tekeyan Cultural Association), որի նպատակն էր պահպանել հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը, ստեղծել հայկական դպրոցներ, պատրաստել ազգային գործիչներ և օժանդակել հայագիտությանը նվիրված ուսանողներին: Միությունը օգտվում էր Հյուսիսային Ամերիկայի էջմիածնական առաջնորդարանի հովանավորությունից և ՌԱԿ-ի պատգամախոսն էր[822]: ԹՄՄ-ն սփյուռքահայ համայնքներում պարբերաբար կազմակերպել է հայրենի

[821] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 139:
[822] Տե՛ս նույն տեղում:

արվեստագետների և ստեղծագործական խմբերի բազմաթիվ ցուցահանդեսներ, ելույթներ ու մշակութային փառատոներ: Սփյուռքում պահում էր երկու հայկական դպրոց (Բեյրութի Վահան Թեքեյան և Լոս Անջելեսի Արշակ Տիգրանյան), իսկ Հայաստանում գործում էր Վ. Թեքեյանի անունը կրող չորս դպրոց (Երևան, Գյումրի, Ստեփանավան, Արագածոտնի մարզի Կարբի գյուղ)[823]:

Միությունը 1965 թվականից հաստատել է Հայկաշեն Ուզունյանի անվան գրական մրցանակը, որը շնորհվում էր սփյուռքահայ գրողներին՝ նրանց նոր հրատարակությունների համար: Հայաստանի գրողների սոցիալական վիճակը հաշվի առնելով՝ Հ. Ուզունյանը որոշեց 1996 թվականից բարոյական ու նյութական օգնություն ցույց տալու նպատակով գրական մրցանակներ հանձնել հիմնականում Հայաստանի գրողներին ու բանաստեղծներին[824]:

ԹՄՄ վարչության անդամներ Ռիտա և Վարդգես Պալյանները հիմնել են «Ռիտա և Վարդգես Պալյան» մամուլի ամենամյա մրցանակ, որը հիմնականում շնորհվում էր սփյուռքահայ այն լրագրողներին, որոնք իրենց աշխատանքով սատարում էին հայ ժողովրդին, նպաստում նրա պատմության, մշակույթի տարածմանը: Այս մրցանակը առաջին անգամ հայաստանյան լրագրողներին հանձնվեց 1995 թվականին: Իր հերթին Հայաստանի ԹՄՄ-ն էլ հանձնում էր 1998 թ. սահմանված «Ադամանդակուռ ոսկե Արարատ» պատվո նշանը, որը շնորհվել է բարոնուհի Քերոլայն Քոքսին (Անգլիա) և Հաբեթ Թորոսյանին (ԱՄՆ), ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանին, դուդուկահար Ջիվան Գաս-

---

[823] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 144:
[824] Տե՛ս նույն տեղում:

պարյանին հայ մշակույթի տարածման և զարգացման գործում ակնառու ծառայությունների համար[825]:

ԹՄՄ-ն 1990 թվականից իր մասնաճյուղը հաստատեց նաև Հայաստանում: Այն սկզբնական շրջանում հովանավորում էր ՌԱԿ-ը: ՀԹՄՄ-ի նպատակն էր աջակցել ազգային մշակույթի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը՝ որպես հայ ժողովրդի գոյատևման և առաջադիմության կարևորագույն գործոն: Մասնաճյուղեր է հիմնել Գյումրիում, Գորիսում, Մասիսում և Շուշիում: 1997 թվականից Երևանում Սփյուռքի ռամկավարների նվիրատվությունների շնորհիվ սկսեց գործել «Թեքեյան» մշակութային կենտրոնը, որը դարձավ մշակութային կարևոր օջախ[826]:

2000-ական թթ. դրությամբ ԹՄՄ-ն ամբողջ աշխարհում, նաև Հայաստանում և Արցախում, ուներ 51 մասնաճյուղ՝ իր 13 մշակութային կենտրոններով, մամուլով ու դպրոցներով[827]: Մինչև 1997 թ. վերջերը ԹՄՄ-ի Սփյուռքի կենտրոնական մարմինը Հայաստանի ԹՄՄ-ին ֆինանսական աջակցություն էր ցույց տալիս, հետո դադարեցրեց հատկացումները: ՀԹՄՄ-ն հրատարակում էր գրքեր, կազմակերպում համերգներ, ցուցահանդեսներ, Սփյուռքի կրթօջախների համար նկարահանում տեսաֆիլմեր, Երևանում հրավիրում արտերկրի երգահանների հեղինակային համերգներ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ արշավախումբ կազմակերպում՝ Արցախի և պատերազմից տուժած այլ շրջանների պատմամշակութային հուշարձանները վերականգ-

---

[825] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 664:
[826] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 145:
[827] Տե՛ս նույն տեղում:

նելու համար, հովանավորում էր որբ երեխաներին և ուսանողներին, կազմակերպում նրանց կրթական հանգիստը և այլն[828]:

ԹՄՄ-ն Սփյուռքի ամենահայտնի և հեղինակավոր կազմակերպություններից էր, որն իր գոյության ավելի քան յոթ տասնամյակի ընթացքում անգնահատելի դեր է կատարել և շարունակում է կատարել գրական-մշակութային և կրթական ասպարեզներում, հայապահպանության գործում ընդհանրապես: Մեծ է «Թեքեյան» մշակութային միության ներդրումը Հայաստանի մշակութային կյանքի զարգացման գործում, ինչպես նաև սփյուռքահայության կյանքում, հատկապես հայրենիք-Սփյուռք փոխճանաչողության և մշակութային առնչությունների բնագավառում[829]:

Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում մեծ դերակատարում ունեցավ նաև «Համազգային հայ կրթական և մշակութային միությունը», որի նպատակն է պահպանել, զարգացնել ու տարածել հայ մշակույթը՝ Հայաստանի ու համայն հայութեան գոյատևման առաքելությամբ[830]:

Համազգայինի կենտրոնը 1947 թ. փոխադրվել է Բեյրութ: ՀՀԿՄՄ կենտրոնական վարչությանը կից գործում էին կրթական, տնտեսական, հրատարակչական, դասագրքերի, շինարարական, ռադիոժամի հանձնախմբեր: Համազգայինը մի շարք երկրներում ուներ շուրջ 50 մասնաճյուղ[831]:

Հայաստան-արտերկիր մշակութային կապերն ամրապնդելու, փոխադարձ այցելություններ ու մշակութային ծրագրեր մշակելու համար Համազգայինը Հայաստանում ստեղծեց վարչու-

---

828 Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 146:
829 Տե՛ս նույն տեղում, էջ 145:
830 Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 665:
831 Տե՛ս նույն տեղում:

թյուն (նախագահ՝ Ռ. Դավոյան), որի նախաձեռնությամբ համագործակցության պայմանագրեր կնքվեցին ԵՊՀ-ի և Բեյրութի հայագիտական բարձրագույն հիմնարկի, Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի և Բեյրութի Բարսեղ Կանաչյան երաժշտանոցի միջև: Հայաստանում գործում էր «Համազգայինի թատրոնը» (ղեկ.՝ Ս. Սարգսյան), Ախալցխայում Համազգայինը հիմնել էր երաժշտական դպրոց, Շուշիում հովանավորում էր Արամ Մանուկյան վարժարանը, Երևանում՝ Խրիմյան Հայրիկի անվան դպրոցը և այլն[832]:

Համազգայինի հայաստանյան գրասենյակը նաև իր օժանդակությունը բերեց «Մեկ ազգ, մեկ հայրենիք» փառատոնի և Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակելու 1700-ամյակի միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին, ինչպես նաև արտերկրի թատերախմբերը, պարախմբերը, երգչախմբերը հայ հասարակությանը ծանոթացնելու գործին:

1997 թ. լիբանանահայ գործարար, բարերար Հարութ Խաչատուրյանը Գյումրիում հիմնել է «Գոհար» սիմֆոնիկ նվագախումբ-երգչախումբը (KOHAR Symphony Orchestra and Choir) մոր՝ Գոհար Խաչատուրյանի հորդորով և նրա պատվին: Անցնող տարիների ընթացքում Խաչատուրյանները Հայաստանում ստեղծել են 250 կայուն աշխատատեղ՝ միլիոնավոր դոլարների ներդրում կատարելով մշակույթի ոլորտում[833]:

Համույթը դարձել է ամենասիրելի և կատարյալ խումբը ոչ միայն Հայաստանի, այլև սփյուռքահայ հանդիսատեսի համար: Այն բազմաթիվ համերգներով հանդես է եկել աշխարհի տարբեր

---

[832] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 147:
[833] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 185:

երկրներում և դարձել է հայկական ազգային մշակույթի պահպանման և տարածման յուրօրինակ «դեսպան»[834]:

Թվարկված կազմակերպություններն ու հիմնադրամները համահայկական բնույթի են, քանի որ իրենց մասնաճյուղերն ունեն տասնյակ երկրներում առկա համայնքներում, ընդ որում՝ առավելի խոշոր կառույցները անկախությունից հետո կա՛մ գլխադասային մարմինը փոխադրեցին հայրենիք, կա՛մ գրասենյակներ բացեցին Հայաստանում:

21-րդ դարում էլ ավելի սերտացան, ամրապնցվեցին հայրենիք-Սփյուռք գրական կապերը: Հայրենիքի հետ սերտ առնչություններ ունեին սփյուռքահայ նշանավոր բանաստեղծներ Վահրամ Հաճյանը, Ալիսա Կիրակոսյանը, Ազատ Մաթյանը, Զարեհ Խրախունին, Զահրատը, Համբիկ Մարտիրոսյանը, Վարանդը (Սուքիաս Քյուրքչյան) և ուրիշներ, արձակագիրներից՝ Սուրեն Ասատրյանը, Լևոն Մինասյանը, Պողոս Սնապյանը, Վահե Օշականը, Թորոս Թորանյանը, Պետո Սիմոնյանը, Ռուբեն Հովհաննիսյանը (Ռուբեն Բէն), Խորեն Արամունին (Քեշիշյան) և այլք: Նրանցից շատերը հանդես են եկել դասախոսություններով Հայաստանի և Արցախի մի շարք հաստատություններում: «Հայաստանի գրողների միության» անդամներ են բանաստեղծուհիներ Անուշ Նագաշյանը, Դայանա Տեր-Հովհաննիսյանը, Վեհանուշ Թեքեյանը, Շուշիկ Տասնապետյանը, գրող և թարգմանիչ Ռաֆֆի Քեբաբջյանը («Հայաստանի գրողների միության» լիազոր ներկայացուցիչը Գերմանիայում), ռեժիսոր, դերասան, գրող և թարգմանիչ Արմեն Գոդելը, Ստամբուլի «Մարմարա» օրաթերթի

[834] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 185:

խմբագիր, գրող և հրապարակախոս Ռոպեր Հատտեճյանը և ուրիշներ[835]:

Հայաստան-Սփյուռք գրական կապերի ամրապնդման գործում կարևոր դերակատարում ունի «Հայ գրողների միությունը»: Այն ներառված է «Հայաստանի գրողների միության» կազմում և պարբերաբար կազմակերպում է հայ գրողների համահայկական համաժողովներ: Նպատակն է բացահայտել ու միավորել ամբողջ աշխարհի հայ գրողների ներուժը: Տեղի է ունեցել գրողների համահայկական 7 համաժողով՝ նվիրված հայ գրականությանն ուղղված արդի մարտահրավերներին, գրական նոր սերնդին, հայ գրքին և այլ հիմնախնդիրների: Միության մասնաճյուղեր գործում են տարբեր երկրներում[836]:

Կայացել են նաև օտարագիր հայ գրողների համաժողովներ, որոնցում քննարկվել են ազգային գրականությանը, օտար միջավայրում հայ գրականության վերջին զարգացումներին, օտարագիր հայ գրողների ստեղծագործությունների վրա ցեղասպանության ազդեցությանը, համաշխարհայնացմանը և ազգային ինքնությանը վերաբերող հարցեր[837]:

Վերը նշված համահայկական կառույցներից բացի՝ Հայաստանում և Սփյուռքում գործում են նաև բարեսիրական, հասարակական բազմաթիվ այլ կազմակերպություններ, հիմնադրամներ, տեղական կառույցներ, որոնց գլխավոր նպատակը տարբեր ոլորտներում մարդասիրական օգնություն ցուցաբերելն է, գիտատեխնիկական և կազմակերպչական կարողությունների ներդրումը՝ ամրապնդելով Հայաստան-Սփյուռք հարաբերու-

---

[835] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 185:
[836] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 203:
[837] Տե՛ս նույն տեղում:

թյունները: Կարող ենք առանձնացնել «Հայկական Կարիտասը», Նորարար փորձառական արվեստի կենտրոնը («ՆՓԱԿ»), «Օգ-նեմ», «Օյունջյան» հիմնադրամները, «Սիրիահայերի հիմնա-խնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ն, «Հալեպ» հայրենակ-ցական բարեսիրական ՀԿ-ն և այլն[838]:

Երաժշտության բնագավառում ևս Սփյուռքի և հայրենիքի միջև հաստատվեց ջերմ համագործակցություն: Օտար ափերում ապրող հայրենակիցներին հայկական ազգային երգերով ապ-րեցնելու, նրանց ոգի և հավատ ներշնչելու գործում շարունակում էին վիթխարի աշխատանք կատարել Լոս Անջելեսի «Սիփան» (ղեկավար՝ անվանի երաժշտագետ, երգահան, խմբավոր, գրող և լրագրող Հենրիկ Անասյան), Փարիզի «Սիփան-Կոմիտաս» (ղեկավար՝ ֆրանսահայ կոմպոզիտոր, խմբավար Կարպիս Ափրիկյան), Մարսելի «Սահակ-Մեսրոպ» և Նիսի «Սայաթ-Նո-վա» (հիմնադիր՝ Խաչիկ Ելմազյան), Բուենոս Այրեսի «Արաքս» (ստեղծվել է 1957 թ., ղեկավար՝ արգենտինահայ անվանի երգա-հան և խմբավար Ժան Ալմուխյան) երգչախմբերը[839]:

Անցյալի գաղափարական կապանքների փլուզումը հնարա-վորություն ընձեռեց սփյուռքահայ մեր նշանավոր ստեղծագործ անհատներին վերադառնալու հայրենիք և զարկ տալու նրա մշակութային վերելքին: 17-ամյա ընդմիջումից հետո նորից Երևանի օպերայի թատրոնի գլխավոր նվագավարի իր պաշտո-նին անցավ դիրիժոր Օհան Դուրյանը: ՀՀ մշակույթի նախարա-րի հրավերով Երևան տեղափոխվեց և 1997 թ. ապրիլին Հայաս-տանի պետական կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր նշանակվեց ամերիկահայ երա-

838 Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 162:
839 Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 149-150:

ժիշտ-խմբավար Արամ Ղարաբեգյանը, որի շնորհիվ կարճ ժամանակամիջոցում նորաստեղծ նվագախումբը հասավ մեծ նվաճումների[840]:

Հայրենի երաժշտության զարգացմանը իրենց նպաստն են բերել ամերիկահայ նշանավոր կոմպոզիտոր Ալան Հովհաննեսը և Ա. Խաչատրյանի գրեթե բոլոր դաշնամուրային երկերի լավագույն մեկնաբան, պոլսահայ դաշնակահար, կոմպոզիտոր Շահան Արծրունին, Վիեննայի օպերային թատրոնի մենեղգչուհի, բազմաթիվ միջազգային մրցույթների դափնեկիր Սոնա Ղազարյանը, Ջուլիարդի կոնսերվատորիայի մագիստրոս, դաշնակահարուհի ամերիկահայ Լյուսի Իշխանյանը, պոլսահայ դաշնակահար Սայաթ Զամանը, ֆրանսահայ ճանաչված դիրիժոր Նվարդ Անդրեասյանը, ամերիկահայ կոմպոզիտոր Վազգեն Մուրադյանը, Կանադայի բարձրագույն շքանշանի արժանացած սիմֆոնիկ նվագավար Ռաֆֆի Արմենյանը, ամերիկահայ Մարիամ Գետիկյանը, արգենտինահայ հայտնի կոմպոզիտոր Ալիսիա Թերզյանը, ամերիկահայ դաշնակահար, կոմպոզիտոր Վաչե Մանգրյանը, ֆրանսահայ խմբավար Ալեքսանդր Սիրանոսյանը և ուրիշներ[841]:

Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի գործունեության կարևորագույն սկզբունքներից մեկը արտասահմանյան երաժշտական գործիչների հետ համագործակցությունն էր: Լորիս Ճգնավորյանի կազմակերպած սփյուռքահայ խմբավարների փառատոնին մասնակցեցին կանադահայ սիմֆոնիկ խմբավար Հարութ Ֆազլյանը, ամերիկահայ խմբավար Ջորջ Փեհլիվանյա-

---

[840] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 151:
[841] Տե՛ս նույն տեղում, էջ 149-150:

նը, կանադահայ դիրիժոր Նորայր (Նուրհան) Արմանը և ուրիշներ[842]:

Հայրենիք-Սփյուռք առնչություններում անգնահատելի է հատկապես աշխարհահռչակ երգիչ, դերասան, բազմաթիվ երգերի հեղինակ Շառլ Ազնավուրի կատարած դերը: Շ. Ազնավուրը նաև բանաստեղծ է, բարեգործ և հասարակական գործիչ: Նա եղել է ՀՀ հատուկ հանձնարարություններով Հայաստանի դեսպան ՅՈՒՆԵՍԿՕ-ում: Այս պաշտոնում նա ՅՈՒՆԵՍԿՕ-ի ընդհանուր տնօրենի ուշադրությունն է բևեռել Հայաստանի բազում կարիքների վրա, հատկապես կրթության բնագավառում: Հայրենիքում նրա անունով են կոչվում հրապարակներ, փողոցներ, դպրոցներ: Հայրենիքում Շ. Ազնավուրի երկար սպասված բարեգործական համերգները տեղի ունեցան և՛ 1990-ական, և՛ 2000-ական թթ.:

Հայրենիք-Սփյուռք մշակութային առնչություններում կարևոր տեղ է զբաղեցնում թատերական կյանքը: Այս առումով նշանակալից էր Երևանում սփյուռքահայ թատրոնների անդրանիկ փառատոնը, որը կարևոր իրադարձություն էր ոչ միայն հայրենիքի, այլև Սփյուռքի վերջին տարիների մշակութային կյանքում[843]: Տասներկու օր տրած փառատոնի ընթացքում Երևանի, ապա Գյումրիի և Վանաձորի հազարավոր բնակիչներ դիտեցին մի շարք թատերական ներկայացումներ: Սփյուռքահայ թատրոնների փառատոնին հրավիրված 12 թատերախմբերից մասնակցեց միայն 6-ը[844]: Դրանք էին՝ ԱՄՆ-ից «Հայաստանի թատերական գործիչների միության» պատվավոր անդամներ Նորա

---

[842] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 152:
[843] Տե՛ս նույն տեղում:
[844] Տե՛ս նույն տեղում, էջ 153:

Արմանի և Ժիրայր Փափազյան զույգը՝ «Երկու դերասանի թատրոնը», Փարիզի Զոլաքյան մենաթատրոնը, Հալեպի Ադամյան թատերախումբը՝ ՀԲԸՄ ՀԵ ընկերակցության թատերախումբը, Իրանի «Փորձնական թատրոնը», Մոսկվայի հայկական դրամատիկ թատրոն-ստուդիան, սփյուռքահայ ուսանողների՝ Երևանում գործող «Բեմ» թատրոն-արվեստանոցը: Փառատոնի «Վահրամ Փափազյան» գլխավոր մրցանակը շնորհվեց Լոս Անջելեսի «Վարդան Աճեմյան» թատերախմբին: Հասույթը հատկացվեց հայրենիքի վերակառուցման աշխատանքներին[845]:

Սփյուռքահայ փառատոնի նպատակն էր փոխշփում ստեղծել սփյուռքահայ թատրոնների միջև, կապ հաստատել հայ համայնքների և հայրենիքի միջև: Նախատեսվեց փառատոնը դարձնել ավանդական՝ երեք տարին մեկ Հայաստանում հավաքել սփյուռքահայ լավագույն թատերախմբերին, սակայն հաջորդ տարիներին համանման փառատոն հայրենիքում այլևս չկայացավ:

Ողջ Սփյուռքի մասշտաբով զարգանում էր նաև հայկական կինոարվեստը: Հանրությանը հայկական ֆիլմարվեստին ծանոթացնելու, հայկական ֆիլմերի մասնակցությունը միջազգային կինոփառատոներին ապահովելու համար 1991 թ. Լոս Անջելեսում Զ. Արևշատյանի և Ա. Պետրոսյանի նախաձեռնությամբ հիմնվեց «Հայկական ֆիլմարվեստի միությունը», որը ստանձնեց Երևանի «Հայֆիլմ» ընկերության հեղինակային իրավունքների պաշտպանությունը[846]:

Հայկական ֆիլմարվեստի զարգացմանն իրենց նպաստն են բերել ֆրանսիական ակադեմիկայի ամենահին անդամ, «Գոն-

---

[845] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 153:
[846] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 66:

կուր» մրցանակի դափնեկիր, սփյուռքահայ նշանավոր կինոռեժիսոր Անրի Վեռնոյը (Աշոտ Մալաքյան), կանադահայ նշանավոր կինոռեժիսոր, դրամատուրգ և թատրոնի գլխավոր ռեժիսոր Ատոմ Էգոյանը, նշանավոր լուսանկարիչ, գրող բեմադրիչ Փոլ Գալինյանը, Հայոց ցեղասպանությունը վերապրողներից՝ Մայքլ Հակոբյանը, ամերիկահայ հանրահայտ դերասանուհի Նորա Արամյանին (էքսերջյան կինոյի գծով Հայաստանի մշակույթի նախարարության ներկայացուցիչը ԱՄՆ-ում և Ֆրանսիայում), կինոռեժիսոր Դոն Ասկարյանը, ով ստեղծագործել է Բեռլինում, ավստրիահայ նշանավոր պատմաբան, կինոգոծիչ, կինոռեժիսոր Արտեմ Օհանջանյանը, ֆրանսահայ դերասան և ֆիլմարտադրող Սերժ Ավետիքյանը և ուրիշներ[847]:

Կինոռեժիսուրայի ասպարեզում մնայուն դեմքեր դարձան Անրի Վերնոյը (Աշոտ Մալաքյան), Սերգեյ Փարաջանովը, Էդմոնդ Փելեշյանը, Կարեն Շահնազարովը և շատ ուրիշներ[848]:

Հայրենիքի հետ սերտ կապ էին պահպանում նաև սփյուռքահայ նկարիչները: Սփյուռքահայ կերպարվեստագետներից հայրենի նկարչության զարգացմանը իրենց նպաստն են բերել ամերիկահայ ճանաչված նկարիչներ Լևոն Ժամկոչյանը և Մարկոս Գրիգորյանը, ֆրանսահայ նշանավոր նկարիչներ Գառզուն (Գառնիկ Զուլումյան), Ռիշար Ժերանյանը, Ժասմենը (Հովհաննես Սեմերջյան) և ուրիշներ: Նրանք իրենց նկարների ցուցահանդեսներից ստացված հասույթները հատկացրին աղետից տուժած հայրենիքի վերականգնմանը: Հայրենիքում բացվեցին սփյուռքահայ մի շարք նկարիչների՝ Խաչատուր Գևորգյանի, Զարեհ Մութաֆյանի (Վերշա), Վարազ Սամվելյանի, Ժորժ Հա-

---

[847] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 153:
[848] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 59:

կոբյանի, Արշակ Գառնիկյանի, Մայիս Մխիթարյանի, Աշոտ Զորյանի, Սինարի (Սինասյան), Ռազմիկ Հաջիկյանի, Վազգեն Թութունջյանի, Հարություն Պզտիկյանի, Գրիգոր Պետրոսյանի և մյուսների ցուցահանդեսները[849]:

Արվեստի ոլորտում հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում կարևոր նշանակություն ունի «Աշխարհի հայ նկարիչների միությունը» (Union of the Wold Armenian Painters), որը գործում է 2009 թ. դեկտեմբերից: Միության նպատակն է հավաքագրել աշխարհով մեկ սփռված հայ կերպարվեստագետներին, ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս կազմակերպել ցուցահանդեսներ, մրցույթներ՝ ներկայացնելով հայ կերպարվեստը, պատմությունն ու մշակույթը: Միությունը կազմակերպել է մի շարք ցուցահանդեսներ, հրատարակել պատկերագրքեր՝ նվիրված հայոց պատմության հիշարժան իրադարձություններին և ազգային նշանավոր գործիչներին[850]: Միությունն աջակցում է նաև Սփյուռքի տարբեր համայնքներում խաչքարերի տեղադրման, եկեղեցիների ձևավորման, ցուցահանդեսների կազմակերպման աշխատանքներին[851]:

Հայրենիք-Սփյուռք առնչություններն աշխույժ էին նաև ճատարապետության բնագավառում: Հայաստանի ճարտարապետների միության անդամ դարձան մի շարք սփյուռքահայեր, նրանց թվում՝ ֆրանսահայ ճարտարապետներ Էդվարդ Սարգսյանը, Անդրանիկ Զաքարյանը, Մանուել Դեյրմեջյանը, Վարուժան Կյուրեցյանը, Ալեն Դարոնյանը: Նրանք իրենց ջանքերը ներդրեցին Հայաստանի վերակառուցման գործում, նաև

---

[849] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 154:
[850] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 201:
[851] Տե՛ս նույն տեղում:

մեծ աշխատանք կատարեցին Հայաստանում ճարտարապետական արվեստն աշխուժացնելու ուղղությամբ[852]:

Մեծ է Ռոստոմ Ոսկանյանի (1932-2013 թթ.) ներդրումը հատկապես Թեհրանի ժամանակակից ճարտարապետության զարգացման գործում: Իտալահայ ճարտարապետ Լևոն Կյուրեղյանի, ֆրանսաբնակ ճարտարապետների՝ Լևոն Նաֆիկյանի, Էդուրադ Ութուճյանի, լոնդոնաբնակ Միշել Մովսեսյանի աշխատանքները ներկա ժամանակներում վերածվել են ճարտարապետական դասական գործերի[853]:

2010 թ. Ստամբուլի ժամանակակից արվեստի թանգարանում «Ստամբուլը եվրոպական մշակույթի մայրաքաղաք» փառատոնի շրջանակներում բացվեց 19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին Կ. Պոլսում ապրած և գործած 40 հայ ճարտարապետների հեղինակած 100 պատմական շենք-շինությունների լուսանկարների ցուցահանդեսը, որը մեծ արձագանք գտավ թուրք հանրության շրջանում: Թուրքական մի շարք լրատվական և տեղեկատվական միջոցներ «Ստամբուլի հայ ճարտարապետները» վերտառությամբ հոդվածներ հրապարակեցին, որոնցում առաջին անգամ Թուրքիայում բարձրաձայն խոսվեց Ստամբուլի կառուցման գործում հայ ճարտարապետների էական դերակատարության մասին, ներկայացվեցին հայ վարպետների կերտած կառույցների ճարտարապետական հատկանիշներն ու յուրօրինակությունը, և ընդգծվեց այն փաստը, որ «Արևմտականացված Ստամբուլում հայ ճարտարապետների հետքը կա: Պալատներից մինչև մարգագետիններ, հարյուր տարի առաջվանից ժառանգված հրապուրիչ շենքերի կարևոր մասը հայ ճարտարապետնե-

---

[852] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 154-155:
[853] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 61:

րի շնորհքն է: ...Եթե այսօր Ստամբուլը խոշոր քաղաք է և հպարտանում է իր բազմանշանակալի անցյալով, ապա դա այդ կառույցների շնորհիվ է»[854]:

Սփյուռքում կարևոր դերակատարություն ունի նաև «Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ասոցիացիան (ՃՃՀԱ, Pan-Aremnian Assocoatiom of Architects amd Engineers): Ստեղծվել է 2009 թ. ապրիլին ՀՀ սփյուռքի նախարարության հովանու ներքո կազմակերպված ճարտարապետների և ճարտարագետների համահայկական համաժողովի որոշմամբ[855]: Ասոցիացիայի հիմնական նպատակն է առաջակցել Հայաստանի, Արցախի և Սփյուռքի ներուժի օգտագործմամբ ճարտարապետության, քաղաքաշինության և շինարարության բնագավառներում պետական և ազգային ծրագրերի իրականացմանը, հայկական պատմամշակութային արժեքների հաշվառմանը, ուսումնասիրմանը, մշակութային ժառանգության պահպանմանը, ճարտարապետության, քաղաքաշինության և շինարարության բնագավառների գիտական, ստեղծագործական մտքի համախմբմանը, երիտասարդ մասնագետների և ուսանողների մասնագիտական գործունեության խթանմանը, որակավորման բարձրացմանը, մասնագիտական փորձի ձեռքբերմանը, ճարտարապետական, քաղաքակաշինական մրցույթների, գիտագործնական սեմինարների, համաժողովների և ցուցահանդեսների կազմակերպմանը, ազգային և միջազգային հարթակներում առաջավոր փորձի փոխանակմանը: Այսօր այն 11 տարածաշրջանային մասնաճյուղեր ունի Հայաստանում: Գու-

---

[854] Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 61-62:
[855] Տե՛ս նույն տեղում, էջ 196-197:

մարվել է ճարտարապետների 3 համաժողով (վերջինը՝ 2015 թ.)[856]:

Այսօր հայ ճարտարապետական մտքի հարուստ ժառանգությունը հաշվառելու և ներկայացնելու կարևորում կա, ուստի այս կարևորագույն աշխատանքն իրականացնում են Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտը և «Ճարտարապետների համահայկական ընկերակցությունը»: Տեղացի և սփյուռքահայ ճարտարապետները հնարավորություն ունեն համագործակցության նոր ուղիներ մշակելու, որպեսզի իրենց մասնագիտական ունակությունները, փորձն ու գիտելիքները ծառայեցնեն Հայաստանում ճարտարապետության զարգացմանը, Սփյուռքի հայկական պատմամշակութային ժառանգության պահպանմանը:

Հայաստան-Սփյուռք մշակութային ոլորտի գործակցության մեջ կարևոր նշանակություն ունի հեռուստատեսությունը: Հաշվի առնելով Հայաստան-Սփյուռք գործակցության ամրապնդման և զարգացման, ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության, ինչպես նաև նախարարության կողմից իրականացվող բազմաբնույթ ծրագրերի լայն լուսաբանման անհրաժեշտությունը՝ տարբեր հեռուստաընկերությունների հետ պարբերաբար պատրաստվում և հեռարձակվում են հեռուստահաղորդումներ, ֆիլմեր, տեսահոլովակներ[857]: Ինչպես նշվում է. «Ծրագրի նպատակն է նպաստել հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի համար կենսական նշանակություն ունեցող հայապահպանության հիմնախնդիրների լուծմանը: Անհրաժեշտ է աշխար-

[856] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., 197:
[857] Տե՛ս նույն տեղում:

հի բոլոր հայ համայնքներին հասանելի դարձնել հայկական մշակույթը, արվեստը, պատմությունը, ազգային արժեքները, ներկայացնել հայկական ֆիլմերը:

Հեռուստաընկերությունների հետ կատարվող աշխատանքը կարևորվում է Հայաստանից տեղեկատվություն սփռելու, նախարարության գործունեությունը, ծրագրերը մեկնաբանելու տեսանկյունից»[858]:

ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության ընթացքում հեռուստաընկերությունների միջոցով պատրաստվել, հեռարձակվել և հեռարձակվում են հետևյալ հաղորդաշարներն ու ֆիլմերը.

ա. «Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն»՝ «Սփյուռքի ժամ», «Մերոնք», «Հայլուր Սփյուռք», «Հայ պարեր», «ՀՀ ներգաղթելու 10 խնդիրները և դրանց հաղթահարման ուղիները», «Մեր բարերարները», «Մեր մեծերը» հաղորդաշարեր, հայոց լեզվի ուսուցողական ծրագրեր, «Հայոց լեզվի դպրոց»:

բ. Հայաստանի Հանրային ռադիո՝ «Կամուրջ» ռադիոհաղորդում:

գ. «Արարատ» հեռուստաընկերություն՝ «Տոհմածառ-նոր արմատներ» հաղորդաշար:

դ. «Արմենիա» հեռուստաընկերություն՝ «Բարի գիշեր, հայե՛ր», «Աշխարհասփյուռ» հաղորդաշարեր:

ե. «Երկիր մեդիա» հեռուստաընկերություն՝ «Ժառանգորդի իրավունքով», «Հայկական հետք», «Հայաստանում կայացած սփյուռքահայ գործարարների մասին» հաղորդաշարեր[859]:

---

[858] Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 169:
[859] Տե՛ս նույն տեղում:

Հայաստան-Սփյուռք գործակցության տարբեր ոլորտներում մեծապես կարևորվել են տարբեր համայնքների մասին պատմող հեռուստաֆիլմերի ստեղծման, հեռուստահաղորդումների նախագծերի իրականացման, տեղեկատվական ֆիլմերի, հոլովակների պատրաստման, պատվիրման աշխատանքները, որոնցից են՝ «Իմ Հայաստան» (Հայկական սփյուռքի դերն անկախ Հայաստանի 20 տարիների պետականաստեղծ գործընթացում), «5-ամյա վերելք» (ՀՀ սփյուռքի նախարարության 5 տարիները), «ՀՀ սփյուռքի նախարարությունը 7 տարեկան է», «ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերը», «Տեսնեմ Անին», «Ջավախք», «Արմատը», «Կանչը», «Հավատը», «Սկիզբը», «Խոսքը», «Իմ Հայաստան» փառատոն, «Մայրենի լեզվի օրը», «Հայկական տարազներ», «Սինգապուր», «Սիրիահայ երեխաներ», «Թաքուն հայեր», «Քեսապ», «Փրկված բեկոր», «10 օր տանը», «Մեր մեծերը» և ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող միջոցառումների, ծրագրերի, Հայաստանում, Արցախում, Սփյուռքում տեղի ունեցող իրադարձությունների, Սփյուռքի համայնքների վերաբերյալ այլ ֆիլմեր, սոցիալական գովազդային հոլովակներ[860]:

Այսպիսով՝ ՀՀ սփյուռքի նախարարության և Սփյուռքում ՀՀ-ում գործող մի շարք համահայկական կառույցների, ՀՀ մշակույթի նախարարության ջանքերով 21-րդ դարասկզբին իրականացան մշակութային բազմաթիվ միջոցառումներ ու ձեռնարկված միջոցառումների արդյունքում էլ ավելի սերտացան հայրենիք-Սփյուռք հարաբերությունները:

---

[860] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 470:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո ՀՀ-Սփյուռք կապերն ու առնչությունները նոր որակ ստացան՝ թևակախելով նոր փուլ: Դա դրսևորվեց Սփյուռքի բոլոր կազմակերպությունների կողմից հայրենիքում ազատ գործելու լայն հնարավորության առկայությամբ: Չնայած հայրենիք-Սփյուռք արդի հարաբերությունների առաջին փուլում նկատվեցին գաղափարաբանական հակասություններ ՀՀ-ում իշխող կուսակցության և Սփյուռքի ազգային կազմակերպությունների միջև, սակայն դրանք հաղթահարվեցին հատկապես երկրորդ շրջափուլում՝ 1998 թվականից սկսած, երբ Սփյուռքի հետ հարաբերությունները կառուցվեցին փոխճանաչողության հիմքով, քաղաքական փոխինտեգրման ուղիով: Այն իր արտացոլումը գտավ 1999 թվականից սկսած պարբերաբար հրավիրվող Հայաստան-Սփյուռք համաժողովների՝ 2002, 2006, 2011, 2014 և 2017 թթ. հայտարարություններում: Գրեթե բոլոր համաժողովների հայտարարությունները փաստում են, որ Հայկական սփյուռքը ապակենտրոնացված է, համախմբված չէ մեկ միասնական համահայկական կառույցի ներքո, ինչը բնորոշ է մի շարք խոշոր սփյուռքների, ուստի խնդիր էր դրվում ստեղծելու համահայկական խորհուրդ, որի կազմում կարող էին ընդգրկել պետական, հոգևոր, համահայկական կառույցների ներկայացուցիչներ: Այն լայնորեն քննարկվեց և համապատասխան որոշում ընդունվեց հայկական վեցերորդ համաժողովի կողմից: Այդ մասին որոշում էր ընդունել նաև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը 2015

թ. սեպտեմբերի 26-ի նիստում: Սակայն հարկ է նշել, որ, ցավոք, մինչ օրս չի ստեղծվել այս կարևոր կառույցը:

Բացի դրանից՝ 1998-2008 թթ. շրջափուլում մեծ ոգևորություն առաջացրեց հայրենիքում համահայկական խաղերի պարբերաբար կազմակերպումը (1999, 2001, 2003, 2007, 2011, 2017, 2015 թթ.): Վերջինը իր աշխարհագրական ընդգրկմամբ և մասնակիցների քանակով ամենամեծն էր: Հայրենիք-Սփյուռք սոցիալական, մշակութային կապերի ու առնչությունների զարգացմանը մեծապես նպաստեցին նաև մշակութային փառատոնների պարբերաբար անցկացումը, ուսուցիչների պատրաստման, վերապատրաստման աշխատանքները, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների տպագրումն ու առաքումը Սփյուռք և այլն: Այս շրջափուլում ավելի ընդլայնեցին իրենց գործունեության շրջանակները առաջին շրջափուլում գործունեության ծավալած բարեգործական կազմակերպությունները, կառույցները, միությունները և այլն: ՀՀ-ին և Արցախին բազմաբնույթ օգնություն և աջակցություն կազմակերպեցին դեռևս նախորդ շրջափուլում՝ 1992 թ. ստեղծված «Հայաստան» համահայկական հիմնադրամն ու համահայկական, համասփյուռքյան այլ ներդրումներ ու բարեգործական կազմակերպություններ ու կառույցներ, այդ թվում՝ Ք. Քրքորյանի կողմից հիմնված «Լինսի» հիմնադրամը, «Հայկական բարեգործական ընդհանուր միությունը» (ՀԲԸՄ), «Միացյալ հայկական ֆոնդ» բարեգործական կազմակերպությունը, «Հովարդ Կարագյուզյան» բարեգործական հասարակական կազմակերպությունը, ՀՕՄ-ը, ՀՕՖ-ը և այլն: Եթե ՀՀ անկախության առաջին շրջանում ՀՀ-Սփյուռք տնտեսական հարաբերություններում ուշադրությունը սևեռված էր երկաշարժի գոտում ցուցաբերվող օգնության և Արցախյան պատերազմի ու

շրջափակման պայմաններում բնակչության նվազագույն կարիքների բավարարման վրա, ապա 1990-ական թթ. երկրորդ կեսից և հատկապես 21-րդ դարասկզբից ուշադրություն դարձվեց ՀՀ և Արցախի տնտեսության վերականգնման և ձեռնարկատիրության զարգացմանը: Այդ տարիներին ՀՀ տնտեսության մեջ ներդրումներ կատարած օտարերկրյա ներդրողների շուրջ 69 %-ը սփյուռքահայեր էին:

ՀՀ քաղաքականությունը Սփյուռքի նկատմամբ ավելի խորացավ և նպատակային դարձավ երրորդ շրջափուլում՝ 2008 թ. սկսած, երբ ստեղծվեց ՀՀ սփյուռքի նախարարությունը, որով ՀՀ-Սփյուռք հարաբերությունները դրվեցին ավելի բարձր մակարդակի վրա: ՀՀ սփյուռքի նախարարության առջև ծառացան երեք հիմնական խնդիրներ՝ նպաստել հյուրընկալությանը Սփյուռքում, համազգային ներուժի համախմբմանը համազգային խնդիրների լուծման գործում և մշակել ու ներդնել հայրենադարձությունը խթանող կառուցակարգը:

Որպես երկրի երրորդ նախագահի՝ Ս. Սարգսյանի քաղաքական ծրագրի մաս՝ ՀՀ սփյուռքի նախարարությունը մշակեց Հայկական սփյուռքի նկատմամբ Հայաստանի պետական քաղաքականությունը, «Հայաստան-Սփյուռք գործունեության զարգացման հայեցակարգը» և ռազմավարության ծրագիր, որոնք հաջողությամբ իրագործվել ու իրականացվում են Սփյուռքի համապատասխան կառույցների ու կազմակերպությունների աջակցությամբ, նրանց մասնակցության և համախման արդյունքում: ՀՀ սփյուռքի նախարարության կողմից մշակված ու կազմակերպված բազմաբնույթ միջոցառումները և համագործակցությունը սփյուռքյան կազմակերպությունների ու կառույցների հետ

էլ ավելի են սերտացրել ու ամրապնդել հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունները:

Վերջին տասնամյակում Սփյուռքի մասնակցությունը Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում ՀՀ սփյուռքի նախարարության ակտիվ նախաձեռնությամբ դարձել է առավել կազմակերպված ու նպատակային: Անբացատրելի է Սփյուռքի դերակատարությունը հայրենիքում այնպիսի ոլորտների զարգացման գործում, ինչպիսիք են դրամատնային համակարգը, զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները և ծառայությունները: Հայաստանի համար տնտեսական գերակայություն է արտահանմանն ուղղված արտադրությունների զարգացումը և արտաքին շուկայում հայկական ապրանքների պատշաճ ներկայացումը:

Փաստորեն՝ երրորդ շրջափուլում ՀՀ սփյուռքի նախարարութան անմիջական ներկայությամբ և մշակած ծրագրերի իրականացման, սփյուռքյան կառույցների, կազմակերպությունների և ակտիվ անհատների համագործակցությամբ ապահովվեց ՀՀ-Սփյուռք արդյունավետ գործունեությունը՝ նպաստելով հայ ժողովրդի հոգևոր միասնության, հայ կրթական, գիտական, մշակութային, առողջապահական, տնտեսական, երիտասարդական, մարզական կյանքի զարգացմանը, հայոց աշխարհի բարգավաճմանը նպաստող պայմանների ստեղծմանը:

ОТНОШЕНИЯ МЕЖДУ РОДИНОЙ И ДИАСПОРОЙ В НАЧАЛЕ 21-ОГО ВЕКА (2001–2017 ГГ.)

Основываясь на имеющиеся литературу и источники, была предпринята попытка заполнить пробел в изучении отношений родины и Диаспоры в начале XXI века. В данной работе отношения Армении и Диаспоры анализируются почти во всех сферах общественно-политической и социально-экономической жизни, и сделаны соответствующие выводы.

В первой главе представлены общие характеристики и особенности армянской Диаспоры в начале XXI века, которые были связаны с геополитическими изменениями. В годовых отчетах Министерства иностранных дел Республики Армения, а также в отчетах соответствующих архивных документах анализ материалов о Диаспоре и документация армянских и иностранных языковых материалов и литературы показывает активную общественно-политическую деятельность политических организаций Диаспоры, в том числе политических партий и структур в течение указанного периода в направлении международного признания Геноцида армян и решения арцахской проблемы.

Во второй главе были раскрыты и рассмотрены инвестиции Диаспоры в экономику Армении и Арцаха путем анализа соответствующих фактов, а также роль и значение фондов и других структур, действующих в Диаспоре, в социально-экономическом развитии Армении и Арцаха. В этой главе особо подчеркивается важность отношений родины и Диаспоры в научных, образовательных, культурных и здравоохранительных сферах. Анализ соответствующих фактов характеризует новый качественный

прогресс отношений РА-Диаспоры в связи с созданием Министерства Диаспоры в октябре 2008 года, который стал более активным, насыщенным, динамичным, взаимодополняющим, более организованным и взаимовыгодным. Благодаря различным программам, разработанным и внедренным Министерством, начиная с программы «Ари тун», заканчивая организованием «Летней школы Диаспоры» и приглашением панармянских фестивалей, организацией различных культурных мероприятий, а также приглашением исследовательских проектов, профессиональных форумов, конференций, круглых столов, отношения РА-Диаспоры еще более укрепляются, что способствует их дальнейшему развитию.

С одной стороны, участие армян Диаспоры в социально-экономическом развитии Армении ощутимо, с другой стороны, Родина придает новый импульс объединению Диаспоры и сложной задаче сохранения армянской идентичности. В течение более полутора десятилетий по инициативе правительства Армении, чтобы объединить две части армянского народа и сделать их отношения более эффективными, в Армении организуют Всеармянские спортивные игры, а также конференции «Армения-Диаспора», в которых принимают участие делегации из всех армянских общин Диаспоры. Церемонии поминовения 100-летия Геноцида армян были беспрецедентно репрезентативными 24 апреля 2015 года. Кроме всех армян посетивших в Армению, в этот день в Армению прибыли президенты четырех стран и делегации высокого уровня из 19 стран. Роль армянской Диаспоры в преодолении экономических трудностей и экономического развития не имеет себе равных. Недавно созданная Респуб-

лика Армения столкнулась с трудностями с самого начала. Арцахская война, навязанная нам, экономический кризис, блокада внешних сообщений со стороны Азербайджана и Турции, распад энергетической системы и последствия разрушительного землетрясения в декабре 1988 года создали действительно серьезную ситуацию в стране. В этой сложной ситуации многие армяне Диаспоры начали благотворительную и инвестиционную деятельность на Родине. Вначале поддержка Диаспоры была в основном в виде гуманитарной помощи. После независимости Армении, когда страна оказалась в глобальном кризисе, помощь Диаспоры способствовала социально-экономическому развитию Армении и Арцаха. Новый этап сотрудничества начался, когда был подчеркнут взаимовыгодный способ инвестирования и развитие бизнеса. Строительство жилья, реконструкция больниц, школ, дорог, заводов, развитие новых производств и услуг внесли большой вклад в укрепление Армении и повышению конкурентоспособности экономики. Эти программы реализуются по инициативе и финансированию как организаций (Фонд «Армения», AGBU /АВБС/, Фонд Линс, Фонд помощи Армении, Армянское общество милосердия /АОМ/, «Азнавур Армении» и т.д.), так и отдельных благотворителей. Следует отметить, что Армянский Всеобщий благотворительный союз (AGBU) эффективно работает. Многочисленные программы AGBU направлены на повышение культурной жизни в стране. Алек Манукян, известный армянский национальный благотворитель из Диаспоры, помог Армении со многими проектами развития родины, а в 1989 году его дочь – Луиз Симон Манукян, сменила его на посту главы компании. Если в 1988-1990 годах центром помощи

Армении была зона землетрясения, то в 1991-1994 к нему добавилась арцахская война, а также удовлетворения минимальных потребностей населения в условиях войны и блокады. В 1994-2001 годах основное внимание уделялось восстановлению экономики и развитию предпринимательства. В те годы около 69 процентов армянских инвесторов были армяне из Диаспора. В 1998-2004 годах они инвестировали около 275 миллионов долларов инвестиций. В последующие годы экономические отношения Армения-Диаспора стали более согласованными. Периодически организованные бизнес-форумы способствовали развитию чисто предпринимательских инвестиций. Указом Президента Республики Армения был создан Всеармянский фонд «Айастан», первым крупномасштабным делом которого была «Зимняя» гуманитарная программа. Затем средства Фонда были направлены на строительство зоны землетрясения, развитие инфраструктуры в Армении и Арцахе. Строительство автострад «Горис-Степанакерт» и «Север-Юг» в НКР последовало друг за другом. В начале 21-го века Фонд наряду с дорожным строительством продолжал строить школы, медицинские учреждения, системы водоснабжения и газоснабжения, линии электропередач и учреждения культуры. В настоящее время Фонд реализовал программы на сумму 235 миллионов долларов США. Фонд Линс, основанный американо-армянским миллионером Кирком Керкоряном, оказал большую поддержку развитию экономики Армении, благодаря которому Армении было выделено около 200 млн долларов на реконструкцию дорог, реконструкцию учреждений культуры, жилищное строительство в зоне бедствия, а также развитие малого и среднего предпринимательства в Арме-

нии. Одной из важных программ Диаспоры в сфере здравоохранения Армении является Республиканская новая больница Степанакерта и региональный новейший оздоровительный центр в Ванадзоре, построенная с инвестициями владельца группы «Ташир» Самвела Карапетяна, а также создание Центр здоровья на платформе Армянско-Американской культурной ассоциации (AAKA), поскольку число смертей от рака молочной железы было высоким. Роль американско-армянского благотворителя Рита Паляна в этом случае неописуемо очень большая. Как в Армении, так и в Арцахе, Диаспора также оказывает значительную поддержку развитию сельского хозяйства.

Последнее проявляется в программе восстановления социально-культурных инфраструктур сельских общин, строительства дорог и водоснабжения, а также развития сельскохозяйственного производства. Лучшим примером этого является аргентинско-армянский бизнесмен, национальный герой Республики Армения, Э. Эрнекян, который инициировал программы «Tierras de Armenia» и «Карас» для развития виноградарства и виноделия в районе Баграмяна Армавирского региона, где ранее были песчаные почвы.

Огромная поддержка Диаспоры есть и в области образования и науки. Сегодня Дилижанская международная школа является высокопоставленным конкурентом, учредителями которой являются российский бизнесмен и филантроп Рубен Варданян с женой. Одной из перспективных и быстроразвивающихся сфер экономики Армении является информационная технология. Многие армяне из Диаспора, которые имеют высокую репутацию в мировой ИТ-индустрии, также спо-

собствуют глобальному признанию и продвижению армянских компаний в этих областях. Самвел Карапетян, Рубен Варданян, Сергей и Николай Саркисовы, Артур Варжапетян, Радик Ванунц, Левон Айрапетян и другие, которые живут в России, оказывают неоценимую помощь в социально-экономическом развитии Армении и Арцаха. В этом исследовании представлена ценная информация о деятельности армянских бизнесменов и благотворителей в Армении.

Таким образом, это исследование поможет получить полную картину укрепления и развития отношений и связей между Родиной и Диаспорой с момента независимости РА (с 1991 г.) до наших дней.

THE HOMELAND-DIASPORA RELATIONS AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY (2001-2017)

Based on the widely available literature and primary sources, an attempt has been made to fill the gap in the study of the Homeland-Diaspora relations at the beginning of the 21st century. In this paper, Republic of Armenia and Diaspora relations are analyzed in almost all spheres of public-political and socio-economic life and relevant conclusions have been made.

The first chapter presents the general characteristics and peculiarities of the Armenian Diaspora in the early 21st century linked to the geopolitical changes. Through the analysis of the relevant archival documents, especially materials on Diaspora in the annual reports of the RA Ministry of Foreign Affairs as well as Armenian and foreign language documentary materials and literature, the public-political activities of Pan-Diaspora political organizations and structures directed towards the international recognition of the Armenian Genocide and the resolution of the Artsakh issue during the given period are revealed.

In the second chapter, through the analysis of relevant facts Diaspora's investments in the economy of Armenia and Artsakh have been revealed and subjected to critical approach, and the role and significance of foundations and other Diaspora-based structures in socio-economic development of RA and Artsakh have been shown.

This chapter especially highlights the importance of the Homeland-Diaspora ties in scientific, educational, cultural and health spheres. Through the analysis of the relevant facts the new

qualitative progress of the RA-Diaspora relations linked to the establishment of the RA Ministry of Diaspora as of October, 2008, have been characterized, by which these ties became even more active, rich in its content, dynamic, mutual and more comprehensive, more organized and mutually beneficial.

Due to various programs initiated, developed and implemented by the Ministry, starting with the "Ari Tun" (Come Home) program and ending with organizing "Diaspora Summer School" and holding Pan-Armenian festivals, organizing various cultural events, as well as research projects, professional conferences, scientific conferences, roundtable discussions, meetings, the RA-Diaspora relations have been more strengthened and intensive, contributing to their further development.

On the one hand, the participation of Diaspora Armenians in Armenia's socio-economic development is more tangible, on the other hand, the Homeland gives a new impetus to the unification of Diaspora and the difficult task of preserving the Armenian identity. For over one and half decade, on the initiative of the Armenian Government to unite the two sectors of the Armenian people and make their relations more effective, Pan-Armenian sports games are organized in Armenia, as well as "Armenia-Diaspora" conferences, which are attended by delegations from all Diaspora Armenian communities. The commemoration ceremonies of the Centennial of the Armenian Genocide on April 24, 2015, were unprecedentedly representative. In addition to the representatives of all Armenians, presidents of four countries and high-level delegations from 19 countries arrived in Armenia. The role of the

Armenian Diaspora in overcoming economic hardships and economic development is undeniable.

The newly established Republic of Armenia had to face hardships from the very beginning. The Artsakh war imposed on us, the economic crisis, the blockade of the external communications by Azerbaijan and Turkey, the disorganization of the energy system, and the consequences of the devastating 1988 earthquake in December created a truly grave situation in the country. Here, in this difficult situation, many Diaspora Armenians initiated significant charity and investment activities in the Homeland.

At the outset Diaspora's support was primarily of humanitarian kind. After the independence of Armenia, when the country appeared in a global crisis, Diaspora assisted in the socio-economic development of Armenia and Artsakh. A new stage of cooperation started when the importance of making investment in Armenia, the mutually beneficial way to develop business was highlighted. The construction of residential buildings, renovation of hospitals, schools, roads, factories, development of new products and services has greatly contributed to the strengthening of Armenia and raising the competitiveness of the economy. These programs are implemented thanks to both the initiatives and funding of organizations ("Hayastan" ("Armenia") Fund, AGBU, "Lincy" Foundation, Armenian Relief Fund, ARS, "Aznavour for Armenia") and individual benefactors. The effective activities of the Armenian General Benevolent Union (AGBU) worth special acknowledgement. A number of AGBU programs were directed to promoting the cultural life of the country. Prominent Diaspora Armenian philanthropist Alex Manoogian and his daughter Louise Simon

Manoogian who posthumously replaced him in the president's office of charity organization in 1989, contributed to Armenia with many programs.

If in 1988-1990 the focal point for aid to Armenia from Diaspora was the earthquake zone, then in 1991-1994 the Artsakh war was added to that, the satisfaction of the minimum needs of the population in the conditions of war and blockade.

In 1994-2001 they focused on the recovery of the economy and the development of entrepreneurship. In those years, about 69 percent of Armenian investors were Diaspora Armenians. In 1998-2004, the latter made an investment of about $ 275 million. In the following years Armenia-Diaspora economic relations started to have a more coordinated character. Promotion of purely entrepreneurial investments were contributed by regular business conferences.

By the decree of the RA President "Hayastan" ("Armenia") All-Armenian Fund was created in 1992, whose first large-scale initiative was the "Winter" humanitarian program. Then, the means of the Fund were directed to the construction of residential buildings in the earthquake zone, infrastructure development in Armenia and Artsakh. The construction of "Goris-Stepanakert", then "North-South" highways in NKR followed one another. At the beginning of the 21st century, parallel to the road construction the Fund continued to build schools, medical institutions, water and gas supply systems, electric power lines and cultural centers. Currently, the Fund has implemented programs costing over 235 million US dollars.

After the “Hayastan” All-Armenian Fund, the “Lincy” Foundation established by Armenian-American billionaire Kirk Kerkorian supported the development of Armenia’s economy providing around $ 200 million US dollars for reconstruction of roads, renovation of cultural centers, construction of residential building in disaster zone, as well as small and medium enterprises in Armenia for development.

One of the important programs of Diaspora’s assistance to the Armenian healthcare is the new republican hospital in Stepanakert, constructed by the investments of the owner of the “Tashir” Group of Companies Samvel Karapetyan and the new regional ultramodern healthcare complex in Vanadzor, as well as the establishment of the Health Center with the initiative of the Armenian American Cultural Association (AACA) as the number of deaths of women due to cancer was high. The role of American philanthropist Rita Palian is unmatched in this case.

The role of American philanthropist Rita Palian is unmatched in this issue.

Both in Armenia and Artsakh, Diaspora also provides significant support to the development of villages and agriculture. The latter is manifested in the programs of restoration of social and cultural infrastructures of rural communities, road construction and water supply, agricultural production development. The best example of this may serve the “Tierras de Armenia” and “Karas” programs initiated by the Argentinean-Armenian businessman, National Hero of Armenia E. Eurnekian for the development of viticulture and winemaking in previously uncultivated lands of Baghramyan region of the Armavir province.

Diaspora's comprehensive support for the development of education and science is also great. Today, Dilijan International School, founded by Russian businessman and philanthropist Ruben Vardanyan and his spouse, provides with a high-level competition. One of the promising and rapidly developing spheres of the Armenian economy is the information technology. Many authoritative Diaspora Armenians in the global IT industry also contribute to the global recognition and promotion of Armenian companies in these fields. Samvel Karapetyan, Ruben Vardanyan, Sergey and Nikolay Sarkisovs, Arthur Varzhapetyan, Radik Vanunts, Levon Hayrapetyan and others show invaluable assistance to the socio-economic development of Armenia and Artsakh.

Valuable information about the activities of Armenian businessmen and benefactors in Armenia is condensed in this study.

Thus, this study will be a help to have a complete picture on strengthening and developing of the Homeland-Diaspora relations and ties since the independence of Armenia in 1991.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Տպագիր սկզբնաղբյուրներ և ուսումնասիրություններ

Ա. Արխիվային սկզբնաղբյուրներ

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդեր

1. NN 113, 326, 362, 823, 875, 1172, 1173

ՀՀ արտ. գործ. նախարարության ընթացիկ արխիվ (1991-2017 թթ., արտաքին գործերի նախարարության տարեկան հաշվետվություններ՝ Սփյուռքի մասին):

Բ. Տպագիր սկզբնաղբյուրներ

1. Համազգային հայ կրթական և մշակութային միութիւն, Համազգային 75, 1928-2003, Պէյրութ, 2003:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 1995, 1996 ֆինանսական հաշվետություն. 1992-1996 ծրագրային գործունեություն, Երևան, 1996:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆինանսական և ծրագրային հաշվետվություն. 1996-1997, Երևան, 1997:

4. «Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆինանսական և ծրագրային հաշվետություն. 1997-1998, Երևան, 1999:

5. «Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆինանսական և ծրագրային հաշվետվություն. 2000, Երևան, 2001:

6. «Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆինանսական և ծրագրային հաշվետվություն. 2001, Երևան, 2002:

7. «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2014, Երևան, 2015:

8. «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2015, Երևան, 2016:

9. «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2016, Երևան, 2017:

10. Հայաստանը և Սփյուռքը 21-րդ դարի շեմին, գիտաժողովի նյութեր (Երևան, 29-30 մայիս, 1998), Երևան, 1998:

11. Հայաստանի Հանրապետություն: Կուսակցություններ, Երևան, 2002:

12. «Համահայկական Սփյուռք» տարեգիրք, ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2014:

13. Ջավախքը 21-րդ դարի մարտահրավերներին ընդառաջ (խորհրդաժողովի նյութերի ժողովածու), Երևան, ՀՅԴ, «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միություն, «Ուսանողական մատենաշար», թիվ 1, 2006:

14. Հակոբյան Հ., XVI դարի մարտահրավերները գլոբալացվող աշխարհում: Հայ երիտասարդությունը և նոր հարյուրամյակի մարտահրավերները, Երևան, 2008:

15. «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003:

16. Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», լիագումար նիստի զեկուցումներ, Երևան, 2013:

17. Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Զեկուցումների դրույթներ, Երևան, 2013:

18. «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ», Երևան, 2010:

19. Հայաստան-Սփյուռք կեսդարյա պատմություն, փաստաթղթերի ժողովածու, ՀՀ ազգային արխիվ, Երևան, 2008:

20. Հայկական ինքնության խնդիրները, 21-րդ դարում, գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2013:

21. Հայկական գրադարանների միջազգային երրորդ համաժողովի նյութեր, Երևան, 2014:

22. «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ» իրավաբանների համահայկական երկրորդ համաժողով: Համաժողովի

նյութերի ժողովածու (05-06.07.2013), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2014:

23. ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները, ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2013:

24. Սփյուռքի հեռանկարները գլոբալացվող աշխարհում, միջազգային համաժողովի զեկուցումների ժողովածու, ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2012:

25. Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողով, համաժողովի նյութեր (խմբագիրներ՝ Մխիթարյան Գ., Մկրտչյան Ն.), Երևան, 2011:

26. Տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 19-20 սեպտեմբերի, Երևան, 2014:

27. Տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբերի, Երևան, 2017:

28. «21-րդ դարի մարտահրավերները և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները» քաղաքագետների և միջազգայնագետների համահայկական համաժողով. Համաժողովի նյութեր (19-20.11, 2012), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2014:

29. «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 24(90), 3 սեպտեմբերի, 1999, Երևան, 1999:

30. «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 25(91), 30 սեպտեմբերի, 1999, Երևան, 1999:

31. «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 23(121), 10 հոկտեմբերի, 2000, Երևան, 2000:

32. «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 16(148), 12 հունիսի, 2001, Երևան, 2001:

33. «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 33(208), 14 օգոստոսի, 2002, Երևան, 2002:

34. «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 40(215), 18 սեպտեմբերի, 2002, Երևան, 2002:

35. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2009 (հեղ. խմբի ղեկավար Հ. Հակոբյան և ուրիշներ), Երևան, 2009:

36. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2010 (հեղ. խմբի ղեկավար Հ. Հակոբյան և ուրիշներ), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2011:

37. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2011 (հեղ. խմբի ղեկավար Հ. Հակոբյան և ուրիշներ), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2012:

38. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2012 (հեղ. խմբի ղեկավար Հ. Հակոբյան և ուրիշներ), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2012:

39. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2013 (հեղ. խմբի ղեկավար Հ. Հակոբյան և ուրիշներ), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2014:

40. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2014 (հեղ. խմբի ղեկավար Հ. Հակոբյան և ուրիշներ), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2015:

41. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2015 (հեղ. խմբի ղեկավար Հ. Հակոբյան և ուրիշներ), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2016:

42. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2016 (հեղ. խմբի ղեկավար Հ. Հակոբյան և ուրիշներ), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2017:

Գ. Պարբերականներ

1. «Ազգ», 1991-2017
2. «Հայաստանի Հանրապետություն», 1991-2017
3. «Առավոտ», 1991-2017
4. «Հայոց աշխարհ», 1991-2001

5. «Հայրենիքի ձայն», 1991-1993
6. «Ժամանակ», 1991-2000
7. «Республика Армения», Երևան (օրաթերթ), 1991-2003
8. «Տեղեկատու» պաշտոնաթերթ Գահիրէի հայկական բարեգործական ընդհանուր միութեան, 2002, յուլիս, թիւ 24

Դ. Ուսումնասիրություններ

1. Աբրահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 2009:
2. Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941-1991 թթ., Երևան, 2016:
3. Արշակյան Գ., Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականությունը, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2015:
4. Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում (հեղինակային խումբ՝ Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանազանյան Տ.), Երևան, 2014:
5. Արտերկրում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության իրավական կարգավիճակը (Սարգսյան Ա., Միրզոյան Լ.), հետազոտական աշխատանք, Երևան, 2010:
6. Արտերկրում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության իրավական կարգավիճակը (Վրաստան, Մոլդովա, Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա), (Անափիոսյան Ա., Միրզոյան Լ.), հետազոտական աշխատանք, Երևան, 2011:
7. Արտերկրում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության իրավիճակը (Թուրքիա, Իսրայել, Հնդկաստան), (Միրզոյան Լ., Կարապետյան Լ.), հետազոտական աշխատանք, Երևան, 2012:
8. Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները, Երևան, 2011:
9. Ամատունի Մ., Ռոբերտ Քոչարյանը Հայկական հարցի ճակատագրում, գիրք 1 Երևան, 2015, գիրք 2, Երևան, 2007, գիրք 3, 2009, գիրք 4, Երևան, 2010:

10. Անտոնյան Ք., Հայրապետյան Գ., Սփյուռքի ներդրումային ներուժի բարձրացման ուղիները ՀՀ տնտեսության մեջ, Երևան, 2016:

11. Ավետիսյան Ս., Գրիգորյան Ա., Բաբաջանյան Ս., Կիրակոսյան Ա., Սփյուռքի ներդրումները ՀՀ տնտեսության մեջ. զարգացման հեռանկարները, Երևան, 2015:

12. Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. Արդի հիմնախնդիրները, Երևան, 2013:

13. Բահարյան Վ., Հայաստան-Սփյուռք համաժողովը և հայաստանյան օրագիր, Երևան, 2001:

14. Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ., Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն (Հյուսիսային Կովկաս, Նոր Նախիջևան, Աստրախան, Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա), Երևան, 2015:

15. Բարսեղյան Լ., Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2000 թթ.), Երևան, 2001:

16. Բարսեղյան Լ., Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003 թթ.), Երևան, 2004:

17. Դալլաքյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004:

18. Իսկանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո (1991-2014 թթ.), Երևան, 2016:

19. Իրանահայոց հանրագիտարան: Անվանի իրանահայերի կենսագրականները (կազմեց Ժ. Լազարյան, պարսկերենից թարգմանեց Ժ. Աբրահամյանը), Երևան, 2012:

20. Եղիազարյան Ա., Անանյան Մ., Հովհաննիսյան Ա., Հովհաննիսյան Է., Հովսեփյան Մ., Վարդանյան Հ., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Երևան, 2017:

21. Խանլարյան Կ., Հայ բնակչության էթնոկրոնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետությունում (1923-2005 թթ.), Անթիլիաս, 2009:

22. Կարապետյան Ս., Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն, Երևան, 2004:

23. Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի և եղեռնի միջազգային ճանաչման պատմության, Երևան, 2006:

24. Կիրակոսյան Ձ., Ընտրանի, Երևան, 2014:

25. Համազասպյան Վ., Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Հայաստանը, Երևան, 2001:

26. Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920-ական թթ.), հ. 1, Սլավոնական աշխարհի և Հյուսիսային կովկասի հայկական գաղութները (խմբ.՝ Վ. Միքայելյան), Երևան, 2003:

27. Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հ. 2, Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները, 2003:

28. Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920-ական թթ.), Եվրոպայի և Ամերիկայի հայկական գաղութները, հ. 3, Երևան, 2013:

29. Հայ համայնքն ԱՄՆ-ում (հեղինակային խումբ՝ Վ. Վերանյան, Հ. Նահապետյան, Տ. Ղանալանյան), Երևան, 2010:

30. Հայոց ցեղասպանություն-100. Ճանաչումից՝ հատուցում, միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2016:

31. «Հայոց ցեղասպանության ժխտողականությունը նոր օսմանականության գաղափարախոսության համատեքստում» գիտաժողով, գիտաժողովի նյութեր, 18.12.2015, Երևան, 2016:

32. Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում (կազմող՝ Վ. Քոչարյան), Երևան, 2014:

33. Հայրենադարձների փորձն ու ինտեգրումը Հայաստանում. Խոչընդոտներ և հնարավորություններ (հեղինակային կազմ՝ Վ. Մարաշյան, Ն. Գալստայ ն, Ի. Գրիգորյան), Երևան, 2015:

34. Հայրենադարձության խթանման և ինտեգրման քաղաքականություն այլ երկրների փորձերի հիման վրա, համեմատական վերլուծություն (խմբագիրներ՝ Վ. Մարաշյան, Հ. Միքայելյան, Բ. Չահնազարյան), Երևան, 2015:

35. Հովյան Վ., Սփյուռքի ներդրումը Հայաստանի գիտական համակարգի զարգացման գործում 08.07.2015, Երևան, 2015:

36. Հարիւամեայ յուշարձեան Հայ օգնութեան միութեան 1910-2010, հրատ. ՀՕՄ կենդրոնական վարչության, 2010:

37. Հայ օգնության ֆոնդ. տարեկան տեղեկագիրք, 2003-2004:

38. Հայ օգնության ֆոնդ, տարեկան տեղեկագիր, 2006:

39. Հարությունյան Լ., Փաշայան Ա., Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013:

40. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), Երևան, 2016:

41. Հակոբյան Հ., Հայկական Սփյուռքը հարափոփոխ աշխարհում, Երևան, 2017:

42. Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները (հեղինակային խումբ՝ Ա. Ժամկոչյան, Դ. Գալստյան, Ս. Մարտիրոսյան, Ս. Մանուսյան, Վ. Հովյան), Երևան, 2010:

43. Ղանալանյան Տ., Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1950-1980-ական թվականներին, Երևան, 2016:

44. Ղարախանյան Վ., «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայանպաստ գործունեությունը 1956-2006 թթ. (խմբագիր՝ Ջավեն Եկանյան), Երևան, 2008:

45. Մարության Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, Երևան, 2015:

46. Մարության Ա., Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, Երևան, 2015:

47. Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, 1985:

48. Մելոնյան Ռ., Աբրահամյան Մ., Օսմանյան կայսրության և Թուրքիայի հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, Երևան, 2015:

49. Մելոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը), Երևան, 2010:

50. Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010:

51. Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, 2013:

52. Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005:

53. Պետրոսյան Ք., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001 թթ., Երևան, 2011:

54. Պզտիկյան Է., Մխիթար վրդ. Սեբաստացիի և Մխիթարեաններու նպաստը հայ մշակույթին, Երևան, 2003:

55. Պողոսյան Է., Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1991-2001 թթ.), Երևան, 2013:

56. Սարգսյան Ն., Սփյուռքահայերի 1946-1948 թթ. մեծ հայրենադարձը, Երևան, 2014:

57. Ստեփանյան Ա., XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Երևան, 2010:

58. Սփյուռքագիտություն: Տարեգիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2013:

59. Սփյուռքի դիրքորոշումները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ (գիտ. խմբագիր՝ Գ. Հարությունյան), Երևան, 2014:

60. Սփյուռքագիտություն (տեսության և պատմության հարցեր), Երևան, 2012:

61. Սփյուռքահայ կազմակերպություններ, Երևան, 2002:

62. Սիմավորյան Ա., Սփյուռքի վերլուծական հանրույթը՝ որպես պետության ներուժ, միջազգային փորձը, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 12, 2013:

63. Վարդանյան Գ., Գիտելիքահենք տնտեսություն, հնարավորություններ և մարտահրավերներ, Երևան, 2008:

64. Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ, ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2010:

65. Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ, ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2015:

66. Փաշայան Ա., Հարությունյան Լ., Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2011:

67. Փաշայան Ա., Հարությունյան Լ., Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2012:

68. Օհանյան Սեդա, Իրաքի հայ համայնքը 20-րդ դարում, Երևան, 2016:

69. Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ, ելույթների ընտրանի, Երևան, 2009:

70. Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով, Երևան, 2013:

71. Armam G., Kirakossian, Brief history of the Armenian Question and the Armenian Genocide, Vienna, 2014.

72. "Armenia-Diaspora Relations: 20 Years since independence", A. Publication of Policy Forum Armenia, 2010.

73. "The Armenians. Past and Present in the making of National Identity", ed. by Ed. Herrig and M. Kurkchiyan, New York, 2005.

74. Cohen R., Global diasporas: An introduction//Global diasporas/ ed. By. R. Cohen.-Second sedition, N. Y., 2008.

75. Минасян Э., Армянский всеобщий благотворительный союз, неоконченная история, Ереван, 2010.

76. Мелконян Э., Дятлов В., Армянская диаспора: Очерки социокультурной типологии, Ереван, 2009.

77. Диаспора, нефть и розы, чем живут страны Южного Кавказа, под. ред. Ивлиана Хамндравы и Александра Искандаряна, Ереван, 2005.

78. Манукян А., Некоторые проблемы межгосударственных и межцивилизационных отношений на Южном Кавказе, Ереван, 2013.

79. Ананян Ж., Хачатурян В. А., Армянские общин России, Ереван, 1993.

80. Григорянц В., Армении Средней Азии. История, современное положение, перспективы, Ереван, 1994.

81. Григорянц В., Возрождение армянской общины Крыма: достижения и проблемы, Симферополь, 2004.

82. Тер-Саркисянц А., Худавердян В., Армянская диаспора Юга России, Москва, 1993.

83. Очерки истории стран Южного Кавказа, мульти перспективный взгляд на историю, под ред. С. Григоряна, Ереван, 2009.

Ե. Գիտական հոդվածներ

Աբրահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները:

1. Բաղալյան Ա., Խորհրդային Հայաստան-Սփյուռք կապերի պատմական փուլերը, «Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ.» միջազգային գիտաժողովի զեկուցումներ:

2. Բայադյան Հ., Հայաստան-Սփյուռք հարաբերությունների թեման նախագահի թեկնածուների ծրագրերում, http://hetg.am/am/am/news/31708/hayastan-spyurg-haraberutyuneri-teman-nakhayahi-teknatsuneritsagrarum.html.

3. Գասպարյան Ս., Սփյուռքահայ մշակութային և հայրենակցական միությունները արդի շրջանում, ՊԲԸ, 1970, N3:

4. Հովհաննիսյան Պ., Հայ ժողովրդի պատմության պարբերացման հիմնահարցին նվիրված համաժողով, ՊԲՀ, 1993, N4:

5. Հովյան Վ., Հայաստան-Սփյուռք 3-րդ խորհրդաժողով, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENTID=239.

6. Հարությունյան Գ., Ծայրահեղականության աճը և «մտավոր հավասարության» գործոնը, «21-րդ դար», Երևան, 2015:

7. Հովյան Վ., Հայկական սփյուռքի փոխակերպումը. Մարտահրավերներ և հնարավորություններ, Երևան, 1913, թիվ 5, էջ 43-47:

8. Հովյան Վ., Լիբանանի հայ համայնքն արդի մարտահրավերներին ընդառաջ, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, թիվ 7, 2013:

9. Մակարյան Լ., Հայաստանի օգնության կոմիտեի համագործակցությունը հայրենակցական միությունների հետ, «Հայոց պատմության հարցեր» (գիտական հոդվածների ժողովածու), 2012, N3:

10. Մակարյան Լ., Հայաստանի օգնության կոմիտեի փոխհարաբերությունները սփյուռքահայ կուսակցությունների հետ, ԲՀԱ, 2010, N1:

11. Մադոյան Ա., Հայ օգնության ֆոնդը 10 տարեկան է, Երևան, 1999:

12. Մելքոնյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, «Սփյուռքագիտություն, տեսության և պատմության հարցեր» տարեգիրք, Երևան, 2012:

13. Մելքոնյան Է., Հայաստան-Սփյուռք հարաբերությունների փոխակերպումը 20-րդ դարում, քաղաքական իշխանության խնդիրը, «Սփյուռքի հեռանկարները գլոբացվող աշխարհում» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2012:

14. Մինասյան Է., Հայրենիք-Սփյուռք առնչությունները գիտության բնագավառում 1990-ական թթ., «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2005, N8, էջ 1:

15. Մինասյան Է., Հայրենիք-Սփյուռք մշակութային առնչությունները 1990-ական թթ., «Նոր-Դար», Երևան, 2004, հ. 4:

16. Մինասյան Է., Հայրենիք-Սփյուռք առնչությունները գիտության բնագավառում 1990-ական թթ., «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2005, հ. 8:

17. 85 հազար ամերիկյան դոլար Հայաստանի և Սփյուռքի կարիքավոր երեխաներին, «Ջանասեր» 2000, թիւ 7-8, 9-10, ԿԳ տարի, էջ 133:

18. Тавадян Т., Армянские национальные «Кочари» в Краснодарском крае (степень организованности и переспективы), Бюллетень научно-образовательного фонда, «Нораванк», 2007, N20, с. 45-52.

19. Мелконян Э., Армянская апостольская церковь во взаимоотношениях Армении и Диаспоры, Релегия и политика на Кавказе. Материалы международной конференции, Ереван, 2004.

20. Tölölyan Kh., Elites and institutions in the Armenian Transaction, Diaspora, A Journal of Transnational Studies, Vol. 9, N1, spring, 2000.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ 10

Ա. 21-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 10

Բ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 65

Գ. ՀԱՄԱՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 135

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ 219

Ա. ՍՓՅՈՒՌՔԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 219

Բ. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ 276
Գ. ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ. ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ 300

ՎԵՐՋԱԲԱՆ..... 416

ОТНОШЕНИЯ МЕЖДУ РОДИНОЙ И ДИАСПОРОЙ В НАЧАЛЕ 21-ОГО ВЕКА (2001–2017 ГГ.) 420

THE HOMELAND-DIASPORA RELATIONS AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY (2001-2017)..... 426

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 432

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԷԴԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՄԻՆԱՍՅԱՆ
ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ (2001-2017 ԹԹ.)

ЭДИК ГАРЕГИНОВИЧ МИНАСЯН
ВЗАИМОСВЯЗИ РОДИНА-ДИАСПОРА В НАЧАЛЕ 21-ОГО ВЕКА (2001-2017 ГГ.)

EDIK GAREGIN MINASYAN
HOMELAND-DIASPORA RELATIONS AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY (2001-2017)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Ստորագրված է տպագրության՝ 19.07.2018:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 27.875:
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Է. Մինասյանը դպրոցական և բուհական մի շարք դասագրքերի, 30 ուսումնական ձեռնարկների, ինչպես նաև 8 մենագրությունների և շուրջ 200 գիտական հոդվածների հեղինակ է, որոնց մեծ մասը նվիրված են Հայոց ազգային-ազատագրական պայքարին, Հայկական հարցին և Հայոց ցեղասպանության պատմությանը, ինչպես նաև Հայաստանի նորագույն պատմության հիմնախնդիրների լուսաբանմանը: 2009 թվականից ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկանն է:

Է. Մինասյանը 2016-2018 թթ. արդյունավետ գիտաշխատող մրցույթի հաղթող է: Նրա ղեկավարությամբ 15 ասպիրանտներ և հայցորդներ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ: Նա դպրոցական և բուհական դասագրքերի «Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները նոր գորագույն շրջանում» բաժինների հեղինակ է: 2009 թ. Է. Մինասյանի և Ա. Վարդանյանի համահեղինակությամբ հրատարակվել է «Հայրենիք-Սփյուռք առնչությունները 1991-2009 թթ.» աշխատությունը: Սույն մենագրությունը լրացնում է և ամբողջական է դարձնում 21-րդ դարասկզբի հայրենիք-Սփյուռք կապերի ամբողջական պատմությունը:

Է. Մինասյանը ՀՀ հանրային խորհրդի և ԵԿՄ վարչության անդամ է:

2014 թ. կրթության և գիտության մեջ ունեցած մեծ ներդրման համար ՀՀ նախագահի հրամանագրով արժանացել է «Մովսես Խորենացի» մեդալի:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2018
publishing.ysu.am